Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԵՍՆԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2690

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1989

ԳՄԴ 63.3(2Հ)5
Դ 477

Գրախոս՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

Դիլոյան, Վ. Ա.
Դ 477 *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները/Երևանի պետ. համալս.— Եր.։ Երևանի համալս. հրատ., 1989.—356 էջ.*

Մենագրության մեջ քննարկվում են պարսկական տիրապետության վերջին շրջանում Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության, երկրի արտաքին քաղաքական կացության, հասարակական տարբեր հոսանքների ու նրանց նպատակադրումների վերաբերյալ հարցերը։ Վերլուծվում են ժամանակի հայ ազատագրական միտքը, հայկական պետականության վերականգնման ծրագիրը հայ-ռուսական հարաբերությունների ընդհանուր հետնախորքի վրա։

Դ $\frac{0503020913}{704\ (02)-89}$ 44—89 ԳՄԴ 63.3(2Հ)5

ISBN—5—8084—0027—9

ДИЛОЯН ВАЛЬТЕР АРТАШЕСОВИЧ
Восточная Армения в первой трети XIX века и армяно-русские отношения
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1989

© Դիլոյան Վ. Ա., 1989

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XVIII—XIX դարերի հայոց պատմության մեջ կարևոր տեղ է գրավում թուրքական և պարսկական բռնապետությունների դեմ մղված ազգային-ազատագրական պայքարի հարցի ուսումնասիրությունը, պայքար, որ ծավալվեց ֆեոդալական հասարակարգի քայքայման ժամանակաշրջանում։ Այդ հարցը ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի, մեծաթիվ հայկական գաղթավայրերի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման շղթայի կարևորագույն օղակն է, ուստի կարիք է զգում մանրակրկիտ ու քննախույզ հետազոտության։

Եթե ընդհուպ մինչև XVIII դարը հայ ազատագրական շարժման ղեկավար գործիչները կողմնորոշվում էին դեպի «հավատակից» արևմտաեվրոպական երկրները, նրանցից օգնություն սպասում, ապա XVIII դարի սահմանագծում նրանք կատարեցին կտրուկ շրջադարձ, կապելով իրենց ազատագրական բաղձանքները, առաջին հերթին, զորեղացող ռուսական պետության հետ։ Այն բանից հետո, երբ եվրոպական քաղաքականության թատերաբեմ ելավ Պետրոս I-ի ռուսական մեծ տերությունը, նկատելի դարձավ հայ ազատագրական շարժման աշխուժացում, որը մյուս կողմից արդյունք էր նաև արտաքին քաղաքական և ներքին այն փոփոխությունների, որոնք տեղի ունեցան Անդրկովկասում և հարևան երկրներում հիշյալ պատմական ժամանակահատվածում։

Այնքանով, որքանով XVIII դարում և XIX դարի սկզբին հայ ազգային-ազատագրական շարժման հիմնական արտաքին-քաղաքական հենակետը Ռուսաստանն էր, այդ շարժումը կրում էր դեպի Ռուսաստան քաղաքական կողմնորոշման բնույթ, ապա բնական է, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը սերտորեն առնչվում է հայ-ռուսական հարաբերությունների պատմության հետազոտությանը։

Այնուհետև, հայ ազգային-ազատագրական շարժման պատմության հետազոտությունը մեր պատմաբաններին պարտավորեցնում է, առաջ-

նորդվելով վերևում նշված հիմնական ելակետով, շմոռանալ նաև մեր ժողովրդի ազատագրության ճանապարհին ընկած զարտուղի արահետները, ներքին ու արտաքին խոչընդոտները և բազմաթիվ այլ հարցեր։

Մասնավորենք մեր միտքը։ Հայտնի է, որ ամբողջ XVIII դարի և XIX դարի առաջին կեսի ընթացքում հայ ազգային-ազատագրական շարժման մեջ հիմնական շեշտը դրվում էր Արևելյան Հայաստանի ազատագրության հարցի վրա։ Այդ երևույթի մեկնաբանությունը, ցավոք, մեր պատմագիտության մեջ չենք գտնում։ Մինչդեռ դա մի վճռական բանալի է՝ հասկանալու հայ ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկությունները, ըմբռնելու այն պարագան, թե ինչու հնարավոր չեղավ ոչ միայն ընդհանուր ազատագրական ճակատ ստեղծել հարևան ճնշված ժողովուրդների հետ, որոնք նույնպես ազատագրություն էին փնտրում, այլև հայ ժողովրդի երկու հիմնական հատվածների միջև։

Դրա պատասխանը չպետք է որոնել միայն այն բանում, որ Հայաստանը բաժանված էր արևելյան երկու բռնապետությունների միջև, որոնցից օսմանյան Թուրքիան երկար ժամանակ դեռևս կարողացավ պահպանել իր համեմատական ռազմական հզորությունը, թեև արդեն իսկ բռնել էր անկման ուղին և իր քաղաքական հզորության վայրէջքն էր ապրում։ Գոյություն ուներ նաև մեկ այլ պահ, որը և առաջին պլանի վրա էր մղում Արևելյան Հայաստանի ազատագրության հարցը։ Բանը այն է, որ Հայաստանի արևելյան հատվածում էր գտնվում Արարատյան բնաշխարհը, որ երկար դարեր հանդիսացել էր հայ պետականության կորիզը, այստեղ էին գտնվել Հայաստանի երբեմնի մայրաքաղաքները՝ Արմավիրը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը և, վերջապես, այստեղ էր գտնվում հայ եկեղեցու գերագույն կենտրոնը՝ էջմիածինը, որի կաթողիկոսությունը հայ պետականության վերջին կրողն էր, իր ժողովրդի հավաքականության և միասնության խորհրդանիշը։ Այս հանգամանքը այն կարևոր խթաններից էր, որը հարկադրում էր հայ ազատագրական շարժման գործիչներին իրենց ուշադրությունը բևեռել Արևելյան Հայաստանի ազատագրության վրա և ջանքերը լարել այդ առաջնահերթ խնդիրը իրագործելու համար։

Այստեղից էլ մեր առջև ծառանում է մեկ այլ հարց, որը խիստ կարոտ է մեկնաբանման։ Դա հայ ազգային-ազատագրական շարժման մեջ հայ եկեղեցու տեղի, դերի և նշանակության հարցն է, հարց, որը անհրաժեշտ ուշադրության չի արժանացել սովետահայ պատմագրության մեջ։

Հայ եկեղեցին իր ակունքներով կապված լինելով ֆեոդալական հասարակարգին, լինելով ֆեոդալական հիմնարկություն՝ դարերի ընթացքում խիստ էվոլյուցիա էր ապրել։ Սկսած XVIII դարից հայ եկեղեցու հիմնական սնուցողը գաղութահայ բուրժուազիան էր, որը և հայ եկեղեցին դիտում էր իբրև մի հիմնական ազդակ ազգության գոյատևման և միասնականության պահպանման համար։ Եթե սրան գումարելու լինենք այն, որ դարեր շարունակ, ինչպես նշել ենք վերևում, հայ եկեղեցին եղել է մի հիմնարկություն, որն իր մեջ մարմնավորել է նաև որոշ առումով պետականության հասկացություն, որ օսմանյան սուլթանները և պարսից շահերը այդ իսկ պատճառով հայ եկեղեցու գլխին ամենայն հայոց կաթողիկոսին համարել են խալիֆա, այսինքն հայ ժողովրդի հոգևոր ու մարմնավոր գլուխ, ապա լիովին պարզ կդառնա, թե ինչու նույնիսկ գաղութահայ բուրժուազիան այդքան մեծ տեղ էր հատկացնում էջմիածնին, թե ինչու հայ ազատագրական ծրագրերում առաջին հերթին հառնում էին Արևելյան Հայաստանը և էջմիածինը։

Հայ ազգային-ազատագրական շարժման հիմնական հարցերից մեկը նրա բնույթի և նպատակաուղղվածության հարցն է։ Խորհրդահայ պատմական գիտության մեջ բավական լայն տարածում ունի այն թեզը, որ XVIII դարում և XIX դարի սկզբին հայ ժողովրդի ազատագրական շարժումը նպատակ է հետապնդել և ընթացել է սոսկ Ռուսաստանին միանալու դրոշի տակ։ Ընդ որում այս թեզը պաշտպանողները ջանացել են զանց առնել և կամ թերագնահատել են ոչ միայն պատմական վավերագրերում պահպանված վկայությունները հայկական պետականության վերականգնման բաղձանքների վերաբերյալ, պահպանված ծրագրերը այդ հարցի կապակցությամբ, այլև այն անուրանալի փաստը, որ ռուսական պետությունը XVIII դարի ընթացքում առաջնորդվել է արտաքին-քաղաքական մի ծրագրով, որի կիզակետում մշտապես գրտնվել է Անդրկովկասում հայկական պետականության վերականգնումը կամ հայ-վիրական միացյալ քրիստոնեական թագավորության ստեղծումը, որպես բուֆեր Թուրքիայի և Ռուսական կայսրության միջև, և որը պետք է գտնվեր Ռուսաստանի հովանու տակ։ Այստեղից էլ հայ ազգային-ազատագրական շարժման դասակարգային և ազգային խնդիրների ճիշտ ընկալման ու մեկնաբանման անհրաժեշտությունը։

Հայ ազգային-ազատագրական շարժման դասակարգային և ազգային խնդիրների ճիշտ ըմբռնման հետ է կապակցվում ազգային-ազատագրական շարժման մեջ գոյություն ունեցած ուղղությունների հարցը XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի սկզբին։ Դեռևս 1920-ական թվականներից լայն տարածում գտավ այն կարծիքը, որ XVIII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժման մեջ գոյություն են ունեցել երկու հոսանքներ՝ կղերա-ֆեոդալական և բուրժուա-դեմոկրա-

տական, համապատասխանաբար հետապնդելով ապագա ազատագրված Հայաստանում միապետություն և բուրժուական հանրապետություն ստեղծելու նպատակներ։

Այս տեսակետը պաշտպանող պատմաբանների ուշադրությունից վրիպել էին մի շարք կարևոր պարագաներ, որոնք անհրաժեշտ են դարձնում վերանայել այդ տեսակետը, քանի որ այն հեռու է պատմական իրականությունը ճիշտ և օբյեկտիվորեն արտացոլելուց։ Մասնավորապես զանց է առնված այն կարևոր հանգամանքը, որ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հնդկաստանի մեծ թիվ կազմող հայկական գաղթավայրերում հրամանատարական բարձունքները գտնվում էին հայ վաճառականական կապիտալի ներկայացուցիչների ձեռքերում, որ Ռուսաստանի բոլոր հայկական գաղութներում արդեն XVIII դարում սոցիալ-տնտեսական զարգացումն ընթանում էր կապիտալիստական արտադրական հարաբերությունների ձևավորման հունով։ Այստեղից էլ բխում է այն եզրակացությունը, որ չէր կարող, հնարավոր չէր, որպեսզի հայացքների և ծրագրերի նմանօրինակ կտրուկ տարբերություն լիներ միևնույն դասակարգի ներկայացուցիչների միջև, որքան էլ որ նրանք գործեին տարբեր երկրներում։ Այստեղ անհրաժեշտ է շեշտել, որ պատմական փաստերը գալիս են հաստատելու այն միտքը, որ ռուսահայ և հնդկահայ գործիչների հայացքները Հայաստանի ապագա կացության հարցում համընկնում էին։ Այս նույն հարցի կապակցությամբ հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ հայ եկեղեցին իր հիմնական եկամուտները ստանում էր Հնդկաստանի և մյուս հայկական գաղութների բնակչությունից, որտեղ վճռական դեր էր խաղում առևտրական բուրժուազիան։ Այնուհետև, առևտրա-դրամական գործարքներում գործուն մասնակցություն բերող հայ եկեղեցին, վերոհիշյալ և այս պատճառներով սերտորեն կապված լինելով բուրժուական շրջանների հետ, միշտ չէ, որ դեմ էր գնում վերջիններիս կամքին և ցանկություններին։

Լիովին հասկանալու համար XVIII դարի և XIX դարի սկզբի (ընդհուպ մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին) հայ ազգային-ազատագրական շարժման որոշ առանձնահատկությունները, հարկավոր է աչքի առջև ունենալ նաև հետևյալ պարագաները։ Եթե մինչև 1801 թվականը, գրեթե մեկ ամբողջ հարյուրամյակ, ռուսական ցարիզմի՝ Անդրկովկասում վարած քաղաքականությունը նպատակ էր հետապնդում իր հովանու ներքո վերականգնել հայկական պետականությունը և կամ ստեղծել միացյալ հայ-վիրական քրիստոնեական պետություն, ապա Վրաստանի միացումից և վրացական պետականության վերացումից հետո վերոհիշյալ նախագծումները հանվում են օրակարգից, իսկ ցարիզմի արտաքին քաղաքականությունը այս երկրամասում ձեռք է բերում բացահայտ բռնակցման բնույթ։ Եվ եթե XIX դարի սկզբին հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների մոտ առաջ է գալիս ծրագրային անորոշություն, և խոսքը շատ դեպքերում գնում է Հայաստանի «երբեմնի փառքի» վերականգնման անորոշ ձգտման մասին, ապա դա փաստորեն շարունակումն էր Հայաստանի պետականության վերականգնման փխրուն հույսերի փայփայման։ Ահա հարցերի այն ամբողջությունը, որի քննարկմանը նվիրված է սույն աշխատությունը։

***

XVIII դարը հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ ավարտվեց մի իրադարձությամբ, որը կարծես վճռական բեկում պետք է մտցներ Հայաստանի ազատագրության հարցում՝ ի վերջո իրական հիմքերի վրա դնելով հայկական ազատագրական հույսերը։ Դա Եկատերինա II կայսրուհու կյանքի վերջնամուտին ձեռնարկված պարսկական արշավանքն էր՝ գեներալ Վալերիան Զուբովի հրամանատարությամբ։ Չնայած արշավանքի բավական հաջող ընթացքին, կայսրուհու վերահաս մահը և նրան հաջորդած Պավել կայսեր մերժողական դիրքավորումը դեպի ատելի մոր բոլոր քաղաքական ձեռնարկումները, մեկ անգամ ևս եկավ սև շղարշով պատելու հայ ազատագրական շարժման գործիչների խանդավառ հույսերը։ Սակայն դեպքերն այնպիսի արագությամբ էին հասունանում, այնպիսի անսպասելի ուղիներով ընթանում, որ այդ հույսերը խամրելու իսկ ժամանակ չէին գտնում։

Մինչ այդ վրա էր հասնում XIX դարի այգաբացը՝ հղի քաղաքական բնույթի խոշոր փոփոխությունների խոստումով ինչպես դարեր ի վեր իր պետականությունը կորցրած, օտարերկրյա բռնապետություններ բաժանված Հայաստանի և հայ ժողովրդի, այնպես էլ անդրկովկասյան մյուս եղբայրակից ժողովուրդների համար։

Դարասկզբին, երբ հետզհետե ծավալվող ռուսական կայսրությունը տեր էր դառնում Վրաստանին և Հայաստանի արևելյան հատվածի երբեմնի վրացական թագավորության կազմի մեջ մտնող «հյուսիսային կողմանց», ինքնըստինքյան կարծես իրական երանգ էր ստանում հայ ազգային-ազատագրական շարժման վաղեմի բաղձանքը։ Մոտենում էր այն տենչալի պահը, երբ հնարավոր կդառնար արևելյան զույգ բռնապետությունների՝ շահական Պարսկաստանի և սուլթանական Թուր-

քիայի դժնդակ լծի տակ հեծող, շուրջ երեք հարյուրամյակ տարանջատված հայրենի երկրի ազատագրումը, վերամիավորումը և սեփական ազգային պետականության վերականգնումը հյուսիսի քրիստոնյա հզոր հարևանի զենքի օգնությամբ ու հովանու ներքո։

Վրաստանի և Արևելյան Հայաստանի «հյուսիսային կողմանց» միացումը Ռուսաստանին տեղի էր ունենում միջազգային հարաբերությունների զարգացման խիստ բարդ պայմաններում։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ հին աշխարհամասում ծավալված դարակազմիկ իրադարձությունները վերախմբավորել էին եվրոպական խոշոր տերությունների ուժերը։ Ժամանակի միջազգային քաղաքական կյանքի հիմնական առանցքը մի կողմից՝ հեղափոխական ցնցող տեղաշարժերից հետո նվաճումների ուղին բռնած Ֆրանսիայի, իսկ մյուս կողմից՝ Մերձավոր Արևելքում իրենց գերիշխանության համար պայքարող Անգլիայի ու Ռուսաստանի հակամարտությունն էր կազմում, չնայած սրանց ուժերի անցողիկ դեգերումներին ու վերադասավորումներին։

Երկարատև ներքին անիշխանությունից, միջավատական երկպառակություններից ու գահակալական անհաշտ կռիվներից հետո Պարսկաստանն ի վերջո միավորվել էր Աղա Մահմեդ խան Կաջարի գայթակղությունի ներքո։ Սրի ուժով միավորելով Պարսկաստանը, XVIII դարի վերջին ներքինի շահը կրնկակոխ ասպատակեց ու սահմռկեցուցիչ ավերածություններ ենթարկեց Անդրկովկասը, գերեվարելով և ստրկության դատապարտելով մի հսկա բազմություն։ Աղա Մահմեդ խանի սպանությունից սթափված, թափած արյունից արբշռած Պարսկաստանը կարծես առժամանակ շունչ էր ուզում քաշել և մի պահ արձանացած ապշությամբ էր դիտում իր անդրկովկասյան երբեմնի տիրույթներից մի հսկա պատառի յուրացումը Հյուսիսի ահարկու հարևանի կողմից։ Սակայն ուշքի գալով շփոթությունից և խրախուսված Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից, նա կրկին կռվի ելավ և փորձեց զենքի զորությամբ ետ խլել այդ երկրամասը։

Շուտով ոտքի ելավ նաև Թուրքիան։ Նապոլեոնյան զորքերի եգիպտոսյան ներխուժումից ահաբեկված, երբեմնի ռազմական փառքից փայլազրկված, պալատական դավերի ու խարդավանքների թատերաբեմ դարձած սուլթանական Թուրքիան ստիպյալ դաշինք էր փնտրում իր ատելի, բայց և հզոր ոսոխի՝ Ռուսաստանի հետ, ուստի ժամանակավորապես լուռ էր և կուլ էր տալիս այնպիսի մի դառն դեղահատ, ինչպիսին էր սահմանակից Վրաստանի կորուստը, որի նկատմամբ ունեցած ակնկալություններից ամենևին էլ մտադիր չէր հրաժարվել։ Բայց Թուրքիայի կողմից նման հապաղումը երկար չտևեց. հինգ տարի անց ըս-

կրավեց նախկին ոսոխների համառ գոտեմարտը, որը, ժամանակավոր ընդհատումներով հանդերձ, պետք է շարունակվեր ավելի քան մեկ հարյուրամյակ։

Ինչ վերաբերում է Անդրկովկասի խանություններին, ապա դրանք դեռևս շարունակում էին քարշ տալ իրենց կիսանկախ գոյավիճակը, չընայած որ վերականգնվել էր շահական կենտրոնացված իշխանությունը։ Ռուսաստանի ծավալումը, ժողովրդական զանգվածների անսքող համակրանքը դեպի Ռուսաստանը, Պարսկաստանի և Թուրքիայի գրաված անհաշտ դիրքավորումը, որը շուտով Անդրկովկասը արյունալից ընդհարումների ու գոտեմարտերի թատերաբեմի էր վերածելու, քաղաքական լուրջ և ահագնու իրադրություն էր ստեղծելու անդրկովկասյան խանությունների ժամիշխանների համար։ Նրանցից շատերը ձգտում էին խուսանավել Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, իրենց խանությունների գրաված աշխարհագրական դիրքի ու մերձավոր դրացիության բերումով առավելապես հակում ցույց տալով դեպի նժարի ծանր թաթը։

Արևելյան Հայաստանի մեծագույն մասն ընդգրկող Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանություններն այն հիմնական հենակետերն էին, որոնք անհրաժեշտ առավելություն էին ընձեռելու հակամարտ կողմերից նրան, ով կտիրապետեր ստրատեգիական խմաստով չափազանց կարևոր այդ տարածքին։

Սակայն Ռուսաստանի հայտնվելը և ամրապնդվելը Կովկասյան լեռնապարից հարավ առավել քան բուռն ընդվզում ու դիմադրություն առաջ բերեց XIX դարասկզբի երկու ամենահիմնական ու ամենաանհաշտ ոսոխների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից[1]։ Այս երկու հակառակորդ տերությունների միջև պայքարն Արևելքում պայքար էր նախ և առաջ Հնդկաստանի՝ գաղութակալ պետությունների Արևելքում որոնած այդ անստգյուտ մարգարտի համար։ Ինչ վերաբերում է Պարսկաստանն իրենց անբաժան ազդեցության տակ առնելու նրանց փորձերին, ապա դա միևնույն ժամանակ քաղաքականություն էր, որն իր մյուս սայրով ուղղված էր ընդդեմ Ռուսաստանի առաջխաղացման, իհարկե, այդ նույն Հնդկաստանի անձեռնմխելիության պահպանման և նրան տիրանալու ձգտումով ասպարեզ եկող մի նոր հավակնորդի մեկուսացման մտադր-

[1] Այս մասին մանրամասն տե՛ս **А. Р. Иоаннисян**, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958; **А. В. Фадеев**, Россия и Кавказ первой трети XIX в., М., 1960, **З. Т. Григорян**, Борьба Англии и Франции против освобождения Армении из-под ирано-турецкого ига, «Вопросы истории», 1952, № 3; **R. M. Savory**, British and French Diplomacy in Persia, 1800—1810, "Iran", vol. X, London, 1972.

ությամբ։ Եվ եթե առաջին, գրեթե անսպասելի ու դժվարին հարվածից սթափված Պարսկաստանը բազմամյա մահու և կենաց գոտեմարտի բռնվեց Ռուսաստանի հետ՝ ռուսական տիրապետության տակ ընկած անդրկովկասյան տիրույթների վերանվաճման համար, ապա դրանում դարձյալ անմասն չէին Անգլիան ու Ֆրանսիան, որոնք ջանք ու միջոց չէին խնայում՝ կասեցնելու ռուսական առաջխաղացումը և Կովկասյան լեռնապարից կրկին դեպի հյուսիս շպրտելու ռուսական բանակները։ Այդ իսկ առումով էլ «Աղա Մահմեդ խանի եղբորորդի և հաջորդ Ֆաթհ Ալի շահի գահակալությամբ սկսվում է Պարսկաստանի մեծ դրաման, որի ընթացքում այդ երկիրը գնալով խճճվում է եվրոպական պետությունների քաղաքականության ցանցի մեջ՝ սկզբում որպես հնարավոր գործիք և գործուն զինակից, իսկ հետո որպես պարզ մի գործիք ու զոհ»[2]։

Եթե Ռուսաստանի հաղթական առաջխաղացումը և ամրապնդումը Անդրկովկասում բուռն ընդվզում ու հակազդեցություն առաջ բերեց շահագրգռված գաղութակալ տերությունների մոտ, ապա ազատագրության տենչող, թուրքական ու պարսկական դժնդակ տիրակալության տակ տոչորվող հայ ժողովրդի կողմից այդ իրադարձությունը հիմնականում դիտվեց և արձագանք գտավ որպես քաղաքական դրական ակտ։ Իսկ դա ամենևին էլ պատահական չէր։ Վերջին շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում հայ ժողովուրդը, նրա ազատագրական պայքարի ղեկավարները իրենց քաղաքական ակնկալություններն ու ազատագրական բաղձանքները հիմնականում խարսխել էին Ռուսաստանի աջակցության վրա։ Վրաստանի միակցումը Ռուսաստանին և ռուսական զենքի հետագա հաջողություններն Անդրկովկասում ազդանշում էին, թե բուն Հայաստանի ցանկալի ազատագրությունը ևս հեռավոր ապագայի խնդիր չէ։ Կասկածից վեր էր, որ Վրաստանի և անդրկովկասյան մյուս նորանվաճ տիրույթների ինչպես արտաքին, այնպես էլ ներքին անվտանգությունն ապահովելու համար Ռուսաստանը չէր կարող շարունակել իր առաջընթաց նվաճողական շարժումը, մինչև որ չհաստատվեր կայուն բնական սահման Կուր-Արաքս-Ախուրյան ջրբաժան գծի վրա[3]։

Այդ նպատակի իրագործման ճանապարհին ռուսական կառավարության արտաքին քաղաքականության նախագծումներում խոշոր նշանակություն էին ստանում հայերը՝ շնորհիվ Անդրկովկասում և հարակից երկրամասերում իրենց բազմամարդության և դեպի Ռուսաստանն

[2] William S. Haas. Iran, New York, 1946, p. 30.

[3] Акты, собранные кавказской археографической коммисиею (АКАК), т. VI, ч. 2, стр. 123—124.

ունեցած անկասկած համակրանքի։ Նրանք ռուսական ծավալվող կայսրության համար անհրաժեշտ էին ոչ միայն ավերված և մարդաթափ եղած Վրաստանի վերաբնակեցման ու շինության, այլև ռուսական ազդեցության շրջանակները դեպի հարավ ընդլայնելու և ամրապնդելու համար։

Մյուս կողմից, հայ ազգային-ազատագրական շարժման ժամանակի գործիչները իրենց հայրենիքի փրկության լավագույն ելքն էին համարում նրա ազատագրումը Ռուսաստանի զինական օգնությամբ, որի շնորհիվ հնարավոր կլիներ վերջ տալ հայ ժողովրդի մասնատված վիճակին, որը լուրջ խոչընդոտում էր նրա սոցիալական ու տնտեսական առաջընթացին։

Հայ ժողովրդի գոյավիճակը բարդանում էր ոչ միայն այն պատճառով, որ երկիրը բզկտված էր նվաճողների սրով, այլև այն պատճառով, որ Պարսկաստանի և Թուրքիայի ավատական մասնատվածությունն իր հերթին էր գալիս ծանրացնելու առանց այդ էլ դժնի օտարակալության լուծը։ Ավատական անընդմեջ երկպառակություններն ու ավարառությունները, բնակչության հարկման դաժան համակարգն ընդարմացնում էին երկրի արտադրողական ուժերը, վատթարացնում էին աշխատավոր զանգվածների դրությունը, բացառում ամեն մի առաջընթաց հասարակական ու տնտեսական կյանքի բնագավառներում։ Միջավատական ընդհարումներն ու ասպատակությունները, որոնց հետևանքով ոտքի կոխան էին լինում ցանքսերը, բնավեր դառնում երկիրը, կողոպտվում, սրատվում ու գերեվարվում ժողովուրդը, լախտի ծանր հարվածների նման մշտապես իջնում էին իրավազուրկ «գյաուրների»՝ հայ ժողովրդական զանգվածների գլխին։ Ծայր էր առնում ժողովրդի համար նորանոր աղետներով հղի արտագաղթը, որպես ֆիզիկական փրկումի միակ աղագը։

XIX դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները, որոնց հիմնական թատերաբեմերից մեկը դարձավ Հայաստանն իր զույգ հատվածներով, գալիս էին լրացնելու պակասը։ Ժողովուրդն անընդհատ երերման մեջ էր՝ տասնյակ անգամներ հարկադրված լքելու արյուն-քրտինքով կառուցած օջախը, կրկին ու կրկին զրկվելով հացի վերջին պատառից, միշտ աչքերի առջև ունենալով դժնի ապագայի ահասարսուռ ուրվականը։ Ուստի ամենևին էլ զարմանալի չէ, երբ նման իրադրության պայմաններում երկրի հին տերերը՝ հայերը, Արարատյան բնօրրանում կազմում էին բնակչության սոսկ 33,8

տոկոսը[4], իսկ Երևանի խանության 1111 գյուղերից 359-ը անմարդաբնակ էին դարձել ու հիմնակործան եղել[5]։

XIX դարասկզբի ռուս-պարսկական պատերազմների ժամանակ պարսիկները հետևում էին ռազմավարական այն գործելակերպին, որն սկիզբ էր առնում Շահ Աբաս I-ի գահակալության օրերից։ Թշնամու առաջխաղացումը դժվարացնելու և պարենավորման հարցում դժվարություններ ստեղծելու նպատակով նրանք տեղահան էին անում ամբողջ ազգաբնակչությանը, քշում ռազմական գործողություններից հեռու ընկած վայրեր և այդպիսով ստեղծում մի մեռյալ, անապատային գոտի։ Այսպես, օրինակ, 1804 թվականի՝ ռուսական զորքերի Երևանյան առաջին ձախողված արշավանքի նախօրեին Երևանի Մամադ խանի հրամանով «Երևանի, Կըրխբուլաղի և Էջմիածնի շրջաններից ամենայն հապճեպով դուրս քշվեցին չորս հազար հայ ընտանիք»[6], որոնց մի մասը տարվեց դեպի Արաքսի պչ ափը, իսկ մյուս մասին ռուսական զորքերը տեղափոխեցին իրենց ենթակա սահմանները՝ Փամբակաձոր, Լոռի և Թիֆլիս՝ Երևանի մելիք Աբրահամ Մելիք-Աղամալյանի և յուզբաշիներ Գաբրիել և Հովհաննես Գեղամյանների գլխավորությամբ[7]։ Միայն 1804—1813 թվականների ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ավելի քան տաս հազար հայեր էին բռնի կամ կամովին արտագաղթել Երևանի խանությունից դեպի Վրաստան և Ռուսաստանին անցած Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջանները։

Միանգամայն բնական էր, որ նման անհաստատ ու անկայուն իրադրության մեջ իրենց տառապալից գոյությունը քարշ տվող հայ զանգվածները կենաց ու մահու գոտեմարտի դուրս գային հանուն ազատագրման։

Փնտրելով արտաքին մի զորեղ լծակ, հայ ժողովուրդը և նրա ղեկավարներն իրենց հայացքը դարձրել էին դեպի Ռուսաստան, այստեղից ակնկալելով սպասված փրկությունը։ Այդ ակնկալությունը պատահական չէր։ Դեռևս XVIII դարի երկրորդ կեսից կրկին աշխուժացել ու նոր թափ էր ստացել հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը։ Որպես ազատագրական շարժման և ազատագրական գաղափարախոսության դրոշակակիրներ ու կրողներ ասպարեզ էին իջել գոյության անհամեմատ նպաստավոր պայմաններում գտնվող հայկական գաղթավայրերը՝ հատկապես Հնդկաստանի և Ռուսաստանի գաղութները, որտեղ ազգային-հասարակական գործերում ազդեցիկ դիրք ունեին հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները։ Ուստի զարմանալի չէր և ոչ էլ անսպասելի, որ հիշյալ գաղթավայրերում կյանքի կոչված ազատագրական ծրագրերը, խարսխվելով Ռուսաստանի հովանավորության վրա, իրենց նկրտումներով շատ ավելի հեռուն էին գնում, քան կարելի էր հուսալ կամ սպասել միապետական ֆեոդալական Ռուսաստանից։ Բայց նման ակնկալությունները ոչ քաղաքական երևակայամտություն էին և ոչ էլ անհրաժեշտ ու անխուսափելի տուրք ժամանակի հրատապ ու անմիջական լուծման դրված հարցերին։ Մայր հայրենիքից բռնի պոկված և զանազան երկրներում պատվաստված այդ գաղթավայրերում այնքան կենդանի էր ու վառ հայրենի երկրի ազատագրության, ազգային պետականության վերականգնման գաղափարը, որ նույնիսկ պատմության քմահաճ ալիքների վրա տարուբերվող, յուր, թեկուզ և թույլ ու անզոր, պետականությունն ունեցող Վրաստանի՝ Ռուսաստանին միացումից ու վրացական թագավորության լուծարքից հետո էլ հայ գործիչները շարունակում էին փայփայել ազգային ինքնուրույնության նվիրական երազը։ Երևանի ու Նախիջևանի խանությունների գրավումից հետո ստեղծված, թեկուզ և կարճատև կյանք ունեցած Հայկական մարզը, ճիշտ է, խարուսիկ, բայց և անխուսափելի զիջումն էր ցարական կառավարության կողմից՝ հայ ազատարաղձ ժողովրդի վաղեմի այդ ձգտումին։

Մի ժամանակաշրջանում, երբ անմիջականորեն օրակարգի հարց էր դառնում Հայաստանի արևելյան մասի ազատագրումը, երբ ռուսական զորաբանակները օրը օրին ընդարձակում էին ցարիզմի տիրակալության շրջանակներն Անդրկովկասում, երբ երկիցս՝ 1804 և 1808 թվականներին ռուսական գործող կորպուսներն ընդհուպ մոտեցել էին անառիկ համարված Երևանի բերդի մատույցներին, բնական է, որ առավել ևս պետք է սերտանային և ամրապնդվեին հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները։ Սկսած XVIII դարի վաղորդայնից հայ ազատագրական միտքը շրջադարձ էր կատարել դեպի Ռուսաստան, որպես հարևան միակ քրիստոնյա մեծ տերություն, որը ռեալ շահագրգռություններ ուներ զբաղվելու հայերի ազատագրության խնդիրներով։ Այժմ, ավելի քան մեկ դար անց, հայ ժողովրդի ազատագրական պայքարը մտնում էր իր զարգացման այն նոր փուլը, երբ ոչ միայն հասունացել, այլև քաղաքական անհրաժեշտության իմաստով նույնիսկ ան-

---

[4] Խ. Տ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Երևան, 1959, էջ 16։

[5] И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852, стр. 485—486.

[6] Լեո, Հայոց պատմության նորագույն շրջան, մասն առաջին, ապակետիպ, Երևան, 1926, էջ 202։

[7] ЦГИА Груз. ССР, ф. 2, д. 110, л. 319.

խուսափելի էր դարձել Հայաստանի գեթ պարսկական տիրապետության ներքո գտնվող հատվածի ազատագրության ցանկալի պահը։ Այժմ արդեն հայ ժողովրդի մարտական զորաջոկատները, ռուսական բանակների շարքերում, սեփական դրոշների տակ զենքը ձեռքին անձնվիրաբար մարտնչում էին հայրենի երկրի ազատագրության համար։ Այժմ արդեն իրականություն էր դառնում և պատմության ատյանի առջև արդարանում քաղաքական այն ուղեծրի ճշտությունը, որի կարկառուն ներկայացուցիչն էր Իսրայել Օրին, և որի առաջամարտիկներն էին XVIII դարի քսանական թվականների Ղարաբաղի և Սյունիքի հայկական Սղնախները։

Չնայած պատմական զարգացման տվյալ ժամանակահատվածում չիրականացավ հայկական պետականության ուղենշող վերածնման հեռանկարը, սակայն Արևելյան Հայաստանը միակցվեց Ռուսաստանին և հայ ժողովրդի մի խոշոր բեկորը հնարավորություն ստացավ զարգացման առավել նպաստավոր ուղու վրա կանգնելու, մինչդեռ նրա արևմտյան խոշորագույն հատվածը, մնալով սուլթանական դժնդակ լծի ներքո, ծանր խաչը ուսին, վայրենաբարո ջարդարարների սրերի շաչյունի տակ, Միջագետքի ավազուտ անապատների միջով բարձրացավ իր Գողգոթան՝ վտարված իր պապերի ու հայրերի հազարամյակների հայրենիքից։

Հայ ժողովրդի պատմության մեջ XIX դարում սկսվեց մի նոր ժամանակաշրջան՝ լի վառվռուն ապագայի հույսերով և ողբերգական փլուզումներով, ապրելու, հարատևելու անմար տենչով և ազատության համար թափած արյան հորդահոս գետերով, վերելքներով ու անկումներով, մի ժամանակաշրջան, որը, չնայած անդառնալի կորուստներին, ի վերջո պետք է պսակվեր հինավուրց երազի մարմնավորմամբ, բայց այլ ձևով և որպես արգասիք պատմական զարգացման որակապես բոլորովին նոր մի դարաշրջանի։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի, հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ ստեղծված է պատկառելի գրականություն ինչպես նախախորհրդային, այնպես էլ խորհրդային պատմագրության մեջ, պահպանվել են նաև հսկայական քանակությամբ նյութեր, որոնք սփռված են Խորհրդային Միության այլևայլ արխիվներում և գրադարաններում։ Տարիներ շարունակ մենք պրպտումներ ենք կատարել ԽՍՀՄ կենտրոնական պետական պատմական արխիվում, Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվում, ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում, Հին ակտերի կենտրոնական պետական պատմական արխիվում, Մոսկվայի և Լենինգրադի մարզային արխիվներում, Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվում, Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվում, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) արխիվային և ձեռագրային ֆոնդերում, կարողացել ենք քաղել բազմաբնույթ փաստական նյութեր, որոնք և հնարավորություն են ընձեռել մեզ ստեղծելու սույն աշխատությունը։

Հայաստանին և հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող նշանակալից քանակությամբ նյութեր հրատարակված են «Акты, собранные кавказской археографической комиссиею» փաստաթղթերի բազմահատոր ժողովածուում, որի մատակարարած նյութերից մեծապես օգտվել ենք։ Հիշյալ ժողովածուն հատկապես մեծ թվով վավերագրեր է պարունակում Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականության և, մասնավորապես, Անդրկովկասի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացության վերաբերյալ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում։ Այստեղ հարկ ենք համարում մատնանշել նաև, որ սովորաբար մեր պատմագիտության մեջ «АКАК»-ը դիտվում է իբրև միապետական դիրքերից կազմված ժողովածու, որի նպատակն է եղել ջատագովել ցարիզմի վարած ներքին և արտաքին քաղաքականությունը, շղարշել այդ քա-

ղաքականության ստվերում կողմերը։ Չխոսելով արդեն այն մասին, որ ինչպես նյութերի առատության, այնպես էլ դրանց հրատարակության սկզբունքներով այդ ժողովածուն խիստ դյուրացնում է պատմաբանների աշխատանքը, մեր ուշադրությունից չպետք է վրիպի այն հանգամանքը, որ հիշյալ ժողովածուն պարունակում է նաև զգալի քանակությամբ այնպիսի նյութեր, որոնք հնարավորություն են տալիս քննադատելու ցարիզմի վարած քաղաքականությունը կովկասյան ժողովուրդների նկատմամբ, մերկացնում են, գուցե և ակամա, այդ քաղաքականության մութ ծալքերը։

Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանի հայ-ռուսական առնչությունների վերաբերյալ բավականաչափ նյութեր է պարունակում 1833—1838 թթ. Մոսկվայում լույս ընծայված «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» փաստաթղթերի եռահատոր ժողովածուն, որի հիմնական նպատակն էր բացահայտել ռուս և հայ ժողովուրդների բարեկամական հնամենի կապերը, դրանց պատմական արմատները և հայ ժողովրդի քաղաքական ակնկալությունները Ռուսաստանից։ Ժողովածուն լույս տեսավ այնպիսի մի ժամանակ, երբ դեռևս իր գոյությունը պահպանում էր Հայկական մարզը և լիովին չէին խամրել հայկական ինքնավարության երազները։ Այն նպատակ էր հետապնդում ցցուն դարձնել տվյալ պարագան, ինչ որ, անկասկած, արդեն փաստորեն ժամանակավրեպ էր։

Հատկապես հայ հասարակական կյանքի պատմությանը վերաբերող բազմաթիվ վավերագրեր են հրապարակվել Գյուտ ավ. քահանա Աղանյանցի կազմած և հրապարակած «Դիվան հայոց պատմության» շարքում։ Մեզ հետաքրքրող հարցերի կապակցությամբ Աղանյանցի հրապարակած վավերագրերը լուսաբանում են մասնավորապես Դավիթ-Դանիելյան պայքարի դրվագները, ցույց տալիս այդ պայքարում միմյանց բախվող հասարակական ուժերը և նրանց ձգտումները, հայ ժողովրդի ծանր գոյավիճակի պատկերը։ Կանգնած լինելով պահպանողականության դիրքերում, Աղանյանցը քննադատական մոտեցում ուներ մասնավորապես դեպի Ներսես Աշտարակեցու գործունեությունը, նրան համարում էր անձնավորություն, որի նպատակամղումների հիմքում ընկած է եղել, իբր թե, անհուն փառատենչությունը և «ռուսասիրությունը»։ Նա վերապահ վերաբերմունք էր բռնել դեպի Աշտարակեցու խաղացած դերի առաջադիմական նշանակությունը։

1972 թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ե. Պ. Աղայանի խմբագրությամբ լույս ընծայեց «Присоединение Восточной Армении к России» փաստաթղթերի ժողովածուն, որի կազ-

մելուն մասնակցել ենք նաև մենք, իսկ 1978 թվականին հրատարակվեց նույն ժողովածուի երկրորդ հատորը։ Այս պարագան ևս մեծապես նպաստեց մեզ յուրացնելու նյութը և գրելու ներկա ուսումնասիրությունը։

Այս ժողովածուում ամփոփված են Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքին, Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականությանը և հայ-ռուսական բազմակողմանի հարաբերություններին վերաբերող փաստաթղթեր, որոնք հստակորեն լուսաբանում են հայ ժողովրդի վիճակը խանական տիրակալության լծի տակ, նրա ձգտումը դեպի Ռուսաստան և վերջինից ունեցած քաղաքական ակնկալությունները։

Եթե Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջանների և Ղարաբաղի խանության վերաբերյալ անհամեմատ առատ արխիվային նյութեր են պահպանվել և հնարավորություն են ընձեռում բացահայտելու սոցիալ-տնտեսական կյանքի առանձնահատուկ երևույթները, ապա այդ բանը չի կարելի ասել Արևելյան Հայաստանի կորիզը կազմող Երևանի և Նախիջևանի խանությունների մասին։ Մենք համեմատաբար առատ նյութ ունենք Էջմիածնի վանական տնտեսության վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս մեկնաբանելու ժամանակի ագրարային հարաբերությունների բնույթը և էությունն առհասարակ։ Այս հարցերի առնչությամբ սկզբնաղբյուրի նշանակություն ունի Ի. Շոպենի «Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи» աշխատությունը։ Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների սոցիալ-տնտեսական կյանքն ուսումնասիրած պատմաբաններից ու տնտեսագետներից և ոչ մեկը չի կարողացել զանց առնել այդ աշխատությունը (և հնարավոր էլ չէ զանց առնել՝ այլ նյութերի գրեթե բացակայության պատճառով), բայց և բոլորն էլ աշխատել են ամենայն խորությամբ քննադատել այն, և սոսկ այն պատճառով, որ Շոպենը կտրականապես ժխտել է հողի մասնավոր կալվածատիրական սեփականության առկայությունը հիշյալ մարզերում։ Մենք, իհարկե, այն կարծիքին չենք, որ Շոպենի գործը անթերի է, բայց և անժխտելի է նրա կարևորությունը, որովհետև նրա մատուցած վիճակագրական և այլ բնույթի նյութերը (ակնհայտ աղավաղումներով հանդերձ) հիմք են տալիս արժեքավոր ամփոփումներ և եզրահանգումներ կատարելու։ Սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող պատմագիտական գրականության վրա մենք այստեղ կանգ չենք առնում, որովհետև նպատակահարմար համարեցինք այն տալ համապատասխան գլխում՝ հարցի ամբողջական ընկալման նպատակով։

Ինչպես արդեն ասացինք, Արևելյան Հայաստանի հասարակական-

26690

քաղաքական կյանքին վերաբերող մեծ քանակությամբ նյութեր են կուտակված երկրի տարբեր արխիվներում։ Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել Ռուսաստանի անդրկովկասյան և մերձավորարևելյան քաղաքականության, հայ-ռուսական հարաբերությունների, Դավիթ-Դանիելյան պայքարի, հայ ազատագրական մտքի ու պայքարի էությունը, Հայկական մարզի ստեղծման հանգամանքները և այլն։

Թվարկված հարցերը այս կամ այն առումով քննարկվել են ինչպես նախախորհրդային, այնպես էլ խորհրդային պատմագրության մեջ, բայց տարբեր ելակետներից, ոչ իրենց միասնության մեջ և ոչ միշտ է, որ դրանք ստացել են գոհացուցիչ լուծում։ Նախախորհրդային պատմաբանները հարցերին մոտեցել են իրենց դասակարգային և կուսակցական պատկանելության հայեցակետից, շատ դեպքերում անտեսելով պատմական ճշմարտությունը և վավերագրերի ընձեռած փաստերը։ Դրա հետևանքով ստացվում է աղճատ տպավորություն. մասնավորապես, մենք չենք կարողանում ստույգ պատկերացում կազմել հայ ժողովրդի հետապնդած նպատակների մասին՝ իր հայրենիքի ապագա կացության հարցում։

Նախ և առաջ հիշատակենք, որ հիշյալ հարցերին իրենց աշխատություններում անդրադարձել են նախախորհրդային ռուս պատմաբաններ Ն. Դուբրովինը, Վ. Պոտտոն, Վ. Շչերբատովը և ուրիշներ։ Ն. Դուբրովինի բազմահատոր աշխատության[1] մեջ միապետական ջատագովական դիրքերից է քննարկվում ցարական կառավարության քաղաքականությունը կովկասյան և անդրկովկասյան ժողովուրդների նկատմամբ։ Անտեսելով ցարական կառավարության գաղութարարական նպատակները, Ն. Դուբրովինը այն տեսակետին է փարում, որ ցարական իշխանության հաստատումը Անդրկովկասում բացարձակ բարիք էր հայ ժողովրդի համար։ Նա զանց է առնում ցարական քաղաքականության և իշխանության ստվերոտ կողմերը։

Դուբրովինի աշխատության մեջ մեծ տեղ է հատկացված նաև հայ ժողովրդի այն ժամանակվա պատմության հարցերին։ Դավիթ-Դանիելյան պայքարի մասին խոսելիս, Դուբրովինի ելակետն այն է, որ կաթողիկոսական գահի համար ծավալված պայքարը երկու հասարակական-քաղաքական կողմնորոշումների պայքար էր, այն է՝ ռուսական և պարսկական։ Մենք հետագայում կտեսնենք, որ շատ-շատերի կողմից բա-

[1] **Н. Ф. Дубровин**, История войны и владычества русских на Кавказе, т. т. I—VI, СПб., 1871—1888.

ժանվող այս տեսակետը սխալ է և քննադատության չի դիմանում, որովհետև հայ ժողովրդի և ոչ մի հասարակախավի մոտ տվյալ ժամանակաշրջանում պարսկական կողմնորոշում գոյություն չի ունեցել։

Միապետական դիրքերից է Դուբրովինը ջատագովում նաև Կովկասի կառավարչապետ գեներալ Պ. Դ. Ցիցիանովի գործունեությունը, թեև այն ելնում էր պարզապես վրացական ազնվականության իշխանական վերնախավի նեղ դասակարգային շահերից և հարմարեցված էր ցարական ազնվականական միապետության արտաքին-քաղաքական նպատակադրումներին։

Ծայրահեղ միապետական-շովինիստական դիրքերից է գրված Վ. Շչերբատովի կենսագրական աշխատությունը[2] գեներալ Ի. Ֆ. Պասկևիչի մասին, որտեղ նա անդրադառնում է նաև հայ ժողովրդի պատմության հարցերին՝ կապված Պասկևիչի Անդրկովկասում ունեցած գործունեությանը։ Լիովին բաժանելով իր գովերգած ցարական գեներալի գաղութարարական հայացքները, Շչերբատովը անգուսպ լուտանքներ է թափում հայ ժողովրդի և նրա ազատագրական պայքարի ղեկավարների հասցեին՝ իր աշխատության հիմքում դնելով այն բոլոր հերյուրանքները, որոնք Պասկևիչը ուղղել էր հայ ժողովրդի և Ներսես Աշտարակեցու դեմ, փնովում է հայ ժողովրդի ազատագրական նկրտումները։

Թեև Վ. Պոտտոյի աշխատությունները[3] ևս գրված են միապետական դիրքերից և փառաբանում են ռուսական զենքի հաղթանակները, բայց Պոտտոն, ի տարբերություն Շչերբատովի և նմանների, ռուս պատմաբաններից թերևս առաջինն էր, որ ըստ արժանվույն գնահատեց հայ ժողովրդի անձնուրաց աջակցությունը ռուսական զենքի հաջողություններին, նրա առաջադիմական դերը Մերձավոր Արևելքում և նրա հերոսական պայքարը։ Պոտտոն հանգամանորեն նկարագրում է հայ ժողովրդի զավակների և մարտական ջոկատների անձնվեր համագործակցությունը ռուսական բանակների հետ, հայ ժողովրդական զանգվածների աներեր համակրանքը դեպի Ռուսաստանը, բայց դրանց ետևում չի տեսնում նրանց ակնկալությունները, ազատագրական ոգորումների դրդապատճառները։

Նախախորհրդային շրջանի հայ պատմագրության մեջ ևս արծարծ-

[2] **Щербатов**, Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность, т. III, СПб., 1891.

[3] **В. А. Потто**, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, тт. I—IV, СПб., 1885—1888; его же, Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902.

վել են մեզ հետաքրքրող հարցերը[4]։ Դրանց վրա առավել հանգամանալից և մանրակրկիտ կանգ է առել Ալ. Երիցյանը[5]։ Կանգնած լինելով միապետականության դիրքերում, Երիցյանը չկարողացավ, շատ դեպքերում էլ խուսափեց վեր հանել և ճիշտ մեկնաբանել այնպիսի հարցեր, որոնք կօգնեին նրան ստուգապես բնորոշելու հայ ժողովրդի ազատագրական ակնկալությունները։ Առաջնորդվելով այն սխալ դրույթով, թե հայ ժողովուրդը սոսկ գործիք է եղել ցարական տիրապետությունը Անդրկովկասում հաստատելու, Երիցյանը ժամանակի գրեթե բոլոր հայ նշանավոր գործիչներին այնպես է ներկայացրել, որ վերջիններս հանդես են գալիս լոկ որպես ցարական քաղաքականության ջատագովներ։ Եվ դա է հենց պատճառը, որ նա Պատկանյանի ու Ներսես Աշտարակեցու ընդհարումը և վերջինիս փաստական աքսորը դիտում է այդ երկու անձնավորությունների անձնական հակակրանքի տեսանկյունից, չնկատելով դրա հիմքում ընկած քաղաքական դրդապատճառները։ Երիցյանի փաստական նյութով խիստ հագեցված աշխատություններում ընդհանուր առմամբ ճիշտ գնահատական է տրվում Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման ակտին, դրա բարերար հետևանքներին հայ ժողովրդի արևելյան հատվածի համար, չձերբազատվելով, սակայն, ցարիզմին բարեգործական միսիայով օժտելու տրամադրություններից։

Մաղաքիա Օրմանյանը ևս անդրադարձել է մեզ հետաքրքրող հարցերին իր մեծածավալ «Ազգապատում» աշխատության երրորդ գրքում (Երուսաղեմ, 1927)։ Անհրաժեշտ փաստական նյութը Օրմանյանը բացառապես քաղել է Երիցյանի վերը նշված և Մսեր մագիստրոս Մսերյանցի[6] աշխատություններից։ Բայց իր եզրակացություններում նա ճիշտ է նկատում, որ, չնայած հայ ժողովրդի և նրա գործիչների ակնկալությունների ձախողմանը, ռուսական տիրապետությունը որոշակիորեն դրական հետևանքներ է ունեցել Արևելյան Հայաստանի զարգացման հարցում։

Ծայրահեղ ազգային-պահպանողական և ռուսատյացության դիրքերից է քննության առկա հարցերը դիտարկել Եղիշե ավ. քահ. Գեղամ-

[4] Այս մասին մանրամասն տե՛ս **Ն. Բ. Սարուխանյան**, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Երևան, 1971։

[5] **Ալ. Երիցյան**, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա. և Բ., Թիֆլիս, 1894—1895։ Նույնի Ներսես Ե. Աշտարակեցի, «Փորձ», 1881, № 3։ Նույնի Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետության մեջ, «Փորձ», 1877—1878, № 2։

[6] **Մ. Մսերեանց**, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, Մոսկվա, 1876։

յանցը[7]։ Նա ի հայտ չի բերում պատմական դեպքերի և դեմքերի գնահատության համար խիստ անհրաժեշտ օբյեկտիվ պատմական մոտեցում, ամեն ինչ ջանում է տեսնել իր ապրած ժամանակի ակնոցներով, ուստի և լուտանքի ու պարսավանքի տեղատարափ է հեղում Հովսեփ Արղությանի, Ներսես Աշտարակեցու, Լազարյանների և բոլոր նրանց գլխին, ովքեր իրենց գործունեությամբ իբր նսեմացրին հայ եկեղեցու դերն ու նշանակությունը, դարձան ռուսական քաղաքականության կույր գործիքներ և դրանով իսկ՝ հայ ժողովրդի հետագա բոլոր դժբախտությունների պատճառ։

XVIII դարի վերջի—XIX դարի սկզբի հայ ժողովրդի պատմության կարևոր հարցերին անդրադարձել է նաև հայ լիբերալ-բուրժուական պատմագրության կարկառուն դեմքերից բազմավաստակ պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյանը)։ Բայց նա տարբեր ժամանակներում խիստ հակասական մոտեցում է ցուցաբերել հատկապես հայ-ռուսական հարաբերությունների հարցին։ Եթե նախահեղափոխական շրջանի իր աշխատություններում[8] Լեոն գերագնահատում էր Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պատմական նշանակությունը, որքանով որ այն նպաստավոր պայմաններ ստեղծեց արևելահայերի ազգային համահավաքման և առաջընթացի համար, վերջ տվեց խանա-պարսկական շրջանի անիշխանությանն ու ապօրինություններին, ապա կյանքի վերջին շրջանում, ընկնելով վուլգար-սոցիոլոգիզմի ազդեցության տակ, բոլորովին հակառակ դիրք գրավեց՝ բացասելով այն դրական դերը, որ խաղացել է Արևելյան Հայաստանի կյանքում Ռուսաստանի տիրապետությունը[9]։ Ներսես Աշտարակեցուն և նրա համախոհներին Լեոն այս շրջանում համարեց ցարապաշտներ, ցարական քաղաքականության հլու-հնազանդ գործիքներ, չկամենալով տեսնել Աշտարակեցու և մյուս հայ գործիչների իրական ձգտումները, թեև նրան մասամբ ծանոթ էին դրանց վերաբերող որոշ փաստեր։ Այսուհանդերձ, չի կարելի չնշել այն մեծ վաստակը, որ ունի Լեոն տվյալ ժամանակաշրջանի պատմության փաստերի վերհանման և մշակման գործում։

[7] **Եղիշե** ավ. քահ. **Գեղամյանց**, Պատմական քաղվածքներ, պրակ I—X, Բագու, 1909—1915։ Նույնի Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ հայկական հարցի չորրորդ շրջանը, Բագու, 1915։ Նույնի Պատմության դասերը, Բագու, 1915։

[8] **Լեո**, Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1901։ Նույնի Ստեփանոս Նազարյանց, հ. 1—2, Թիֆլիս, 1902—1903։ Նույնի Գրիգոր Արծրունի, հ. 1—3, Թիֆլիս, 1902—1905։ Նույնի Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914։ Նույնի Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Թիֆլիս, 1915, և այլն։

[9] **Լեո**, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, պրակ I—II, Երևան, 1926—1927։

Հայ-ռուսական հարաբերությունների պատմության իսկապես գիտական ուսումնասիրության ձեռք զարկեց միայն խորհրդահայ պատմագրությունը։ Այդ կարևոր պրոբլեմի առաջին մարքսիստ ուսումնասիրողը եղավ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը[10]։ Հանգամանորեն հետազոտելով հայ ազատագրական շարժման գաղափարական և գործնական դրսևորումները դեռևս խոր միջնադարից, Աշոտ Հովհաննիսյանը իր աշխատություններում ցույց տվեց այն ակունքները, որոնցից սնունդ էր առնում հայ ազգային-ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը։ Աշոտ Հովհաննիսյանի աշխատությունները հնարավորություն են տալիս հետևելու հայ ազատագրական մտքի զարգացման ելևեջներին, տեսնելու դեպքերի տրամաբանական առաջընթացը և այն բնորոշն ու միևնույն ժամանակ միասնականը, որը կազմեց հայ ժողովրդի ազատագրության հարցի յուրատեսակ դրսևորումը պատմական տարբեր ժամանակաշրջաններում։

Մեզ հետաքրքրող պատմաշրջանի հարցերի քննությամբ զբաղվել են ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ռ. Հովհաննիսյանը և Մ. Գ. Ներսիսյանը, պրոֆեսորներ Վ. Ա. Պարսամյանը, Զ. Տ. Գրիգորյանը, Թ. Խ. Հակոբյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Բ. Բալայանը, Ն. Սարուխանյանը և ուրիշներ։ Նրանք շրջանառության մեջ դրեցին մեծ քանակությամբ արխիվային նոր նյութեր, գիտական մշակման ենթարկելով դրանք, քննության առան հարցեր, որոնք մինչ այդ պատմական լուրջ հետազոտության չէին ենթարկվել։

Անդրկովկասի տիրապետության շուրջը ծավալված դիվանագիտական պայքարի պատմության հարցերի ուսումնասիրությանն է նվիրված ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանի արժեքավոր մենագրությունը[11]։ Բազմաթիվ օտար և հայրենական աղբյուրների, գրականության, ինչպես նաև արխիվային նյութերի համադրմամբ Ա. Ռ. Հովհաննիսյանը բացահայտում է դիվանագիտական այն սուր պայքարի ելևեջները, որը տարվում էր Անդրկովկասը ռուսական ազդեցությունից հեռու պահելու նպատակով։ Հեղինակը հիմնավոր քննադատության է ենթարկում Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին քաղաքական նկրտումները Անդրկովկասի և անդրկովկասյան ժողովուրդների նկատմամբ, առաջ է քաշում և հիմնավին ապացուցում այն թեզը, որ այդ երկու գաղութակա-

[10] **Աշ. Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. I—II, Երևան, 1957—1959։ Նույնի Հայ ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921 և այլն։

[11] **А. Р. Иоаннисян,** Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.

լական տերությունների արտաքին քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում հակառակ էր ընթանում անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական ձգտումներին, որոնք Ռուսաստանի ձեռնտվությունն էին համարում իրենց փրկության միակ երաշխիքը։

Ա. Ռ. Հովհաննիսյանը քննարկում է նաև Դավիթ-Դանիելյան պայքարի հարցը, բայց հեղինակը, խորամուխ չլինելով հարցի պատմության մեջ, կրկնում է նախկինում հայտնված այն միտքը, որ իբր Դավիթ կաթողիկոսը պարսկական կողմնորոշման կրողն էր, իսկ Դանիելը՝ ռուսական։

Ա. Ռ. Հովհաննիսյանի աշխատության մեջ քննարկվում է առ Գյուլիստանի պայմանագրի կնքումն ընկած ժամանակահատվածի դիվանագիտական պայքարի պատմությունը։ 1813—1828 թթ. դիվանագիտական հարաբերությունների հարցերին է նվիրված Բ. Բալայանի աշխատությունը[12], որը գալիս է մասամբ լրացնելու Գյուլիստանից մինչև Թուրքմենչայ ընկած ժամանակամիջոցի անգլո-ռուսական հակասությունների պատմությունն Իրանում։

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը առաջինն էր խորհրդահայ պատմագրության մեջ, որ հատուկ ուսումնասիրության նյութ դարձրեց ռուս ժողովրդի 1812 թվականի հայրենական պատերազմի վերաբերյալ հայկական աղբյուրներում պահպանված տվյալները և ցույց տրվեց այն վերաբերմունքը, որ ունեցավ հայ ժողովուրդը դեպի ռուս ժողովրդի ազատագրական այդ պոռթկումը[13]։ Հետագայում նա է՛լ ավելի ընդլայնեց հիշյալ թեմայի ուսումնասիրության շրջանակները՝ առհասարակ ցույց տալով Կովկասի ժողովուրդների ունեցած անմիջական բարոյական և նյութական մասնակցությունն ու աջակցությունը 1812 թվականի հայրենական պատերազմին[14]։

Մյուս կարևոր և հետաքրքրական պրոբլեմը, որ դարձավ Մ. Գ. Ներսիսյանի ուսումնասիրության առարկա, Կովկաս աքսորված դեկաբրիստների մասնակցությունն էր Արևելյան Հայաստանի ազատագրության գործին և, ընդհանրապես, 1826—1828 թթ. ռուս-պարսկական

[12] **Б. Балаян,** Международные отношения Ирана в 1813—1828 гг., Ереван, 1967.

[13] **М. Г. Нерсисян,** Участие армян в Отечественной войне 1812 г., в его книге: «Из истории русско-армянских отношений», кн. 1, Ереван, 1956;
Մ. Ներսիսյան, Արխիվային նոր փաստաթղթեր 1812 թ. հայրենական պատերազմի մասին, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 3—4։

[14] **М. Г. Нерсисян,** Отечественная война 1812 года и народы Кавказа, Е., 1965.

և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներին[15]։ Նա դրեց ուշադրության արժանի այն թեզը, որ աքսորական դեկաբրիստների մասնակցությունը հիշյալ պատերազմներին ընդգծեց և ուժեղացրեց դրանց մեջ ազատագրական այն գծերը, որ համապատասխանում էին հայ ժողովրդի շահերին։ Մ. Գ. Ներսիսյանը արխիվներից երևան հանեց և հրապարակեց դեկաբրիստների գրական ժառանգության մեջ պահպանված փաստաթղթերը, օրագրերը, հուշագրությունները և այլն, որոնք մեծ լույս են սփռում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ ժողովրդի կացության և դեպի Ռուսաստանն ունեցած վերաբերմունքի վրա։

Խնդրո առարկա հարցերի ամբողջական լուսաբանման տեսակետից խիստ կարևոր են պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի աշխատությունները։ Նրա առաջին ուսումնասիրություններից մեկը նվիրված է ցարական Ռուսաստանի՝ Հայաստանում ունեցած գաղութակալական նկրտումների բացահայտմանը և դրանց քննադատությանը[16]։ Այս աշխատության մեջ նա առաջ քաշեց այն թեզը, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին չարիքներից փոքրագույնն էր հայ ժողովրդի համար։ Բայց իր հետագա աշխատություններում պրոֆ. Պարսամյանը լռելյայն հրաժարվեց այդ դրույթից և բացառապես դրական գնահատական տվեց միացման ակտին։ Կարևոր է նաև Վ. Ա. Պարսամյանի հետազոտությունը՝ նվիրված դեկաբրիստների մասնակցությանը Արևելյան Հայաստանի ազատագրությանը[17]։

Առավել ուշադրության արժանի է պրոֆ. Պարսամյանի՝ Ա. Ս. Գրիբոյեդովին և XIX դ. 20-ական թթ. հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող մենագրությունը[18], որտեղ նա, չնայած Ա. Ս. Գրիբոյեդովի խաղացած դերի որոշ իդեալականացմանը, դնում և քննարկում է առաջնահերթ կարևորություն ունեցող այնպիսի մի հարց, ինչպիսին էր հայկական պետականության վերականգնման հարցը։ Քննարկելով պատմական նորահայտ վավերագրեր, որոնք խոշոր հետաքրքրություն են ներկայացնում հայկական պետականության վերականգնման կամ, ավելի ճիշտ, ռուսական կայսրության սահմաններում հայկական ինքնավարություն ստեղծելու հարցի պարզաբանման առումով, պրոֆ. Պարսամյանը խորհրդահայ պատմագրության մեջ առաջինն անդրադարձավ

[15] **Մ. Գ. Ներսիսյան,** Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958։

[16] **Վ. Պարսամյան,** Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940։

[17] **Վ. Պարսամյան,** Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1957։

[18] **Վ. Ա. Պարսամյան,** Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947։ Նույնի Հայ ժողովրդի պատմություն, բուհական ձեռնարկ, հ. 3, Երևան, 1967։

այդ հարցի վերլուծությանը։ Սակայն նա հայկական ինքնավար պետության ստեղծման հայ ազատագրական գործիչների ծրագիրը համարում է անորոշ, մասամբ անտեսելով այդ ուղղությամբ նրանց ծավալած քայլերի նպատակաուղղվածությունը։

Հայ-ռուսական հարաբերությունների և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմության հետազոտության տեսանկյունից հատուկ ներդրում են պրոֆ. Զ. Տ. Գրիգորյանի ուսումնասիրությունները[19]։ Խորհրդահայ պատմագրության մեջ կատարելով առաջին ծավալուն փորձը՝ ուրվագծելու հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամական կապերի ամբողջական պատմությունը, պրոֆ. Զ. Տ. Գրիգորյանը նշեց այդ կապերի պատմական էվոլյուցիան, նշմարեց դրանց զարգացման փուլերը և այդ փուլերի հիմքում ընկած հիմնական պրոցեսները։ Նրա աշխատությունները ներկա մեր ուսումնասիրությանը վերաբերող ժամանակաշրջանի առնչությամբ կարևոր են այն առումով, որ, թեև համառոտակի, բայց գրեթե ամբողջական ձևով են ներկայացնում հայ-ռուսական հարաբերությունների պատկերը։ Նա քննադատաբար ցույց է տալիս թե՛ ռուսական կառավարության քաղաքական կուրսը, թե՛ Անդրկովկասի համար ծավալված միջազգային դիվանագիտական լարված պայքարի պատկերը և թե՛ հայ ժողովրդի զինական աջակցությունը ռուսական զորքերին։

Խորհրդային ռուս պատմաբաններից անհրաժեշտ է հիշատակել Ա. Վ. Ֆադեևին, որն իր մենագրության մեջ[20], արտաքին քաղաքական բնույթի հարցերից զատ, մեծ տեղ է հատկացրել նաև անդրկովկասյան ժողովուրդների հետապնդած նպատակների բացահայտմանը, բայց սահմանափակելով դրանք սոսկ մահմեդական լուծը թոթափելու ձգտումով։ Ուշադրության արժանի է Ա. Վ. Ֆադեևի առաջ քաշած այն թեզը, որ հարցը չի կարող ամբողջական և գիտական լուծում ստանալ, եթե այն սահմանափակվի սոսկ ներկայումս գոյություն ունեցող տարածքային շրջանակներով, մի բան, որը նկատելի միտում է հատկապես ադրբեջանական պատմագրության մեջ։

[19] **Զ. Տ. Գրիգորյան,** Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960։ Նույնի Հայ և ռուս ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին, Երևան, 1957, **З. Т. Григорян,** Присоединение Восточной Армении к России, М., 1959.

[20] **А. В. Фадеев.** Россия и Кавказ первой трети XIX в., М., 1960.

1969 թ. Մոսկվայում լույս տեսավ Հաջի Մուրադ Իբրահիմբեյլու ուսումնասիրությունը[21], նվիրված XIX դարի առաջին երեսնամյակի ռուս-ադրբեջանական հարաբերություններին։ Այստեղ նա փորձում է ցույց տալ ադրբեջանական ժողովրդի ձգտումը դեպի Ռուսաստան և աջակցությունը ռուսական բանակներին, ինչպես նաև Անդրկովկասի համար ծավալված դիվանագիտական ու քաղաքական պայքարը։ Սակայն հեղինակը առաջ է քաշում նաև դրույթներ, որոնք ճիշտ չեն մեկնաբանում իրերի վիճակը։ Այսպես, նրա իսկ աշխատության հիմնական միտումին հակասում է այն դրույթը, որ ցարիզմը ռազմաֆեոդալական դաժան մեթոդներով էր հնազանդեցնում Անդրկովկասի ժողովուրդներին, և որ ժամանակի հայկական աղբյուրների գիտական արժեքը ծայրաստիճան ցածր է, որովհետև դրանք իրադարձությունները դիտում էին մահմեդականության և քրիստոնեության պայքարի տեսանկյունից և այլն։ Մինչդեռ հայտնի է, որ անդրկովկասյան քրիստոնյա ժողովուրդների համար պայքարը պետք է որ գնար հենց այդ դրոշի տակ, քանի որ մահմեդական օտարակալության լուծն էր նրա թշվառության հիմնական պատճառը։

XIX դարի առաջին երեսնամյակի Արևելյան Հայաստանի, միջազգային դիվանագիտական պայքարի և այլ հարցերի վերաբերյալ մեզ տեղեկություններ են հաղորդում նաև ժամանակի եվրոպական և ռուս ճանապարհորդներն ու դիվանագետները՝ Ջ. Մալկոլմը[22], Ջ. Մակդոնալդ Քինեյրը[23], Հարֆորդ Ջոնսը[24], Պ. Ժոբերը[25], գեներալ Գարդանը[26], Ու.

[21] **Х. М. Ибрагимбейли**, Россия и Азербайджан в первой трети XIX в., М., 1969.

[22] **J. Malcolm.** The History of Persia from the most Early Period to the Present Time. Vod. I—II, London, 1815, 1829; **J. Malcolm.** Sketches of Persia, London, 1945; **Kaye J. W.** The Life and Correspondonce of Sir J. Malcolm, vol. I, London, 1856.

[23] **J. Macdonald Kinneir.** A Journey to Asia Minor, Armenia and Koordistan (1813—1814), London, 1818; **J. Macdonald Kinneir.** A Geographical Memoir of the Persian Empire, London, 1813.

[24] **Harford Jones Brydges.** An Account of the Transactions of His Majesty's to the Court of Persia in the Years 1807—1811, London, 1834.

[25] **P. A. Jaubert.** Voyage on Arménie et en Perse, Paris, 1821.

[26] **Gardane, Journal** d'un voyage dans la Turquie et la Perse fait en 1807 et 1809, Paris-Marseille, 1809; **Mission du général Gardane en Perse sous le Premier Empire.** Documents historiques publiées par son fils le C. Alfred de Gardane, Paris, 1865.

Աուզլին[27], Ֆրեյգանը[28], Ժ. Գամբան[29], Ջ. Մորիերը[30], Մ. Կոցեբուն[31], Գ. Դրուվիլը[32] և շատ ուրիշներ։

Անգլիական ու ֆրանսիական ճանապարհորդների և դիվանագետների ուղեգրություններն ու ուսումնասիրությունները իրենց հիմքում ունեն մեկ ընդհանուր բան։ Դա ուղղվածությունն է ռուսական կառավարության քաղաքականության դեմ։ Հարցերին մոտենալով միջազգային դիվանագիտական և քաղաքական պայքարի տեսանկյունից, միտումնավոր կերպով արտացոլելով իրենց կառավարությունների շահագրգռությունները, նրանք զանց են առնում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը և չեն անդրադառնում վերջինիս։ Ճիշտ է, նրանցից շատերը, այնուամենայնիվ, ստիպված են խոստովանել հայ ժողովրդական զանգվածների անսքող համակրանքը դեպի Ռուսաստանը, բայց և, միևնույն ժամանակ, անտեսում են հայ ժողովրդի քաղաքական ակնկալությունների բուն էությունը։ Արձանագրելով հանդերձ հայ ժողովրդի բոլոր խավերի ճնշված և իրավազուրկ վիճակը խանական լծի ներքո, դրա պատճառները նրանք որոնում են ոչ թե տիրող սիստեմի, այլ առանձին պաշտոնատար բարձրաստիճան անձանց կամայականությունների մեջ։

Չպետք է մոռանալ նաև այն կարևոր հանգամանքը, որ հիշյալ դիվանագետների և ճանապարհորդների ընձեռած նյութերի հիման վրա է հետագա ամբողջ եվրոպական պատմագրությունը կառուցել իր կոնցեպցիան։ Համառոտակի այդ կոնցեպցիան հանգում է նրան, որ Ռուսաստանը ագրեսիվ քաղաքականություն է վարել Պարսկաստանի նկատմամբ և վերջինիցս խլել է նրա անդրկովկասյան տիրույթները՝ իր դեպի Արևելք և, մասնավորապես, Հնդկաստան ծավալվելու ճանապարհին։ Այդպիսով, առանձնապես Անգլիան, դուրս է բերվում իբրև պաշտպանվող կողմ, այն դեպքում, երբ բոլորովին զանց են առնվում անդրր-

[27] **W. Ousley**, Travels in various Countries of the East, More Particular ly Persia, vol. I—III, London, 1819—1823.

[28] **Freygan**, Letters sur la Caucase et la Georgie, suivies d'une relation d'un voyage en Perse en 1812, Hambourg, 1816.

[29] **Gamba J. Fr.**, Voyage dans la Russie méridionale et particulierement dans les provinces situées au-delà de Caucase (1820—1824), vol. I—II, Paris, 1826.

[30] **J. Morier, A Journey** through Persia, Armenia and Asia Minor to Contantinople in the Jears 1808 and 1809, London, 1812; **J. Morier,** A second Journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople (1810—1816), London, 1818.

[31] **M. de Kotzebue.** Voyage en Perse, a la suite de l'ambassade russe, en 1817, Paris, 1819.

[32] **G. Drouville**, Voyage en Perse, fait en 1812 et 1813, vol. I—II, Paris, 1825.

կովկասյան ժողովուրդների քաղաքական շահագրգռվածությունները և կենսական շահերը։ Անգամ ժամանակակից եվրոպական պատմագրության մեջ տիրապետող է հանդիսանում այն տեսակետը, որ Անգլիայի և Ֆրանսիայի հակամարտությունը Միջին և Մերձավոր Արևելքում դարձավ հիմնական պատճառն այն բանի, որ Ռուսաստանը զավթեց Անդրկովկասը, կրկին անտեսելով անդրկովկասյան ժողովուրդների բուն շահերը։ Վերջին պարագան ցայտուն կերպով արտացոլված է Ռ. Մ. Սեյվորիի հոդվածում[33]։ Հենց դա էլ անհրաժեշտ է դարձնում, որպեսզի լրիվ կերպով բացահայտվի և մեկնաբանվի անդրկովկասյան ժողովուրդների քաղաքական ակնկալությունների բուն էությունը։

* * *

Մենք այստեղ կանգ առանք այն բոլոր կարևոր հարցերի վրա, որոնք քննարկվել են պատմական գրականության մեջ։ Այժմ համառոտակի նշենք այն դրույթները, որ առաջ են քաշվել և մեկնաբանվել մեր կողմից։

Մեր ուսումնասիրության առարկան Արևելյան Հայաստանն ենք դարձրել այն պատճառով, որ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչները ազատագրական պայքարում շեշտը դնում էին առաջին հերթին Արևելյան Հայաստանի վրա, որպես երբեմնի հայ պետականության բնօրրան և մի վայր, որտեղ գտնվում էր հայկական եկեղեցու կենտրոնը, իսկ վերջինս նրանք դիտում էին իբրև միակ համազգային ինստիտուտը, որը կոչված էր համախմբելու հայ ժողովրդի ուժերը, զուգորդելու նրա ձգտումները։ Այս առումով էլ առաջ էր քաշվում հայկական եկեղեցու կառավարման բարեփոխման ծրագիրը, որը տիրող պայմաններում հնարավոր չեղավ մինչև վերջ իրագործել։

Մենք հանգամանորեն քննարկում ենք նաև հայ եկեղեցու ներսում և, առհասարակ, հայ իրականության մեջ ծավալված Դավիթ-Դանիելյան պայքարի հարցը նոր տեսանկյունից։ Փաստերից ելնելով մենք հանգում ենք այն համոզման, որ այդ պայքարը երկու կողմնորոշումների (օրիենտացիաների) պայքար չէր, այլ՝ հասարակական երկու հոսանքների, որոնք ունենալով մեկ ընդհանուր նպատակակետ՝ Հայաստանի ազատագրումը մահմեդական օտարակալության լծից, ընթանում էին տարբեր ուղիներով։

---

[33] R. M. Savory, British and French Diplomacy in Persia 1800—1810, "Iran", vol. X, London, 1972.

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության ուսումնասիրությունը ցույց է տալիս այն բոլոր խոչընդոտները, որոնք ընկած էին հայ ժողովրդի բնականոն զարգացման ճանապարհին և խանգարում էին դրան, երկիրը դատապարտելով հետամնացության և դարձնելով ֆեոդալական անիշխանության զոհ։ Մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել գյուղացիական զանգվածների անձնական կախվածության հարցի վրա, որովհետև այդ հարցը արծարծվել է հայ ազատագրական բոլոր ծրագրերում որպես արմատական պրոբլեմներից մեկը։ Այդ առումով էլ գյուղացիության անձնական կախվածության հարցը հանգամանորեն քննարկված է սույն աշխատության մեջ։

Սկսած XVII դարի երկրորդ կեսից հայ ժողովրդի ազատագրական ակնկալությունները հիմնականում շաղկապվել են Ռուսաստանի հետ։ Եթե ընդհուպ մինչև XVIII դարի վերջերը Անդրկովկասում ռուսական կառավարության հիմնական նպատակադրումներից մեկը եղել է հայկական պետականության վերականգնման հարցը, ապա հաջորդ հարյուրամյակում պատկերը լրիվ փոխվում է։ Դա կապված էր քաղաքական այն նոր ընթացքի հետ, որը որդեգրում էր ցարիզմը Վրաստանի միացումից հետո։ Այսպիսով, Վրաստանի Ռուսաստանին միացման հարցը սերտորեն առնչվում էր Հայաստանի ապագա կացության հարցին։ Այդ է պատճառը, որ մենք բավական հանգամանորեն քննարկում ենք Վրաստանի՝ Ռուսաստանին միացման հարցը, որովհետև դա շրջադարձ էր ցարական կառավարության քաղաքականության մեջ և հայ ազատագրական շարժման գործիչներին կանգնեցնում էր բավական բարդ խնդրի առջև, այն է՝ ի՞նչ է լինելու Հայաստանի ապագան։

XIX դարի առաջին երեսնամյակը նշանավորվեց ցարիզմի պայքարով նախ և առաջ Արևելյան Հայաստանին տիրանալու համար։ Այդ պայքարում հայ գործիչների և հայ ժողովրդական զանգվածների անսքող համակրանքը Ռուսաստանի կողմն էր, որովհետև վերջինիս մեջ էր տեսնում նա մահմեդական մոլեռանդ լծից ազատագրվելու միակ գրավականը։ Բայց, դա ամենևին էլ ձգտում չէր մեկ լուծը մեկ այլ լծով փոխարինելու, որքան էլ որ վերջինս թեթև և տանելի լիներ։ Փաստերը ցույց են տալիս, որ հայ ժողովուրդը նպատակ է հետապնդել, ստեղծված պայմաններում, ձեռք բերել գեթ ազգային ինքնավարություն ռուսական կայսրության կազմում։ Փաստերը ցույց են տալիս նաև, որ ցարական կառավարությունը քաջ գիտակցում էր հայ ժողովրդի այդ ձգտումը և ստիպված էր մասնակի տուրք տալ դրան՝ ստեղծելով Հայկական մարզ։

Ահա հարցերի այն ամբողջությունը, որ մենք քննարկում ենք մեր աշխատության մեջ և որը բնորոշում է հայ-ռուսական հարաբերություն-

ների էությունը քննարկվող ժամանակաշրջանում։ Դրանով մենք ջանացել ենք նաև ցցուն դարձնել պատմական այն անժխտելի իրողությունը, որ XIX դարի առաջին երեք տասնամյակներին Անդրկովկասը և, մասնավորապես, Արևելյան Հայաստանը միջազգային դիվանագիտական և քաղաքական պայքարի սոսկ կրավորական գործիք չի հանդիսացել, որ հայ ժողովուրդը, ինչպես նաև անդրկովկասյան մյուս ժողովուրդները, ունեցել են իրենց իդեալները և ձգտումները, գործուն կերպով մարտնչել դրանց կենսագործման համար։ Դա երկրի արտադրողական ուժերի զարգացման պահանջն էր, որոնք ստեղծված փակուղուց ելք էին որոնում։ Դրանով իսկ մերժվում է արևմտաեվրոպական բուրժուական պատմագրության ձգտումը՝ դիտել Անդրկովկասը իբրև պարսկական տարածք, իսկ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին համարել «Ռուսաստանի իմպերիալիստական էքսպանիայի քաղաքականություն Պարսկաստանի հաշվին» և «պարսկական լայնատարած տարածքների» նվաճում ու մշտական անեքսիա»[34]։ Փաստը մնում է փաստ, որ Ռուսաստանի առաջխաղացումը ընդհանուր առմամբ բխում էր հայ ժողովրդի շահերից, երկրի հետագա զարգացման շահերից, ուստի և այն աջակցություն էր գտնում ժողովրդական լայն զանգվածների կողմից։ Հարցերի նման ամբողջական դիտարկումն է մեզ հնարավորություն ընձեռում դիալեկտիկական միասնության մեջ բացահայտելու տվյալ ժամանակաշրջանում Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների ողջ բարդ համակցությունը, ըմբռնելու դրանց էությունը։

[34] R. M. Savory. British and French Diplomacy in Persia 1800—1810, "Iran", vol. X, London, 1972, p. 43.

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՍՆԱՄՅԱԿԻՆ

1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ

Դժվար է համառոտակի գրել Արևելյան Հայաստանի վարչական բաժանման և վարչակարգի մասին։ Զուրկ սեփական պետականությունից, բաժան-բաժան եղած տարբեր խանությունների միջև, որոնք շատ հաճախ թշնամաբար էին տրամադրված միմյանց նկատմամբ, Արևելյան Հայաստանը մի խայտաբղետ պատկեր էր ներկայացնում։ Այստեղ կարելի էր հանդիպել ֆեոդալական ճնշման ամենատարբեր ձևերի, հարկման ու կառավարման զանազան եղանակների։ Երբեմն մի քանի երկրների կառավարման այլևայլ եղանակները, գործող օրենքները միախառնվում էին և ստեղծում մի բարդ համակցություն։ Դյուրին է պատկերացնել, թե նման պայմաններում որպիսի ծանր ու տառապալից գոյավիճակ էր ստեղծվում ժողովրդական զանգվածների համար։

XIX դարի սեմին Արևելյան Հայաստանի տարածքը բաժանված էր Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գանձակի[1] խանությունների և Քարթլի-Կախեթի թագավորության միջև։ Երկրի տարածքի մեծ մասը գրավում էր Երևանի խանությունը, ապա՝ Ղարաբաղի և Նախիջևանի խանությունները։

Խանություններն իրենց հերթին ստորաբաժանվում էին մահալների։ Երևանի խանությունը կազմված էր հետևյալ տասնհինգ մահալներից՝ Կրխբուլաղի, Զանգիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Փարշենիս-Դարաքենդի, Սաաթլուի, Թալինի, Սեիդլի-Աղսախլիի, Սարդարապատի, Կարբիբասարի, Ապարանի, Դարաչիչագի և Գյոկչայի։ Մինչև 1805 թվականը Երևանի խանության տարածքի մեջ

[1] Գյանջայի խանությունը հայկական աղբյուրներում առհասարակ օգտագործվում է Գանձակի խանություն ձևով, ուստի և մենք նպատակահարմար համարեցինք պահպանել այն։

մտնում էր նաև Շորագյալի կամ Արթիկի սուլթանությունը, որը այդ թվականին գրավվեց ռուսական զորքերի կողմից և միացվեց Ռուսաստանին։ Խանության գահանիստ Երևան քաղաքը վարչական առանձին միավոր էր։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ վարչական վերոհիշյալ բաժանման հիմքում ընկած էր ջրաբաշխման սկզբունքը, այսինքն՝ յուրաքանչյուր մահալ կազմվում էր այն բնակավայրերից, որոնց հողերը ոռոգվում էին միևնույն գետի ջրերով։ Վարչական բաժանման նման սիստեմը բխում էր Հայաստանի և ընդհանրապես ամբողջ Արևելքի կլիմայական պայմաններում արհեստական ոռոգման ունեցած նշանակությունից և, անշուշտ, դյուրացնում էր մահալների, իբրև ինքնամփոփ վարչական տնտեսական միավորների, կառավարումը։

XIX դարի առաջին քառորդում Նախիջևանի խանությունը անմիջականորեն ենթարկվում էր Ատրպատականի տիրակալի՝ գահաժառանգ Աբբաս Միրզայի իշխանությանը։ Նախիջևանի խանությունն իր հերթին բաժանված էր հինգ մահալների՝ Ալինջա-չայի, Նախիջևանի, Մավազիխաթունի, Խոքի և Դարալագյազի։ Նախիջևանի հարևանությամբ ընկած Օրդուբադի գավառի մահալներն էին՝ Ագուլիսը, Դասթինը, Բելևին, Ջանանաբը։

XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին քաղաքական խոշոր փոփոխություններ էին կատարվել Ղարաբաղի խանության ներսում։ Հայկական նախկին հինգ մելիքությունները՝ Գյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան և Դիզակը, կորցրել էին իրենց նախկին կիսանկախ վիճակը, իսկ հայ մելիքներից շատերը հարկադրված տարագրվել էին Վրաստան։ Ղարաբաղի Իբրահիմ Խալիլ խանը, խաբեությամբ ու խարդավանքներով, օգտագործելով հայ մելիքների միջև եղած հակասությունները, սեփականացրել էր նրանց տիրույթները և դրանք կառավարում էր իր դրածոների միջոցով։ Իբրահիմ Խանի օրերից Ղարաբաղի խանության կազմի մեջ էր մտնում նաև Ղափան-Զանգեզուրի շրջանը։ Ղարաբաղի խանությունը բաժանված էր հետևյալ մահալների՝ Սիսիանի, Կապանի, Դեմուրչասաիլի, Բաղաբերդի, Քյաբիրլուի, Բարգուշատի, Տաթևի, Ջիվանշիրի, Ջրաբերդի, Խուրդափարայի, Փիսիանի, Օթուզ-Իքիի, Իգիրմիտիորդի, Կարաչորլուի, Վարանդայի, Դիզակի, Աջանանի, Ջավանշիրի, Թալիշի, Խաչենի, Մեղրու, որոնց գլուխ կանգնած էին կամ հայ մելիքներ և կամ մահմեդական բեկեր։

1805 թվականին, Քյուրակ-չայի պայմանագրով, ամբողջ Ղարաբաղի խանությունը միացվեց Ռուսաստանին, բայց մինչև 1822 թվականը այստեղ պահպանվում էր խանական կառավարման կարգը։ Միայն 1822

թվականին, Մեհթի-Ղուլի խանի փախուստից հետո, Ղարաբաղում մտցվեցին ռուսական կառավարման ձևեր և մասամբ վերջ տրվեցին բռնապետական կամայականություններին։

Ինչ վերաբերում է Հայաստանի հյուսիսային կողմերին, ապա, ինչպես նշվեց, 1801 թվականին վրացական թագավորության կազմում նրանք միացվեցին ռուսական կայսրությանը։ Հյուսիսային Հայաստանի կազմում Ռուսաստանին էին միացվել Փամբակի, Բորչալուի, Ղազախի և Շամշադինի գավառները[2]։

Մահալների կառավարիչներն էին միրբոլուքները կամ նաիբները, որոնց նշանակում էին սարդարը կամ խանները։ Լինում էին դեպքեր, երբ մեկ միրբոլուքի կառավարմանն էին հանձնվում մեկից ավելի մահալներ։ Միրբոլուքները հետևում էին իրենց տնօրինությանը հանձնված մահալներում տուրքերի նշանակման և գանձման գործին, լուծում էին բնակչության մեջ ծագած վեճերը, ի կատար ածում վերադաս դատաստանական վճիռներն ու որոշումները։

Խանությունների կենտրոնական քաղաքները վարչական առանձին միավորներ էին և անմիջականորեն կառավարվում էին դարուղաների (ոստիկանապետ) ձեռքով։ Սրանք պարտավոր էին հետևել քաղաքների ներքին կարգ ու կանոնին, հսկել շուկաները և այլն։

Հայկական որոշ շրջաններում կառավարման համար նշանակվում էին մելիքներ՝ օժտված միրբոլուքներին հավասար իրավունքներով։ Այսպես, Կրխբուլաղի մահալը հանձնված էր Գեղամյաններին, իսկ Երևանի հայ ազգաբնակչությանը կառավարում էին Մելիք-Աղամալյանները։ Հիշյալ ժամանակաշրջանում Կրխբուլաղի կառավարիչն էր հարյուրապետ Գաբրիել Գեղամյանը, իսկ Երևանի մելիքը Աբրահամ Մելիք-Աղամալյանն էր։ Սրանք սարդարի արքունիքում ներկայացնում էին խանության հայ ազգաբնակչությանը։ Ի տարբերություն միրբոլուքների, նշված հայ մելիքների իշխանությունը ժառանգական էր, փոխանցվում էր հորից որդուն և կամ պահպանվում տվյալ տոհմի շրջանակներում։

Հայկական գյուղերն իրենց հերթին կառավարվում էին գյուղական հայ մելիքների և տանուտերերի կողմից։ Այս պաշտոններն ընտրովի էին։ Սակայն, որչափ ընտրությունները կատարվում էին նեղ շրջանակներում, ժամանակի ընթացքում դրանք ևս գրեթե ժառանգական բնույթ էին ընդունել։ Մեծ թվով բնակչություն ունեցող գյուղերը շատ դեպքերում կառավարում էին մեկից ավելի մելիքներ կամ տանուտերեր։

---

[2] Ռուսական կովկասյան իշխանությունները հիշյալ գավառները անվանում էին դիստանցիաներ՝ ուղեմասեր։

Քանի որ ավազակային հարձակումներն ու կողոպուտը, որոնք ուղեկցվում էին սպանություններով ու գերեվարությամբ, սովորական երևույթ էին այդ ժամանակաշրջանում, ուստի ամեն մի գյուղ ունենում էր զենք կրելու ընդունակ մարդկանցից կազմվող ջոկատներ, որոնք հարկ եղած դեպքում զինվում էին, հետապնդում կողոպտիչներին և ջանում ետ բերել հափշտակված իրերն ու անասունները: Այդ ջոկատները ղեկավարվում էին ընտրովի յուզբաշիների կամ հարյուրապետների կողմից, որոնք վճռական ձայնի իրավունք էին ստանում համայնքին վերաբերող գործերում:

Խանությունները ժառանգական ավատներ չէին, թեև խաները մշտապես հանդես էին բերում դրանք ժառանգական տիրույթների վերածելու ձգտում: Խաները նման ձգտում ընդգծված կերպով երևան բերեցին հատկապես XVIII դարի երկրորդ կեսին, երբ Պարսկաստանում կենտրոնական ուժեղ իշխանության բացակայությունը և տիրող ֆեոդալական անիշխանությունը բարենպաստ հող նախապատրաստեցին նման միտումների համար: Սարդարները և խաները սովորաբար նշանակվում էին շահի կողմից և ամենափոքր իսկ զանցանքի դեպքում կարող էին զրկվել իշխանությունից, փառքից և անգամ՝ կյանքից: Այս հանգամանքը իր բացասական անդրադարձն էր ունենում հպատակների վրա և անասելի չափերով վատթարացնում աշխատավոր զանգվածների գոյավիճակը: Իշխանության ժամանակավոր բնույթը սարդարներին ու խաներին դրդում էր վարելու բացահայտ կողոպուտի քաղաքականություն:

Ինչպես առհասարակ հատուկ է Արևելքի բռնապետություններին, Պարսկաստանում ու նրա մասը կազմող խանություններում ևս իշխանություններն իրագործում էին երեք հիմնական ֆունկցիա, այն է՝ ա) ֆինանսական (սեփական բնակչության կողոպտում), բ) ռազմական (կողոպուտ երկրի ներսում և սահմանակից երկրներում) և գ) հանրային աշխատանքների (հոգածություն վերարտադրությունն ապահովելու համար)[3]: Խանական վարչությունը գլխավոր ուշադրությունը դարձնում էր տուրքերի գանձման վրա, իսկ դեպի հարևան խանությունների ու թուրքական փաշայությունների սահմանամերձ շրջանները կատարվող ասպատակությունների նպատակը ավարառությունն էր: Սարդարի ու խաների բարեհաճ լռության ներքո կողոպուտի էին ենթարկվում երկրով անցնող վաճառականական քարավանները: Եվ քանի որ խանությունների հիմնական արտադրաճյուղը արհեստական ոռոգման վրա խարսխված գյուղատնտեսությունն էր, ուստի վերարտադրությունն ապահովելու հիմնական գրավականը ջրանցքների վերանորոգումն էր կամ նոր ջրանցքների կառուցումը, որոնց կոռային պարհակի կարգով մասնակցում էր ամբողջ աշխատավոր բնակչությունը:

Խաներն ունեին իրենց կառավարման մարմինները՝ դիվանները կամ խորհուրդը, որի մեջ մտնում էին վեզիրը և մի քանի միրզաներ: Նրանցից յուրաքանչյուրը ղեկավարում էր կառավարման իր հոգածությանը հանձնված բնագավառը: Խազնադար-աղասու (գանձապետի) հսկողությանն էր հանձնված խանական գանձարանը, իսկ սանդուխտար-աղասին (ծախսարարը) հոգում է խանական արքունիքի ծախսերը, բնակչությունից ստացվող բնամթերային տուրքերը կենտրոնացվում էին ամբարդար-աղասու (շտեմարանապետի) ղեկավարության տակ գտնվող շտեմարաններում: Դիվանի մեջ մտնում էին նաև խանական սերաֆյուլբեկերը (զորապետները), մուհտասիբը, որ կենսագործում էր խանի հրամանները և դատական վճիռները, ինչպես նաև խանական նստավայրի գրուղան (ոստիկանապետը): Կառավարության կարևորագույն խնդիրներն էին՝ նախ և առաջ հոգալ խանական արքունիքի պետքերը, այնուհետև ղեկավարել ֆինանսական ու ռազմական գործերը և, վերջապես, իրականացնել գործադիր իշխանությունը, այսինքն՝ ի կատար ածել դատական որոշումներն ու վճիռները[4]:

Դատական գործը հիմնականում հանձնարարված էր մահմեդական հոգևորականությանը, որն առաջնորդվում էր շարիաթով: Մանր վեճեր լուծելիս հաճախ օգտվում էին նաև սովորութային իրավունքի նորմերից: Դատավարությունը կատարվում էր բանավոր: Խաները, երբեմն, անձամբ էին լսում քրեական գործերը: Նրանք միջամտում էին նաև քաղաքացիական գործերին, մանավանդ եթե դրանք պատկառելի եկամուտ էին խոստանում ընչաքաղց իշխանավորներին: Խաների բերանից ելած ամեն մի խոսք, որքան էլ ընդդեմ լիներ արդարության սկզբունքներին, վերջնական վճռի և օրենքի ուժ ուներ: Նման դեպքերում զրպարտության զոհ դարձած հպատակները միայն խոշոր կաշառքների գնով կարող էին փրկել իրենց կյանքը կամ ունեցվածքը: Ուստի միամտություն կլիներ խորհել օրինականության մասին «անօրինականության երկրում», ուր խաների կամքն ու քմահաճույքը օրենք էր և ոչ ոք ի վիճակի չէր, հանդգնություն չուներ հակառակել նրան[5]: Ամենուր կիրառվում էին մարմ-

[3] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 28, стр. 221:

[4] Տե՛ս И. Шопен, նշվ. աշխատ., էջ 451—452:

[5] П. Огородников, На пути в Персию и Прикаспийские провинции ее, СПб., 1878, стр. 194.

նական պատիժներ՝ անդամահատում (ականջ ու քիթ կտրել, աչքերը փորել, թնդանոթի բերան կապել), ծեծ և այլն։ Խ. Աբովյանը հետևյալ կերպ է նկարագրում խանական «արդարադատությունը», որի մարմնավորումը համարում էր Երևանի բերդը. «Երևանու բերդը՝ Երևանու բերդը, ախ՝ աչքս դուրս գա, քանի քանի ողորմելի հայի միս ա կերել, քանի քանի անմեղ հոգի՝ տարիքներով շարշարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ լինելուց, կրակի, բոցի, երկաթի շամփրի, թոխմախի, կըրակած քարփչի տանելուց, համբերելուց եղը, կամ թոփի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաջի (կախաղանի) վրա յա՝ գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն իր ատամներովը կոծելով, աչքերը դուրս տրաքացնելով, ղովում, ղարդաշ, իրավորի, ազգականի, իր որդոց զավակաց ձենը լսելով, տրորվելով, փոթորկվելով, հոգին ավանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գազանների ձեռքիցը։ Քանի քանի ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջախի մեն մենակ որդի, մեկ աղքատ, չքավոր տան սին, մխիթարություն, մեկ տասը գլուխ բյուլֆաթի տեր ու ապավեն իր ծաղկած, դալար հասակին, իր ըմբրի ու արևի նոր բաց էլած ժամանակին՝ կամ սաղ սաղ քերթվել ա, կամ իր պատվական գլուխը գառան պես թրի դեմ արել, որ երկրնքումը իր ջահելության մուրազն առնի վայելի, չունքի երկիրը նրա անարատ արնին էր ծարավ՝ որ շուտով խմի ու բալքի կշտանա»[6]։

Պետք է նկատել, որ քաղաքացիական գործերի քննարկման ու վճռահատության ասպարեզում քրիստոնյաները, այսինքն հայ ազգաբնակչությունը, օգտվում էին դատական որոշակի ինքնուրույնությամբ։ Այդ բնագավառում իրավասությունը պատկանում էր հայոց եկեղեցուն, ինչպես նաև մելիքներին առհասարակ, գյուղական մելիքներին ու տանուտերերերին՝ մասնավորապես։ Քաղաքացիական գործերի դատավարության ժամանակ հայերն առաջնորդվում էին ինչպես կանոնական, այնպես էլ սովորութային իրավունքի նորմերով։ Որոշ դեպքերում օգտվում էին Մխիթար Գոշի «Դատաստանագրքից»։ Դատավճիռների վիճարկելիության դեպքերում վերջնական խոսքը պատկանում էր Էջմիածնի կաթողիկոսարանին։

Այն դեպքերում, երբ դատական վեճը գնում էր մահմեդականի ու քրիստոնյայի միջև, դատավարությունը կատարվում էր համաձայն շարիաթի և, որպես կանոն, նախապատվությունը տրվում էր մահմեդականին ու նրա վկաներին։

Քրեական գործերի դատավարությունն ամբողջովին գտնվում էր

[6] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 59—60։

մահալների կառավարիչների՝ միրբոլուքների, իսկ հատկապես կարևոր գործերինը՝ խանների իրավասության ներքո։ Նրանք չէին խորշում և ոչ մի միջոցից, որպեսզի նույնիսկ արհեստականորեն մեղքը բարդեն քրիստոնյաների և անգամ էջմիածնի կաթողիկոսության վրա։ Նման դեպքերում դատական վճիռը ելնում էր ոչ թե արդարության սկզբունքից, այլ տիրակալի տրամադրությունից ու ցանկությունից, նրա ընչաքաղցության աստիճանից։

Թեև հայ ժողովրդական հիմնական զանգվածներն ապրում էին բուն Արևելյան Հայաստանում, սակայն հարկ է նշել, որ հայ ազգաբնակչություն կար սփռված ամբողջ Անդրկովկասում։ Մեծ քանակությամբ հայեր բնակվում էին Վրաստանում, Շաբիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի խանություններում և այլուր։ Այսպես, համաձայն 1818 թվականին կազմված էմիածնական նվիրակական մի ցուցակի, հայեր բնակվում էին ոչ միայն Շամախի քաղաքում, այլև շրջակա հայկական 38 գյուղերում, Նուխի քաղաքում և մերձակա 47 գյուղերում, ինչպես նաև Բաքվում, Դերբենդում և այլուր[7]։

Առանձնապես մեծ էր հայերի թիվը Վրաստանում։ Ներսես Աշտարակեցու՝ Վրաստանում թեմական-առաջնորդ եղած տարիներին (1814—1828 թթ.) վերաբերող մի վավերագրից պարզվում է, որ Թիֆլիսում եղել է 2931 հայ ընտանիք կամ 14532 շունչ, Թիֆլիսի գավառում՝ 704 ընտանիք (4432 շունչ), Թելավում և գավառում՝ 990 ընտանիք (5233 շունչ), Ղազախի, Գորու, Դուշեթի գավառներում՝ 3467 ընտանիք (21316 շունչ), Իմերեթում՝ 149 ընտանիք (895 շունչ), իսկ Ելիսավետպոլում և գավառում՝ 2044 ընտանիք (9884) շունչ[8]։

1811 թվականի հունիսի 14-ին ֆինանսների մինիստր Օ. Պ. Կոզոդավլևին հղված մի գրության մեջ, որը կրում է «Գրություն Վրաստանի և առհասարակ ողջ այնտեղի երկրամասի դրության մասին» խորագիրը, բավական հետաքրքիր տեղեկություններ կան Անդրկովկասի ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ։ Ըստ այդ վավերագրի՝ Թիֆլիս քաղաքում եղել են մինչև 800 մոբալաքներ, արտադրությամբ և արհեստներով զբաղվող շուրջ 4000 և տարբեր ժամանակներում Երևանից ելած և Թիֆլիսում բնակություն հաստատած մոտ 1000 շունչ հայեր (արական)[9]։ Շաբիի խանությունում շուրջ 15000 ընտանիքների մեկ երրորդ մասը

[7] Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. 32, վավ. 219։

[8] Տե՛ս Ա. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 139—140։ Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. 37, վավ. 360։

[9] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1284, оп. 4, 1811 г., д. 233—249, лл. 390 об.—391.

կազմել են հայերը[10], Շիրվանում՝ 24000-ից 1500-ը[11], իսկ Դերբենտ քաղաքում եղել են 56 արական շունչ հայեր[12]։ Հիշյալ տվյալները մոտավորապես համապատասխանում են նախորդ տվյալներին, ուստի և կարելի է ընդհանուր պատկերացում ունենալ Անդրկովկասի հայ ազգաբնակչության և նրա տարածման շրջանակների վերաբերյալ[13]։

Վրաստանում և Ելիսավետպոլում, միասին վերցրած, հայերը կազմում էին քրիստոնյա բնակչության ավելի քան մեկ երրորդ մասը։ Գանձակի խանության գրավումից հետո (1804 թ.), երբ մահմեդական բնակչության մի մասը խույս տվեց Պարսկաստան, Ելիսավետպոլում ստվարացավ հայ ազգաբնակչությունը՝ ի հաշիվ Երևանի խանության սահմաններից տարագրված հայ զանգվածների։ 1804—1807 թվականներին Կարսից մեծ քանակությամբ հայեր տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Փամբակաձորում։ Այստեղ բնակություն էին հաստատել նաև Աշտարակից, Մուղնուց, Օշականից, Բյուրականից և Վաղարշապատից գաղթած բազմաթիվ հայեր[14]։

Դարասկզբին Ռուսաստանի տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստանի հյուսիսային, հյուսիս-արևմտյան և արևելյան շրջաններում գոյություն ունեցած կառավարման ձևերը մեծապես տարբերվում էին մեկը մյուսից։ Եթե հյուսիսային մասերում մուծվեց ռուսական վարչաձև, ապա Ղարաբաղում պահպանվեց խանական սիստեմը, այն էլ բավական երկար ժամանակ, մինչև 1822 թվականը։

Աղա Մահմեդ խանի կործանիչ արշավանքներից հետո այս շրջաններում ևս խիստ նոսրացավ բնակչությունը։ Հատկապես նոսր բնակչություն ունեին Լոռին, Փամբակը, Բորչալուն, Ղազախը և Շամշադինը։ Այդ շրջանների վերաբնակեցման հարցը առաջին իսկ օրերից գտնվում էր Անդրկովկասի ռուսական վարչության ուշադրության կենտրոնում։ Այդ առումով հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում Լոռու օկրուգի վրա, որտեղ կային պղնձահանքեր և որոնց շահագործմամբ խիստ հետաքրքրված էր ցարական կառավարությունը։ Լոռու, Փամբակի և Բորչալուի վերաբնակեցման հարցը մասամբ լուծվեց 1804 թվականի Երևանյան առաջին արշավանքից հետո, երբ Երևանի խանությունից այս շրջանները վերաբնակեցվեցին շուրջ 2000 հայկական ընտանիքներ, ընդ

[10] Նույն տեղում, թ. 395։
[11] Նույն տեղում, թ. 395բ։
[12] Նույն տեղում, թ. 394—394բ։
[13] Նույն տեղում, թ. 393բ—394։
[14] Նույն տեղում, թ. 391բ։

որում սրանց մի մասը հետագայում ցարական վարչության հորդորանքով տեղափոխվեց Ելիսավետպոլ և Ելիսավետպոլի օկրուգ։

Վրաստանի՝ Ռուսաստանին միացումից հետո առաջինի կազմի մեջ մտնող Բորչալուի, Ղազախի, Փամբակի, Շամշադինի, ինչպես նաև 1805 թ. գրավված Շորագյալի սուլթանությունները վերանվանվեցին թաթարական ուղեմասեր։ Սրանք թաթարական անունն ստացան այն պատճառով, որ դեռևս վրացական թագավորների ժամանակ մասամբ բնակեցված լինելով ադրբեջանական քոչվոր ցեղախմբերով, դրանց կառավարումը հանձնված էր ցեղապետներին, որոնք ստացած բնակավայրերի դիմաց պարտավորվում էին զինվորական ծառայություն մատուցել վրացական արքունիքին։ Ավելի ուշ ժամանակներում այս շրջանների կառավարումը հանձնարարվում էր վրաց իշխաններից նշանակվող գավառապետների՝ մոուրավների։

Ռուսական վարչության կողմից ևս այստեղ նախապես նշանակվում էին մոուրավներ կամ գլխավոր պրիստավներ, նույնպես վրացական ազնվականությունից, որոնք անմիջականորեն ենթարկվում էին Վրաստանի կառավարչապետին։ Վերջինս, համաձայն 1801 թվականին Վրաստանի համար հրապարակված կանոնադրության, պետք է գրավոր հրահանգներ տար գլխավոր պրիստավներին՝ իրենց հանձնարարված ուղղությունների կառավարման համար։ Գլխավոր պրիստավները իրագործում էին ոստիկանական և դատական ֆունկցիաներ, հավաքում էին հարկերը, վարում քրեական գործեր[15]։

1805 թվականին Ռուսաստանին միացված Ղարաբաղի խանությունում պահպանվեց խանական վարչաձևը։ Դրանով իսկ վերջնականապես խորտակվեցին Ղարաբաղի հայ մելիքների հույսերը, որ ցարական կառավարության օգնությամբ կվերստանան իրենց երբեմնի տիրույթները և վարչական իրավունքները։ Այստեղ ևս, ինչպես և մնացած բոլոր խանություններում, խանը կազմում էր դիվան կամ խորհուրդ, որի մեջ մտնում էին վեզիրը, սարքյարալին (գլխավորում էր ֆինանսական վարչությունը), էշիգ-աղասին (վարում էր խանի անձնական տնտեսությունը), ամիրախորը (գլխավոր ախոռապետը), սանդուխտար-աղասին, ամբարդար-աղասին և ուրիշներ։ Դիվանը խորհրդակցական ձայնի իրավունք ուներ, բոլոր դեպքերում վճռական խոսքը պատկանում էր խանին։ Այստեղ ևս մահալների կառավարումը հանձնարարվում էր նախիներին և հայ մելիքներին։ Նրանք գյուղերի վրա բաշխում էին հարկերն ու տուրքերը, գանձում դրանք, լուծում բնակչության միջև ծագած վե-

[15] Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 2, оп. 1, д. 2276, л. 16.

ճերը, ի կատար ածում դատական վճիռները։ Դրա դիմաց վարձատրվում էին հավաքված հարկերի հաշվին կամ ստանում որոշ քանակություն հողեր և ռանչպարներ։ Հարսանիքների դեպքում նրանք ստանում էին թոյփայի (հարսանիքի համար), վիճելի ունեցվածքի վերաբերյալ հարցեր լուծելիս՝ վիճելի ունեցվածքի 1/10 մասը, գողության և այլ հանցանքների համար՝ գանձվող տուգանագումարի 10 տոկոսը և այլն։

Մեհթի-Ղուլի և մյուս խաների Պարսկաստան փախուստից հետո Ղարաբաղում և մյուս խանություններում մուծվեց կառավարման պարետային վարչակարգ։ Պրովինցիաներ վերանվանված խանություններում իշխանության գլուխ դրվում էին ռուսական գեներալներ կամ բարձրաստիճան սպաներ։ Սակայն ցարական կառավարությունը կամ նրա անդրբկովկասյան վարչությունը չհրապարակեցին պարետների իրավասությունը սահմանող որևէ կանոնադրություն, որով առաջնորդվեին նրանք, թեև պրովինցիաներում փաստորեն ամբողջ իշխանությունը՝ տնտեսական, դատական, ոստիկանական և այլն, կենտրոնացած էր պարետների ձեռքում։ Նրանք էին ապահովում դրամական տուրքերի և պետական մյուս եկամուտների գանձումը, նշանակում նաիբներին ու մյուս պաշտոնյաներին, պատասխանատվություն կրում ճանապարհների և կամուրջների վիճակի, պահակային ծառայության համար։ Կառավարման գործում պարետներին օժանդակում էին պարետի օգնականը, ոստիկանապետը, պետական տնտեսը, գանձապահը և ուրիշներ։ Այժմ ևս հարկերի գանձումը և տուրքերի հավաքումը դրվում էր նաիբների, եսաուլների և տանուտերերի (քեդխուդաների) վրա։ Նշանակվում էին նաև հատուկ հարկահավաքներ՝ սարքյարներ և դարղաներ։

Պարետային կառավարչության շրջանում մտցվեց դրամական, չափի և կշռի միասնական համակարգ։ Դրանով իսկ առավել կայուն հնարավորություններ ստեղծվեցին արհեստագործության ու առևտրի զարգացման համար։ Այդ միջոցառումները կարևոր նշանակություն ունեցան տնտեսական կյանքում ֆեոդալական տարանջատվածության հետևանքների վերացման գործում[16]։

Ղարաբաղի խանության միակ խոշոր քաղաքը Շուշին էր։ Որպես ամրոց և քաղաք, Շուշին ստրատեգիական ու առևտրական առումով կարևոր դիրք էր գրավում։ Ռուսական իշխանությունները սկզբից ևեթ առանձնահատուկ ուշադրություն դարձրեցին այդ հանգամանքի վրա։ Վրաստանի նկատմամբ ոտնձգություններ կատարելիս հակառակորդը

[16] Տե՛ս А. Мильман, Политический строй Азербайджана в XIX-начале XX вв., Баку, 1966, стр. 75.

կարող էր շրջափակման մեջ ընկնելու և թիկունքից հարված ստանալու վտանգին ենթարկվել, եթե չգրավեր Շուշին։ Մյուս կողմից, այնքանով, որքանով Կուր գետի անցումից Շուշի ամրոցը հեռու չէր գտնվում, կարող էր խանգարել հակառակորդին ապահով գետանց կատարելու[17]։ Սա ստրատեգիական առումով։ Միաժամանակ, գտնվելով Թիֆլիսից Բաքու և Կասպից ծովի ափեր տանող առևտրական կարևոր ուղու վրա, Շուշին արհեստագործական և առևտրական կարևոր կենտրոններից մեկն էր Անդրկովկասում։ Խանական տիրապետության շրջանում քաղաքային վարչությունն այստեղ կազմում էին նաիբը կամ քալանթարը, ղալաբեկը (ամրոցի պարետը), էսսարաշին (ոստիկանապետը) և ուրիշ պաշտոնյաներ։ Ռուսական կայազորի՝ Շուշիում հաստատվելուց հետո պարետի պաշտոնը վարում էին ռուս սպաները, որոնք և միաժամանակ իրագործում էին հսկողությունը խանական արքունիքի նկատմամբ։

Վարչական առումով քաղաքը բաժանված էր թաղերի (մահլաների), որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ավագը։ Վերջինիս պարտականությունն էր ժամանակին հավաքել հարկերը և կատարել տալ քաղաքային բազմատեսակ պարտուքթները։ Ամեն մի թաղամաս ուներ իր դարուղան և յուզբաշին, որոնք անմիջականորեն ենթարկվում էին ղալաբեկին։ Դարուղան ղալաբեկի առջև պատասխանատու էր իր թաղամասի համար, իսկ վերջինս էլ իր հերթին պատասխանատու էր խանի առջև՝ քաղաքի անվտանգության և անդորրի համար։ Ղալաբեկն իր տրամադրության տակ ուներ հատուկ պահակախմբեր, որոնք պահպանում էին քաղաքի դարպասները և խանի պալատը։ Քաղաքի բանալիները գտնվում էին ղալաբեկի ձեռքին։

1820 թվականին Ղարաբաղում հիմնվեց պրովինցիալ դատարան, որում նախագահում էր պարետը և որին անդամակցում էին չորս ատենակալներ՝ երկուսը բեկերից, երկուսն էլ բնակչության ներքնախավերից, ընդ որում մեկն ընտրվում էր հայերից, մյուսը՝ մահմեդականներից։ Ատենակալներն ընտրվում էին համապատասխան հասարակություններից՝ քվեներով և մեկ տարի ժամկետով։ Ընտրություններն անցկացվում էին գեկտեմբեր ամսին, իսկ ընտրվածները ներկայացվում էին կառավարչապետի հաստատմանը։ Դատարանը կոչված էր հաշտեցնելու հայցվորներին ու պատասխանողներին, բավարարություն տալու երկու կողմերին էլ և վերջ դնելու թշնամությանը նրանց միջև։ Դատարանի իրավասությանը ենթակա էին առևտրական և աննշան քրեական գործեր, որոնք պետք է վճռվեին համաձայն սովորութային իրավունքի նորմերի

[17] Տե՛ս ЦГВИА, ф. ВУА, д. 6253, л. 30об.—31.

և կամ, եթե դրանք բավարար հիմք չէին տալիս խնդրի լուծման համար, գործող օրենքների։ Միևնույն ժամանակ դատարանը հանդիսանում էր նաև վարչական մարմին, որը բաշխում էր հարկերը, տնօրինում կապալային հողվածները, կնքում զանազան գործարքներ, կազմակերպում աճուրդներ, մաքսեր գանձում և այլն[18]։

Դրան զուգընթաց գործում էին նաև շարիաթական հոգևոր դատարաններ, որտեղ քննարկվում և վճռվում էին զանազան վեճեր ու հայցեր՝ ունեցվածքի և կալվածքների բաժանման, ամուսնության և ապահարզանի, այրիների ու որբերի հոգաբարձության վերաբերյալ, հաստատվում էին պարտամուրհակներ, գնման և վաճառքի գործարքներ, կտակներ և այլն[19]։

Քյուրակ-չայի պայմանագրով Իբրահիմ Խալիլ խանի և նրա ժառանգորդների իրավունքները խիստ կրճատվեցին։ Նրանք այլևս իրավունք չունեին առանց Վրաստանի կառավարչապետի գիտության հարաբերությունների մեջ մտնել արտաքին երկրների հետ։ Խանը զրկվում էր գլխավոր զորահրամանատարի իր նախկին իրավունքներից, այլևս չէր կարող դրամ հատել, իսկ պայմանագիրը խախտելու դեպքում ենթակա էր հեռացման[20]։ Մի խոսքով, նա դրվում էր վասալական կախման սեղմ շրջանակների մեջ, որոնցից դուրս սպրդելը խիստ բարդ խնդիր էր դառնում։

1822 թվականին, Մեհթի-Ղուլի խանի փախուստից հետո, Ղարաբաղի խանությունը վերանվանվեց պրովինցիա։ Նախկին խանությունների տարածքներից ստեղծվեցին երկու օկրուգներ, այսպես կոչված մուսուլմանական օկրուգ, որի մեջ մտնում էին Շիրվանի, Շաքիի, Ղարաբաղի, Թալիշի խանությունները, և Դաղստանի օկրուգ, որն ընդգրկում էր Բաքուն, Ղուբան և Դերբենտը։ Օկրուգների գլուխ դրվեցին ռազմա-օկրուգային պետերը։ 1824 թվականին ստեղծված մուսուլմանական օկրուգի պետի պաշտոնը հանձնարարվեց հայազգի գեներալ Վալերիան Մադաթովին, որի նստավայրը դարձավ Շուշին[21]։

Ամբողջ քաղաքացիական և զինվորական իշխանությունը կենտրոնացած էր օկրուգների պետերի ձեռքին։ Սրանք իրենց հերթին ենթարկվում էին Վրաստանի կառավարչապետին։

Վրաստանը և Հայաստանի հյուսիսային շրջանները կառավարվում էին Վրացական գերագույն կառավարության կողմից, որն ստեղծվեց 1801 թվականին։ Այն կազմված էր չորս էքսպեդիցիաներից՝ գործադիր, գանձարանի ու տնտեսության, քրեական և քաղաքացիական գործերի։ Գործադիր էքսպեդիցիան փաստորեն իրականացնում էր նահանգական վարչության ֆունկցիաներ։ Այս էքսպեդիցիայի մեջ մտնում էին կառավարիչը (հետագայում Վրաստանի նահանգապետը) և երկու խորհրդականներ, որոնցից մեկը նշանակվում էր ռուս աստիճանավորներից, իսկ երկրորդը՝ վրացական իշխաններից։ Գանձարանի ու տնտեսության էքսպեդիցիան գլխավորում էր ռուս աստիճանավորներից նշանակված պետը և Քարթլիից ու Կախեթից երկուական խորհրդականներ, ինչպես նաև գանձապահը։ Քրեական և քաղաքացիական գործերի էքսպեդիցիաներին անդամակցում էին պետերը և չորսական խորհրդականներ։ 1805 թվականին այս երկու էքսպեդիցիաները միացվեցին և կազմվեց մեկ ընդհանուր էքսպեդիցիա՝ դատի ու դատարանի[22]։ Էսպեդիցիաների պետերին նշանակում էր կառավարչապետը։

Վրաստանի կառավարիչը, էքսպեդիցիաների պետերը և խորհրդականները կառավարչապետի նախագահությամբ կազմում էին հատուկ ատյան՝ Վրացական գերագույն կառավարության ընդհանուր ժողով, որն օժտված էր էքսպեդիցիաների ընդունած վճիռների բեկման իրավունքով։ Դատական գործերը վերջնական լուծում ստանում էին ընդհանուր ժողովում։ Քրեական գործերի վերաբերյալ դատավճիռներն հաստատում էր կառավարչապետն անձամբ։ Կառավարչապետի բացակայության դեպքում Ընդհանուր ժողովում նախագահում էր Վրաստանի կառավարիչը։

1817 թվականի դեկտեմբերի 11-ի հրամանագրով Վրացական գերագույն կառավարության լիազորությունները սահմանափակվեցին։ Քաղաքացիական գործերի վերաբերյալ դատավճիռներից անբավական կողմը իրավունք էր ստանում անմիջականորեն դիմելու և բողոքարկելու կառավարիչ սենատին, իսկ 1819 թվականի հուլիսի 31-ի հրամանագրով Վրաստանի կառավարչապետն այլևս չէր կարող վճռահատել քրեական գործերը, այդ իրավունքը նույնպես վերապահվում էր կառավարիչ սենատին[23]։ Այս հրամանագրերի արդյունքը եղավ այն, որ Ընդհանուր ժողովը փաստորեն անգործության մատնվեց։

Իսկ ինչպիսի՞ն էր ժողովրդի սոցիալական և քաղաքական կացությունը հայկական այն տարածքներում, որոնք անցել էին Ռուսաստանի տիրակալության տակ։ Դեռևս նախքան Վրաստանի միացումը Ռուսաս-

---

[18] Տե՛ս ЦГИА СССР, ф. Ревизия Мечникова и Кутайсова, оп. 1, 1830 г., лл. 442—445 об.

[19] Տե՛ս «Обозрение российских владений за Кавказом», ч. III, стр. 140—141.

[20] Տե՛ս АКАК, т. II, док. № 1436.

[21] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1268, от. 1, д. 18, л. 9.

[22] Տե՛ս ПСЗРИ, собр. 2-е, т. XVI, стр. 21753.

[23] **А. Мильман**, Նշվ. աշխատ., էջ 60—61։

տանին, Արցախի հայ մելիքները, փրկություն որոնելով Իբրահիմ խանի հետապնդումներից ու հալածանքներից, դիմել էին Պավել I-ին ու վրաց Գեորգի XII թագավորին և թույլտվություն խնդրել իրենց հպատակ ժողովրդի հետ միասին բնակություն հաստատելու Վրաստանի սահմաններում, մինչև ավելի բարվոք ժամանակների վրա հասնելը[24]։ Նման խնդրանքը համապատասխանում էր Աղա Մահմադ խանի ավերիչ արշավանքի հետևանքով մարդաթափ եղած Վրաստանի հետագա զարգացման շահերին, ուստի և հայ մելիքների խնդիրքը հարգվեց։ Լոռի ամրոցը և հարակից շրջանը հանձնվեց մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանին, թեև այն մինչ այդ Հերակլ արքայի կողմից շնորհված էր հնդկահայ Շահամիրյաններին իբրև ժառանգական տիրույթ։ Բոլնիսի շրջանը տրվեց մելիք Աբովին, որը միաժամանակ իրականացնում էր քարավանապետի պաշտոն և իր ջոկատով պաշտպանում Ախկորպի գյուղի մոտակայքի սահմանագիծը[25]։ Մելիք Ֆրիդոնն ստացավ Ուզունլարը և այլ գյուղեր։ Բացի այդ, Ղարաբաղի հայ բնակչության մի զգալի մասն էլ հեռացել էր Երևանի խանություն և բնակություն հաստատել այնտեղ։ Նրանցից շատերը հետագայում գաղթեցին Հայաստանի հյուսիսային շրջանները՝ իրենց մելիքների մոտ[26]։ Ավելի ուշ այստեղ բնակություն հաստատեց նույն Երևանի խանությունից տարագրված մեծաթիվ բնակչություն (ավելի քան տաս հազար մարդ), որոնց համար կյանքի բավական ծանր պայմաններ ստեղծվեցին։ Նրանք ժամանակավոր գետնափոր հյուղակներում էին բնակվում և իրենց ապրուստը հոգում անտառանյութ արտահանելով հարևան Կարսի փաշայություն, որտեղից փոխարենը ներմուծում էին հաց, որի մի մասը վերավաճառում էին Վրաստանում և այդպիսով հոգում իրենց ապրուստը։ Տեղական իշխանությունների մեղքով այս վերաբնակիչներին հող չէր հատկացվել, իսկ երբ բռնկեց 1806—1812 թվականների ռուս-թուրքական պատերազմը, և կապերը Կարսի հետ ընդհատվեցին, նրանք զրկվեցին իրենց եկամտի միակ աղբյուրից՝ անտառանյութ վաճառելու հնարավորությունից, ուստի և Կովկասի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար ու կառավարչապետ Ի. Վ. Գուդովիչը կարգադրեց Վրաստանի կառավարիչ Պ. Մ. Լիտվինովին՝ նրանց տեղափոխել Ելիսավետպոլի օկրուգ[27]։ Այդ արվում էր

[24] ЦГИА Груз. ССР, ф. 2, д. 81, лл. 44—48.

[25] «Присоединение Восточной Армении к России», сб. док., т. I. Ереван, 1972, стр. 37.

[26] Նույն տեղում, էջ 37—39։

[27] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1807 г., д. 150, л. 380 об.—381; АКАК, т. III, док. 441; ЦГИА Груз. ССР, ф. 16, 1807 г., д. 546, л. 2—2 об.

նաև այն նպատակով, որպեսզի վերաբնակիչները հեռացվեն Երևանի սահմաններից և չկարողանան վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը։ Այս անվերջ տեղաշարժումները առավել ևս էին տնտեսապես հյուծում և քայքայում տարագիր ազգաբնակչությանը, որի զգալի մասը հազիվ էր կարողանում ծայրը ծայրին հասցնել։

Պարսկաստանին հարևան այս շրջանների բնակչության դրությունը վատթարանում էր նաև երկարամյա պատերազմական գործողությունների, պարսկական զորաբանակների հաճախակի ասպատակությունների, ինչպես նաև պետական զանազան պարհակներ կատարելու հետևանքով։ Դրանց գումարվում էին մոուրավների, գյուղական մելիքների և այլ պաշտոնատար անձանց շարաշահումները։ Բորչալուի և Ղազախի բնակչության մի զգալի մասը պետք է գյուղացիական կարգախմբեր տրամադրեր Ալավերդու և Ախթալայի լեռնագործարաններին՝ օժանդակ գործարանային աշխատանքների համար։ Հատկապես ծանր վիճակ ստեղծվեց Բոլնիս գյուղաքաղաքի բնակչության համար։ Այն ամբողջովին բնակեցված էր մելիք Աբովին ենթակա արցախեցի գաղթականներով։ Բոլնիսի հողերը նախկինում պատկանել էին վրաց կալվածատերերին, որոնք այժմ բնակիչներից սկսեցին հարկեր պահանջել, թեև, բացի այդ, նրանք պետությանը նույնպես հարկեր էին վճարում։ Այդ դրությանը վերջ տրվեց 1808 թվականին, երբ Ի. Վ. Գուդովիչի հրամանի[28] համաձայն կալվածատերերը հարկադրված եղան սահմանափակել իրենց ախորժակը։ Այնուամենայնիվ, Բոլնիսի գյուղացիների վիճակը շարունակում էր ծանր մնալ, քանի որ այնտեղ օթևանում էին 550 կազակներ։ Այդ պատճառով շատ գյուղացիներ կրկին փախչում-վերադառնում էին հայրենի Ղարաբաղ։ Գյուղացիների փախուստն այնպիսի մեծ ծավալ էր ստացել, որ գլխավոր հրամանատար Ա. Պ. Տորմասովը հատուկ հրաման տվեց Վրաստանի կառավարիչ գեներալ Ֆ. Ի. Ախվերդովին և Ղարաբաղի Մեհրթի Ղուլի խանին՝ Բոլնիս վերադարձնել բոլոր փախստականներին, որպեսզի այդ մեծ գյուղաքաղաքի քայքայման առաջն առնվի[29]։

Նման ծանր դրություն էր տիրում նաև Փամբակի գավառում. բնակչության՝ պետությանը պարտք մնացած հարկագումարն այստեղ 1807 թ. այնպիսի մեծ չափերի էր հասել (14035 ռուբլի), որ Ի. Վ. Գուդովիչը հարկադրված էր կարգադրել, որպեսզի բնակչությունից չգանձվի պարտք

[28] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1807 г., д. 150, л. 181—181 об.; «Присоединение Восточной Армении к России», об. док., т. I, стр. 435.

[29] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1809 г., д. 148, лл. 144—145.

մնացած գումարը, և միևնույն ժամանակ երեք տարով նրանց ազատել հարկերի վճարումից, որպեսզի կարողանան շտկել իրենց դրությունը[30]։

Հայ ժողովրդական զանգվածների վիճակը շարունակում էր մնալ խիստ ծանր Ռուսաստանին ենթակա խանություններում, որտեղ անխաթար պահպանվում էին այն նույն կարգերը, որ տիրել էին նախկինում։ Այդ վիճակի վառ պատկերը կարելի է տեսնել Շաքիի խանության Նիժ և Վարդաշեն հայկական երկու խոշոր գյուղերի օրինակով։ 1806 թվականին Շաքիի խանությունը հանձնվել էր Պարսկաստանից խույս տված և Ռուսաստանի կողմն անցած Խոյի նախկին խանին՝ Ջաֆար Ղուլիին։ Սա շարունակում էր վերոհիշյալ գյուղերի հայ բնակիչներից գանձել «դին ի փագ» կոչված հարկը՝ մետաքսով, որը վճարվում էր ազատ կերպով քրիստոնեությունը դավանելու իրավունք ձեռք բերելու համար։ Անսալով Դանիել կաթողիկոսի և վիրահայերի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակրի խնդրանքին, կառավարչապետ Ի. Վ. Գուդովիչը հրաման արձակեց դադարեցնելու մարդկային արժանապատվությունը նվաստացնող և ռուսական կառավարության հեղինակությունը վարկաբեկող այդ տուրքը[31]։ Չնայած դրան, հետագա տարիներին էլ խաները շարունակում էին գանձել այն, որը, ինչպես կտեսնենք իր տեղում, տեղիք տվեց գյուղացիների բողոքների ու հուզումների։

Ղարաբաղի խանությունում նկատելի էր գյուղացիներին ճորտական կախման մեջ դնելու անսքող ձգտում։ Մեհթի Ղուլի խանը շռայլորեն իր մերձավորներին և ազգականներին գյուղեր ու գյուղացիներ էր բաշխում, շնորհելով խանական թալաններ, որոնք մեծ մասամբ անօրինական էին, քանի որ տրվում էին հին տարեթվերով և բեկերին ու աղաներին այնպիսի իրավունքներ էին շնորհում, որպիսին նրանք բնավ չէին ունեցել։ Այսպես, միայն գեներալ Վ. Գ. Մադաթովը որպես սեփականություն ստացավ 10 գյուղեր և երեք քոչավայրեր՝ 1245 ընտանիքից բաղկացած բնակչությամբ։ Խանական միրզա Ջամալի վկայությամբ Իբրահիմ Խալիլ խանի ազգականները «իրենց կարողությամբ, ծառաների քանակով և փառահեղությամբ հավասար էին մյուս վիլայեթների (խանությունների—Վ. Դ.) խաներին»։ Ահա սրանք էին, որ ռուսական հովանու տակ անցնելուց հետո կամենում էին դառնալ նաև ճորտատերեր՝ վավերացնելով իրենց «իրավունքները» ռուսական կայսրերի հրամանագրերով։ Այս երևույթը արդարացի բողոքներ առաջացրեց ինչպես գյուղացիության մեջ, այնպես էլ հայկական վերնախավային այն շրջաններում, որոնք բացասաբար էին տրամադրված դեպի ճորտատիրությունը։

Այսպիսով, ակնհայտ է, որ արևելահայ ժողովրդական զանգվածների համար տիրող խայտաբղետ վարչակարգերի պայմաններում ծանր կացություն էր ստեղծված, որից դուրս գալու միակ ելքը պայքարն էր ազատագրության, սեփական պետականության վերականգնման համար։

[30] АКАК, т. III, док. 415.

[31] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 18, վավ. 162ա։

[32] **Мирза Джамал Джеваншир Карабагский,** История Карабага, Баку, 1959, стр. 104.

2. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարսկական տիրակալության վերջին շրջանում Արևելյան Հայաստանում գոյություն ունեցած հողատիրության ու հողօգտագործման ձևերի հարցը միշտ էլ բանավեճի առարկա է եղել մեր երկրի ագրարային հարաբերությունների պատմությանը նվիրված աշխատություններում։

Նախախորհրդային ժամանակաշրջանի հետազոտողները և Կովկասում գործած ցարական պաշտոնեությունը այն կարծիքն են հայտնել ու պաշտպանել, որ Արևելյան Հայաստանում և Ռուսաստանին միացված այսպես կոչված «մուսուլմանական պրովինցիաներում», ի տարբերություն ճորտատիրական Վրաստանի, բացակայել է հողի մասնավոր սեփականությունը, որ հողը այդ երկրամասում ամբողջապես հանդիսացել է գերագույն սյուզերենի՝ շահի, հետևապես պետական սեփականություն։ Ինչ վերաբերում է խորհրդային պատմաբաններին, ապա նրանք մեծ մասամբ և երկար ժամանակ հակված են եղել այն տեսակետին, որ և՛ Հայաստանի արևելյան հատվածում, և՛ Ադրբեջանում գոյություն է ունեցել հողի մասնավոր կալվածատիրական սեփականություն, առկա են եղել նաև ճորտատիրական հարաբերություններ։

Նման իրարամերժ և հակադիր կարծիքների առկայությունը հետևանք է ոչ միայն այն բանի, որ այս կամ այն տեսակետին հարողները չեն կարողացել գիտական շրջանառության մեջ դնել «անհերքելի» ապացույցներ, այլ շատ հաճախ նման ապացույցների հետ հաշվի չնստելու ցանկության։

Հատկապես վեճի առարկա է հանդիսացել մուլքադարության էության հարցը։ Եթե հողի մասնավոր կալվածատիրական սեփականության առկայությունն ընդունող պատմաբանները մուլքադարությունը համարել են հողի մասնավոր կալվածատիրական սեփականությունը հավաստող ինստիտուտ, ապա հակառակ տեսակետն արտահայտող խմբին պատկանող հետազոտողների կարծիքով մուլքադարությունը կրել է բնա-

մթերքով տրվող պաշտոնական վարձատրության բնույթ, եղել է հասույթին մասնակից լինելու իրավունք։

Ռուսական հետազոտողներից և պաշտոնյաներից առաջիններից մեկը Ի. Շոպենն էր, որ ժխտեց հողի մասնավոր սեփականության առկայությունն Արևելյան Հայաստանում, ելնելով իր անմիջական դիտումներից և հետազոտություններից։ Պաշտոնավարելով այստեղ երկրի՝ Ռուսաստանին միացվելուց անմիջապես հետո, հսկայական քանակությամբ փաստական նյութ ամբարելով, որոնց հավաստիությունն ամրապնդվում է արխիվային վավերագրերով, Շոպենը նշում է, որ մասնավորապես Երևանի և Նախիջևանի խանություններում հողը հանդիսացել է պետական սեփականություն, իսկ համեմատաբար փոքր թիվ կազմող մուլքադարները սոսկ բաժնեկից են եղել պետական հարկ-ռենտային։

Հետագայում այդ տեսակետը բաժանեցին Անդրկովկասի ագրարային հարաբերությունների պատմությունն ուսումնասիրողներից Ս. Եղիազարովը, Կոլյուբակինը, Մուսայելյանը, Էսաձեն, Լինդենը, Դ. Անանունը, Ս. Մարկոսյանը և ուրիշներ։ Այս բոլոր հեղինակների կարծիքով մուսուլմանական հողային իրավունքը գտնվում էր զարգացման այնպիսի աստիճանի վրա, որ այսպես կոչված հողատեր-կալվածատերերը՝ մուլքադարները և թիուլդարները ստանում էին հողային եկամուտի, ավելի ճիշտ՝ հարկ-ռենտայի մի որոշ մասը։ Դրանով իսկ նրանք ժխտում էին գյուղացու անձնական կախումը «հողատիրոջից», նրա ամրակցումը հողին։ Փաստորեն այդպիսին է նաև Բ. Հարությունյանի կարծիքը. նա ևս իրավական առումով գյուղացիներին անձնապես ազատ է համարում։

Անդրկովկասի ագրարային հարաբերությունների պատմությունն ուսումնասիրող խորհրդային հեղինակների մեծ մասը, ինչպես արդեն նշեցինք, այն կարծիքն է հայտնել, որ պարսկական տիրապետության ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում առկա է եղել հողի մասնավոր կալվածատիրական սեփականության ինստիտուտ, և, ավելին, գոյություն են ունեցել ճորտատիրական հարաբերություններ։ Այդ տեսակետին են հարել Ի. Պետրուշևսկին, Ա. Եսայանը, Խ. Ավդալբեգյանը, Մ. Ադոնցը, Հ. Թումանյանը և այլք։

Լայն առումով և ամենից առավել ընդարձակ այդ հարցերը քննության են առնված պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու աշխատության մեջ[33]։

Սկզբից ևեթ նշենք, որ պրոֆ. Պետրուշևսկու աշխատության շարադրանքը կառուցված է այն հիմքի վրա, որպեսզի ապացուցվի ինչպես

[33] **И. П. Петрушевский**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949.

հողի մասնավոր կալվածատիրական սեփականության, այնպես էլ ճորտատիրության առկայությունը մասնավորապես Արևելյան Հայաստանում (որի սահմանները, ի միջի այլոց, նա խիստ նեղացնում է՝ հավասարեցնելով Երևանի խանության սահմաններին)։ Իր շարադրանքից նա հետևյալ եզրակացությունն է անում. «Բոլոր վերը բերված տվյալները մեզ համոզում են այն բանում, որ մինչհեղափոխական ժամանակաշրջանի կովկասագետների թեթև ձեռքով տարածված կարծիքը, որ իբր թե գյուղացիների ամրակցումը հողին գոյություն է ունեցել միայն Վրաստանում, բայց ոչ Հայաստանի և Ադրբեջանի խանություններում, ճիշտ չէ։ Այն հիմնված է XIX դարի ցարական աստիճանավորների անհույս կերպով խճճած նյութերի վրա և ջախջախվում է առավել վաղ վավերագրերով։ Դրանց հիման վրա մենք կարող ենք երկու եզրահանգում անել. 1) անդրկովկասյան խանություններում գյուղացիների ամրակցումը հողին, ավելի ճիշտ՝ խարաջին և պարտույթներին, որոնք հավաքվում էին տվյալ վայրից, գոյություն ուներ կամ, առնվազն, ֆեոդալական իշխանության կողմից համառ փորձեր էին կատարվում հասնելու նման ամրակցման. 2) պահպանելով այդ ամրակցումը իրենց խանությունների սահմաններում, անդրկովկասյան խաները միևնույն ժամանակ, ելնելով իրենց և իրենց ենթակա բեկերի շահերից, քաջալերում էին ռայաթների ու իլյաթների փախուստը հարևան խանություններից, նրանց նստեցնում էին հողի վրա և հաճախ հրաժարվում էին հանձնել փախստականներին»[34]։

Մենք այսքան երկար մեջբերում կատարեցինք ցույց տալու համար այն հակասությունները, որոնց մեջ ընկնում է պրոֆ. Պետրուշևսկին և այն, որ նա զանց է առնում XIX դարի սկզբի իրադարձությունները և դրանց վերաբերող վավերագրերը։ Մի պահ համաձայնենք Ի. Պ. Պետրուշևսկու հետ, որ նախահեղափոխական ժամանակաշրջանի կովկասագետների կարծիքը ճիշտ չէ, և հիմնված է XIX դարի ցարական աստիճանավորների «անհույս խճճած» տվյալների վրա, որ նրանք առաջնորդվել են ցարիզմի թելադրած պահանջներով և աղավաղել են իրականությունը։ Իսկ այդ դեպքում ինչպե՞ս վարվել այն վավերագրերի հետ, որոնք հեղինակում էին ոչ թե ցարական պաշտոնյաները, այլ բուն գյուղացիական զանգվածները, այն բազմաթիվ բողոքների հետ, որոնցով լեցուն են արխիվները և որոնք ուղղված են իրենց՝ գյուղացիներին ճորտացնելու փորձերի դեմ, քանի որ նախկինում նրանք ազատ են եղել։ Այնուհետև Պետրուշևսկին ինքն էլ զգում է, որ իր եզրահանգման հիմ-

[34] **И. П. Петрушевский**, Նշվ. աշխատ., էջ 262։

քերը խախուտ են, ուստի և, ասելով, որ գյուղացիները ամրակցված էին հողին, մտցնում է ճշտում, այսինքն թե՝ նրանք ավելի ճիշտ ամրակցված էին խարաջին և պարտույթներին։ Իսկ ի՞նչ է նշանակում այդ արտահայտությունը։ Արդյո՞ք այն, որ եթե ամրակցված չլինեին, ապա խարաջ չէին վճարելու կամ պարտույթներ չէին կատարելու։ Ցանկալին իրականության տեղ մատուցելու ձգտումը հարկադրել է նրան արտահայտել մի իմաստազուրկ միտք։

Մենք, իհարկե, չենք ասում, որ անվերապահորեն պետք է հավատալ Կովկասում ծառայած պաշտոնյաների հաղորդած բոլոր տվյալներին, բայց մյուս կողմից էլ չի կարելի անվերապահորեն ժխտողական դիրք գրավել և մերժել ամեն ինչ։ Եվ հենց այն պարագան, որ Պետրուշևսկին ամեն կերպ ճգնում է ապացուցել գյուղացիների ամրակցումը հողին, ուստի և ճորտատիրության առկայությունը Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում, և այդ ձգտումով էլ գրավում ժխտողական դիրքավորում դեպի նախահեղափոխական կովկասագետները, միևնույն ժամանակ զուրկ լինելով իր տեսակետները հաստատող փաստերից, հարկադրում է նրան երբեմն արտահայտել հակասական մտքեր։ Իհարկե, նա չի կարող հաշվի չնստել այն փաստի հետ, որ խնդրո առարկա տարածքներում գոյություն են ունեցել դեռ չճորտացված գյուղական համայնքներ, թեև դրանք համարում է փոքրաթիվ, իսկ նրանց գոյությունը սահմանածրում XVI և XVII դարերով[35]։ Մի փոքր հետո նա ընդլայնում է նման գյուղական համայքների գոյության շրջանակները և գրում. «Առայժմ դժվար է ասել, թե ինչպիսի ծագում ունեն ազատ գյուղացի համայնիկները և նրանց մուլքերը Ադրբեջանում ու Հայաստանում XVI—XVII դարերում։ Անկասկած է մի բան միայն, որ նույնիսկ XIX դարի սկզբին ադրբեջանական և հայկական ոչ ամբողջ գյուղացիությունն էր ճորտացված»[36]։ Նահանջն ակնհայտ է, թեև նրա խոսքերը վկայում են, որ նա մազաչափ իսկ կասկած չունի ճորտատիրական կարգերի տիրապետության մասին։ Այս բոլոր պնդումներից հետո, որ եղել է ճորտատիրություն, հետևաբար և հողի մասնավոր կալվածատիրական սեփականություն, խիստ տարօրինակ է նույն հեղինակի մոտ կարդալ հետևյալ տողերը. «Մեզ չի վիճակվել աղբյուրներում հանդիպել ուղղակի տվյալների Ադրբեջանում և Կովկասյան Հայաստանում ռահաթներին հողին ամրակցելու մասին XVI—XVII դարերի ժամանակահատվածում»[37]։ Հեղինակը ավելի իրավացի կլիներ, եթե գրեր, որ նման փաստերի նա չի հանդիպել առհասարակ իր ուսումնասիրած ողջ ժամանակաշրջանում։

Խոսելով մուլքի զանազան տեսակների և դրանց նշանակությունների մասին, պրոֆ. Պետրուշևսկին մուլքը համարում է նաև «խոշոր կամ մանր ֆեոդալական կալված», որպես «ոչնչով չպայմանավորված հողային սեփականություն, որը կապված չէր պետական ծառայություն կատարելու պարտավորության հետ», որ «նման մուլքի տիրակալի իրավունքները տարածվում էին հողի և անդ ու անդաստանի վրա, որոնք գտնվում էին առանձին գյուղացիական համայնքների օգտագործման ներքո կամ տրվում էին առանձին հողազուրկ կամ սակավահող գյուղացիների (աբյարներ, յարիքյարներ) կիսբարական վարձակալության հիմունքներով. գյուղացիները պարտավոր էին հողատիրոջը ռենտա վճարել»։ Այնուհետև նա շարունակում է. «Ընդ որում մուլքի տերը, որպես կանոն, անմիջականորեն չէր միջամտում գյուղատնտեսական արտադրության պրոցեսին, բավարարվելով ռահաթներից բնամթերային ռենտայի գանձումով և աննշան չափերով նրանց կոռային աշխատանքներով (պարսկ. բիգար, հայեր. կոռ)։ Նման մուլքերը, ինչպես կտեսնենք ստորև, ազատորեն վաճառվում և գնվում էին»[38]։

Չի կարելի համաձայնել մուլքի, իբրև «ֆեոդալական կալվածի» և «ոչնչով չպայմանավորված հողային սեփականության» նման բնորոշման հետ։ Ինչպես ցույց կտրվի հետագայում, մուլքը սոսկ հարկ-ռենտային մասնակից լինելու իրավունք էր, մուլքի այս հասկացությամբ։ Յարիքյարների կամ կիսբարների առկայությունը կապված էր տեղական կյանքի առանձնահատկությունների և բնակչության այն խոշոր տեղաշարժերի հետ, որոնցով լեցուն էր այդ դարաշրջանը և որի մասին մենք կխոսենք իր տեղում։ Այստեղ միայն մի հարցի վրա ենք ուզում դարձնել ընթերցողների ուշադրությունը։ Անշուշտ մուլքի այս տեսակը, իբրև հարկ-ռենտային բաժնեկից լինելու իրավունք, ենթակա էր ազատ առ ու վաճառքի, ինչպես ճիշտ նկատում է պրոֆ. Պետրուշևսկին և որը, ըստ մեզ, նրան գցում է թյուրիմացության մեջ։ Արդ, մի պահ համաձայնենք, որ մուլքը ֆեոդալական կալված է։ Այդ դեպքում ինչպես բացատրել մուլք-«կալվածի» վաճառքի խիստ «տարօրինակ» կարգը։ Բանն այն է, որ մուլքը, ինչպես հայտնի է, վաճառվում էր դանգերով, իսկ մեկ գյուղի ողջ մուլքը կազմում էր վեց դանգ։ Մուլքի գնման ու վաճառքի բոլոր փաստաթղթերում մենք հանդիպում ենք վաճառքի հետևյալ չափերին՝ 1/2 դանգ, 1 դանգ, 2 դանգ, 3 դանգ, 4 դանգ, 5 դանգ, 6 դանգ

[35] Նույն տեղում, էջ 232։
[36] Նույն տեղում, էջ 240։
[37] Նույն տեղում, էջ 252։
[38] Նույն տեղում, էջ 232։

և համապատասխանաբար՝ 1 1/2, 2 1/2, 3 1/2 և այլն։ Ինչպե՞ս բացատրել և ինչով բացատրել, որ կալվածքը կարող էր նման հավասար մասերով վաճառվել, ի՞նչ սկզբունք էր դա։ Այնուհետև. Էջմիածնի վանքը Օշական գյուղի մուլքը հիմնականում գնել էր Փիլիպպոս և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների ժամանակ կես-կես դանգերով, այն էլ առնվազն 15 անձանցից[39]։ Որքան էլ իր ժամանակի համար մեծ գյուղ լիներ Օշականը, հազիվ թե 15 կալվածատեր ունենար, որոնք բոլորն էլ հավասար չափով հողերի տեր լինեին։ Միայն այս մեկ օրինակն էլ բավական է, մեր կարծիքով, հերքելու մուլք-կալվածի գոյությունը, թեև նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել։

Պրոֆ. Պետրուշևսկու ուշադրությունից այս պարագան վրիպել չէր կարող, ուստի նա փորձում է ելք գտնել ստեղծված վիճակից և, դնելով այդ հարցը, ճգնում է մի անհաջող օրինակով հիմնավորել իր՝ վերևում բերված դրույթը։ Այսպես, նա գրում է. «Բայց հարց է ծագում. ի՞նչ էր նշանակում մուլքի վաճառքը՝ հողի վաճառք նրա վրա նստած ռահաթներով, թե միայն հողից հարկ-ռենտայի մասը գանձելու իրավունքի վաճառք, ինչպես փորձում էին պնդել նախահեղափոխական կովկասագետները»[40]։ Այնուհետև նա օրինակ է բերում 1648 թվականին Նախիջևանի խանությանը վերաբերող մի գնման ակտ, ըստ որի «Ոմն Միրի-աղա գնել է Միրզա-աղայից, թավրիզյան 10 թոմանով, Քարդաղ հողը ամբողջությամբ, որի չորս սահմաններն են՝ հարավից գերեզմանատունը (կաբրիստան) և Նախիջևանի ճանապարհը, արևելքից Խուրթաղ վարելահողը, հյուսիսից Քուշչի-թեփեսիի հովիտը և արևմուտքից Կուշբեկի լեռնանցքը։ Սահմանների հիշատակումը իմաստ չէր ունենա, եթե վաճառվեր միայն գյուղից ռենտա գանձելու իրավունքը, և ոչ թե բուն հողը. չէ՞ որ նման դեպքում կգիջվեր ամբողջ գյուղի կամ ամբողջ հողի եկամուտի որոշակի բաժինը (դանգը)։ Այդ բաժինները կազմում էին ընդհանուր եկամուտի հավասար մասերը, անկախ հողի տարածությունից, և հիշատակել վերջինիս մասին հարկ չէր լինի»[41]։

Այստեղ պրոֆ. Պետրուշևսկին չի ուզեցել նկատել կամ նրա ուշադրությունից վրիպել է մի շատ կարևոր մանրուք։ Վերոհիշյալ Քարդաղ հողը գյուղ չէ, այսինքն, ըստ նրա, մուլք-կալված չէ, այլ սոսկական հողակտոր։ Հետևաբար ոչ մի խոսք չի կարող լինել կալվածի առ ու

[39] **Ս. Պողոսյան,** Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17—18-րդ դդ., «Երևանի պետ. համալսարանի աշխատություններ», հ. XIII, Երևան, 1940, էջ 131։

[40] **И. П. Петрушевский,** նշվ. աշխատ., էջ 235։

[41] Նույն տեղում։

վաճառքի մասին, և հազիվ թե 10 թոմանով մի ամբողջ գյուղ վաճառվեր, երբ այդ շրջանում կես դանգի համար 5—10 թոման էին վճարում։ Առավել ևս խոսք չի կարող լինել ռահաթների վաճառքի մասին. չէ՞ որ այդ դեպքում կգրեին, թե քանի շունչ են կազմում նրանք։ Իսկ նման օրինակ չիք։

Իսկ ինչպե՞ս է հաշտեցնում իր տեսության հետ պրոֆ. Պետրուշևսկին վերոհիշյալ քաղվածքի վերջին մասը, երբ խոսում է մուլքի որպես հարկ-ռենտային բաժնեկից լինելու իրավունքի մասին։ Չէ՞ որ վերջին պարագան հարյուրավոր վավերագրերով կարելի է հաստատել, մինչդեռ իր բերած մի հատիկ օրինակը ամենևին կապ չունի մուլք-կալվածի նրա իսկ բնորոշման ու ըմբռնման հետ։

Ի. Պ. Պետրուշևսկին փորձում է պնդել, որ «կիսանկախ խանություններում էլ գյուղացիները ազատ տեղափոխման իրավունքից չէին օգտվում»[42]։ Նրա բերած փաստերը այս հարցում ևս համոզիչ չեն։ XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի, իսկ նա տվյալ դեպքում խոսում է հենց այդ ժամանակահատվածի մասին, պատմությունը հետաքրքրողը ամենևին չի կարող համաձայնել նման պնդման հետ։ Ընդհակառակը, այս ժամանակաշրջանում բնակչության այնպիսի մեծ տեղաշարժեր էին կատարվում, որ դրանց վրա աչք գոցել հնարավոր չէ։ Այդ տեղաշարժերը արդյունք էին քաղաքական այն հարափոփոխ, հեղհեղուկ վիճակի, որի մեջ գտնվում էին Արևելյան Հայաստանը և ողջ Անդրկովկասն առհասարակ։ Եվ թերևս սա էր պատճառներից մեկը, որ, ինչպես ճիշտ նկատում է Դ. Անանունը, «խանություններում արմատ չէր գցում հողի մասնավոր սեփականությունը»[43]։

Ի. Պ. Պետրուշևսկին ջանում է Վրաստանում և անդրկովկասյան խանություններում ֆեոդալական հարաբերությունների առանձնահատկություններն ու տարբերությունները վերածել սոսկ ձևական տարբերության։ Նա գրում է. «Ֆեոդալական հարաբերությունները մուսուլմանական խանություններում, իրոք, նրանով են տարբերվում վրացական ճորտատիրությունից, որ առաջինները օրենսդրության մեջ այն արտացոլումը չգտան, ինչ երկրորդը»[44]։ Ստացվում է այնպես, որ խանություններում ճորտատիրություն կար, բայց իրավական առումով այն ձևակերպված չէր։ Բոլորովին անհիմն պնդում։

[42] Նույն տեղում, էջ 256։

[43] **Դ. Անանուն,** Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. I, Բաքու, 1916, էջ 48։

[44] **И. П. Петрушевский,** նշվ. աշխատ., էջ 263։

Վերը բերված փաստերը մեզ իրավունք են տալիս պնդելու, որ պրոֆ. Պետրուշևսկին ճիշտ չէ Արևելյան Հայաստանում և անդրկովկասյան խանություններում հողի մասնավոր կալվածատիրական սեփականության, գյուղացիների՝ հողին ամրակցման, հետևաբար և ճորտատիրության գոյության հարցում։ Նրա բերած օրինակները ոչ միայն համոզիչ չեն, այլև ճիշտ չեն մեկնաբանված, ինչը և տեղիք է տվել բազմաթիվ հակասությունների նրա աշխատության մեջ։

Պրոֆ. Պետրուշևսկու հայացքներին համապատասխան տեսակետներ է զարգացնում նաև պրոֆ. Ա. Եսայանը, որի կարծիքով «սկսած XVII դարի կեսերից մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին մուլքադարական իրավունքը (պետք է լինի՝ մուլքադարությունը— Վ. Գ.) հետզհետե դառնում է խոշոր ֆեոդալական հողատիրության ձևը Հայաստանում, փոխարինելով առ այդ գոյություն ունեցած նախարարական հողատիրությանը»[45]։ Դժվար է ասել, թե ինչ հիման վրա է պրոֆ. Եսայանը կարծում, որ նախարարական հողատիրությունը հարատևել է Հայաստանում մինչև XVII դարի կեսերը, բայց մի բան պարզ է, որ նա ելնում է ֆեոդալիզմի իրողության փաստից, իսկ դա կասկածի տեղիք տալ չի կարող։ Բայց ի՞նչ է հասկանում պրոֆ. Եսայանը մուլքադարության տակ։ «Մուլքադարությունը,— գրում է նա,— հարկավոր է դիտել իբրև ճորտատիրության մի հատուկ ձև Արևելքում, որը Արևմուտքի ճորտատիրության համեմատությամբ ուներ մի շարք առանձնահատուկ գծեր, այն է՝ մուլքադարությունը չէր նշանակում գյուղացու ամրակցում հողին, բայց այստեղ «արտատնտեսական ճնշումը» իրականացվում էր գյուղացիների դասային ոչ-լիիրավության հաստատման ձևով, ինչպես և նրանց տարրական ընդհանուր քաղաքացիական իրավունքներից զրկելով, որի հետևանքով մուլքադարական գյուղացիները (այդ թվում նաև թիուլայինները) իրենց դրությամբ ոչնչով չէին տարբերվում ճորտ գյուղացիներից»[46]։ Պրոֆ. Եսայանը արևելյան և արևմտյան ֆեոդալիզմի տարբերությունները ուզում է տեսնել այնտեղ, որտեղ ոչ թե տարբերություն պետք է որոնել, այլ ընդհանրություն։ Մենք ուզում ենք ասել, որ ֆեոդալիզմի շրջանում գյուղացիությունը, ինչպես ճորտ, այնպես էլ ազատ, դասային լիիրավության իմաստով գտնվում էր գրեթե միևնույն դրության մեջ։ Այդպես պետք է լիներ առավել ևս Արևելքի բռնապետական կարգերում, որտեղ նույնիսկ տիրող դասակարգերի ներկայացուցիչները չէին կարող վստահ լինել իրենց վաղվա օրվա հարցում, ուր

[45] А. М. Есаян, Мулькадарское право в Армении, Ереван, 1948, стр. 3.

[46] Նույն տեղում, էջ 64։

մնաց թե գյուղացիները։ Երկրի ընդհանուր քաղաքական իրավիճակը ի՞նչ կապ ունի ճորտատիրության առկայության հետ։ Եվ վերջապես, այդ ինչ տեսակ ճորտատիրություն է, երբ «մուլքադարական և թիուլդարական գյուղացիները որոշ պայմանների առկայության դեպքում կարող էին ազատ կերպով թողնել նախկին տերերի հողերը և տեղափոխվել ուրիշների մոտ»[47]։ Այդ դեպքում ինչո՞ւմ էր արտահայտվում մուլքադարների և թիուլդարների ճորտատիրական իրավունքը, միթե՞ սոսկ դասային ոչ լիիրավությամբ։ Բայց չէ՞ որ դասային առումով ոչ լիիրավ էին նաև ազատ գյուղացի համայնիկները, որոնք ենթակա էին խաների ու նրա պաշտոնյաների կամայականությանը։

Պրոֆ. Եսայանին զարմանք է պատճառում մի հանգամանք։ Նա գրում է. «Այն հեղինակները, որոնք բացասում են մուլքային հողերի վրա ունեցած մուլքադարների սեփականության իրավունքը, միաժամանակ, որքան էլ այդ տարօրինակ լինի, ընդունում են նրանց կողմից հողերի օտարման իրավունքը և չեն բացասում, որ մուլքն անցնում էր ժառանգաբար»[48]։ Այստեղ, իհարկե, տարօրինակ ոչինչ չկա, որովհետև այդ հեղինակները մուլքը դիտում են իբրև հարկ-ռենտային բաժնեկից լինելու իրավունք, իսկ այդ իրավունքը ենթակա էր և՛ օտարման, և՛ վաճառքի, և՛ ժառանգման, ինչպես արդեն հիշատակվել է վերևում։ Այս ամենից ակնհայտ է, որ պրոֆ. Եսայանը ևս ճգնում է մուլքադարությունը և թիուլդարությունը հողի մասնավոր կալվածատիրական ձևեր համարել, ճգնում է ապացուցել ճորտատիրության գոյությունը, որը, սակայն, նրան չի հաջողվում, քանի որ ստիպված է խոսել այնպիսի երևույթների առկայության մասին, որոնք անվերապահորեն ժխտում են ճորտատիրության փաստը։ Իսկապես տարօրինակ են հնչում պրոֆ. Եսայանի հետևյալ խոսքերը, որոնք գալիս են որոշ առումով մերժելու նրա այդ փորձերը. «Ֆեոդալական հողային սեփականությունը տարաբաժանված սեփականություն է, որի դեպքում միևնույն հողակտորի վրա տարբեր առումներով իրավունքներ ունեն տարբեր անձինք, որոնք կանգնած են ֆեոդալական աստիճանակարգի տարբեր աստիճաններին։ Երևանի խանությունում այդ համատեղ սեփականությունը կոնկրետ կերպով արտահայտվում էր նրանում, որ մուլքադարական գյուղերում գյուղացիները հողօգտագործման համար վճարում էին ռենտա, մուլքադարին՝ մուլք, սարդարի գանձարանին՝ հարկ-ռենտա»[49]։ Նախ և առաջ նկա-

[47] Նույն տեղում, էջ 61։

[48] Նույն տեղում, էջ 47։

[49] Նույն տեղում, էջ 52։

տենք, որ մուլքը առանձնացվում էր հարկ-ռենտայից և պետությունն էր, որ այն տրամադրում էր մուլքադարներին։ Մուլքադարական կոչված գյուղերում հարկ-ռենտան տրոհվում էր համապատասխան մասերի և հատկացվում ըստ պատկանելության։ Այստեղ խոսք չի կարող լինել համատեղ սեփականության վերաբերյալ, այլ խոսքը գնում է բաժնեկից լինելու մասին։ Հարցը այստեղ ոչ թե հողային սեփականության, այլ հարկ-ռենտայի տրոհվածության մեջ է։ Հենց այն հանգամանքը, որ հարկ-ռենտան տրոհվում է նման գյուղերում, պրոֆ. Եսայանի մոտ այն շփոթ միտքն է առաջացնում, որ նույն հողը տարբեր տերեր ունի, մինչդեռ հողի տիրակալը մեկն է՝ պետությունը, որը այս կամ այն անձին մասնակից է դարձնում ստացված եկամուտին։

Այժմ տեսնենք, որպիսին է պրոֆ. Հ. Թումանյանի դիրքավորումը այս ելակետային հարցում։ Նա որոշակիորեն չի արտահայտել իր կարծիքը վերոհիշյալ հարցերի շուրջը, քանի որ, ընդունելով հանդերձ Պարսկաստանում և նրան ենթակա տերիտորիաներում հողի պետական սեփականությունը որպես փաստ, գյուղացիների և մուլքադարների ու թիուլդարների հարաբերությունները բնութագրում է իբրև ճորտերի և կալվածատերերի հարաբերություններ, այսինքն հայտնում է երկու իրարամերժ կարծիքներ, առանց բացատրելու, թե ինչպես է դրանք հաշտեցնում միմյանց հետ։ Առհասարակ պրոֆ. Թումանյանը խիստ անվերապահ է իր ձևակերպումների մեջ, ուստի և նրա արտահայտած մտքերում և բանաձևումներում չափից ավելի հակասականություն կա։ Այսպես, օրինակ, պրոֆ. Թումանյանը հայտարարում է. «XVIII դարի վերջերին խաներն ու բեկերը, ինչպես նաև հոգևորականությունը մուլքադարական իրավունք էին ձեռք բերել Երևանյան խանության շատ գյուղերի վրա։ Պետրուշևսկին գտնում է, որ այն գյուղերը, որոնք դեռ չէին անցել առանձին խաների, բեկերի որպես մուլք, այդ գյուղերի հողերը կազմում էին համայնքի մուլքը»[50]։

Քիչ անց նա շարունակում է. «Ճիշտ է, որ Թուրքիայում և Պարսկաստանում պաշտոնապես ճորտատիրության իրավունք գոյություն չուներ, սակայն դա բնավ էլ չէր նշանակում, թե գյուղացիներն անձնապես ազատ էին։ Ռահաթի, որպես շահագործվող դասի, սոցիալական դրությունը բնութագրող գծերից մեկն էլ այն էր, որ նա, որպես հարկատու, ամրացված էր տվյալ գյուղին, որ ռահաթի դասին պատկանողները չէին կարող ինքնակամ կերպով թողնել իրենց բնակավայրը և հեռանալ։ Փաստերը ցույց են տալիս, որ այն դեպքում, երբ գյուղացին

[50] **Հ. Ե. Թումանյան**, Հայաստանի տնտեսական զարգացումը, Երևան, 1960, էջ 252։

ինքնակամ կերպով լքում էր տվյալ վայրը և հեռանում մի ուրիշ վայր, նրան հետապնդում և վերադարձնում էին։ Ընդհակառակն, պետությունը և հողատերերը ցանկացած ժամանակ գյուղացուն կարող էին իր բնակավայրից հանել և փոխադրել մի այլ բնակավայր՝ առանց գյուղացու կամքը հարցնելու։ Այսպիսով, թեպետ գյուղացին ամրացված չէր հողին, սակայն կապված էր այն պարտավորությունների հետ, որ նա պետք է կատարեր հողատիրոջ և պետության հանդեպ»[51]։

Այս երկար մեջբերումը մենք կատարեցինք ցույց տալու համար, որ պրոֆ. Թումանյանը ոչ միայն հակասական մտքեր է հայտնում, այլև այդ մտքերը հիմնավորելու համար և ոչ մի փաստ չի բերում։ Նրա բոլոր նմանաբնույթ հայտարարությունները մերկապարանոց են։ Այստեղ նախ և առաջ պետք է ասել, որ հիմնազուրկ է նրա այն պնդումը, թե Երևանյան խանության շատ գյուղեր վերածվել էին մուլքադարականի։ Շոպենի բերած տվյալների հիման վրա Խ. Ավդալբեգյանի կատարած հաշվումներից երևում է, որ Երևանի խանությունում Ռուսաստանին միացվելու նախօրեին մուլքադարական գյուղերը կազմել են գյուղերի ընդհանուր քանակի 16 %-ը[52]։ Սա արդեն ցույց է տալիս, որ մուլքադարությունը այնքան էլ տարածված երևույթ չէր։ Այնուհետև, պրոֆ. Թումանյանը հաշվի նստում է այն իրողության հետ, որ Թուրքիայում և Պարսկաստանում պաշտոնապես ճորտատիրական իրավունք գոյություն չի ունեցել, բայց ժխտում է գյուղացիների անձնական ազատության առկայությունը։ Նա գրում է, որ գյուղացիները չէին կարող ինքնակամ կերպով թողնել իրենց բնակավայրը և հեռանալ, այսինքն ամրակցված էին հողին, բայց այդ ամենից եզրակացնում է, որ «թեպետ գյուղացին ամրացված չէր հողին, սակայն կապված էր այն պարտավորությունների հետ, որ նա պետք է կատարեր հողատիրոջ և պետության հանդեպ», այսինքն բառացիորեն կրկնում է պրոֆ. Պետրուշևսկու մտքերը, առանց խորանալու դրանց էության մեջ։

Առհասարակ պետք է նշել, որ պրոֆ. Թումանյանը խուսափում է փաստեր բերելուց և դրանց վրա իր եզրակացությունները կառուցելուց։ Այսպես, օրինակ, նա գրում է. «Հողատերերի համար գյուղացիները մի քանի օր բեգյար էն կատարում և, բացի այդ, նրանք պարտավոր էին խաներին ու բեկերին տրամադրել բանող անասուններ, սայլեր և այլ փոխադրական միջոցներ»[53]։ Այս հայտարարությունն ամրապնդող և

[51] Նույն տեղում, էջ 293։

[52] **Խ. Հ. Ավդալբեգյան**, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917), Երևան, 1959, էջ 37։

[53] **Հ. Ե. Թումանյան**, Նշվ. աշխատ., էջ 302։

ոչ մի փաստ հեղինակը չի բերում։ Մենք բավականաչափ ծանոթ ենք ժամանակի վավերագրերին և ոչ մի հատիկ վկայության չենք հանդիպել, որը հավաստեր պրոֆ. Թումանյանի այդ պնդումը։ Այլ բան է, որ պետական կոռային աշխատանքներ կատարվում էին և այն էլ մեծ մասշտաբներով (ջրանցքների շինարարություն, բերդերի և ամրոցների, ճանապարհների կառուցում և այլն)։ Կարծում ենք, որ պրոֆ. Թումանյանն էլ քաջ տեղյակ է եղել իր պնդման հիմնազրկությանը, որովհետև շտապում է տեղնուտեղը շտկել ասածը և թուլացնել տպավորությունը, ուստի և շարունակում է. «Ընդհանուր առմամբ ռենտայի և հարկերի գումարի մեջ կոռը և բեգյարը մեծ տեսակարար կշիռ չունեին, դա բացատրվում է գլխավորապես նրանով, որ նստակյաց ֆեոդալական տնտեսություն վարող խաների և բեկերի թիվը մեծ չէր»[54]։

Պրոֆ. Թումանյանի տեսակետի հետ այս թռուցիկ ծանոթությունը ցույց է տալիս, որ փաստերի հետ հաշվի չնստելը նրան ևս դնում է այնպիսի վիճակի մեջ, երբ ստիպված ես անտեսել իրականությունը և ստեղծել երևակայական մի պատկեր, որը այդ իրականության հետ գրեթե ընդհանրություն չունի։

Պատմաբան Բ. Մ. Հարությունյանը իր աշխատության[55] մեջ ընդունում է, որ «Գյուղացիությունը, համաձայն մահմեդական դավանանքի սկզբունքների, անձնապես ազատ էր համարվում։ Գյուղացին չէր կարող վաճառքի առարկա լինել առանց հողի։ Նա իրավունք ուներ թողնել իր տիրոջ հողը և անցնել այլ տեղ»[56]։ Այստեղից նաև հետևում է, որ Բ. Մ. Հարությունյանը մուլքադարներին համարում է հողի սեփականատերեր, քանի որ բոլոր հողերը նա համարում է կոտորակված երկու մասի՝ պետականի (խալիսե) և մուլքադարականի։ Սակայն, նրա կարծիքով, իրականության մեջ գյուղացիների անձնական ազատությունն փաստորեն չկար։ Այդ կապակցությամբ նա գրում է. «Սակայն, գյուղատնտեսական շուկայի ոլորտից դուրս աշխատանքի և գյուղատնտեսությունից դուրս գոյության միջոցներ ձեռք բերելու համար բանվորական ուժի կիրառման հնարավորության բացակայությունը կամ արտակարգ նեղ ընդգրկումը հարկադրում էր գյուղացիությանը ամուր նստել հողին, իսկ պատերազմի հետևանքով գյուղերի ավերման և տնտեսության քայքայման դեպքում՝ մտնել այս կամ այն հողատիրոջ թի տակ։ Դա մի կողմից։ Մյուս կողմից, խաների, բեկերի և մնացյալ ուժեղների ուղղակի, անօրինական բռնությունը ստիպում էր գյուղացուն աշխատել իբրև ճորտ, թեև օրենքով անձնական ճորտացում սահմանված չէր»[57]։

Պրոֆ. Վ. Ռշտունին ևս, խոսելով Արևելյան Հայաստանում տիրող սոցիալական հարաբերությունների մասին, գտնում է, որ դրանք բավականաչափ հարուստ են եղել ֆեոդալական ճորտատիրական տարրերով։ «Անդրադառնալով այդ նույն հարցին,— գրում է նա,— բայց ի նկատի ունենալով ոչ այն պատմական ժամանակաշրջանն իր ամբողջությամբ, ինչ որ Ի. Պ. Պետրուշևսկին և Բ. Մ. Հարությունյանը, այլ միայն XIX դարի առաջին քառորդը և այն էլ միայն Արևելյան Հայաստանի տարածքը, մենք էլ այն եզրակացության ենք հանգել, որ ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների հետ գործ ունենք այդտեղ, երբ գյուղացիներին հողին ամրացնելը և նրա անձնական կախումը կալվածատիրոջից՝ ճորտացումը, չէին ընդունել այն բովանդակությունը և մասշտաբը, ինչ տեսնում ենք Վրաստանում, որտեղ ճորտատիրական իրավունքը գրեթե Ռուսաստանի այդ ժամանակի դրությունն էր հիշեցնում։ Մենք, վիճելով Շոպենի և նրա ուղիով գնացող հեղինակների հետ, քննադատելով ցարական իշխանության պաշտոնական ներկայացուցիչների տեսակետը, այն միտքն ենք պաշտպանել, որ Երևանի և Նախիջևանի խանություններում, մինչև դրանց միացումը Ռուսաստանին, շատ շոշափելի ձևով երևան են գալիս ճորտատիրական հարաբերությունների բազմաթիվ տարրեր, թեև այնտեղ գոյություն չուներ ճորտատիրական իրավունք իր օրենսդրական լրիվ ձևակերպումով, հետևաբար չկար գյուղացու լրիվ ամրացումը հողին և կալվածատիրոջ լրիվ իշխանությունը գյուղացու անձի վրա կամ ճորտացումն իր իրավական արտահայտությամբ»[58]։ Այդ նույն տեսակետը պրոֆ. Վ. Ռշտունին արտահայտել է նաև իր ավելի վաղ գրված աշխատության մեջ[59]։

Դժվար չէ նկատել, որ ընդունելով հանդերձ ճորտության իրավական առումով գոյություն չունենալը, պրոֆ. Ռշտունին ամենևին չի տարակուսում, որ գոյություն է ունեցել հողի մասնավոր կալվածատիրական սեփականություն, որ գյուղացին նստած է եղել կալվածատիրոջ հողի վրա, թեև լրիվ ամրակցված չի եղել հողին։

Քննարկվող հարցին անդրադարձել է նաև տնտեսագետ պրոֆ. Մ. Հ. Ադոնցը, սակայն նրա մոտ այն պարզորոշ կերպով ձևակերպված չէ։

---

[54] Նույն տեղում, էջ 302։

[55] **Б. М. Арутюнян**, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940.

[56] **Բ. Մ. Հարությունյան**, Նշվ. աշխատ., էջ 19։

[57] Նույն տեղում, էջ 20։

[58] **Վ. Ռշտունի**, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա., Երևան, 1960, էջ 38։

[59] **В. Рштуни**, Крестьянская реформа в Армении, Ереван, 1947, стр. 43.

Նա ևս համաձայն է այն իրողությանը, որ մահմեդական աշխարհում օրենսդրական առումով ճորտատիրություն ձևակերպված չէ եղել, բայց գյուղացիությունը գտնվել է նույնպիսի իրավազուրկ դրության մեջ, ինչ որ ֆեոդալիզմի ժամանակաշրջանի Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայի երկրներում[60]: Այստեղ հարկ է նշել, որ ֆեոդալիզմի ժամանակաշրջանը պատմական բազմադարյան մի ժամանակահատված է, և գյուղացիությունը տարբեր ժամանակներում տարբեր դրության մեջ է գտնվել, ընդ որում յուրաքանչյուր երկիր էլ ունեցել է իր առանձնահատկությունները: Այնպես որ նման նույնացումը ոչինչ չի ասում և հարցի մեջ պարզություն չի մտցնում: Պրոֆ. Մ. Ադոնցը ևս այն տեսակետին է հարում, որ Անդրկովկասի մահմեդական օրենսդրությանը ենթակա տարածքներում ֆեոդալները հողի մասնավոր սեփականատերեր էին: Մեկ այլ տեղ, կարծես մոռանալով վերևում քաղված իր միտքը, թե իրավազրկության առումով տարբերություն չկար մահմեդական աշխարհի գյուղացիության և եվրոպական երկրների գյուղացիության միջև, պրոֆ. Ադոնցը գրում է. «...ինչպես Երևանի, այնպես էլ Անդրկովկասի մյուս մուսուլմանական պրովինցիաներում գոյություն ունեին ճորտատիրության տարրեր, միայն այն տարբերությամբ, որ գյուղացիության հիմնական զանգվածը ամրակցված էր ոչ թե առանձին ֆեոդալների հողին, այլ ամեն խանության տերիտորիային, ավելի ճիշտ՝ որոշ տուրքերի և պարհակների»[61]: Այստեղ նա կրկնում է պրոֆ. Պետրուշևսկուն, միայն այն զանազանությամբ, որ ընդունում է ոչ թե համընդհանուր ճորտատիրություն, այլ ճորտատիրության տարրերի առկայություն: Բայց հենց այն հանգամանքը, որ պրոֆ. Ադոնցը հարկ է համարում ճշտել, որ գյուղացիները ամրակցված էին խանության տարածքին, ինքնըստինքյան ցույց է տալիս, որ փաստերի ճնշման տակ, ավելի ճիշտ իրեն անհրաժեշտ փաստերի բացակայությունը հարկադրում է նրան կատարել նման ուղղում, թեև դա էլ հիմնավորված չէ: Ինչ վերաբերում է գյուղացիության՝ տուրքերին և պարհակներին ամրակցված լինելու հարցին, ապա դրա մասին մենք հանգամանորեն խոսել ենք պրոֆ. Պետրուշևսկու տեսակետները մեկնաբանելիս:

Խ. Հ. Ավդալբեգյանը նույնպես որոշակի պատասխան չի տալիս խնդրո առարկա հարցին: Հարցի դրվածքը նա հետևյալ կերպ է սահմանում. «...մինչև այժմ էլ դեռ հիմնովին պարզված չէ այն հարցը, թե

[60] **Մ. Ա. Адонц.** Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957, стр. 58.

[61] Նույն տեղում, էջ 63:

Արևելյան Հայաստանում, մասնավորապես պարսկական տիրապետության վերջին շրջանում, գոյություն ունեցե՞լ է, արդյոք, հողի ֆեոդալական սեփականություն և եթե այո, ապա զարգացման ի՞նչ աստիճանի վրա է գտնվել այն՝ երկիրը Ռուսաստանին միացվելուց առաջ և ի՞նչ վիճակի հասավ ցարիզմի տիրապետության օրով»[62]: Պետք է ասել, որ այս սահմանումը շատ ճիշտ է և ցույց է տալիս մի բան, որ այս հարցում դեռևս բազում անելիքներ ունենք: Բայց առաջ անցնելով, նա մոռանում է իր ասածը և մի նոր դրույթ է առաջադրում, որը չի բխում իր բերած փաստական նյութից: Նա գրում է. «...մուլքադարությունը ֆեոդալական հողատիրության հաստատուն կատեգորիա էր, իսկ մուլքադարներն իրավահաստատ ու կայուն հողատերեր էին Արևելյան Հայաստանում»[63]: Սա արդեն խիստ կտրական պնդում է և, կրկնում ենք, նրա մոտ չի ամրապնդվում փաստերով ու համապատասխան վավերագրերով:

Թիուլդարության և թիուլային իրավունքի մասին մենք այստեղ չենք խոսում, որովհետև այդ հարցը համեմատաբար ճիշտ է մեկնաբանված, այն բացառությամբ սոսկ, որ թիուլդարությունը նույնպես համարվել է հողի նկատմամբ մասնավոր սեփականատիրական իրավունք:

Ամփոփելով վերոհիշյալ հեղինակների տեսակետները, մենք կարող ենք հանգել հետևյալ ընդհանուր եզրակացություններին: Նրանք բոլորն էլ ելնում են այն մեկնակետից, որ չի կարելի վստահել նախահեղափոխական շրջանի պատմաբանների և ցարական աստիճանավորների տրվյալներին ու կարծիքներին, որովհետև նրանք միտումնավոր կերպով խեղաթյուրել են իրականությունը և, ինչպես պրոֆ. Պետրուշևսկին է արտահայտում, «անհույս կերպով խճճել են» փաստերը: Բայց չէ՞ որ միայն ցարական պաշտոնյաները և նախահեղափոխական շրջանի ռուսական հետազոտողները չեն, որ նման հայեցակետ են ունեցել: Ինչո՞վ բացատրել, որ Արևմուտքի բազմաթիվ գիտնականներ ևս, ելնելով իրենց դիտումների և հետազոտությունների արդյունքներից, նույն տեսակետն են արտահայտել: Մի՞թե նրանք ևս միտումնավոր խեղաթյուրել են իրականությունը:

Այնուհետև, ամենուր անտեսանելի կերպով հիշյալ հեղինակներին հետապնդում է այն մտավախությունը, որ եթե մերժվի հողի մասնավոր կալվածատիրական սեփականության գոյության փաստը, ճորտատիրության առկայությունը, ապա դրանով իսկ կմերժվի ֆեոդալական հասարակարգի իրողությունը: Սա անհիմն երկյուղ է, որովհետև արևելյան

[62] **Խ. Հ. Ավդալբեգյան,** Հողային հարցը Արևելյան Հայաստանում, էջ 29—30:

[63] Նույն տեղում, էջ 103:

ֆեոդալիզմի առանձնահատկությունները չպետք է նույնացնել ֆեոդալիզմի բացակայության հետ և անպայմանորեն Արևելքում ևս փնտրել այն նույն «դասական» ֆեոդալիզմը, որը հատուկ էր Արևմուտքին։

Ինչպես տեսանք, նրանց բոլորի մոտ առկա է որոշակի հակասականություն։ Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ փաստերը և այդ փաստերի հիման վրա կատարված նախկին հետազոտությունները մեկ բան են թելադրում, իսկ նրանք ուզում են մեկ այլ բան ապացուցել։ Դրա հետևանքով նրանց մոտ չկա մեկ ընդհանուր, ցայտուն կերպով արտահայտված սահմանում։ Նրանց բոլոր սահմանումները լի են վերապահումներով և, շատ դեպքերում էլ, հակասություններով։

Սակայն մեր պատմական գրականության մեջ Արևելյան Հայաստանի հողային հարաբերությունների վերաբերյալ արտահայտված է նաև հակառակ տեսակետը։ Այդ տեսակետն է արտահայտում Ս. Ս. Մարկոսյանի աշխատությունը[64]։ Դնելով «կալվածատիրական» հողատիրության պրոբլեմը, նա հետազոտում է այդ պրոբլեմի տարբեր կողմերը, ինչպես հողի օտարման, արտահամայնական հողատիրության, հողատիրության համակարգի արհեստական ոռոգման հետ ունեցած կապի հարցերը և գալիս այն եզրակացության, որ «17—18-րդ դդ. Երևանի երկրում իրականության մեջ հողն ընդունել էր պետական սեփականության բնույթ և վերացել էր հողի կալվածատիրական մասնավոր սեփականությունը»[65]։ Հենց այս հանգամանքով էլ Ս. Մարկոսյանը բացատրում է ճորտատիրության բացակայությունը, քանի որ, ինչպես նա է գրում, «Դժվար է պատկերացնել հողի կալվածատիրական սեփականության բացակայության պայմաններում ճորտատիրության առկայությունը»[66]։

Ընդհանուր գծերով այսպիսին է Արևելյան Հայաստանում մասնավոր կալվածատիրական սեփականության և ճորտատիրական գոյության հարցի ուսումնասիրության վիճակը սովետահայ պատմագրության մեջ առ այսօր։

* * *

Պարսկական տիրապետության վերջին ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում տիրապետող հասարակական-տնտեսական ֆորմացիան շարունակում էր մնալ ֆեոդալիզմը՝ արևելյան տիպի ավատատիրությանը վերը նշված բնորոշ գծերով։ Օտարերկրյա նվաճողները բերել էին իրենց զարգացման աստիճանին հատուկ արտադրահարաբերություններ։ Դրանք մասամբ խառնվելով ու միահյուսվելով նվաճյալ երկրի հասարակական-տնտեսական կյանքի զարգացման աստիճանին հատուկ արտադրական հարաբերությունների հետ՝ կեցության բավական բարդ ու յուրատեսակ վիճակ էին ստեղծել։ Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում «վաչկատուն նվաճողների հետամընաց հասարակական կառուցվածքների տեղական երկրագործական հասարակական կառուցվածքի հետ վերանորոգվող սինթեզի հետևանքով կոնսերվացվում և վերածնվում էին կախման նախնական ձևեր»[67]։

Միջնադարից նոր դարաշրջանի սեմը կոխած հետամնաց Պարսկաստանին, ինչպես և հարևան մյուս արևելյան բռնապետություններին, և առհասարակ ամբողջ մահմեդական աշխարհին, համաձայն իսլամի ուսմունքի, բնորոշ էր հողի մասնավոր սեփականության բացակայությունը։ Եվ դա զարմանալի չէ ոչ միայն այն պատճառով, որ իսլամը, որպես ծնունդ և արգասիք անապատի անհորիզոն տարածություններում թափառող մի ժողովրդի հովվական մտքի, մերժում էր հողի մասնավոր սեփականության ինստիտուտը։

Բնական է, որ այդ երկրներում, որտեղ ամենաբարձրաստիճան իսկ հպատակի պաշտոնն ու դիրքը, հարստությունն ու կյանքը գահակալի մեն մի խոսքով կարող էին հօդս ցնդել, ուր միակ ժառանգական պաշտոնը իր՝ շահի պաշտոնն էր, որտեղ ամեն մի նորընծա պաշտոնյա իր տիրապետությանը կամ կառավարությանը հանձնված երկրամասում լիիրավ իշխանություն և լիազորություն ուներ զրկելու ստորադասներին ամեն ինչից՝ և՛ պաշտոնից, և՛ հարստությունից, և՛ կյանքից, հողի մասնավոր ժառանգական սեփականություն գոյություն չունենար։

Եկվոր աշխարհակալները չէին կարող, անկասկած, ամբողջովին արմատախիլ անել արդեն նվաճված երկրում մինչ այդ տիրապետած հասարակական-տնտեսական հարաբերությունները։ Հիմնականում բնաջինջ անելով տեղական իշխող դասը, նրանք, այնուամենայնիվ, գլխովին արմատախիլ չարեցին այն։ Նրանք թողեցին հատուկենտ բեկորներ՝ փոքր ինչ փշրանքներ բաժին հանելով, որպեսզի լրացուցիչ և այս կամ այն չափով կայուն հենարան ստեղծեն նորանվաճ երկիրը հնազանդ ու հպատակ պահելու համար։ Այս բոլորից էլ այն յուրահատուկ վիճակն ու ի-

---

[64] **Ս. Մարկոսյան**, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում (քննական ուրվագծեր), Երևան, 1959։

[65] Նույն տեղում, էջ 227։

[66] Նույն տեղում։

[67] **А. П. Новосельцев, В. Т. Пашуто, Л. В. Черепнин**, Пути развития феодализма (Закавказье, Средняя Азия, Русь, Прибалтика), М., 1972, стр. 7.

բադրությունը Արևելյան Հայաստանի հասարակական-տնտեսական կարգում, որը և մասամբ շփոթություն է առաջացրել ու տարակարծությունների տեղիք տվել։

Ինչպես արդեն հիշատակվեց վերևում, Արևելքի բռնապետություններին հատուկ է եղել հողի պետական սեփականության ինստիտուտը։ Այդ կապակցությամբ հատկանշական են Կ. Մարքսի խոսքերը. «Բեռնյեն միանգամայն ճիշտ է նկատել, որ Արևելքի (նա նկատի ունի Թուրքիան, Պարսկաստանը, Հնդկաստանը) բոլոր երևույթների հիմքը կազմում է հողի մասնավոր սեփականության բացակայությունը։ Ահա նույնիսկ արևելյան երկնքի բանալին»[68]։ Այդ նույն հարցի առնչությամբ Ֆ. Էնգելսը հետևյալ միտքն է արտահայտել. «Հողային սեփականության բացակայությունն իսկապես ամբողջ Արևելքը հասկանալու բանալին է։ Այդ է կրոնական և քաղաքական պատմության հիմքը»[69]։ Այսպիսով, մարքսիզմի դասականները Արևելքը և Արևելքի պատմության զարգացման օրինաչափությունները ըմբռնելու հարցում առաջնությունը տալիս էին հողային մասնավոր սեփականության բացակայությանը, այդ երևույթը համարում էին Արևելքի օրինաչափություններն ու առանձնահատկությունները բացատրող բանալի։

Հետագայում ևս Կ. Մարքսը անդրադարձել է Արևելքում հողային սեփականության բացակայության հարցին և «Կապիտալում» ավելի է մասնավորել և ճշտել իր տեսակետը, գրելով, որ «պետությունն այստեղ գերագույն հողատերն է։ Գերիշխանությունն այստեղ ազգային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականությունն է։ Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականություն չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրում և օգտագործում»[70]։ Այստեղից պարզ է, որ բոլոր այն երևույթները, որոնք կապված են եղել ինչպես մասնավոր տիրման, այնպես էլ մասնավոր օգտագործման հետ, բայց չեն խախտել հողի պետական սեփականության հիմնական սկզբունքը, չպետք է թյուրիմացության մեջ գցեն տվյալ հարցով զբաղվող մասնագետներին։ Այստեղ հարցը խիստ պարզ է։ Գաղտնիք չէ, որ Արևելյան Հայաստանում համայնքի անդամները՝ համայնիկները կարող էին օտարել իրենց «հայրենին», այսինքն ժառանգաբար իրենց անցնող, բայց տվյալ համայնքին պատկանող հողերը։ Սակայն այնքանով, որքանով այդ երևույթը լայն տարածում չուներ և չէր

[68] **Կ. Մարքս** և **Ֆ. Էնգելս**, Նամակներ «Կապիտալի» մասին, Երևան, 1954, էջ 52։

[69] Նույն տեղում։

[70] **Կ. Մարքս**, Կապիտալ, հ. 3, մաս 2, Երևան, 1949, էջ 328։

պատանում պետության շահերին ու հողի՝ պետությանը պատկանելու սկզբունքին, ապա այդ երևույթի վրա պետությունը անտարբերությամբ էր նայում, որովհետև հողի այդ մասնավոր տիրումը դեռևս մասնավոր հողային սեփականություն չէր։ Հարցի ամբողջ էությունն այն է, որ Արևելյան Հայաստանում հողերի ճնշող մեծամասնությունը համակենտրոնացված է եղել պետության ձեռքին, և դրանք տնօրինել է պետությունն ինքը։

Եվ իսկապես, կան բազմաթիվ տվյալներ, որոնք գալիս են հաստատելու Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի արտահայտած վերոհիշյալ դրույթը։ Որպես օրինակ կարելի է վերցնել Երևանի խանությունը, որի վերաբերյալ վիճակագրական մանրամասն տեղեկություններ է մեզ հաղորդում Ի. Շոպենը։ Այսպես, Երևանի խանության տասնչորս մահալներում արքունական, այսինքն պետական գյուղերը կազմել են գյուղերի ամբողջ թվաքանակի 70 տոկոսը, մինչդեռ արքունական-մուլքադարական գյուղերը կազմել են 3 տոկոսը, մուլքադարականը՝ 16 տոկոսը, թիուլայինը՝ 10 տոկոսը, վանքապատկանը՝ 1 տոկոսը[71]։

Սույն թվերը գալիս են անվերապահորեն վկայելու, որ հողային սեփականության ամենատարածված ձևը եղել է պետական հողատիրությունը, եթե մի պահ ընդունելու իսկ լինենք, որ մուլքադարությունը եղել է հողատիրության ձև և ոչ թե հարկ-ռենտայից օգտվելու, ավելի ճիշտ, հարկ-ռենտային բաժնեկից լինելու իրավունք։

Հոդվածս այս վերջին տեսակետի է խոսում նաև հողատիրության ձևերի խիստ անհամաչափ տեղաբաշխումը։ Արևելյան Հայաստանում կային մահալներ, որտեղ ամենևին «մասնավոր-սեփականատիրական» գյուղեր գոյություն չունեին, մինչդեռ առանձին, երբեմն ոչ մեծ գյուղերում հանդես էին գալիս մեկից ավելի մուլքադարներ։

Այնուհետև, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ցարական կառավարությունը, իր դիրքերը նվաճված երկրամասում ամրապնդելու հետամտումով, վճռեց դասակարգային ուժեղ հենարան ստեղծել՝ նախկին մուսուլմանական խաներին, բեկերին ու աղալարներին, մասամբ նաև հայ տիրող դասակարգերի ներկայացուցիչներին օժտելով ճորտատիրական իրավունքներով։ Կառավարության նման նպատակադրման դեմ հայ և մահմեդական գյուղացիները զանգվածային բողոքի ձայն բարձրացրին, համարելով այդ երևույթը հակաօրինական,

[71] Տրվում է ըստ Խ. Հ. Ավդալբեգյանի հաշվումների։ Տե՛ս **Խ. Հ. Ավդալբեգյան**, նշվ. աշխատ., էջ 37։

իրենց ավանդական իրավունքները ոտնահարող և նախորդ ժամանակաշրջանի հետ ոչինչ ընդհանուր բան չունեցող։

Հետաքրքիր է, որ 19-րդ դարի 30-ական թվականներին Լազարյանները դիմեցին ռուսական կառավարությանը, բողոքելով գեներալ Վալերիան Մադաթովի վարքագծի դեմ, որը ցանկանում էր ռուսական ձեռով ճորտացնել Ղարաբաղի 10 գյուղերի և երկու քոչավայրերի 1245 տուն կազմող հայ և մահմեդական գյուղացիներին։ Նրանք մատնանշում էին, որ «պարսկական միապետության բոլոր նահանգների ամենահասարակ դասին պատկանող հայազգի ժողովուրդը չի պատկանում այն շինականների թվին, ովքեր կազմում են ազնվական դասին պատկանող ճորտեր. դրա ապացույցը կարող են հանդիսանալ Պարսկաստանի հետ վերջին հաշտությունից հետո տեղի ունեցած իրադարձությունները, որոնք Արաքսի այս ափը բերեցին մի քանի տասնյակ հազար ընտանիքներ, սեփական ցանկությամբ, չխոսած դրանից առաջ դուրս ելածների մասին»[72]։ Այնուհետև, անդրադառնալով Ղարաբաղի ժողովրդի կացությանը, նրանք շարունակում էին. «Ղարաբաղի մարզում ինչպես հայ, այնպես էլ մուսուլմանական ժողովուրդը առավել ևս ազատ էին ճորտությունից. հայերը իբրև տեղաբնիկներ դեռ այն ժամանակներից, երբ կազմում էին իրենց հատուկ Հայկական թագավորությունը, իսկ մյուսները իբրև պարսկական հեռավոր պրովինցիաներից քոչած-եկածներ, և երկու ազգերն էլ մնում էին իրենց պապենական ազատությամբ...»[73]։

Ինչպես հայտնի է, գեներալ Մադաթովը այդ գյուղերը, բնակչությամբ հանդերձ, ստացել էր Մեհթի Ղուլի խանից, որի տված խանական թալոան (հրովարտակը—Վ. Դ.) 1821 թվականի ապրիլի 23-ին արժանացել էր Բարձրագույն հաստատման[74]։

Վ. Անդրեևը, որ ծառայել էր Կովկասում, Մադաթովի՝ կալվածներ ստանալու հարցում մեղադրում էր գեներալ Ա. Պ. Երմոլովին։ Բանն այն է, որ, ըստ Անդրեևի, խաները և մելիքները պաշտոնյաներ էին, հետևաբար և կալվածատիրական իրավունքի մասին խոսք լինել չէր կարող[75]։ Այնքանով, որքանով գեներալ Մադաթովի մահից հետո նրա ձեռք բերած կալվածները պետք է բաժանվեին նրա ժառանգների միջև, որոնք իրենց հերթին պատրաստվում էին վաճառել գյուղացիներին իբրև ճոր-

[72] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 111, գործ 36, վավ. 80։

[73] Նույն տեղում։

[74] Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 2, 1821 г., д. 986, лл. 2—3.

[75] Տե՛ս В. Андреев, Ермолов и Паскевич, («Кавказский сборник», т. I, стр. 205—206)։

տնքի, Լազարյանները միջնորդում էին, որպեսզի այդ գործարքը կանխվի։

Հետաքրքիր է այն եզրակացությունը, որ արվում է այս արտակարգ պերճախոս վավերագրում. «Ղարաբաղի ժողովրդի համար պատահաբար ստացված այս դառն օրինակը հանգեցնում է այն բանին, որ ամբողջ Ղարաբաղում ժողովուրդը դարձել է մի քանի անձանց ճորտական սեփականությունը, որոնք գեներալ-լեյտենանտ Մադաթովի նման խանական թալոաներ ունեն։ Բայց այս ժողովուրդը զրկվելով իր առավելություններից անդրանիկից՝ ազատության իր պապենական իրավունքից, վաղ թե ուշ, երբ կլցվի նրա համբերության և հոգեկան վշտի բաժակը, չի հապաղի դեն նետելու իր վրա դրված ստրկությունը, եթե այն չվերացվի բարձրագույն իշխանության կողմից և նրան չվերադարձվեն այս խնդրում նրա բուն իրավունքները, որոնցով այս ազգությունը (հայերը—Վ. Դ.) օգտվում է բոլոր պետություններում»[76]։

Հարկ է նշել նաև, որ Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղթավայրերում 18-րդ դարի երկրորդ կեսին մշակված հայ-ռուսական դաշնակցային ծրագրերում ընդգծվում էր, որ հայ գյուղացիությունը երբևէ ճորտային կացության մեջ չի գտնվել և ճորտությունը որպես ինստիտուտ Հայաստանում գոյություն չի ունեցել։ Մեջ ենք բերում այդ կարևոր հոդվածը. «Ժե (ի նորոգել իշխանութեան մերոյ մի լինիցին ծառայք իշխանաց (ստրուկք) որք կարիցեն զմի մի վաճառել ի նոցանէ, այլ լինիցին այնպէս որպէս յառաջ եղեալ են ի ժամանակս թագաւորաց մերոց և օսմանցւոց և Պարսից, որ թագաւորին միայն են ծառայք, և երբ թագաւորն կամիցի ուրուք իշխանի շնորհ ինչ առնել զգիւղ ինչ, բնակչաւն շնորհեսցէ նմա, բայց շնորհընկալ իշխանն կարող է զգիւղն ընդ բնակչաց ի միասին ծախել, և ոչ թե բնակիչսն, այլ գիւղն ընդ մլոյն այսինքն ընդ հողոյն և ջրոյն, զոր գործեն մարդիկք։ Յոյնք յորժամ տիրեցին մեզ զկնի անկման թագաւորութեան Արշակունեաց՝ կամեցան զմեզ սեփական ծառայ իշխանաց իւրեանց առնել. ուստի ազգ մեր ոչ հաճեցան առ նոսա, այլ մտին ընդ իշխանութեամբ Բաղդատու խալֆային զի ազատ մնասցեն»[77] (ընդգծումները մերն են—Վ. Դ.)։ Այս միտքը, ավելի համառոտ և այլ բառերով ընդգծված է նաև ծրագրի մյուս տարբերակում, որի նույն ժե-րդ հոդվածը հռչակում է. «Տունն հայոց կառավարեսցէ զազգ իւր և զաշխարհն ըստ օրինի հայոց և զոր

[76] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 111, գործ 36, վավ. 80։

[77] Դիվան հայոց պատմության, Դ հատոր, էջ 733—734։

ինչ աւելին յայտնանէ դիպուած և կառավարեսցին ի հաստատութեան նոյնոյ օրինաց»[78]։

Այս հոդվածները ցույց են տալիս, որ նրանց հեղինակները, մտահոգված այն բանով, որ Ռուսաստանի օգնությամբ ազատագրումը կարող է թերևս իր հետ բերել նաև ճորտային կացություն, ուզում են նախօրոք դրա առջև առնել, դաշնակցային ծրագրում ներմուծելով այդ ապահովագրիչ հոդվածները։ Ոչ մի կասկած չի կարող լինել, որ հեղինակները ելնում էին իրերի իրական վիճակից, երբ շարադրում էին այդ հոդվածները, և ոչ թե սեփական ցանկությունից, մանավանդ որ պարզորոշ նշում են, թե «ստրուկք», այսինքն ճորտեր Հայաստանում չեն եղել։

Այդ նույն հարցը ծառացավ հայ ազգային-ազատագրական գործիչների առաջ նաև այն օրերին, երբ Արևելյան Հայաստանը միակցվում էր Ռուսաստանին։ Ռուսական արխիվներում պահպանված է «Մի շարք առաջարկներ Վրաստանի և սահմանակից մարզերի մասին» խորագիրը կրող վավերագիրը, որը ներկայացվեց ռուսական կառավարությանը և կազմվել էր Լազարյանների ձեռքով։ Թվարկելով բոլոր այն վնասները և ավերումները, որ պատճառել էր ճորտատիրությունը Վրաստանին, վավերագրի հեղինակները եզրակացնում էին, որ «շատ անկարգություններ և չարիք է տեղի ունենում, անհրաժեշտ է սահմանափակել կամ վերացնել ճորտատիրական իրավունքը Վրաստանում, կամ ծայրահեղ դեպքում սահմանել, որպեսզի ոչ ոք չկարողանա առանձին-առանձին վաճառել ընտանիքի անդամներին, որոնք ամրակցված են հողին և ոչ թե անձին, և որպեսզի բոլորովին արգելվի մարդկանց վաճառել, դուրս տանել կամ վերաբնակեցնել այլ նահանգներ և ուրիշ տեղեր»[79]։ Եթե Լազարյանները ուզում էին ճորտատիրական Վրաստանում վերացած տեսնել ճորտատիրությունը, ապա առավել քան պարզ կլինի, թե ինչո՞ւ էին նրանք մեծ կրքոտությամբ պայքարում Հայաստանում գյուղացիներին ճորտացնելու փորձերի դեմ, փորձեր, որոնք արդեն բավականաչափ հաջողվում էին։

Արևելյան Հայաստանում ճորտատիրական իրավունքի բացակայության հարցի կապակցությամբ պահպանվել է մի շատ ուշագրավ վկայություն ևս։ 1809 թ. մարտի 19-ի և 27-ի գրություններով Էջմիածնի Բարձրագույն խորհրդարանին են դիմում մեր պատմության մեջ հայտնի Գաբրիել հարյուրապետ Գեղամյանը և նրա որդի Բարսեղ հարյուրապետ Գեղամյանը։ Հիշյալ գրություններով նրանք խնդրում էին Բարձրագույն խորհրդարանին, որպեսզի վերջինս ռուսական կառավարիչ սենատին ինչպես իրենց իշխանական ծագումը, այնպես էլ ճորտատերեր լինելու հանգամանքը հավաստող գրություն ուղարկի։ Այդ ժամանակ դիմողները արտագաղթել էին և գտնվում էին ռուսական սահմաններում։ Նրանց հետ գաղթած ժողովուրդը, տեղավորվելով Վրաստանում և Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններում, հրաժարվում էր նրանց հանդեպ իր նախկին պարտավորությունները կատարելուց՝ մուլք վճարելուց, պատճառաբանելով, որ նրանք մուլք վճարել են այն բանի համար, որ Գեղամյանները հայրենիքում գտնված ժամանակ կառավարել են իրենց, իսկ այժմ չեն կառավարում։ Դրա հետևանքով Գեղամյանները գտնվում էին նյութական ծանր կացության մեջ և այս ու այն կողմ էին դիմում, որպեսզի կարողանան փրկության ելք գտնել։

Հաստատելով և հավաստելով այն բոլոր արտոնությունները, որ ունեին Գեղամյանները խանական Երևանում, Էջմիածնի Բարձրագույն խորհրդարանը սակայն հրաժարվում էր հաստատել նրանց ճորտատերեր լինելու հանգամանքը։ Բարձրագույն խորհրդարանի պատասխան գրության մեջ նշվում էր միաժամանակ. «Զի ի սկզբանէ թագաւորութեան հայոց մինչև ցայսօր ժամանակի ստրուկ անուն որ է ճորտ անունն և կամ այլ ստրկական հանգամանք՝ չէ եղեալ ի վերայ ազգի հայոց՝ և ոչ գոյ արդէն, նաև ոչ ի Պարսկաստան և ի Յունաստան (իմա՝ Թուրքիա—Վ. Դ.) և յամենայն Եւրոպիայ. բայց միայն ի սահմանս Վրացոտանու՝ որոյ աղագաւ ևս երկարելն այժմիկ չունի աստէն հարկաւորութիւն։ Իսկ ում եղեալ է կալուածք և հայրենի ժառանգութիւն գաւառ կամ գիւղ, բնակիչք այնոցիկ ոչ միայն սոսկականք, այլև իշխանազունք և ազնուազունք, որք վասն ողբալի աւերութեանց ընդհանուր աշխարհին հայոց մեկնեալք ի հայրենեաց իւրեանց՝ կալեալ են զբնակութիւն ի հայրենիս այլոց՝ հաւասարապէս հպատակեալ են տեարց բնակութեան իւրեանց, մինչև հատուցեալ են նոցա զհարկս, սակայն ոչ որպէս ստրուկք այլ ըստ որում բնակիչք հայրենեաց նոցին ազատական իմն կերպիւ հպատակութեամբ»[80]։

Այսպիսով, Էջմիածնի Բարձրագույն խորհրդարանը կտրականապես մերժում էր ճորտատիրության առկայությունը Հայաստանում ընդհանրապես, իսկ ժամանակագրական առումով ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում։ Ճորտատիրությունը բացակայել է նաև հայկական գաղթավայրերում, թեև երբեմն այնտեղ օթևան են գտել ամբողջական գյու-

---

[78] Նույն տեղում, էջ 736։

[79] Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 256։

[80] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 21, վավ. 135 ե։

ղեր, գավառներ, բոլոր դասակարգերով հանդերձ։ Ճորտատիրական իրավունք եղել է Վրաստանում, այն էլ հասկանալի պատճառներով, այսինքն ճորտատիրական կարգերի առկայությամբ է եղել պայմանավորված, թեև մեծ մասշտաբներ չի ընդունել։

Ճորտատիրական իրավունքի բացակայությունը Հայաստանում Բարձրագույն խորհրդարանի անդամները հետևյալ կերպ էին բացատրում. «Քանզի նախնի թագաւորք Հայոց որք կարգ կացութեան տնօրինեցին ազգի Հայոց, սահմանեցին զնախարարութիւն, զազգապետութիւն, զգաւառապետութիւն, զազատորդիութիւն և յայլս. բայց ոչ զստրկապետութիւն (իմա՝ ճորտատիրություն—Վ. Դ.) և այնմ օրէ մինչև ցայսօր ժամանակի յամենայն սահմանս Հայաստանի ոչ ուրեք զտեղի կալաւ ստրկապետութիւն, և ոչ ոք ի նախարարութեանց կամ յազատորդաց անտի ճոխացաւ ստրկապետութեամբ»[81]։ Նրանց կարծիքով Հայաստանում հնուց ի վեր սահմանված կարգը չի խախտվել և եկվոր բռնակալները այդ հարցում ոչ մի փոփոխություն չեն մտցրել։ Գեղամյանները Երևանի Հյուսեին-Ալի խանի և նրան հաջորդած նրա որդիների կողմից ճանաչվել են որպես սոսկական գավառապետներ։ Հետևաբար նրանց ստացած մուլքը եղել է հարկ-ռենտայի այն բաժինը, որ տրվում էր կատարվող ծառայության դիմաց, մինչ բահրան գնացել է պետությանը։

Մերժելով Գեղամյանների խնդրանքը, Բարձրագույն խորհրդարանի անդամները գրում էին. «Մենք այսպես գիտենք և ըստ այսմ կարեմք տալ վասն ձեր և վասն ժողովրդեան ձերոց զվկայութիւն» և այն էլ այն դեպքում «յորժամ հարցանիցեն զմենջ յուստեքէ»[82]։

Սա մի եզակի և խիստ հետաքրքիր վկայություն է, տրված ժամանակակիցների կողմից, որոնք ամենայն կտրականությամբ և հաստատակամությամբ մերժում են Հայաստանի որևէ մասում ճորտատիրական իրավունքի առկայության ամեն մի գաղափար։ Հատկանշական է, որ Վրաստանի գլխավոր կառավարիչ կոմս Գուդովիչը նույնպես մերժում է ճորտատիրական իրավունքով նախկինում նրանց ենթակա բնակչությանը տիրելու խնդրանքը[83]։

Արևելյան Հայաստանում գյուղացիներն ազատ են եղել անձնական կախումից և այդ կապակցությամբ արխիվային վավերագրերում չի պահպանվել և ոչ մի հիշատակություն, որը հակառակն ապացուցեր։ Արևելյան Հայաստանում կալվածատիրական խոշոր տնտեսություններից

[81] Նույն տեղում։

[82] Նույն տեղում։

[83] АКАК, т. III, док. № 469.

մեկը համարվող Էջմիածնի վանական տնտեսության կազմակերպման և վարելու եղանակը, որի մասին խոսք կլինի ստորև, նույնպես գալիս է վկայելու, որ հիրավի ճորտատիրական իրավունքը խորթ է եղել հայկական իրականությանը՝ ինչպես բնաշխարհում, այնպես էլ գաղթավայրերում։ Այդ փաստի վկայություններից մեկը կարող է լինել 1805 թվականին վերաբերող այն գրությունը, որ ուղղել է գեներալ Ցիցիանովը Վրաստանի հայոց թեմական առաջնորդ Հովհաննես Գեղարդակրին։ Հաղորդելով, որ զանազան խոստումներով Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը հորդորել է Ղարաբաղից Վրաստան արտագաղթած խաչենցի հայերին իրենց համար մելիք ընտրել արքեպիսկոպոսի եղբորը՝ Ալավերդուն, բայց խոստումները չի կատարել, իսկ Ալավերդին էլ նրանց ճորտացնելու ձգտում է երևան բերում, ասում է, որ խաչենցիները բողոքում են Ալավերդու նման ձգտման դեմ և հայտարարում են, որ «մելիքներն նոցա տիրապետող չեն, այլ մելիք են ընտրությամբ»[84]։

Սրանք փաստեր են, որոնց հետ հաշվի պետք է նստել ագրարային հարաբերությունների պատմությունն ուսումնասիրելիս։

19-րդ դարի առաջին քառորդում Արևելյան Հայաստանում գոյություն ունեին հողային հարաբերությունների հետևյալ ձևերը՝ խանական կամ պետական, մուլքադարական և թիուլդարական։ Հողատիրության ամենատարածված ձևը պետականն էր, այնուհետև գալիս էին մուլքադարությունը և թիուլդարությունը։

Պետական էին համարվում խանությունների այն բոլոր գյուղերը իրենց հողատարածություններով, որոնք շահի կողմից տրամադրվում էին խաներին։ Պետական գյուղերից ստացվող հարկ-ռենտան ամբողջովին մտնում էր սարդարի գանձարանը և ծառայում էր ինչպես խանական արքունիքի, այնպես էլ ռազմական ու պետական այլ ծախսեր հոգալու համար։ Պետական գյուղերը, ինչպես արդեն նշվել է, կազմում էին գյուղերի ամբողջ թվաքանակի 70 տոկոսը։ Այդ գյուղերից մի որոշ մասի գյուղացիները պարտավորություն ունեին խնամել արքունական այգիները և այլն, սակայն, աղբյուրներում չի հիշատակվում. դա կատարվում էր որպես կո՞ռ, թե՞ վարձատրվում էր։ Պետական սեփականություն էին հանդիսանում նաև մի շարք ջրաղացներ, ջրանցքներ, իջևանատներ, շուկաներ՝ իրենց խանութներով ու կրպակներով և այլն։

Հողատիրության մյուս ձևը մուլքադարությունն էր։ Արևելյան Հայաստանի գյուղերի թվաքանակի 16 տոկոսը հանդիսանում էր մուլքա-

[84] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 16, վավ. 41, նաև ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ցուց. 1, գործ 2։

դարական, իսկ 3 տոկոսը՝ պետական-մուլքադարական։ Մուլքադարական գյուղերն էլ, պետական գյուղերի նման, բաժանվում էին երեք կարգի՝ բահրաքյարական, յարիքյարական և ռանչպարական։ Մուլքադարական կամ պետական-մուլքադարական գյուղեր կային տասը մահալներում, ընդ որում Կրխբուլաղի մահալում ընդամենը երկու գյուղ, որոնցից Ելղովանը պետական-մուլքադարական էր, իսկ Զագը՝ մուլքադարական։ Սեիդլի-Ախսախլի մահալում նույնպես երկու գյուղեր՝ Սերգեուլը և Ոշին էին մուլքադարական։ Մուլքադարությունը համեմատաբար տարածված էր Սուրմալուի մահալում, որտեղ 58 շեն գյուղերից 20-ը մուլքադարական էին։ Շարուրում մուլքադարական էին 8 շեն գյուղերից 7-ը, Գառնիբասարում՝ 47 շեն գյուղերից 25-ը, Զանգիբասարում՝ 25 շեն գյուղերից 17-ը։ Հետաքրքիր է ի նկատի ունենալ նաև, որ մուլքադարական գյուղերը մեծ թիվ էին կազմում այն մահալներում և գյուղերում, որտեղ ազգաբնակչությունը հիմնականում մահմեդական էր։

Հողատիրության մուլքադարական ձևի էությունը հետևյալն էր. մուլքադարները կալվածատերեր չէին և չէին հանդիսանում հողի սեփականատերը։ Ժամանակակիցներից Շոպենը գրում էր, որ Արևելյան Հայաստանում «տիրակալի օգտագործման տակ գտնվող հողն ամբողջությամբ, ամենուր և առանց բացառության պատկանում էր միայն շահին, այսինքն գանձարանին»[85]։ Այդ նույն միտքը հաստատում է նաև Գասպար Դրուվիլը[86]։ Կարելի է բազմաթիվ ուրիշ վկայություններ էլ բերել, որոնք հավաստում են Շոպենի իրավացիությունը։ Մուլքադարները պարզապես իրավունք ունեին տվյալ գյուղից ստանալ հարկ-ռենտայի այն մասը, որ կոչվում էր մուլք և կազմում էր բերքի 1/10-ը կամ 7/30-ը, այսինքն նրանք բաժնեկից էին հարկ-ռենտային։ Հարկ-ռենտայի իրենց հասանելիք մասը մուլքադարները ոչ թե անձամբ էին գանձում, այլ ստանում էին պետական հարկահավաքների միջոցով։ Մուլքադարական իրավունքը փոխանցվում էր ժառանգաբար, ի տարբերություն թիուլայինի։ Եթե թիուլային իրավունքից օգտվելու համար պահանջվում էր շահական ռազմ կամ խանական թալգա, ապա մուլքադարական իրավունքի հաստատման համար բավական էր ունենալ ժառանգման, առ ու վաճառքի, նվիրաբերման ու փոխանակման և նման գործարքները վկայող փաստաթղթեր։ Մուլքը կարող էր տրոհվել տարբեր մասերի՝

[85] И. Шопен, նշվ. աշխատ., էջ 925։

[86] Gaspard Drouville, Voyago en Perse, pendant les annee 1812 et 1813, t. premier, St. Petersbourg, 1819.

սկսած 1/4 դանգից (մասից) մինչև 6 դանգ։ Դա հնարավորություն էր տալիս այն բաժանել ժառանգորդների կամ գնորդների միջև։

Պատահում էին դեպքեր, երբ մուլքադարները մուլքադարական գյուղից իրենց հասանելիք հարկ-ռենտայի այն մասի գանձումը, որ կոչվում էր մուլք, կապալով էին տալիս։ Այսպես, կապալով էին տրվում Զանգիբասարի մահալի Աղջաղշլաղ և Դամիրչի-շոլլի գյուղերի, Սարդարապատի մահալի Կարխուն գյուղի, Շարուրի Աքսիքենդ, Լաուշան և Կորտիլի գյուղերի, Սուրմալուի, Զուլֆաքար, Ամարաթ գյուղերի մուլքերը[87]։

Որոշ մուլքադարական գյուղեր, որտեղ բնակություն էին հաստատել քոչվոր ցեղախմբեր, որպես հարկ վճարում էին բերքի 7/30 մասը[88], ինչպես Սաաթլուի մահալի 7 գյուղերը, Գառնիբասարի մահալի Մեհրաբլի, Զոհրաբլի, Շաֆիաբադ և Կիր-բուզավանդ գյուղերը։

Մուլքադարներից շատերը ունեին իրենց սեփական տնտեսությունը՝ այգիներ, վարելահողեր և այլն, որոնք մշակում էին անձամբ կամ վարձու աշխատանքի միջոցով։ Միևնույն գյուղում կարող էին լինել մի քանի մուլքադարներ։ Այդ դեպքում մուլքը բաժանվում էր նրանց միջև։ Որպես մի որևէ գյուղի մուլքի ամբողջություն վերցվում էր 6 դանգը։ Մի գյուղում մի քանի մուլքադարների առկայության դեպքում 6 դանգ մուլքը բաժանվում էր նրանց միջև, բայց ոչ՝հավասարաչափ։ Օրինակ, մի մուլքադարի կարող էր պատկանել չորս դանգ մուլքը, մյուսին՝ երկուսը և այլն։

Գյուղացիների հարաբերությունները մուլքադարների հետ իրենց մեջ անձնական կախման մոմենտ չէին ընդգրկում։ Գյուղացին ազատ կերպով կարող էր փոխել բնակության վայրը, և մուլքադարը ոչնչով չէր կարող արգելք հանդիսանալ։ Որ այդ այդպես էր, վկայում են բնակչության այն մեծ տեղաշարժերը, որոնք գոյություն ունեին ամբողջ 19-րդ դարասկզբին։

Հողատիրության մյուս ձևը թիուլդարական համակարգն էր։ Թիուլները (պարգևական հողերը—Վ. Դ.) շնորհվում էին առանձին անհատների նրանց ծառայությունների դիմաց՝հարկ-ռենտայից ցմահ օգտվելու իրավունքով։ Թիուլը չէր թույլատրվում ոչ գրավ դնել և ոչ էլ վաճառել, մինչդեռ մուլքի վաճառքը ազատ կերպով թույլատրվում էր։ Թիուլային գյուղերը հազվադեպ էին ժառանգական ավատներ դառնում, այն էլ ամենից հաճախ այն դեպքերում, երբ գտնվում էին տեղաբնակ հայ

[87] И. Шопен, Ук. соч., стр. 995 и посл.

[88] ЦГИА СССР, ф. 1377, оп. 1, д. 19, л. 12 об.

ազնվականության ձեռքերում։ Թիուլային գյուղերը կազմում էին գյուղերի ընդհանուր քանակի տասը տոկոսը։

Թիուլային գյուղերը հիմնականում գտնվում էին Կրխբուլաղի, Կարբիբասարի, Սուրմալուի և Գառնիբասարի մահալներում։

Հայ ազնվականներից թիուլային գյուղեր ունեին Մելիք-Աղամալյանները։ 19-րդ դարի քսանական թվականներին մելիք Աբրահամ Մելիք-Աղամալյանի որդի մելիք Սահակը թիուլային իրավունքով, որը ժառանգաբար շնորհվում էր այդ տոհմին, տիրում էր Կրխբուլաղի մահալի Առինջ, Էլառ, Արզաքյան, Դալուլար, Գյումուշ, Բեգկիս գյուղերին։ Այդ գյուղերից միայն Էլառի կեսն էր նույն թիուլային տիրապետման իրավունքով պատկանում Աղա-Բաբա սուլթանին։ Հետևաբար, լինում էին դեպքեր, երբ մի գյուղից ստացվող հարկ-ռենտան կարող էր կիսվել երկու թիուլդարի միջև։

Եթե մուլքադարները ստանում էին հարկ-ռենտայի 1/10 մասը, ապա որպես թիուլ տրվող գյուղերը հանվում էին ընդհանուր հարկացուցակից և հարկ-ռենտան ամբողջությամբ անցնում էր թիուլի տիրոջը։ Հետևաբար թիուլդարությունը մուլքադարությունից տարբերվում էր ոչ միայն իր ժամանակավոր բնույթով, այլև ստացվող հարկաչափի քանակով։

Ընդհանուր գծերով այսպիսին էր հողատիրության պատկերը Արևելյան Հայաստանում ուսումնասիրության ենթակա ժամանակահատվածում։ Բերված փաստերը ցույց են տալիս, որ այն ուներ յուր առանձնահատկությունները, և չի կարելի դրանք անտեսել։ Ամենակարևոր առանձնահատկությունն այն էր, որ գյուղացիական զանգվածը ճորտացված չէր, չկար տերունական տնտեսություն, հետևաբար և անհրաժեշտություն՝ ունենալու ճորտեր և հարկադրելու նրանց աշխատելու տերունական հողերի վրա, որովհետև դրանք իրենց մեծությամբ չէին գերազանցում գյուղացիական խոշոր տնտեսություններին։ Հիշյալ առանձնահատկությունները ավելի ցայտուն երևում են Էջմիածնի վանական տնտեսության օրինակից, որի մասին մենք այստեղ հարկ չենք համարում խոսել, քանի որ դրան անդրադարձել ենք հատուկ հոդվածով[89]։

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության և գյուղական համայնքի վերաբերյալ տվյալները խիստ սուղ են արխիվային աղբյուր-

[89] Տե՛ս Վ. Դիլոյան, Էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դարի սկզբին, «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Երևան, 1971, էջ 153—180։

ներում։ Հիմնական նյութերը առնչվում են Էջմիածնի վանական տնտեսությանը, այնպես որ չեն կարող լիովին հատկանշական լինել ամբողջ երկրի համար։ Հարկ է նշել, որ առավել ընդարձակ տեղեկությունները պահպանված են Ի. Շոպենի հայտնի գրքում, որը և գլխավոր աղբյուր է ծառայել առանց բացառության բոլոր այն հեղինակների համար, ովքեր զբաղվել են 19-րդ դարակեսի Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի ուսումնասիրությամբ։ Մենք ևս չենք կարող խուսափել Ի. Շոպենին մեծապես օգտագործելու անհրաժեշտությունից։

Արտադրության հիմնական ճյուղը Արևելյան Հայաստանում գյուղատնտեսությունն էր։ Ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակչության ճնշող մեծամասնությունը, եթե չասենք ամբողջությունը, զբաղվում էր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ։

Գյուղատնտեսության զարգացումն արգելակում էին հետամնաց ֆեոդալական հարաբերությունները, աշխատանքի նախնական գործիքները, հողի մշակման վաղեմի եղանակը, երկրի քաղաքական կացությունը։ 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ մի շարք զանգվածային արտագաղթերի ու բռնի գաղթեցումների հետևանքով երկրի բնակչության զգալի մասը լքեց հայրենի բնակավայրերը, բազմաթիվ շեն գյուղեր, այգիներ ու անդաստաններ ոչնչացան։ Բավական է նշել, որ միայն Երևանի խանության 1111 գյուղերից 359-ը ավերվել էին ու հիմնակործան եղել[90]։ Վաղարշապատում, որը համեմատաբար զերծ էր մնացել պատերազմական ավերներից, Էջմիածնի կաթողիկոսարանին պատկանող «երկոտասան այգիքն սակս անցեալ պատերազմիցն ի քանիցս ի զօրաց սմբակակոխ եղեալ, նոյնպէս և մեր խշմալի գիւղացւոցն 60 այգիք իսպառ աւերեալք են ահա քանի ամ է գնա աւերք են. ով գիտէ թէ երբ շինելոց է...»[91],— գրում էր Եփրեմ կաթողիկոսը 1814 թվականին։ 1817 թ. Ա. Պ. Երմոլովի դեսպանության կազմում Էջմիածին այցելած Մ. Կոցեբուն, խոսելով Վաղարշապատի մասին, գրում էր, որ այն վաղուց պետք է մի ծաղկյալ քաղաք լիներ, եթե Երևանի սարդարը ըստ իր կամեցողության չկողոպտեր Էջմիածնի վանքը և Վաղարշապատի բնակիչներին[92]։

Նույնը պետք է ասել Աշտարակի, Եղվարդի, Մաստարայի, Թալինի, Ջաֆարաբադի, Զարբախի և այլ համեմատաբար մեծ գյուղերի մա-

[90] Ի. Шопен, նշվ. աշխատ., էջ 485—486։

[91] Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. 23, վավ. 131։

[92] Voyage en Perse, a la suite l'ambassade russe, en 1817 par M. de Kotzebue. Paris, 1819, p. 38.

սին, թող որ բազմաթիվ ուրիշ մեծ ու փոքր գյուղեր գրեթե իսպառ ջնջվել էին երկրի երեսից։ «...Շրջապատի մեռյալ պատկերը ավելացնում էր մեր այն տպավորությունը, թե մենք մի ընդարձակ մարդաթափ արված ամայության մեջ ենք գտնվում։ Երկրի ամեն կողմը ցրված նախկին բազմամարդ բնակչության անբնակ հետքերը՝ համեմատելով ամեն տեղի ներկա բացարձակ ամայության հետ, ես զգում էի, թե սա իմ երբևէ անցած ամենամռայլ ճանապարհն էր։ Ռուսաստանի ամենավայրի տափաստաններն անգամ ոչինչ էին այս ամայության մոտ։ Այդ անապատները պիտի օգտագործվեն մարդու կողմից, բայց սրանք մարդաթափ են արված և բազմամարդ երկիրը վերածվել է անապատի։ Գրեթե իմ հենց նոր անցած ամբողջ այս ճանապարհը նման ցավալի պատկեր էր ներկայացնում, ամենուր սփռված էին վկայությունները, որ այստեղ երբեմն ապրում էր մի բարգավաճ ժողովուրդ, հիմա սրբված երկրի երեսից»[93],— գրում էր այդ ժամանակաշրջանում Հայաստան այցելած անգլիացի ճանապարհորդ Ռոբերտ Քեր Փորթերը։ Արևելյան Հայաստանի քաղաքական երերուն կացությունը հնարավորություն չէր ընձեռում ազգաբնակչությանը շունչ քաշելու և ձեռնարկելու քայքայված տնտեսության վերաշինությանը։

Հետաքրքիր է, որ բոլորովին այլ պատկեր էր նկարագրում 1805 թվականի մայիսին ռուսական գործող կորպուսի սպաներից մայոր Մատուշևիչը։ Գեներալ Ցիցիանովին հղած իր զեկուցագրում նա հետևյալ կերպ էր տալիս Արարատյան դաշտի պատկերը. «Զանգվի գետաբերանից Արաքսի ափն ընկած ընդարձակ հարթավայրը աննման է. ծածկված է հաճախակի հանդիպող գյուղերով, որոնք լավ են կառուցված։ Բերրի դաշտերը պարարտացված են և մասամբ ոռոգվում են ջրանցքներով. այնտեղ աճում են բրինձ, բամբակ և զանազան հացահատիկներ։ Ամեն մի բնակավայր ունի ամրոց և պտղատու այգիներ, դիմացը Արարատ լեռն է և նրա շարունակությունը արևմուտք...»[94]։ Սակայն հարկ է նշել, որ համեմատաբար ծաղկուն վիճակում գտնվում էր բացառապես Արարատյան դաշտը։

Հարկ է նշել, որ գյուղատնտեսության քայքայված վիճակը, աշխատող ձեռքերի պակասը մտահոգում էր խանական վարչությանը, որչափ նվազել էին պետական եկամուտները՝ բերքատվության անկման և ցան-

[93] Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, etc. etc. During the Years 1817, 1818, 1819 and 1820, by **Sir Robert Ker Porter**, vol. I, London, 1821, p. 179.

[94] ЦГВИА, ф. ВУА, д. 4259, ч. II, л. 96—96 об.

քատարածությունների կրճատման պատճառով։ Հատկապես ուշադրության առարկա էր Սարդարապատի մահալը, որը գրեթե անբնակ էր։ Այդ նկատառումներով էր, որ 1821 թվականին, պարսկա-օսմանյան պատերազմի ժամանակ, մեծ քանակությամբ հայեր Բայազետից ու Աշտարակից բռնի տեղահանվեցին և քշվեցին Երևանի խանություն՝ շենացնելու հիշյալ մահալը։ Նույնը պետք է ասել նաև Կարբիբասարի մահալի Եղվարդ գյուղի մասին, որը հռչակված էր իր լավորակ ցորենով։ Այդ գյուղի վերաբնակեցման համար Երևանի վերջին տարդարը մեծ ջանքեր թափեց, քանի որ նախկին բնակիչները 1804 թվականին տարադրվել էին։

Չնայած շահախնդրական նպատակներ հետապնդող նման ջանքերին, լայնատարած հողակտորներ մնում էին անմշակ։ Ոռոգման համակարգի անբավարարության հետևանքով մեծ քանակությամբ բերրի հողեր վերածվում էին անապատների։

Արևելյան Հայաստանի շրջաններից գյուղատնտեսական արտադրությունը համեմատաբար զարգացած էր Արարատյան դաշտում, որտեղ հնուց ի վեր մշակվում էին գյուղատնտեսական բազմաթիվ արժեքավոր կուլտուրաներ։

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերն էին հացահատիկային կուլտուրաների՝ ցորենի, գարու, կորեկի, մասամբ հաճարի, բրնձի մշակությունը, խաղողագործությունը, այգեգործությունը։ Ցանվում էին նաև բամբակ, քունջութ, կտավհատ և այլն։ Լայն տարածում ուներ անասնապահությունը, հատկապես բարձրադիր վայրերում։

19-րդ դարի առաջին երեսնամյակում Երևանի խանությունում, օրինակ, միջին հաշվով արտադրվել է տարեկան 75000 խալվար ցորեն և 30000 խալվար գարի[95]։ Միշտ չէ, որ հացահատիկի բերքը ապահովում էր ազգաբնակչության կարիքները, ուստի շատ հաճախ ցորեն և գարի էր ներմուծվում հարևան Բայազետի և Կարսի փաշայություններից և, ընդհակառակն, բերքառատ տարիներին Երևանի խանությունից հացահատիկ էր արտահանվում Վրաստան, մասնավորապես Թիֆլիս։

Տեխնիկական կուլտուրաներից գյուղատնտեսական արտադրության մեջ առաջնակարգ նշանակություն ուներ բամբակի մշակությունը։ Բամբակի մշակության կենտրոնը Երևանի խանությունն էր, որը և մեծ քանակությամբ արտածում էր այդ արժեքավոր հումքը հարևան երկրները և տիրույթները։ Բամբակի տարեկան համախառն բերքը կազմում էր

[95] Տե՛ս **Հ.-Ե. Թումանյան,** Հայաստանի տնտեսական զարգացումը, Երևան, 1960, էջ 278։

մոտավորապես 2500 խալվար։ Բամբակի մշակությամբ զբաղվում էին Զանգիբասարի, Կարբիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Սարդարապատի մահալներում։ Այս մահալներում բամբակը այնքան եկամտաբեր էր և այնքան կարևոր գյուղացիական գերդաստանների տնտեսական առօրյա կարիքները բավարարելու առումով, որ բոլոր փոքրիշատե խոշոր տնտեսությունները զբաղվում էին բամբակի մշակությամբ։ Այսպես, 1819 թվականին, երբ Վաղարշապատ գյուղը հազիվ էր 200 տուն բնակչություն հաշվում, բամբակի մշակությամբ զբաղվում էր 160 տնտեսություն[96]։

Սակայն, ինչպես բամբակի, այնպես էլ բրնձի վաճառքի գործում սարդարի ձեռքին կենտրոնացած մենաշնորհը արգելակում էր այս կարևոր կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակմանը և արտադրանքի աճին։

Գյուղացիներին թողնելով նրանց տնտեսական կարիքների համար անհրաժեշտ մինիմումը, Երևանի սարդարն իր իսկ սահմանած գներով գնում էր այդ մթերքների ամբողջ ավելցուկը և այն վերավաճառում դրացի երկրներում։ Նման պարագան գյուղացիներին զրկում էր իրենց տնտեսությունը զարգացնելու շահագրգռությունից և իջեցնում այդ եկամտաբեր կուլտուրաների մշակության թափը։

Այն դեպքում, երբ գյուղացիները համարձակվում էին խախտել սահմանված կարգը և իրենց բամբակը անձամբ վաճառել այլ գնորդների, դաժան դատաստանի էին ենթարկվում խանական պաշտոնյաների կողմից։ Այսպես, 1819 թվականին Վաղարշապատ է ուղարկվում սարհանգ Մահմեդ խանը տասներկու սարբազների ուղեկցությամբ։ Տեղ հասնելով, նա հավաքում է գյուղի տանուտերերին և մյուս երևելի անձնավորություններին, կապկապում նրանց և դաժան ծեծ ու ջարդի ենթարկում այն բանի համար, որ հանդգնել էին անմիջական գնորդին վաճառել իրենց իսկ սեփական բամբակը։ Կապանքներից ու տանջանքներից սարհանգ Մահմեդ խանը նրանց ազատում է միայն այն բանից հետո, երբ Վաղարշապատ գյուղի ավագները նրան 200 թոման տուգանք են վճարում[97]։

Համեմատաբար զարգացած վիճակում էր գտնվում այգեգործությունը՝ հատկապես խաղողագործությունը։ Երևանի խանությունում կար 3330 այգի, որից 1473 այգի Երևան քաղաքում, Նախիջևանի խանությունում՝ 541 այգի, որից 184-ը՝ Նախիջևանում, Օրդուբադի շրջանում՝

[96] Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 37, վավ. 382։

[97] Նույն տեղում, թղթ. 45, վավ. 142բ։

1336 այգի, որից 473-ը՝ Օրդուբադում։ Այդ 5257 այգիները զբաղեցնում էին 2352 3/4 խալվար տարածություն և տարեկան, միջին հաշվով, տալիս էին 6228 խալվար 84 բաթման խաղող, 5808 խալվար 63 բաթման այլնայլ տեսակի մրգեր։ Այդ բերքի մեծ մասը բաժին էր ընկնում Երևանի խանությանը՝ 5161 խալվար 84 բաթման խաղող և 5130 խալվար զանազան տեսակի մրգեր[98]։ Համաձայն Հ. Ե. Թումանյանի հաշվումների, երկու հիշյալ խանություններում այգեգործության համախառն բերքը կազմել է 175000 փութ, որից խաղողինը՝ 90 հազար փութ, մյուս մրգերինը՝ 85000 փութ[99]։

Խաղողամշակությունը տնտեսական խոշոր նշանակություն ուներ գյուղացիական գերդաստանի համար։ Խաղողի հետագա մշակումից ստացվում էր գինի և օղի, որոնք վաճառքի էին հանվում։ Մյուս մրգերը չորացվում էին և արտահանվում դրացի երկրներ։

Այստեղ էլ պակաս չէին անօրենություններն ու բռնությունները։ Էջմիածնի պահակապետ Ջաֆար խանը տարիներ շարունակ վանքին պատկանող փոքր քարվանասարայի մեջ տասներեք խանութ զբաղեցրել էր անձամբ, որտեղ նրա համար գինի էին վաճառում։ Նա արգելել էր Վաղարշապատի բնակչությանը վաճառել իրենց այգիներից ստացած գինին։ Ջաֆար խանը էժան գնով վերցնում էր բնակչության պատրաստած ամբողջ գինին և ապա վերավաճառել էր տալիս կրկնակի, անգամ եռակի գնով հենց իրենց՝ արտադրողներին։ Որոշ հաշվումների համաձայն, ինչպես Էջմիածնի վանքի հոգևորականության, այնպես էլ Վաղարշապատի բնակչության վնասները դրա հետևանքով տարեկան կազմում էին առնվազն հազար հինգ հարյուր թուման[100]։

Գյուղատնտեսական բավական տարածված կուլտուրաներից էր բրինձը։ Բրնձի մշակությամբ հիմնականում զբաղվում էր Զանգիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Կարբիբասարի, Շարուրի, Սաաթլուի մահալների բնակչությունը։ Բրինձը նույնպես արտահանության կարևոր ապրանքներից էր, ինչու և սարդարական վարչության կողմից բրնձի վաճառքը ևս մենաշնորհի էր ենթարկված, որի խախտողները ենթարկվում էին խիստ պատիժների և տուգանքների։

Մախոտի մշակությունը կարևոր նշանակություն ուներ, որովհետև հատկապես մահմեդական ազգաբնակչության մեջ խիստ մեծ տարածում

[98] И. Шопен, Նշվ. աշխատ., էջ 471—472, 747—748։

[99] Հ. Թումանյան, Հայաստանի տնտեսական զարգացումը, էջ 280։

[100] Համառոտութիւն անցից Քրիստոսակերտ Մայր աթոռոյ հայոց սրբոյ Էջմիածնի, Տփղիս, 1853, էջ 19։

ուներ ծխելը։ Ծխախոտ հիմնականում ցանվում էր Սուրմալուի և Զանգիբասարի մահալներում։

Արևելյան Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից էր անասնապահությունը։ Բարձրադիր լեռնային վայրերը շատ նպաստավոր էին անասնապահության զարգացման և հատկապես մանր եղջերավոր անասունների բուծման համար։ 19-րդ դարի սկզբին անասնապահությունն առանձնապես մեծ զարգացում ապրեց, ավելացավ անասունների գլխաքանակը, որովհետև Հյուսեին-Ղուլի խան սարդարը երկրի հյուսիսային լեռնային շրջաններում բնակեցրեց քոչվոր ադրբեջանական և քրդական անասնապահական բազմաթիվ ցեղեր, որոնք իրենց հետ բերեցին անասունների խոշոր հոտեր։ Անասնապահությունը լայն տարածում ուներ Հայաստանի հյուսիսային շրջաններում և Ղարաբաղի խանությունում։ Յուրաքանչյուր ցեղախումբ իր ամառային արոտավայրերն ուներ, ուր ամեն տարի բարձրանում էին իրենց անասունների հետ մեկտեղ։

Գյուղական յուրաքանչյուր տնտեսություն, ինչպես և կալվածատիրական բնույթի խոշոր տնտեսությունները պահում էին որոշ քանակությամբ անասուններ, որոնք անհրաժեշտ կաթնամթերքներ՝ կաթ, պանիր, յուղ, մածուն և այլն էին հայթայթում տնտեսության կարիքները հոգալու համար։ Այսպես, 1819 թ. էջմիածնի վանքն ունեցել է 446 ոչխար և այծ, 219 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 24 խոզ, 27 ուղտ, 58 ձի և այլն[101]։ Նման տնտեսությունները ունենում էին խոտհարքներ՝ ձմեռը անասուններին կերով ապահովելու համար։ Շոռլի Մեհմանդար և Խաթունարխ գյուղերից վերև ընկած հողերում էջմիածնի վանքն ուներ 60 խալվար տարածություն բռնող մի մարգագետին, որտեղից, ըստ Շոպենի, կարելի էր ստանալ մոտավորապես հարյուր հազար խուրձ խոտ։ Սակայն Հյուսեին Ղուլի խանը բռնագրավել էր այն և տվել բեյուբ չորանքարա վաչկատուն ցեղին[102]։

Անասուններ և անասնապահական մթերքներ էին ներմուծվում սահմանակից Բայազետի և Կարսի փաշայություններից։

Անասնապահությունից ստացվում էր արհեստագործության համար խիստ անհրաժեշտ բուրդ, կաշի, մորթիներ, որոնց մի մասը մշակման էր ենթարկվում տնային պայմաններում, իսկ մյուս մասը՝ արհեստանոցներում։

Գյուղատնտեսության զարգացմանը խիստ կերպով խոչընդոտում էին

[101] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 34, վավ. 314։
[102] И. Шопен, Նշվ. աշխատ., էջ 681։

արտադրության պարզունակ գործիքները, հողի մշակման հնամենի եղանակը։ Այդ ժամանակ տարածված էր հողի մշակման եռադաշտային համակարգը։ Սակայն ոչ բոլոր վայրերում էր այն կիրառվում։ Արարատյան դաշտում, որտեղ հողը խիստ բերրի էր և պարարտացման կարիք քիչ էր զգում, օգտագործվում էր ցանքատեսակների փոփոխման եղանակը։

Գյուղատնտեսական արտադրության հիմնական գործիքը, որ օգտագործվում էր հողը վարելու համար, արորն էր (շուքը)։ Միայն խոշոր ու ունևոր տնտեսություններն էին ի վիճակի գութան օգտագործել։

«Էլ ինչու զարմանալ, երբ 30—40 ընտանիքից բաղկացած մի գյուղ ի վիճակի է ամենաշատը միայն 5—6 գութան պահել և դաշտ ուղարկել, և սրանք իրենց հերթին այնքան վատորակ են, որ հարկավոր է լինում ամենաքիչը 10—12 եզ լծել և 5—6 բանվոր բանեցնել... Հարկավոր է, որ 6—8 ընտանիքներ միանան միմյանց հետ, որոնցից մեկը հաճախ կարող է տրամադրել իր միակ բանվորին, իսկ մյուսն՝ իր միակ եզը,— մի լրիվ գութան սարքելու համար»[103]։ Արորի միջոցով հնարավոր չէր խորը վար կատարել, իսկ դա բացասաբար էր անդրադառնում հողի բերքատվության վրա, հյուծում էր հողը։ Պատահում էին նույնիսկ դեպքեր, երբ արտը բահով էին փորում։ Ցանելու և հնձի գործիքները նույնքան նախնական էին, որքան վարի գործիքները։ Լեռնային բարձրադիր շրջաններում հնձի ժամանակ օգտագործում էին գերանդի, դաշտային մասերում՝ մանգաղ։ Հացահատիկը կալսելու համար օգտագործվում էր կամը, իսկ հատիկը դարմանից առանձնացնում էին հատուկ թիակների միջոցով։

Հացահատիկային կուլտուրաների, հատկապես ցորենի և գարու բերքատվությունը հիմնականում կազմել է մոտավորապես մեկին երեք կամ չորս, շատ քիչ դեպքերում մոտեցել է հինգի[104]։ Այսպես, 1817 թ. էջմիածնի վանքը ցանել է 432 սոմար ցորեն, ստացել է 1334 սոմար բերք, ցանել է 180 սոմար գարի, ստացել է 662 սոմար։ 1818 թ. նույն էջմիածինը ցանել է 325 սոմար ցորեն, ստացել է 800 սոմար, 111 սոմար գարի, ստացել է 512 սոմար։ 1819 թ. ցանել է 450 սոմար ցորեն, ստացել է 1310 սոմար, 72 սոմար գարի, ստացել է 468 սոմար։ 1820 թ. ցանել է 386 սոմար ցորեն, ստացել է 1516 սոմար, 96 սոմար գարի, ստացել է 118 սոմար։ 1821 թ. ցանել է 353 սոմար ցորեն, ստացել է 1216 սոմար, 167 սոմար գարի, ստացել է 480 սոմար[105]։ Նույնը կարելի է ա-

[103] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 86։
[104] Տե՛ս Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 31, վավ. 187։
[105] Նույն տեղում։

սել նաև բրնձի բերքատվության մասին, թեև այն համեմատաբար բարձր է եղել՝ մեկին հինգ կամ վեց։ Բարձր է եղել կորեկի բերքատվությունը՝ մեկին վեց կամ յոթ[106]։

Ղարաբաղում բնակչության գլխավոր զբաղմունքն էր հացահատիկի (ցորենի և գարու) արտադրությունը, անասնապահությունը և մետաքսագործությունը։ Ղարաբաղը հայտնի էր մասնավորապես իր ձիագործարաններով, որտեղ բուծվում էին Պարսկաստանում լավագույնը համարվող ձիեր[107]։ Շիրվանում հայերը ցանում էին հացահատիկ, բրինձ, զբաղվում մետաքսագործությամբ, անասնապահությամբ, ձկնորսությամբ, աղի հանույթով և մարենայի արմատների հավաքումով[108]։ Շաքիում հայերի հիմնական զբաղմունքն էր հացահատիկի ցանքը, մետաքսագործությունը և բրնձի մշակումը[109]։

Լեռնային շրջաններում, որտեղ գրեթե բացակայում էր արհեստական ոռոգումը, բերքը լիովին կախված էր բնության ողորմածությունից։ Երաշտը, կարկուտը, չափից ավելի առատ անձրևները, մորեխը և բազմաթիվ այլ աղետներ անզոր էին դարձնում հողագործին բնության ուժերի առջև այնպես, ինչպես որ անզոր էր նա բռնապետական ռեժիմի առջև։

* * *

Գյուղատնտեսության զարգացման համար խիստ մեծ նշանակություն և կենսական կարևորություն ուներ արհեստական ոռոգման հարցը։ Ջուրը Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններում նույնպիսի անհրաժեշտություն էր, ինչպես և հողը։

Այդ իսկ պատճառով էլ խանական կառավարության հիմնական ֆունկցիան գյուղատնտեսական մթերքների վերարտադրությունն ապահովելու հարցում գրեթե լիովին նոր ջրանցքներ կառուցելն ու հների վերանորոգումն էր։ Դա առավել ևս մեծ անհրաժեշտություն էր պետության համար այն առումով, որ արհեստական ոռոգումից էր կախված ապագա բերքի քանակը, իսկ հարկ-ռենտան ստացվում էր ոչ թե հողային առկա մշակվող տարածությունների չափով, այլ ըստ բերքի քանակի։ Որքան բարձր բերք ստացվեր, այնքան մեծ կլիներ հարկ-ռենտայի քանակը և ընդհակառակը։

[106] Նույն տեղում։

[107] ЦГИА СССР, ф. 1284, оп. 4, 1811 г., д. 233—249, л. 395 об.

[108] Նույն տեղում, թ. 394—394բ։

[109] Նույն տեղում, թ. 395բ։

Հետևաբար արհեստական ոռոգման կազմակերպման և ապահովման հարցը պետք է մշտապես իշխանությունների ուշադրության կիզակետում գտնվեր։

Ջրերը բաժանվում էին երկու կարգի՝ բնական և արհեստական (կամ, ինչպես ժողովուրդն էր ասում, «հանած ջուր»)։ Բնական ջրերի թվին էին պատկանում լճերը, գետերը, առուները և առվակները, հոսող աղբյուրները, անձրևաջրերը և այլն։ «Հանած ջրի» կարգին էին պատկանում մարդկային աշխատանքի միջոցով բնական ջրամբարներից բերված ջրերը՝ քյահրեզները, ջրհորները, ջրանցքները և ոռոգման այլ կառուցումները։

Իրավական իմաստով ջրերի նման բաժանումը խիստ կարևոր նշանակություն ուներ։ Ջուրը, եթե այն գտնվում էր բնական վիճակում, պատկանում էր իբրև աստծո պարգև և որպես այդպիսին կազմում էր այն ազգաբնակչության ընդհանուր ունեցվածքը, որի հողերը ոռոգվում էին կամ կարող էին ոռոգվել տվյալ գետի կամ լճի ջրով։ Ինչ վերաբերում է «հանած ջրին», ապա այն, ընդհակառակը, կարող էր մասնավոր սեփականության առարկա դառնալ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավական անձի՝ քաղաքային կամ գյուղական համայնքի, հիմնարկության կամ մասնավոր անձի։ Քյահրեզների կամ ջրհորների ջուրը կարող էր պատկանել այն անձնավորությանը կամ համայնքին, ովքեր իրենց միջոցներով փորել էին ջրհորը կամ անցկացրել քյահրեզը։ Ջրանցքներն ու առուները նույնպես կարող էին պատկանել ամբողջ համայնքների կամ համայնքների խմբի, ինչպես և անձնավորությունների։ Սակայն հերթական ջուրը արդեն պատկանում էր նրա հերթական տիրոջը[110]։ Յուրաքանչյուր համայնք, իրավական ու ֆիզիկական անձ իրավունք ուներ բնական ջրից օգտվելու, եթե հողամասեր ուներ տվյալ ջրով ոռոգվող տարածքում։ Այդ իրավունքը համահավասար էր ունեցած հողակտորին։

Ջրի վրա ունեցած իրավունքի յուրահատկությունը պայմանավորված էր այդ իրավունքի բացարձակությամբ և անսահմանափակությամբ. այն սրբազան էր ու նվիրական։ Ջրային իրավունքը սահմանափակում էր անգամ հողատիրության իրավունքը։ Դա արտահայտվում էր նրանով, որ ոչ ոք, լիներ դա համայնք կամ մասնավոր հողատեր, իրավունք չուներ ճանապարհ չտալ ջրին, իսկ ճանապարհ տալու համար իրավունք չուներ դրամական հատուցում պահանջել։ Եթե այն հողակտորը, որ-

[110] «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. 1, стр. 137—138.

տեղով անցնելու էր առուն կամ ջրանցքը, խիստ թանկ էր տիրոջ համար, ապա նա կարող էր շրջանցիկ ճանապարհ տալ, բայց մերժելու իրավունք չուներ[111]։

Քանի որ առուներն ու ջրանցքները ջուր էին մատակարարում համայնքի բոլոր անդամներին, ապա վերջիններս պարտավոր էին դրանց պահպանման համար աշխատանք ծավալել ու միջոցներ տրամադրել. ջրանցքներ կառուցելու կամ վերանորոգելու գործում կիրառվում էր կոռային աշխատանք, ընդ որում դրանց մասնակցում էր տվյալ վայրի բնակչության մեծ մասը։

Պարսկական տիրապետության տարիներին Զանգու և Կրխբուլաղ գետերից անցկացվել են մի շարք առուներ, որոնք հիմնականում ծառայում էին Երևանի այգիներն ու բանջարանոցները ոռոգելու համար. Ղարաբաղի խանությունում՝ Լուվր-արխը, Խան-արխը և այլ ջրանցքներ։ 1815 թ. էջմիածնի վանքը վերանորոգեց Քանքանը, որով Քասախ գետի ջուրը հոսում էր էջմիածին[112]։

Ջրօգտագործման վիճակը կանոնավորելու համար նշանակվում էին հատուկ պաշտոնյաներ, որոնք կոչվում էին միրաբներ։ Միրաբների հրամանատարության ներքո էին գտնվում ամբողջ մահալի ջրերը, և նա պետք է հետևեր, որպեսզի գյուղական տարբեր համայնքների միջև ջուրը հնարավորին չափ հավասար բաժանվեր։ Ջրդողության, ջրի հերթի խախտումների, առուների, ջրանցքների մաքրմանը, ջրի առնչությամբ ծագած զանազան վեճերի վերաբերյալ հարցերը պետք է լուծեին միրաբները։ Ջրի համար երբեմն տեղի էին ունենում նույնիսկ մարդասպանության դեպքեր։ Միրաբները վարձատրվում էին բնակչության կողմից։

Գյուղերում ջրաբաժանության գործը կարգավորում էին ջուվարները, որոնք ենթարկվում էին միրաբներին։ Ջուվարները պետք է հոգ տանեին ջրի պահպանմանը, հատկապես նրա ակունքային մասում, և հերթով բաժանեին ջուրն ու հսկեին ջրի հերթի պահպանմանը։ Մեծ գյուղերում ջուվարներն ունեին օգնականներ, որոնք կոչվում էին կարաջուվարներ։ Միրաբների նման ջուվարներն էլ իրենց վարձատրությունը ստանում էին բնակչությունից։ Օգտագործելով պաշտոնը, միրաբներն ու ջուվարները, իհարկե, զանազան խարդախ միջոցներով շատ ավելին էին վաստակում, քան նախատեսվում էր օրենքով։

Ջրի քանակությունը չափելու համար գործող հիմնական միավորը բահն էր, այսինքն ջրի այն քանակությունը, որով մեկ մարդ ի վիճակի

[111] Նույն տեղում, էջ 138։

[112] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 24, վավ. 136։

էր միայնակ ջրելու որոշ հողատարածություն։ Ջուրը տրվում էր ըստ հողամասի մեծության։

Այսպիսին էր ջրային իրավունքը և ջրօգտագործման վիճակը Արևելյան Հայաստանի հատկապես դաշտային շրջաններում 19-րդ դարի առաջին քառորդում։

* * *

Հնագույն ժամանակներից Հայաստանում գոյություն ուներ հողի համայնական սեփականություն, գյուղական հողերը հիմնականում գրանցվում էին գյուղական համայնքի տնօրինության ներքո։ Պարբերական հողաբաժանումների միջոցով գյուղական համայնքը բաշխում էր հողերը իր անդամների միջև։ Յուրաքանչյուր գյուղական համայնք կազմում էր առանձին տնտեսական և վարչական միավոր։ Համայնքի կազմը պայմանավորող հիմնական տարրն էր «ծուխը»՝ ընտանիքը։ Գյուղական գերդաստանները, ըստ իրենց թվաքանակի, բաժանվում էին հինգ կարգի՝ համփաների, երեք-պճեղների, կիսանների, պճեղների և կես-պճեղների։ Այդ դասակարգման հիմքում ընկած էին երկրում հնուց ի վեր գոյություն ունեցող հողաբաժինների հինգ կարգերը։ Լրիվ համփաներն այն ընտանիքներն էին, որոնք բաղկացած էին 16 շնչից, երեք-պճեղները 12 շունչ՝ ունեցող ընտանիքներն էին, կիսանները, պճեղները և կես-պճեղները՝ համապատասխանաբար 8, 4 և 2 շունչ ունեցող ընտանիքները։ Կես-պճեղները ծառայում էին ոչ միայն երկու շունչ ունեցող ընտանիքներին հողաբաժին հատկացնելու համար, այլև միաժամանակ՝ որպես հավասարեցնող միավոր և հավասարեցնող հողաբաժին։ Դա նշանակում էր, որ վեց, տաս, տասնչորս շնչից բաղկացած ընտանիքների հողաբաժիններին համապատասխանաբար միացվում էր նաև կես պճեղ։

Գյուղական տվյալ համայնքի շրջանակներում եղած հողային հարաբերությունների և հարկերի ու պարհակների բաշխման հարցում համայնքներն ունեին ինքնուրույնություն։ Յուրաքանչյուր գյուղական համայնք ուներ իր դատարանն ու վարչությունը՝ կազմված միջնորդներից, վեքիլներից (հավատարմատարներից), ալսախկալներից (ծերերից), տասնակապետերից։ Գյուղական համայնքի վարչությունը վճռում էր բոլոր տեսակի գործերը՝ սկսած համայնական հողատարածությունների չափումից և հարկերի բաշխումից մինչև դատաստանական ու ոստիկանական ֆունկցիաները։

Գյուղական համայնքի գլուխ էին կանգնած տանուտերերը, կոչվելիս

լինեին նրանք քյոխվա, քեթխուդա, թե յուզբաշի։ Նրանց պաշտոնը ընտրովի էր, բայց դա սոսկ ձևականություն էր, քանի որ այն մեծ մասամբ մնում էր միևնույն ընտանիքի անդամների ձեռքում։ Տանուտերերն ընտրվում էին գյուղական հավաքների ժամանակ, որոնք տեղի էին ունենում տարեկան ամենապակասը երկու անգամ։ Նրանց հիմնական պարտականությունն էր հարկերի հավաքման ապահովումը տվյալ գյուղում և մանր-մունր վեճերի լուծումը։ Համայնքի ներսում գրեթե բոլոր հարցերը լուծվում էին և վճռվում ըստ սովորութային իրավունքի նորմերի։

Սարդարը, խաները, միրբոլուքները և նրանց պաշտոնյաները գյուղական տանուտերերին էին դիմում իրենց զանազանակերպ պահանջներով։ Տանուտերը պարտավոր էր հոգ տանել համայնքի ներսում խաղաղության ու հանգստի պահպանմանը, հարկերի ժամանակին մուծմանը։ Տանուտերը պետք է հոգ տաներ, որպեսզի տվյալ գյուղի մոտով անցնող ճանապարհի, ինչպես նաև կամուրջների ու ջրանցքների վիճակը բարվոք լիներ։ Նա պետք է ընդուներ, կերակրեր և անհրաժեշտ կենսամթերքով բավարարեր խանական ծառաներին, որոնք հայտնվում էին գյուղում իրենց տերերի պատվերով։ Այդ բազմաթիվ պարտականությունները կատարելու գործում տանուտերերին օգնում էին գզիրները, տասնակապետերը, վեքիլները և համայնքի այլ պաշտոնյաներ։

Գյուղական համայնքի դատարանը միջնորդ դատարան էր, որը ձգտում էր խաղաղաբար լուծել այնպիսի հարցեր, ինչպես ոռոգման ջրի հերթի խափանումը, ցանքսերի փչացումը, միջնակների շուրջ ծագած վեճերը և այլն[113]։

«Հասարակական կամքի գերագույն օրգանը գյուղական ժողովն (հավաքն) էր։ Նրան մասնակցելու իրավունք ուներ ամեն մի տնատեր։ Բայց առաջնությունը հավաքներում պատկանում էր ծերունիներին. առավել ջահել տնատերերը, մեծի մասամբ, մասնակցում էին սոսկ որպես դիտողներ։ Այդ լիովին համապատասխանում էր տեղական բնակչության կյանքի նահապետական ձևին։ Համայնական հավաքը կատարվում էր տարին երկու անգամ՝ աշնանը և գարնանը, երբ պահանջվում էր թովջի անել՝ բաշխել հարկերը...

Հավաքում գործերը լուծվում էին միաձայն. ձայների մեծամասնությամբ որոշումներ ընդունելու սովորույթ գոյություն չուներ։ Հատկապես բուռն բնույթ էին կրում հողի վերաբաժանման կապակցությամբ հրավիրված համայնաժողովները։ Նման հարցերի քննարկումը երբեմն ամիսներ էր տևում. ժողովը հավաքվում էր, ցրվում, բաժան-բաժան լինում խմբերի...»[114]։

Սակայն 19-րդ դարի առաջին երեսնամյակում, նախքան Թուրքիայից և Պարսկաստանից կատարված զանգվածային գաղթը, հողաբաժանման խնդիրը Արևելյան Հայաստանում սուր բնույթ չէր կրում, քանի որ ազգաբնակչությունը փոքրաթիվ էր և եղած հողերն էլ լրիվ չէին մշակվում։

Նահապետական կացութաձևի գոյության պայմաններում համայնքի կառավարումը ամբողջովին կենտրոնացած էր համփային խոշոր ընտանիքների գլխավորների ձեռքում։ Հիմնականում նրանք էին ընտրում տանուտերերին, միջնորդներին, դահբաշիներին և այլն։

Ինչպես արդեն նշվեց, հողաբաժանման հիմքում ընկած էր համփա-շարեքային համակարգը։ Հիշյալ հինգ հողաբաժիններից որևէ մեկին տիրելու հիմք տալիս էր ոչ թե համայնքի անդամի կամքը, այլ նրա ընտանիքի առկա անդամների թիվը։ Համփան հողաբաժին ստանալու համար պետք է ունենար 16 շնչանոց ընտանիք, կիսանը՝ 8, պճեղը՝ 4 և այլն։

Ոչ համփան և ոչ էլ մյուս կարգերը իրենցից կայուն մեծություններ չէին ներկայացնում։ Նրանց չափը կախված էր ոչ միայն առանձին գերդաստաններում առկա շնչերի քանակից, այլև բնակչության աճից, համայնքին պատկանող հողային ֆոնդի քանակից[115]։

Այն դեպքում, երբ ծխերը ունենում էին կենտ թիվ, հնարավոր չէր նրանց ապահովել հողով ըստ համփա-շարեքային համակարգի, քանի որ այդպիսի ընտանիքները կտուժեին և դրանով իսկ կխախտվեր հողի հավասարաչափ բաշխման սկզբունքը։ Այդ անարդարությանը վերջ տալու համար էլ սովորութային օրենքը ստեղծել էր, կես-պճեղի հետ միասին, նաև կենտ թիվ ունեցող ընտանիքներին մեկ շունչ ավելացնելու եղանակը. «Շունչ ավելացնելու եղանակի էությունն այն էր, որ նորմայից մեկ շունչ պակաս ունեցող ընտանիքների վրա գրանցվում է ավելորդ շունչ և նրանց տրվում է մյուս, ավելի բարձր կարգի հողաբաժին, ընդ որում նշանակություն չունի, թե քանի շնչից է բաղկացած ընտանիքը։ Միայն պահանջվում է, որպեսզի նրանում շնչերի թիվը զույգ լինի»[116]։

Հողաբաժանման նման կարգը կարելի էր կիրառել այն համայնքներում, որոնք հող շատ ունեին և համայնքի անդամները կարող էին թույլ

---

[113] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказье, ч. 1, Казань, 1889, стр. 87—88.

[114] Նույն տեղում, էջ 89։

[115] «Свод материалов...», т. I, стр. 20.

[116] «Свод материалов...», стр. 21.

տալ նման շռայլություն։ Այլ էր դրությունը այն համայնքներում, որտեղ հողային ֆոնդը գրեթե սպառված էր և հողի յուրաքանչյուր կտորը մեծ արժեք ուներ համայնքի անդամների աչքում։ Իսկ եթե հողը կտրում էին, ապա դա համայնքում երկարատև վեճերի ու թշնամանքի առիթ էր ծառայում։ Սովորութային օրենքը նման վիճակից էլ էր ելք գտել։ Փոքրաթիվ, կենտ թվով շնչեր ունեցող ընտանիքները միավորվում էին, ստեղծում «ազատ ընկերակցություններ», որոնք կոչվում էին «հարաքաշություն», և համատեղ հողաբաժին էին ստանում։ Պահանջվում էր միայն, որ այդ հարաքաշությունները շնչերի թվով համապատասխանեին կամ համփայի, կամ երեք-չարեքի, կամ կիսանի, կամ չարեքի և կամ, հակառակ դեպքում, ունենային զույգ թվով շնչեր[117]։

Հարաքաշությունը նպաստում էր հողաբաժինների կոտորակման և մեկընդմիջության վերացմանը, որը, անշուշտ, բացասաբար էր անդրադառնում գյուղացիական տնտեսությունների նյութական դրության վրա։ Հարաքաշության շնորհիվ հնարավոր էր լինում փոքր ի շատե տանելի բերք ստանալ, ինչ որ դժվար կլիներ մանր հողակտորների առկայության դեպքում։ Բայց հարաքաշությունը կիրառվում էր ոչ բոլոր վայրերում։

Սակայն ոչ բոլոր հողերն էին ենթակա վերաբաժանման և վերաբաշխման։ Խաղողի և մրգի այգիները, տնամերձերը, այսինքն բոլոր ցանկապատված հողամասերը գտնվում էին գյուղացիների տիրապետության ներքո և չէին կարող վերաբաժանման ենթարկվել։ Դաշտային շրջաններում, որտեղ զարգացած էին գյուղատնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպես խաղողագործությունը, այգեգործությունը, բանջարաբուծությունը և այլն, տիրապետող էր հողատիրության այդ ձևը։ Լեռնային վայրերում, որտեղ կլիմայական պայմանների բերումով գյուղատնտեսության այդ ճյուղերը չէին կարող կենսագործվել, որտեղ գյուղացիները զբաղվում էին սոսկ հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, տիրապետող էր հողատիրության համայնական ձևը[118]։

Տնամերձ և ցանկապատված հողամասերը իրավական իմաստով լիովին գտնվում էին համայնքի առանձին անդամների տրամադրության ներքո։ Դրանք դիտվում էին իբրև տերերի սեփականությունը, այդ իսկ պատճառով էլ կարող էին և՛ վաճառվել, և՛ գնվել, և՛ գրավ դրվել, և՛ փոխանակվել, և՛ նվիրաբերվել, և՛ որպես օժիտ տրվել, եթե գյուղացին մահից հետո արու ժառանգ չէր թողնում[119]։ Այդ իսկ պատճառով էլ

[117] Նույն տեղում, էջ 22—23։

[118] «Свод материалов...», стр. 38.

[119] Նույն տեղում, էջ 40—41։

հարթավայրերում, որտեղ արագ թափով տեղի էր ունենում արժեքավոր հողամասերի ցանկապատումը, համայնական հողատիրությունը աստիճանաբար իր տեղը սկսում էր զիջել մասնավոր հողատիրությանը։

Լեռնային շրջաններում և ձորահովիտներում համայնքի սեփականությունից դուրս էին համարվում այնպիսի հողամասեր, ինչպես քարերից մաքրված խոպան և ազատ հողերը։ Այսպիսով, հողը արդեն սկսել էր կենտրոնանալ առավել ունևոր գյուղացիների ձեռքում, աճում էր հողազուրկ և փոքր հողամասեր ունեցող գյուղացիների թիվը։ Սակայն դա մի ընթացք էր, որը շատ դանդաղ էր կատարվում, քանի որ այդ ժամանակաշրջանում հողային հարցը սուր չէր բնակչության փոքրաթվության պատճառով։

Համայնքի անդամները իրավունք ունեին օտարելու ցանկապատված հողը, հեռանալու տվյալ համայնքից։ Ինչ վերաբերում է կոռային աշխատանքներին, ապա համայնքի անդամները պարտավոր էին դրանք կատարել միայն այն դեպքում, երբ կառուցվում էին ճանապարհներ, ամրոցներ ու բերդեր, ջրանցքներ և հասարակական բնույթի նման այլ կառույցներ։ Այսպես, երբ 1822 թ. ուժեղանում են պատերազմական ընդհարումները օսմանցիների և պարսիկների միջև, Աբբաս Միրզան կարգադրում է վերանորոգել Էջմիածնի վանքի քանդված պարսպամասերը, ընդ որում «մշակաց մեծ մասն մեր գիւղի օրհնեալ ժողովուրդն նուիրեցին, որք են 1234 անձինք, կիսով չափ օշականցիք՝ 290, և մասամբ իւիք աշտարակցիք՝ 250»[120]։ Դա կոռային աշխատանք էր, որի համար պարիսպների վերաշինության վրա աշխատող բանվորները միայն կերակրվել էին։

Թեպետ 19-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանում տակավին պահպանվում էր գյուղական համայնքը, որը և տնօրինում էր իրեն պատկանող հողերը, բայց արդեն նկատելի էին որոշ տեղաշարժեր։ Գյուղական համփա ընտանիքները կարողանում էին իրենց համար որոշ չափով արտոնյալ վիճակ ստեղծել, իրենց ձեռքն առնելով համայնքի ներքին գործերի տնօրինումը, ջանալով պարհակների կատարումը փաթաթել չունևոր գյուղացիների վզին, ձեռք բերել լավագույն հողաբաժիններ։ Դաշտային շրջաններում դանդաղորեն նվազում էին համայնական հողատարածությունները, ավելանում էր օտարված և ցանկապատված հողակտորների թիվը։ Այս ամենը, բնականաբար, պետք է դասակարգային ներհակությունները սրեր։

[120] Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. 43, վավ. 377ա։

4. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում գյուղատնտեսությունից հետո խոշոր դեր էր խաղում արհեստագործությունը։ Արհեստներով հիմնականում զբաղվում էր քաղաքային ազգաբնակչությունը։ Սակայն գյուղերում էլ բավականաչափ զարգացած էին արհեստագործության տարբեր ճյուղերը, որոնք հիմնականում կոչված էին բավարարելու տեղական կարիքները։

Արևելյան Հայաստանի արհեստագործության գլխավոր կենտրոններն էին Երևանը, Շուշին, Նախիջևանը և Օրդուբադը։ Արհեստագործությունը բավականաչափ զարգացած էր նաև Վաղարշապատում, որտեղ զանազան մասնագիտությունների տեր արհեստավորներ հոգում էին Էջմիածնի խոշոր վանական տնտեսության ամենատարբեր կարիքները։

Արհեստագործությունն իր էությամբ հիմնականում տնայնագործական էր և սահմանափակվում էր գլխավորապես ներքին շուկային այս կամ այն բնույթի արհեստագործական արտադրանք մատակարարելով։ Տեղական արհեստագործությունը սնվում էր խանության սահմաններում ստացվող հումքի բազայից։ Իսկ այն շատ էլ ընդարձակ չէր և սահմանափակվում էր անասնապահությունից ստացվող բրդով, կաշիներով, մորթիներով, այնուհետև բամբակով, բնական ներկանյութերով, խաղողով, քունջութով, կտավհատով և այլն։ Դրսից ստացվող հումքերի հետ էին կապված այնպիսի արհեստագործական ճյուղեր, ինչպես արծաթագործությունը, զինագործությունը և այլն։

Արևելյան Հայաստանում գոյություն ունեին շուրջ հարյուր տեսակի արհեստներ, որոնք բավարարում էին բնակչության և խանական արքունիքների ամենատարբեր պահանջները։ Արհեստի այդ ճյուղերից էին՝ մաշակարությունը, բրուտագործությունը, քարտաշությունը, կաշեգործությունը, դարբնությունը, ներկարարությունը, պղնձագործությունը, վրանագործությունը, թաղիքագործությունը, դերձակությունը, մանածագործությունը, արծաթագործությունը, հյուսնությունը, թամբագործությունը, շերամապահությունը, գզրարությունը և բազմաթիվ այլ արհեստներ։ Արհեստավորներ էին համարվում նաև բախկալները, նպարավաճառները, զուռնաչիները, ոսկրաբույժները, ալյուրավաճառները, հացագործները և ուրիշներ, որոնց զբաղմունքը հիմնականում կապված էր առևտրի հետ, իսկ շատ դեպքերում նրանք արտադրության որևէ կոնկրետ ճյուղի հետ անմիջական կապ չունեին։

Արհեստավորների ընդհանուր թիվը Երևանի և Նախիջևանի խանություններում, օրինակ, կազմում էր մոտավորապես 5000 մարդ, այսինքն

յուրաքանչյուր 20 բնակչից միջին հաշվով մեկը զբաղվում էր արհեստով։ Նման հարաբերակցությունը կարելի է բացատրել արհեստագործության ցածր արտադրողականությամբ, նրա տնայնագործական բնույթով։ Այսուամենայնիվ, արհեստագործությունը կենսական, կարևոր նշանակություն ուներ։

Արևելյան Հայաստանում արհեստագործության ճյուղերից հատկապես լայն տարածում ուներ ջուլհակությունը։ Գրեթե յուրաքանչյուր ընտանիք ուներ դազգահ և հոգում էր իր տնտեսության կարիքները։ Շոպենի հաշվումներով Երևանի և Նախիջևանի խանություններում կար 4206 դազգահ, որոնք տարեկան արտադրում էին ավելի քան կես միլիոն արշին կտավ։ Երևանի սարդարը յուրաքանչյուր դազգահից բռնագանձում էր մի թոփ կտավ, իսկ Նախիջևանի խանությունում այդ հարկը գանձվում էր դրամով, այն է՝ մեկ թուման յուրաքանչյուր դազգահից։

Արհեստագործության մեջ կարևոր տեղ էր գրավում կաշվի մշակությունը։ Կաշեգործական արհեստանոցները գտնվում էին քաղաքներում։ Երևանում կար 32 կաշեգործական արհեստանոց, Օրդուբադում՝ 12, Նախիջևանում՝ 1։ Կաշեգործական արհեստանոցներ կային նաև Ղարաբաղի խանությունում, որոնցից հիշատակվում է մեկը, որը կապալով էր տրվում[121]։ Երևանի կաշեգործական արհեստանոցները կենտրոնացած էին քաղաքի Դարաքենդ կոչված թաղամասում, Հրազդանի ափին։ Մշակման էին ենթարկվում ոչ միայն տեղում ստացվող կաշվի հումքը, այլև Մակուի խանությունից և Բայազետի փաշայությունից մեծ քանակությամբ ներմուծվող կաշիները։ Միայն Երևանի 32 կաշեգործական արհեստանոցներում մշակման էր ենթարկվում տարեկան 4000 խոշոր մակերեսի, այսինքն տավարի, և 25000 փոքր մակերեսի (մանր եղջերավոր անասունների) կաշիներ, որոնք մեծ մասամբ իրացվում էին տեղում[122]։ Որոշ արհեստանոցներում, հատուկ բույսերի սերմերի միջոցով, կաշիներից ստացվում էր շագրեն, որը կապալի ենթակա չէր։ Մինչդեռ մնացած կաշիների մշակությունը կապալային հոդված էր կազմում, և առանց հատուկ դրոշմանիշների արգելվում էր կաշիների վաճառքը։ Մի շարք արհեստանոցներում կաշիները ներկում էին սև, կարմիր և դեղին գույներով։ Ժամանակակիցները դրականորեն են արտահայտվում Արևելյան Հայաստանում արտադրված կաշիների որակի մասին։

Օճառ պատրաստվում էր Երևանում, Շուշիում և մի շարք այլ վայրերում։ Օճառի պատրաստումը նույնպես գտնվում էր կապալառուների

---

[121] **Могилевский** и **Ермолов**, Описание Карабагской провинции, 1823, стр. 230.

[122] **И. Шопен**, Նշվ. աշխատ., էջ 837։

ձեռքում. որով և արգելված էր օճառի ազատ վաճառքը։ Գառնիբասարի մահալի Շեյխազատալի գյուղում, որտեղ շուրջ 500 շունչ էր հաշվվում, հիմնականում զբաղվում էին օճառի արտադրությամբ։ Սակայն այդ գյուղացիները իրավունք չունեին քաղաքում օճառ վաճառել, ուստի և շրջում էին խանության գյուղերում, վաճառում օճառը և այդպիսով հոգում իրենց կենսական կարիքները։

Ներկարարները բաժանվում էին երկու մասի. շիլաչիների, որոնք կտորը ներկում էին կարմիր գույնի և բոյաղչիների, որոնք ներկում էին կապույտ գույնի։ Վերջին տեսակի արհեստանոցները պետության կողմից տրվում էին կապալով։ Բացի Երևանից, ներկարարներ կային Շուշի, Նախիջևան, Օրդուբադ քաղաքներում և այլուր։ Ներկարարները կամ կապալառուները ներկելու համար կարող էին վերցնել միայն ըստ սակագնի սահմանված վարձ։

Արևելյան Հայաստանում ցանվող գյուղատնտեսական կուլտուրաների մեջ արդյունաբերական նշանակություն ունեին կտավհատը և բունջուքը։ Այս կուլտուրաներն օգտագործվում էին բուսական բարձրորակ յուղ ստանալու համար։ Երևանի և Նախիջևանի խանություններում կային շուրջ 285 ձիթհաններ, որոնցից, սակայն, նկարագրվող ժամանակաշրջանում գործում էին միայն 25-ը՝ տալով մինչև 15000 փութ արտադրանք[123]։ Արտադրվում էր նաև կանեփի ձեթ, որն օգտագործվում էր տնային լուսավորության համար։

Դեռ հնուց ի վեր Հայաստանում մեծ տարածում ուներ բրուտագործությունը։ Գրեթե բոլոր մահալներում էլ կային բրուտանոցներ, որտեղ կավից կարասներ էին պատրաստում գինու և հացահատիկի համար, կժեր՝ ջրի համար և կավե թասեր՝ կերակուրի համար։ Որոշ դեպքերում այդ նույն բրուտանոցներում թրծում էին նաև աղյուսներ։

Երևանի և Նախիջևանի խանություններում կային մեծ քանակությամբ ջրաղացներ և դինգեր։ Ջրաղացների թիվը հասնում էր 2589-ի, որոնցից գործում էր միայն 1456-ը։ Դինգերի թիվը ավելի քիչ էր՝ 221, որից գործում էր 138-ը։ Դինգերում չալթուկը թեփահանվում էր, և ստացվում էր բրինձ։ Խոշոր ջրաղացներում աղացվում էր օրական մինչև մեկ խալվար, իսկ փոքրերում՝ 15—20 բաթման ցորեն։ Մեկ խալվար չալթուկից ստացվում էր կես խալվար լավորակ և մինչև 60 բաթման վատորակ բրինձ[124]։ Այդ տարիներին Կարապետ անունով նշանավոր մի հայ վարպետ, որն իր հնարամտության համար ստացել էր «շեյթան»

[123] Նույն տեղում, էջ 861։

[124] Նույն տեղում, էջ 863—865։

կամ «սատանա» մականունը, ջրի ուժով գործող երկու խոշոր դինգեր էր կառուցել Երևանում և Վաղարշապատում, որտեղ աշխատողների պարտքը միայն այն էր, որպեսզի անընդմեջ հետևեին աշխատանքին, առանց ֆիզիկական ճիգ կամ ջանք թափելու[125]։ Սակայն նման տիպի ձեռնարկությունները խիստ եզակի երևույթ էին։

Հիշյալ ժամանակաշրջանում խիստ տարածված արհեստ էր վարսավիրությունը։ Վարսավիրները ոչ միայն հարդարում էին մազերը և սափրում, այլև յուրահատուկ բուժակներ էին, որոնք, օգտագործելով ժողովրդական բժշկությունը, վերքեր էին բուժում, հարկ եղած դեպքում «արյուն առնում» և այլն։

19-րդ դարի սկզբներին Երևանում գործել են նաև արդյունաբերական տիպի մի շարք ձեռնարկություններ՝ «գործարաններ»։ Դրանք էին՝ ապակու, թնդանոթաձուլական և վառոդի «գործարանները»։

Ապակու այսպես կոչված գործարանը գտնվելիս է եղել մի կիսամութ խրճիթանման շենքում, որտեղ ապակու զանգվածը ձուլվել է մի մեծ տաշտում, որը պարունակել է մինչև 25 փութ ապակի։ Ձուլման պրոցեսը տևել է հինգ օր, որի ընթացքում օրական 100 մինչև 200 կտոր յոթ տարբեր գույներ ունեցող ապակիներ են ստացվել։ Արտադրանքը հիմնականում յուրացվել է Երևանում[126]։

Թնդանոթաձուլական գործարանի մասին հատ ու կենտ տեղեկություններ են պահպանվել, որոնք վկայում են, որ դա, ըստ երևույթին, եղել է մի սովորական զինագործական արհեստանոց, որտեղ Երևանի բերդի պաշտպանության համար փոքր քանակությամբ թնդանոթներ են ձուլվել, գուցե, որը և ավելի հավանական է, վերանորոգվել։ Այդ «գործարանը» իր գոյությունը դադարեցրել է 1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ[127]։

Վառոդի գործարանը գտնվում էր բերդի մոտ և կառուցվել էր վերը հիշված Կարապետ անունով հայ վարպետի ձեռքով։ Ինչպես վկայում է Մեսրոպ Թաղիադյանցը, վերոհիշյալ գործարանը նման է եղել շոգու ուժով աշխատող գործարանի, շարժման մեջ է դրվել Զանգու գետից հանած առվի միջոցով[128]։ Այս ձեռնարկությունը, հավանաբար, օգտագործել է վառոդ պատրաստելու տեղական բնակչության փորձը։ Նա էլ, նախորդ

[125] **Մ. Թաղիադեանց,** Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 39—40։

[126] **И. Шопен,** Նշվ. աշխատ., էջ 858—859։

[127] Տե՛ս **Հ. Հակոբյան,** Ուղեգրություններ, հ. Զ, էջ 323։

[128] Ճանապարհորդութիւն Մ. Դ. Թաղիադեանց Վ. Ա. Սարկաւագի սբ. Էջմիածնի ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 129, **Թ. Հակոբյան,** Երևանի պատմություն, հ. 3, էջ 88—89։

զույգ ձեռնարկությունների նման, կյանքի է կոչվել պարսկական տիրապետության վերջին ժամանակաշրջանում և չքացել թատերաբեմից նախաձեռնողների հետ միասին։

Չնայած հանքային հարուստ պաշարների առկայությանը, Արևելյան Հայաստանում 19-րդ դարի սկզբին, խանական կառավարչության ժամանակ, լեռնագործությունը ետ էր մնում։ Հանքատեսակներից արդյունահանվում էր միայն աղ և փոքր քանակությամբ պղինձ։ Աղի հանքավայրերից հայտնի էին և ամբողջ Անդրկովկասում հռչակված Կողբի, մասամբ նաև Նախիջևանի աղահանքերը։

Կողբի աղահանքերը գտնվում էին Արաքս գետի աջ ափին, Սարդարաբադից 30, Երևանից 40 կմ հեռավորության վրա։ Հետևյալ կերպ է նկարագրում Կողբը և Կողբի աղահանքերը գեկաբրիստ Ե. Լաչինովը. «Կողբ ավանը շրջապատող սարերը անսովոր ձև ունեն. սրածայր բլուրները, ժայռերի կտրված գագաթները, զառիթափ ձորակները, ալիքավոր տեղադրությունը, այգիները գեղեցիկ և բազմազան տեսարան են ներկայացնում։ Գյուղը վատ է և արտաքինից աղքատիկ, թեև բնակիչները պետք է որ ունևոր լինեն, որովհետև նրանք ունեն ամբողջ երկրամասի հարստության անսպառ աղբյուրը՝ դրանք ազի սարերն են։ Աղի հանույթը կատարվում է համարյա գետնի մակերեսի վրա։ Աղի հանույթից առաջացած և վերին շերտերը պահելու համար թողնված աղե սյուներով մեկը մյուսից անջատված հսկայական դահլիճները ծառայում են որպես աշխատանքի տեղ։ Կոտրատվում են համարյա 2 փթանոց սալաքարեր, որոնք և տեղափոխվում են Վրաստան ու Հարևան բոլոր շրջանները։

...Կարելի է համարձակ ասել, որ Վոլիչկայի աղահանքերը հանույթի հարմարության, գուցե և հանքի հարստության տեսակետից պետք է զիջեն սրանց։ Հիանալի սպիտակ աղ է և հազիվ թե ետ մնա պերմյանկայից»[129]։ Աղի հանույթով զբաղվում էին 173 ընտանիքից (1118 շունչ) բաղկացած Կողբ գյուղի բնակիչները, բոլորն էլ հայեր։ Այդ աշխատանքը առանձին դժվարությունների հետ կապված չէր, քանի որ աղաքարի շերտը խիստ մոտ էր գտնվում գետնի մակերևույթին։ Գյուղի տղամարդիկ գլխովին զբաղված էին աղի հանույթով։ Յուրաքանչյուր տղամարդ կարող էր օրական մինչև 30 աղաքար հանել, ամեն մի քարը՝ մոտ 2 փութ ծանրությամբ[130]։ Կողբում արտադրած աղը արտահանվում էր Վրաստան և Թուրքիայի սահմանամերձ փաշայությունները։

Որպեսզի որոշեին, թե որքան աղ է հարկավոր արդյունահանել տրվյալ տարում, Կողբի բնակիչները ընտրում էին իրենցից գործունյա և ճարպիկ մարդիկ, որոնց ուղարկում էին հարևան շրջանները, պայմանավորվելու աղի վաճառքի մասին, ինչպես նաև համաձայնության գալու շրջանների իշխողների հետ, որպեսզի ապահովեն աղի քարավանների անխափան գնացքը։

Կողբի աղի հանույթը մինչև 1807 թվականը, այսինքն Մամադ խանի իշխանության տարիներին, աննշան է եղել, միայն հետագայում, Հյուսեին Ղուլի խանի իշխանության ժամանակ է հատուկ ուշադրություն դարձվում աղի հանույթի վրա։ Նա աղհանքերի կառավարումը դնում է հատուկ սուլթանի վրա, նրան ռոճիկ է նշանակում, ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով։ Այդ սուլթանին օգնականներ են նշանակվում երեք միրզաներ, որոնցից մեկը՝ պարսիկ, որը պետք է արտադրության հաշիվները տաներ՝ 20 թումանի և բնամթերքի վարձատրությամբ, և երկու հայեր, որոնք յուրաքանչյուր վաճառված բեռից ստանում էին 2 կոպեկ արծաթ։ Այդ բոլորի հետևանքով Կողբի աղհանքերը նախկին 300 թումանի դիմաց սկսել էին տարեկան 1400 թումանի եկամուտ տալ։

Յուրաքանչյուր բեռ (մեկ բեռը՝ 4 քար էր կամ 7—8 փութ) աղի համար աղ արդյունահանողները ստանում էին 16 կոպեկ, մինչդեռ սարդարի օգտին մնում էր 80 կոպեկ, պահակային ծառայության համար՝ 4 կոպեկ, միրզաների օգտին՝ 2 կոպեկ. այսպիսով, գնորդի վրա մեկ բեռ աղը նստում էր 1 ռուբլի 2 կոպեկ։

Եթե աղը սայլով էին տանում (մեկ սայլը տանում էր 25—30 քար՝ մինչև 60 փութ ծանրությամբ), ապա աղ չարդողները ստանում էին 1 ռուբլի, մինչ սարդարին հասնում էր 3 ռուբլի 20 կոպեկ, պահակային ծառայությանը՝ 20 կոպեկ, սուլթանի օգտին՝ 5 կոպեկ։ Գնորդի վրա, այսպիսով, մեկ սայլ աղը նստում էր 4 ռուբլի 45 կոպեկ։

Սակայն սա միայն տեղում։ Քարավան-բաշին էլ իր հերթին յուրաքանչյուր սայլից վերցնում էր 7 ռուբլի։ Թալինի բերդում նստող սահմանակալ Կաֆար խանը պահակների համար վերցնում էր 20—40 կոպեկ, պարսկական աստիճանավորներին էլ քարավան բաշու կողմից մոտ մեկ ռուբլու փեշքեշ էր տրվում և այսպիսով ծախսերի ընդհանուր գումարը հասնում էր շուրջ 8 ռուբլու, այսինքն յուրաքանչյուր քարաղի արժեքը դառնում էր 25 կոպեկ։

Կողբի բնակիչները իրավունք ունեին ձրի օգտվել աղից իրենց կարիքների համար և, բացի այդ, 200 բեռ աղ էլ վաճառել լոկ իրենց օգտին։

[129] Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 364։

[130] Իսկ Վոսկոբոյնիկովի հաղորդած տեղեկությունների համաձայն աղահատները կարող էին օրական սոսկ 10 աղաքար և ոչ ավելին պատրաստել, ընդամենը 16 փութ (Տե՛ս АКАК, т. VII, док. 95)։

Կողբում կար 34 բինաչա, որոնցից յուրաքանչյուրը տարեկան վճարում էր մոտ 8 թուման հարկ, իսկ բնամթերքով գանձվում էր ստացված բերքի 1/3 մասը։ Հարկագումարը մուծելու փոխարեն հաճախ կողբեցիները սարդարի համար աղ էին տեղափոխում Երևան։ Այդ դեպքում յուրաքանչյուր բեռը հաշվվում էր որպես 2250 դիան և դուրս էր գրվում հարկագումարից[131]։

Կողբի բնակիչները պարտավորություններ ունեին նաև էջմիածնի վանքի նկատմամբ։ Ըստ սովորության, յուրաքանչյուր տուն Մայր աթոռին տալիս էր երկու բեռ աղ։ Հարսանիքի կամ թաղման դեպքում տրվում էր երեք բեռ աղ[132]։ Այս նպատակով ամեն տարի կաթողիկոսի կողմից Կողբ էին ուղարկվում հատուկ նվիրակներ, որոնք հավաքում էին այդ կամավոր տուրքը և շատ դեպքերում իրենց իսկ՝ կողբեցիների փոխադրամիջոցներով հասցնում էջմիածնի վանքը[133]։ Այսպիսով, էջմիածինը տարեկան ստանում էր 300—400 բեռ աղ առանց որևէ վճարի։

Նախիջևանի աղահանքերը գտնվում էին Խոկի մահալում, Նախիջևանից 10 վերստ հեռավորության վրա։ Այդ աղահանքերին կցված էր, նույն հիմունքներով, ինչպես և Կողբը, Շեյխ-Մահմուդ գյուղը։ Գյուղի բնակիչները բաժանվում էին վեց հոգուց բաղկացած խմբերի և աղը հանում էին վառոդի միջոցով պայթեցումներ կատարելով։ Այդ պատճառով էլ այստեղ հաճախակի էին լինում դժբախտ պատահարներ, որոնց զոհ էին գնում ոչ միայն հանքափորները, այլև գնորդները, որոնք հիմնականում հարևան մահալներից էին և Ղարաբաղից։ Պատահական չէր, որ հանքերից մեկը կոչվում էր Ղանլը (արյունոտ), որովհետև փլուզման հետևանքով զոհ էին գնացել 20 հանքափորներ։ Նախիջևանի աղահանքերը նույնպես կապալով էին տրվում։ Մինչև 18-րդ դարի վերջերը, Կաջարների դինաստիայի հաստատումը, կապալի համար տարեկան վճարում էին 30 մինչև 300 թուման։ 19-րդ դարի սկզբին կապալավարձը բարձրացավ ռուսական դրամով մինչև 4000 ռ. արծաթով։ Հիմնականում աղահանքերը կապալով վերցնում էր Շեյխ-Մահմուդ գյուղի մելիքը։ Աղը վաճառվում էր տեղնուտեղը, բաթմանը 8 կոպ., իսկ ամեն մի բեռից (8 բաթմանից) գանձվում էր 8 կոպ., այնպես որ յուրաքանչյուր բաթմանը փաստորեն վաճառվում էր 9 կոպեկով[134]։ Քար կտրողներն

[131] Տե՛ս **Шопен И.**, նշվ. աշխատ., էջ 820—832։

[132] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 27, վավ. 132։

[133] Նույն տեղում, ձեռագիր 3743, թ. 56բ։

[134] Տե՛ս АКАК, Т. VII, док. 95։

այստեղ հաճախ էին ընդվզում, խլում էին կապալառուի ձեռքից դրամը և այնքան աղ էին վերցնում իրենց համար, որքան կամենում էին[135]։

Արևելյան Հայաստանի պարսկական տիրապետության տակ գտնվող շրջաններում արդյունահանվում էր նաև պղինձ։ Պղնձի հանքավայրերը գտնվում էին Դարալագյազում և Դարաչիչագում։ Օգտագործվում էին հատկապես Դարաչիչագում գտնվող Միսխանայի[136] հանքերը։ Սարդարական կառավարության վերջին տարիներին այստեղ բնակություն էին հաստատել մի շարք հույն ընտանիքներ, որոնք և զբաղվում էին պղնձի արդյունահանությամբ։ Բայց ինչպես պղնձի հանույթը, այնպես էլ ստացված շահը խիստ աննշան էր և առանձին զարգացում չունեցավ[137]։

Հիմնավորվելով Անդրկովկասում, ցարական կառավարությունը միջոցներ ձեռք առավ երկրամասի բնական հարստությունների շահագործման ուղղությամբ։ Այդ նպատակով դեռևս 1799 թվականին Անդրկովկաս ուղարկվեց լեռնային գործի լավագույն գիտակներից մեկը, բերգ-կոլեգիայի անդամ կոմս Ա. Ա. Մուսին-Պուշկինը, որը զգալի գործունեություն ծավալեց առաջին հերթին Ալավերդու պղնձահանքերի և Ախթալայի արծաթահանքերի ուսումնասիրության և մշակումը կազմակերպելու ուղղությամբ։ Լեռնային գործի հաջող կազմակերպման համար Մուսին-Պուշկինին տրամադրվեց 12 հազար ռուբլի տեղական եկամուտներից։ Այդ նույն նպատակով Կոլիվանո-Վոզնեսենսկի և սիբիրյան այլ գործարաններից բերվելու էին հմուտ վարպետներ[138]։ 1802 թվականի հունիսի 2-ին Մուսին-Պուշկինը պայմանագիր է կնքում Միսխանայի (Ալավերդու) նախկին կապալառուների և հանքագործ վարպետների հետ, որի հիման վրա կարգավորվելու էին հարաբերությունները պետության և պղնձահանքերի կապալառուների միջև։ Պետությունը պարտավորվում էր գյուղացիական կարգախմբեր տրամադրել փայտածուխ պատրաստելու և հանքավայրերը տեղափոխելու համար։ 1803 թվականի փետրվարի 3-ին պայմանագիր է կնքվում Լոռու կալվածատերեր Արղության-Երկայնաբազուկների և Մելիքովների հետ, որոնք պետք է հանքավայրերը և հարակից հողամասերն ու անտառները տրամադրեին պետությանը՝ հանքերը շահագործելու համար[139]։

[135] **Шопен И.**, նշվ. աշխատ., էջ 834—837։

[136] Պետք է նկատի ունենալ, որ այդ ժամանակաշրջանում բոլոր պղնձահանքերը, որտեղ էլ որ նրանք գտնվելիս լինեին՝ Ալավերդիում, Դարաչիչագում, թե Ղափանում, այդպես էին անվանվում։

[137] **Шопен И.**, նշվ. աշխատ., էջ 816, **Մ. Թադիադյան**, նշվ. աշխատ., էջ 75։

[138] Տե՛ս ЦГИА СССР, ф. «Ревизия Мечникова и Кутайсова», оп. 1, 1830 г., лл. 382—383։

[139] Տե՛ս ЦГИА СССР, ф. 866, оп. 1, д. 162, лл. 462—462 об։

1816 թ. գործարանների պետական շահագործումը դադարեցվում է և իրավունք է վերապահվում հանքարդյունաբերողներին՝ սեփական միջոցներով և ազատ տնօրինել պղնձագործարանները, փոխարենը կալվածատերերին տրամադրելով արդյունքի 10-րդ մասը։

Լեռնային գործի հաջող կազմակերպումը, սակայն, կապված էր բավական խոշոր դժվարությունների հետ։ Դեռևս վրաց թագավոր Գեորգի 12-րդը կարգադրել էր, որպեսզի կալվածատերերը՝ իշխաններ Արղությանը և Մելիքովը Միսխանայի և Ախթալայի հանքերին տրամադրեն 159 ածխագործներ և փուքս փչողներ, իսկ 35 հոգի էլ պետք է տրամադրեր Մելիք Արովը։ Բայց վերջինս, հենվելով Պավել 1-ինի 1799 թվականի հրամանագրի վրա, որի համաձայն Վրաստանում հայ մելիքները պետք է օգտվեին նույն իրավունքներից և արտոնություններից, ինչ որ ունեին Ղարաբաղում, հրաժարվում է մարդիկ տրամադրել գործարանային աշխատանքների համար։ Գյուղացիներն իրենց հերթին խուսափում էին գործարանային հյուծիչ աշխատանքներից, առավել ևս, որ կանոնավոր վարձատրություն չէին ստանում։ Գործարաններին ամրակցված Ղազախի հայ գյուղացիների վիճակն այնքան ծանր էր, որ 1803 թվականի բակրզբներին կառավարությունը հարկադրված եղավ նրանց ազատել նախորդ տարվա հարկերը վճարելուց։ Ամրակցված 500 գերդաստաններից 1803 թվականին 350-ը փախել էին, թողնելով ամբողջ ծանրությունը մնացածների ուսերին[140]։ Վարձակալ հույները չէին կարողանում վճարել գյուղացիներին, քանի որ պղնձի արտադրանքը կառավարությունը չէր գնել, իսկ ազատ վաճառքը արգելել էր[141]։

Գյուղացիներին շվրդովելու և երկրագործական աշխատանքներով զբաղվելու հնարավորություն տալու նկատառումով, գործարանային իշխանությունները պարտավոր էին նրանց ազատ թողնել ցանքսի և հնձի օրերին և օժանդակ գործարանային աշխատանքներում օգտագործել միայն գյուղատնտեսական գործերից ազատ ժամանակ։ Գործարանային իշխանությունները պարտավոր էին գյուղացիների վարձը վճարել առանց պահումների, իսկ աշխատանքները խելացի կազմակերպելու համար՝ նրանց հանձնարարել որոշակի պարտականություններ։ Ամրակցված ամեն մի գյուղ պետք է ձիավոր և հետևակ աշխատողներ տրամադրեր, որոնցից առաջինները ամսական ստանալու էին 6 ռուբլի, վերջինները՝ 4 ռուբլի 50 կոպեկ։ Դրա փոխարեն ձի ունեցող գյուղացիները պարտական էին ամեն ամիս 6 խորանարդ սաժեն փայտ կտրել և 60

[140] Присоединение...», т. 1, ст. 29—30, 150.

[141] Նույն տեղում, վավ. 113:

բեռ ածուխ փոխադրել գործարանները, իսկ ածխագործները պետք է 6 խորանարդ սաժեն ածուխ պատրաստեին։ Մյուս աշխատանքներում օգտագործվող գյուղացիները պետք է օրական 10—12 ժամ աշխատեին։ Պղնձի գործարանները տանող ճանապարհների և կամուրջների վերանորոգումը պարտադրվում էր մոտակա գյուղերի բնակիչներին, որոնք օրական 10—15 կոպեկ վարձ էին ստանում[142]։

Սակայն այդ կարգադրությունն էլ բավարար չէր, վարձատրությունը խիստ ցածր էր, և գյուղացիները շարունակում էին խուսափել գործարանային աշխատանքներից, մանավանդ, որ գործարանային իշխանությունները չէին կատարում իրենց պարտավորությունները։ Չէին օգնում նաև էկզեկուցիաները։ Ծանր էր նաև Սիբիրից բերված ռուս վարպետների վիճակը, որոնք այնպես էլ չկարողացան բարելավել իրենց դրությունը, չնայած կառավարության տված նպաստներին[143]։

Պղինձ արտադրվում էր փոքր քանակությամբ՝ 7500 փութ, որը հիմնականում օգտագործվում էր տեղական արհեստավորների կողմից, տնային գործածության իրեր պատրաստելու համար։ Այդ տարիներին Անդրկովկաս այցելած անգլիացի Ջոնսոնը գրում էր, որ «կառավարությունը մտադիր է քաջալերել պղնձի ամանեղենի արդյունաբերությունը Թիֆլիսում, որպես առևտրի առարկա։ Փաստորեն պատրաստի պղնձի քանակությունը այնքան շատ է, որ նրանք բավական արժանավոր իտալացի մի արտիստի ղեկավարությամբ արձաններ են ձուլում, նա իր վարձը ստանում է կառավարությունից։ Կարծում եմ, որ սկսած են ձուլել նաև փոքրիկ դաշտային թնդանոթներ»[144]։

Արտադրվում էր նաև փոքր քանակությամբ երկաթ և շիր։ Ելիսավետպոլի օկրուգի Բայան, Կուշչի, Սողիդ, Զավդիր և Թաշքայան հայկական գյուղերում բնակչությունը երկաթ էր մշակում և մինչև 1809 թվականը 250-ական փութ երկաթ հանձնում իբրև հարկ[145], Զագլիկ գյուղի բնակիչները արտադրում էին շիր։ Մասնավորապես 50 ծխից բաղկացած Բայան գյուղի վերաբերյալ 1805 թվականին գեներալ Ցիցիանովը կարգադրում է Ելիսավետպոլի պարետ գնդապետ Կարյագինին հետևել որպեսզի տարեկան 500 փութ երկաթ հանձնեն պետությանը, յուրա

[142] Նույն տեղում, վավ. 125, 132, 139, 163:

[143] «Присоединение...», т. 1, док. 344.

[144] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 660:

[145] Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 2, оп. 1, 1819 г., д. 724, лл. 2—3.

քանչյուր ծխից 10 փութ, այն հաշվով, որ եթե բնակչությունը աճի, մեծանա և երկաթի արտադրությունը[146]։

Ինչպես ռազմա-ստրատեգիական նպատակները, այնպես էլ առևտրատնտեսական շահերը պահանջում էին ցարական կառավարությունից յուրացնել և դրանով իսկ իրեն ենթարկել Անդրկովկասը։ Այդ նպատակամղումով էլ ցարական իշխանությունները շահագրգռված էին և հետևում էին երկրամասի տնտեսության հատկապես արդյունագործական ճյուղերի զարգացմանը։

Արհեստավորներն ունեին իրենց կազմակերպությունները, որոնք կոչվում էին համքարություններ կամ էսնաֆություններ։ Արհեստի միևնույն ճյուղով զբաղվող արհեստավորները մտնում էին իրենց առանձին համքարության մեջ և առաջնորդվում էին տվյալ համքարության սկզբունքներով։ «Պարսկական տիրապետության շրջանից,— գրում էր Ա. Հաքստհաուզենը,— արհեստավորները միավորված են ցեխերում ըստ պարսկական օրենքների, բայց ոչ այնպես բացառիկորեն, ինչպես Վրաստանում։ Նոր վարպետները նույնպես հանդիսավոր կերպով են ձեռնադրվում։ Հայտնի տոնախմբությունների և հասարակական արարողությունների ժամանակ ամեն մի արհեստ ներկայացվում է համքարության կողմից։ Հայ և թուրք արհեստավորները առանձին համքարություններ են կազմում։ ...Համքարությունը ընտրում է իր ավագին, որ դատական իշխանություն ունի և ենթավարպետին վարպետ է ձեռնադրում, որի դեպքում առաջինը ծունկի է գալիս նրա առջև և ստանում է հարված»[147]։ Համքարությունների անդամների միջև միավորող կապը տընտեսական, կրոնական, իրավական, վարչա-դատական, հասարակական շահերի և, որ գլխավորն է, փոխադարձ անշահախնդիր օգնության գաղափարն էր[148]։ Համքարության անդամների թիվը չէր սահմանափակվում։ Նրանցից յուրաքանչյուրը կարող էր ուղած ժամանակ դուրս գալ մեկ համքարությունից և անդամագրվել մեկ ուրիշ համքարության։ Պատահում էր, որ միևնույն արհեստի տեր մարդիկ ունենում էին մի քանի համքարություններ։ Այսպես, սափրիչները, դարբինները, մազմանները և այլն կարող էին միևնույն վայրում միաժամանակ մեկից ավելի համքարություններ ունենալ։

Արևելյան Հայաստանի քաղաքներում հասարակական-դասակարգային շերտավորումը թույլ էր արտահայտված, մի բան, որ ակներև է նաև արհեստավորական և առևտրական համքարությունների կազմակերպման ու գործունեության մեթոդներից։ Համքարությունները արհեստավորների, առևտրականների հասարակության տարբեր շերտերի պատկանող, բայց իրենց որոշակի զբաղմունքն ունեցող անձանց կազմակերպություններ էին, որոնք չէին սահմանափակում մուտքը իրենց մոտ և գործում էին որոշակի կանոնադրություններով, որոնք բանավոր և, որոշ դեպքերում էլ, գրավոր էին։

Այստեղ հարկ է ընդգծել, որ էջմիածնի դերը համքարությունների կազմակերպական կյանքում բավական խոշոր էր։ Եփրեմ կաթողիկոսի ստորագրությամբ հաստատվել էր «սահմանադրություն» արևելյան համքարությունների համար, ընդ որում նույնիսկ Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Բաբերդի էսնաֆությունները խնդրել էին, որ իրենց էլ ուղարկեն այդ սահմանադրության «պատկերը», որպեսզի իրենք էլ իրենց մոտ այն հաստատելով՝ կարգավորեն հասարակական հարկերը, որ մուծում էին էսնաֆությունները, և գործեն համաձայն այդ սահմանադրության[149]։ Մատենադարանում պահպանվել է «Ցաղգաս արհեստաւորաց» խորագրով 48 կետերից բաղկացած մի կանոնադրություն, որտեղ հանգամանորեն մատնանշվում է, թե ինչպիսի պարտավորություններ ունեն արհեստավորները և ինչպիսին են նրանց փոխհարաբերությունները[150]։

Բացի այդ, տվյալ կանոնադրության հաստատումը ամենայն հայոց կաթողիկոսի կողմից վկայությունն է այն բանի, որ համքարությունների համար էջմիածնի աթոռը և նրա գահակալը հանդիսացել են մի տեսակ պետական ֆունկցիաների կրողներն այդ նույն համքարությունների համար, ուղղություն են տվել և կանոնավորել նրանց գործունեությունը։ Այդ երևույթը, անշուշտ, ավելի է մեծացնում էջմիածնի աթոռի նշանակությունը հայ հասարակական կյանքում, ապացուցելով, որ պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար նա ինչ որ չափով հանդիսանում էր պետականության մարմնավորում։

Համքարությունները ղեկավարում էին տվյալ համքարության անդամների կողմից ընտրված վարպետաց վարպետները՝ ուստաբաշիները։ Եվ եթե համքարության անդամները շեղվում էին իրենց կանոնադրու-

---

[146] Տե՛ս ЦГИА СССР, ф. «Ревизия Мечникова и Кутайсова», оп. 1, 1830 г., лл. 403—403 об.

[147] А. фон-Гакстгаузен, Закавказский край, СПб., 1857, стр. 165.

[148] С. А. Егиазаров, Նշվ. աշխ., մաս 2, էջ 2։

[149] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 53, վավ. 8։

[150] Նույն տեղում, Ձեռ. № 448, թ. 249—262, նաև Վ. Ա. Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18—20-րդ դարի սկիզբը), Երևան, 1971, էջ 176—180։

թյունից, ապա ուստաբաշին էր, որ պետք է հետևեր նման երևույթների վերացմանը։

Համքարությունների ոգուն խորթ էր մենաշնորհի ձգտումը։ Համքարության անդամների միջև հումքի բաշխումն այնպես էր կատարվում, որպեսզի այն հավասարաչափ բաժանվեր։ Համքարության առանձին անդամներն իրավունք չունեին առանց ուստաբաշու և նրա օգնականների գիտության մասնավոր գործարքների մեջ մտնել՝ հումք գնել, խանութներ վարձակալել և այլն։ Արտադրանքը ռեգլամենտավորված չէր, իսկ ցածրորակ արտադրանքի դեպքում հատուկ դատով որոշվում էր բողոքի իսկությունը, որից հետո ցածր որակի ապրանք արտադրած արհեստավորը ենթարկվում էր տույժի։

Արհեստանոցները մեծ մասամբ տեղավորված էին լինում շուկաներում և հրապարակներում, որտեղ, սովորաբար, յուրաքանչյուր համքարություն իր շարքերն էր ունենում։ Ապրանքները արտադրվում և վաճառվում էին տեղում։ Իսկ այնպիսի արհեստներ, որոնք կապված էին վտանգավոր և վնասակար մնացուկներ թողնող արտադրության հետ, տեղավորվում էին քաղաքի ծայրամասերում, գետի ափին։ Օրինակ, Երևանում Հրազդանի ափին էին գտնվում բոյախանաներն ու դաբաղխանաները, իսկ շիլաչիների արհեստանոցները կենտրոնացված էին քաղաքածայրում գտնված Շիլաչի թաղամասում՝ Գետառի ափին։

Համքարությունները միաժամանակ, որոշ իմաստով, նաև կրոնական համայնքի բնույթ էին կրում։ Յուրաքանչյուր համքարություն ուներ իր սուրբը կամ «փիրը», որը համարվում էր տվյալ արհեստի հովանավորը։ Երևանի ատաղձագործների համքարության «փիրը» եղել է աստվածահայր Հովսեփը, կաշեգործների համքարությանը՝ Սիմեոն ծերունին, դարբիններինը՝ Դավիթ մարգարեն, մաշակարներինը՝ Մելքիսեդեկը և այլն[151]։

Հիշյալ սրբերի եկեղեցական օրացույցով սահմանված տոների օրերին համքարությունները կազմակերպել են շքեղ տոնահանդեսներ, մատուցել են տվել պատարագ, «մատաղ» են արել և բաժանել աղքատներին և այլն[152]։ Երևանի համքարությունները նման տոնահանդես կատարել են քաղաքի Շահար թաղամասի Գեթսեմանի մատուռում։

Համքարություններն ունեին իրենց խաչվառի ձև ունեցող դրոշները, որոնց վրա նկարված էր լինում համքարության հովանավոր սրբի պատկերը։ Եկեղեցական թափորների ժամանակ, կաթողիկոսին հանդի-

[151] Տե՛ս Ե. Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 79։

[152] Егиазаров С. А., Նշվ. աշխատ., էջ 208—210։

սավոր կերպով դիմավորելու և այլ դեպքերում համքարության անդամները դուրս էին գալիս իրենց դրոշներով և հանդեսներին շքեղ բնույթ հաղորդում։

Համքարությունների հիմնական և նրանց անդամներին միմյանց ամուր կերպով շաղկապող սկզբունքը եղել է փոխօգնության գաղափարը։ Համքարությունները, ինչպես միջնադարյան Եվրոպայի քաղաքային համքարությունները, մերժում էին ամեն տեսակի ազատ մրցակցություն և տնտեսական անհավասարություն։ Համքարության անդամների միջև հավասարաչափ պետք է լիներ ինչպես աշխատանքի, այնպես էլ վաստակի բաժանումը։ Նման բաշխման նպատակն էր համքարության բոլոր անդամներին միջին կարողությամբ ապահովելը։ Հավասարության նման սկզբունքի կիրառումը հնարավորություն էր տալիս օգնելու հիվանդ կամ հաշմանդամ դարձած արհեստակիցներին, նրանց մահվան դեպքում՝ նրանց ընտանիքներին, որպեսզի վերջիններս սովի ու մուրացկանության գիրկը չընկնեն։ Համքարությունները հոգ են տարել, որպեսզի իրենց անդամները բարոյապես մաքուր լինեն, պահպանեն ընտանեկան սրբությունը։ Բարոյազուրկ անդամները ենթարկվում էին տույժի, իսկ երբ շարունակում էին իրենց վատ վարքագիծը, ապա անգամ վտարվում էին համքարության շարքերից[153]։

Սակայն այդ ամենը չի նշանակում, որ համքարությունները բոլորովին ինքնամփոփ և հասարակությունից կտրված միավորներ էին։ Ընդհակառակը, նրանք գործում մասնակցություն էին ունենում քաղաքային կյանքին, նրա բարեկարգմանը և այլն։ Նրանք իրենց լուման էին մտցնում նաև զանազան բարեգործական ձեռնարկություններում։

Համքարության անդամներին դժվարության դեպքում օժանդակելու, բարեգործական ձեռնարկումներին նպաստելու գործում մեծ դեր էին խաղում համքարությունների գանձարկղները (խազնաները)։ Այդ գանձարկղներում դրամական միջոցները տարբեր ճանապարհներով էին կուտակվում։ Հիմական եկամուտը գոյանում էր այն մուծումներից, որ կատարում էին համքարության լիիրավ անդամները՝ վարպետները։ Այդ մուծումները լինում էին տարբեր չափի՝ համաձայն տվյալ անդամի ունևորության աստիճանի, ընտանիքի անդամների թվաքանակի և այլն։ Համքարության մեջ մտնող յուրաքանչյուր նոր անդամ նախապես որոշ քանակությամբ դրամ էր մուծում։ Համքարությունների եկամտի մյուս կարևոր աղբյուրն էլ տուգանքներն էին, որոնք գանձվում էին համքարության սահմանադրության կանոնները խախտած անդամներից։ Այսպես

[153] Մատենադարան, Ձեռ. № 448, կետ 39 և 40։

կոչված «դաստուրհացը» այն վճարումն էր, որ կատարվում էր վարպետացուների կողմից, երբ նրանք արդեն ինքնուրույն աշխատանքի իրավունք էին ստանում։ Այդ դրամով ճաշկերույթ էր կազմակերպվում համքարության անդամների համար։

Համքարությունը ղեկավարելու համար ընտրվում էր ուստաբաշի (վարպետների գլուխ կամ գլխավոր վարպետ), ուստաբաշու օգնական կամ աղսախկալ, գանձապահ (խազնադար) և իգիթբաշի[154]։ Սրանց ընտրում էին համքարության անդամների ընդհանուր հավաքույթում։ Ընտրություններից հետո ուստաբաշին ու աղսախկալները տնօրինում էին համքարության գործերը, համքարության ու քաղաքային իշխանությունների փոխհարաբերությունները։

Գլխավոր վարպետն ու նրա օգնականները կատարում էին նաև համքարության ընկերային դատարանի ֆունկցիաները։ Նրանց իրավասությանը ենթակա էին ոչ քրեական բնույթի գործեր, իսկ վճիռները կրում էին տուգանքների և մարմնական պատիժների բնույթ։ Խիստ մանր հարցերը ուստաբաշին կարող էր լուծել միայնակ, առանց իր օգնականի կամ օգնականների գիտության[155]։

Ուստաբաշու և աղսախկալների վարձատրությունը կազմվում էր այն նվերներից, որ նրանք ստանում էին համքարության մեջ նոր անդամ ընդունելիս, դատական բնույթի վեճեր լուծելիս։ Համքարության համար ապրանքներ գնելիս նրանք տոկոսներ էին ստանում ապրանքի վաճառորդներից։ Բացի այդ, նրանք ազատ էին համքարության ընդհանուր գանձարկղը կատարվող որոշ մուծումներից։

Համքարության մեջ կարևոր դերք էր գրավում գանձապահը, որն ընտրվում էր գրագետ համքարներից, որոնց ազնվությունը կասկածի ենթակա չէր։ Գանձապահը, անկախ գլխավոր վարպետներից ու աղսախկալներից, պատասխանատու էր միայն ընդհանուր հավաքույթի առաջ, որտեղ պարբերաբար հաշիվ էր տալիս եկամուտների մասին։ Գանձապահի պարտականությունն էր անդամավճարների, հասարակական հարկի, տուգանքների հավաքումը և պահպանումը գանձարկղում։

Իգիթբաշու պարտականությունները այդպիսիք էին. նա պետք է տվյալ համքարության բոլոր անդամներին տեղյակ պահեր ուստաբաշու և նրա օգնականների կողմից ընդունված որոշումների մասին, հաղորդեր, թե երբ են տեղի ունենալու համքարական հավաքույթներ և կամ կրոնական ծիսակատարություններ։ Հանդիսանալով կատարածու, իգիթբաշին պետք է դատի ենթակա համքարներին ներկայացներ դատի, կենսագործեր ընդունված որոշումները։ Բոլոր այս գործողությունները իգիթբաշին կատարում էր համաձայն իր վերադասյալների որոշումների։

Համքարության գերագույն օրգանը ընդհանուր հավաքն էր, որին մասնակցում էին համքարները՝ լիիրավ ձայնի իրավունքով, ինչպես նաև մահացած համքարների այրիները և վարպետացուները։ Այրիները, որպես կանայք, իսկ վարպետացուները, որպես երիտասարդ, ձայնի իրավունք չունեին։

Ընդհանուր հավաքում քննարկվում էին համքարության համար կենսական նշանակություն ունեցող հարցերը, համքարության ղեկավարների հաշվետվությունները, համքարության մեջ նոր անդամների ընդունելության հարցերը, անդամների հեռացումը։ Այստեղ նաև բաշխվում էին հարկերն ու տուրքերը անդամների միջև, քննարկում էին և համապատասխան գնահատական տալիս վարպետացուների ստուգողական աշխատանքներին։

Համքարական դատարանում, որը կազմված էր ուստաբաշուց և աղսախկալներից, քննարկվում էին և համապատասխան լուծում ստանում այնպիսի հարցեր, որոնք վերաբերում էին մի կողմից՝ վարպետի, մյուս կողմից՝ վարպետացուների ու աշակերտների միջև եղած հարաբերություններին, միևնույն համքարության անդամ տարբեր վարպետների միջև ծագած վեճերին, ընտանեկան հարաբերություններին, կրոնական պարտականությունների խախտմանը, հասարակական հանգիստը խանգարելուն։ Այստեղ լսվում էին նաև կողմնակի անձանց բողոքները՝ պատվերների անորակ կատարման մասին և այլն[156]։

Սովորաբար համքարություններն աշխատում էին գործերը քննել և լուծել իրենց դատարաններում, առանց դիմելու դարուղայի (ոստիկանապետի) միջնորդությանը, որը կապված էր ոչ միայն կաշառատվության անհրաժեշտության հետ, այլև հղի էր վտանգներով համքարության հեղինակության ու ինքնուրույնության համար։

Համքարության սանդուղքի ամենաստորին աստիճանի վրա կանգնած էին աշակերտները, որոնք ընդունվում էին վարպետի կողմից և ուստաբաշու ու աղսախկալների ներկայությամբ երդում էին տալիս։ Ուսման տևողությունը տատանվում էր երեքից մինչև տասը տարի, նայած արհեստի բնույթին։ Աշակերտը, որը ընդունվում է տիրապետելու տրվ-

[154] Ա. Հովհաննիսյան, Գ. Ախվերդյանի և Գ. Շիրմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1963, էջ 200, 206։

[155] Մատենադարան, Ձեռ. № 448, կետ 5։

[156] Егиазаров С. А., նշվ. աշխատ., էջ 292—293։

յալ արհեստին, լիովին գտնվում էր տվյալ վարպետի տրամադրության տակ, աշխատում էր ձրի, կարող էր ենթարկվել ծեծի ու պատիժների, օգտագործվել վարպետի տնային գործերում։ Վարպետը հատուկ վարձատրություն չէր ստանում աշակերտին իր արհեստը սովորեցնելու համար։

Համքարությունները հետաքրքրվում էին աշակերտների վիճակով, հետևում նրանց ուսման ընթացքին և երբ տեսնում էին, որ նա արդեն բավականաչափ հմտացել էր իր ընտրած արհեստում, դարձնում էին վարպետացու և ինքնուրույն հանձնարարություններ տալիս։

Ենթավարպետը ավելի բարձր էր կանգնած, քան աշակերտը։ Որոշ ժամանակ մնալով այդ գործում, նա ինքնուրույն որևէ գործ էր կատարում, որը ներկայացվում էր քննության և, քննությունը բռնելու դեպքում՝ ձեռնադրվում էր վարպետ։ Դրա համար նա իր արհեստուսուցին խալաթ (նվեր) էր տալիս, իսկ համքարությանը՝ դաստուրհաց[157]։

Համքարության վերին աստիճանը կազմում էին վարպետները, որոնք ունեին արհեստանոցներ (խանութներ), ինքնուրույն աշխատանք էին կատարում, պահում էին ենթավարպետներ և աշակերտներ, համքարության գործերում օգտվում էին վճռական ձայնի իրավունքով, կարող էին ընտրվել որպես ուստաբաշի, աղսախկալներ, գանձապահ։ Միաժամանակ նրանք պարտավոր էին լրիվ կերպով կատարել իրենց պարտականությունները համքարության նկատմամբ։

Այսպիսիք էին համքարությունների կառուցվածքը և գործելակերպը նկարագրվող ժամանակաշրջանում։ Նրանք կազմակերպում էին ապրանքների արտադրությունն ու վաճառքը, կանոնավորում էին հարաբերությունները տվյալ համքարության անդամների միջև, ինչպես նաև մյուս համքարությունների, իրենց գնորդների ու վաճառորդների հետ, ընդ որում աշխատում էին պահպանել իրենց համքարների շահերը։

Անհրաժեշտ է նշել, որ քաղաքների բազմազգ լինելու դեպքում համքարությունները բաժանված էին ըստ ազգային հատկանիշի։ Միևնույն տեսակի համքարություններ ունեին հայերը և մահմեդականները։ Արհեստի բազմաթիվ ճյուղեր ներկայացված էին մեկ կամ մի քանի արհեստավորներով, որոնք առանձին համքարություններ, բնականաբար, կազմել չէին կարող, ուստի և մտնում էին իրենց արհեստին համեմատաբար մոտ կանգնած համքարությունների մեջ։

Հարկ է նշել, որ կար արհեստավորների մի ճյուղ, որն ապրում էր վարձու աշխատանքով։ Դրանք էջմիածնի վանական տնտեսության մեջ

[157] Фон-Гакстгаузен А., Նշվ. աշխատ., էջ 106։

աշխատող արհեստավորներն էին, որոնք հրացանակիրների (թվանքչիների), շաթիրների, հովիվների, հոտաղների հետ մտնում էին Մայր աթոռի ծառայողների՝ ամալաների թվի մեջ։ Վանական տնտեսության մեջ մշտապես աշխատում էին՝ մեկ դարբին, որը 5 թոման վարձ էր ստանում, մազմաններ (ստանում էին 3 թոման), խառատներ (4,5 թոման), դալլաք (սափրիչ), որը ստանում էր 2 թոման, աշչիներ (խոհարարներ), պայտառներ և այլ արհեստավորներ։

Արհեստավորների նման կատեգորիայի առկայությունը խոսում է այն մասին, որ վարձու աշխատանքը սկսել էր իր առաջին քայլերն անել երկրի տնտեսական կյանքում, որ առաջ էր գալիս համքարություններից դուրս գտնվող արհեստավորների մի փոքր շերտ, որը իր գոյավիճակով տարբերվում էր համքարությունների մեջ մտնող արհեստավորությունից։

Էջմիածինը ձգտում էր նաև բարձրորակ արհեստավորներ հրավիրել Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայկական խոշոր գաղթավայրերից։ Այսպես, 1811 թվականի նոյեմբեր ամսին Կոստանդնուպոլիս մեկնող էջմիածնի միաբան սարկավագ Մահտեսի Առաքելը սինոդի կողմից հանձնարարություն է ստանում վերադառնալիս իր հետ բերել ոչ միայն «զմի արժանաւոր վարժապետ», այլև մեկ ճարտար հացագործ վարպետ, ինչպես նաև գիտակ ու հմուտ մի արհեստավոր, որը կարողանար ջրաղացներ և ձիթհանքեր կառուցել։ Անհրաժեշտ էին գտնում նաև հրավիրել մեկ կամ երկու՝ իրենց գործին քաջատեղյակ պարտիզպաններ։ Մահտեսի Առաքելի հայեցողությանն էր թողնվում պայմանավորվել հիշյալ մասնագետների հետ նրանց տարեկան վարձատրության վերաբերյալ, իսկ ճանապարհածախսը հոգալու էր Մայր աթոռը[158]։

* * *

19-րդ դարի առաջին երեսնամյակում Արևելյան Հայաստանում առևտուրը, հատկապես արտաքին առևտուրը, բավական աշխույժ բնույթ էր կրում։ Առևտրի կարևոր կենտրոնները Երևան և Շուշի քաղաքներն էին, որոնք գտնվում էին առևտրական բանուկ ճանապարհների կենտրոնում և կապված էին Թավրիզին, Թիֆլիսին, Կարսին, Էրզրումին ու Բայազետին։ Առևտրի զարգացմանը մեծ չափով նպաստում էր նաև այն պարագան, որ հիշյալ քաղաքները կուսակալության կենտրոններ էին, այնտեղ էր գտնվում խանական արքունիքը, կենտրոնացած էր զորք և այլն, որոնց պահանջարկի համար անհրաժեշտ բազմաթիվ ապրանքներ

[158] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 21, վավ. 135 ժ։

պետք է ներմուծվեին օտար երկրներից։ Առևտրի զարգացմանը մեծ չափով նպաստում էր նաև հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի՝ Էջմիածնի՝ Երևանի խանության սահմաններում գտնվելու փաստը։ Իր նվիրակների միջոցով աշխարհի տարբեր անկյուններից Էջմիածինը մեծ քանակությամբ ապրանքներ էր ստանում որպես նվիրատվություն, որոնք և վաճառքի էր հանում իր մյուս կարիքները հոգալու համար։ Միաժամանակ Էջմիածինը առաջնակարգ գնորդներից էր, քանի որ մեծաթիվ միաբանության կարիքները հոգալու համար հաճախ ստիպված էր լինում դիմելու շուկայի։

Վաճառականները առևտրական գործառնություններ էին ծավալում Պարսկաստանում, Թուրքիայում, Վրաստանում։ Հատկապես աշխույժ էր առևտրական կապը Թիֆլիսի և Էրզրումի հետ, որտեղ Երևանի վաճառականները գնում էին եվրոպական ու ռուսական արտադրության ապրանքներ և վերավաճառում Պարսկաստանում։ Փոխադարձաբար նրանք վերոհիշյալ քաղաքներն էին արտածում տեղական ու Պարսկաստանի հարևան շրջանների ապրանքներ՝ մետաքսեղեն, կաշի, բուրդ, բուսական յուղ, բամբակ, շոր մրգեր, աղ և այլն։

Առևտուրը երկրի կյանքում այնպիսի նշանակալից դեր էր խաղում, որ նույնիսկ Երևանի սարդարը, Ղարաբաղի և Նախիջևանի խաները կամ այնպիսի մի կրոնական հիմնարկություն, ինչպիսին Էջմիածինն էր, ներգրավվել էին առևտրական գործառնությունների ոլորտը։ Ինչպես սարդարը, խաները, այնպես էլ մյուս բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց ձեռքում կուտակված եկամուտներից փոխառություններ էին տրամադրում խոշոր վաճառականներին, դրանով իսկ մասնակից դառնալով նրանց առևտրական գործառնություններին, ինչպես տոկոսի ձևով, այնպես էլ հանդես գալով որպես ապրանքատեր։

Չնայած 1804—1813 թվականների ռուս-պարսկական պատերազմին, որն, անշուշտ, չէր կարող իր բացասական կնիքը չդնել արտաքին առևտրի վրա, առևտրական կապերը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև չէին ընդհատվում։ Դա պետք է բացատրել նրանով, որ երկու կողմերն էլ շահագրգռված էին առևտրական հարաբերությունների պահպանմամբ։ Այսպես, ինչպես Վրաստանի բնակչության, այնպես էլ Վրաստանում տեղավորված ռուսական զորքի համար խիստ դժվարին կացություն կարող էր ստեղծվել, եթե նրանք չստանային Կողբի աղը, քանի որ Կողբն էր Վրաստանի հիմնական, եթե ոչ միակ աղի մատակարարը։

Պարսկաստանի և, հատկապես, Ռուսաստանի շահագրգռվածությունը՝ ընդլայնելու առևտրական հարաբերությունները միմյանց հետ, իր

արտահայտությունը գտավ Գյուլիստանի հաշտության պայմանագրում։ Համաձայն հիշյալ պայմանագրի՝ պայմանավորվող կողմերը պետք է թույլ տային վաճառականների ազատ երթևեկ ցամաքային և ջրային ճանապարհներով։ Այնուհետև, վաճառականները կարող էին առևտրի համար իրենց նախընտրած վայրերում մնալ այնքան ժամանակ, որքան իրենք կկամենային, իսկ վերադարձի դեպքում իշխանությունները չպետք է խոչընդոտեին նրանց։ Վաճառականների կյանքն ու գույքը, ինչպես և կապակի իրավունքը պետք է երաշխավորվեր և հարգվեր երկու պետությունների կողմից։ Նրանց հպատակ վաճառականները տարանցիկ առևտրի իրավունք էին ստանում։ Կարգավորվում էր նաև մաքսային հարկարգը։ Նախկին տարատեսակ և կամայական մաքսերի փոխարեն սահմանվում էր ընդհանուր մաքս՝ ապրանքի արժեքի հինգ տոկոսի չափով[159]։

Սակայն առևտրի զարգացումը խոչընդոտող հանգամանքները շատ էին։ Վաճառականական քարավանների ապահովությունը Արևելյան Հայաստանում հեռու էր բավարար լինելուց։ Ավարառությունները սովորական երևույթ էին և ոչ հազվադեպորեն կատարվում էին խաների բարեհաճ հավանությամբ։

19-րդ դարասկզբի քաղաքական իրադարձություններից բացի, առևտրի զարգացմանն ու ծավալմանը խանգարում էին համապատասխան սոցիալ-մտավորական պայմանների բացակայությունը, ավատատիրությանը հատուկ մաքսային կեղեքիչ համակարգը, ճանապարհների վտանգավորությունը, վաճառականների կյանքի ու գույքի անապահովությունը, շափի ու կշիռների բազմազանությունը և, որ գլխավորն է, հիմնական սպառող աշխատավոր զանգվածների ցածր գնողունակությունը, թեև Երևանում, Նախիջևանում և Շուշիում սարդարի, պալատականների, հարեմի, զորքերի, խաների, բեկերի ու միրզաների՝ բարձր պահանջներ ունեցող այդ սպառողների բազմությունը կար[160]։

Բուն Երևանում մաքսատուն գոյություն չուներ։ Մաքսեր (ռահդար) գանձվում էին Սարդարապատում, Բայազետի ճանապարհին և Շարուրում՝ Պարսկաստանից եկող ճանապարհին. Կրխբուլաղի ճանապարհին մաքսի գանձումը հանձնված էր հայազգի յուզբաշի Գեղամյաններին։

Ղարաբաղում առևտուր կատարելու համար տոմսակներ տրվում

---

[159] Տե՛ս АКАК, т. VII, ч. 2, док. 261։

[160] **Шопен И.**, նշվ. աշխատ., էջ 873, Туманян О. Е. Экономическое развитие Армении. ч. 1, Ереван, 1954, с. 20—21. **Թ. Խ. Հակոբյան**, Երևանի պատմություն, հ. 2, Երևան, 1957, էջ 90։

էին մասնավոր անձանց պատկանող տոմսանոցներում կամ մաքսատներում, որոնք նույնպես կապալով էին տրվում[161]։

Մաքսի գանձումը կապալային հողված էր։ Ամեն տարի որոշ գումարի դիմաց խաները մաքսի գանձումը հանձնում էին կապալառուների։

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև Երևանի վրայով կատարվող առևտուրը ավելի մեծ չափեր է ունեցել, քան Թուրքիայի և Պարսկաստանի միջև կատարված առևտուրը։ Այդ առևտրի ծավալի մասին տարբեր տեղեկություններ են պահպանվել։ Որոշ աղբյուրների հաղորդած տվյալների համաձայն 1825 և 1826 թվականներին ապրանքաշրջանառության ընդհանուր գումարը կազմել է 919.770 ռուբլի արծաթ դրամ[162], իսկ 1828—1829 թվականներին այն կազմել է 1.867.700 ռուբլի, մինչդեռ 1815 թվականին այն միայն 499.532 ռուբլի էր կազմում[163]։ Պարսկաստանից Երևան է ներմուծվել տարեկան 80 հազար ռուբլու ապրանք։

Ներմուծվող ապրանքները տեղավորելու և նրանց վաճառքը կազմակերպելու համար կառուցվում էին քարավանատներ։ Երևանում կային յոթ քարավանատներ, որոնցից կանգուն էին և գործում էին հինգը, բերելով տարեկան 700 թումանի եկամուտ[164]։

Ընդհանուր առմամբ Երևանում խանությունների ու կրպակների թիվը հասել է 851-ի, որոնց մի մասը գտնվում էր առևտրաշարքերում կամ շարասներում և հրապարակներում։ Քարավանատուն կար նաև Վաղարշապատ գյուղում, որը վանական սեփականություն էր։ Քարավանատները պետական կամ մասնավոր սեփականություն էին, որոնցից առաջինները տրվում էին կապալով։

Քարավանատներից օգտվելու համար վաճառականներից գանձում էին ավայի և բորոնա։ Ավայի գանձում էին մեծածախ առևտրի դեպքում, յուրաքանչյուր թումանից վերցնելով մեկ շահի։ Այդ գումարը կարող էր գանձվել այնքան անգամ, որքան ապրանքները քարավանատան մեջ մի ձեռքից մյուսն էին անցնում։ Բորոնան գանձվում էր այն դեպքում, երբ գնորդ չունենալու կամ մի այլ պատճառով վաճառականն իր ապրանքները դուրս էր հանում խանության սահմաններից և տանում

[161] **Могилевский и Ермолов**, Описание Карабагской провинции, Тифлис, 1823, с 230.

[162] *Տե՛ս* **Евецкий С.** Статистическое описание Закавказского края, СПб., 1835, с. 76—77.

[163] **Тер-Гукасов Г.**, Экономические интересы России в Персии, П. 1915, с. 35.

[164] **Шопен И.**, Նշվ. աշխատ., էջ 983:

էր մի այլ վայրում վաճառելու։ Յուրաքանչյուր բեռից բորոնա վերցվում էր 4 շահի (8 կոպեկ արծաթով)[165]։

Եթե արտաքին առևտուրը համեմատաբար աշխույժ վիճակում էր, այդ նույնը չենք կարող ասել ներքին առևտրի մասին։ Հողագործության արտադրանքի ամենաեկամտաբեր ճյուղերի, հատկապես բամբակի և բրնձի գնման ու վաճառքի մենաշնորհը սարդարը իր ձեռքում էր կենտրոնացրել։ Վերոհիշյալ գյուղատնտեսական մթերքները սարդարը գնում էր իր իսկ սահմանած կամայական գներով։ Բամբակի մեկ խալվարի համար նա վճարում էր 80 ռուբլի, իսկ շալթուկի մեկ խալվարի համար՝ 6 ռուբլի արծաթով։ Խանության մեջ սահմանված այդ մենաշնորհը խախտողները դաժան պատիժների և ծանր տուգանքների էին ենթարկվում։ Կասկած չկա, որ նման իրավիճակը խիստ բացասաբար պետք է անդրադառնար գյուղացիական տնտեսությունների վրա, պետք է նրանց նետեր աղքատության գիրկը։ Գյուղացիները փաստորեն զրկվում էին այդ կարևորագույն կուլտուրաների ցանքատարածություններն ընդարձակելու խթանից։

Ամբողջ ներքին առևտուրը կենտրոնացած էր շուկաներում, որտեղ տեղական արհեստավորական արտադրանք և գյուղատնտեսական զանազան մթերքներ էին վաճառում։ Ապրանքների հիմնական սպառողը քաղաքներն էին։ Այստեղ շուկաներում վաճառվում էին ինչպես բուն քաղաքի, այնպես էլ խանությունների տարբեր մահալների մթերքներն ու արտադրանքը։

Վաճառականները նույնպես ունեին իրենց առանձին համքարությունները։ Պարսկական տիրապետության շրջանում վաճառականությունը բաժանվում էր չորս խմբի՝ սովդաքյարներ, բենահդարներ, բազազներ և շարշիներ կամ փերեզակներ։ Այս բաժանման հիմքում ընկած էր ունեցած կապիտալի չափը, առևտրական գործառնությունների շրջանակների ծավալը, երկրի տնտեսական կյանքում նրանց խաղացած դերը։ Սովդաքյարները հարուստ վաճառականներ էին, որոնց ունեցած դրամական խոշոր կապիտալը նրանց հնարավորություն էր տալիս մեծածախ առևտրով զբաղվել։ Նրանք ազատ էին ամեն տեսակ տուրքերից, բայց մաքս վճարում էին։ Սովդաքյարների թիվը մեծ չէր։ Նրանցից շատերը շրջանառության մեջ էին դնում նաև այլ մարդկանց դրամագլուխները։ Հայերից սովդաքյարներ քիչ կային. 1825—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմից հետո, երբ Արևելյան Հայաստա-

[165] Նույն տեղում, էջ 880—881:

նը միակցվեց Ռուսաստանին, սովդաքյարների մեծ մասը թողեց երկիրը և անցավ Պարսկաստան։

Այնուհետև, իրենց նշանակությամբ վաճառականության շարքերում կարևոր տեղ էին գրավում բինահդարները։ Բինահդարները զբաղվում էին և մեծածախ, և մանրածախ առևտրով։ Նրանք ունեին իրենց խանութները և առևտրական հետաքրքրություններով հիմնականում կապված էին տվյալ վայրին։

Բազազները մանր առևտրականներ էին, ունեին փոքրիկ խանութներ, որտեղ վաճառում էին իրենց ապրանքները, գլխավորապես՝ գործվածքներ։ Սրանք, բինահդարների հետ մեկտեղ, Արևելյան Հայաստանի վաճառականության ճնշող մեծամասնությունն էին կազմում։

Չարշիները և փերեզակները շրջիկ մանր առևտրականներ էին, որոնք տեղից-տեղ էին թափառում և վաճառում էին ամենազանազան ապրանքներ, ձգտելով արժեքից ավելին կորզել միամիտ գնորդներից։ Աղքատ չարշիները շրջում էին ոտքով, համեմատաբար հարուստները՝ ձիով կամ էշով[166]։

Չնայած այն բանին, որ առևտուրը և առևտրի հետ կապված հարցերը գտնվում էին խանական վարչության ուշադրության կենտրոնում, որպես գանձարանի եկամուտների ամենագլխավոր աղբյուրներից մեկը, այնուամենայնիվ նույն այդ վարչությունը ի վիճակի չէր առևտրի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել։ Մենաշնորհները, բազմապիսի տուրքերը, ճանապարհների վրա անվտանգության բացակայությունը, ժողովրդական զանգվածների թշվառ կացությունը, գյուղատնտեսության ու արհեստագործության հետամնաց վիճակը արգելակում էին առևտրի հետագա ծավալմանը։

Առևտրի ասպարեզում էլ պակաս չէին անօրենություններն ու բռնությունները։ Արդեն հիշատակվել է, որ Էջմիածնի պահակապետ Ջաֆար խանը տարիներ շարունակ վանքին պատկանող փոքր քարվանսարայի մեջ տասներեք խանութ զբաղեցրել էր անձամբ, որտեղ նրա համար գինի էին վաճառում։ Նա արգելում էր Վաղարշապատի բնակչությանը վաճառել սեփական այգիներից ստացած գինին։ Ջաֆար խանը էժան գնով բռնի վերցնում էր բնակչության պատրաստած ամբողջ գինին և ապա վերավաճառում էր կրկնակի, անգամ եռակի գնով հենց իրեն՝ արտադրողին։ Որոշ հաշվումների համաձայն, ինչպես Էջմիածնի վանքի հոգևորականության, այնպես էլ Վաղարշապատի բնակչության

[166] Տե՛ս նույն տեղում, էջ 986։

վանքերը դրա հետևանքով տարեկան կազմում էին ավելի քան հազար հինգ հարյուր թոման[167]։

Արևելյան Հայաստանի առևտրական կյանքի առանձնահատկություններից մեկն էլ եղել է այն, որ այստեղ ազատ շրջանառության մեջ են գտնվել բազմաթիվ և բազմատեսակ դրամներ՝ պարսկական, թուրքական, ռուսական, հոլանդական, վրացական, բուն երևանյան և այլն։ Տարբեր երկրների պատկանող և ամենատարբեր արժեքներ ունեցող այդ դրամները անհրաժեշտություն էին ստեղծում դրամափոխանակության, իսկ նրանց արժեքները խիստ տատանվում էին, նայած շուկայական կոնյունկտուրային։ Դրամի փոխանակության հարցերով Երևանում զբաղվում էին հատուկ դրամափոխներ՝ թվով քսան։ Սակայն սրանք հիմնականում ռուսական դրամներ էին փոխանակում, որոնցից Պարսկաստանում ածաթյա դրամներ՝ սահիբ-զոռաններ էին հատում և կրկին ուղարկում Երևան։ Այդ գործողություններից նրանք հինգ տոկոս շահ էին ստանում։ Շրջանառության մեջ էին գտնվում այնպիսի դրամներ, ինչպես «ֆնտղը», «ստամպօլը», «պաջաղլին», «ղուռուշը», «ֆաթալի շահի ռիալը», «ուղլուկը», «օսմանցի իքիլիքը», «սուլթան Սալիմի ռիալը», «փանահատին» և բազմաթիվ այլ դրամներ, որոնք տարբեր արժողություններ ունեին։ Ինչպես արդեն նշեցինք, նրանց արժեքները տատանվում էին ըստ շուկայական կոնյունկտուրայի, որից դրամափոխները կարող էին մեծապես օգտվել[168]։

Երևանում՝ Արևելյան Հայաստանի առևտրի գլխավոր կենտրոնում, խաչաձևվում էին տարբեր ճանապարհներ։ Այդ ճանապարհներից մեկը, որը հետագայում, ռուսական տիրապետության շրջանում, գլխավոր փոստային ճանապարհ դարձավ, Գյումրին Մաստարայի, Սարդարապատի, Էջմիածնի վրայով միացնում էր Երևանին, իսկ այստեղից էլ անցնում էր դեպի Նախիջևան և Օրդուբադ։ Մի այլ ճանապարհով Սարդարապատը կապվում էր Բայազետ քաղաքին։ Սարդարապատի վրայով էին ձգվում նաև երկու այլ ճանապարհներ՝ Սարդարապատ-Կողբ-Կաղզվան-Կարին և Սարդարապատ-Անի-Կարս։ Նախիջևանը տարբեր ճանապարհներով կապվում էր Թավրիզի, Կարաբաբա ամրոցի և Շամշադիլի հետ։ Երևանի դեպի Թիֆլիս ճանապարհը անցնում էր երկու ուղղությամբ՝ Դիլիջանի և Ապարան-Ղարաքիլիսայի վրայով։ Երևանը Կարսի հետ կապվում էր Էջմիածնի, Ղզլքիլիսայի և Ղոշավանքի վրայով։ Այդ ճանապարհներով կարող էին անցնել կառքեր, սայլեր և բեռնակիր անասուն-

[167] Համառոտութիւն անցից Քրիստոսակերտ Մայր Աթոռոյ Հայոց սրբոյ Էջմիածնի, Տփխիս, 1853, էջ 19։

[168] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 24, վավ. 139։

ներ, թեև դրանք շատ հեռու էին բարեկարգ լինելուց։ Կարևոր առևտրական մայրուղու վրա էր ընկած Շուշին։ Նրա վրայով անցնող ճանապարհը Թիֆլիսը կապում էր Կասպից ծովի ափերի հետ։

Քաղաքների և քաղաքային բնակչության մասին խոսելիս չի կարելի զանց առնել Թիֆլիսը, որտեղ հայ քաղաքային բնակչության ամենահոծ զանգվածներից մեկն էր կենտրոնացած։ Վրաստանի մայրաքաղաքը այն վայրերից էր, որտեղ դարեր շարունակ հոսում էր տարբեր վայրերի հայ ազգաբնակչությունը։ Վրացական արքաներն ամեն կերպ խրախուսում էին հայ առևտրականների և արհեստավորների ներհոսքը դեպի իրենց մայրաքաղաք, քանի որ սրանք մեծապես նպաստում էին արհեստագործության և առևտրի զարգացմանը։ Մյուս կողմից ճորտատիրության առկայությունն էր խոչընդոտում Վրաստանի քաղաքային բնակչության աճին ի հաշիվ սեփական ազգի, ուստի և տարօրինակ չէ, որ և Թիֆլիսում, և Գորիում, և Թելավում, և Սղնախում, և Անանուրում հայկական տարրը պատկառելի տոկոս էր կազմում, որ արհեստները և առևտուրը նշանակալից չափով կենտրոնացած էին հայերի ձեռքին։ Դեռևս 1714 թվականից Թիֆլիս քաղաքի մելիքի և մամասախլիսի պաշտոնը վերապահված էր ժառանգաբար հայազգի Բեհբության իշխանական տոհմին[169]։ Ռուսական տիրապետության սկզբնական շրջանը, այդ առումով, բացառություն չկազմեց։ Մելիքը օժտված էր մեծ արտոնություններով։ Առանց նրա կնիքի վավերական չէին Թիֆլիսի ու շրջակայքի կալվածքների առն ու վաճառքը, մելիքը հետևում էր առևտրի վիճակին, չափ ու կշռին, վարում էր կարևոր դատաստանական գործերը։ Ռուսական տիրապետության հաստատումից հետո մելիքի պաշտոնը նույնացվեց ոստիկանապետի պաշտոնին, բայց սկզբնական շրջանում նրա նախկին արտոնություններն ու իրավունքները պահպանվեցին։

Վրաստանի քաղաքային բնակչության զգալի տոկոսը կազմում էին մոքալաքները։ Մոքալաքը վրացերեն բառ է և նշանակում է քաղաքացի։ Նախապես մոքալաք կարող էին դառնալ միայն խոշոր վաճառականները և արհեստավորները։ Այդ կոչումը շնորհում էին վրաց թագավորները, հավանաբար որոշ ընծայաբերության դիմաց։ 18-րդ դարի կեսերից արդեն մոքալաք դառնում էին նաև թագավորական ծառայության մեջ գտնվող ցածր խավին պատկանող մարդիկ։ 1795 թվականի Թիֆլիսի առումից և բնակչության գերեվարությունից հետո թագավորական իշխանության առջև հարց ծառացավ կրկին շենացնել մայրաքաղաքը։ Այդ

[169] **Ս. Ջալալեանց,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Բ, Տփխիս, 1842, էջ 63։

նպատակով Գեորգի 12-րդ թագավորը արքայազններ Ալեքսանդրից, Յուրանից և Փառնաոզից խլելով ունեցվածքը, նրանց պատկանող գյուղացիների մի մասին դասեց մոքալաքների շարքը[170]։

Մոքալաքները բաժանված էին երեք կարգի՝ առաջին, երկրորդ և երրորդ։ Կային նաև եկեղեցական մոքալաքներ, որոնք մաղթա վճարում էին նաև եկեղեցուն։ Ըստ Վախթանգ 6-րդի դատաստանագրքի, առաջին կարգի մոքալաքները իրենց իրավունքներով հավասարեցվում էին երկրորդ կարգի ազնվականներին, երկրորդ կարգի մոքալաքները՝ երրորդ կարգի ազնվականներին և այլն։ Մոքալաքներն իրավունք ունեին անշարժ կայք և կալվածքներ ձեռք բերել և անգամ ճորտերի տիրել։ Թիֆլիսի մոքալաքները տարեկան արքունական գանձարան էին մուծում 4000 ռուբլի մաղթա։ Մոքալաքների կարգը որոշվում էր տոհմի հնությամբ, կալվածքների և կապիտալի մեծությամբ։

Մոքալաքները կազմում էին միություն, ինչպես համքարները։ Նրանք ընտրում էին դատավորներ, որոնք լուծում էին մոքալաքների միջև եղած քաղաքացիական գործերը։ Հարկերն ու տուրքերը բաշխելու և հավաքելու գործը նույնպես կատարում էին մոքալաքներն իրենք՝ հավաքելու գործը նույնպես կատարում էին մոքալաքներն իրենք՝ հատուկ ընտրված անձանց միջոցով, ինչպես նաև նշանակում էին կենսամթերքների սակագները։ Նրանք ենթարկվում էին Թիֆլիսի մելիքին և կատարում էին նրա կարգադրությունները։ Մոքալաքներն օգտվում էին ներքին և արտաքին ազատ առևտուր կատարելու իրավունքից։ Բացի մաղթայից, մոքալաքները վճարում էին նաև մալի՝ ամուսնացած ամեն շունչ 1 ռ. 20 կոպ., իսկ ամուրիները՝ 60-ական կոպեկ, ինչպես նաև՝ կուլլուխի։ Մինչև Վրաստանի միացումը Ռուսաստանին նրանք ազատված էին արբաթիից (շահական արքունիքին մատաղահասակ տղաներ և աղջիկներ տրամադրելուց) և դրա փոխարեն փրկագին էին վճարում։ Հասարակական ծախսերի համար գանձվում էր հատուկ տուրք, որը կոչվում էր մասրաֆ[171]։

Վրաստանի՝ Ռուսաստանին միացվելուց հետո մոքալաքները ձգտում էին պահպանել իրենց երբեմնի արտոնությունները։ Սկզբնական շրջանում ռուսական իշխանությունները ոչ միայն չէին դիպչում մոքալաքների իրավասություններին, այլև պահպանում էին դրանք անձեռնմխելի վիճակում, ելնելով առևտրի զարգացման շահախնդրությունից։

[170] **Ա. Ա. Պետրոսյան,** Մոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, № 12, էջ 92։

[171] Այս մասին հանգամանորեն տե՛ս **Месхиа Ш. А.,** Города и городской строй феодальной Грузии XVII—XVIII вв., Тбилиси, 1959.

Առաջին կարգի մոքալաքները ազնվականների և հոգևորականության նման ազատ էին կացուցվում մարմնական պատիժներից: 1817 թվականին Ա. Պ. Երմոլովը կազմում է հատուկ հանձնաժողով, որը պետք է որոշեր մոքալաքների թիվը ըստ կարգային պատկանելության, ինչպես նաև վերջ տար հարկերի և տուրքերի գանձման գործում եղած չարաշահումներին և խառնաշփոթությանը: Հանձնաժողովը պարզել էր, որ մոքալաքների քանակն է 416 ծուխ՝ արական 977 շնչով: Այլ վայրերից Թիֆլիս այդ տարիներին գաղթել էին 699 ընտանիքներ, որոնք հատուկ հարկ էին վճարում՝ 5—7 ռուբլու սահմաններում[172]: Սրանցից 90 ընտանիք, Վաղարշապատի երբեմնի բնակիչներ, կառավարչապետ Երմոլովի թույլտվությամբ վերադարձել էին Էջմիածին:

Երմոլովը առարկում էր կենտրոնական կառավարության մտադրությանը՝ ռուսական գիլդիական համակարգը կիրառելու Վրաստանում: Նրա կարծիքով դա կնեղացներ արտաքին առևտրի շրջանակները, արհեստական խոչընդոտներ կստեղծեր առևտրի զարգացման ճանապարհին: Մյուս կողմից՝ նա առաջարկում էր Վրաստանի վաճառականներին բաժանել չորս կարգի, ամեն կերպ խրախուսել մանր կարգի մոքալաքներին ընդգրկելու առաջին երկու բարձր կարգերում: Առաջին կարգի մոքալաքները պետք է վճարեին պետությանը 200 ռուբլի, երկրորդ կարգի՝ 100 ռուբլի, երրորդ կարգի՝ 25, իսկ չորրորդ կարգի մոքալաքները՝ 1 ռ. 50 կոպ. յուրաքանչյուր արական շնչի համար: Առաջին կարգի մոքալաքները կարող էին գործարաններ և ֆաբրիկաներ բացել, երկրորդ կարգի մոքալաքները իրավունք էին ստանում զբաղվելու միայն կապալառությամբ: Երրորդ կարգին պատկանող մոքալաքները իրավունք պետք է ստանային առևտուր կատարելու Ռուսաստանում, Վրաստանում և արտասահմանում: Բացի այդ, նրանք կարող էին նաև հանդես գալ իբրև զորագնդերի մատակարարներ, բայց չպետք է թույլատրվեր գործարաններ ու ֆաբրիկաներ հիմնել: Որևէ հանցանք կատարելիս նրանք հասարակ դատին պատկանող մարդկանց համահավասար ենթարկվելու էին մարմնական պատիժների: Չորրորդ կարգի մոքալաքներին պետք է իրավունք տրվեր առևտուր կատարել և արհեստագործությամբ զբաղվել սոսկ Քարթլիում, Կախեթում և Սոմխեթում, առանց որևէ այլ արտոնության: Եթե մոքալաքը չգրանցվեր հիշյալ չորս կարգերից մեկում, իրավունք չպետք է ունենար առևտրով զբաղվելու, ինչ կոչում էլ որ ունենար: Ինչ վերաբերում է վրացական իշխաններին և ազնվականներին, որոնցից ոմանք զբաղվում էին առևտրով, եթե նրանք կամենային առևտրական գործունեության մեջ ընդգրկվել, ապա պետք է թույլատրվեր նրանց գրանցվելու մոքալաքների կարգում, բայց միայն առաջին և երկրորդ կարգերում, քանի որ երրորդ և չորրորդ կարգերը «նրանց համար շատից դուրս ստորացուցիչ կլիներին»[173]: Կառավարիչ սենատի 1823 թվականի ապրիլի 30-ի № 12964 հրամանագրով, տրված գեներալ-լեյտենանտ Վելյամինովի անունով, հաստատվում էին գեներալ Երմոլովի կողմից մտցված վերոհիշյալ առաջարկությունները[174]:

Վրաստանում ռուսական վարչությունը գանձարանին պատկանող ձեռնարկությունները՝ որոշ հանքեր, ձկնորսարաններ և այլն կապալով էր տրամադրում: Կապալառուների դերում հիմնականում հանդես էին գալիս հայերը: Այսպես, Շիրվանում գտնվող նավթահորերը (թվով հինգ) և աղաղները կապալով տրված էին Շուշու հայ մեծահարուստներից Թառումյաններին: Նավթի վաճառքը կապված էր բավական մեծ դժվարությունների հետ, քանի որ հիմնականում կապալառուն այն ստիպված էր ապառիկ վաճառել և կամ ուրիշ ապրանքների հետ փոխանակել: Այդ իսկ պատճառով էլ կառավարությունը, չունենալով ազատ դրամական միջոցներ, գերադասում էր նավթի, ինչպես նաև աղի արդյունահանությունը հանձնարարել կապալառուներին[175]: Այդ պատճառով էլ 1824 թվականին, երբ լրանում էր Թառումյանների վերցրած կապալի ժամկետը, կառավարչապետ Ա. Պ. Երմոլովը հանձնարարում է գեներալ Ֆոն-Կրաբբեին՝ համոզել Թառումյաններին, որ կրկին համաձայնեն չորս տարվա համար գործարք կնքել[176]: Նման հանձնարարություն Երմոլովը տալիս է Լեռնային էքսպեդիցիայի պետ Կարպինսկուն, որպեսզի համաձայնության գա Զագրիկի շիբի (квасцы) գործարանի կապալառու Մելիքյանի հետ, որպեսզի նա ևս նոր կոնտրակտ կնքի հաջորդ չորս տարիների համար[177]:

1810 թվականին Ղարաբաղի հայերից Պետրոս Մանչեյանը համաձայնագիր է ստորագրում, որպեսզի կապալով իրեն տրվեն Ղուբայի ծովային ձկնորսարանները, նավթահորերը, ջրաղացներ, այգիներ և այլն: Մինչև 1823 թվականը, իր մահը, նա փորձում է նավթի հարուստ հանքահորեր փորել, բայց ջանքերը ապարդյուն են անցնում, և բավական մեծ պարտքի տակ է ընկնում[178]:

---

[172] Տե՛ս АКАК, т. VI, ч. I, док. 12:

[173] Տե՛ս Նույն տեղում, վավ. 56:

[174] Տե՛ս АКАК, т. VI, ч. I, док. 100:

[175] Նույն տեղում, վավ. 220:

[176] Նույն տեղում, վավ. 222:

[177] Նույն տեղում:

[178] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1377, оп. I, д. 19, л. 15 об:

Հայ վաճառականական դասը հատկապես մեծաթիվ էր և նշանակալից դեր էր խաղում ներքին ու արտաքին առևտրում Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացված շրջաններում և Վրաստանում: Անդրկովկասի այդ շրջաններում առևտուրը և արհեստագործությունը մեծի մասամբ կենտրոնացված էին հայերի ձեռքում: Այդ պարագան մեծացնում էր նրանց նշանակությունը Անդրկովկասի տնտեսական կյանքում, թեև դեռևս նպաստավոր պայմաններ չէին ստեղծվել տնտեսական լուրջ առաջընթացի համար: Շատ ավելի վատթար էր իրավիճակը Երևանի և Նախիջևանի խանություններում, որտեղ արևելյան բռնապետական ռեժիմի առկայությունը լուրջ արգելքներ էր հարուցում ապրանքադրամական հարաբերությունների հետագա զարգացման ճանապարհին:

5. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

19-րդ դարի սկզբին հարկային համակարգը Արևելյան Հայաստանում խիստ խայտաբղետ պատկեր էր ներկայացնում: Տարբեր խանություններում գոյություն ունեին տարատեսակ հարկեր, որոնք ոչ միայն անվանումով էին տարբերվում մեկը մյուսից, այլև էությամբ: Հարկերը խիստ ծանր էին, բազմաթիվ և բազմատեսակ: Խանական վարչությունը ձգտում էր հնարավորին չափ շատ կորզել բնակչությունից, և այդ նպատակին հասնելու համար նրա պաշտոնյաները չէին խորշում բացարձակ կողոպուտի և ոչ մի միջոցից:

Հարկերը երկու ձևով էին գանձվում՝ դրամով և բնամթերքով: Դրամական հարկերը որոշ իմաստով հաստատուն միավորներ էին, իսկ բնամթերային հարկերը կազմում էին տվյալ տարում ստացված բերքի 3/30, 7/30 և մասը: Բնամթերքով գանձվող հարկը ևս իր հերթին տրոհվում էր երկու մասի՝ մուլք և բահրա: Բահրան հարկ-ռենտայի այն մասն էր, որ գնում էր պետության գանձարանը: Մուլքադարական գյուղերում բահրայից առանձնացվում էր մուլքը, որ կազմում էր բերքի 1/10 մասը և հատկացվում էր մուլքադարին:

Հարկային համակարգը կարգավորելու և հարկերի գանձումը դյուրացնելու նպատակով Երևանի խանությունում գյուղերը բաժանված էին երեք խմբերի՝ բահրաքյարական, յարիքյարական և ռանչպարական: Գյուղերն էլ իրենց հերթին տրոհված էին բինաչաների: Վերջիններս հարկման ենթակա հատուկ միավորներ էին, կազմված մի քանի ընտանիքներից, նայած նրանց տնտեսական հզորությանը: Նույնիսկ այնպես էր լինում, որ մի ամբողջ գյուղ հազիվ մեկ բինաչա էր կազմում, կային նաև գյուղեր, որտեղ բինաչաների թիվը մի քանի տասնյակի էր հասնում: Այսպես, Ուլուխանլու գյուղում կար 80 բինաչա, Սարդարապատում՝ 50, մինչդեռ Ջաֆարաբադ գյուղում կար միայն մեկ բինաչա: Բազմաթիվ կիսավեր գյուղեր նույնիսկ մեկ բինաչա էլ չէին կազմում:

Բինաչաները կազմելիս խանական վարչությունը հաշվի էր առնում նաև տեղական պայմանները, գյուղերի եկամուտների չափերը, քաղաքներից և գլխավոր մայրուղիներից նրանց հեռավորությունը, տեղական գյուղատնտեսական մթերքների որակը, դրանք հաջող կերպով իրացնելու հնարավորությունները, ինչպես և անասնապահության վիճակը: Բինաչա կազմող գերդաստանները կարող էին իրենց հաշվում գրանցել աղքատ ընտանիքներին և վճարել նրանց փոխարեն ևս: Հիմնականում այդպիսի վիճակում գտնվում էին եկվորները: Եթե նրանք մշակություն էին անում տվյալ բինաչայի համար, ապա ոչինչ չէին վճարում, իսկ եթե ունենում էին իրենց սեփական տնտեսությունը, ապա մասամբ պետք է հատուցեին, կատարելով նրանց ընդունող բինաչայի պարհակները: Այդ կապակցությամբ հատուկ հաշիվներ էին պահվում:

Բնական պատահարների՝ կարկուտի, երաշտի, մորեխի, ջրհեղեղների և այլ դեպքերում սարդարը երբեմն պակասեցնում էր բինաչաների քանակը: Եվ, ընդհակառակը, բարեկեցության աճի հետ մեկտեղ, աճում էր նաև բինաչաների թիվը: Այսպես, սարդարը, ելնելով Ուլուխանլու գյուղի գյուղացիների աղքատ վիճակից, 1826 թ. պակասեցրել էր բինաչաների թիվը 34-ով, 114-ի փոխարեն թողնելով 80 բինաչա: Բինաչաների թիվը ավելացվում էր նաև որպես պատիժ այս կամ այն արարքի համար: Նման դեպքերում դժվար էր լինում ազատվել հավելագրված բինաչաներից:

Բինաչաները, ըստ գյուղերի պատկանելության, երկու տեսակի էին՝ բահրաքյարական և յարիքյարական: Բահրաքյարական յուրաքանչյուր բինաչա վճարում էր տաս թոման և երկրագործության արդյունքների 1/3 մասը:

Յարիքյարական կամ կիսարական գյուղերի բնակչությունը նոր էր: Հյուսեին Ղուլի խանը իր կառավարման վերջին 15 տարիների խաղաղ վիճակից օգտվելով, ձգտում էր հարևան երկրներից ու վայրերից գաղթականներ բերել և բնակեցնել խանության տարբեր շրջաններում: Նորեկ գաղթականներին սարդարը տրամադրում էր հող, անասուններ, սերմացու, երկրագործական գործիքներ և այլն: Կիսարար գյուղացիները, բերքը հավաքելուց հետո, առանձնացնում էին սերմացուն, հետո մնացածը բաժանում էին երկու հավասար մասի՝ կեսը սարդարին, կեսը՝ իրենց: Ահա նման գյուղերը կոչվում էին յարիքյարական կամ կիս-

բարական։ Յարիքյարական բինաչան դրամով երեք թուման հարկ էր վճարում[179]։

Պարսկական տիրապետության վերջին տարիներին Երևանի խանությունում կար բահրաքյարական 539 1/2 բինաչա[180]։ Յարիքյարական բինաչաների թիվը նույն տարիներին կազմում էր 300 1/2, որոնցից 204 1/2-ը պետական էր, 20-ը՝ պետական-մուլքադարական, 76-ը՝ մուլքադարական։ Սրանց դրամական հարկավճարը կազմում էր 901 թուման[181]։

Մի շարք մահալներում հարկավճարումների համար բինաչաներ չկային։ Շարուրի մահալում, օրինակ, հողը մշակվում էր սարդարի հետ կիսաբար, և դրամահարկ չէին վճարում[182], իսկ բնապարհակներ կատարելու համար մահալի վրա գրանցված էր 126 բինաչա։

Թուրքական քոչվոր ցեղախմբերով բնակեցված վայրերում հարկավճարումները ըստ բինաչաների կազմում էին այլ կերպ։ Կարաշոռուներից 7,5 բինաչայի համար գանձում էին 62,5 թուման, միլլի ցեղախմբից՝ 19,5 բինաչայի համար 162,6 թուման, քյոլանի և մուղանլի ցեղախմբերից՝ 37 բինաչայի համար 193 թուման, սաաթլուցիներից՝ 28 բինաչայի համար 62,8 թուման, չիրախլի ցեղից՝ 40 բինաչայի համար 250 թուման, շահդիլիներից և սադարակլիցիներից՝ 53 բինաչայի համար 275 թուման և այլն[183]։

Հայկական համայնքից Կողբի և Ջնչհավատի «աղ կտրողները» 38 բինաչայի համար վճարում էին 357 թուման[184], իսկ ակոռեցիները՝ 30 բինաչայի համար 250 թուման։

Բոլոր բինաչաների թիվը Երևանի խանությունում հավասար էր 1093-ի։ Սրանք տարեկան խանական գանձարան էին մուծում 7836 թումանից ավելի դրամական հարկ։ Բացի այդ, կային նաև 490 բինաչաներ Շարուրի, Սարդարապատի և Կարբիբասարի մահալներում, որոնք դրամական տուրք չէին վճարում։

Համեմատաբար քիչ դրամական տուրք վճարում էին քոչվոր ցեղախմբերը, որոնց բնակավայրերի կենսապայմանները, ինչպես նաև զբաղմունքի տեսակը այնքան էլ չէին նպաստում նրանց բարեկեցությանը։ Բացի այդ, նրանց տրված էին որոշ արտոնություններ՝ սահմանապահ ծառայություն կատարելու համար։

Տարեկան դրամական տուրքեր վճարում էին նաև ա) Երևանի հայ բնակչությունը—1724,5 թուման, բ) Էջմիածնի վանքը որպես մաղթա—400 թուման (թեև Աբաս Միրզայի հրովարտակով ազատված էր այդ վճարումից), գ) Մակուի Աշի խանը, որը ենթարկվում էր Երևանի սարդարին և 300 թուման վճարում էր Շարուրի մահալում նրան որպես թիուլ պարգևված Արաբ-Ենգիջա, Կարա-Հասանլի և Դիադին գյուղերի համար, դ) քոչվոր թաթարներն ու քրդերը—8219,8 թուման[185]։

Յուրաքանչյուր տարի Երևանի խանին տրվում էին ընծաներ՝ փեշքեշներ, որպես հարգանքի և հավատարմության նշան։ Փեշքեշը մատուցվում էր Նովրուզ-բայրամի օրը՝ ոսկե կամ արծաթե մատուցարանների վրա։ Այդ փեշքեշները կրում էին պարտադիր բնույթ և նույնիսկ սահմանված էր նրանց գումարը։ Էջմիածնի վանքը որպես փեշքեշ վճարում էր 150 թուման, Մակուի Աշի խանը՝ 200 թուման, Երևանի բնակիչները՝ 100 թուման, Զանգիբասարի, Կրխբուլաղի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Սարդարապատի և Կարբիբասարի բնակիչները՝ 440 թուման։ Բացի այդ, Երևանի բնակիչները պարտավոր էին սարդարին ընծայել 60 գլուխ շաքար, իսկ Շարուրի բնակիչները, դրամի փոխարեն, վճարում էին մոտավորապես 1000 թաճկիրա ցորեն և 1400 թաճկիրա չալթուկ՝ 450,6 թումանի արժողությամբ։ Դարաքենդ-Փարչենիսի և Սաաթլուի մահալի ավագները սարդարին մեկական նժույգ պետք է ընծայեին։ Փեշքեշի տարեկան գումարը կազմում էր 1320,6 թուման[186]։ Զգալի դրամական գումար էլ ստացվում էր կաշառատվությունից (ռուշֆաթից), որին թեև փեշքեշի տեսք էր տրվում, բայց մատուցվում էր դատական գործերը հօգուտ իրենց լուծելու համար։

Խոշոր հարկ էր դրվում նաև հայերի խաղողի այգիների վրա, որովհետև նրանք խաղողից գինի էին պատրաստում, իսկ գինի խմելը ղուրանը մահմեդականներին արգելում էր։ Մահմեդականները խաղողի այգիների համար տուրք չէին վճարում, քանի որ նրանք, իբր, գինի չէին պատրաստում։ Զարմաքշի, Քանաքեռ և Կրղել-Կալա (Կրբխբուլաղի մահալ), Շիրաբաղ (Զանգիբասարի մահալ), Աշտարակ (Կարբիբասարի մահալ), գյուղերի բնակիչները խաղողի այգիների համար վճարում էին 680 թուման։ Դրանցից միայն Աշտարակ գյուղը, որը խլվել էր Էջմիածնից

---

[179] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1377, оп. I, д. 19, л. 10 об:

[180] Տե՛ս **Шопен И.**, նշվ. աշխատ., էջ 972:

[181] Նույն տեղում:

[182] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1377, оп.1, д. 19, л. 10 об.

[183] Նույն տեղում, հմմտ. ЦГИА СССР, ф. 1377, оп. 1, д. 19, лл. 21 об.—26 об:

[184] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1377, оп. 1, д. 19, л. 16 об:

[185] **Шопен И.**, նշվ. աշխատ., էջ 968—969:

[186] Նույն տեղում, էջ 274—275:

նից, վճարում էր 240 թուման[187]։ Էջմիածնի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ և Օշական գյուղերը ազատված էին այդ տուրքից։

Մահալների պետերը՝ միրբոլուքները, թեև իրենց ծառայության համար, սովորաբար, խանից էին ռոճիկ ստանում, սակայն որոշ դեպքերում, ռոճիկը վճարելու պարտավորությունը դրվում էր բնակչության վրա[188]։ Բնակչությունից էր գանձվում նաև միրաբների (ջրաժաններ) վարձը, իսկ հարկահավաքներին պետք է վճարվեր ծառայության վարձ՝ ղուլլուխ-փուլի։ Այն գանձվում էր բերքահավաքից հետո։ Սարդարին հասանելիք յուրաքանչյուր խալվար հացահատիկի համար գանձվում էր 6 շահի, բամբակի և ծխախոտի համար՝ 2 թուման։ 1827 թվականին ղուլլուխ-փուլու գումարը կազմել է 1383 թուման։ Միաժամանակ այդ տուրքի միջոցով ստուգվում էին մյուս տուրքերը։

Վերոհիշյալ բազմաթիվ դրամական ուղղակի տուրքերից և հարկերից բացի, խանական գանձարանին մեծ եկամուտ էին բերում նաև անուղղակի հարկերը, մաքսերը, զանազան տեսակի կապալային հոդվածները, քարավանատները, կրպակները, դրամահատությունը և այլն։

Հյուսեին Ղուլի խանի տիրապետության օրոք կապալով էր տրվում այն ամենը, ինչ հնարավոր էր, մի բան, որ սարդարական գանձարանին խոշոր եկամուտ էր բերում։ Կապալով տրված օբյեկտներից ամենակարևորը Կողբի աղահանքերն էին, որոնք տարեկան 3500 թումանի եկամուտ էին բերում։

Մաքսի կամ ռահդարի գանձման գործը նույնպես տրվում էր կապալով։ Այն գանձվում էր, ինչպես նշվել է վերևում, տարբեր վայրերում։ Ռահդարի տարեկան կապալավարձը կազմում էր 3394 թուման[189]։

Գինի և օղի վաճառելու իրավունք ստանալու համար բնակչությունը պարտավոր էր սարդարին վճարել 110 թուման, որից 80 թումանը ստացվում էր Երևանից, իսկ 30 թումանը՝ Սարդարապատից[190]։

Որոշ դեպքերում սարդարը մուլքադարներին էր շնորհում նրանց գյուղերից ստացվող բոլոր հարկերը, բայց դրանց դիմաց զանազան գումարների դրամական հատուցում էր ստանում։ Այս գյուղերի թվին էին պատկանում Զանգիբասարի մահալի Դամիրչի-Շորլի, Գառնիբասարի մահալի Ագհամզալի, Շարուրի մահալի Քյուրքչիլի, Ակսիքենդ, Լաու-

[187] Նույն տեղում, էջ 975, հմմտ. նաև ЦГИА СССР, ф. 1377, оп. I, д. 19, лл. 19 об.—20 об.

[188] **Шопен И.**, նշվ. աշխատ., էջ 979—980։

[189] Նույն տեղում։

[190] Նույն տեղում, էջ 982—984։

շան գյուղերը, որոնց մուլքադարներից գանձվում էր 526 թուման։

Նույնիսկ Երևանի դարուղայի (ոստիկանապետի) պաշտոնն էր կապալով տրվում, որը սարդարին տարեկան 819 թումանի եկամուտ էր բերում, իսկ դարուղան էլ իր հերթին, այդ գումարից շատ ավելի գանձում էր Երևանի բնակիչներից, ինչպես նաև վաճառականներից, որոնք ապրանք արտահանելու համար նրանից թույլտվություն էին վերցնում և որոշակի գումար մուծում՝ ամեն մի բեռ ապրանքի համար։

Այսպիսի ուղղակի և անուղղակի հարկերից ու տուրքերից ստացվող դրամական գումարը տարեկան կազմում էր մոտավորապես 30709,2 թուման (158,837 ռուբլի արծաթով)[191]։

Դրամական հարկերն ու տուրքերը գանձվում էին երկու նվագով՝ աշնանը բերքահավաքից հետո և փետրվար ամսին, երբ ավարտվում էր բամբակի զատումը։ Այդ նպատակով գյուղերն էին ուղարկվում խանական ֆարաշներ՝ միրբոլուքների միրզաների ուղեկցությամբ և ստորագրություն վերցնելով, պարտադրում էին տանուտերերին հավաքել և ճիշտ ժամկետին գանձարան մուծել դրամական հարկերը, հակառակ դեպքում տուգանում էին նրանց։

Տանուտերերը իսկույն ձեռնամուխ էին լինում կես տարվա հարկերի գանձմանը։ Հարկերը հավաքելուց հետո նրանք այն մուծում էին խանական գանձարան և գանձապահից ստանում էին բարաթներ։ Դրանից հետո միրբոլուքները հավաքում էին բարաթները, վերադարձնում էին դրանք գանձապահին և ստանում մի ընդհանուր բարաթ՝ ամբողջ մահալի համար։

Դրամական հարկերից ու տուրքերից բացի, գյուղական բնակչությունից գանձվում էին նաև բնամթերային հարկեր։ Բնամթերային հարկերի չափը կախված էր գյուղերի այս կամ այն խմբին պատկանելուց։

Բահրաքյարական գյուղերը վճարում էին երկրագործական բոլոր մթերքների երրորդ մասը։ Յարիքյարական կամ կիսբարական գյուղերը, սերմացուն առանձնացնելուց հետո, գանձարանի հետ կիսում էին բերքը։ Ռանչպարական գյուղերի բնակչությունը լիովին ընչազուրկ գյուղացիներ էին, որոնք հողազուրկ էին և մշակում էին ուրիշի հողերը՝ նրանց իսկ արտադրամիջոցներով։ Նրանցից խլում էին բերքի 2/3-ը և թողնում էին այնքան, որքան անհրաժեշտ էր, որպեսզի նրանք սովամահ չլինեին։ Նման գյուղերի թիվը մեծ չէր։ Ընդամենը վեց ռանչպարական գյուղեր կային, որոնցից երկուսը պետական, երկուսը մզկիթապատկան և երկուսն էլ մուլքադարական։ Դրանք էին Զանգիբասարի մահալի Զար-

[191] Նույն տեղում, էջ 984—986։

բախ և Սարվանլար-Սուֆլա մզկիթապատկան գյուղերը, Շարուրի մահալի Զոմախտրը և Կարբիբասարի մահալի Մուղանջիկ պետական գյուղերը, Սուրմալուի մահալի Զիրախլի և Կարբիբասարի մահալի Ալիբեկլու մուլքադարական գյուղերը: Սակայն այս գյուղերի հարկավճարումները միատեսակ չէին: Զարբախ գյուղը վճարում էր չալթուկի և բամբակի բերքի 2/3-ը, իսկ մյուս մթերքների՝ երրորդ մասը: Զոմախտրը գյուղը տալիս էր չալթուկի բերքի 2/3-ը, բայց մյուս կուլտուրաների բերքի կեսը: Մուղանջիկ պետական գյուղի վիճակը ավելի ծանր էր՝ վերցրվում էր բերքի 4/5 մասը:

Խոսելով ռանչպարական գյուղերի գյուղացիների դրության մասին, Հայկական մարզի վարչության անդամ, մայոր Մեդոկսը հետևյալն էր գրում. «Երևանի խանության մի քանի գյուղեր, որոնք կոչվում էին ռանչպար, ավելի ծանր կոռի էին դատապարտված: Դրա էությունն այն էր, որ սարդարը տալիս էր գյուղացիներին իր սերմացուն, անասունները և գյուղատնտեսական գործիքները և ամբողջ բերքից նրանց թողնում էր միայն 1/5-ը, իսկ մնացյալը վերցնում էր իրեն. բայց այդպիսի գյուղերի թիվը քիչ էր»[192]: Բերքի 1/5-ը թողնելու մասին Մեդոկսի տեղեկությունը հակասում է Շոպենի բերած ավելի մանրամասն տվյալներին: Հավանաբար Մեդոկսը ուզեցել է շեշտել ծանրագույն դեպքը և զանց առել մյուս մանրամասները, որոնք մեզ հաղորդում է Շոպենը: Այնուամենայնիվ, մի բան պարզ է, որ ռանչպարները գտնվում էին ամենավատթար դրության մեջ[193]:

Որոշ դեպքերում սարդարը մուլքադարներից վարձով վերցնում էր հարուստ գյուղերից բոլոր հարկերը գանձելու և սեփականացնելու իրավունքը, մուլքադարներին վճարելով որոշ քանակությամբ ցորեն, բամբակ և այլն[194]:

Սահմանված անասնահարկը վերցնելու համար նախապես հաշվում էին անասունների գլխաքանակը: Յուղը հավաքվում էր տարվա երեք սեպտեմբերին:

Որոշ վայրերի գյուղացիներ կրում էին նաև մի այլ պարհակ, որ փարաքար էր կոչվում: Լավ հողեր և առատ ջուր ունեցող գյուղերի բնակիչներին սարդարը սերմացու էր տալիս և բերքահավաքից հետո ցանված յուրաքանչյուր խալվարի դիմաց վերցնում էր հինգ անգամ ավելի ցորեն ու գարի, յոթ անգամ ավելի չալթուկ և 60 բաթման էլ մաքուր զտված բամբակ[195]: Այդ եղանակով սարդարը տարեկան 89 խալվար 47 բաթմանի զուտ եկամուտ էր ունենում, որ դրամով հաշված կազմում էր 23715 ռուբլի: Իսկ ընդհանրապես ընամթերային հարկերից ստացված եկամուտը հավասար էր 84 435,4 թումանի (337742 ռուբլի արծաթով):

Այս բոլորից բացի, գյուղացիներից վերցնում էին դրման, խոտ և այլն: Քոչվոր ցեղերից յուրաքանչյուր հարյուր գլուխ այծի և ոչխարի դիմաց որպես հարկ վերցվում էր մեկ ոչխար և մեկ գառ, կամ յուրաքանչյուր հարյուր հազար գլուխ ոչխարի դիմաց 500 թուման: Քոչվոր բրդական ցեղախմբերը 251700 գլուխ ոչխարի դիմաց վճարում էին մոտ 1300 թուման հարկ: Նրանք պարտավոր էին նաև պահել սարդարին պատկանող անասունները դեշպեդեշի և ամանիի հիմունքներով: Առաջին դեպքում քոչվորները պարտավոր էին պահանջելուն պես տալ նույն տարիքի և քանակի անասուններ: Յուրաքանչյուր կթի ոչխարի դիմաց նրանք վճարում էին կես բաթման յուղ, իսկ բոլոր ոչխարների համար մեկ ստիլ բուրդ: Ոչխարների ծինը պատկանում էր պահողին: Երկրորդ դեպքում աճեցրած գլխաքանակը և բուրդը պատկանում էր սարդարին, դրա հետ մեկտեղ 7,5 ստիլ յուղ յուրաքանչյուր կթի ոչխարից: Ոչխարներին դրոշմում էին և 500 գլուխ տալիս երկու հովվի պահելու, որոնց վարձ էր տրվում 20 գառ և 120 բաթման ցորեն: Դեշպեդեշի հիմունքով սարդարը պահել էր տալիս մոտ 11 հազար գլուխ ոչխար, որոնց դիմաց ստանում էր 5420,5 բաթման յուղ և 504 բաթման բուրդ: Ամանիի հիմունքով սարդարը պահելու էր տալիս 8425 գլուխ ոչխար և 830 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Մեկ գոմեշի դիմաց սարդարին վճարվում էր 6 բաթման, իսկ կովի դիմաց՝ 4 բաթման յուղ, ընդամենը 2060 բաթման: Ոչխարներից ստացվում էր 3154 բաթման յուղ և 3197 բաթման բուրդ: Քոչվոր քրդերը պարտավոր էին նաև տարեկան մեկ անգամ սարդարին տրամադրել իրենց բեռնակիր անասունները, որպեսզի նա բամ-

---

[192] Рштуни В., Крестьянская реформа в Армении, с. 48.

[193] Ելնելով ռանչպարների փաստական ծորտական վիճակից, պրոֆ. Ռշտունին նրանց անձնական ազատությունը և տեղափոխման հնարավորությունը համարում է իրավական ֆիկցիա (տե՛ս նրա Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության գիրքը, էջ 68—69): Բայց մենք ունենք փաստեր, որոնք խոսում են այն մասին, որ նման գյուղացիները ունեին տեղափոխման հնարավորություն, հետևապես անձնապես ազատ էին: Այսպես, Աղա Մահմեդ խանի արշավանքի հետևանքով Ղարաբաղից Երևան անցած հայերը, որոնց Երևանի Մամադ խանը օթևան էր տվել և ապրուստի միջոցներ, հետագայում թողնում-անցնում են Վրաստան, իրենց մելիքի՝ Մելիք Աբովի մոտ, իսկ խանը չի կարողանում կանխել նրանց տեղափոխությունը (տե՛ս «Присоединение...», т. I, док. 8, 11):

[194] Шопен И., նշվ. աշխատ., էջ 988—989:

[195] Рштуни В., Крестьянская реформа в Армении, с. 47.

բակը, բրինձը և այլ ապրանքներ տեղափոխի Բայազետ, Նախիջևան, Կարս, Խոյ, Ուրմիա, Թիֆլիս և այլուր[196]։

Բնատուրք հավաքելու համար նշանակվում էին սարքյարներ, ինչպես սարդարի, այնպես էլ միրբոլուքների կողմից։ Սարդարը հաճախ մահալներն էր ուղարկում իր սարքյարներին, եթե նկատում էր, որ տուրքերը պակասում են, իսկ որոշ դեպքերում էլ իր սարքյարների փոխարեն նշանակում էր մահալային սարքյարներ։

Սարդարի կողմից նշանակված սարքյարներին բնակչությունը ամսական մեկից մինչև երկու թուման էր վճարում և երեք բաթման էլ մթերքներ ամեն մի կալից, բացի բամբակից։ Գյուղացիները միաժամանակ պետք է կերակրեին նրանց և ձիու համար էլ օրական մեկ բաթման գարի տային։ Սարդարական սարքյարների թիվը հասնում էր մինչև 50-ի։

Մահալական սարքյարները ամսական մինչև մեկ թուման էին ստանում և երեք բաթման էլ բնամթերք։ Դրանց թիվը հասնում էր 150-ի։ Բայց նրանք իրավունք չունեին ձիու համար գարի ստանալ։

Այսպիսին էր հարկային ընդհանուր համակարգը Երևանի խանությունում 19-րդ դարի առաջին երեսնամյակում։ Ինչ վերաբերում է Նախիջևանի խանությանը, ապա քանի որ այն գտնվում էր Ատրպատականի կոսակալի անմիջական գերակայության ներքո, այստեղ հարկերը հավաքվում էին այնպես, ինչպես ընդունված էր ամբողջ Պարսկաստանում։ Նախիջևանի խաները տարեկան հարկ էին վճարում Աբաս Միրզային։ Այդ հարկի գումարը կազմում էր ավելի քան 30 հազար թուման դրամով և 2424 խալվար 90 բաթման՝ հացահատիկով։

Նախիջևանի խանությունում ուղղակի հարկեր գանձվում էին ինչպես առանձին շնչերից, այնպես էլ ծխերից, նաև բնակչության խմբերից, անասնապահությունից, մեղվաբուծությունից, ջրաղացներից, ջուլհակագործությունից, հայկական եկեղեցիներից, անշարժ կայքից, առևտրից և այլն։

Գլխահարկը (բաշփուլի) գանձվում էր յուրաքանչյուր 15 տարին լրացած հողագործից։ Այն գանձվում էր ամուրիներից, հայերից՝ 1 թուման, իսկ մահմեդականներից՝ կես թուման 4 շահի։ Ծխահարկը կամ էվփուլին գանձվում էր յուրաքանչյուր ընտանիքից. հայերից՝ 2 թուման, մահմեդականներից՝ 1 թուման։

---

[196] Տե՛ս Богданова Н., К вопросу о феодальной эксплуатации кочевников в Закавказском крае в первой трети XIX в., «Исторический архив», т. II, М.-Л., 1939; ЦГИА СССР, ф. 1377, оп. 1, д. 19, лл. 21 об.—26 об.

Քաղաքային բնակչությունից քյանգուրլիցիներին պատկանողները վճարում էին 1260,9 թուման, երկրագործությամբ զբաղվողները՝ 150 թուման։ Օրդուբադ քաղաքը վճարում էր հազար թուման։ Դարալագյազի մահալում հաստատված կարաչորլու և քյանդուրլու ցեղախմբերը միասին վճարում էին 2000 թուման։ Այդ դրամը հատկացվում էր Պարսկաստան փախած վրացական արքայազն Ալեքսանդրին, որին այդ մահալը տրված էր որպես թիուլ։

Անասունների յուրաքանչյուր գլխի համար (բացառությամբ եզների, որպես հողագործության համար խիստ անհրաժեշտ կենդանիների) գանձվում էր որոշակի գումար, որի ստույգ չափը հայտնի չէ։ Խոշոր եղջերավոր անասունների յուրաքանչյուր գլխից գանձվում էր մոտավորապես կես թուման, մանր եղջերավոր անասուններից 12 շահի, 16 շահի էլ վճարվում էր մեղվի ամեն մի փեթակի համար։

Ջուլհակագործությամբ բացառապես հայերն էին զբաղվում, որոնք և յուրաքանչյուր դազգահի համար վճարում էին կես թուման, մոտավորապես երկու թուման էլ մետաքսագործական ամեն մի դազգահից։ Հայկական ամեն մի եկեղեցի վճարում էր չորս թուման։ Սակայն որոշ վանքեր ավելին էին վճարում, ինչպես Կարմիր վանքը՝ տարեկան վեց թուման։ Այդ հարկը տրվում էր փաստորեն ազատ ժամասացության իրավունք ձեռք բերելու համար։

Քարավանատների, կրպակների և բաղնիքների տերերը որպես հարկ վճարում էին շահույթի քսան տոկոսը, տարեկան մոտավորապես 300 թուման։ Առևտրականները վճարում էին յուրաքանչյուր թումանից մեկ շահի, որպես ավայի։ Այդ հարկավճարի տարեկան ընդհանուր գումարը կազմում էր 400 թուման, որը նշանակում էր, թե տարեկան դրամաշրջանառությունը Նախիջևանում հասնում էր 80000 թուման։

Նախիջևանի խանությունում գանձվում էր կուլլուխ փուլի, թարզի փուլի, ինչպես նաև թերակշռման համար հարկ՝ 2000 դիան յուրաքանչյուր խալվարից։ Օրդուբադի շրջանում գանձվում էր նաև ղուլլեկ կոչված տուրքը բոլոր տեսակի գնորդներից, տուրք, որը Պարսկաստանի որևէ այլ մասում գոյություն չուներ։

Հարկեր գանձվում էին նաև այգիներից։ Խաղողի յուրաքանչյուր այգուց գանձվում էր 4,5 թուման, ամեն մի հազար մրգատու ծառից՝ երեք թուման։ Ընկույզի ամեն մի ծառի համար գանձվում էր 20 շահի։ Այդ հարկը կազմում էր բերքի մեկ հինգերորդ մասը։

Մնացած հողերը բաժանվում էին երեք հավասար մասերի, մի մասը նախատեսվում էր ցորեն և գարի ցանելու համար, մյուս մասը այլ կուլտուրաների, այն է՝ բամբակ, բրինձ, քունջութ և այլն, որոնցից հար-

կը դրամով էր գանձվում, իսկ երրորդ մասը հանգստի համար էր և չէր հարկադրվում։ Հողագործները պարտավոր էին վճարել նաև դարմանի դիմաց կես թուման ամեն մի խալվարից, մետաքսամշակության համար՝ ստացված ամբողջ մետաքսի հինգերորդ մասը, առվույտի ընդհանուր բերքի մեկ հինգերորդ մասը։

Յորենի և գարու բերքից գանձարանը վերցնում էր ընդհանուր բերքի 3/30-ը, իսկ 1/20 մասը կազմում էր չիլյաքը, որը նույնպես խաները սեփականացրել էին։ Մուլքադարական հողերից եկամտի 2/10-ը գնում էր գանձարանին, իսկ 1/10-ը տրվում էր մուլքադարին։

Հայաստանի հյուսիսային շրջաններում և Արցախում գանձվող հարկերը մեծ մասամբ ըստ էության նույնն էին, բայց կրում էին այլ անվանումներ։ Քարթլիի և Կախեթի թագավորության մեջ բնակչությունը ստորաբաժանվում էր չորս հատարակախտավերի՝ իշխանների, ազնվականների, հոգևորականության և գյուղացիության։ Հարկատու դասակարգը՝ գյուղացիությունը, իր հերթին տրոհված էր մի քանի կարգերի՝ արքունական, կալվածատիրական, եկեղեցական և թարխանների (ազատների)։ Վերջիններս ազատ էին հարկերից։ Վրաց արքաները թարխանություն շնորհում էին ռազմական նշանակալից ծառայությունների համար, իսկ հետագայում նույնիսկ նվերների և նման մանր ծառայությունների դիմաց։ Սրանք, սակայն, խիստ փոքր թիվ էին կազմում[197]։ Գյուղացիության նման ստորաբաժանումը այս կամ այն չափով հատուկ էր նաև Վրաստանի կազմի մեջ մտնող հայկական որոշ շրջանների, մասնավորապես Լոռուն։

Վրաստանում գանձվող գլխավոր տուրքերից էին սուրսաթը, որ հավաքվում էր ինչպես պետական, այնպես էլ կալվածատիրական և եկեղեցական գյուղացիներից։ Յուրաքանչյուր ծուխ վճարում էր երեք կոտ հացահատիկ՝ երկու կոտ ցորեն և մեկ կոտ գարի։ Սուրսաթը գանձվում էր զորքը հացով ապահովելու նպատակով[198]։ Եթե բերքառատ տարի չէր լինում, ապա յուրաքանչյուր կոտի դիմաց գանձվում էր մեկ ռուբլի։ Հայկական շրջաններից գանձվող սուրսաթի քանակը կազմում էր 16042 կոտ[199]։ Ղալլա վճարում էին միայն արքունական գյուղացիները, ընդ որում տարբեր վայրերում տարբեր չափով՝ հացահատիկի բերքի 1/7 մինչև 1/10 չափով։ Մաղթան դրամական հարկ էր, որ պետք է վճարեին քաղաքացիները՝ մոքաչարները և արքունական գյուղացիները։

[197] «Свод материалов...», т. II, стр. 5—6.
[198] Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 16, д. 37, л. 27.
[199] Տե՛ս Նույն տեղում, д. 4150, л. 121։

Մաղթա գանձվում էր յուրաքանչյուր շնչից 1 ռուբլի 4 3/4 կոպեկ։ Այսպես կոչված թաթարական սուլթանությունները մաղթա վճարում էին հացահատիկով։ Բնատուրքերից էր կուլուխին՝ գինու հարկը, բերքի 1/10 կամ 1/7 չափով. երբեմն այս հարկը գանձվում էր դրամով, յուրաքանչյուր տապալիեի (112 թունգու) դիմաց 10 ռուբլի արծաթով։ Մի շարք հարուստ համարված գյուղերից սուրսաթից բացի գանձվում էր կոդիսպուրի։

Կալվածատիրական գյուղացիները վճարում էին դրամական և բնամթերային հարկեր, կատարում էին աշխատանքային պարհակներ և այլն։

Թե՛ պետական և թե՛ կալվածատիրական գյուղացիների համար ամենածանր պարհակները հանքերի մշակման համար կարգադրված առանձնացնելն ու ճանապարհների վերանորոգումը կամ նորերի շինարարությունն էր։ Դրանք ծանր էին ոչ միայն այն պատճառով, որ գյուղացիներից մեծ ծախսերի և ուժերի լարում էին պահանջում, այլև այն պատճառով, որ խանգարում էին նրանց զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով և շատ դեպքերում ծանր վնասներ էին հասցնում գյուղացիական տնտեսությանը։

Ուղեմասերի բնակիչները նաև պետք է պահակային ծառայություն կատարեին, հեծյալ (123 մարդ) և հետևակ (500 մարդ) մարդիկ տային լեռնանցքները և ճանապարհները պաշտպանելու համար ավազակներից ու համաճարակային հիվանդություններից։

Ղարաբաղի խանության մեջ նստակյաց բնակչությունից և քոչվորներից տարբեր հարկեր էին գանձվում։ Նստակյաց բնակչությունը վճարում էր հետևյալ հարկերը՝ մալջահաթ՝ հացահատիկի և երկրագործական մյուս արդյունքների 1/5-ի չափով, սալյանե, որ գանձվում էր նույնպես հացահատիկից, միրզայանի, կուլլուխի, թաղմիլանի և դարղալլը, որոնք գանձվում էին խանական պաշտոնյաների, ծառաների և զորքի վարձատրության համար, ինչպես նաև դրամական հատուկ տուրք, որից կազմվում էր խանի կողմից ռուսական պետությանը վճարվող 8 հազար ռուբլու տուրքը։ Գյուղացիները վճարում էին նաև բայրամլը՝ Նովրուզ բայրամի տոնին, հարսանիքի համար, իսկ առանձին գյուղեր նաև փայտ էին տալիս։

Քոչվորներից գանձվում էր սալյանա, օթախ-խարջի, կիրխան-խարջի՝ յուղով, բուրդ, գառներ, ինչպես նաև բահրա՝ պետական հողի վրա վարուցանք կատարելու իրավունքի համար՝ յուրաքանչյուր արորից

1 1/2 չետվերտ ցորեն և 1,5 ջվալ գարի, ինչպես նաև դրամական տուրք[200]։

Մահմեդական բնակչությունը Անդրկովկասում վճարում էր մի շարք կարևոր բնույթ կրող տուրքեր։ Շիա դավանանքի պատկանող մահմեդականները որոշ գումար էին հավաքում մարսիախաներ (պատմողներ) վարձելու համար։ Սրանք կատարում էին Իմամ Հուսեյնի մահը սգալու ծիսահանդեսը, որի ժամանակ ամեն մի մահմեդական մի հայտնի գումար էր տալիս, որի մի մասը գնում էր հոգևոր մարսիախաների, իսկ մյուս մասը՝ աղքատների օգտին։ Մյուս հոգևոր տուրքը ֆիտրան էր, երկու սեռի յուրաքանչյուր շնչից 8,5 ֆունտ հացահատիկ՝ Ռամազանի վերջին օրը աղքատներին բաժանելու համար։ Զաքյաթ հավաքվում էր երկրագործական արդյունքների 1/40-ի չափով՝ հօգուտ աղքատների, մզկիթների և մուսուլմանական կրոնը հովանավորող անհավատների։ Խումս վճարում էին սունիի դավանանքին պատկանող մահմեդականները։ Սա բաղկանում էր ամեն մի ծիսի տարեկան ծախսերից հետո մնացած եկամտի 1/5-ից, որից կեսը տրվում էր հոգևորականներին, իսկ մյուս կեսը՝ սեիդներին՝ մարգարեի ժառանգներին։

Այսպիսին էր, համառոտակի գծերով, հարկային համակարգը այն վարչական միավորումներում, որոնց մեջ տարաբաժանված էր Արևելյան Հայաստանի տարածքը։

Հարկերի գանձումը ուղեկցվում էր բռնություններով, խժդժություններով՝ գյուղացիությանը դատապարտելով աղքատության ու թշվառության։ Խիստ բնորոշ է հինավուրց Դվինի ավերակներից հարավ-արևմուտք ընկած Աղբաշ գյուղի թշվառության նկարագրությունը, որ թողել է Մ. Թաղիադյանը։ «Սրա անդաստանները հոչակավոր են բրնձի ընտիր և պատվական բերքով, որ միայն իշխանների ու թագավորների կերակուր է դառնում։ Թեև բոլորի համեմատ շատ առատ էր բերքը, սակայն բնությունից խիստ ընտիր էր, ուստի կրկնապատիկ ավելի գնով էր վաճառվում, քան այդ գավառի այլևայլ արտերի բերքը։ Այսպիսի բարեբեր գյուղի բնակիչները, հարկավ, պետք է հարստանային, բայց ընդհակառակը, շքավորության շղթաներով էին կաշկանդված, որովհետև Երևանի կուսակալ Հյուսեին խանը, որպես երկրիս բոլոր գյուղերի, այնպես էլ այս գյուղի բնակիչների բոլոր ցանքսերին բաժնեկից էր դառնում։ Ամեն մի տուն տալիս էր մի լուծ եզներ, բրնձի, բամբակի և այլ շահաբեր կուլտուրաների սերմեր։ Նրանք ցանում էին, իսկ հունձի ժամանակ խանը ուղարկում էր (հարկահավաքներ), որոնք կիսում էին բերքը և ապա մնացած մասից էլ վերցնում էին արքունական տուրքը, այնպես որ գյուղացիների ծախսերի համար բավական բան չէր մնում։

Եթե պատահում էր, որ երկնատաք պատուհասից անբերրիանում էին հանդերը և բերք չէին տալիս, խանը, ժողովրդի վրա գցելով մեղքը, անպատմելի խժդժությամբ բռնանում էր նրանց վրա, բռնագրավում էր ինչ որ գտնում էր նրանց տանը՝ կահն ու կարասին և, եթե դա էլ էր պակասում, վերցնում էր նրանց կանանց ու զավակներին՝ իր ընկերաբաժնի դիմաց... Ծեծի միջոցով էր նա բազմապատկում յուր ոսկիները և տառապյալ մարդկանց տանջանքների հաշվին հավաքում էր այն հացեցնելու իր որկորը. ամբողջ երկիրը մաշում իր կեղեքումներով և ժողովրդի քրտինքով կառուցում էր Ղազբինի իր դաստակերտները, բազմացնում իր գանձերը»[201]։

Իշխանավորների ընչաքաղցությունը, բազմաթիվ ու բազմապիսի հարկերը, կանանց ու երեխաների վաճառքը, ունեցվածքի բռնագրավումը, խեղճ գյուղացիության ստրկացումը վաշխառուներին, որոնք բարձր տոկոսներով և կարճ ժամկետներով գումարներ տալով, հետագայում հարյուրապատիկ ավելին էին կորզում իրենց ճանկն ընկած զոհերից, գոյության անտանելի պայմաններ էին ստեղծում երկրի ամենաբազմամարդ և առավել շատ շահագործվող դասակարգի՝ գյուղացիության համար։

6. ԱԶԳԱՅԻՆ ԾՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ

Պարսկական տիրապետության վերջին տարիներին հայ բնակչության վիճակը գնալով ավելի ու ավելի ծանրացավ։ Սոցիալական դաժան ճնշումներին գումարվում էին ազգային ու կրոնական հալածանքները, որպես պատասխան հայ ժողովրդական զանգվածների ազատագրական ձգտումների, Ռուսաստանի օգնությամբ թուրքական և պարսկական լուծը թոթափելու նրանց փորձերի։ Հայերի նկատմամբ բռնություններն ու վայրագությունները հասել էին մինչ այդ չտեսնված չափերի. «Մարդ որ հողը տա գլխին. ինչ ուզում են, էն են անում։ Դատաստան չկա, իրավունք չկա... Աղջիկն ասես, քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ոչ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղլուշաղը»[202]։

---

[200] Տե՛ս **Могилевский и Ермолов**, Описание Карабагской провинции, Тифлис, 1823։

[201] **Մ. Թաղիադեանց**, Ճանապարհորդութիւն ի Հայս..., հ. 1, էջ 226—227։

[202] **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 38։

Նույնիսկ ամենայն հայոց կաթողիկոսությունը և նրա կենտրոն էջմիածինը, որոնք իբր թե գտնվում էին գահաժառանգ Աբաս Միրզայի հատուկ «հովանավորության» ներքո, ենթարկվում էին չտեսնված հալածանքների։ Բանը երբեմն այնտեղ էր հասնում, որ նույնիսկ էջմիածնի հոգևոր պաշտոնյաներին փորձում էին բռնությամբ մահմեդականացնել։ 1808 թվականին, Դանիել կաթողիկոսի մահից հետո, Հյուսեին Ղուլի խանը բռնությամբ Երևան է տանում կաթողիկոսի սպասավոր մի երիտասարդի, տրին և փորձում է մահմեդականացնել ու պահել հարեմում։ Միայն 500 թուման կաշառքի գնով է հաջողվում ազատել նրան[203]։ 1812 թվականին ինչ-ինչ պատճառներով բռնությամբ թլպատվում է Ահարոն անունով մեկը՝ Վանքի միաբաններից և պահվում խանական պալատում[204]։ Սարդարական «կառավարությունը» օգտագործում էր ամեն մի առիթ, որպեսզի կաշառքներ ու «նվիրատվություններ» կորզի իր հպատակներից։ «Պատահում էր, որ ոչ միայն սարդարը, այլև մի ինչ-որ խան էր գալիս,— աշտարակեցիների բերանով պատմում է իր օրագրում դեկաբրիստ Ե. Լաչինովը,— և նրա այստեղ մնալու ժամանակը անցնում էր տանջալից սպասումով՝ ոչ ոք վստահ չէր իր կյանքի ապահովության համար։ Ծանրությունն ընկնում էր մարդու հոգուց միայն այն ժամանակ, երբ նա գնում էր, բայց այն երկյուղը, որ նա հանկարծ չլինի թե վերադառնա, երկար ժամանակ թույլ չէր տալիս լիովին հանգստանալ...»[205]։ Մի այլ կապակցությամբ նույն Լաչինովը գրում էր. «...սարդարի գալուստը բոլորին ստիպում էր թպրտալ։ Ամեն ոք պետք վախենալով զրկվել ողջ կարողությունից, նրանք վստահ չէին կարող լինել նույնիսկ կյանքի համար»[206]։ Այդպես էր ամբողջ Պարսկաստանում. իր ձեռքում իշխանություն ունեցող անձի այցելությունը որևէ վայր հաճախ իր ետևից բերում էր շատերի սնանկացում։ Հայ ունևոր դասակարգերը ևս զերծ չէին այդ վտանգից՝ նրանց կյանքը և ունեցվածքը նույնպես մշտական սպառնալիքի տակ էին։

Դրա բնորոշ օրինակ կարող է ծառայել Երևանի Մամադ խանի վերաբերմունքը խանության աչքի ընկնող հայերից հարյուրապետ Գաբրիել Գեղամացու նկատմամբ։ Դեռևս 1804 թվականի սկզբներին, Գանձակի գրավումից հետո, լուրեր առնելով այն մասին, որ ռուսները պատրաստվում են ներխուժել Երևանի խանություն և գրավել Երևանի բերդը, Մամադ խանը կարգադրում է խեղդամահ անել Գաբրիել Գեղամացուն այն նկատառումով, որ իբր թե նա համախոհ է ռուսներին։ «Բայց ազատեալ ի խեղդամանէ անտի միջնորդութեամբ բարեկամաց, միայն անպատուութեամբ կայր անարգեալ ի տան իւրում»[207]։

Հյուսեին Ղուլի խանի կառավարության խիստ ցայտուն բնութագիրը տվել է ժամանակակից իրադարձություններին ականատես Մեսրոպ Թաղիադյանը։ Սարդարը, գրում էր նա, «գանիւք ծնուցանէր իւր ոսկիս, և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արիւն լարրումն իւր զաշխարհն համօրէն կեղեկանօքն մաշէր, և քրտամբք նոցա կերտէր իւր դաստակերտս ի Ղազբին, և ճոխացուցանէր զգանձն»[208]։

Հնօրյա վավերագրերում պահպանվել են խիստ բնորոշ վկայություններ սարդարական դաժան ռեժիմի մասին։ Ճիշտ է, դրանք հիմնականում վերաբերում են էջմիածնի վանքին և հայ հոգևորականությանը, բայց ընդհանուր պատկերացում են տալիս երկրում տիրող դժոխային իրավիճակի մասին, որի մարմնացումն այն ժամանակ Երևանն էր իր տխրահռչակ բերդով։

Նույնիսկ 1810 թվականին, երբ կարծես թե շահական ու խանական կառավարությունները էջմիածինը սիրաշահելու դիրք էին գրավել, դարձյալ շարունակվում էին հալածանքները։ Երբ Փամբակից փախած Նաղի խանի տունը հրդեհվեց մի մարդու կողմից, որի ընտանեկան պատիվը արատավորել էր այդ նույն Նաղի խանը, սարդարի եղբայր Հասան խանը օգտագործեց այդ առիթը կրկին անգամ կողոպտելու վանքը։ Նաղի խանի եղբայր Հասան-բեկը իր մարդկանցով ներխուժում է էջմիածին և սկսում ծեծի ու ջարդի ենթարկել նրանց, ովքեր պատահում էին ճանապարհին։ Նրանք չեն խնայում ոչ տեղապահին, ոչ էլ Ներսես Աշտարակեցի և Հովհաննես եպիսկոպոսներին։ Հրացանի կոթի հարվածով նրանք այնպես են հարվածում զառամյալ Ստեփանոս եպիսկոպոսին, որ հաջորդ օրը նա վախճանվում է։ Սրի հարվածով նրանք պատռում են մայր աթոռի հրացանակիրներից մեկի գլուխն ու ուսը։ Ներսիսյան Հովհաննես եպիսկոպոսին քսան հոգի հրացաններով դաժան ծեծի են ենթարկում և մայր տաճարից մինչև Գայանեի վանքը ծեծելով քաշելքաշ տանում։ Տեղապահ Բարսեղ եպիսկոպոսն էլ իր բաժինն է ստանում։ Նրան այնպես են հարվածում, որ երկու ժամ ընկած է մնում սառույցի վրա։ Այսպես, ծեծի ու ջարդի ենթարկելով բոլորին, բաղաբարոսները

---

[203] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 45, վավ. 142բ։

[204] Նույն տեղում։

[205] Ս. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 377—378։

[206] Նույն տեղում, էջ 383։

[207] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 18։

[208] Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 227։

հեռանում են։ Սակայն մի քանի օր հետո ձերբակալվում են Ներսես Աշտարակեցին, տնտես Ղուկաս վարդապետը, մեհտար Ավետիսը և ուրիշներ ու տարվում Հասան խանի մոտ, որը սպառնում է նրանց հրանոթազարկ անել։ Չնայած վառոդարկուն սպանվել էր, սակայն պատճառաբանելով, որ իբր թե էջմիածնի միաբանության գիտությամբ էր նա արել այդ բանը, էջմիածնի վանքից կորզում են 450 թուման դրամ և նոր միայն հանգիստ թողնում նրանց[209]։

Նրանք, ովքեր խանին «զայրացնում էին» պետք է բռնեին փախուստի ճանապարհը։ Հետագայում Շուշիում հաստատված երևանցի հայ մեծահարուստ Զոհրաբ Թառումյանը, սարդար Մամադ խանի հալածանքներին ենթարկվելով, երեք օր մնում է մի արկղի մեջ թաքնված, որից հետո մի կերպ դուրս է փախչում խանության սահմաններից[210]։

Հար և նման դեպքեր կրկնվում են նաև հետագայում։ 1823 թ., երբ Եփրեմ կաթողիկոսը գտնվում էր փախուստի մեջ, սարդարի պաշտոնյաներից ոմն Միրզա Ջապպար իր ծառաների հետ գալիս է վանք, հյուրընկալվում «անդէն ըմբռնեալ յարբեցութեան»։ Երբ նրանք բավականաչափ գինովանում են, հանում են սրերը և սկսում աջ ու ձախ հարվածել հանդիպած մարդկանց։ Թիկունքից վիրավորվում են Ստեփանոս Գեղամյան և Փիլիպոս Թոխաթցի եպիսկոպոսները, հյուրընկալ Հակոբ և Գևորգ Տաթևացի վարպետները վիրավորվում են թևերից։ Անբաժին չի մնում նաև աթոռակալ Եփրեմ Տեղապահյան արքեպիսկոպոսը, որի թևը ուռչում է ստացած հարվածներից։ Ժամանակակիցները հետևյալ կերպ են նկարագրում այդ դեպքը. «Եւ յամի 1246 զիլհիճէի, 7 միրզայ Ջապպար հաստատիմն սարտարի գնացեալ յաթոռ այնու դիտաւորութեամբ, յետ վայելելոյն զամենայն զբարութիւնս գտանեցեալս անդէն՝ հրաման տայ ծառայից իւրոց սուր առնուլ և հարկանել զամենեսին, յօրժամ և զերկուս յեպիսկոպոսաց զմին յերկուս տեղիս և զմին յերիս՝ վիրաւորեն սաստկապես, սրով, այլև միոյ ի վարդապետաց հարեալ սրով ի գլուխն՝ կտրեն զվերարն, և ազատէ զգլուխն բամբակ վերարին. և միոյ ի վարդապետաց հարեալ փայտիւ զբազուկն՝ փշրեն և մանր խորտակեն, և զմին ի վարդապետաց ծեծեալ մինչև զսպառումն շնչոյն՝ կամին ապա զենուլ և ի տարածանելն յերկիր՝ հատեալ ի վերայ յանկարծակի մինն ի պաշտօնէից սարտարի ազատէ զնա, և մեռանի ի հարուածոց միայն մինն ի դռնապահաց»[211]։

[209] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 46։
[210] Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 298—299։
[211] Համառօտութիւն անցից..., էջ 18—19։

Տանջանքների նորանոր ձևեր հնարելիս բարբարոսների երևակայությունը կանգ չէր առնում ոչ մի բանի առաջ։ Պատճառաբանելով, որ իբր թե մի շարք արքեպիսկոպոսներ չեն հնազանդվում կաթողիկոսին, էջմիածին է ժամանում խանի զինվորական պաշտոնյաներից սարհանգ Մահմեդ խանը և հրամայում է, որպեսզի վեց արքեպիսկոպոսների և վաղարշապատի նշանավոր բնակիչներից մի քանի հոգու լցնեն մի տեղակի մեջ և ապա «հիւսել զդրունսն, զի մեռցին անդէն»։ Այնուհետև «որչափ աղաղակեն ինքն պատրիարգն և այլք առ հասարակ թէ շշոնջ այնպիսի չի եղեալ երբէք ի միջի իրեանց ոչ յօժարին լսել՝ և ոչ ներեն, մինչև որ ընկալնուն յանուն սարհանգ Մահմէտ խանի զմուրհակ հազար թումանի պայմանաւ հատուցանելոյ զայն գումար մինչև զլրումն միոյ ամսոյ, թողեալ զայնս զոր ընկալնուն ինքն սարհանգն կամ եղեալք ընդ նմա վարձ տանջելոյ իրեանց»[212]։

Նման խժդժություններից և սպառնալիքներից ազատ չէր նաև ինքը՝ ամենայն հայոց կաթողիկոսը։ 1821 թվականի Եփրեմ կաթողիկոսը գնում է Հյուսեին Ղուլի խանի Նովրուզ բայրամը շնորհավորելու, ընդ որում կրելիս է լինում այն բոլոր շքանշաններն ու ժապավենները, որը ստացել էր ռուսական կայսրերից ինչպես Ռուսաստանի հայկական թեմում թեմական եղած ժամանակ, այնպես էլ հետագայում։ Կաթողիկոսի վերադառնալուց հետո սարդարը իր ծառաներին ուղարկում է նրա մոտ հետևյալ պատգամով. «Թէ ի գալդ միւս անգամ առ իս այդոքիկ նշանօք գիտացես ստուգիւ զի ժապաւինօք (այն է լէնթիւ) դոցին ունիս խեղդիլ»[213]։ Այդ սպառնալիքը ևս քիչ դեր չխաղաց Եփրեմ կաթողիկոսի փախուստի դիմելու գործում. «Յետ որոյ անբժշկելի վիրօք ի հոգի խոցեալ նորին սրբազնութիւնն և հատեալ մինչ ի սպառ զյոյս իւր յամենայն ապագայ բարեաց աթոռոյն և անձին իւրոյ, և ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց պատկանելոց ինքեանց ի ներքս այնպիսի աներկիւղ բռնակալութեանց, ընտրելի համարի՝ հնարել, զանձն իւր հեռացուցանել ի բռնաւորութեանց անտի նոցա»[214]։

Եթե այսպես էին վարվում հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի և արտաքին վերնախավի հետ, ապա միանգամայն հասկանալի է, թե ինչպիսի հալածանքների ու դաժան խժդժությունների առարկա պետք է հանդիսանար հասարակ ժողովուրդը օտար բռնակալների ձեռքին։

Դրան ավելանում էին նաև պատերազմի առաջացրած ավերները։

[212] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 45, վավ. 142բ։
[213] Նույն տեղում։
[214] Նույն տեղում։

Պատերազմական գործողությունների ժամանակ, ինչպես արդեն հիշատակվել է, ժողովուրդը զանգվածորեն տեղահանվում էր, իսկ նրա ունեցվածքը կողոպտվում։ Ցնցող է տեղահանության պատկերը «Ղալաբանդլղի» (բերդի պաշարման) ժամանակ, որ տալիս է Խ. Աբովյանը. «Զորագեղի ու Կոնդի քուչեքումը որ ասեղ քցեիր, գետինը չէր հասնիլ, էնքան Արախլու, Ղարափափախ, Քուրդ, Սարվազ էին լցվել, որ գետինը սևացել էր։ Բերդի չորս կողմն էլ տեղ չկար. դուքան էր՝ որ թարաշ էին տալիս, տուն էր, որ թալանում, կրակ տալիս ու տան տիրոջը չիփ չիփլախ իր ողորմելի օղլուշաղի ձեռը բռնած, դառ ու դարդակ դուրս խըռկում, թրի, թվանքի առաջն առնում... Քուչեքանց միջին՝ երեխեքանց, հարսների ու աղջկերանց ձենը՝ քարերը մղկտացնում էր, լացացնում։ Շատը ձիու ոտի տակին էր հոգին տալիս, շատը ահիցն ու դողիցն էր լեղապատառ ըլում, շատին երեսի վրա էին քաշ տալիս, որի մազերիցն էին ձիու եզեցը սուրբիմիշ անում, քարեքար տալիս, էն օրը գնա, ոչ ետ գա, ինչ Երևանի հաղն էր»[215]։

Արևմտյան Հայաստանից, ավերածությունների հետևանքով, հայ ժողովրդի բեկորները ապաստան էին ուզում գտնել Էջմիածնում, ուր մահի ճարակ էին դառնում։ 1819—1820 թվականներին Էջմիածնում խմբված ժողովրդի վիճակը հետևյալ կերպ է նկարագրում Եփրեմ կաթողիկոսը. «...յայտնի է յիշեալ քանի տեղիսն որպէս աւերեալ է (ի նկատի ունի Բայազեդը, Վանը, Մուշը, Կարսը և այլն—Վ. Դ.). և դեռ անդեն եղեալ խղճալի ազգն մեր, ահա մին ամ է հազարաւոր ժողովեալ են աստ ի սբ. աթոռոջս՝ արք, կանայք, ծերք և տղայք, մերկք իսպառ, որոց մերկութիւնք որքան կարջին ի հանդերձից ևս մեռելացն, որ բազումք մեռան ի խղճալեացն անցեալ ամռանն, վասն շոգոյն...»[216]։

Հաճախ էր պատահում, որ հարկերը և պարտքերը ի վիճակի չէին լինում վճարելու և վաճառում էին նույնիսկ երեխաներին։ 1810 թվականին քառասուն թուման պարտքի դիմաց պատրաստվում էին վաճառել քանաքեռցի տանուտեր Հովհաննեսի Ահարոն և Կարապետ որդիներին։ Ճարահատյալ հայրը այդ գումարը ստիպված է լինում պարտք վերցնել Ներսես Աշտարակեցուց և այդպիսով փրկել իր որդիներին այլազգիներին ստրկանալու վտանգից[217]։

Օգտագործելով իր բռնակալական իշխանությունը և բաժնեկից դառնալով բազմաթիվ բերքառատ գյուղերի բնակիչների ցանքսերին, բնական պատուհասների և այլ տարերային աղետների դեպքերում խանը

[215] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 84—85։

[216] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 22ա, վավ. 41։

[217] Նույն տեղում։

պահանջում էր իր բաժինը. «բռնանայր նոցա անպատմելի խժդժութեամբ, առնոյր գրաւէր իւր զոր ինչ տունս նոցա գտանէր զկահս և զկաթսիս, և ի պակասել նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնին իւրում»[218]։ Դրանով իսկ նա մշտական աղքատության և իրավազրկության էր դատապարտում երկրի բնակչությանը։

1824 թվականին սարդարի կողմից Էջմիածնի պահակապետ նշանակված Ջաֆար խանը կարգադրություն է ստանում վճարել Թիֆլիսից եկած վաճառականներին ունեցած նրա հինգ հազար թուման պարտքը։ Ջաֆար խանն էլ իր հերթին վճռում է այդ գումարը կորզել Էջմիածնից։ Բայց երբ նա միաբանության և տեղապահ Եփրեմ արքեպիսկոպոսի կողմից մերժում է ստանում, ապա «ցասուցեալ ել յաթոռոյն, թողով զերկուս ի զինակրաց իւրոց այսպիսի ակնարկութեամբ», որ Վաղարշապատ գյուղի երևելիներից տասներկու հոգի քարշ կտա Երևան, ամենքին կտուգանի հարյուրական թուման իր առնելիքի փոխարեն[219]։ Ահա այդպիսի միջոցների էին դիմում սարդարը և նրա պաշտոնյաները՝ անօգնական ու անզոր հպատակներից քամելու նրանց վերջին հյութերը։

Վերևում արդեն բազմաթիվ օրինակներ բերվեցին այն բոլոր շարաշահումներից, որոնց միջոցով ուռճանում էին սարդարի գանձարանը և նրա պաշտոնյաների գրպանները։ Տուգանքները, անասելի տոկոսներով կարճ ժամանակով դրամ փոխ տալը, ծեծն ու սպառնալիքները, ամենաարժեքավոր մթերքների վաճառքի մենաշնորհ սահմանելը, հպատակներից էժան գնով ապրանքներ գնելը և թանկ գնով կրկին նրանց վերավաճառելը, իրենց փակ շնորհած ռաղամներն ու շնորհագրերը ոտնատակ տալը, կաշառակերությունը, բանի մահմեդականացումը, երեխաներին ծնողներից անջատելն ու պարտքերի դիմաց որպես ստրուկներ վաճառելը, գերեվարությունը և բազմաթիվ նման բնույթի ապօրինի գործողությունները, խժդժություններն ու շարաշահումները հայ ժողովրդական զանգվածների համար գոյության դժոխային պայմաններ էին ստեղծել։ Պարսկական տիրապետության վերջին տարիներին հայ ժողովրդի այդ անտանելի գոյավիճակի կենդանի ու սարսռեցուցիչ պատկերը մեզ թողել է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» հոգեցունց վեպը։ Մեծ հայրենասերի խոսքերով ասած. «...էս անօրենքները մեզ հավատից էլ են քցել, հալից էլ, մալ են տեսնում մեզանում՝ խլում են, աղջիկ են գտնում՝ քաշում են, մեզ կրակն են գցել, սաղ սաղ էրում են, փոթոթում, թե մեկ խոսք էլ ասում ես հո՝ վայ քո օրին, տրևին՝

[218] Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 226։

[219] Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. 48, վավ. 47։

գլխիդ էնքան բռնցկում են, որ աչքդ բուռդ ա ընկնում։ Տունդ էլ որ քանդեն, ձեն չպետք է տաս. ախր որ մեր միան էսպես գազանի պես ուտում են, սրա չարեն ի՞նչ կլի։ Տեղից վեր կենողը ոտը մեզ վրա չա բարձրացնում։ Չիլում՝ որ մեկ օր գնանք, ջուրը թափենք, պրծնենք։ Ախր էս հո օր չի, որ մենք քաշում ենք»[220]։

Պարզ է, որ նման պայմաններում, երբ օտար բռնակալության ծանրը բռունցքը անողոքաբար ճնշում էր հայ ժողովրդի բոլոր դասերին ու խավերին, նրանք պետք է փրկության ելք որոնեին։ Այդ ժամանակամիջոցում հասունացող արտաքին քաղաքական իրադարձություններն ինքնըստինքյան թելադրում էին, որ արդեն Անդրկովկասում հիմնավորվող ռուսական զենքն է, որ պետք է բերի ցանկալի փրկությունը, վաղուց ի վեր սպասված պահը։ Դեպքերի տրամաբանական զարգացումը տանում էր դեպի Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական տիրապետությունից։

---

220 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 50։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՔԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԵՍՆԱՄՅԱԿԻՆ

1. ԿՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ

XIX դարը համաշխարհային պատմության մեջ տեղվեց դարակազմիկ նշանակություն ունեցող իրադարձություններով։ Կապիտալիստական հասարակարգի բուռն զարգացումը արևմտաեվրոպական երկրներում հանգեցրեց նվաճումների ուղին բռնած նապոլեոնյան Ֆրանսիայի և Անգլիայի երկարատև բախումներին։ Դրանք այնքան լայն չափեր ընդունեցին, որ իրենց մեջ ընդգրկեցին նաև եվրոպական մյուս տերությունները։ Եվրոպական տերությունների պայքարի գլխավոր հանգուցակետերից մեկը դարձավ Մերձավոր և Միջին Արևելքը, որին մեծ նշանակություն էին տալիս ժամանակի երեք խոշոր տերությունները՝ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան։ Այս տերություններից յուրաքանչյուրն իր ուրույն նպատակներն էր հետապնդում երկրագնդի այս մասում։ Այդ բախումն ուներ իր արմատները անցյալ դարերի իրադարձություններում։

XVIII դարում Ֆրանսիայի և Անգլիայի միջև ծավալված պայքարը Հնդկաստանի տիրապետության համար ավարտվեց Անգլիայի հաղթանակով։ Զեռք բերելով հումքային առումով այդ հարուստ գաղութը, Անգլիան արագացրեց արդյունաբերական հեղափոխության պրոցեսը և դարձավ կապիտալիստական ամենազարգացած երկիրը աշխարհում։

XVIII դարավերջի հեղափոխական ցնցումներից հետո նվաճումների ուղին որդեգրած նապոլեոնյան կայսրությունը մահու և կենաց պայքարի մեջ մտավ Անգլիայի հետ, որպեսզի կարողանա ծնկի բերել վերջինիս։ Այդ պայքարի կարևորագույն օղակներից մեկը դարձավ Մերձավոր և Միջին Արևելքը։ Նապոլեոն Բոնապարտը հույս ուներ, որ իր ազդեցությունը հաստատելով այստեղ, կկարողանա խլել Հնդկաստանը և դրանով փակ մահացու հարված հասցնել իր ոխերիմ հակառակորդին։

Ինչ վերաբերում է ցարական Ռուսաստանին, ապա նրա շահագրգռությունները, հատկապես Արևելքի հետ կատարվող առևտրում միջնորդ միակ օղակ դառնալու ձգտումը երևան էր եկել դեռևս 17-րդ դարի երկրորդ կեսից։ Եվրոպայի և Արևելքի միջև առևտրական միջնորդի դերի ստանձնումը ցարական Ռուսաստանի համար այն նախնական քայլերից մեկն էր, որը ապագայում հնարավորություն պիտի ընձեռեր նրան ծավալվելու և հաստատվելու հյուսիսային և հարավային ծովերի ափերին, առանց որոնց Ռուսաստանը դատապարտված կլիներ երկրորդական տերության մնալու տխուր հեռանկարին։

Սակայն Մերձավոր և Միջին Արևելքում վակուում գոյություն չուներ, որպեսզի հեշտությամբ տերություններից որևէ մեկը կարողանար հաստատվել այնտեղ կամ իր ազդեցության տակ առներ այն։ Այստեղ իշխում էին ժամանակի երկու արևելյան խոշոր բռնապետությունները՝ Պարսկաստանը և օսմանյան կայսրությունը։ Պարսկաստանը, Նադիր շահի սպանությունից հետո ապրելով երկարատև ներքին ցնցումների ու միջֆեոդալական երկպառակությունների մի ժամանակաշրջան, 18-րդ դարի վերջերին կրկին վերականգնել էր կենտրոնացված պետությունը և ճիգեր էր թափում հնազանդեցնելու ծայրամասային խանություններին, որոնք անջատողական ուժեղ ձգտումներ էին հանդես բերում։ Օսմանյան կայսրությունը, ճիշտ է, կորցրել էր իր երբեմնի ռազմական հզորությունը, բայց դեռ բավականաչափ զորեղ էր, որպեսզի կարողանար դիմադրել իր տիրույթների նկատմամբ կատարված ոտնձգություններին։

Բնական է, որ նման պայմաններում միմյանց հետ մարտնչող եվրոպական հիշյալ երեք խոշոր տերությունները այս շրջանում ջանում էին իրենց ազդեցության տակ առնել Պարսկաստանը և Թուրքիան, օգտագործել վերջիններիս իրենց հակառակորդների դեմ։ Հետևաբար, դեռևս նախորդ դարաշրջանում ծագած «արևելյան հարցը» առաջնահերթ տեղ էր գրավում տերությունների պայքարում։ Օսմանյան կայսրության հզորության թուլացմամբ ու ստրկացված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմամբ պայմանավորված եվրոպական տերությունների պայքարը այսպես կոչված օսմանյան ժառանգության համար ժամանակի միջազգային դիվանագիտական ու քաղաքական պայքարի առանցքային հարցերից մեկն էր։

Այժմ տեսնենք, թե ինչպիսին էր ցարական Ռուսաստանի դիրքավորումը այդ հարցում, ինչ նպատակներ էր հետապնդում նա և ինչ լծակներ ուներ իր քաղաքական ծրագրերը հաջողությամբ կենսագործելու համար։

Ինչպես նշեցինք, սկսած արդեն 17-րդ դարի երկրորդ կեսից, Ռուսաստանը հսկայական ճիգեր էր թափում հաստատվելու Բալթիկ, Սև և Ազովի ծովերի ափերին։ Նման ջանքերի նպատակն էր հանել երկիրը մեկուսացումից, հաստատվել առևտրական կարևոր մայրուղիների վրա և զարկ տալ երկրի տնտեսական ու քաղաքական առաջընթացին։ Անկասկած է, որ նման քաղաքական ուղեգիծը պետք է բախվեր շահագրգռված երկրների շահերին։ Ուստի և հիշյալ նպատակին հասնելու համար Ռուսաստանը պետք է լուրջ խոչընդոտներ հաղթահարեր, մասնավորապես, օսմանյան կայսրության և Պարսկաստանի դիմադրությունը։ Եթե վերջինիս հետ հարցերը լուծելու համար շեշտը գլխավորապես դրվում էր դիվանագիտական և առևտրական համաձայնությունների վրա, ապա Թուրքիայի հետ հարցերը լուծելու համար պահանջվեց զինական պայքար։ Երկու դեպքում էլ հաջողության հասնելու համար ռուսական պետությունը կարիք ուներ աջակցության և լուրջ հենակետերի։ Այդպիսիք նրա համար դարձան իրենց ազատագրության համար պայքարող անդրկովկասյան և բալկանյան ժողովուրդները։ Ստացվում էր այնպես, որ և Ռուսաստանի ռազմաստրատեգիական և քաղաքական-առևտրական ձգտումները, և արևելյան բռնապետությունների դժնդակ լծի տակ հեծող ու ազգային-ազատագրական շարժումների ուղին բռնած ժողովուրդների ազատագրական բաղձանքները համընկնում էին միմյանց, լրացնում էին իրար և մի հզոր զենք էին տալիս Ռուսաստանին ծավալվելու Արևելքում[1]։

Խոսելով մասնավորապես Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականության մասին, որը նրա արևելյան քաղաքականության առաջնահերթ բաղկացուցիչներից էր, մենք առաջին հերթին պետք է պարզենք, թե որն էր այդ քաղաքականության էությունը։

Ամբողջ XVIII դարի ընթացքում ռուսական կառավարության քաղաքական ծրագիրն էր Անդրկովկասում հայկական պետականության վերականգնումը և կամ հայ-վրացական միացյալ քրիստոնեական պետության ստեղծումը։ Ռուսական պետական գործիչների մտայնությամբ Անդրկովկասում նման քաղաքական միավորումը կնպաստեր կայուն պատնեշ ստեղծել այստեղ մի կողմից՝ Ռուսաստանի, մյուս կողմից՝ Պարսկաստանի ու Թուրքիայի միջև։ Եվ որքան հզորանար ու ընդարձակվեր այդ բուֆերային պետությունը, որը անշուշտ գտնվելու էր ռուսական հովանու ներքո, այնքան ավելի կուժեղանար ու կընդլայնվեր Ռուսաստանի ազդեցությունը Մերձավոր ու Միջին Արևելքում։ Սակայն այս ասպարեզում ռուսական կառավարության 18-րդ դարում գործադրը-

[1] Տե՛ս V. Fontanier, Voyage en Orient, Paris, 1834, p. 256—257.

ված բոլոր փորձերը ապարդյուն վախճան ունեցան։ Այդ ուղղությամբ 1796 թվականին կենսագործված ամենահաջող փորձերից մեկը՝ գեներալ Վ. Զուբովի գլխավորությամբ ձեռնարկված արշավանքը, խիստ անսպասելի վախճան ունեցավ։ Եկատերինա 2-րդի մահը և նրան գահի վրա փոխարինած Պավել 1-ի ժխտողական դիրքը իր մոր ծրագրումների նկատմամբ հանգեցրեց այն բանին, որ ռուսական գործող կորպուսը դուրս բերվեց Անդրկովկասից, մեծ հուսախաբություն պատճառելով անդրկովկասյան ժողովուրդներին[2]։

Մի կողմից ռուսական զորքերի անսպասելի հեռացումը Անդրկովկասից, մյուս կողմից Պարսկաստանում կենտրոնական իշխանության վերականգնումը և վերջինիս ցուցաբերած ակնհայտ ձգտումը՝ կրկին միավորել Պարսկաստանը Սեֆյան պետության սահմաններում, վտանգավոր դրություն ստեղծեցին ինչպես Վրաստանի, այնպես էլ անդրկովկասյան այն խանությունների համար, որոնք կամովին կամ ստիպողաբար 1796 թվականին ճանաչել էին Ռուսաստանի գերիշխանությունը։ Նման պարագաներով պետք է բացատրել վրաց վերջին թագավոր Գեորգի 12-րդի որոշումը՝ միջնորդել, որպեսզի Վրաստանը միացվի Ռուսաստանին։ Ընդ որում նա ի նկատի ուներ այն հանգամանքը, որ դեռևս իր կենդանության ժամանակ թագավորական ընտանիքում ծայր առած գժտությունները առավել ևս ծանր հետևանքներ կարող են ունենալ առանց այդ էլ բզկտված երկրի համար։ Պատահական չէ, որ ցարական արքունիքի հետ բանակցությունները վարվում էին գաղտնի, որովհետև Հերակլի զավակները չէին կամենում հրաժարվել գահը ժառանգելու մտքից։ Գեորգի 12-րդի մահը առավել ևս սրեց հակասությունները գահի հավակնորդների միջև։ Գահի օրինական ժառանգ, մահացած թագավորի որդի արքայազն Դավթի թեկնածությանը հակադրվեց Հերակլի զավակներից արքայազն Յուլոնի՝ Դավթի խորթ հորեղբոր թեկնածությունը։ Եթե արքայազն Դավթի կողմնակիցները համաձայն էին, որպեսզի Վրաստանում մուծվի ռուսական վարչություն և աստիճանաբար կիրառման մեջ դրվեն ռուսական օրենքները, ապա Յուլոնի համախոհները ակնհայտ ձգտում էին երևան բերում պահպանելու իրերի նախկին վիճակը՝ այսինքն այն, որ Վրաստանը շարունակի կառավարվել իր թագավորով և իր սեփական օրենքներով, բայց Ռուսաստանի հովանու տակ[3]։ Սակայն սրանով չէ միայն, որ սահմանափակվում էր կուսակ-

[2] Տե՛ս Хубов Е. Описание достопамятных происшествий в Армении случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1779) до 1809 года, СПб., 1811, с. 9—10.

[3] Տե՛ս «Кавказский сборник», т. XXIII, Тифлис, 1902, с. 8.

ցությունների պայքարը։ Հերակլ 2-րդի որդիներից արքայազն Ալեքսանդրը բացահայտորեն դեմ էր երկրի միացմանը Ռուսաստանին և այդ պատճառով էլ, փախչելով Պարսկաստան, երկարատև ու անհաշտ պայքարի մեջ մտավ՝ Վրաստանում ռուսական իշխանությանը վերջ տալու նպատակով։

Նման պայմաններում, 1801 թվականի հունվարի 18-ին Պավել 1-ին կայսրը հրապարակեց մանիֆեստ, որով Վրաստանը մշտենջենապես միացված էր համարվում Ռուսաստանին։ Մանիֆեստը հռչակում էր, որ ռուսական կայսրության նոր հպատակները ոչ միայն կօգտվեն նախկին իրավունքներից, արտոնություններից ու սեփականությունից, այլև նրանցից, որոնք շնորհված են բուն ռուսական հպատակներին[4]։

1801 թ. հունվարի 18-ի մանիֆեստը Թիֆլիսում հրապարակվեց նույն թվականի փետրվարի 16-ին և մեծ ցնծություն առաջացրեց ժողովրդական լայն շրջաններում։ Եթե վրացական ֆեոդալական ավագանու մի մասը, հետամտելով իր նեղ դասակարգային շահերը, հակառակ դիրք գրավեց, ապա գյուղացիական զանգվածները, արհեստավորները ու առևտրականները, որոնք իրենց մաշկի վրա զգացել էին Աղա Մահմադ խանի սահմռկեցուցիչ արշավանքի ամբողջ սարսափը, ֆեոդալական գժտությունների ու երկպառակությունների ծանրածանր հետևանքները, ողջունում էին քաղաքական այդ կարևոր իրադարձությունը և այդ առթիվ, մասնավորապես Թիֆլիսում, մեծ հանդեսներ կազմակերպեցին[5]։

Հարցը, սակայն, այստեղ միայն այն չէ, թե ինչպես ընդունեցին քաղաքական այդ խոշոր իրադարձությունը վրացական հասարակության տարբեր խավերը կամ Վրաստանում բնակվող տարբեր ազգությունները։ Այստեղ մենք գործ ունենք քաղաքական մի շրջադարձի հետ, որը նոր խնդիրներ էր արծարծում և բոլորովին նոր իրավիճակ ստեղծում։ Հունվարի 18-ի մանիֆեստի երևան գալն ինքնըստինքյան խոսում էր այն մասին, որ ցարական կառավարությունը հրաժարվում է ավելի քան մեկ դար իր հետապնդած քաղաքական ծրագրից, այսինքն հայ-վրացական միացյալ պետություն ստեղծելու մտադրությունից և ուղղվում է տարածքային ծավալման ուղին։ Սակայն կայսրության նոր սահմանների ընդլայնումը տեղի էր ունենալու ոչ թե ի հաշիվ ռազմա-

[4] Տե՛ս «Полное собрание законов Российской империи», первое собрание, т. XXVI, 1801 г., № 19721:

[5] Տե՛ս АКАК, т. I, док. № 528; Տե՛ս Նաև՝ «Присоединение...», т. I, док. 16; ЦГИА Груз. ССР, ф. 2, 1801 г., д. 81, лл. 117—118.

կան նվաճումների, այլ խաղաղ ճանապարհով։ Առանց որևէ կրակոցի Վրաստանի միացումը Ռուսաստանին Պավել 1-ի և նրա բարձրաստիճան պաշտոնյաների մոտ այն պատրանքը ստեղծեց, որ իբր թե Անդրկովկասում ռուսական տիրույթները կարելի է ընդարձակել խաղաղ ճանապարհով։ Այդ մտայնության արձագանքն էր Վրաստանում գլխավոր հրամանատար նշանակված գեներալ Կ. Ֆ. Կնորինգին տրված 1801 թվականի հունվարի 23-ի բարձրագույն ռեսկրիպտը։ Այստեղ արտացոլում էին գտել ոչ միայն հիշյալ հույսերը, այլև որոշ երկյուղներ, որ անզգույշ գործողությունները կարող են հանգեցնել քաղաքական անցանկալի հետևանքների։ Այդ առումով էլ գեներալ Կնորինգին հանձնարարվում էր. «մի ջանաք այլ ձեռքբերումներ կատարել, բացի նրանցից, որոնք կամովին կփնտրեն իմ (Պավել 1-ի—Վ. Դ.) հովանավորությունը։ Ավելի լավ է դաշինքի մեջ շահագրգռված դաշնակիցներ ունենալ, քան ոչ հուսալի հպատակներ։ Ձեր ձախ կողմը ապահովված է այդպիսիներով։ Թուրքերին եթե սարսափ չներշնչենք, այնժամ աջ կողմն էլ հուսալից կլինի»[6]։ Այդպիսով, գալիք քաղաքական ծրագրումների հիմքում դրվում էր Հայաստանի ոչ թե «նվաճումը», այլ «ինքնակամ համաձայնությամբ ձեռքբերումը»[7]։ Հատուկ նրբամտություն չի պահանջվում կռահելու նման հույսերի պատրանք լինելը։ Պավել 1-ը և նրա շրջապատը, ըստ երևույթին, պատկերացում չունեին, թե քաղաքական ինչպիսի բարդ իրադրություն է տիրում Անդրկովկասում։ Տեսադաշտից բոլորովին դուրս էր թողնվում Պարսկաստանը, այն, որ անդրկովկասյան խաներից շատերը եթե ոչ թշնամական, գեթ տատանողական դիրքավորում ունեին, այն, որ Թուրքիան, չնայած ժամանակավոր դաշնակցային բարեկամական հարաբերություններին Ռուսաստանի հետ, հազիվ թե հանդուրժեր Ռուսաստանի սահմանակցությունը իր փոքրասիական տիրույթների հետ, վերջապես այն, որ «ինքնակամ համաձայնությամբ» Հայաստանի ձեռքբերումը, վերոհիշյալ խնդիրների լույսի տակ, այնքան էլ դյուրին գործ չէր։ Ճիշտ է, ռուսական կայսրի նման մտադրությունը ամբողջովին բխում էր մահմեդական լուծը թոթափելու հայ ժողովրդի ցանկությունից, բայց որքանով էր իրագործելի խաղաղ ճանապարհով այդ խնդրի լուծումը, երբ Հայաստանը կոտորակված էր տարբեր պետությունների և ֆեոդալական զանազան մանր տիրույթների միջև, և որոնք իրենց հերթին ամենատարբեր դիրքավորում ունեին ստեղծված իրադրության նկատմամբ։

---

[6] АКАК, т. I, док. № 522.

[7] Նույն տեղում։

Այն, ինչ Պավել 1-ին առանձին երկյուղ չէր ներշնչում, անհանգստացնում էր նրա ժառանգորդին՝ Ալեքսանդր 1-ին։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ, ինչպես գրում է Ա. Վ. Ֆադեևը, Ալեքսանդր 1-ը «իր աչքի չէր ընկնում բնավորության հաստատակամությամբ»[8]։ Նոր, թշնամաբար տրամադրված դրացիներով շրջապատված երկրի միացումը նրիտասարդ կայսեր պատկերացմամբ «հակառակ էր Ռուսաստանի շահերին»։ Բացի այդ, ինչպես կտեսնենք Պետական խորհրդում հարցի քննարկման ընթացքից, չէր մոռացվում քաղաքական նախորդ մոտեցումը, որ գոյություն ուներ խնդրո առարկա հարցի նկատմամբ հատկապես Եկատերինա 2-րդի դահակալության ընթացքում։

Ելնելով այս նկատառումներից, Ալեքսանդր 1-ը Վրաստանի միացման հարցը քննարկման է դնում Պետական խորհրդում[9]։ Հարցի քննարկման ընթացքը պարզորոշ ցույց է տալիս, թե ինչպես և ինչ նկատառումներով կատարվեց Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականության շրջադարձը։ 1801 թ. ապրիլի 11-ին, լսելով Վրաստանը մշտնջենապես Ռուսաստանին միացնելու հարցը, Պետական խորհուրդը, ելնելով այն հանգամանքից, որ 1) վրացական թագավորական ընտանիքի ներսում տիրող անհամաձայնությունը Գեորգի 12-րդի մահից հետո սպառնում է վրացական թույլ թագավորությանը կործանարար երկպառակտչական պայքարով, որ 2) այն բացահայտ հովանավորությունը, ինչ շնորհել է Ռուսաստանը այդ երկրին վաղ ժամանակներից, պահանջում է, որպեսզի կայսրության սեփական արժանապատվության համար վրացական թագավորության ամբողջականությունը պահպանվի և 3) Ռուսաստանի սահմանների պաշտպանությունը լեռնականների հարձակումներից դրանով իսկ կապահովվի, անհրաժեշտ էր գտնում պահպանել Վրաստանը Ռուսաստանի գայիսոնի ներքո[10]։ Այս ամենից հետո, սակայն, արվում էր մի կարևոր վերապահություն, որպեսզի այս «բարենպատակ» պարագաները անհրաժեշտ հիմնավորում ստանան, այն է. «Անհրաժեշտ է համարվում, որպեսզի կենսագործվեն օրհնյալ հիշատակի և հավիտենական փառաց արժանի մեծ կայսրուհի Եկատերինա Ալեքսեևնա 2-րդի մտադրությունները, որոնք նա ուներ, երբ 1796 թվա-

---

[8] Фадеев А. В., Россия и Кавказ первой трети XIX в., М., 1960, с. 98.

[9] Վրաստանը Ռուսաստանին միացման հարցի հանգամանալից պատմությունը տրված է Авалов З. Присоединение Грузии к России, СПб., 1901, աշխատության մեջ։ Գրված լինելով վրացական ազնվականական ազգայնականության դիրքերից, այս աշխատությունը քննարկում է ավելի շուտ հարցի իրավական կողմը։

[10] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1409, оп. I, д. 1934, л. 7; ЦГИА Груз. ССР, ф. 1146, оп. 1, д. 22, л. 17 об.

կանին սկսեց պարսկական պատերազմը, որի համար էլ այժմ պետք է քննարկել այդ միջոցառման հետապնդած բոլոր նպատակները և, հաշվի առնելով իրերի ներկա վիճակը, կազմել ներկա հանգամանքներին և ժամանակին վայել նոր պլան»[11]: Իսկ մինչ այդ ենթադրվում էր ռուսական զորքերը թողնել Վրաստանում, հիմնել ժամանակավոր վարչություն և անհրաժեշտ համարել, որպեսզի Կովկասյան գծի հրամանատար գեներալ-լեյտենանտ Կնորինգը գտնվի Վրաստանում՝ այն կառավարելու համար և այլն[12]: Վերոհիշյալ որոշումից ակներև է դառնում այն երկու տենդենցների առկայությունը, որ գոյություն ուներ ռուսական կառավարող վերնախավի շրջաններում: Դրանցից մեկն այն էր, որ պետք է հետևել նախորդ քաղաքական ուղեծրին և Վրաստանում պահպանել սեփական պետականությունը, իսկ մյուսը, որ անհրաժեշտ է Վրաստանը մշտնջենապես միացնել Ռուսաստանին: Այստեղից էլ նման կոմպրոմիսային որոշումը:

Չորս օր անց, ապրիլի 15-ին, կրկին անգամ հիշյալ հարցը քննարկվում է Պետական խորհրդում, այն կապակցությամբ, որ գեներալ-դատախազ Բեկլեշովը խորհրդին հայտնում է, որ նորին կայսերական մեծությունը, այսինքն Ալեքսանդր 1-ը, ծայր աստիճան հակակրանք է տածում վրացական թագավորությունը ռուսական կայսրության հպատակ դարձնելու մտադրության նկատմամբ, համարելով «անարդարացի օտար երկրի յուրացումը»[13]:

Խորհուրդը կրկին անդրադառնում է այդ հարցին և քննարկումից հետո մնում է իր նախկին տեսակետի վրա, որ Վրաստանը լինելու է ռուսական հպատակության տակ հետևյալ պատճառներով. 1. որ ժողովուրդը ցանկություն է հայտնել ընդունելու ռուսական հպատակություն, 2. ի նկատի ունենալով այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Վրաստանը մնա այն դրության մեջ, ինչ որ էր մինչև Գեորգի 12-րդի մահը[14]:

Խորհուրդը գտնում էր, այնքանով, որքանով ժողովուրդը ցանկություն է հայտնել ընդունելու ռուսական հպատակություն, խոսք չի կարող լինել անարդարացի յուրացման մասին. ավելին, եթե առանց այդ էլ բզկտված երկիրը թողնվի թագավորական ընտանիքի անդամների շահատակությունների ասպարեզ, կընկնի կործանման խորխորատը, իսկ դրա հետևանքները բուն Ռուսաստանի համար ևս կլինեն խիստ վնասակար: Այն բանից հետո, երբ ժողովուրդը հայտնել է իր խնդությունը Ռուսաստանին միանալու առթիվ[15], և այնքանով, որքանով պարսկական կառավարությունը իրեն համարում է Վրաստանի սյուզերենը, վերջապես թողնել երկիրը սեփական ճակատագրին, կնշանակի, որ «կվերսկսվեն, իհարկե, նախկին բոլոր դաժանությունները, որոնք կարող են ծնել գիշատիչ հարևանի վրեժխնդրությունը, որն ընդունակ է միայն վրեժխնդրության, և սպասում է հարմար պահի»[16]: Իսկ մինչ այդ Վրաստանի ցույց տրված հովանավորության հին ձևը այնպիսի փոխադարձ անհարմարություններ է պարունակում, որ հարցի միջին լուծում լինել չի կարող: Վերջին պարագան Պետական խորհուրդը հետևյալ կերպ էր պատճառաբանում. Վրաստանի ապահովության և հանդարտության համար անհրաժեշտ է մշտապես այնտեղ ռուսական զորք թողնել, որը ռուսական կառավարության համար բոլորովին ավելորդ ծախս կլինի, իսկ անհրաժեշտության դեպքում Վրաստանին օգնական զորքեր ուղարկելը բոլորովին զուր կլինի, քանի որ նախքան ռուսական զորքերը կանցնեն Կովկասյան լեռնապարը, թշնամին երկիրը արդեն ոտնակոխ արած կլինի[17]:

Խորհրդի կարծիքով բուն Ռուսաստանի համար էլ քրիստոնեական այդ տիրույթը սեփական ճակատագրին թողնելը վնասակար կլիներ, որովհետև Վրաստանը թշնամաբար տրամադրված դրացիների զոհը կդառնար, որով իսկ ռուսական սահմանների համար «կործանարար հետևանքներ» կառաջանային: Հնարավոր էր նաև, որ փրկության ելքը Վրաստանը գտներ օսմանյան կայսրության հովանավորության մեջ: Այդ դեպքում, միանալով հավատակից լեռնականներին, 800 վերստ ձգվող ռուսական կովկասյան բոլորովին բաց սահմանը կդառնար անվերջ ասպատակությունների թատերաբեմ: Ելնելով վերոհիշյալ պատճառաբանություններից, Խորհուրդը գտնում էր, որ «որքան բուն Վրաստանի, այնքան էլ Ռուսաստանի շահերի համար անհրաժեշտ է, որպեսզի այդ երկիրը մնա ռուսական տիրակալության տակ, ընդ որում թողնելով այդ գործը նորին կայսերական մեծության հայեցողությանը»[18]:

Այս ամենին զուգընթաց, իրերի վիճակին լավագույնս ծանոթանալու նպատակով Պետական խորհուրդը անհրաժեշտ էր համարում, որպեսզի Կովկասյան գծի պետ գեներալ Կնորինգը մեկներ Վրաստան

[11] Նույն տեղում, թ. 7—7բ:
[12] Նույն տեղում, թ. 7բ—8:
[13] Նույն տեղում, թ. 8բ:
[14] Նույն տեղում, թ. 9:

[15] Ի նկատի ունեին 1801 թ. փետրվարի 16-ի հանդիսավոր տոնակատարությունը Թիֆլիսում՝ հունվարի 18-ի մանիֆեստի հռչակման առթիվ (տե՛ս АКАК, т.I, док. 528):
[16] ЦГИА СССР, ф. 1409, оп. I, д. 1934, л. 9 об.
[17] Նույն տեղում, թ. 10բ:
[18] Նույն տեղում, թ. 11:

հետևյալ գաղտնի հանձնարարություններով, այն է 1. «Ճշտորեն և անշահախնդիր հետազոտել կարո՞ղ է արդյոք Վրաստանը մնալ և գոյատևել իբրև անկախ թագավորություն, պահպանել ներքին անդորրը», որին սպառնում են թագավորական ընտանիքում տիրող գժտությունները։ 2. Կնորինգին հանձնարարվում էր նաև արդարացիորեն իմանալ, իսկապես է, որ Վրացական թագավորության բոլոր աստիճանավորները և ամբողջ ժողովուրդը կամենում է ընդունել ռուսական հպատակություն, թե սոսկ մի մասը։ Եթե Կնորինգը գալու լիներ այն համոզման, որ անհնար է Վրաստանի անկախության պահպանումը, ապա պետք է, ելնելով ժողովրդի իրավունքի և սովորությունների տեղական առանձնահատկություններից, անհրաժեշտ նյութեր հավաքեր Վրացական ապագա կառավարությունը կազմելու համար։ Երկրորդ հանձնարարության կապակցությամբ Կնորինգը պարտավոր էր մանրակրկիտ կերպով ծանոթանալ, թե կարելի՞ է արդյոք Վրաստանը Ռուսաստանին միացնելու խնդրագիրը համարել հանուր ժողովրդի ցանկությունը, թե այն միայն սահմանափակվում է մասնավոր անձանց որոշակի շրջանակով, որոնք ձգտում են իրերի նման դրությունից սեփական օգուտներ քաղել։ Այս բոլոր տեղեկություններով հանդերձ Կնորինգը պետք է շտապ վերադառնար Պետերբուրգ, և որոնց ծանոթանալուց հետո կարելի կլիներ հաստատապես վճռել Վրաստանի ապագա ճակատագիրը[19]։

Վրաստանի Ռուսաստանին միացման հարցի նման հանգամանալից քննարկումը Պետական խորհրդի ապրիլի 15-ի նիստում և կրկին փոխզիջողական որոշման ընդունումը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ ցարական կառավարության համար դժվար էր կտրուկ շրջադարձ կատարել իր նախորդ քաղաքականության մեջ և քաղաքական նոր ընթացք որդեգրել։ Բայց այստեղ չպետք է մոռանալ այն նոր իրավիճակը, որ ստեղծվել էր Վրաստանում մասնավորապես, Անդրկովկասում՝ ընդհանրապես։ Բոլոր դեպքերում աչքի է զարնում մի հանգամանք, որը կարծես թե չպետք է վրիպեր ցարական բարձրաստիճան պաշտոնյաների ուշադրությունից։ Դա ապագա Հայաստանի կամ գեթ հայ-վրացական միացյալ պետության հարցն է։ Տարօրինակ կերպով այդ հարցը չի բարձրացվում նույնիսկ այն անձանց կողմից, ովքեր խոսում էին Եկատերինա 2-րդի քաղաքական նպատակադրումների մասին և, համաձայնելով երիտասարդ կայսեր հայացքներին, դեմ էին արտահայտվում Վրաստանի միացմանը, հետևաբար և նրա քաղաքական անկախ գոյությանը վերջ տալուն։ Բայց և այնպես, հարցը առկախ էր թողնվում մինչև գեներալ Կնորինգի միսիայի ավարտը։

Նախքան գեներալ Կնորինգի վերադարձը, Վրաստանի հարցին Պետական խորհուրդը անդրադառնում է ևս մեկ անգամ հունիսի 3-ին՝ Հերակլ 2-րդի այրու՝ Դարեջան թագուհու բողոքի կապակցությամբ։ Դարեջան թագուհին, գանգատվելով այն վիրավորանքներից և ճնշումից, որ իբր թե պատճառել էր նրան խորթ որդին՝ Գեորգի 12-րդը, խնդրում էր, որպեսզի Վրաստանը գոյությունը պահպանի այն հիմունքներով, ինչ հիմունքներով որ կնքվել էր Գեորգիևսկի պայմանագիրը Ռուսաստանի և Վրաստանի միջև։ Այս առթիվ Պետական խորհուրդը որոշում է՝ ընդունել Դարեջան թագուհու հայտարարությունը ի գիտություն մինչև այն ժամանակ, երբ կվերադառնա գեներալ Կնորինգը և վրացական թագավորության հարցը կստանա իր վերջնական լուծումը[20]։

1801 թ. հուլիսի 28-ի իր զեկուցագրում գեներալ Կնորինգը հանգել էր հետևյալ եզրակացություններին. Վրաստանը փոթորկվում է ներքին գժտություններով, ուստի սեփական ուժերով ի վիճակի չի լինի դիմադրել «Պարսկաստանի իշխանատենչ նկրտումներին»։ Նա չի թաքցնում նաև այն իրողությունը, որ վրացական ազնվականության վերին շրջաններում շատերը դեմ են Վրաստանի միացմանը Ռուսաստանին և կկամենային ունենալ իրենց թագավորը և իրերի նախկին վիճակը, այն էլ սոսկ մի ձգտմամբ՝ կարողանալ պահպանել իրենց ժառանգական արտոնություններն ու եկամուտները[21]։

Գեներալ Կնորինգի վերադարձից և զեկուցագիրը ստանալուց հետո Պետական խորհուրդը գումարում է 1801 թվականի օգոստոսի 8-ի նիստը, որտեղ Կնորինգի զեկուցագրից զատ քննարկվում է նաև կոմս Ա. Ռ. Վորոնցովի և կոմս Վ. Պ. Կոչուբեյի զեկուցագիրը կայսերը, որով նրանք այս անգամ ևս առարկում էին Վրաստանի միացմանը և գրտնում այն վնասակար Ռուսաստանի շահերին։

Հանգամանորեն քննարկելով գեներալ Կնորինգի զեկուցագիրը, Խորհուրդը «ավելի և ավելի է ամրապնդվում իր նախկին կարծիքում, որ Վրաստանի միացումը Ռուսաստանին փրկություն կհանդիսանա առաջինի համար այն կործանումից, որն սպառնում են նրան ներքին գժտությունները, Ռուսաստանին միանալու իր ցանկությունը հայտնած ժողովրդի դեմ բորբոքված թագավորների ճնշումներից և գիշատիչ

[19] ЦГИА СССР, ф. 1146, оп. 1, д. 22, л. 26 об.—27 об:

[20] ЦГИА СССР, ф. 1409, оп. 1, д. 1934, л. 12 об:

[21] Տե՛ս АКАК, т. I, док. 534 և 543:

հարևանների հարձակումներից։ Այս բոլորից, ինչպես նաև արքայազներ Յուլոնի ու Դավթի գզվռտուքից ստեղծված իրավիճակում Պետական խորհուրդը Վրաստանի միացումը անարդարացի քայլ չէր համարում, այլ «դրանում տեսնում էր միայն այդ երկրի փրկությունը»։ Պետական խորհուրդը Վրաստանի միացումը Ռուսաստանին օգտակար էր համարում նաև բուն Ռուսաստանի շահերի տեսակետից, որքանով որ հուսալից կերպով կպաշտպանվեին նրա սահմանները լեռնականների անվերջ հարձակումներից, ինչպես նաև Թուրքերից, չխոսելով Պարսկաստանի մասին, որը չի հապաղի հարձակվել և գրավել Վրաստանը, հենց որ ռուսական զորքերը դուրս բերվեն այնտեղից[22]։

Բայց Պետական խորհուրդը միասնական չէր իր այդ կարծիքի մեջ։ Իսկական գաղտնի խորհրդական կոմս Ա. Ռ. Վորոնցովը նիստում հայտարարեց, որ ինքը մնում է իր զեկուցագրում արտահայտված կարծիքին և ոչ մի պատճառ չի տեսնում փոփոխելու այն[23]։ Հետաքրքիր է այն եղելությունը, որ ունեցել է նիստում վիցե-կանցլեր Վ. Պ. Կոչուբեյը։ Նա գրտնում էր, որ Վրաստանի միացումը Ռուսաստանին օգտակար չէ նախ և առաջ այն պատճառով, որ ընդլայնում է Ռուսաստանի սահմանները, որոնք առանց այդ էլ մեծ տարածություն են գրավում և պաշտպանության համար հսկայական ջանքեր են պահանջում։ Վրաստանի միացումը արդարացի չէ նաև այն պատճառով, որ Վրաստանում գահակալող ընտանիքը թագավորում է ոչ թե ընտրությամբ, այլ ժառանգաբար։ Այնքանով, որքանով թագավորական ընտանիքի անդամները չեն ցանկանում տեսնել Վրաստանը միացած Ռուսաստանին, հետևաբար այդ ակտը բռնություն կլիներ նրանց ժառանգական իրավունքների նկատմամբ։ Ելնելով վերոհիշյալից, Վ. Պ. Կոչուբեյը անհրաժեշտ էր համարում պահպանել Վրաստանի վասալական կախումը Ռուսաստանից, ինչպես Եկատերինա 2-րդի օրոք էր, թողնել այնտեղ այնքան զորք, որքան առ այդ գտնվում էր սահմանների և ներքին խաղաղության պաշտպանության համար։ Թիֆլիսում պետք էր ունենալ նաև լիազոր ներկայացուցիչ, որի ենթակայության տակ կգտնվեին ռուսական զորքերը։ Լիազոր ներկայացուցիչը հոգ պետք է տաներ նույնպես, որպեսզի թագավորները և թագավորական ընտանիքի անդամները չոտնահարեն երկրի և ժողովրդի շահերը։ Համաձայն Հերակլ 2-րդի կտակի, գահը պետք էր հանձնել արքայազն Յուլոնին[24]։ Այսպիսին էին ընդհանուր գծերով վիցե-կանցլեր Վ. Պ. Կոչուբեյի առարկության հիմնական թեզերը։

[22] ЦГИА СССР, ф. 1409, оп. I, д. 1934, лл. 13—16:

[23] Նույն տեղում, թ. 16:

[24] Նույն տեղում, թթ. 16—17:

Պակաս հետաքրքիր չէ Վորոնցովի և Կոչուբեյի այն զեկուցագիրը, որ նրանք կազմել էին Ալեքսանդր 1-ի հանձնարարությամբ։ Այդ զեկուցագիրը առավել ևս մեծ լույս է սփռում այն դրդապատճառների վրա, որոնք ընկած էին Ալեքսանդր 1-ի և նրա մերձավոր համախոհների տատանումների և կասկածների հիմքում։ Նախապես խոսելով Ալեքսանդր 1-ի այսպես կոչված քաղաքական սիստեմի մասին, այն է՝ հրաժարվել տարածքային ծավալումից և գլխավոր ուշադրությունը դարձնել «ներքին բարենորոգումների վրա, որպես բարեկեցության անմիջական աղբյուր» և իրենց հավանությունը տալով դրան, Վորոնցովը և Կոչուբեյը գրում էին. «Բարեհիշատակ Եկատերինա 2-րդ կայսրուհին, իր գահակալության սկզբից ևեթ ուշադրությունը բևեռելով այսպես ասած նվաճումների և Ռուսաստանի գլխավոր թշնամու՝ Թուրքերի ոչնչացման վրա, որքան էլ որ, ի միջի այլոց, զբաղվել է ասիական քաղաքականությամբ, մտադրություն չի ունեցել Վրաստանը միացնել իր գայիսոնին»[25]։ Այնուհետև նրանք շարունակում են. Ղրիմի միացմամբ Կովկասյան նահանգի կողմից սահմանները համարվում էին ամենաբնականը, իսկ լեռնականների հարձակումներից զերծ մնալու համար բավարար էին համարվում Յասսիի պայմանագրի երաշխիքները, որքանով որ հնարավոր էր սանձել անհնազանդ լեռնականներին։ «Դրանից հետո այդ տիրակալուհու իմաստուն քաղաքականությունն կայանում էր նրանում, որպեսզի հնարավորին չափ անհամաձայնություն սերմանվի պարսկական և լեռնական զանազան տիրակալների միջև, այն մտայնությամբ, որ թույլ չտրվի նրանցից որևէ մեկին զորեղանալ, ինչ որ անհանգստություն կարող էր պատճառել Ռուսաստանին։ Իսկ Վրաստանը վերցնելով Ռուսաստանի հովանու ներքո, նա մտադիր էր իր ազդեցությունը հաստատել Ասիայի այդ մասում, աջակցել հավատակից ժողովրդին... Ընդ որում թույլ չտալով, որ Բարձրագույն դուռը իր իշխանությունը հաստատի այնտեղ»[26]։

Պավել 1-ի մանիֆեստը նրանք համարում էին թյուրիմացության արդյունք, քանի որ հիմնված է եղել սխալ տեղեկությունների վրա։ Այնուհետև պնդելով, որ ոչ առևտրի ընդլայնման իմաստով, ոչ հանքերի շահագործման իմաստով և ոչ էլ ռուսական սահմանների պաշտպանության ամրապնդման իմաստով Վրաստանի միացումը օգտակար չէ, Վորոնցովը և Կոչուբեյը առաջարկում էին Վրաստանը թողնել այն դրու-

[25] Նույն տեղում, թ. 17բ:

[26] Նույն տեղում, թ. 18:

թյամբ, որում գտնվում էր Եկատերինա 2-րդի օրոք, այսինքն վասալական կախման մեջ։

Հիշյալ զեկուցագրում առանձնահատուկ ուշադրության արժանի է նաև մի դրույթ, որը չպետք է աչքաթող անել։ Վորոնցովը և Կոչուբեյը գրում էին, որ թեև հայտնի չէ, թե ինչ նպատակներ էր հետամտում Եկատերինա 2-րդը՝ ձեռնարկելով 1796 թվականի պարսկական արշավանքը, բայց և այնպես Պետական խորհուրդը Վրաստանի միացման անհրաժեշտությունը հիմնավորում է իբր թե կայսրուհու նկատառումների կենսագործմամբ[27]։ Հազիվ թե Վորոնցովին և Կոչուբեյին հայտնի չլիներ նախորդ թագավորության քաղաքական ծրագրումները, բայց նրանք այդ մասին լռում էին։

Ինչպես Վորոնցովի և Կոչուբեյի ելույթները, այնպես էլ նրանց զեկուցագրերը ցույց են տալիս, որ նրանք կամենում էին Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականությունը տանել նախկին հունով։ Սակայն Վրաստանում ստեղծված իրավիճակը քաղաքական այնպիսի մի բարդ թնճուկ էր ստեղծել, որ նրանք առայժմ ճգնում էին գեթ պահպանել իրերի նախկին վիճակը։ Սակայն ոչ նրանց ջանքերը և ոչ էլ Ալեքսանդր 1-ի դիմադրությունը չկարողացան հեղաշրջել Պետական խորհրդի մեծամասնության դիրքավորումը, ուստի և որոշում ընդունվեց Վրաստանը միացնել Ռուսաստանին։

Այս որոշմանը հետևեց 1801 թվականի սեպտեմբերի 12-ի մանիֆեստը, որով կրկին անգամ հռչակվում էր Վրաստանի միացումը Ռուսաստանին։ Սա արդեն քաղաքականության վաղեմի ծրագրերի մի ամբողջ շրջանադարձ էր, որքանով որ ցարիզմը հրաժարվում էր «պատնեշի» կամ «բուֆերի» նախկին քաղաքականությունից, այսինքն հայկական, վրացական և այլն պետությունների ստեղծումից ու ամրապնդումից և անցնում էր այդ երկրները իր գայիսոնին ենթարկելու քաղաքականության, թեև այդ ձգտումը մի փոքր ավելի ուշ պետք է իր պարզորոշ ձևակերպումը ստանար։

1801 թ. սեպտեմբերի 12-ին գեներալ Կ. Ֆ. Կնորինգին տրված հրահանգից երևում է, որ նախապես Ալեքսանդր 1-ը ևս, ի վերջո հետևելով հոր քաղաքականությանը, հույս ուներ խաղաղ ճանապարհով ընդարձակել Ռուսաստանի ազդեցության շրջանակները Անդրկովկասում։ Այդ նկատառումով էլ Կնորինգին հանձնարարվում էր «ջանալ բազմապատկելու Ռուսաստանին անձնվերների թիվը, հատկապես նրա կողմը գրավել Երևանի, Գանձակի, Շաքիի, Բաքվի և այլ խաներին»[28]։

[27] Նույն տեղում, թ. 20։

[28] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1801 г., д. 1, л. 8 об.

Այսպիսով, սկզբնապես բացառվում էր զենքի ուժով տարածքային ձեռքբերումներ կատարելու անհրաժեշտությունը։

Ուշադրության արժանի է այն քաղաքականությունը, որ հանձնարարվում էր Կնորինգին վարել հայերի նկատմամբ։ Կնորինգին տրված հրահանգի 11-րդ կետը հռչակում էր. «Ձեր հատուկ հետևողականությանն ենք թողնում հնարավոր փաղաքշանքով ձեր կողմը գրավել հայ ազգին։ Այս միջոցառումը, ի նկատի առնելով այդ ցեղի բազմաթիվ լինելը Վրաստանի հարևանությամբ, ամենահուսալից միջոցներից մեկն է բազմապատկելու ժողովրդյան ուժերը և դրա հետ մեկտեղ մակերևույթի վրա հաստատելու քրիստոնյաներին ընդհանրապես։

Այս նկատառումով թույլատրում ենք, ոպեսզի Դուք հնարավորին չափ հովանավորություն ցույց տաք Արարատյան պատրիարքական էջմիածնի վանքին և նրա եկեղեցու գլխի հետ բարեկամական հարաբերություններ ունենաք»[29]։

Դա ցարական կառավարության ավանդական հին քաղաքականության շարունակությունն էր։ Բայց հրահանգները իրենց մեջ նաև բացահայտ հակասականություն էին պարունակում։ Բանն այն է, որ անդրկովկասյան խաներին Ռուսաստանի կողմը գրավելու քաղաքականությունը ամենևին չէր համաձայնում «քրիստոնյաներին մակերևույթի վրա հաստատելու» Ալեքսանդր 1-ի ձգտմանը։ Ընդհակառակը, այդ խնդրի լուծումը դժվարանում էր, ինչպես որ ցույց տվեցին հետագա իրադարձությունները, երբ «կամովին» Ռուսաստանի հովանին ընդունեցին Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի և ուրիշ խաներ։

Ինչ վերաբերում է հայոց եկեղեցու գլխին, այսինքն ամենայն հայոց կաթողիկոսին հովանավորելուն, ապա դա նպատակ ուներ ոչ միայն հայերի վրա Ռուսաստանի ազդեցությունը տարածելը, այլև հարմար առիթ էր միջամտելու Պարսկաստանի և Թուրքիայի մատույցներում ստրատեգիական առումով կարևոր դիրք գրավող Երևանի խանության ներքին գործերին, ինչ որ չհապաղեց կենսագործել ցարական կառավարությունը, երբ ներկայացավ հարմար առիթ ի դեմս Դավիթ-Դանիելյան երկարամյա պայքարի, որի մասին խոսք կլինի առաջիկայում։

Հայերին «փաղաքշելու» քաղաքականությունը ամենից առաջ նպատակ էր հետապնդում նրանց ներգրավել Վրաստանի սահմանները, որը մարդաթափ էր եղել Աղա Մահմադ խանի ավերիչ արշավանքի հետևանքով։ Այդ մասին պարզորոշ ասված էր Ալեքսանդր 1-ի 1802 թվականի սեպտեմբերի 26-ին գեներալ Պ. Դ. Ցիցիանովին տրված ռեսկրիպտում։

[29] Տե՛ս նույն տեղում, թ. 9։

Հայերը հետաքրքրում էին երիտասարդ կայսրին ամենից առաջ «իբրև արդյունագործող ժողովուրդ, որի ձեռքին է Ասիայի այս մասի ամբողջ առևտուրը»։ Հենց այդ առումով էլ նրանք «արժանի են հատուկ... ուշադրության և պաշտպանության, քանի որ Պարսկաստանում ճնշված լինելու պատճառով կտակած լինել չի կարող, այդ ժողովրդից շատերը կհիմնավորվեն Վրաստանում, հենց որ իրենց ապահովված տեսնեն կանոնավոր կազմակերպված կառավարությամբ»[30]։ Նման քաղաքականության արդյունքը հանդիսացավ այն, որ 1804—1813 թվականների ռուս-պարսկական պատերազմի ընթացքում մեծ քանակությամբ հայեր տեղահանվեցին Երևանի խանությունից ու Կարսի փաշայությունից և բնակեցվեցին Վրաստանում ու Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններում։

Սակայն շուտով համոզվելով, որ նոր միացված երկիրը կայուն բնական սահմանագծերով պատնեշված չէ և դժվար կլինի պաշտպանել այն հարևան երկրների հարձակումներից, որ հազիվ թե բոլոր անդրկովկասյան խանությունները կամովին ընդունեն Ռուսաստանի հովանին և, որ ամենագլխավորն է, Պարսկաստանի պատրաստակամության մեջ՝ զենքի ուժով ետ վերադարձնելու իր երբեմնի տիրույթները, Ալեքսանդրը 1-ին կայսրը նախագծեց Ռուսաստանի ռազմաքաղաքական նոր ընթացքը Անդրկովկասում։ Այն իր արտահայտությունը գտավ 1803 թվականի մայիսի 23-ին Պ. Դ. Ցիցիանովին տրված ռեսկրիպտում։ Ռուսաստանի ռազմաքաղաքական նոր դիրքորոշմամբ նախատեսվում էր կայսրության սահմանների ընդարձակումը մինչև Կուր և Արաքս գետերի հունը, որպեսզի այնուհետև ուշադրությունը կենտրոնացվեր «Ռուսաստանին միացված մարզերի ներքին բարեկարգման և այնտեղ բնակվող ժողովուրդներին մինչ այդ նրանց անծանոթ օրենքների հովանու տակ անդորր կյանքի երանությունը պարգևելու վրա»[31]։

Այդպիսով, ցարական Ռուսաստանը անցնում էր Անդրկովկասում իր նոր արտաքին քաղաքական ընթացքի կենսագործմանը։ Այլևս ոչ մի խոսք չկար հայոց անկյալ պետականության վերականգնման մասին՝ Ռուսաստանի հովանու ներքո։ Այսուհետև Անդրկովկասում ռուսական նոր գլխավոր հրամանատար և կառավարիչ գեներալ Պ. Դ. Ցիցիանովի ու Արևելյան Վրաստանում տեղակայված ռուսական զորքերի բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեին կայսրության սահմանների ընդարձակմանը։ Սակայն այդ պլանները միայն զենքի ուժով չէ, որ պետք է կենսագործվեին։ Օրակարգից չէր հանվում նաև հարցերի լուծման դիվանագիտական ճանապարհը։ Ռուսական դիվանագիտությունը դրանից հետո էլ փորձում էր հնազանդության բերել և խաղաղ ճանապարհով ռուսական հպատակություն ընդունել տալ այն խանություններին, որոնք տատանվում էին և բացորոշ չէին որոշել իրենց քաղաքական վարքագիծը ստեղծված նոր պայմաններում։

Վրաստանի միացումից անմիջապես հետո ընկած մոտակա տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ Արփաչայ-Արաքս-Կուր բնագծերի համար Ռուսաստանի դիվանագիտական և զինական պայքարը երկարատև ու ծանր է լինելու։ Եթե Գանձակի խանությունը գրավվեց բավական հեշտությամբ, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի խանությունները ռուսական հպատակությունն ընդունեցին «կամովին», ապա Երևանի և Նախիջևանի խանությունների համար մղված պայքարը երկարատև և արյունահեղ եղավ։ Իսկ առանց վերջին երկու խանություններին տիրանալու, ցարական կառավարությունը չէր կարող իր անդրկովկասյան քաղաքականությունը համարել ավարտված և հաջողությամբ պսակված։

Վրաստանի միացումը և այդ ակտին անմիջապես նախորդող իրադարձությունները ցույց տվեցին, որ, ելնելով պատմական ստեղծված իրադրությունից, Ռուսաստանը բեկում է մտցնում իր նախկին քաղաքական ծրագրերում։ Դա արտահայտվեց ամենից առաջ նրանում, որ Ռուսաստանը հրաժարվեց «պատնեշի» շուրջ մեկդարյան քաղաքականությունից և անցավ տարածքային ծավալման քաղաքականության։ Դրանում վճռական նշանակություն ունեցան Վրաստանում XVIII դարի վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունները, որոնք ցույց տվեցին վրացական ֆեոդալական պետության ամբողջ անզորությունը խաղալու այն կարևոր դերը, որ վերապահում էր նրան Ռուսաստանը իր արևելյան քաղաքականության մեջ և դառնալու Անդրկովկասի ապագա քրիստոնեական ընդարձակ պետության կորիզը։ Ի դերև դուրս եկան այն հույսերը, որ երկար ժամանակ կապում էին Վրաստանի հետ հայ ազատագրական շարժման գործիչները։

Վրացական թագավորության անկումը և ցարական Ռուսաստանի քաղաքական նոր ընթացքը Անդրկովկասում հայ ազատագրական շարժման գործիչներին կանգնեցրին նոր իրավիճակի առջև։ Նրանցից շատերն արդեն իսկ գիտակցում էին, որ այսուհետև հազիվ թե կարելի է հուսալ ազգային պետականության վերականգնման մասին, որքանով որ աչքի առջև կար Վրաստանի կենդանի օրինակը։ Մյուս կողմից, ինչպես մենք կտեսնենք հետագա շարադրանքի ընթացքում, նրանք շարունակում էին

[30] АКАК, т. II, док. 5.

[31] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1803 г., д. 4, лл. 27 об.—28.

փայփայել այն փխրուն պատրանքը, թե հնարավոր է ազատագրվելիք Հայաստանի համար ապահովել գեթ ներքին լայն ինքնավարություն։

Այսուհանդերձ, չնայած ապրած որոշակի հուսախաբությանը, հայ ազգային-ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը մնաց անփոփոխ, որովհետև մահմեդական տաժանելի լուծը թոթափելու միակ ակնկալությունը սպասվում էր միայն և միայն Ռուսաստանից, որն այժմ ոչ միայն անմիջական դրացի էր դարձել Արևելյան Հայաստանին, այլև տեր էր նրա տարածքի մի նշանակալից մասին։

Մենք արդեն ասացինք, որ այս կամ այն չափով ազգային ինքնավարություն ստեղծելու ձգտումը հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների մոտ պահպանվեց, բայց այն խիստ անորոշ էր, որովհետև ոչ ոք չէր պատկերացնում պարզորոշ, թե ինչպիսին է լինելու դեպքերի զարգացման հետագա ընթացքը։ Եթե XVIII դարի երկրորդ կեսին վերաբերող վավերագրերում ցայտուն ընդգծված է ռուսական հովանու ներքո հայկական պետականության վերականգնման գաղափարը, անգամ կառավարման սիստեմը, ապա 19-րդ դարի սկզբին վերաբերող վավերագրերում մենք չենք հանդիպում պարզորոշ դրված նման մտքերի։ Ճիշտ է, խոսքը գնում է հայոց անցյալ «փառքի» վերականգնման, Հայաստանի վերակենդանության մասին, բայց դրանք բոլորն էլ խոսում են եզովպոսյան լեզվով։ Այդ երևույթը, անշուշտ, իր բացատրությունը գտնում է այն շրջադարձում, որ տեղի ունեցավ Ռուսաստանի անդրդովկասյան քաղաքականության մեջ և որի առաջին նշմարն էր Վրաստանի միացումը Ռուսաստանին։

2. ՊԱՅՔԱՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Տեր դառնալով Վրաստանին և որդեգրելով քաղաքական նոր ուղղություն, Ռուսաստանը ավելի քան մեկ քառորդ դար ծանր պայքար պետք է մղեր դրա կենսագործման համար։ Այդ պայքարը, ինչպես ասացինք, և՛ դիվանագիտական էր, և՛ ռազմական, մղվում էր և՛ տեղական, և՛ միջազգային մասշտաբով։ Հաջողությունները և անհաջողությունները հաջորդում էին մեկը մյուսին, մինչև որ 1828 թվականին կնքված Թուրքմենչայի պայմանագիրը հռչակեց ռուսական կառավարության քաղաքական ծրագրերի լրումը Անդրկովկասում։

Մենք արդեն տեսանք, որ դեռևս Պավել 1-ինն էր հրահանգում, ճիշտ է «խաղաղ ճանապարհով», Հայաստանի ձեռքբերումը։ Նա և նրա շրջապատը անտեսում էին Պարսկաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցած բեկումը, որը հանգեցրեց Կաջարների հարստության հաստատմանը և կենտրոնացված պետականության վերականգնմանը։ Այստեղից էլ այն բոլոր երևույթները, որ երևան պետք է բերեին և բերեցին երկու հզոր դրացիների միջև ընկած և անկախական հովերով տարված անդրկովկասյան փոքր ու մեծ ժամիշխանները։ Անտեսված էր նաև այն ընդդիմությունը, որ ցույց էին տալու ժամանակի խոշոր տերությունները Անգլիան ու Ֆրանսիան, որոնք ամենևին էլ մտադիր չէին հաշտ աչքով դիտելու Ռուսաստանի ծավալումը Կովկասյան լեռնապարից հարավ, ինչը և պիտի մեծացներ նրա քաղաքական ազդեցությունը Մերձավոր ու Միջին Արևելքում։

Ալեքսանդր 1-ի կառավարությունը նույնպես սկզբնապես շեշտը դնում էր խաղաղ ծավալման վրա։ Բայց շատ շուտով ցարը և նրա գործակիցները համոզվեցին, որ դա այնքան էլ դյուրին խնդիր չէ։ Հույսը չէր կարելի դնել միայն դիվանագիտական հաջողությունների վրա, որովհետև դրանց հեռանկարները այնքան էլ փայլուն չէին։ Այսպես թե այնպես, զենքը ասելու էր իր խոսքը, մանավանդ, որ Պարսկաստանը ամենևին էլ մտադիր չէր դյուրությամբ զիջել դիրքերը վաղեմի և խիստ կարևոր անդրկովկասյան տիրույթներում։

Անդրկովկասյան խանությունների շտապ ենթարկումը ցարական գայիսոնին հրատապ խնդիր էր դառնում այն իրադարձությունների լույսի տակ, որոնք տեղի էին ունենում Վրաստանում։ Վրացական ֆեոդալական ավագանու մի զգալի մասը բացահայտ թշնամական վերաբերմունք էր երևան բերում դեպի ռուսական տիրապետությունը։ Մի կողմից պահանջելով Ալեքսանդր 1-ից, որպեսզի իրենց «թագավոր տրվի»[1], նրանք մյուս կողմից հայցում էին Պարսկաստանի և Թուրքիայի օգնությունը, որպեսզի վերականգնեն իրերի նախկին վիճակը։ Ֆաթհ Ալի շահը չհապաղեց արձագանքել վրացական ֆեոդալական ավագանու կանչին և արքայազն Յուլոնին ճանաչելով թագավոր, խոստացավ օգնություն ուղարկել նրանց[2]։ Եվ իսկապես, 1802 թ. ապրիլի 14-ին Պետական խորհրդում քննարկվում է գեներալ Կնորինգի զեկուցագիրը, համաձայն որի Բաբա խանը (Ֆաթհ Ալի շահը—Վ. Դ.) մտադիր է հարձակում գործել Երևանի վրա և այն ենթարկել իրեն[3]։ Երևանի վրա Ֆաթհ Ալի շահի հարձակվելու մտադրությունը պատահական չէր։ Հայտնի է, որ դեռևս Հերակլ 2-րդի օրերից Երևանի խանը համարվում էր վրացական թագավորի վասալը։ Իրերի այս վիճակը անորոշ ձևով շա-

[1] Տե՛ս АКАК, т. I, док. 495։
[2] Фадеев А. В., նշվ. աշխատ., էջ 108։
[3] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1409, оп. 1, д. 1934. л. 26։

բունակում էր հարատևել նաև 19-րդ դարի առաջին տարիներին, թեև Երևանի խանը չէր հապաղել սեփականացնելու մինչև այդ Վրաստանին պատկանող Շորագյալի սուլթանությունը։ Երևանի վրա հարձակումը հետագա նպատակ ուներ ծավալել այն Վրաստանում և, սքողելով իր նվաճողական մտադրությունները, օգնություն հասնել վրաց այն ֆեոդալներին, որոնք չէին կամենում ենթարկվել ռուսական իշխանություններին։ Կնորինգի և Վրաստանի կառավարիչ Կովալենսկու կատարած ձերբակալությունները վրաց ազնվականների շրջանում՝ առավել ևս շիկացրին մթնոլորտը։

Իրերի նման վիճակը տագնապ առաջացրեց ցարական կառավարական շրջաններում։ Անհրաժեշտ էր ամեն կերպ շտկել ստեղծված շփոթ իրավիճակը և ավելի ճկուն քաղաքական գիծ անցկացնել։ Այդ նկատառումներով գեներալ Կնորինգի փոխարեն Կովկասի կառավարչապետ նշանակվեց գեներալ Ցիցիանովը, թեև, ինչպես կտեսնենք, ցարական այդ ընտրությունը հաջող չէր։ Ճիշտ է նկատում պատմաբան Ա. Վ. Ֆադեևը, որ «այդ ընտրությունը պատահական չէր։ Ցիցիանովը պատկանում էր վրացական հին արիստոկրատական ընտանիքներից մեկին (նրա պապը՝ Պատա Ցիցիշվիլին 1725 թվականին Ռուսաստան էր տեղափոխվել Քարթլիի Վախթանգ 6-րդ թագավորի հետ)։ Այդպիսով, Ցիցիանովի նշանակումը պետք է որոշ չափով շոյեր վրացական ֆեոդալական ավագանուն։ Մյուս կողմից, Ցիցիանովն ինքը ծնվել ու դաստիարակվել էր Ռուսաստանում։ 18 տարեկանից գտնվում էր ռուսական ծառայության մեջ։ Լինելով գվարդիական սպայության շրջանում, գրավել էր մի շարք բարձր հրամանատարական պաշտոններ և, վերջապես, Մինսկի նահանգում խոշոր կալվածքի տեր էր, որը նրան նվիրել էր Եկատերինա 2-րդը։ Հետևաբար, կարելի էր չկասկածել, որ նա հավատարմություն և նվիրվածություն կպահպանի դեպի «համայն ռուսաց ինքնակալը»։ Բացի այդ, Ցիցիանովը Կովկասում ռազմական և վարչական գործունեության փորձ ուներ արդեն։ 1795 թվականին նա եղել էր կոմս Վ. Ա. Զուբովի մերձավոր օգնականներից մեկը նրա «Պարսկական արշավանքի» ժամանակ, իսկ 1796—1797 թվականներին եղել էր Բաքվի բերդի պարետը։ Այդ ամենը թույլատրում էր հուսալ, որ նրան կհաջողվի ավելի արագ գլուխ հանել Անդրկովկասում ստեղծված քաղաքական կացությունից և «պարզեցնել», ինչպես Ալեքսանդր 1-ինն էր արտահայտվում, «Երկրամասի խճճված գործերը»[4]։

Եվ իսկապես, ինչպես վերևում տեսանք, Վրաստանը անհանգիստ

[4] Фадеев А. В., նշվ. աշխատ., էջ 109։

դրության մեջ էր, լեռնականների ասպատակությունները շարունակվում էին, Հարևան Գանձակի խանությունը թշնամական դիրք էր գրավել, Երևանի խանը տարածքային հավակնություններ էր ի հայտ բերում, անընդհատ լուրեր էին պտտվում Պարսկաստանի ռազմական պատրաստությունների և սպասվող հարձակման մասին։ Նման քաղաքական իրադրության մեջ անհրաժեշտ էր դիվանագիտական մեծ ճկունություն հանդես բերել և, միաժամանակ, անհրաժեշտության դեպքում, զինական վճռական գործողությունների դիմել։

Ցիցիանովի առաջին ձեռնարկումներից մեկը եղավ Գանձակի խանության հպատակեցումը։ Գանձակի Ջավադ խանը ընդգծված պարսկական կողմնորոշում ուներ։ Դրա հիմքում ընկած էին այն անվերջ բախումները, որ ուներ նա Կաջարների հակառակորդ Ղարաբաղի Իբրահիմ-խալիլ խանի և նրա դաշնակից վրացական Հերակլ 2-րդ թագավորի հետ։ Գանձակի բերդը գրավվեց 1804 թվականի սկզբին, հարձակումով։ Ջավադ խանը սպանվեց բերդի պարիսպների վրա։ Գանձակի խանության գրավմամբ Վրաստանի արևելյան թևում համեմատաբար անվտանգ վիճակ էր ստեղծվում և միաժամանակ հնարավորություն հուսալու, որ մյուս խանությունները կարելի կլինի հպատակության բերել խաղաղ ճանապարհով։

Նույն 1804 թ. տեղի ունեցավ ռուսական զորքերի երևանյան առաջին արշավանքը։ Պատմական ուսումնասիրության առումով չափազանց հետաքրքիր են այն իրադարձությունները, որոնք նախորդեցին երևանյան առաջին արշավանքին։ Ցավոք սրտի, մեր պատմագրության մեջ այդ հարցերը անհրաժեշտ լուսաբանություն չեն գտել, մինչդեռ դրանք մեծ կարևորություն են ներկայացնում և որոշ իմաստով էլ լույս են սփռում ժամանակի հայ-ռուսական հարաբերությունների և Էջմիածնի կաթողիկոսական գահի շուրջը ծավալված պայքարի պատմության վրա։

Նախքան երևանյան արշավանքը ձեռնարկելը, ինչպես գեներալ Ցիցիանովի նախորդ Կ. Ֆ. Կնորինգը, այնպես էլ Ցիցիանովն ինքը քիչ ջանք չթափեցին, որպեսզի Երևանի խանությունը խաղաղ ճանապարհով գնեն ռուսական հպատակության տակ, թեպետև Երևանի Մամադ խանի քաղաքական ամբողջ վարքագիծը և ոչ մի հույս չէր ներշնչում, թե այդ ձեռնարկումը կարող է հաջող ավարտ ունենալ։

Վերևում արդեն հիշատակվեց, որ սկսած 1779 թվականից Երևանի խանը հարկադրված էր ընդունել իր վասալական կախումը Վրաստանից և հպատակության հարկ՝ մաղթա վճարել։ Այն բանից հետո, երբ Վրաստանը միացվեց Ռուսաստանին, Մամադ խանը որոշեց օգուտ քաղել ստեղծված իրավիճակից, որպեսզի կարողանա իր և իր խանության հա-

մար անկախ վիճակ ապահովել Պարսկաստանի և Ռուսաստանի արանքում։

Այդ նկատառումով էլ Մամադ խանը բռնեց դիվանագիտական լարախաղացության ուղին, թեև ոչ նա և ոչ էլ նրա փեսան՝ Նախիջևանի նախկին, Կաջարների ձեռքով կուրացված Քալբալայի խանը չէին թաքցնում Ռուսաստանի հպատակությունից խուսափելու իրենց մտադրությունը։ Այսպես, դեռևս 1801 թ. նրանք երկուսով էլ հայտարարում էին, որ անթույլատրելի է, որպեսզի մահմեդականները գտնվեն քրիստոնյաների գերիշխանության ներքո։ Այդ նպատակով նրանք կապ էին հաստատել վրաց փախստական արքայորդի Ալեքսանդրի հետ և փորձեր էին կատարում նրա աջակցությամբ Ռուսաստանի ձեռքից խլել Փամբակը։ Միևնույն ժամանակ Մամադ խանի գործակալները գործում էին Փամբակում և ջանք չէին խնայում տեղական բնակիչներին Ռուսաստանի դեմ հանելու։ Այս ամենին զուգընթաց Մամադ խանը գաղտնի բանակցություններ էր վարում Վրաստանում գտնվող ռուսական զորքերի հրամանատար գեներալ-մայոր Ի. Պ. Լազարևի հետ, առաջարկելով նրան իրեն զիջել Փամբակի գավառը իբր թե այն բանի համար, որպեսզի ինքը ընդունի ռուսական հովանին[5]։

Իհարկե, հավիվ թե Մամադ խանը հույս տածեր, որ իր այդ ձեռնարկումը հաջողությամբ կպսակվի։ Հաջողության երաշխիքը նա տեսնում էր Փամբակի աղալարների ապստամբության մեջ։ Սակայն այստեղ էլ նրան հուսախաբություն էր սպասում, քանի որ գեներալ Լազարևը, իմանալով Փամբակում ստեղծված սպառնալից կացության մասին, 1801 թվականի հուլիսին իրեն վստահված զորքերով մտավ Փամբակի գավառ և հնազանդեցրեց խռովություն բարձրացրած աղալարներին, որոնց մի մասը փախուստ տվեց Երևանի խանության սահմանները[6]։ Բայց այս ամենը սթափեցուցիչ ներգործություն չունեցավ Վրաստանի ռուսական վարչության վրա։ Տարօրինակ են հնչում գեներալ Կնորինգի Ալեքսանդր 1-ին հղած զեկուցագրի վերջին եզրափակիչ տողերը, այն բանից հետո, երբ նա հայտնում էր, որ գեներալ Լազարևի արշավանքը Փամբակ ավարտվել է հաջողությամբ։ Կնորինգը հետևյալ կերպ էր եզրափակում. «Որքանով որ Երևանի և Նախիջևանի խաները փնտրում են ձերդ կայսերական մեծության բարձրագույն հովանավորությունը, ապա համարձակվում եմ եզրակացնել, որ նրանք իրենց ոտնձգությունները Փամ-

[5] АКАК, т. I, док. 838; ЦГИА Груз. ССР, ф. 2, 1801 г., д. 8, лл. 104—105 об.

[6] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1801 г., д. 3, л. 21—22.

բակի նահանգից այն կողմ չեն տարածի, իմանալով, որ մեր զորքերը գտնում են այնտեղ»[7]։ Մի՞թե միայն այդ ոտնձգությունները բավարար չէին եզրակացնելու համար, որ երկու խանների ռուսական հովանավորությունը փնտրելը սոսկ խաղ էր[8]։

Երևանի Մամադ խանի հետագա վարքագիծը հենց դրա ապացույցն էր։ Երկյուղ կրելով, որ իր դիմակը կարող է պատռվել և կմերկացվի իր քաղաքական վարքագիծը, ինչպես նաև ցանկանալով շարունակել Ռուսաստանի և Պարսկաստանի միջև խուսանավելու իր քաղաքականությունը, Երևանի խանը շտապեց ներողություն հայցել կատարվածի համար։ Ձևանալով անիրազեկ, նա գրում էր, որ մտքով ամենևին չի անցել, որ իր գործողությունները կարող են հակասել Ռուսաստանի շահերին։ Փամբակի գավառի նկատմամբ իր տոնձգությունը նա ջանում էր հիմնավորել նրանով, որ ինքը Աղա Մահմադ խանից ֆիրման է ստացել տիրելու Փամբակին և ձեռնարկելով ֆիրմանի իրագործմանը, ինքը չի էլ մտածել, որ դա կարող է հակասել այն հովանավորությանը, որ ցույց է տալիս Ռուսաստանը «վրացական մարզերին»[9]։

Չնայած Երևանի խանի զգուշության կոչող այդ գործողություններին, Կովկասի և Վրաստանի ռուսական գլխավոր հրամանատարներ Կնորինգը և Ցիցիանովը շարունակում էին բանակցությունները նրա հետ, չդադարելով ենթադրելուց, որ ստրատեգիական առումով այդ կարևոր խանությունը հնարավոր կլինի խաղաղ ճանապարհով միավորել Ռուսաստանին։ Դրա վկայությունն է Կ. Ֆ. Կնորինգի 1802 թվականի ապրիլի 18-ի գրությունը Մամադ խանին, որով կրկին առաջարկվում էր վերջինիս ընդունել Ռուսաստանի հովանավորությունը։ Այդ գրությանը առիթ էր ծառայել Մամադ խանի ռուսական կառավարչապետին մորությանն մեջ գցելու հերթական փորձերից մեկը։ Նա Կնորինգի մոտ էր ուղարկել իր ներկայացուցիչ Էյվազ խան սուլթանին իբր թե համաձայնության գալու համար Երևանի խանությունը Ռուսաստանի հովանուտակ վերցնելու մասին, չմատակարարելով սակայն նրան գրավոր լիազորությամբ։ Ուստի Կնորինգը հարկադրված էր ետ դարձնել բանագնացին և պահանջել գրավոր լիազորություններ, չկասկածելով, սակայն, որ շուտով կկնքվի համապատասխան համաձայնություն՝ «հաստատուն ու

[7] Նույն տեղում, թ. 22։

[8] Պետք է նշել, որ Երևանի խանը բավական ծարպիկ դիվանագիտական խաղ էր վարում, այնքան ծարպիկ, որ նույնիսկ Խուբովը հաստատ համոզմունք էր հայտնում, որ նրա ձգտումն էր գտնվել ռուսական հովանու ներքո։ Տե՛ս Хубов Е., Описание достопамятных произшествий в Армении..., СПб., 1811։

[9] Նույն տեղում, թթ. 22—23, АКАК, т. 1, док. 807.

կայուն հիմունքներով» «ընդունելու ձեզ մեր ամենաողորմած ինքնակալ թագավորի հովանու և պաշտպանության տակ»[10]։

Դեռ մինչ այդ էլ Մամադ խանը հանդես էր եկել բազմաթիվ նման առաջարկներով, որոնք սակայն մնում էին լոկ խոսքեր և հավաստիացումներ, թեև դրանց վրա մեծ ուշադրություն էին դարձնում ոչ միայն ռուսական կովկասյան իշխանությունները, այլև կենտրոնական կառավարության շրջանները[11]։ Իսկ Մամադ խանի նման վարքագծի հիմքում ընկած էր սոսկ մի ձգտում՝ կարողանալ առանց որևէ զիջողության գընալու, հարկ եղած պահին, այսինքն պարսկական հարձակման դեպքում, որի մասին լուրեր էին պտտվում, ապահովել ռուսական աջակցությունը։ Կ. Ֆ. Կնորինգը վստահում էր Մամադ խանի հավաստիացումներին և դրանց մասին իրազեկ էր պահում Պետերբուրգի կառավարությանը։ Դրանց հիման վրա էլ 1802 թ. ապրիլի 14-ին Պետական խորհուրդը քննարկում է Կնորինգի նման զեկուցագրերից մեկը[12]։

Հարկ է նշել, որ Խորհրդի ուշադրությունը գրավում է այն հանգամանքը, որ Ֆաթհ Ալի շահի հարձակման մասին լուրերի աղբյուրը Երևանի խանն է, բայց և այնպես անհրաժեշտ է համարում կարգադրել Կնորինգին՝ ավելացնել ռուսական զորքերի թիվը Վրաստանում։ Պետական խորհրդի որոշման մեջ այդ կապակցությամբ ասված էր. «1. Որքանով որ Վրաստանի սահմանը Պարսկաստանի կողմից բաց է և բընական արգելքներ չունի, ուստի հենց որ գլխավոր կառավարիչը (Կ. Ֆ. Կնորինգը—Վ. Դ.) համոզվի Բաբա խանի իրական մտադրությունների մասին Երևանի նկատմամբ, նա պետք է ջանա կամ կանգնեցնել նրան այդ երկրում, մեր զորքերով օգնություն ցույց տալով Երևանի խանին և կամ հանդիպի նրան այդ տիրույթում, որպեսզի դրանով Վրաստանը ոչ միայն վտանգից զերծ պահի, այլև բնակիչներին ավերիչ պատերազմական գործողություններից զերծ։ Այդ իսկ պատճառով էլ 2. ոչ միայն հավանություն տալ Երևանի խանի կողմից նրան արված առաջարկին, այլև հանձնարարել նրան (Կ. Ֆ. Կնորինգին—Վ. Դ.) կենսագործել այդ տիրակալի ռուսական հովանավորության տակ ընդունելու մասին առաջարկը։ Նման արարքը, վստահեցնելով Վրաստանին այդքան մերձավոր հարևանի նվիրվածության մասին, բոլոր դեպքերում կարող է օգտակար լինել»[13]։

Վիցե-կանցլեր Վ. Պ. Կոչուբեյի դիտողությունից հետո որոշվում է նաև, որպեսզի Մամադ խանը պատվիրակություն հղի Պետերբուրգ և այդ կերպ ընդունի ռուսական հովանավորությունը, առավել ևս, որ նա առաջին անգամ է մտնում ռուսական հովանու տակ։ Այնուհետև նշվում էր, որ եթե Երևանի խանը նման ջանասիրություն է ցուցաբերում անցնելու ռուսական հովանավորության տակ, ապա պատերազմի դեպքում Երևանի բերդը պետք է տրամադրի ռուսական զորքերին, ներշնչելով նրան, որ դա արվում է նրա սեփական իսկ տիրույթների լավագույն պաշտպանության համար[14]։ Չմոռանանք այստեղ ավելացնել նաև, որ, ելնելով այդ սկզբունքից, ցանկալի էր համարվում նաև Գանձակի գրավումը, քանի որ Գանձակը և Երևանը իրենց դիրքով առավել մեծ հարմարություններ կընձեռեին Վրաստանի պաշտպանության համար[15]։

Վերոհիշյալ հարցի Պետական խորհրդի քննարկմանը հետևեցին Ալեքսանդր 1-ի 1802 թվականի ապրիլի 24-ի նոր հրահանգները գեներալ Կնորինգին, հրահանգներ, որոնք ելնում էին Անդրկովկասում ստեղծված քաղաքական նոր կացությունից՝ ի դեմս Պարսկաստանի կողմից սպասվող վտանգի։ Հրահանգները ևս անվերապահորեն վկայում են, թե որքան մեծ տեղ էր հատկացվում Երևանի խանության միացմանը ռուսական կայսրությանը, որի նպատակն էր ապահովել Ռուսաստանի նոր տիրույթների անվտանգությունը։ Այստեղ բառացիորեն կրկնվում էր Պետական խորհրդի ընդունած որոշումը ինչպես Երևանի և Գանձակի խանությունների, այնպես էլ Ֆաթհ Ալի շահի ենթադրվող հարձակումը կասեցնելու վերաբերյալ[16]։

Բայց Երևանի խանի խոսքը և գործը շարունակում էին հակասել միմյանց։ Դեռևս նախքան վերոհիշյալ հրահանգների ստացումը, Կ. Ֆ. Կնորինգին տեղեկացրին, որ Երևանի խանի զորքերը շարժվում են դեպի ռուսական սահմանները։ Անհանգստացած դրանից և ցանկանալով կանխել հնարավոր տհաճությունները, 1802 թվականի մայիսի 17-ին Կ. Ֆ. Կնորինգը գրավոր դիմեց Մամադ խանին և վճռականապես բացատրություն պահանջեց նրա զորքերի շարժման առնչությամբ, գրելով, որ «նայած Ռուսաստանի նկատմամբ խանի նվիրվածության բոլոր հավաս-

---

[10] АКАК, т. I, док. 840; ЦИА Груз. ССР, ф. 2, 1802 г., д. 23, л. 279.

[11] Մոնտիսը նույնպես իրավացիորեն նշում է, որ ռուսական դիվանագետները հաճախ էին սխալներ թույլ տալիս պարսից խաների հետ բանակցելիս։ Տե՛ս **W. Montieth,** Kars and Erzeroom..., London, 1856, p. 36—37:

[12] ЦГИА СССР, ф. 1146, оп. 1, д. 23, лл. 130—132 об.

[13] Նույն տեղում, թ. 131բ։

[14] Նույն տեղում, թ. 131բ—132։

[15] ЦГИА СССР, ф. 1146, оп. 1, д. 23, л. 132—132 об.

[16] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1802 г., д. 39, лл. 6 об.—11 об.

տիացումներին, նա իրեն «դնում է պատերազմի լպրծուն ուղու վրա՝ ի վիրավորանք կայսրության և ի սեփական կործանումն իրեն»[17]։

Նույն թվականի հունիսին ստացվեց Մամադ խանի պատասխան նամակը, որով կրկին նա առաջարկում էր հաշտություն և բարեկամություն հաստատել երկու երկրների միջև։ Համանման բովանդակությամբ նամակ էր հղել նաև Նախիջևանի Քալբալայի խանը[18]։ Սակայն այդ առաջարկը քաղաքական այն խաղի շարունակությունն էր, որին ձեռնարկել էր Երևանի խանը Վրաստանի միացումից հետո Ռուսաստանին։ Դրա վկայությունն են ոչ միայն Երևանի Մամադ խանի խորամանկ խուսափումը՝ ընդունելու ռուսական հովանավորությունը, այլև նրա չկամությունը՝ ընդառաջելու ռուսական իշխանությունների անհամեմատ համեստ պահանջին՝ փոխարինելու Էջմիածնի կաթողիկոսական գահի վրա Դավթին Դանիելով։

Երևանի խանի հետ տարվող անպտուղ բանակցությունները շարունակվեցին նաև գեներալ-լեյտենանտ Պ. Դ. Ցիցիանովի Վրաստանում գլխավոր հրամանատարի պաշտոնը ստանձնելուց հետո։ Ցիցիանովի Թիֆլիս ժամանելուց հետո, Մամադ խանը նրա մոտ հղեց իր բանագնաց Մեհմեդ Ալի բեկին։ Վերսկված բանակցությունները դառնում էին երեք հարցերի շուրջը՝ Դանիել արքեպիսկոպոսին ամենայն հայոց կաթողիկոս ճանաչելու և կաթողիկոսական գահի վրա բազմեցնելու, Ախալցխայի նախկին Շերիֆ փաշայի Երևանի խանության սահմաններում գտնվելու և, որ գլխավորն է, Երևանի խանի կողմից պարսից շահի գերիշխանությունը ճանաչելու։ Ցիցիանովի պահանջին՝ Դանիելին կաթողիկոս ճանաչելու և Դավթին գահընկեց անելու, սուլթանական կառավարության դեմ ապստամբած Շերիֆ փաշային Երևանի խանությունից վտարելու և պարսից շահի գերագույն իշխանությունը ճանաչելուց հրաժարվելու վերաբերյալ, Մամադ խանի բանագնացը կիսատ-պռատ և խուսափողական պատասխաններ տվեց, որոնք բանակցությունները փաստորեն փակուղու մեջ դրեցին։ Խուսափողաբար համաձայնելով Դանիել արքեպիսկոպոսին ճանաչել կաթողիկոս և հաստատելով խանի վճռականությունը՝ մտնելու ռուսական հովանավորության տակ, բանագնաց Մեհմեդ Ալի բեկը միևնույն ժամանակ պահանջեց, որպեսզի ռուսական իշխանությունները չարգելեն իրենց զորքերի անցումը ռուսական տարածքով դեպի Ախալցխայի փաշայություն, որպեսզի իր

[17] АКАК, т. I, док. 841; ЦГИА Груз. ССР, ф. 2, 1802 г., д. 22, лл. 56 об.—57.

[18] «Присоединение...», т. I, док 72 и 73.

պաշտոնում վերականգնեն փախստական Շերիֆ փաշային[19]։ Փաստորեն դա նշանակում էր հարկադրել Ռուսաստանին խզելու այն բարիդրացիական հարաբերությունները, որոնք այդ ժամանակ գոյություն ունեին Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Դա Ռուսաստանի համար խիստ անցանկալի քաղաքական ակտ կլիներ, հղի երկու ճակատով պատերազմ մղելու սպառնալիքով, և դա այն դեպքում, երբ Անդրկովկասում ռուսական զորքերը խիստ փոքրաթիվ էին։ Բացի այդ, Թուրքիայի հետ հարաբերությունների խզումը կարող էր միջազգային ավելի մեծ բարդությունների առջև կանգնեցնել Ռուսաստանին, ուստի շատ բնական է, որ նման պահանջը ոչ մի դեպքում չէր կարող ընդունելի լինել։ Այստեղ չպետք է մոռանալ, որ դեռևս Պավել 1-ը անցանկալի էր համարում «Թուրքերին երկյուղ ներշնչելը»[20], իսկ Ալեքսանդր 1-ը գրում էր Ցիցիանովին, որ «Թուրքական կայսրության պահպանումը ներկա դրությամբ համապատասխանում է Ռուսաստանի օգուտներին»[21]։ Սակայն դա չէր նշանակում, որ Ռուսաստանը իսկապես մտադիր էր Թուրքիայի ձեռքին թողնել այնպիսի կարևոր տերիտորիաներ, ինչպես Իմերեթիան, Միգրելիան և կամ Ախալցխայի փաշայությունը։ Առանց այս տերիտորիաների միացման, Ռուսաստանը չէր կարող ո՛չ ռազմա-ստրատեգիական և ո՛չ էլ առևտրական առումով ավարտված համարել իր անդրկովկասյան քաղաքականությունը։ Եթե միջազգային իրադրությունը ժամանակավորապես հարկադրում էր Ռուսաստանին զգույշ քաղաքական կեցվածք ընդունել Թուրքիայի նկատմամբ, ապա հետագայում, առավել բարենպաստ պայմաններում, Ռուսաստանը պետք է ձեռնամուխ լիներ նաև այդ տերիտորիաների ձեռքբերմանը։ Այդ պատճառով էլ կանցլեր Ա. Ռ. Վորոնցովը 1803 թվականի օգոստոսի 17-ին նախազգուշացնում էր Ցիցիանովին, որ «ներկա պարագաներում Ախալցխայի փաշայության միացումը Ռուսաստանին թեև էական օգուտներ կբերեր ձեր հոգացողությանը հանձնարարված երկրամասին, սակայն հակառակ կլիներ մեր ընդհանուր շահերին», քանի որ նման պայմաններում Բ. դուռը կարող էր անցնել Ֆրանսիայի կողմը։ Ուստի պետք էր Ախալցխայի փաշայությունը գրավելու մտադրությունը պահպանել իբրև «անթափանց գաղտնիք» և սպասել դրա կենսագործման համար պատեհ առիթի, մինչդեռ Իմերեթիայի և Միգրելիայի միացումը պետք էր շտա-

[19] Տե՛ս АКАК, т. II, док. 1209; ЦГИА Груз. ССР, ф. 2, 1803 г., д. 57, лл. 1—4 об:

[20] АКАК, т. I, док. 522.

[21] АКАК, т. II, док. 903.

պեցնել[22]։ Այս ամենից պարզ է, որ Ցիցիանովը ոչ մի դեպքում չէր կարող համաձայնություն տալ Մամադ խանի առաջարկին։ Հիշյալ բանակցությունները ևս ավարտվեցին ձախողանքով։

Նույնպիսի ելք ունեցավ նաև Թոմաս Օրբելյանի բանագնացությունը։ 1803 թվականի սկզբներին գեներալ Ցիցիանովը Թոմաս Օրբելյանին ուղարկեց Երևանի խանի մոտ, հանձնարարություն տալով հասնել այն բանին, որպեսզի Դանիելը ճանաչվի օրինական կաթողիկոս, իսկ Երևանի խանն էլ ընդունի Ռուսաստանի հովանավորությունը։ Թ. Օրբելյանի ջանքերը ոչ մի արդյունք չտվեցին, և նա ստիպված էր ձեռնունայն Թիֆլիս վերադառնալ։ Մամադ խանը այս անգամ կտրականապես հրաժարվեց կատարել ռուսական իշխանությունների պահանջը։ Այլևս պարզ էր դառնում, որ Ռուսաստանի ստրատեգիական պլանները կարող են կենսագործվել միայն և միայն պատերազմական ճանապարհով՝ զենքի ուժով Երևանի խանությունը գրավելով[23]։

Հետաքրքրության է արժանի 1803 թվականի սկզբներին Անդրկովկասում ստեղծված իրավիճակին Պ. Դ. Ցիցիանովի տված գնահատականը, իրավիճակ, որ պետք է դյուրացներ Երևանի խանության գրավումը և դրանով իսկ ցարիզմի ռազմա-ստրատեգիական պլանների կենսագործումը։ 1803 թվականի մարտի 12-ին Ալեքսանդր 1-ին հղած իր զեկուցագրում Ցիցիանովը հետևյալ կերպ էր պատկերում իրերի վիճակը Անդրկովկասում. «Բարձրագույնս ի իրագեկություն ինձ տրված պլանի իրագործման համար Պարսկաստանի կողմից ամենաբարենպաստ հանգամանքներ են առկա։ Դաղստանը և ընդհանրապես լեռնաբնակները, ամեն կողմից նեղված ռուսական զորքերից, շուտով պետք է մտածեն ոչ թե ապատակությունների, այլ սեփական փրկության մասին։ Դերբենտը, Շամախին և Բաքուն գրավելու համար բավական է ունենալ միայն բավարար կայազոր... Երևանի, որպես ձերդ կայսերական մեծության գայրույթին արժանի (տիրույթի) վրա պետք է ես գնամ և, աստծո օգնությամբ, հնազանդեցնեմ ձերդ կայսերական մեծության զենքին։ Պարսկաստանում այնքան սարսափելի Բաբա խանը ռազմական գործին անընդունակ է, իսկ այժմ առավել քիչ է հետաքրքրվում մեր շարժումներով, քանի որ զբաղված է Խորասանում տեղի ունեցող ներքին խռովություններով և, ինչպես հավատացնում են, անգլիական արևելահնդկական ընկերությունից ունեցած դժգոհությամբ, որտեղ պատահական ընդհարման հետևանքով սպանել են նրա դեսպաններից մեկին[24]։ Իմ այստեղ գալուց հետո Գանձակի Ջավադ խանը կարծես թե հակվում է մեր հովանավորությունը որոնելու կողմը։ Շուշու կամ Ղարաբաղի Իբրահիմ խանից հատուկ բանագնացի միջոցով ստացել եմ բարեկամության, նվիրվածության և բարյացակամության հավաստիացում, որին լիովին հավատ չընծայելով հանդերձ, սակայն տեսնում եմ, որ նրանց սեփական օգուտները կապված են մեր հովանավորության հետ, որքանով որ Ադրբեջանի խաների մեծ մասը անկեղծ սրտով ատում է պարսկական ինքնիշխան կառավարումը»[25]։ Իրեն հանձնարարված պլանի կենսագործման համար Ցիցիանովը բավական էր համարում ունենալ լրացուցիչ երեք հետևակային գնդեր, մեկ կանոնավոր հեծելազորային գունդ և 100 հազար ռուբլի արծաթով, որոնք հնարավորություն կտային նրան «գործել հարձակողաբար» և, գրավելով Երևանը, այնուհետև Նախիջևանը և Ղարաբաղը՝ հաստատել Կուր-Արաքս սահմանագիծը հենց այդ ռազմարշավի ժամանակ[26]։ Սակայն Ցիցիանովը իրերը բավական վարդագույն էր տեսնում։ Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ նա սխալ պատկերացում ուներ Գանձակի ու Բաքվի մասին, որ այնքան էլ դյուրին գործ չէր Երևանի խանության նվաճումը, թեկուզ և այն համակրանքի առկայության պայմաններում, որոնց հանդիպում էին ռուսական զորքերը և չնայած այն լայն աջակցության, որ նրանց ցույց էր տալիս հայ ազգաբնակչությունը։

Թեև Ալեքսանդր 1-ը սկզբունքային համաձայնություն տվեց Ցիցիանովի այս առաջարկություններին և թույլատրեց գործել համապատասխան պարագաներին, բայց մերժեց լրացուցիչ զորքեր տրամադրել[27]։

Այսուհանդերձ, Թոմաս Օրբելյանի բանագնացության ձախողումից հետո այլևս գաղտնիք չէր, որ ցարական կառավարությունը, դիվանագիտական պարտությունը, Երևանի խանությունն իր հովանու տակ վերցնելու հարցում, փոխհատուցելու է ռազմական հաջողություններով։ Սա-

---

[22] АКАК, т. II, док. 1799.

[23] АКАК, т. II, док. 1216; ЦГИА Груз. ССР, ф. 2, 1803 г., д. 28, лл. 66 об.—69; նույնը, д. 58, лл. 399—400.

[24] Խոսքը Հաջի Խալիլ խանի մասին է, որին Ֆաթհ Ալի շահը դեսպան էր նշանակել Արևելա-հնդկական ընկերության մոտ և որը սպանվել էր Բոմբեյում 1802 թ. հուլիսի 20-ին նրա մարդկանց և նրա պահպանության համար նշանակված զինվորների միջև տեղի ունեցած պատահական ընդհարման ժամանակ (տե՛ս "The Dinasty of the Kajars", էջ 210—211)։

[25] АКАК, т. II, док. 1216.

[26] Նույն տեղում։

[27] Տե՛ս Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, СПб., 1886, էջ 41։

կայն այս պայմաններում էլ Մամադ խանը շարունակում էր իր դիվանագիտական խաղերը, թեև Պարսկաստանի կողմից սպառնալիքը գնալով իրական երանգ էր ընդունում։

Հարկ է նշել, որ Երևանի Մամադ խանի դրությունը բավական ծանր էր։ Եկել էր արդեն այն ժամանակը, երբ նրա խուսանավումները այլևս ոչ ոքի չէին կարող մոլորության մեջ գցել։ Արդեն 1804 թ. սկզբներին նա ընկած էր երկու կրակի արանք։ Մի կողմից նրա վրա էին շարժվում շահական զորքերը, իսկ մյուս կողմից նրան սարսափեցնում էր Ռուսաստանի հետ հնարավոր պատերազմի վտանգը։ Զգալով իր դրության գնալով խորացող անելանելիությունը, Մամադ խանը դիմեց դիվանագիտական նոր հնարանքների, ջանալով ջրից չոր դուրս գալ։

1804 թվականի մարտ ամսին Երևանի Մամադ խանը, իմանալով Ֆաթհ Ալի շահի մտադրության մասին, վերջ տալու իր՝ Մամադ խանի երկերեսանի քաղաքականությանը և զորքեր ուղարկելու Երևանը հնազանդեցնելու համար, ռուսական անդրկովկասյան իշխանությունների հետ հարաբերությունները հարթելու նոր փորձ կատարեց։ Պ. Դ. Ցիցիանովի մոտ ժամանած խանի բանագնացը հավաստիացնում էր, որ Մամադ խանը այսուհետև ռուսներին ավելի ջանասիրաբար կծառայի, քան ժամանակին ծառայել է վրացական Հերակլ 2-րդ թագավորին։ Այդ մասին մենք տեղեկանում ենք վիրահայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակրի՝ ռուսահայերի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսին և Մինաս Լազարյանին գրած 1804 թ. մարտի 27-ի նամակից. «Այժմ միայն զայս ունիմք ծանուցանելի, որ ի սոյն աւուրքս միւս ևս տաճիկ եկն յԵրևանու խանէն հանդերձ գրով առ պայծառ կուսակալ Ցիցիանովն. զորմէ որպէս լսեմք զայս օրինակ, թէ շահն սրամտեալ ի վերա իմ կամի գալ ի վերա իմ. և ես խոստանամ ծառայել ձեզ զերկպատիկ աւելի քան զորս ծառայէաք Հերակլ խանին. միայն զի տիրեսցես ինձ և զդէմ ունիցիս բռնութեան շահին ի գալն յերկիր մեր և այլն»[28]։

Ըստ իր սովորության անզուսպ կերպով ցասումն արտահայտելուց հետո, Ցիցիանովը բանավոր հետևյալ պահանջներն է առաջադրում Երևանի խանին. «Եթէ ցանկայ Երևանու խանն յապահովի լինիլ ենթ հովանաւորութեան մերոյ յղեսցէ ինձ զԴաւիշն (նամակագիրներն ի նկատի ունեն Դավիթ կաթողիկոսին—Վ. Դ.) և նստուցցէ ի տեղի իւր զԴանիէլ կայսրընտիր կաթողիկոսն... Այլև հանդերձ այսու ամենայնիւ ելցէ ինքն ի բերդէն և նստիցի ի Կոնդն և եղիցի իշխան երկրի իւրոյ. և ես առաքեցից զզինուորս 500, որք նստիցին ի մէջ բերդին, և յայնմհետէ կայցէ ինքն յապահովի որպէս և կամին, և ես զիտացից զի՞նչ առնել պարտիցէ ընդդէմ շահի նորա. քանզի եթէ ոչ այսպէս զիարդ կարելի հաւատալ պարտից, որ այսպիսի գրությամբ նորա ելցուք մեք ընդդէմ թշնամեաց նորա, և յազատելն զնա ի նոցանէ ապա այնուհետև դարձցի ինքն միւսանգամ յառաջին կամս իւր»[29]։ Եթե Երևանի խանն ընդունելու լիներ այս պայմանները, ապա «բարի է», այլապես զատկական տոներից հետո ինքը կգնա Երևանի վրա և «յայնժամ խօսիցի զոր ինչ և խօսելոց իցեն»[30]։

Այդ պայմանները Մամադ խանի արտով չէին և նա բնավ մտադիր չէր համաձայնել դրանց, բայց ստեղծված սպառնալից իրադրությունը հարկադրում էր նրան Ցիցիանովից նորից ու նորից օգնություն խնդրել, միևնույն ժամանակ խուսափելով որևէ պահանջ կատարելուց։ 1804 թվականի մարտի 29-ի թվագիրը կրող Ներսես Աշտարակեցու՝ Եփրեմ արքեպիսկոպոսին և Մինաս Լազարյանին հղած նամակից տեղեկանում ենք, որ մի քանի օր անց նախորդ բանագնացից, Մամադ խանից ժամանում է «հայ փայտեկ մի երեցօրեայ ճանապարհորդութեամբ» և բերում է Մամադ խանի գրությունը, որով կրկին անորոշ հավաստիացում տալով, թե «ամենալավ կերպիւ հնազանդ եմ կայսեր» խնդրում էր, «միայն զի վաղվաղակի հաւատարմութեամբ զբանս իմ յղեսցես զզօրս ինձ ի թիկունս, քանզի չի բարկութեամբ յարուցեալ գայ ի վերայ իմ շահ անուանեալն, որում բնաւ ենթարկիլ ես ոչ կամիմ»[31]։ Այդ նույն օրերին խանը աղատ է արձակում տնային կալանքի տակ դրված Գաբրիել հարյուրապետ Գեղամացուն, որին սկզբնապես մտադիր էր խեղդամահ անել «իբրև զանհարազատ իւր և որպէս զհամախոհս ռուսաց» և խնդրում է միջնորդության գիր գրել, որպեսզի ռուսական զորքերը գան իրեն օգնության ընդդեմ Ֆաթհ Ալի շահի[32]։

Ցիցիանովի պահանջները կատարելու հարցում Մամադ խանի այս խուսափողական դիրքը ցույց էր տալիս, որ նրան ոչ մի կերպ ձեռք չէր տալիս, որպեսզի ռուսական զորքեր տեղակայվեն Երևանի բերդում։ Միևնույն ժամանակ նա նաև չէր ցանկանում վերջնականապես խզել կապերը ռուսների հետ, ուստի և, մեկ ամիս անց՝ 1804 թ. ապրիլին, նա կրկին անգամ է դիմում Ցիցիանովին, այս անգամ արդեն Նախիջևանի

[28] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 17, Նաև՝ «Присоединение...», т. I, док. 174.

[29] Նույն տեղում։

[30] Նույն տեղում։

[31] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 18. Նաև՝ «Присоединение...», т I, док. 175.

[32] Նույն տեղում։

Քալբալայի խանի և Գաբրիել ու Հովհաննես յուզբաշիների միջոցով, և առաջադրում իր պայմանները։ Դրանք հանգում էին հետևյալին. «զիմ դղեակն և իշխանութիւն և զաւալ մի պահանջեսցեն զինէն. այլ եկեալ (Ցիցիանովը—Վ. Դ.) զօրօք իւրովք նստցի յէջմիածին կամ ի Շարուր ընդդէմ թշնամեաց իմոց և ես ամենայն ջերմեռանդութեամբ ծառայեցից կայսեր որպէս և յառաջն Հերակլ խանին, այլև աւելի ևս (և ի վերա այսր ամենայնի մակաբերէ զայսպիսի զպատճառ) թէ մեր կանայքն և որդիքն են առ շահն և ոչ զոք ունիմք աստ առ մեզ թէ տացուք ռուսաց պատանդ»[33]։ Իր նման պայմանները նա հիմնավորում էր հետևյալ կերպ, որը զուրկ չէր տրամաբանությունից. «Եթէ ի դէպ լիցի տալ զդղեակն ումեք, լաւ ևս է տալ զայն շահին, որ մեր հաւատակիցն է, և ոչ օտարի ումեք որ քրիստոնեայ է. զի և շահն ասեն ոչ այլ ինչ պահանջէ ի մէնջ բայց միայն զբերդն, զորոյ ի տալն մեր ստանամք ի հարկէ նաև ի նմանէ զպատիւս և զմեծութիւնս և այլն և այլն»[34]։

1804 թ. մայիսի 5-ի իր պատասխան գրության մեջ Նախիջևանի խանին, Ցիցիանովը հարց էր տալիս. «Եթէ Մամադ խանը համաձայն չէ հանձնելու ոչ բերդը և ոչ էլ ամանաթ (պատանդ—Վ. Դ.), ապա էլ ինչո՞վ նա կկատարի իմ կամքը և ինչի՞ն պետք է հավատամ ես... եթե նա Պարսկաստանը Ռուսաստանից ուժեղ է համարում, ապա թող հնազանդվի նրան, իսկ ինձ համար միևնույնն է, թե ումից կվերցնեմ բերդը՝ Բաբա խանի զորքերից, թե Մամադ խանից»[35]։ Այնուհետև Ցիցիանովը պահանջում էր անհապաղ կատարել իր պահանջները, քանի որ «ուշ է բանակցություններ սկսելը և ոսկի ժամանակը չի սպասում։ Երդվում եմ ձեզ կենդանի աստվածով, ավելի շուտ արեգակը ետ կդառնա, Կասպից ծովում ջուր չի լինի, քան իմ արշավը կվերանա։ Տարբերությունը միայն այն է, որ ես կամ կգամ իբրև եղբայր փրկելու եղբորը, կամ իբրև թշնամի պատժելու նրան, ով Գանձակի Ջավադ խանի նման հանդգնել է հակառակել թագավորաց թագավորի հրամանին»[36]։ Սակայն Ցիցիանովի այս նամակին Մամադ և Քալբալայի խաները պատասխանեցին լռությամբ։

Պետք է ասել, որ հարյուրապետներ Գաբրիելը և Հովհաննեսը ևս, իհարկե ոչ առանց խանի ստիպման, հավանություն էին տալիս վերջինիս այս պայմաններին, ավելացնելով ի դեպ, որ «մինչ առաջարկութեան սոցա եղանակաւ մտցեն զօրք կայսերական յերկիրս այս խաղաղութեամբ և տիրեսցեն համօրէն գաւառին յետոյ ապա կարող են դիւրութեամբ առ ձեռն բերել և զդղեակն և այլն»[37]։

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, սակայն, որ Մամադ խանի միակն նպատակն այն էր, որպեսզի ժամանակ շահի և, եթե հընարավոր է, խուսափի գոնե ռուսական զորքերի հետ ընդհարվելուց, եթե անհնարին լինի դրանց օգտագործել Ֆաթհ Ալի շահի դեմ։

Պարսկական զորքերի առաջխաղացումը և հայտնվելը Երևանի խանությունում, ինչպես նաև Մամադ խանի դիվանագիտական լարախաղացությունը պարզորոշ ցույց էին տալիս, որ Երևանի խանությունը գրավելու ժամանակը հասունացել է։ Հետագա հայկաղումը հղի էր Վրաստանի համար անմիջական սպառնալիքով, քանի որ, ինչպես բազմիցս նշվեց, Երևանի կողմից նրա սահմանները չէին կարող հուսալից արգելք հարուցել պարսկական բյուրավոր զորքերի հարձակմանը։ Այսուհանդերձ, Ցիցիանովին չէր լքում այն միտքը, թե հնարավոր է, որ Երևանի խանը վերջին պահին կանցնի իր կողմը։

Հապաղել այլևս հնարավոր չէր, որովհետև այս անգամ արդեն Ֆաթհ Ալի շահը գործնական միջոցների էր դիմում ռուսներին Վրաստանից վտարելու համար։ Ամբողջ Անդրկովկասում սփռվել էին շահի գործակալները, որոնք տարածում էին նրա ֆիրմանները այն մասին, որ ինքը գալիս է «անհավատների» (ռուսների—Վ. Դ.) վրա, ոչնչացնելու նրանց և վերադարձնելու Վրաստանն ու Գանձակը[38]։ Շահի կողմից պաշտոնապես Վրաստանի վալի ճանաչված արքայազն Ալեքսանդրը իր համախոհների միջոցով ջանում էր ոտքի հանել վրացական ֆեոդալներին ընդդեմ ռուսական տիրապետության[39]։ Շահի գործակալները գրգռում էին մահմեդականներին հայերի դեմ, քանի որ «յայտնեցին շահին ամենայն փախստականքն ի Ելիսավէտպոլու այն ինքն է յառաջն Գանձակ անուանելոյ, թէ հայք մատնեցին ռուսաց զանառիկ ամրոցն Գանձակու և Ճարակ ետուն սրոյ զհիմամէթն Մահմէտի, որ վասն և շահն (ասեն) բացարձակ հրաման տուեալ է որդւոյ իւրում և ամենայն գործաւորաց և զօրաց իւրոց ջնջել ջարդել և կոտորել զամենայն զորս միանգամ գտանիցեն յազգէ հայոց զայր և զկին, զծեր և զտղայ, և յայսմհետէ (ասեն) սատուծոյ է գիտելի մեր ազգի ազատիլն միւսանգամ յանօրէն կատա-

[33] Նույն տեղում, թղթ. 15, վավ. 28։
[34] Նույն տեղում, նաև «Присоединение...», т. I, док. 179.
[35] Дубровин Н. История войны и владычества..., т. II, стр. 299.
[36] Նույն տեղում։

[37] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 28։
[38] АКАК т. II, док. 1096.
[39] Дубровин Н., История войны и владычества..., т. II, с. 293—294; ЦГВИА, ф. ВУА, 1804 г., д. 6166, ч. I, л. 83.

զուիենէ պարսից և արեան քրիստոնէից ծարաւի անողորմ սրոյ նոցա և այլն ըստ այսց աղէտ և կոծ անհնարին»[40]։

Նման պարագաներում Թիֆլիս ժամանեց Պարսկաստանի նոր վեզիր Միրզա Շեֆիի բանագնաց Յակուբ բեկը և գրավոր պահանջ ներկայացրեց կամովին դուրս հանել ռուսական զորքերը Վրաստանից և Գանձակից, քանի որ, հակառակ դեպքում իրենք լի են վճռականությամբ դուրս վանել ռուսներին Անդրկովկասից[41]։ «Պարսիկների ռազմական պլանը կայանում էր հետևյալում,— գրում է ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը։— Աբբաս Միրզան պետք է իր զորքերի մի մասը ուղարկեր Ղարաբաղ, իսկ ինքն անձամբ գլխավոր ուժերով շարժվեր դեպի Երևան, որից հետո տարբեր կողմերից ներխուժեր Վրաստան։ Դրանից անմիջապես հետո պետք է Անդրկովկաս մտնեին իրեն՝ շահի զորքերը։ Հարկ է ի նկատի ունենալ, որ դրան զուգընթաց պարսիկները նպատակ էին հետապնդում ոչ միայն վտարել ռուսներին Վրաստանից և Գանձակից, այլև հնազանդեցնել անդրկովկասյան խաներին, որոնք 18-րդ դարի կեսերից փաստորեն անկախ էին և որոնցից շատերը հակում էին ցուցաբերում ճանաչել Ռուսաստանի գերագույն իշխանությունը և ընդունել ռուսական հպատակություն։ Այդպիսով, իրանական արշավանքը խրնդիր էր դնում ոչ միայն նվաճել Վրաստանը, այլև բռնի վերականգնել իրանական տիրակալությունը ամբողջ Անդրկովկասում»[42]։

Այսպիսի իրադրության մեջ ռուսական գործող կորպուսը, գեներալ Ցիցիանովի հրամանատարությամբ, 1804 թվականի մայիսի վերջերին մտավ Երևանի խանության սահմանները։ Դրանից հետո էլ «Երևանի խանը չէր դադարում իշխան Ցիցիանովին խաբելուց իր դեսպանություններով և հուսադրումներով քաղաքը հանձնելու մասին, խնդրելով նրան շտապել, քանի որ Բաբա խանի որդին՝ Շահ-զադեն կամ այլ կերպ Աբբաս-Միրզա անվանյալը, գրոհել է նրա ամրոցի վրա և կռիվներ է ունեցել երևանցիների հետ»[43],—ասվում է ժամանակի վավերագրերից մեկում։

Պարսից գահաժառանգ Աբբաս Միրզայի զորքերը էջմիածնի վանքի մոտ հունիսի 20-ին առաջին ընդհարումն ունեցան ռուսական փոքրաթիվ կորպուսի հետ, բայց չկարողացան ընկճել նրա դիմադրությունը։ Անհաջողությամբ ավարտվեցին նաև հունիսի 21-ի և 22-ի հարձակումները, որից հետո ռուսական գործող կորպուսը գրավեց Երևանի մերձակայքում գտնվող Կավակերտ գյուղը, ապա անցավ Հրազդան գետը, գրավեց Քանաքեռը և պաշարեց Երևանի բերդը[44]։ «Այդպես սկսվեց ռուս-պարսկական պատերազմը, որն առավել ևս բարդացրեց Կովկասում տիրող ռազմա-քաղաքական իրադրությունը»[45]։

Երևանից դեպի հարավ և հարավ-արևելք գտնվող պարսկական զորքերն իրենց հերթին ջանում էին շրջափակել ռուսական բանակը, սակայն Ցիցիանովին հաջողվեց այդ բոլոր փորձերը ի դերև հանել։ Այնուամենայնիվ, գլխավոր հրամանատար գեներալ Ցիցիանովի անվճռական գործողությունները, որը հապաղեց և այնպես էլ չձեռնարկեց Երևանի բերդի գրոհը և հույսը չէր կտրում համոզելու միջոցով հասնել այն բանին, որպեսզի Մամադ խանը բերդը կամովին հանձնի իրեն, հանգեցրին ամբողջ ռազմարշավի ձախողմանը։ Վերահաս ցրտաշունչ աշունը և պարենամթերքի պակասը հարկադրեցին գլխավոր հրամանատարին վերացնելու բերդի պաշարումը և նահանջելու Վրաստանի սահմանները[46]։

Ռուսական զորքերի այս նահանջը և երևանյան առաջին ռազմարշավի ձախողումը չէր նշանակում, որ Անդրկովկասի ռուսական վարչությունը, կամ ռուսական կառավարությունն ընդհանրապես, հրաժարվում էր Արևելյան Հայաստանի այդ մասի նկատմամբ ունեցած իր ռազմաստրատեգիական ծրագրերից։ Ռազմական գործողությունները, այդ ծրագրերի իրականացման նկատառումներով, շարունակվեցին նաև հաջորդ տարիների ընթացքում։ 1805 թվականի մայիս ամսին Ղարաքիլիսայում տեղակայված ռուսական զորաջոկատի հրամանատար գեներալ Պ. Դ. Նեսվետաևը իր զորքերով ներխուժեց Երևանի խանության սահմանները, Թալինի մահալում ջարդեց խանական զորքերին և, գրավելով Թալինի ամրոցը, առաջ շարժվեց դեպի Երևան ու գրավեց Վաղարշապատ գյուղը և էջմիածնի վանքը[47]։ Այնուհետև, վերցնելով էջմիածնի վանքի հարստությունը և ավելի քան 500 հայկական ընտանիքներ Վաղարշապատ, Աշտարակ, Հայթաղ, Աղավնատուն, Ֆրանգանոց, Մոլլաբայազետ, Ղուրդուղուլի, Ալիբեքլու և այլ գյուղերից, Նեսվետաևը ետ վերադարձավ[48]։ Այդ տեղահանված ընտանիքները հիմնավորվեցին Թիֆլիսում, Ղարաքիլիսայում և Փամբակի ու Շորագյալի գավառների ուրիշ վայրերում։ Ճանապարհին նրանց մեծ մասը կողոպտվել էր քոչվոր թա-

[40] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 24, Կ. Պոլսի Նախկին պատրիարք Գրիգոր Խամսեցու և Վրաստանի հայոց առաջնորդ Հովհաննես Գեղարդակրի Նամակը Մինաս Լազարյանին։

[41] АКАК, т. II, док. 1665.

[42] Иоаннисян А. Р., Присоединение Закавказья к России..., с. 74.

[43] ЦГВИА, ф. ВУА, 1804 г., д. 4258. ч. I, л. 92.

[44] Григорян З. Т., Присоединение Восточной Армении..., с. 71.

[45] Фадеев А. В., նշվ. աշխատ., էջ 118։

[46] «Присоединение...», т. I, док. 185 и 196.

[47] ЦГВИА, ф. ВУА, 1805 г., д. 4259, ч. II, лл. 61—62.

[48] Նույն տեղում, թթ. 84—84բ։

թարներից[49], խիստ կարիքի մեջ էր և երկար ժամանակ չէր կարողանում տնտեսապես ոտքի կանգնել։

Նույն 1805 թվականին ռուսական կառավարությունը բավական խոշոր հաջողություն ունեցավ։ Մարտ ամսին Շորագյալի կամ Արթիկի Բուդաղ սուլթանը դիմեց հարևան Փամբակի ուղեմասում տեղակայված ռուսական զորքերի հրամանատար գեներալ Նեսվետաևին և առաջարկեց նրան գրավել Շորագյալի սուլթանությունը, նախքան այդ բանը կանի Երևանի խանը։ Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Շորագյալի սուլթանությունը «նախկինում պատկանում էր վրացական թագավորներին, բայց Երևանի խանը, որն առաջ հարկ էր վճարում Վրաստանին, նկատելով վերջին թագավոր Գեորգիի թուլությունը, ոչ միայն հրաժարվեց հարկ վճարելուց, այլև մտադրվեց տիրանալ այս երկրամասին։ Իմանալով այդ մասին, թագավորը նրա դեմ ուղարկեց իր սարդար իշխան Ցիցիանովին (խոսքը Փամբակի մոուրավ իշխան Գեորգի Ցիցիշվիլու մասին է—Վ. Դ.), որը, ջարդվելով պարսիկներից, ստիպված էր նահանջել, իսկ թագավորը հետո պայմանագրով այս տափաստանը զիջեց Երևանի խանին»[50]։ Հետագայում, երբ դրությունը Անդրկովկասում սրվեց, Շորագյալի Բուդաղ սուլթանը ընկավ մի տեսակ կիսանկախ դրության մեջ։ Ռուսական զորքերի երևանյան առաջին արշավանքի ձախողումից հետո, Երևանի խանը կրկին փորձեց այդ սուլթանությունը իրեն ենթարկել, սակայն Բուդաղ սուլթանը այդ ժամանակ գերադասեց ընդունել ռուսական հպատակություն։ 1805 թվականի մարտի 23-ին գեներալ Նեսվետաևը գրավեց Արթիկը, որի բնակիչները հավատարմության երդում տվեցին[51]։ Նույն թվականի հոկտեմբեր ամսին Բուդաղ սուլթանն ինքը հավատարմության երդում տվեց գեներալ Ցիցիանովին և պարտավորվեց տարեկան 2000 ռուբլի հպատակության հարկ վճարել[52]։ Շորագյալի սուլթանության գրավումը կարևոր նշանակություն ուներ, որովհետև այն ստրատեգիական առումով խիստ կարևոր դիրք էր գրավում Երևանի խանության, Կարսի փաշայության և ռուսական տիրույթների արանքում։ Բացի այդ, հիշյալ հացառատ շրջանը որոշ չափով լուծում էր ռուսական զորքերի և Վրաստանի հացի մատակարարման խնդիրը։

Շորագյալի սուլթանության գրավումը հեշտացնում էր և միաժամանակ անհրաժեշտ էր դարձնում Թալինի ամրոցի գրավումը։ Այդ ամրոցի նշանակության մասին գեներալ Նեսվետաևը հետևյալն էր գրում Ցիցիանովին. «Այդ Թալինը խիստ կարևոր է Երևանը սանձելու համար, որովհետև այնտեղից մինչև վանքը (իմա՝ էջմիածնի վանքը—Վ. Դ.) սոսկ երկու հաջող և անվտանգ անցում է, ընդ որում ես համոզված եմ, որ Արաքսից այն կողմ ընկած գյուղերը անխուսափելիորեն պետք է հետևեն Թալինին և հնազանդվեն ձերդ պայծառափայլությանը, քանի որ նրանք նախկինում էլ Թալինին են պատկանել և այս պրովինցիայի վիճակն ավելի լավ է եղել, քան Շորագյալինը, որովհետև Թալինի վրայով են տարել աղ և զանազան այլ ապրանքներ նաև թուրքական սահմանները»[53]։

Ռուսական դիվանագիտության խոշոր հաջողությունն էր 1805 թ. մայիսի 14-ին Քյուրակ-չայի պայմանագրի կնքումը Ղարաբաղի Իբրահիմ-խալիլ խանի հետ, որի համաձայն Ղարաբաղի խանությունն ընդունում էր ռուսական հովանավորությունը, իսկ խանը համաձայնում էր թույլատրել ռուսական զորքերի մուտքը Շուշի։ Թեև պայմանագրով նախատեսվում էր խանական իշխանության պահպանումը, բայց այն էական սահմանափակումների էր ենթարկվում։ Համաձայն պայմանագրի 4-րդ հոդվածի, խանը զրկվում էր արտաքին հարաբերություններ վարելու իրավունքից։ Նա խոստանում էր «առանց Վրաստանի գլխավոր կառավարչի հետ նախնական համաձայնության հարևան տիրակալների հետ հարաբերություններ չունենալ, իսկ երբ նրանց կողմից բանագնացներ գան կամ նամակներ ուղարկվեն, ապա դրանցից մեծ կարևորություն պարունակողները ուղարկել գլխավոր կառավարչին և նրանից թույլտվություն խնդրել, իսկ պակաս կարևորների մասին հայտնել և խորհրդակցել ինձ մոտ Վրաստանի գլխավոր կառավարչի անունից գտնվող անձի հետ»[54]։

Ղարաբաղի խանը զրկվում էր խանության զորքերի գլխավոր հրամանատարի երբեմնի իրավունքից։ Այժմ խանի անձի, նրա տան և բոլոր տիրույթների պաշտպանությունը հանձնարարվում էր Շուշիի բերդում տեղակայված 500 հոգուց բաղկացած ռուսական կայազորին, իսկ անհրաժեշտության դեպքում պետք է լրացուցիչ զորական ուժեր տրամադրվեին[55]։

Ներքին կառավարման հարցերում, այն է՝ հարկերի գանձման և եկամուտների ծախսման, դատաստանի և այլն, խանը պետք է ունենար

---

[49] Նույն տեղում, 1804 թ., գործ 4258, մաս 1, թթ. 88—89։
[50] Նույն տեղում, 1805 թ., գործ 4259, մաս II, թ. 34։
[51] Նույն տեղում, 1805 թ., գործ 4258, մաս III, թ. 464։
[52] Նույն տեղում։ 1805 թ., գործ 4258, մաս III, թ. 464։

[53] Նույն տեղում, գործ 4259, մաս II, թթ. 129բ։
[54] АКАК, т. док. 1436.
[55] Նույն տեղում։

լիակատար ինքնուրույնություն։ Բայց այնքանով, որքանով խանը զրկվում էր դրամ հատելու իրավունքից և փաստորեն ենթարկվում ռուսական կայազորի պետի հսկողությանը, այս բնագավառում էլ նրա իրավունքները սահմանափակվելու էին։ Խանությունը պետք է տարեկան 8000 չերվոնեց վճարեր իբրև հպատակության տուրք[56]։ Այսուհանդերձ, չնայած այս սահմանափակումներին, հատկապես 1806 թվականից Իբրահիմ խանին հաջորդած Մեհթի Ղուլի խանը մեծապես շարաշահեց այն իրավունքները, որոնք թողնվել էին նրան ներքին կառավարման ասպարեզում և փաստորեն ճորտատիրական իրավունքներով օժտեց իր մերձավորներին։

Ղարաբաղի խանության միացումը մեծ նշանակություն ունեցավ Վրաստանի պաշտպանունակության ամրապնդման տեսակետից, որովհետև այստեղով էր անցնում այն հիմնական ճակատներից մեկը, որը սպառնում էր Վրաստանի անվտանգությանը։

Մինչ այդ Երևանում տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք կրկին օրակարգի հարց էին դարձնում բերդի գրավումը և խանության միացումը Ռուսաստանին։ Մայոր Նոլդեի 1805 թ. հունիսի 18-ի զեկուցագրից գեներալ Նեսվետաևին պարզ է դառնում, որ Մամադ խանը, որն այդ ժամանակ Ֆաթհ Ալի շահի կողմից փաստորեն հեռացված էր իշխանությունից, քանի որ վարչությունը հանձնարարված մեկ այլ խանի՝ Մեհթի Ղուլիին, նախազգալով իր անձին սպառնացող վտանգը, գաղտնի սուրհանդակների միջոցով առաջարկել էր ռուսներին՝ գալ և վերցնել Երևանի բերդը։ Նա հավատացնում էր, որ Մեհթի Ղուլի խանը ավելի փոքրաթիվ զորք ունի իր տրամադրության տակ, քան ինքը և խոստանում էր աջակցել բերդի գրավմանը։ Ընդ որում Մամադ խանը հույս էր հայտնում, որ թողություն կստանա իր նախկին արարքների համար և խոստանում էր պատանդներ ուղարկել։ Նա հայտնում էր նաև, որ բնակչությունը ավելի մեծ հաճույքով կընդունի ռուսական հպատակություն, քան թե կենթարկվի խաբեությամբ նրանց վրա բռնացած Մեհթի Ղուլի խանին[57]։ Սակայն 1805 թ. վերջերին Մամադը վերջնականապես զրկվեց խանական իշխանությունից և քշվեց Պարսկաստանի խորքերը, զոհ գնալով սեփական երկրեսանի քաղաքականությանը։ Միևնույն ժամանակ Մամադ խանի հեռացումը ցույց էր տալիս, որ պարսկական կառավարությունը հաստատապես որոշել է ռազմաստրատեգիական տեսակետից խիստ կարևոր Երևանի խանությունը դարձնել

[56] Նույն տեղում։

[57] «Присоединение...», т. I, док. 245 и 246.

Ռուսաստանի դեմ պայքարի ամենակարևոր հենակետը։ Այդ առումով էլ որոշել էր այնտեղ նշանակել կառավարիչներ, որոնց հավատարմությունը դեպի կենտրոնական կառավարությունը որևէ կասկածի տեղիք չէր տալիս։ Պայքարը Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի համար մրտնում էր զարգացման մի նոր փուլ։

Գեներալ Ցիցիանովը քաջ գիտակցում էր, որ Երևանի գրավումը կենսական կարևորություն ներկայացնող հարց է։ Արդեն 1806 թ. սկզբներին Ցիցիանովը մտադրվել էր, Բաքվի գրավումից հետո, նորից շարժվել Երևանի վրա։ Սակայն Բաքվի պարիսպների տակ նրա ողբերգական մահը հնարավորություն չտվեց կենսագործել իր մտադրությունը։

Գեներալ Ցիցիանովի սպանությունը, ինչպես նաև Ֆրանսիայի ներշընչանքով 1806 թ. վերջին սկսված ռուս-թուրքական նոր պատերազմը թևեր տվեցին Աբբաս-Միրզային։ Հույս ունենալով, որ Անդրկովկասում գտնվող փոքրաթիվ ռուսական զորքերը ի վիճակի չեն լինի երկու ճակատով պայքարել, Աբբաս Միրզան համարում էր, որ դրանով իսկ վրա է հասել Անդրկովկասի վրա Պարսկաստանի երբեմնի «իրավունքները» վերականգնելու երկար սպասված պահը։ Դեռևս 1806 թ. մայիսի վերջերին տաս հազարանոց մի զորաբանակով նա ներխուժեց Ղարաբաղի խանության սահմանները ու շարժվեց դեպի Շուշի ամրոցը։ Միաժամանակ վրաց արքայորդի Ալեքսանդրը յոթ հազարանոց զորաջոկատով մոտեցավ Ղազախի սահմաններին, իսկ մեկ ուրիշ յոթ հազարանոց պարսկական բանակ էլ Էջմիածնի վրայով շարժվեց դեպի Փամբակ և Շորագյալ[58]։

Բայց նախքան 1806 թ. և հետագա տարիների իրադարձությունները լուսաբանելը, անհրաժեշտ է քննարկել ռուս-թուրքական հարաբերությունները առ 1806—1812 թվականների պատերազմը, որպեսզի մեզ համար պարզ դառնա դեպքերի ընթացքը։

Հայտնի է որ Նապոլեոն Բոնապարտի ձեռնարկած եգիպտական արշավանքը խիստ մեծ սարսափ ներազդեց Թուրքիայի վրա։ Այդ պարագան էր, որ դրդեց Բ. դռանը իր ոխերիմ ոսոխ Ռուսաստանի հետ կնքել 1799 թ. հունվարի 3-ի Կոստանդնուպոլսի պայմանագիրը, որն ուղղված էր «ֆրանսիական կործանարար մտադրությունների»[59] դեմ։ Այդպես երկու ոչ վաղուցվա հակառակորդների միջև հաստատվեց ժամանակավոր բարեկամություն։ 1805 թվականի սեպտեմբերի 23-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց դաշնակցային նոր պայմանագիր,

[58] ЦГВИА, ф. ВУА, 1806 г., д. 4259, ч. IV, лл. 103—105, 207—210.

[59] Նույն տեղում։

որով երկու պետությունները պարտավորվում էին համատեղ ուժերով պահպանել սեծովյան նեղուցները, Թուրքիան դե ֆակտո ճանաչում էր Իմերեթի ու Մեգրելիայի միացումը Ռուսաստանին, իսկ վերջինս էլ հրաժարվում էր նոր տարածքային նվաճումներ կատարել Կովկասի սեծովյան ափերին[60]։ 1799 թվականի պայմանագրի կիրառումը Անդրկովկասում արտահայտվեց նրանում, որ տեղական ռուսական իշխանությունները, կենտրոնական կառավարության գիտությամբ և համաձայնությամբ, ռազմական աջակցություն էին ցույց տալիս Թուրքական կառավարությանը և Էրզրումի սերասքյարին՝ հնազանդեցնելու խռովարար փաշաներին ու կառավարիչներին։

XIX դարի սկզբին Թուրքական Բ. Դուռը հատկապես երկյուղ էր կրում Ախալցխայի Շերիֆ փաշայից, որը ոչ մի կերպ չէր կամենում ենթարկվել իր սյուզերենին։ Ախալցխայի փաշայի, որին էական օգնություն էին ցույց տալիս Երևանի Մամադ խանը և լեզգիները, խռովությունը ճնշելու գործը հանձնարարված էր Էրզրումի սերասքյարին։ Սակայն վերջինս չէր կարողանում փոքրիշատե վճռական գործողությունների դիմել Շերիֆ փաշայի դեմ և հարկադրված էր դիմել Վրաստանում գտնվող ռուսական զորքերի հրամանատարությանը։ Գեներալ Ի. Պ. Լազարևը և վրացական արքայորդի Դավիթը, որոնք գլխավոր հրամանատար Կ. Ֆ. Կնորինգի բացակայության ժամանակ կառավարում էին երկիրը, Էրզրումի փաշային օգնության ուղարկեցին Բորչալուի և Ղազախի թաթարներից կազմված մի զորաջոկատ, որի գլուխ կանգնած էր Մելիք Աբովը։ Ավելի ուշ, 1801 թվականին, Էրզրումի փաշան կրկին դիմեց Կնորինգին և խնդրեց նորից իրեն օգնության ուղարկել Մելիք Աբովի կամ վրացական մեկ այլ սարդարի գլխավորությամբ զորաջոկատ՝ պայքարելու Շերիֆ փաշայի դեմ։ Միաժամանակ Էրզրումի փաշան տեղեկացնում էր, որ Երևանի Մամադ խանը իր զորքերով օգնություն է ցույց տալիս Շերիֆ փաշային և խնդրում էր Կնորինգին, որ նա ճնշում գործադրի Երևանի խանի վրա և արգելի նրան աջակցել Ախալցխայի փաշային[61]։

Չնայած այն բանին, որ Ռուսաստանի քաղաքականությունը Երևանի խանության նկատմամբ այն խաղաղ ճանապարհով հպատակության բերելն էր, սակայն Թուրքիայի հանդեպ ունեցած դաշնակցային պարտավորությունները հարկադրում էին Ռուսաստանին և Անդրկովկասի ռուսական հրամանատարությանը հանդես գալ Երևանի խանի դեմ այն առումով, որպեսզի խռովարար փաշային օգնելու փորձերը կանխեն։

[60] Տե՛ս Фадеев А. В., նշվ. աշխատ., էջ 123—124։
[61] АКАК, т. I, док. 1031.

Հենց այդ պատճառով էլ ռուսական զորքերը Կարսի փաշայի զորքերի հետ համատեղ 1802 թ. մարտ-ապրիլ ամիսներին դուրս եկան Երևանի խանության զորքերի դեմ, որոնք գործում էին Նախիջևանի Քալբալայի խանի առաջնորդությամբ և սպառնում Կարսի փաշայության սահմաններին։ Ռուսական և Թուրքական զորքերը պարտության մատնեցին Քալբալայի խանին, որը հարկադրված եղավ հրաժարվել իր ոտնձգություններից և նահանջել։ Սակայն ռուսական հրամանատարությունը բավարարվեց միայն այդքանով և մերժեց Երևանը գրավելու Կարսի փաշայի առաջարկությունը, իր մերժումը պատճառաբանելով նրանով, որ իր պարտավորությունը միայն Վրաստանի սահմանների անվտանգությունը և ամբողջականությունը պահպանելն է։ Բայց միաժամանակ հասկացնել էր տալիս փաշային, որ անհրաժեշտության դեպքում կպատժի Երևանի խանին[62]։

Այնուհանդերձ, Երևանի Մամադ խանը շարունակում էր իր հակաթուրքական գործողությունները։ Որոշ ժամանակ այս դեպքերից անց, 1802 թվականի մայիսին, խանական զորքերը նորից շարժվեցին դեպի Փամբակի և Կարսի փաշայության սահմանները։ Տեղեկություն ստանալով այդ մասին, Կ. Ֆ. Կնորինգը կարգադրեց գնդապետ Կարյագինին՝ մոտենալ Շորագյալի սահմաններին և դիմագրավել պարսկական զորքերի հարձակումը։ Միաժամանակ նա կապվեց Կարսի Մահմեդ փաշայի հետ, խնդրելով նրան միավորել իր զինական ուժերը Կարյագինի զորաջոկատի հետ և «համատեղ պարտության մատնել գոռոզացած հակառակորդին»[63]։

Մայիսի երկրորդ կեսին Կարյագինի զորաջոկատը Կարսի փաշայի զորքերի հետ երկրորդ անգամ պարտության մատնեց Երևանի խանության զորքերին։ Սակայն ռուսական հրամանատարությունը այս անգամ ևս, փակելով երևանյան զորքերի ճանապարհը դեպի Ախալցխայի փաշայության սահմանները, չէր կամենում բացահայտ պատերազմական գործողությունների մեջ խորանալ, չնայած որ Կարսի փաշան նորից ու նորից էր առաջարկում գրավել Երևանի բերդը, խոստանալով ռուսական զորքերին ապահովել բոլոր անհրաժեշտ պարենամթերքով, միայն թե ռուսական հրամանատարությունը լրացուցիչ ուժեր ուղարկեր Երևանի գրավման համար[64]։

[62] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1802 г., д. 27, лл. 66 об.—67 об.
[63] АКАК, т. I, док. 1037; ЦГИА Груз. ССР, ф. 2, 1802 г., д. 22, л. 55—55 об.
[64] «Присоединение...», т. I, док. 60, 64, 65, 69, 70, 71.

Երևանի բերդը գրավելու Կարսի Մահմեդ փաշայի անզուսպ ցանկությունը պատահական չէր։ Նա ձգտում էր իր ձեռքը գցել Կողբի հարուստ աղահանքերը, որոնք կազմում էին Երևանի խանի եկամուտների գլխավոր հոդվածներից մեկը։ Իսկ ինչ վերաբերում է Անդրկովկասի ռուսական իշխանություններին, ապա նրանք հետևում էին իրենց կենտրոնական կառավարության տվյալ ժամանակի քաղաքական ընթացքին, այն է՝ տարածքային ձեռքբերումներ կատարել ոչ թե զենքի ուժով, այլ խաղաղ ճանապարհով, թողնելով այն անդրկովկասյան տիրակալների կամքին։ Այդ նկատառումներով էլ նրանք պատերազմական գործողություններ չէին ծավալում Երևանի խանության դեմ։ Մյուս կողմից, նրանք համոզում էին Կարսի փաշային՝ ձեռնպահ մնալ Երևանի խանի հետ հաշտվելուց, հաշտություն չկնքել, որպեսզի դրանով իսկ դյուրացնեն և արագացնեն Երևանի ռուսական հովանավորության ընդունումը[65]։

Բայց իրերի նման դրությունը երկար չէր կարող տևել։ Գեներալ Պ. Դ. Ցիցիանովի Վրաստանում գլխավոր հրամանատար նշանակվելը, կայսրության սահմանները հարավում մինչև Արաքս և Կուր գետերը, արևմուտքում մինչև Սև ծով ընդարձակելու հրամայական անհրաժեշտությունը ենթադրում էին, անկասկած, որ վաղ թե ուշ հարկ կլինի ընդհարվել ոչ միայն Պարսկաստանի, այլև ժամանակավոր դաշնակցի՝ Թուրքիայի հետ։ Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ ռուսական տիրույթների ընդլայնումը չէր կարող չհրահրել Թուրքիայի հակագործությունը, առավել ևս, որ Սև ծովի առափնյա շրջանները գտնվում էին նրա տիրապետության տակ։ Այդ հանգամանքն անհանգստացնում էր Ցիցիանովին, ինչու և նա կանցլեր Վորոնցովից խնդրում էր կարգադրություններ Անդրկովկասում հետագա գործողությունների համար[66]։ Դա առաջին հերթին կապված էր Կարսի փաշայի և անդրկովկասյան սահմանամերձ թուրքական այլ կառավարիչների այն փորձերի հետ, որ նրանք իրր թե փնտրում են ռուսական հովանին։ Բայց փաստերը ցույց են տալիս, որ սահմանակից թուրքական կառավարիչները անկեղծ չէին իրենց գործողությունների մեջ։ Դա առանձնապես պարզ դարձավ այն բանից հետո, երբ Կարսի փաշան աջակցություն ցույց չտվեց իրեն օգնության եկած ռուսական զորաջոկատին, որը գործում էր Երևանի խանի զորքերի դեմ։ Դրա հետևանքով ռուսական զորաջոկատը ջարդվեց և երեսուն մարդ սպանվեց[67]։

Կարսի փաշայի դրսևորած այդ ուխտադրուժ վարքագծից հետո գեներալ Ցիցիանովը առաջարկեց առաջինին՝ բաց թողնել նրա տիրույթներում գտնվող Մելիք Ջումշուդի գյուղացիներին, նաև Փամբակի գավառի բնակիչներին, սակայն, դիմելով ամեն տեսակ խորամանկությունների, Կարսի Մահմադ փաշան փաստորեն մերժեց ռուսական գլխավոր հրամանատարի պահանջը, դրանով մի ավելորդ անգամ ապացուցելով, որ անկեղծ չի եղել ոչ իր խոսքերի և ոչ էլ գործերի մեջ[68]։

Անդրկովկասի ռուսական հրամանատարության և Կարսի փաշայի միջև հարաբերությունների հետագա վատթարացում տեղի ունեցավ այն բանից հետո, երբ ռուսական զորքերը գրավեցին Շորագյալի սուլթանությունը։ Այդ ակտը բացասական հետևանքներ ունեցավ Կարսի փաշայության համար։ Դրանից քիչ առաջ տեղի ունեցած ռուսական զորքերի առաջին արշավանքը դեպի Երևան և Անդրկովկասում ռուսական զորքերի թվաքանակի ավելացումը թելադրում էին Կարսի փաշային, որ ռուսները մտադիր են գրավել Երևանի խանությունը առանց իր օգնության, հետևաբար, Երևանի գրավումից ինքը ոչ մի օգուտ քաղել չի կարող։ Շորագյալի սուլթանության գրավումը առավել ևս անհանգստացրեց նրան, քանի որ դրանով խզվում էր ճանապարհային հաղորդակցությունը Պարսկաստանի հետ, դժվարանում էր հացի արտահանությունը Պարսկաստան, իսկ դա լուրջ վնաս էր հասցնում փաշայության տնտեսական շահերին[69]։

1806 թ. աշնանը Կարսի փաշան մեկ նոր փորձ ևս կատարեց հակելու ռուսական հրամանատարությանը համատեղ ռազմական գործողությունների Երևանի խանության դեմ։ Նրա նպատակն էր ձեռք գցել Կողբի աղահանքերը։ Բայց ռուսական իշխանությունները ոչ մի կերպ չէին կարող համաձայնություն տալ դրան, քանի որ Վրաստանը աղով ապահովում էին հենց Կողբի աղահանքերը, հետևաբար նրանք ամենևին էլ մտադիր չէին դրանք զիջել Թուրքիային[70]։

Ինչպես արդեն ասվեց վերևում, 1806 թ. գարնանը պարսկական զոր-

---

[65] Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 2, д. 28, лл. 194—194 об., 107—107 об.; д. 27, л. 75—75 об.; АКАК, т II, док. 1046.

[66] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1803 г., д. 42, л. 132—132 об.

[67] АКАК, т. II, док. 1856, 1858 ЦГИА Груз. ССР, ф. 2, 1803 г., д. 58, лл. 316 об.—317 об.

[68] ЦГИА Груз. ССР, ф. 2, д. 58, л. 220—220 об.; там же, 1805 г., д. 89, л. 243—243 об.

[69] АКАК, т. III, док. 779; ЦГВИА, ф. ВУА, 1806 г., д. 4259, ч. IV, лл. 221—222 об.

[70] ЦГВИА, ф. ВУА, 1806 г., д. 4259, ч. IV, лл. 147—152.

քերը հարձակում ձեռնարկեցին Ռուսաստանի անդրկովկասյան սահմանների վրա։ Միաժամանակ ընդհարումներ տեղի ունեցան պարսիկների և թուրքերի միջև Միջագետքում, որտեղ Բաղդադի Յուսուֆ փաշան պարտության մատնեց Աբբաս Միրզային։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն Կոնստանդնուպոլսում ռուսական ռեզիդենտ Ա. Յա. Իտալինսկու հաղորդած տեղեկությունների, Թուրքիայի հետ խզումը անխուսափելի էր դառնում, ինչպես նաև ի նկատի ունենալով Երևանի խանության քաղաքականապես երերուն կացությունը, գեներալ Պ. Դ. Նեսվետաևը դիմեց Կովկասյան գծի զորքերի հրամանատար գեներալ Գլազենապին և խնդրեց զորական համալրում տալ Երևանի խանությունը գրավելու համար։ Իր սույն առաջարկությունը Նեսվետաևը հիմնավորում էր նաև այն պատճառաբանությամբ, որ թուրքերը նույնպես մտադիր են տիրանալ Երևանի խանությանը[71]։

Բաղդադի սահմանագծում թուրքերի հետ ունեցած ընդհարումը, սակայն, արգելք չհանդիսացավ, որպեսզի Թուրքիայի Ռուսաստանի հետ ունեցած խզումից և պատերազմական գործողությունների մեջ մտնելուց հետո Աբբաս Միրզան Կովկասյան ճակատում թուրքական զորքերի հրամանատար Էրզրումի սերասքյար Յուսուֆ փաշայի հետ դուրս գա Անդրկովկասում գտնվող ռուսական փոքրաթիվ կորպուսի դեմ։ Արդեն 1807 թվականի գարնանը սերասքյար Յուսուֆ փաշան, ավելացնելով թուրքական զորքերի թվաքանակը Շորագյալի սահմանների վրա, սպասում էր պարսկական զորքերի ժամանումին, որպեսզի միավորվի նրանց հետ և համատեղ ռազմական գործողություններ սկսի։ Երևանի նոր սարդար Հյուսեին-Ղուլի խանը ևս առաջարկում էր Յուսուֆ փաշային միանալ և կոտորել Վրաստանում գտնվող բոլոր ռուսներին։ Փոխարենը, իբրև պարգև, նա խոստանում էր Յուսուֆ փաշային զիջել Շորագյալի սուլթանությունը։ Այդ մտադրությունների կենսագործման համար գահաժառանգ Աբբաս Միրզան և արքայորդի Ալեքսանդրը 1807 թ. հունիսին պետք է մեծ զորաբանակով ժամանեին Երևան[72]։

Թուրքական և պարսկական զորաբանակների միավորումը կարող էր լուրջ վտանգ ստեղծել Շորագյալի սուլթանությունում գտնվող Նեսվետաևի ռուսական փոքրաթիվ զորաջոկատի համար։ Այդ պատճառով 1807 թվականի մայիսի 30-ին, դիմելով Վրաստանի նոր գլխավոր հրամանատար Ի. Վ. Գուդովիչին, Նեսվետաևը համալրում էր խնդրում նրանից[73]։ Մինչ Գուդովիչը օգնության կհասներ նրան գործող կորպուսով,

[71] Տե՛ս նույն տեղում։

[72] Նույն տեղում, մաս 3, թթ. 103—104։

[73] Նույն տեղում, թ. 105—105բ։

Նեսվետաևը Գյումրիի (Շիրակավան—Վ. Դ.) տակ երկիցս ջարդեց թուրքական զորքերին։ Գուդովիչի ժամանումից հետո, 1807 թվականի հունիսի 18-ին տեղի ունեցած Արփաչայի ճակատամարտում թուրքական զորքերը գլխովին ջախջախվեցին և ետ շպրտվեցին։ Դրանով իսկ վերացվեց թուրքական և պարսկական զորքերի միավորման սպառնալիքը, որը արտակարգ կերպով կարող էր բարդացնել ռուսական զորքերի դրությունը Անդրկովկասում։ Թուրքական զորքերի ջախջախումից հետո հիշյալ վտանգը առժամանակ դադարում էր իրական լինելուց[74]։

Չնայած Պարսկաստանի հետ շարունակվող պատերազմին, ռուսական կառավարությունը այն կարծիքին էր, որ պետք է խաղաղ հարաբերություններ հաստատել Պարսկաստանի հետ, որպեսզի հնարավոր լինի «բոլոր ուժերը նետել թուրքական մարզերի վրա, որոնք գտնվում են Վրաստանի հարևանությամբ» և զենքի ուժով կամ կամովին դրանք ռուսական հովանավորության տակ դնել[75]։ Իսկ Պարսկաստանին դեպի հաշտություն հակելու համար ռուսական կառավարությունը խոստանում էր Բաբա խանին ճանաչել պարսից շահ, քանի որ մինչ այդ նրան ուզուրպատոր էր համարում և մերժում էր շահ ճանաչել[76]։ Ավելին, Գուդովիչը հավաստիացնում էր Ֆաթհ Ալի շահին, որ հաշտության դեպքում Ռուսաստանը կօգնի նրան Թուրքիայի դեմ պայքարում, և, եթե նա համաձայնվի Ռուսաստանի հետ սահմանագիծը անցկացնել Արաքս գետով, ապա փոխարենը կստանա թուրքական Հայաստանի հողերից Բայազեդը, Կարսը և Էրզրումը[77]։ Սակայն այդ բավականաչափ հրապուրիչ առաջարկները ուշադրության չարժանացան պարսկական կառավարության կողմից։

Պարսկական կառավարությունը ամենևին էլ մտադիր չէր հրաժարվել ամբողջ Անդրկովկասի վրա իր իշխանությունը հաստատելու գաղափարից։ Նման անհաշտ դիրքավորման այդ ժամանակ նրան մղում էր Ֆրանսիան։ 1806 թվականի մայիսին էժենի Բոհարնեին Նապոլեոնը գրում էր. «Իմ քաղաքականության նպատակն է եռյակ դաշինք հաստատելը իմ, Բ. դռան և Պարսկաստանի միջև՝ անուղղակիորեն ուղղված Ռուսաստանի դեմ»[78]։ Անգլիան ևս առհասարակ շահագրգռված էր կասեցնելու ռուսական ծավալումը Անդրկովկասում։ Այդ զույգ գաղութային տերությունները ուժ ու միջոցներ չէին խնայում, որպեսզի մեկընդմիշտ

[74] «Присоединение...», т. I, док. 363, 364, 367.

[75] АКАК, т. III, док. 923.

[76] Նույն տեղում, վավ. 821։

[77] Фадеев А. В., Նշվ. աշխատ., էջ 137։

[78] A. Sorel, L'Europe et la revolution, VII, p. 53—54.

վերջակետ դնեին Արևելքում Ռուսաստանի ցուցաբերած հավակնություններին[79]։

Այս ժամանակաշրջանում ֆրանսիական, իսկ հետո նաև անգլիական դիվանագիտությունը ջանում էին հասնել այն բանին, որպեսզի Պարսկաստանը և Թուրքիան համատեղ հանդես գան Ռուսաստանի դեմ[80]։ Երբ 1808 թվականին Պարսկաստան ժամանեց անգլիական դեսպանությունը, ֆելդմարշալ Գուդովիչը տագնապով գրում էր. «Անկասկած նրա նպատակներից է լինելու Բաբա-խանին Ռուսաստանի համար վնասակար մտքեր ներշնչելը, որպեսզի նրան հետագա թշնամանքի հրահրի Ռուսաստանի նկատմամբ և դրդի շարունակել ռազմական ձեռնարկումները Վրաստանի դեմ»[81]։

Անգլիան և Ֆրանսիան միաձուլ էին ռուսներին Անդրկովկասից վտարելու մտադրության մեջ, քանի որ նրանք ուզում էին ազատվել մի նոր և վտանգավոր հակառակորդից։ Բայց միևնույն ժամանակ նրանք թշնամաբար էին տրամադրված նաև միմյանց նկատմամբ, որովհետև նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր իր մենոպոլ տիրապետությունը հաստատել Մերձավոր ու Միջին Արևելքում և Հնդկաստանում։ Մասնավորապես Ֆրանսիան այդ տարիներին ցանկանում էր պարսկական Բենդեր-Աբբաս (Շահ Բենդեր) նավահանգիստը պլացդարմ դարձնել՝ իրագործելու համար Հնդկաստան արշավելու իր պլանները։ «Դրա համար էլ» Պարսկաստանում գործող ֆրանսիական էմիսարները «պահանջում են Բաբա խանից մի քանի հազարանոց հեծելազոր, իրենց ծախսով, որոնք նրանց զորքերի հետ պետք է գնան Հնդկաստանի վրա։ Պահանջում են նաև ազատ անցում Պարսկաստանից Հնդկաստան և ճանապարհին բոլոր անհրաժեշտ մթերքների մատակարարում»։ Միևնույն ժամանակ անգլիական դեսպանը «ամեն կերպ ջանում է նրանց այդ բանից ետ պահել և խոստանում է այն ամենը, ինչ որ նրանք կամենան, միայն թե դադարեցնեն բոլոր կապերն ու բարեկամությունը ֆրանսիացիների հետ»[82]։

---

[79] Մենք Իրանի և Թուրքիայի նկատմամբ Անգլիայի ու Ֆրանսիայի վարած քաղաքականության վրա հանգամանորեն կանգ չենք առնում, որովհետև այդ հարցերը բավականաչափ լուսաբանվել են մեր պատմագրության մեջ (տե՛ս **Иоаннисян А. Р.**, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Е., 1958, **Григорян З. Т.**, Борьба Англии и Франции против освобождения Армении из-под ирано-турецкого ига, «Вопросы истории», 1952. № 3 և այլն)։

[80] ЦГИА СССР, ф. 1409, оп. I, д. 508, лл. 2—22.

[81] АКАК, т. III, док. 826.

[82] АКАК, т. III, док. 829.

Անգլիայի և Ֆրանսիայի նման եսակենտրոն քաղաքականությունը հակասում էր Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարին, որովհետև «միայն Ռուսաստանն էր ի վիճակի կանխելու իրանական տիրապետության վերականգնումը Անդրկովկասում և կասեցնելու Թուրքիայի ագրեսիվ պլանները Կովկասի նկատմամբ։ Դրա համար էլ հենց դեպի Ռուսաստան էին դարձնում իրենց հայացքները ոչ միայն Անդրկովկասի ժողովրդական լայն զանգվածները, որոնք ի դեմս ռուսների տեսնում էին իրենց փրկարարներին, այլև տիրող դասակարգերի ներկայացուցիչները և տեղական կառավարիչները, որոնց մեծ մասը նույնպես գերադասում էր Ռուսաստանի իշխանությունը իրանա-թուրքական տիրակալությունից»[83]։

Այդ երկու մեծ տերությունների այդօրինակ դիրքավորումը ավելի ևս էր մղում Պարսկաստանին համառելու իր նպատակադրումների կենսագործման մեջ։ Իրերի նման դրության պայմաններում շահական կառավարությունը մերժեց հաշտություն կնքելու մասին ռուսական հրամանատարության առաջարկը և 1808 թվականի գարնանը վերսկսեց ռազմական գործողությունները։ Մարտ ամսին Աբբաս Միրզան եկավ Նախիջևան, որտեղից մտադիր էր մեկնել Երևան[84]։

Տեսնելով, որ հաշտության բանակցությունները փակուղի են մտել, ֆելդմարշալ Ի. Վ. Գուդովիչը որոշեց անցնել վճռական գործողությունների, գրավել Երևանի ու Նախիջևանի խանությունները, միացնել դրանք Ռուսաստանին և մեկընդմիշտ վերջ տալ Պարսկաստանի հավակնություններին Անդրկովկասում։ 1808 թ. սեպտեմբերին ռուսական զորքերը ձեռնարկեցին իրենց երկրորդ երևանյան արշավանքը և պաշարեցին Երևանի բերդը[85]։ Սակայն Գուդովիչը թույլ տվեց այն նույն սխալները, ինչ որ ժամանակին կատարել էր Ցիցիանովը. փոխանակ կազմակերպելու բերդի վճռական գրոհը, նա անպտուղ և երկարատև բանակցություններ վարեց, որպեսզի բերդը կամովին հանձնեն իրեն[86]։

Վերահաս ցրտերը, երկար ու ձիգ ճանապարհները, որոնք դժվարացնում էին պարենամթերքի ժամանակին մատակարարումը, Հասան խանի գլխավորությամբ պաշարվածների համառ դիմադրությունը, ծանր պաշարող հրետանու բացակայությունը անհնարին դարձրեցին բերդի գրավումը։ 1808 թ. նոյեմբերի 21-ին Գուդովիչը վերջին անգամ առա-

---

[83] **Иоаннисян А. Р.**, նշվ. աշխատ., էջ 15։

[84] ЦГВИА, ф. ВУА, 1808 г., д. 4259, ч. 5, лл. 19—21.

[85] АКАК, т. III, док. 453 и 878.

[86] «Присоединение...», т. I, с. 18.

ջարկեց Հասան խանին հանձնել բերդը, բայց վերջինս մերժողական պատասխան տվեց[87]։ Մի վերջին անհաջող փորձ կատարելով՝ գրոհով վերցնելու ամրոցը, ռուսական զորքերը ստիպված եղան նահանջել և դուրս գալ Երևանի ու Նախիջևանի խանությունների սահմաններից։

Չնայած Ռուսաստանի հետ ունեցած «դաշինքին», ֆրանսիական Կառավարությունը ոչ միայն շարունակում էր Պարսկաստանին Ռուսաստանի դեմ գրգռել, այլև էական ռազմական օգնություն էր ցույց տալիս պարսկական բանակին։ Ֆրանսիական ռազմական հրահանգիչները վարժեցնում էին պարսկական բանակի զինվորներին, ռազմական մասնագետ-ինժեներները ամրացրել էին Երևանի բերդը և կազմակերպել նրա պաշտպանությունը։ Դրա համար էր 1808 թ. հոկտեմբեր ամսին Գուդովիչը դառնությամբ հայտնում իր կառավարությանը. «Պարսկաստանում ֆրանսիական միսիան, չնայած մեզ հետ ունեցած բարեկամական դաշինքին, այժմ ավելի է վնասում Պարսկաստանում իմ գործերին, քան նախկինում Ֆրանսիայի հետ պատերազմի ժամանակ»[88]։

1809 թ. հունիսին պարսկական կառավարությունը կրկին վերսկսեց պատերազմական գործողությունները Ռուսաստանի դեմ։ 15 հազարանոց պարսկական բանակը Մահմեդ Ալի Միրզայի գլխավորությամբ հարձակում գործեց Փամբակի, Բորչալուի և Շորագյալի պրովինցիաների վրա։ Բայց այդ հարձակումը կասեցվեց։ Այդ նույն ժամանակ Աբբաս Միրզան շարժվեց Ելիզավետպոլի ուղղությամբ, բայց այստեղ հանդիպելով նոր գլխավոր հրամանատար Տորմասովին, նահանջեց դեպի Երևան։

Պարսկական զորքերի, որոնց հիմնական մասը կազմում էր թեթև հեծելազորը, անսպասելի հարձակումները տարբեր վայրերում անասելի դժվարացնում էին ռուսական բանակի գործողությունները։ Վերջինիս համար խիստ դժվար էր Անդրկովկասի պայմաններում պաշտպանողական պատերազմ մղելը, որի համար էլ ռուսական հրամանատարությունը ջանում էր զինադադար կնքել և բանակցությունների միջոցով խաղաղություն հաստատել երկու երկրների միջև[89]։

1810 թվականի ապրիլի 20-ից, 17 օր անընդհատ, Ասկարանում բանակցություններ էին տեղի ունենում Տորմասովի և Պարսկաստանի ներկայացուցիչ Միրզա-Բեզյուրգի միջև։ Սակայն դրանք ոչ մի արդյունք չտվեցին անգլիական դեսպանի միջամտության հետևանքով[90]։

[87] ЦГВИА, ф. ВУА, 1808 г., д. 4265, лл. 34—35.

[88] АКАК, т. III, док. 878.

[89] ЦГВИА, ф. ВУА, 1810 г., д. 6183, лл. 19—21 об.; там же, 1809 г., д. 4267, лл. 1—8 об.; АКАК, т. IV, док. 1075.

[90] Նույն տեղում, 1810 թ., գ. 6186, թթ. 19—24։

Այն բանից հետո, երբ ընդհատվեցին Ասկարանում տարվող բանակցությունները, պարսկական զորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Մեղրին և Գյունեյը, բայց նրանց հաջողությունները ժամանակավոր էին։ 1810 թվականի հունիսի 14-ին գնդապետ Կոտլյարևսկու զորաջոկատը տեղի հայերի աջակցությամբ ջարդեց պարսիկներին և նրանց վտարեց Մեղրուց և Գյունեյից[91]։

1810 թվականի պատերազմական գործողությունները պարսկական զորքերին ոչ մի հաջողություն չբերեցին։ Բայց պարսկական կառավարությունը դեռևս ձեռք չէր քաշում ռուսներին Անդրկովկասից վտարելու և այստեղ իր իշխանությունը վերահաստատելու մտքից։ Թուրքական կառավարությունն էլ ձեռնածալ չէր նստել։ Նա Մերձկասպյան խանություններ և Դաղստան էր ուղարկում իր գործակալներին, որոնք տարածում էին անհավատների դեմ «սրբազան» պատերազմի և ռուսներին Կովկասից վտարելու կոչող սուլթանական ֆերմաններ։ Ովքեր որ ելնեին «սրբազան» պատերազմի՝ կվարձատրվեին այս և հանդերձյալ կյանքում։ Միաժամանակ Թեհրան ժամանեց սուլթանական մի դեսպանություն, շահին բերելով թանկարժեք ընծաներ՝ ի հաստատումն Ռուսաստանի դեմ պայքարում երկու տերությունների դաշինքի։ Սուլթանական Թուրքիայի նախաձեռնությունը լիակատար ըմբռնում գտավ շահական կառավարության կողմից, որը վերսկսեց վճռական գործողությունների նախապատրաստություններ ընդդեմ Ռուսաստանի։ Շահական գործակալները ևս ռուսական հպատակություն ընդունած խաներին դրդում էին ապստամբության։ Գործուն նախապատրաստություններ էին տեսնվում նաև սահմանակից թուրքական փաշայություններում՝ Կարսում, Էրզրումում և Ախալցխայում[92]։

Համատեղ ելույթ նախապատրաստելու նպատակով Երևանի սարդար Հյուսեին-Ղուլի խանը և Էրզրումի սերասքյարը պայմանավորվել էին 1811 թվականի օգոստոսի 30-ին հանդիպել Մաղազբերդ ամրոցի մոտ, Ախուրյան գետի ափին։ Սակայն չնախատեսված մի դեպք՝ վարձու մարդասպանի ձեռքով Էրզրումի սերասքյարի վիրավորվելը, ձախողեց նրա պլանները[93]։ Դրա հետևանքով թուրքական բանակը ցանուցիր եղավ, իսկ Երևանի սարդարը նահանջեց Սև ջրի (Մեծամորի—Վ. Դ.) ափ, որտեղ գտնվում էր նրա զորքերի ամառային ճամբարը։

Հետագա պատերազմական գործողությունները պարզորոշ ցույց

[91] Նույն տեղում, թթ. 44—47բ։

[92] ЦГВИА, ф. ВУА, д. 6192, лл. 96—102; д. 2875, ч. 3, лл. 161—176 об.

[93] Նույն տեղում, թ. 165։

ջարկեց Հասան խանին հանձնել բերդը, բայց վերջինս մերժողական պատասխան տվեց[87]։ Մի վերջին անհաջող փորձ կատարելով՝ գրոհով վերցնելու ամրոցը, ռուսական զորքերը ստիպված եղան նահանջել և դուրս գալ Երևանի ու Նախիջևանի խանությունների սահմաններից։

Չնայած Ռուսաստանի հետ ունեցած «դաշինքին», ֆրանսիական Կառավարությունը ոչ միայն շարունակում էր Պարսկաստանին Ռուսաստանի դեմ գրգռել, այլև էական ռազմական օգնություն էր ցույց տալիս պարսկական բանակին։ Ֆրանսիական ռազմական հրահանգիչները վարժեցնում էին պարսկական բանակի զինվորներին, ռազմական մասնագետ-ինժեներները ամրացրել էին Երևանի բերդը և կազմակերպել նրա պաշտպանությունը։ Դրա համար էր 1808 թ. հոկտեմբեր ամսին Դուդվիչը դառնությամբ հայտնում իր կառավարությանը. «Պարսկաստանում ֆրանսիական միսիան, չնայած մեզ հետ ունեցած բարեկամական դաշինքին, այժմ ավելի է վնասում Պարսկաստանում իմ գործերին, քան նախկինում Ֆրանսիայի հետ պատերազմի ժամանակ»[88]։

1809 թ. հունիսին պարսկական կառավարությունը կրկին վերսկսեց պատերազմական գործողությունները Ռուսաստանի դեմ։ 15 հազարանոց պարսկական բանակը Մահմեդ Ալի Միրզայի գլխավորությամբ հարձակում գործեց Փամբակի, Բորչալուի և Շորագյալի պրովինցիաների վրա։ Բայց այդ հարձակումը կասեցվեց։ Այդ նույն ժամանակ Աբբաս Միրզան շարժվեց Ելիզավետպոլի ուղղությամբ, բայց այստեղ հանդիպելով նոր գլխավոր հրամանատար Տորմասովին, նահանջեց դեպի Երևան։

Պարսկական զորքերի, որոնց հիմնական մասը կազմում էր թեթև հեծելազորը, անսպասելի հարձակումները տարբեր վայրերում անասելի դժվարացնում էին ռուսական բանակի գործողությունները։ Վերջինիս համար խիստ դժվար էր Անդրկովկասի պայմաններում պաշտպանողական պատերազմ մղելը, որի համար էլ ռուսական հրամանատարությունը ջանում էր զինադադար կնքել և բանակցությունների միջոցով խաղաղություն հաստատել երկու երկրների միջև[89]։

1810 թվականի ապրիլի 20-ից, 17 օր անընդհատ, Ասկարանում բանակցություններ էին տեղի ունենում Տորմասովի և Պարսկաստանի ներկայացուցիչ Միրզա-Բեզյուրգի միջև։ Սակայն դրանք ոչ մի արդյունք չտվեցին անգլիական դեսպանի միջամտության հետևանքով[90]։

[87] ЦГВИА, ф. ВУА, 1808 г., д. 4265, лл. 34—35.

[88] АКАК, т. III, док. 878.

[89] ЦГВИА, ф. ВУА, 1810 г., д. 6183, лл. 19—21 об.; там же, 1809 г., д. 4267, лл. 1—8 об.; АКАК, т. IV, док. 1075.

[90] Նույն տեղում, 1810 թ., գ. 6186, թթ. 19—24։

Այն բանից հետո, երբ ընդհատվեցին Ասկարանում տարվող բանակցությունները, պարսկական զորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Մեղրին և Գյունեյը, բայց նրանց հաջողությունները ժամանակավոր էին։ 1810 թվականի հունիսի 14-ին գնդապետ Կոտլյարևսկու զորաջոկատը տեղի հայերի աջակցությամբ ջարդեց պարսիկներին և նրանց վտարեց Մեղրուց և Գյունեյից[91]։

1810 թվականի պատերազմական գործողությունները պարսկական զորքերին ոչ մի հաջողություն չբերեցին։ Բայց պարսկական կառավարությունը դեռևս ձեռք չէր քաշում ռուսներին Անդրկովկասից վտարելու և այստեղ իր իշխանությունը վերահաստատելու մտքից։ Թուրքական կառավարությունն էլ ձեռնածալ չէր նստել։ Նա Մերձկասպյան խանություններ և Դաղստան էր ուղարկում իր գործակալներին, որոնք տարածում էին անհավատների դեմ «սրբազան» պատերազմի և ռուսներին Կովկասից վտարելու կոչող սուլթանական ֆերմաններ։ Ովքեր որ ելնեին «սրբազան» պատերազմի՝ կվարձատրվեին այս և հանդերձյալ կյանքում։ Միաժամանակ Թեհրան ժամանեց սուլթանական մի դեսպանություն, շահին բերելով թանկարժեք ընծաներ՝ ի հաստատումն Ռուսաստանի դեմ պայքարում երկու տերությունների դաշինքի։ Սուլթանական Թուրքիայի նախաձեռնությունը լիակատար ըմբռնում գտավ շահական կառավարության կողմից, որը վերսկսեց վճռական գործողությունների նախապատրաստություններ ընդդեմ Ռուսաստանի։ Շահական գործակալները ևս ռուսական հպատակություն ընդունած խաներին դրդում էին ապստամբության։ Գործուն նախապատրաստություններ էին տեսնվում նաև սահմանակից թուրքական փաշայություններում՝ Կարսում, Էրզրումում և Ախալցխայում[92]։

Համատեղ ելույթ նախապատրաստելու նպատակով Երևանի սարդար Հյուսեին-Ղուլի խանը և Էրզրումի սերասքյարը պայմանավորվել էին 1811 թվականի օգոստոսի 30-ին հանդիպել Մաղազբերդ ամրոցի մոտ, Ախուրյան գետի ափին։ Սակայն չնախատեսված մի դեպք՝ վարձու մարդասպանի ձեռքով Էրզրումի սերասքյարի վիրավորվելը, ձախողեց նրա պլանները[93]։ Դրա հետևանքով թուրքական բանակը ցանուցիր եղավ, իսկ Երևանի սարդարը նահանջեց Սև ջրի (Մեծամորի—Վ. Դ.) ափ, որտեղ գտնվում էր նրա զորքերի ամառային ճամբարը։

Հետագա պատերազմական գործողությունները պարզորոշ ցույց

[91] Նույն տեղում, թթ. 44—47բ։

[92] ЦГВИА, ф. ВУА, д. 6192, лл. 96—102; д. 2875, ч. 3, лл. 161—176 об.

[93] Նույն տեղում, թ. 165։

տվեցին, որ շահական Պարսկաստանը չի կարող հուսալ, որ ի վիճակի կլինի կենսագործել իր ռազմաքաղաքական պլանները հատկապես այն բանից հետո, երբ Թուրքիան հաշտություն կնքեց Ռուսաստանի հետ։ Թեև Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան և Մոսկվայի գրավումը մի որոշ ժամանակ թեավորեց Աբբաս Միրզային, բայց Ասլանդուզի և Լենքորանի տակ պարսկական զորքերի ջախջախումը վերջնականապես ցրեց նրա պատրանքները։ Չնայած այն բանին, որ անգլիական կառավարությունը ռազմական ու նյութական օժանդակություն էր ցույց տալիս Պարսկաստանին և ամեն կերպ քաջալերում նրա պայքարը Ռուսաստանի դեմ, պարսկական կառավարությունն այլևս ի վիճակի չէր շարունակել առանց այդ էլ երկարաձգված պատերազմը։

1813 թ. սեպտեմբերին Վրաստանում գլխավոր հրամանատար գեներալ Ն. Ֆ. Ռտիշչևը Ղարաբաղում՝ Գյուլիստան գյուղում հանդիպեց Ֆաթհ Ալի շահի ներկայացուցիչ Միրզա Աբուլ Հասան խանի հետ և նոր բանակցություններ սկսեց՝ Պարսկաստանի հետ «մշտնջենական հաշտություն» կնքելու նպատակով։ Չնայած պարսկական լիազոր-ներկայացուցչի բոլոր խորամանկ մանևրներին և ցանկությանը՝ փոփոխություններ մտցնել երկու պետությունների սահմանաբաժան գծի մեջ հօգուտ իր պետության, 1813 թվականի հոկտեմբերի 12-ին հաշտության պայմանագիրը կնքվեց։ Պարսկաստանը ճանաչում էր Ռուսաստանի բոլոր նվաճումները Անդրկովկասում։ Ամբողջ Հյուսիսային Ադրբեջանը, Դաղստանը, Ղարաբաղը, Վրաստանը և Շորագյալը այսուհետև de jure համարվում էին ռուսական տիրույթներ։ Պարսկաստանին վերադարձվում էր միայն Մեղրին[94]։ Նախքան պայմանագրի ստորագրումը ստորագրվել էր այսպես կոչված «սեպարատ ակտ», որի համաձայն պարսկական կողմին հնարավորություն էր տրվում դիմել ռուսական կայսրին՝ սահմանները փոփոխելու խնդրանքով։ Ինչպես կտեսնենք, հետագայում «սեպարատ ակտը» դիվանագիտական բավական մեծ անախորժությունների տեղիք տվեց, մանավանդ որ սահմանաբաժան գիծը պայմանագրում ճշտությամբ և մանրամասն նշված չէր։

Ավարտվեց երկարամյա պատերազմը երկու պետությունների միջև, որի հետևանքով Ռուսաստանը ամրապնդվեց Անդրկովկասում։ Պատերազմը կողմերից ոչ մեկին ռազմաքաղաքական ծրագրերի կենսագործում չապահովեց։ Ուստի, թեև Գյուլիստանի հաշտությունը համարվում էր «մշտնջենական», չէր կարող բավարարել կողմերից և ոչ մեկին։ Պարսկաստանը, որ քաղաքական զենք և փաստական զոհ էր դարձել անգլիա-

[94] АКАК, т. V, док. 883.

կան ու ֆրանսիական դիվանագիտության ձեռքին Մերձավոր և Միջին Արևելքում, չէր կարողանում հաշտվել Անդրկովկասի իր երբեմնի տիրույթների կորստյան հետ։ Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա ինքնամյա պատերազմը նրան լիակատար հաջողություն չբերեց, քանի որ չկենսագործված մնաց մինչև Արաքս և Կուր սահմաններն ընդլայնելու ռազմաքաղաքական ծրագիրը, որը թույլ կտար նրան լավագույնս ապահովելու իր նոր տիրույթների պաշտպանությունը, ինչպես նաև հնարավորություն կընձեռեր առավել գործուն պայքարել Պարսկաստանի վրա Անգլիայի հետզհետե ուժեղացող ազդեցության դեմ։ «Մշտնջենական հաշտությունը» փաստորեն երկարատև զինադադար դուրս եկավ՝ հղի նոր պատերազմի վտանգով։

Ռուսաստանի կողմից Գյուլիստանի հաշտության պայմանագիրը ստորագրած Կովկասի կառավարչապետ Ն. Ֆ. Ռտիշչևը մեծ նշանակություն չէր տալիս «սեպարատ ակտին», որովհետև համոզված էր, որ ռուսական կառավարությունը սահմանների հարցում ոչ մի էական զիջում չի կատարի։ Ինչ վերաբերում է պարսկական կողմին և նրա թիկունքում կանգնած անգլիացիներին, ապա նրանք բոլորովին հակառակ կարծիքի էին։ «Սեպարատ ակտը» նրանք դիտում էին իբրև մի լծակ, որի օգնությամբ հույս ունեին վերանայել տալ Գյուլիստանի պայմանագիրն ամբողջությամբ վերցրած։ Արդեն 1814 թվականի օգոստոսի 28-ին Պարսկաստանում անգլիական դեսպանորդ Հոր-Աուզլին դիմեց Ալեքսանդր 1-ին Գյուլիստանի պայմանագրի կապակցությամբ և առանց այլևայլության հայտարարեց, որ Պարսկաստանը նրանից լուրջ զիջումներ է սպասում և դրանք ավելի մասնավորեց երեք օր անց ռուսական արտաքին գործերի մինիստր Նեսելրոդեին հղած գրության մեջ, այն է՝ Պարսկաստանին զիջել Ղարաբաղի և Թալիշի խանությունները[95]։

Այդ նույն նպատակով էր արդեն, որ 1814 թ. վերջերին պարսկական հատուկ դեսպանություն մեկնեց Պետերբուրգ։ Բայց դեսպանությունը հարկադրված եղավ գրեթե մեկ ամբողջ տարի սպասել Վիեննայի կոնգրեսում գտնվող Ալեքսանդր 1-ի վերադարձին, որից հետո դիմեց վերջինիս և խնդրեց Պարսկաստանին վերադարձնել Արևելյան Անդրկովկասի իր նախկին տիրույթները՝ հույս հայտնելով, որ այդքան «աննշան» խնդիրքը չի մերժվի[96]։ 1816 թվականի սկզբին պարսկական դեսպան Միրզա Աբուլ Հասան խանը ռուսական արտաքին գործերի մինիստրու-

[95] Балаян Б., Международные отношения Ирана 1813—1828 гг., Ереван. 1967, с. 19.

[96] «Военный сборник», 1882 г., т. 2, с. 213.

թյանը ներկայացրեց պաշտոնական հուշագիր, որով արդեն հարց էր արծարծվում հիմնովին վերանայելու Գյուլիստանի պայմանագիրը, քանի որ առաջարկվում էր կնքել մեկ այլ պայմանագիր, որով Պարսկաստանին էին վերադարձվելու վատագույն դեպքում Վրաստանից ու Դաղստանից բացի մնացյալ բոլոր անդրկովկասյան խանությունները, իսկ Պարսկաստանը այդ զիջման փոխարեն խոստանում էր փոխհատուցել ռազմական ծախսերը[97]։

Պարսկական դեսպան Միրզա Աբուլ Հասան խանի այս պահանջները աջակցություն էին գտնում անգլիական դիվանագետների կողմից, ովքեր միջամտելով բանակցություններին և փորձելով հանդես գալ միջնորդների դերում, ուղղակի հայտարարում էին, որ «Ռուսաստանի և Պարսկաստանի միջև բնական սահման պետք է լինի Թերեք գետը»[98]։ Սրանք արդեն այնպիսի հավակնություններ էին, որոնց ցարական կառավարությունը ոչ մի դեպքում չէր կարող ընդառաջել։

Ինչպես Գյուլիստանի պայմանագիրը վերանայելու պարսկական հավակնությունների, այնպես էլ անգլիական դիվանագիտության կողմից Պարսկաստանին այդ հարցում աջակցության հիմքում ընկած էր 1814 թվականի Թեհրանի պայմանագիրը Պարսկաստանի և Անգլիայի միջև։ Դա մի պայմանագիր էր, որը Պարսկաստանի արտաքին քաղաքական շահերն ամբողջովին ենթարկում էր Անգլիայի ցանկություններին և Պարսկաստանը փաստորեն վերածում մի գործիքի, որը անգլիական կառավարությունը հարկ եղած դեպքում կարող էր լիուլի օգտագործել Ռուսաստանի դեմ, ինչպես նաև կանխել ապագայում Հնդկաստանին հարևան այդ երկիրը իր ազդեցության տակ առնելու Ֆրանսիայի փորձերը։ Դրանում հեշտ է համոզվել, եթե ծանոթանանք Թեհրանի պայմանագրի այն հոդվածների բովանդակությանը, որոնք անմիջականորեն առնչվում են քննության ենթակա հարցերին։ Պայմանագրի առաջին իսկ հոդվածով Պարսկաստանը փաստորեն պարտավորվում էր կուրորեն հետևել անգլիական դիվանագիտության թելադրանքին, քանի որ պետք է խոկույն և եթե չեղյալ հայտարարեր այն բոլոր պայմանագրերը, որոնք կնքված էին Անգլիայի հետ թշնամական հարաբերությունների մեջ գտնվող եվրոպական երկրների հետ (հոդ. 1) և եվրոպական սպաներ չվարձել Անգլիայի հետ պատերազմող երկրներից (հոդ. 5)։ Թեհրանի պայմանագրի հակառուսական բնույթը պարզորոշ երևում էր 4-րդ և 6-րդ հոդվածներից։ 4-րդ հոդվածը հռչակում էր, որ այն դեպքում, եթե

[97] Балаян Б., նշվ. աշխատ., էջ 31։

[98] Дубровин Н., նշվ. աշխատ., հ. VI, էջ 199։

Պարսկաստանը ենթարկվեր եվրոպական որևէ մի տերության հարձակմանը, Անգլիան պետք է օգներ նրան զորքով և կամ տարեկան 200 000 թումանի վարկ վճարեր, որի ծախսումը դրվելու էր Պարսկաստանում անգլիական դեսպանի հսկողության տակ։ 6-րդ հոդվածում խոսվում էր այն մասին, որ եթե եվրոպական որևէ տերություն պատերազմի մեջ լինի Պարսկաստանի հետ (հետևաբար այդ պատերազմը կարող էր սանձազերծած լինել Պարսկաստանն ինքը), իսկ Անգլիայի հետ խաղաղ հարաբերությունների մեջ գտնվի, անգլիական թագավորը պետք է ջանա դադարեցնել տալ պատերազմը, իսկ անհրաժեշտության դեպքում 4-րդ հոդվածում նախատեսված հիմունքներով օգնություն ցույց տա Պարսկաստանին։ Այսպիսով, եթե 4-րդ հոդվածը կարծեք թե դժվարացնում էր Պարսկաստանի ռևանշիստական ձգտումների կենսագործումը, 6-րդ հոդվածը վերացնում էր այդ արգելքը, Անգլիային հնարավորություն ընձեռելով իր համար նպաստավոր պահին հրահրելու Պարսկաստանին Ռուսաստանի դեմ, որովհետև միակ եվրոպական տերությունը, որը կարող էր Պարսկաստանի համար իրական սպառնալիք ստեղծել, Ռուսաստանն էր։ Գյուլիստանի պայմանագրի վերանայման մտադրության պարզ վկայությունն էր Թեհրանի պայմանագրի 3-րդ հոդվածը, որը վերաբերում էր Ռուսաստանի և Պարսկաստանի միջև սահմանների անցկացման հարցին։ Կասկածի տակ չէր դրվում այն, որ Գյուլիստանի սահմանները ենթակա են վերանայման, ընդ որում Անգլիան պարտադրում էր իր մասնակցությունը սահմանների ծրման գործին։ Այդ կապակցությամբ շատ ճիշտ է նկատում ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը, որ «Անգլիան պետք է, հետևաբար, մասնակցեր ռուս-իրանական սահմանը, ընդ որում այդ կարելի էր երկակի մեկնաբանել. և՛ որպես Անգլիայի մասնակցություն սահմանածրմանը Գյուլիստանի պայմանագրի հիման վրա, և՛ որպես նրա մասնակցություն նոր սահմանների որոշմանը՝ այդ պայմանագրի տարածքային որոշումների վերանայման հետևանքով։ Իսկ դրանից բխում էր, որ Անգլիան միշտ կարող էր, ռուս-իրանական սահմանին համաձայն չլինելու պատրվակով, պարսիկների հարձակումը ռուսական տարածքի վրա դիտել ոչ թե իբրև ագրեսիա, այլ պաշտպանություն և այդ հիման վրա ռազմական օգնություն ցույց տալ Իրանին»[99]։ Այսպիսով, Թեհրանի կամ «վերջնական» պայմանագիրը Պարսկաստանը դնում էր Անգլիայի գերակշիռ ազդեցության տակ և, ինչպես իրավացի նկատում է պարսիկ պատմաբան Աբբաս Էքբալը, «Պարսից պատմության մեջ ամենից չարագուշակներից և վատթարագույններից

[99] Иоаннисян А. Р., նշվ. աշխատ., էջ 433։

մեկն էր, քանի որ Պարսկաստանը վերածում էր պարզ մի գործիքի Անգլիայի ձեռքին»[100]։

Այս ժամանակաշրջանում Անգլիայի վարած քաղաքականությունը Պարսկաստանի նկատմամբ խստորեն քննադատել է Կ. Մարքսը։ Այդ առնչությամբ նա գրում էր, որ Պարսկաստանում «իր տիրապետող ազդեցությունը պահպանելու համար Անգլիային միայն պետք էր խաղաղ բարյացակամ միջնորդի դեր Պարսկաստանի ու Աֆղանստանի միջև և հանդես գալ իբրև ռուսների վճռական հակառակորդ։ Ցուցադրական բարեկամություն մի կողմից և լուրջ դիմադրություն մյուս կողմից, ոչինչ ավելին չէր էլ պահանջվում»[101]։ Ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, Անգլիան հաջողությամբ կարողացավ խաղալ կեղծ բարեկամի իր դերը այնքան ժամանակ, մինչև որ սանձազերծել տվեց ռուս-պարսկական 1826—1828 թվականների պատերազմը, որը ոչ միայն շարդարացրեց Պարսկաստանի տարածքային ակնկալությունները, այլև զրկեց նրան Անդրկովկասում իր վերջին տիրույթներից։

Այս բոլորից երևում էր, որ պարսկական կառավարությունը հետևողականորեն դնում էր Գյուլիստանի պայմանագրի վերանայման հարցը և նման մեծ պահանջներ էր առաջադրում՝ թերևս գեթ փոքրագույնին հասնելու մտադրությամբ։ Բայց հանդիպելով ռուսական կառավարության մերժմանը, Աբուլ Հասան խանը ստիպված սահմանափակեց իր պահանջները «ծայրահեղ դեպքում» Թալիշի և Ղարաբաղի խանություններով։ Սակայն գաղտնիք չէ, որ ռուսական կառավարությունն ինքն էլ բավարարված չէր Գյուլիստանի պայմանագրով, քանի որ վերջինս չէր ապահովում նրան բնական այնպիսի սահմաններով, ինչպիսիք էին Արաքս և Կուր գետերը։ Եթե իր պատասխան-հուշագրում ռուսական կառավարությունը անորոշ կերպով շեշտում էր այդ պարագան, ապա 1817 թ. հոկտեմբերի 27-ին Ալեքսանդր 1-ին հղած զեկուցագրում Կովկասի նոր կառավարչապետ գեներալ Ա. Պ. Երմոլովը առանց այլևայլության հայտարարում էր, որ եթե «այժմ խաղաղությունը և բարի համաձայնությունը Պարսկաստանի հետ խիստ օգտակար է, բայց առաջին իսկ պատերազմը, որին մեզ կմղի անհրաժեշտությունը, պետք է մեզ սահման տա Արաքս գետը։ Դա է միակ միջոցը խուսափելու հետագա մեծագույն անհարմարություններից»[102]։ Այս պարագան արդեն ինքնըստինքյան ցույց է տալիս, որ երկու կողմերն էլ Գյուլիստանի պայմանագիրը

[100] Балаян Б., Նշվ. աշխատ., էջ 23։

[101] К. Маркс и Ф. Энгельс, О колониальной системе капитализма, М., 1959. с. 83.

[102] АВПР, ф. «Гл. архив», 1—7, 1816 г., д. 1, папка 2, л. 15 об.

վերանայելու մտադրություն էին փայփայում, միայն այն տարբերությամբ, որ Պարսկաստանը ջանում էր հնարավորին չափ շուտ ուղղել սահմանը հօգուտ իրեն, այն դեպքում, երբ Ռուսաստանը այդ հարցի լուծումը թողնում էր ապագային, առաջնորդվելով տվյալ ժամանակաշրջանում խաղաղությունը և բարի դրացիական հարաբերությունները պահպանելու մտայնությամբ։

Այսուհանդերձ, ռուսական կառավարությունը Միրզա Աբուլ Հասան խանին հայտնում էր, որ սահմանների վերանայման մասին վերջնական պատասխանը կտրվի այն բանից հետո, երբ Կովկասի նոր կառավարչապետ նշանակվող գեներալ Երմոլովը սահմանների դիտում կկատարի և դրանից հետո կմեկնի Իրան իբրև արտակարգ և լիազոր դեսպան։

Տեղում իրադրությանը ծանոթանալուց և սահմանների դիտում կատարելուց հետո Ա. Պ. Երմոլովը եկավ այն եզրակացության, որ դրանք գծված են «առանց իմանալու երկիրը»։ Հետևաբար մեծ ջանքեր էին հարկավոր այդ հարցը կարգավորելու համար, եթե դրան զուգընթաց ի նկատի առնենք նաև այն պարագան, որ երկու կողմերն էլ տարածքային ակնկալություններ ունեին միմյանց նկատմամբ։ Տարօրինակ էր, որ Ալեքսանդր 1-ը նույնիսկ մտածում էր, թե Ղարաբաղի և Թալիշի խանությունները զիջելով Իրանին, դրա փոխարեն կկարողանա ձեռք բերել այնպիսի առաջնահերթ կարևորություն ունեցող տարածքներ, ինչպես Երևանի և Նախիջևանի խանությունները, որոնց զիջման մասին Պարսկաստանը լսել իսկ չէր կամենա։

Պարսկաստանի հետ վիճելի հարցերը կարգավորելու նպատակով ռուսական կառավարությունը Կովկասում Ռտիշչևի փոխարեն կառավարչապետ նշանակված գեներալ Երմոլովին արտակարգ և լիազոր դեսպանի լիազորություններով ուղարկեց Պարսկաստան։ 1817 թվականի Երմոլովի դեսպանությունը Պարսկաստան, ինչպես շատ ճիշտ նկատում է Լ. Ս. Սեմյոնովը, կարևոր էտապ էր ռուս-պարսկական հարաբերություններում Գյուլիստանի և Թեհրանի պայմանագրերի կնքումից հետո[103]։ Պարսկաստանում գտնված ժամանակ Երմոլովը պարսկական կառավարության ներկայացուցիչների հետ քննարկեց երկու կողմերի համար վիճելի մի շարք հարցեր, ինչպես՝ Գյուլիստանի պայմանագրի, ռազմագերիների վերադարձի, պարսից գահաժառանգի ճանաչման, Թալիշում սահմանածրման և առհասարակ սահմանների, Թուրքիայի հետ Ռուսաս-

[103] Տե՛ս Семенов Л. С. Россия и международные отношения на Среднем Востоке в 20-ые годы XIX в., Л., 1963, с. 51—52.

տանի պատերազմի դեպքում Պարսկաստանի չեզոքության, Թավրիզում ռուսական դիվանագիտական միսիա հիմնելու և այլ հարցեր։

Բանակցություններն ըստ էության ոչնչի չհանգեցրին, որովհետև կողմերից ոչ մեկն էլ չէր ուզում զիջումների գնալ։ Պարսկական կողմը պայման էր դնում, որ գեթ մասնակիորեն վերականգնվեն նախապատերազմյան սահմանները, որպեսզի ձեռնամուխ լինեն մյուս հարցերի քննարկմանը, մինչդեռ ռուսական կողմը առաջ էր քաշում Պարսկաստանի չեզոքության հարցը հնարավոր ռուս-թուրքական ընդհարման դեպքում։ Պարսկաստանը չկարողացավ զիջումներ կորզել Ռուսաստանից սահմանների հարցում և վերջինս պահպանեց Գյուլիստանի պայմանագրով նախատեսված սահմանները։ Այդպիսով, Պարսկաստանի և նրա թիկունքում կանգնած Անգլիայի՝ սահմանները վերանայելու և Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու փորձերը ձախողվեցին։ Չնայած այն բանին, որ 1819 թ. Թավրիզում հիմնվեց ռուսական դիվանագիտական միսիա, իսկ նույն թվականի մարտի 8-ին Ալեքսանդր 1-ին կայսրը Աբբաս Միրզային ճանաչեց գահաժառանգ, այնուամենայնիվ երկու երկրների հարաբերությունները մնացին լարված։ Նման պայմաններում պարսից կառավարությունը եռանդուն նախապատրաստվում էր պատերազմի, թեև հետագայում էլ բանակցությունների միջոցով սահմանների վերանայման մի շարք փորձեր կատարվեցին։

Այդ փորձերի ժամանակ էլ պարսկական կառավարությունը շարունակում էր պնդել Ղարաբաղի և Թալիշի խանությունները վերադարձնելու պահանջի վրա և խուսափում էր Գյուլիստանի պայմանագրով նախատեսված սահմանների սահմանածրումից, իսկ 1824 թվականից սկսեց պահանջել նաև Շորագյալի մարզը, թեև այն 1805 թվականից կամովին ընդունել էր Ռուսաստանի հովանին։ Ավելին, պարսկական զորքերը գրավել էին Մեղրու շրջանի՝ Ռուսաստանին պատկանող մասը և որովհետև պարսկական կողմը հրաժարվեց իր զորքերն հանել այնտեղից, Երմոլովի կարգադրությամբ ռուսական զորքերն իրենց հերթին գրավեցին Երևանի խանությանը պատկանող Սևանա լճի հյուսիս-արևմտյան մասը։ Երմոլովի փորձերը՝ օրինականացնելու այդ փոխադարձ զավթումները, հաջողությամբ չպսակվեցին[104]։

1824 և 1825 թվականների երկու երկրների միջև կայացած բանակցությունների հիմքում կրկին ընկած էին տարածքային հարցերը։ Եթե 1824 թ. բանակցությունները ձախողվեցին Շորագյալը վերադարձնելու հարցի կապակցությամբ, ապա 1825 թվականի մարտի 28-ին Պարսկաստանի ներկայացուցիչ Ֆաթհ Ալի խանի Թիֆլիսում կնքած «Ռուսաստանի և Պարսկաստանի միջև սահմանային համաձայնեցված գծի մասին»[105] պայմանագիրը, որի հիմքում ընկած էին գեներալ Երմոլովի առաջարկները, կարծես խոստանում էր տարիներ ի վեր վիճաբանության առարկա եղած այդ հարցը լուծման հանգեցնել։ Բայց քանի որ Աբբաս Միրզան հրաժարվեց վավերացնել Թիֆլիսի պայմանագիրը, հարցի լուծումը կրկին փակուղի մտավ։

Ե՛վ 1824, և՛ 1825 թվականի բանակցությունները, նախաձեռնված Պարսկաստանի կողմից, սոսկ խաղ էին, որի նպատակն էր Անգլիայից վարկ կորզել և առավել գործուն նախապատրաստվել ապագա պատերազմին՝ վերադարձնելու համար այն տարածքները, որոնք նա կորցրել էր Գյուլիստանի պայմանագրով։ Բանակցությունների ձախողումը, հետևաբար հաճախացող զինված ասպատակությունները, որ ձեռնարկում էր Երևանի Հյուսեին Ղուլի խանը ռուսական սահմանամերձ շրջանների վրա, պարսկա-թուրքական 1821—1823 թթ. պատերազմում տարած հաղթանակի պատճառած գլխապտույտը մղում էին կաջարներին նոր պատերազմի, որը այս անգամ՝ հույս ունեին հաջողությամբ պսակել։

Հարկ է նշել, որ կառավարչապետ դառնալու սկզբնական շրջանում Երմոլովը հույս ուներ խաղաղ ճանապարհով լուծել Երևանի խանության միացման հարցը։ Դա, իհարկե, մոլորություն էր, որի հիմքում ընկած էր Արևելքին անծանոթ լինելու հանգամանքը։ Ալեքսանդր 1-ին ուղարկած 1817 թվականի ապրիլ ամսի նրա մի զեկուցագրում կարդում ենք. «Պետք է, սակայն, նախազգուշացնեմ ձերդ մեծությանը, որ եթե իմ Պարսկաստանից վերադառնալուց հետո Երևանի մարզը, պահպանելով կառավարության նկատմամբ նույն դժգոհությունը, կդիմի մեր հովանավորությանը, ես այն անպայման կընդունեմ, քանի որ ժողովուրդը հուսահատված է և հուսալքության մեջ կարող է պաշտպանություն ու փրկություն որոնել թուրքերի մոտ, իսկ նրանք լիովին կօգտվեն դրանից, բայց մեզ համար ամենևին էլ օգտակար չէ նրանց ձեռքին տեսնել մի մարզ, որը մեծապես հարուստ է, քաշում է Վրաստանից բոլոր դրամը և երջանիկ է մեծաթիվ բնակչությամբ։ Այնժամ Վրաստանում ավելի քիչ անդորր կլինի։ Ամենահպատակաբար այս խնդրո վերաբերյալ հրահանգներ եմ խնդրում, որոնք կարող կլինեմ ստանալ Թեհրանում գտնվածս ժամանակ։ Տեր իմ, բնավ այլևս նման առիթ չի լինի առանց որևէ կրակոցի տիրանալ մի մարզի, որը մեզ համար շատ դժվարին ձեռնարկումների պատճառ է դարձել, զորքերի մեծ կորուստ է խլել և որը ձեռք

[104] АКАК, т. VI, ч. 2, док. 418 и 561.

[105] «Кавказский сборник», т. XXII, с. 53—56.

բերելը այնքան անհրաժեշտ է մեզ։ Իսկ այժմ պետք է իմ միայն մեկ խոսքը»[106]։ Երմոլովի նման լավատեսության հիմքում ընկած էր այն հանգամանքը, որ Երևանի նախկին Մամադ խանի եղբայրը խույս էր տվել Վրաստան և ընդունել էր ռուսական հովանին։ Եվ այժմ նա կարծում էր, որ այդ անձնավորությունը, որը եղբոր պես առատ էր իր խոստումներում, ի վիճակի կլիներ օժանդակել «առանց որևէ կրակոցի» տեր դառնալու ռազմաստրատեգիական այնպիսի մի կարևոր պլացդարմի, որպիսին էր Երևանի խանությունը։ Բանն այն է, որ նախկին խանի եղբայրը կարողացել էր համոզել Երմոլովին, որ «Երևանի ամբողջ մարդը լիովին հավատարիմ է նրան և կարող է ժամանակի ընթացքում մեզ մեծագույն օգուտ բերել»[107]։

Ճիշտ է, Երևանի խանության բնակչությունը հեծում էր խանական ծանր լծի տակ և փրկություն էր որոնում Ռուսաստանին ապավինելու մեջ, բայց դա ամենևին չէր նշանակում, որ Մամադ խանի եղբայրն է նրան իր հետևից տանողը։ Նա ևս մեկն էր այն բազմաթիվ բախտախնդիրներից, որոնք ուզում էին պղտոր ջրում ձուկ որսալ և դիմում էին ամեն մի միջոցի, որպեսզի բարձրացնեն իրենց քաղաքական կշիռը։ Պատահական չէր, որ Ներսես Աշտարակեցին մինչև վերջ էլ կտրականապես մերժեց նրա հետ որևէ առնչություն ունենալ, որովհետև նրան այն մարդը չէր համարում, որը կարող է իսկապես ինչ որ քաղաքական դեր խաղալ։

Մենք արդեն իր տեղում տեսանք, թե որքան թյուրիմացությունների և քաղաքական թերացումների տեղիք տվեց այն ոչ հեռատես քաղաքականությունը, որ վարում էին հարևան խանությունների և փաշայությունների նկատմամբ Կովկասի ռուսական կառավարչապետները։ Երմոլովը ևս բավական տուրք տվեց կենտրոնական կառավարությունից եկող այդ քաղաքական ընթացքին, որի վկայությունն էր վերոհիշյալ փաստը։

XIX դարի առաջին քառորդի ընթացքում, հատկապես առաջին տասնամյակում, ռուսական դիվանագիտությունը սխալ մոտեցում ուներ նաև դեպի սահմանակից թուրքական փաշայությունները ունեցած վերաբերմունքի հարցում։ Դա արդյունք էր մասամբ այն բանի, որ Կովկասի ռուսական պաշտոնատար անձինք առանձին տարբերություն չէին դնում պարսկական խանությունների և թուրքական փաշայությունների միջև, չէին տեսնում նրանց առանձնահատկությունները։ Մինչդեռ պարսկական խանությունները գրեթե անկախ էին, թուրքական փաշայությունները այս կամ այն չափով ենթարկվում էին կենտրոնական կառավարությանը, թեև առանձին ձեռնարկումներում լիակատար ինքնուրույնություն էին հանդես բերում։ Պատահական չէր, որ 1817 թ. մարտի 24-ին, ծանոթանալով Անդրկովկասում և կից շրջաններում գործերի վիճակին, Երմոլովը գրում էր Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանորդ կոմս Գ. Ա. Ստրոգանովին. «Կարսի և Ախալցխայի փաշայություններում ղեկավար աստիճանավորները, և նրանցից ոչ պակաս Տրապիզոնի փաշան, իրենց արարքներով իրավունք են տալիս կասկածելու երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամության և բարի համաձայնության կապերը պահպանելու նրանց ցանկությանը, թույլ են տալիս անվերջ ասպատակել մեր հողերում, գաղանություններ են կատարում, բնակիչներին և նրանց ունեցվածքը քշում տանում են և անգամ այն աստիճանի են հասցնում իրենց հանդգնությունը, որ հարձակվում են մեր զինվորների վրա և գերի են վերցնում նրանց»[108]։ Բնական է, որ նման պայմաններում արդարացված չէր տեղական խաների ու փաշաների վրա հենվելու և նրանց օգտագործելու ռուսական կառավարության ցուցաբերած ձգտումը։ Քաղաքական նման վրիպումները սոսկ բարդացնում էին վիճակը և խանգարում ճիշտ կողմնորոշվելու տվյալ իրադրության մեջ։

XIX դարի 20-ական թվականների կեսերին, երբ հունական ապրստամբության կապակցությամբ ստեղծված իրավիճակը թելադրում էր Անգլիային՝ շեղել տալու Ռուսաստանի ուշադրությունը Արևելյան հարցից, անգլիական դիվանագիտությունը, որը մինչ այդ զսպում էր Կաջարների ռազմամոլական մոլուցքը, որովհետև նրա քաղաքական շահերն այդ էին պահանջում, սկսում է այժմ հրահրել Պարսկաստանին Ռուսաստանի դեմ պատերազմի։ Վերջինս, որ մինչ այդ էլ նախապատրաստվում էր պատերազմի, այժմ այլևս չէր թաքցնում իր մտադրությունը։ Մոլեռանդ մահմեդական հոգևորականությունը սկսում է բացահայտ «սրբազան պատերազմ» քարոզել «անհավատների» դեմ, ավելանում են ասպատակությունները Ղազախի, Շամշադինի և մյուս ուղեմասերում։

Նման պայմաններում անհրաժեշտ էր վճռական միջոցներ ձեռք առնել, որպեսզի պարսկական կառավարությունը հարգի և պահպանի Գյուլիստանի պայմանագրի պահանջները։ Դրա համար երկու միջոց կար. ավելացնել Կովկասում գտնվող զորքերի թիվը և կամ անմիջապես հարձակման անցնել ու հակահարված տալ Կաջարների ռևանշիստական ձգտ-

[106] АВПР, ф. «Гл. архив», 1—7, 1816 г., д. 1, папка 2, лл. 16—17.

[107] Նույն տեղում։

[108] АКАК. т. VI, ч. 2, док. 722.

տումներին, թույլ չտալով, որ նա ուժերը համախմբի և ինքը հարձակման անցնի[109]։ Երմոլովը կենտրոնական կառավարությանն առաջարկում էր գործել վերոհիշյալ ոգով, գտնելով, որ վճռական ձեռնարկումները միայն հնարավորություն կտան խուսափել ապագա բարդություններից։ Սակայն Երմոլովի պահանջները մնացին ձայն բարբառո հանապատի։ Ավելին, Ալեքսանդր 1-ը, ի պատասխան Երմոլովի առաջարկությունների և երկյուղների, գրում էր, որ չի բաժանում նրա երկյուղները և պետք է առաջնորդվի Պարսկաստանի հետ խաղաղությունը պաշտպանելու սկզբունքով[110]։

Այդ նույն ոգով էր հրահանգներ տալիս Երմոլովին նաև նոր կայսր Նիկոլայ 1-ը, որը նույնիսկ առաջարկում էր Թալիշում մի փոքր հողաշերտ զիջել Պարսկաստանին, որպեսզի դրանով, իբր թե, հանդարտեցնի նրան։ Այս դեպքում էլ Երմոլովը գտնում էր, որ հաստատակամություն հանդես բերելով ավելի դյուրին կլինի պահպանել խաղաղությունը, այլապես զիջումները նոր հավակնություններ կծնեն։ Ուստի նա անհրաժեշտ էր համարում պատրաստ լինել պատերազմի, որպեսզի հնարավոր լինի խուսափել պատերազմից[111]։

Ցարական կենտրոնական կառավարության նման վարքագիծը Պարսկաստանի հանդեպ լավ հասկանալու համար պետք է ի նկատի ունենալ Արևելյան հարցի սրումը 19-րդ դարի 20-ական թվականներին՝ օսմանյան լծի դեմ բռնկած հունական ապստամբության կապակցությամբ։ Ե՛վ Ալեքսանդր 1-ը, և՛ նրա հաջորդը չէին ուզում սրել հարաբերությունները Միջին Արևելքում, տվյալ դեպքում Պարսկաստանի հետ, որպեսզի չգժտվեն անգլիացիների հետ և կարողանան նրանց համագործակցությունը ստանալ Արևելյան հարցում։ Նիկոլայ 1-ը պարզորոշ գրում էր Երմոլովին, որ գործերի վիճակը Եվրոպայում և հատկապես Թուրքիայի հետ հարաբերությունները պահանջում են ամենաղգույշ վարվելակերպ, ուստի խելացի չէր լինի խզում առաջ բերել պարսիկների հետ և կամ ավելացնել փոխադարձ դժգոհությունները[112]։

Այդ նույն ժամանակ, երբ ցարական կառավարությունը փորձեր էր կատարում հարթել հարաբերությունները Պարսկաստանի հետ որոշ, ճիշտ է, աննշան զիջումների գնով, անգլիական կառավարությունը և

[109] Տե՛ս Фадеев А. В., Ук. соч., с. 192.

[110] «Чтения в обществе истории и древностей российских», 1867, кн. 3, էջ 190—192:

[111] Տե՛ս «Записки А. П. Ермолова», էջ 189:

[112] Տե՛ս АКАК, т. VI, ч. 2, док. 593.

նրա դիվանագիտական գործակալները զենքով ու դրամով օգնելով Պարսկաստանին՝ հրահրում էին վերջինիս պատերազմ սկսել և դուրս շպրտել ռուսներին Անդրկովկասից[113]։

Պատերազմ սկսելու պարսկական կառավարության հանդես բերած վճռականության մեջ հետին դեր չխաղացին 1825 թ. դեկտեմբերյան իրադարձությունները Ռուսաստանում։ Դեկտեմբերյան ապստամբությունը Պարսկաստան հասավ չափազանցված ձևով և ավելի ևս ամրապնդեց Աբբաս Միրզայի ռևանշիստական ձգտումները։ Այդ առումով 1826 թ. գարնանը իշխան Ա. Ս. Մենշիկովի դեսպանության առաքումը Պարսկաստան Ռուսաստանի կողմից սոսկ մի անպտուղ ջանք էր փրկելու իրերի դրությունը, որքանով որ այդ դեսպանությունը սկզբից ևեթ դատապարտված էր ձախողման։ Պարսկաստանի համար այն ձեռնտու դուրս եկավ այնքանով, որքանով նա օգտագործեց այն թմրեցնելու ռուսների զգոնությունը և հանկարծակի նախահարձակ լինելու, այն դեպքում, երբ ռուսական իշխանությունները չէին կարծում, որ նման պայմաններում, երբ իրենց դեսպանը Պարսկաստանում է, վերջինս պատերազմ կսկսի։

Մենշիկովի դեսպանության ձախողումով ավարտվեց այն երկարատև դիվանագիտական պայքարը, որ մղում էին միմյանց դեմ Ռուսաստանն ու Պարսկաստանը և որին այնքան ակտիվորեն միջամտում էր Անգլիան՝ հանուն Անդրկովկասի ընդհանրապես և հանուն Արևելյան Հայաստանի մասնավորապես։ Այդ պայքարը շարունակվեց զենքով։ 1826—1828 թթ. վանքների ռուս-պարսկական պատերազմը ի վերջո լուծեց ռազմաքաղաքական այն խնդիրը, որը դրել էր իր առջև ցարական կառավարությունը դեռևս դարասկզբին։ Ռուսական կայսրության սահմանները ծավալվեցին մինչև Արաքս գետը և այդպիսով ունեցան իրենց բնական սահմանազատիչ գիծը։ Այդ նվաճումը ամրապնդվեց Թուրքմենչայի հաշտության պայմանագրով (1828 թ. փետրվարի 10), որի մասին խոսք կլինի հետագայում, երբ կտրվի տվյալ ժամանակաշրջանի հայ ազգային-ազատագրական շարժման և ազատագրական մտքի վերլուծությունը։

Արևելյան Հայաստանի համար ռուսական կառավարության դիվանագիտական և զինական պայքարը քաղաքական այն նոր ընթացքի շարունակությունն էր, որը որդեգրել էր Ռուսաստանը Վրաստանի միացումից հետո։ Ակնհայտ էր, որ նման քաղաքականությունը բացառելու էր հայկական պետականության վերականգնման մասին հայ ազատագրական շրջանների բաղձանքները և նրանց առջև ամենայն լրջությամբ

[113] Տե՛ս «Кавказский сборник», т. XXI, էջ 39:

դնելու էր ստեղծված պայմաններում լավագույն ելք գտնելու անհրաժեշտությունը։ Ինչպես կտեսնենք, հենց այդ խնդրի լուծմանն էլ ուղղվեցին հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների ջանքերը։

3. ԴԱՎԻԹ-ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևելյան Հայաստանի և առհասարակ ամբողջ Անդրկովկասի տիրապետության համար մղած իր դիվանագիտական ու զինական պայքարում, բոլոր իր քաղաքական ձեռնարկումներում Ռուսաստանը մեծ տեղ էր հատկացնում ամենայն հայոց կաթողիկոսությանը, որի կենտրոնը Երևանի խանության սահմաններում գտնվող Էջմիածնի վանքն էր։

Գաղտնիք չէ, որ ցարական կառավարությունը իր քաղաքական միջոցառումները Արևելքում շղարշում էր «մակերևույթի վրա ընդհանրապես քրիստոնյաներին հաստատելու» (Ալեքսանդր 1-ին) խոստումներով, թեև իրականության մեջ հաճախ էր խոտորվում իր ուղեծրից։ Այս հանգամանքը, գումարված այն բանին, որ ավելի քան մեկ ամբողջ դար հայ ազատագրական ոգորումները շաղկապված էին Ռուսաստանի քաղաքական ընթացքի հետ, Էջմիածինը և հայ եկեղեցին դարձնում էին մի կարևոր հենակետ, որը կարող էր մեծամեծ ծառայություններ մատուցել ռուսական կառավարությանը։ Եվ դա առավել ևս այն բանից հետո, երբ անմիջական պայքար ծավալվեց Անդրկովկասի տիրակալության համար։

Եթե XVIII դարում հայ եկեղեցու և ռուսական կառավարության հարաբերությունները բավականաչափ էպիզոդիկ բնույթ էին կրում, ապա իրադրությունը կտրականապես փոխվեց 18-րդ դարի վերջին, երբ ռուսական կառավարությունը սկսեց ամենագործուն կերպով միջամտել հայոց եկեղեցու ներքին գործերին, հատկապես մի այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին էր կաթողիկոսական ընտրությունը։ Մինչ այդ, այնքանով, որքանով Հայաստանը մասնատված էր Պարսկաստանի և Թուրքիայի միջև, ամենայն հայոց կաթողիկոսների ընտրությունը հաստատվում էր պարսից շահերի և օսմանյան սուլթանների կողմից։ Ռուսաստանը նույնիսկ չէր էլ մտածում միջամտել այդ հարցին։

Իրերի կացությունը կտրականապես փոխվեց այն բանից հետո, երբ 1799 թ. դեկտեմբերի 27-ին մահացավ Ղուկաս կաթողիկոսը և բավական բուռն պայքար ծավալվեց Էջմիածնի գահի համար։ Դեռևս Ղուկաս կաթողիկոսի կենդանության օրոք կաթողիկոսական գահը ժառանգելու հավակնություն էր դրսևորել Ռուսաստանում բնակվող հայերի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը։ Պետք է ասել, որ նա իրոք իրավունք ուներ նման հավակնություններ ունենալու, որովհետև իր գործունեությամբ մեծապես սատարել էր Հայաստանի ազատագրության խնդրի արծարծմանը, հիմնել տպարան, գրքեր էր տպագրել դպրոցներ ստեղծել և դրանով իսկ մեծ ծառայություններ մատուցել իր ժողովրդին։

Սակայն այդ նույն անձնավորության թեկնածությունը դնելու հարցը անտեսվում է ընտրությունների ժամանակ։ Այստեղ ահա մենք ընդհարվում ենք մի հարցի հետ, որի ճիշտ ըմբռնումը և մեկնաբանությունը կարող է պարզել, թե ի՞նչ ուղղություններ գոյություն ունեին հայ ազգային-ազատագրական շարժման մեջ, ի՞նչ ուղիով էին կամենում ընթանալ և ի՞նչ նպատակներ էին հետապնդում նրանք Հայաստանի ազատագրության հարցում, որքանով էին համընկնում կամ տարամերժվում նրանց ձգտումները և ինչպե՞ս էին պատկերացնում ապագա ազատագրված Հայաստանի կարգավիճակը։ Այս հարցերը ճիշտ ըմբռնելու համար մեզ թանկարժեք փաստական նյութ է մատակարարում կաթողիկոսական աթոռի համար ծավալված պայքարը, որը մեր աչքի առջև բևեռացնում է հակադիր թևերը և պարզորոշ ուրվանկարում դարաշրջանի ոգին, որը արգասիք էր հայ ժողովրդի համար ստեղծված չափազանց բարդ կացության։ Եվ եթե մեր հայացքի առջև հառնում են միս ու արյունից կազմված մարդիկ իրենց փառասիրական տենչանքներով, ապա չեն շղարշվում նաև հասարակական այն ուժերը, որոնք կանգնած էին նրանց թիկունքում, ունեին իրենց նպատակները։

Բոլոր այն հետազոտողները (Գ. Աղանյան, Ն. Դուբրովին, Ե. Գեղամյան, Լեո և ուրիշներ), ովքեր զբաղվել են Դավիթ-Դանիելյան պայքարի հարցով, առաջին պլանի վրա են մղել կա՛մ երկու արքեպիսկոպոսների փառասիրական ձգտումները՝ տիրանալու կաթողիկոսական գահին, կա՛մ ամբողջ մեղքը բարդել են ռուսական կառավարության քաղաքական միջամտության վրա և կամ սկզբից ևեթ տեսել են երկու կաթողիկոսների ընդդիմված ռուսական կամ պարսկական կողմնորոշումը։ Բայց երբ խորամուխ ենք լինում հարցի քննության մեջ, նկատում ենք, որ խնդրի էությունը ամենևին էլ տվյալ բաղադրիչներով չի պարզաբանվում, որ մենք գործ ունենք որակապես տարբեր մի երևույթի հետ, որի հիմքում ընկած է հայ ժողովրդի ապագա գոյավիճակով մտահոգված լինելու հանգամանքը։ Դեռևս 1966 թվականին լույս տեսած մեր աշխատության մեջ[1] ջանացել ենք հիմնավորել այն թեզը, որ 18-րդ դարի երկրորդ կեսին միմյանց հակամետ երկու հոսանքներ (բուրժուա-դեմոկ-

[1] Տե՛ս Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966։

բատական և կղերա-ֆեոդալական) գոյություն չեն ունեցել՝ կապված հայ-ռուսական դաշնագրի երկու տարբերակների առկայության հետ։

Մեր կարծիքով, հայ ազգային-ազատագրական շարժման մեջ խնդրահարց գոյություն են ունեցել երկու հոսանքներ՝ բուրժուական և ազգային-պահպանողական, բայց նրանք ընդհանուր նպատակի հարցում ընդդիմադիր չեն եղել, համաձայն են եղել, որ Հայաստանն իրոք պետք է ազատագրել մահմեդական տաժանելի լծից, բայց հետևել են տակտիկական տարբեր գծերի։ Դրանում համոզվելու համար դիմենք Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ Շահամիր Շահամիրյանին հղած հայտնի նամակին[2], որի մեկնաբանությունը մեծապես կնպաստի հասկանալու համար ազատագրական շարժման մեջ գոյություն ունեցած հոսանքները և նրանց տակտիկական ելակետը։ Պաշտպանվելով Շահամիրյանի այն մեղադրանքից, թե «հաճիք ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն», Ղուկաս Կարնեցին գրում էր. «բայց լինէր թէ՝ օրհնեալդ այժմ յայս կողմունքս գայիր և շրջագայիր ի Ջուղայու մինչև ցաստ և յայլ կողմունս՝ յոր գոն ազգ մեր. և ականատես վերահասութեամբ իմանայիր զկացութիւնս մերազնէից և զանօգնականութիւն և զբռնութիւն իշխողացն. և ինքնին կնքէիր թէ՝ այս դիտմանցս յառաջանալ ոչ լինի. ապա թէ հնարաւոր իցէ յառաջանալն, մի՞թէ յիմար իցեմք որ ի տառապանաց զերծանիլ չկամիցիմք»։ Կաթողիկոսը կամենում էր ասել, որ ապրստամբության հարցում իր և իր շրջապատի վերապահ վերաբերմունքը ոչ թե հետևանք է այն բանի, որ իրենք չեն ձգտում ազատության, քանի որ եթե «ձկունք որսացեալք ի ցանցս, և թռչունք ըմբռնեալք ի վարս ջանան զերծանիլ, ապա ո՞րքան առաւել բանականքս բաղձամք ազատութեան», այլ ստեղծված իրավիճակի, որովհետև հայ ժողովրդական զանգվածները «ըստ մեծի մասին մատնեցեալք կան ի խստութիւնս թշնամեաց անօրրմից որ հաւատարմապես ծառայելով ևս չկարեն զողորմութիւն գտանել, ո՞ւր մնաց թէ զապստամբութիւն ցուցանիցեն, որ բնաւ ոչ իսկ կարեն»։ Ուստի կաթողիկոսը գտնում էր, որ նման պայմաններում հանուն ազատագրության ապստամբություն բարձրացնելը «այժմոյս կարի դժուարին է առ մեզ և վտանգաւոր յոյժ, վասնորոյ երկուց չարեաց զփոքրն ընտրեալ պիտոյ է»։ Նրան երկու չարյաց փոքրագույնը ընտրելու հաստատուն որոշմանն էին հանգեցնում այն դրամատիկական իրադարձությունները, որ խաղացվել էին Արցախում այդ նույն ժամանակաշրջանում։ Այդ կապակցությամբ Ղուկաս Կարնեցին հիշեցնում էր Շահամիրյանին. «յանցեալ ամսն մինչ Արցախեցիք ձրգ-

[2] Տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք Ա, էջ 17—19։

տեցան առ ապաւինութիւն նոցա (ռուսների—Վ. Դ.), ի բռնաւորէն իւրեանց զի՞նչ անցք անցին ընդ նոսա. զիա՞րդ մահացաւ խղճալի Յովհաննէս կաթուղիկոսն և որպէ՞ս աղաւաղեցաւ սուրբ աթոռն Գանձասարու. և այժմ ո՞ւր են մելիքազունք, և զինչ կրեցին... և ի տեղեկանալդ զայսմանէ ստուգութեամբ, ապա ընտրես զսուտն և զիրաւն. և անմեղադիր լեր մեզ»։ Ղուկաս կաթողիկոսը գտնում էր, որ ինքը խոհեմ է վարվել՝ հեռու մնալով արցախեցիներից, և հայտնում էր, որ իր նման վարքագիծը հավանություն է գտել շատերի կողմից. «որ և ի յառաջանալ այնց դառնութեանցն ի քանի՞ տեղեաց գրեցին առ մեզ զբանս գովութեան թէ՝ յոյժ բարւոք էր՝ որ դուք ոչ ցուցիք առ նոսա զնշան համակամութեան. և անվնաս պահեցիք զսուրբ գահդ»։

Ղուկաս կաթողիկոսի նման զգույշ վարվելակերպի հիմքում ընկած էր այն հաստատ համոզումը, որ տվյալ պայմաններում հայ ժողովրդի համար «ոչ հիւսիսական տէրութենէն և յայլոց... այցելութիւն կարէ լինել այժմ, բաց յաստուծոյ», հետևաբար «և ի շրջապատեցեալ գոլս մեր ի թշնամեաց՝ եթէ նշան երևիցի յարելոյ և հայելոյ առ կարծեցեալ օգնիչսն, առաջի կայ նեղութիւն, խորտակումն, յափշտակութիւն և սուր»։

Ստեղծված իրավիճակում, երբ քանիցս ռուսական կառավարությունը կարծես թե իսկապես ձեռնամուխ էր եղել կենսագործելու իր քաղաքական նպատակամղումները Անդրկովկասում, բայց ինչ և ինչ պատճառներով անորոշ ժամանակով հետաձգել էր դրանց իրականացումը, Ղուկաս կաթողիկոսը բավականաչափ հիմք ուներ հարցնելու, թե «այժմ ո՞ւստի է մեզ աստուածառաք Մովսէս՝ որ կարիցէ զայն գործել», այսինքն Մովսես մարգարեի նման փրկել իր ժողովրդին գերությունից և ավելին անել քան Մովսեսը, «ըստ որում նոքա (հրեաները—Վ. Դ.) ընդ իշխանութեամբ միայն փարաւոնի էին, այլ ազգ մեր ցիր ու ցան եղեալ ի կալուածս քանեաց իշխանութեանց»։

Ահա այս հիմնավոր պատճառներն էին, որ Ղուկաս կաթողիկոսին և նրան համամիտ անձանց հարկադրում էին զգույշ և խոհեմ ընթացք որդեգրել, որպեսզի հայ ժողովուրդը չկանգնի խորտակման անդունդի եզրին։ Բնակվելով բուն երկրում և ականատես լինելով ու իրենց մաշկի վրա զգալով հայ ժողովրդի համար ստեղծված դժնի իրականության հետևանքները, նրանք չէին կամենում հապճեպ եզրակացություններ անելով անզգուշաբար հարվածի տակ դնել մի ամբողջ ժողովրդի լինելու և գոյատևելու հարցը։ Ազգային-պահպանողական այս մտայնությունը սակայն, ամենևին էլ չէր նշանակում, որ նման ուղեծրի հետևող այս հոսանքի կողմնակիցները դեմ էին հայրենիքի և ժողովրդի ազատագրության գաղափարին։ Ղուկաս կաթողիկոսն ինքը գրում էր այդ նույն

նամակում. «Երանի էր թէ գոնեա մասնաւորապէս արդիւնաւորային» Շահամիրյանի գաղափարները, «քանզի առ այդ պիտոյ էր ամենայն ազգի մերոյ ընդ հովանեաւ հաւատացեալ և բարեմիտ տէրանց լինել և զապահովութիւն ունել, որ խնամածութեամբ նոցա կարիցէին ձգտիլ առ երջանկութիւնս...»։ Բայց հենց այս հարցում էր, որ ազգային-պահպանողական և բուրժուադեմոկրատական մտայնությունները բախվում էին միմյանց։ Շահամիրյանի առաջարկած ապստամբական շարժումը առաջ բերելը ամենևին էլ ինքնանպատակ բան չէր, այլ հրամայական մի թելադրանք։ Կրավորական սպասումը, թե պետք է ընտրել երկու չարյաց փոքրագույնը և սպասել համբերատար կերպով այն պահին, երբ արտաքին մի որևէ տերություն (և առաջին հերթին Ռուսաստանը) կգա և կթոթափի մահմեդական օտարակալության լուծը, հղի էր մի սպառնալիքով, այն է՝ թերևս դրանով իսկ մեկընդմիշտ մոխիրների տակ թաղվեր հայկական պետականության վերականգնման ցանկալի նպատակը։ Եվ այդ էր պատճառը, որ հայկական պետականության վերականգնմանը սատարող բոլոր արմատական գործիչները և՛ Իսրայել Օրին, և՛ Հովսեփ Էմինը, և՛ Շահամիր Շահամիրյանը, և՛ Հովհաննես Լազարյանը այդ գաղափարի կենսագործման հարցում առաջնությունը տալիս էին ներքին ապստամբական լայն շարժմանը և միայն դրա կողքին դնում արտաքին օգնության հարցը, դիտում դրանք իրենց միասնության մեջ, որպես մեկը մյուսին լրացնող անհրաժեշտ պայման։ Այսպիսով, ազգային-պահպանողականների որդեգրած ուղեծիրը չէր սատարում հայկական պետականության վերականգնման գործին, թեև նույն Ղուկաս կաթողիկոսը Շահամիրյանին գրում էր. «բայց արդ ո՞ գիտե՝ թերևս և սիրելւոյդ գրութիւնքն մարգարէաբար իցեն», բայց և դրանք տեսնում էր հեռավոր ապագայում, քանի որ գտնում էր, թե դրանք «ըստ հրաշալի տեսլեանն Եզեկիէլի են լինելոց»։

Մենք արդեն ասացինք, որ կաթողիկոսական գահի համար առաջին սուր պայքարը ծավալեց ռուսահայերի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը։ Տվյալ ժամանակաշրջանի պատմությամբ զբաղվողների մեծ մասը Արղությանի վարքագծի հիմքում դնում է նրա անսահման փառասիրությունը և իշխանատենչությունը։ Ամենևին չմերժելով այդ պարագան, մենք գտնում ենք, որ միայն դա չէր շարժառիթը, որ մղում էր փառասեր արքեպիսկոպոսին տիրանալ կաթողիկոսական գահին։ Արղությանի նախկին գործունեությունը ցույց է տալիս, որ նա անձնվեր ծառայել էր իր ժողովրդին։ Արղությանը մեկն էր Շ. Շահամիրյանի ձգտումների և իդեալների ջատագովներից, մեկն էր հայ գործիչների այն փաղանգից, ովքեր ապստամբական շարժումը համարում

էին ամենաազդու միջոցներից մեկը ազատության հասնելու և սեփական պետականությունը վերականգնելու ճանապարհին։ Չէ՞ր ձգտում արդյոք Արղությանը, դառնալով ամենայն հայոց կաթողիկոս, ընթանալու Շահամիրյանի և նախորդների գծած ուղիով[3]։

Այստեղ հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածում, երբ Արղությանը պայքարում էր Էջմիածնի կաթողիկոսական գահի համար, միջազգային կացությունը ևս բավականաչափ բարենպաստ էր, որպեսզի նա հուսար, որ իր նպատակները կպսակվեն հաջողությամբ։ 1799 թվականի պայմանագիրը մինչ այդ չտեսնված բարի դրացիական հարաբերություններ էր ստեղծել Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև։ Այդ տեսակետից Արղությանը կարող էր ապահով լինել, որ Բ. դուռը խոչընդոտներ չի հարուցի իր առջև դեպի կաթողիկոսական գահը տանող ճանապարհին, որ ռուսական կառավարությունը կկարողանա ապահովել Բ. դռան համաձայնությունը։ Բավականաչափ փոխվել էր իրադրությունը նաև Պարսկաստանում։ Աղա Մահմեդ խանի սպանությունից հետո շահական գահին տիրացած Բաբա խանը դեռևս զբաղված էր իր դիրքերի ամրապնդմամբ և անհնազանդ խաներին հպատակեցնելով։ Երևանի խանությունը, որտեղ գտնվում էր Էջմիածինը, երկար ժամանակ վասալական կախման մեջ էր գտնվում Վրաստանից, իսկ Երևանի Մամադ խանը, ինչպես տեսանք վերևում, տարված էր անկախական հովերով, ուստի և ջանում էր չվատթարացնել հարաբերությունները Վրաստանի հետ։ Բուն Վրաստանում, թեև այն սոսկալի հարված էր ստացել Աղա Մահմեդ խանի արշավանքի հետևանքով, թագավորական գահի վրա էր նստած Արղությանի հետ մերձավոր կապերի մեջ գտնվող Գեորգի 12-րդ թագավորը, որը այդ նույն ժամանակ բանակցություններ էր վարում Ռուսաստանի հետ, Վրաստանը վերջինիս միացնելու մտադրությամբ, և որոնց մասին Արղությանը չէր կարող տեղյակ չլինել։ Այս բոլորը միասին վերցրած բարերար հող էին ստեղծում Արղությանի մտադրության իրականացման համար, և դա էր պատճառը, որ Արղությանը ջանք չէր խնայում այդ ուղղությամբ։

---

[3] 1800 թ. փետրվարի 1-ին Կ. Պոլսի պատրիարք Դանիել արքեպիսկոպոսին հղած իր գրության մեջ, խոսելով այն մասին, որ և՛ վրաց արքան, և՛ ռուսաց կայսրը կաջակցեն իրեն, «սակայն արտաքուստ համարելով զսոսա՝ ոչ այնքան վստահ եմ, որքան և վստահացեալն եմ ի սէր ի միաբանութիւն բոլոր ազգին մերոյ», քանի որ միայն այդ կերպ «կառուցեալ և կազդուրեալ մնայ տունն և տիրողութիւնն՝ ըստ աստուածային փրկչին բանի. ապա թէ ոչ անհամաձայնութեամբ և բաժանմամբ յանձին աւերի տունն և կործանի տէրութիւնն» («Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. Զ)։ Այսպիսով, Արղությանը գտնում էր, որ հայ ազգի կենսունակության և զորության հիմքը միաբանությունն է։

Սակայն էջմիածնում այդպես չէին մտածում, ուստի և որոշեցին զանց առնել Շահամիրյանի գաղափարների համակիր Արղությանի թեկնածությունը և այնպիսի անձնավորության վստահել կաթողիկոսական գահը, որը կշարունակեր գործել Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների ոգով, այսինքն ազգային-պահպանողական ոգով։ Դա փայլուն կերպով ապացուցվում է կաթողիկոսական ընտրությունների բուն ընթացքով։

Արարատյան աշխարհի հայ ժողովրդի և էջմիածնի միաբանության ժողովում առաջին թեկնածությունը, որ տրվեց, Կոստանդնուպոլսի նորընտիր Դանիել պատրիարքի թեկնածությունն էր։ Թեև խոսք գնաց նաև Հովսեփ Արղությանի թեկնածության մասին, բայց վերջինիս պաշտպանների թիվը մեծ չէր։ Ժողովը վարող ավագագույն արքեպիսկոպոս Մինասը, երբ խոսք եղավ Հովսեփ Արղությանի թեկնածության մասին, պարզորոշ հայտարարեց, որ ինքը չի կասկածում ամենևին, որ Արղությանը արժանի է կաթողիկոսական աստիճանի, բայց չի ուզում նրա մասին լսել խսկ, որովհետև նրա կաթողիկոս դառնալը վտանգավոր է, վտանգավոր այնքանով, որքանով նա անձամբ մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին, թուրքական մզկիթը վերածել է քրիստոնեական եկեղեցու, գործել է Պարսկաստանի դեմ, մասնակցել 1796 թվականի պարսկական արշավանքին, այնպես որ Արղությանի ընտրությունը հայ ժողովրդի դեմ կգրգռի Պարսկաստանին ու Թուրքիային։ Եվ քանի որ հայերի մեծ մասը բնակվում է Թուրքիայում ու Պարսկաստանում, ապա Հովսեփ Արղությանի ընտրությունը միայն աղետներ կբերի նրանց[4]։

[4] **Ն. Դուբրովին,** նշվ. աշխատ., հ. 2, էջ 211—212։ Այդ նույն կապակցությամբ 1800 թ. հունվարի 29-ին, այն բանից հետո, երբ Արղությանի անունով մահսեր էր գրվել և ուղարկվել Կոստանդնուպոլիս, էջմիածնի միաբանները գրում էին Արղությանին իրեն, որ իրենք զգուշացել են նրա թեկնածությունը առաջադրելուց, «վասն զի գործ խոհեմութեան է նախատես լինել զառնելեաց, գիտել զկեալն ի վերայ օգտին և զգուշանալ ի վնասաբեր իրաց»։ Եվ այդ բոլորի պատճառն այն է, որ «քաջայայտ իսկ է պատուականութեան քում թէ ազգն մեր ըստ մեծի մասին է այժմ ընդ գաւազանաւ տէրութեան օսմանցւոց, և տարաբաղդ մասն Հայաստան աշխարհիս ընդ խիստ իշխանութեամբ Պարսից։ Իսկ ի մերս ժամանակի յերկրորդ պատերազմին այդմ հզորագունեղ կայսերութեան ընդ ագարացւոցն մինչ սրբութիւնն ձեր ընդ ծայրագոյն քնեազ Գրիգոր Պոտեմկինին՝ գնացիք ի Բանտէր, և ի Իսմայիլ և յԵաշ և ի Սեչով և յայլ տեղիսն իբր բարերարել անդանօր հանդիպեալ մերազանց, յայնժամ ամենայն ագարացիք (թուրքերը—Վ. Դ.) ծանեան զքեզ, և ի դուռն արքայի ևս ծանուցեալ եղեր. և յետո ի յառնել գրաֆ Վալերիան Ալեքսանդրիչ Զուբով սպարապետին յայսկոյս ի վերայ պարսից եկիր ընդ նոսա ի Տարբանդ և ի Շամախի. և ի Գեանջա, և ամենայն պարսիկք թէ տեսութեամբ և թէ ի լրոյ իմացան, որոց և բազումք զլղացեալսն զգայուէին առ այսր»։

Եվ այդպես, Արղությանի արժանիքները չէին անտեսվում, նա համարվում էր կաթողիկոսության հարմար թեկնածու, բայց ազգային-պահպանողական մտայնությունը հարկադրում էր անտեսել այդ թեկնածությունը, որպեսզի արևելյան երկու բռնապետությունների լծի տակ գտնվող հայ ժողովուրդը չտուժի այդ ընտրության հետևանքներից։ Այդ առումով խիստ իրավացի է Ն. Դուբրովինի դիտողությունն այն մասին, որ «հայերը չէին կարող ներել Հովսեփին այն բանը, որ նա միջամտում էր քաղաքական գործերի, որոնք նրանց այնքան աղետներ էին բերել։ Նրանք իրավացիորեն ասում էին, որ Հովսեփը զուր տեղը հուզում էր ժողովրդին և իր գործողություններով ոչ միայն իր, այլև ամբողջ հայոց ազգի դեմ լարեց պարսիկներին ու թուրքերին»[5]։ Հայաստանի ազատագրության հասնելու գործում Հովսեփ Արղությանի ջանքերը մինչ այդ իրոք որ անպտուղ էին անցել և նա չէր կարողացել փոքր ի շատե շոշափելի արդյունքներ ձեռք բերել։ Դա էր պատճառը, որ ազգային-պահպանողական տարրերը դեմ էին արտահայտվում նրան, և ոչ թե այն, որ նա ուզում էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Հայաստանը։ Նման մտավախությունը իր հիմքում ուներ նաև մեկ այլ զորեղ պատճառ. դա այն էր, որ ռուսական գահի վրա այդ ժամանակ նստած էր այն նույն Պավել 1-ը, որն այնպես անսպասելի վերջակետ էր դրել 1796 թ. գեներալ Վ. Զուբովի պարսկական արշավանքին։ Դա փոքր իրադարձություն չէր և ամենայն հիմք տալիս էր քաղաքական աշալրջություն հանդես բերելու համար։ Այս ամենի հետևանքով Դանիելից զատ կաթողիկոսական երկրորդ ընտրելի անվանվեց այդ նույն ժամանակ նվիրակական պաշտոնով Ռուսաստանում գտնվող Եփրեմ արքեպիսկոպոսը[6], այն դեպքում, եթե Դանիելը հրաժարվեր։

Այնուհետև կազմվեց «մահսեր» (համախոսական—Վ. Դ.), որից հետո էջմիածնի աթոռակալ Դավիթ արքեպիսկոպոս Ղորղանյանը ուղարկվեց Կոստանդնուպոլիս՝ տեղի հայերի հավանությունը և դրանից

Նրանք կշտամբում էին Արղությանին, որ երկիցս մերժել է Ղուկաս կաթողիկոսի հրավերը այլ պաշտոն հանձն առնելու, քանի որ «ոչ ախորժեցար ծաշակել զդառնութիւն խստութեան այլազգական իշխանութեանցն»։ Ելնելով վերոհիշյալից և երկյուղ կրելով «թէ գուցէ վնասք պատահիցին անձինդ ազնուականի և սրբոյ աթոռոյս և մանաւանդ խղճալի ազգի մերում թէ անդ և թէ աստ գտանելոց և կարծելով ևս թէ ձեզ յօժարելի չիցէ ի կայսերական ապահով երկրէ գալ ի կալուաձ տէրութեան այլազգեաց» է, որ իրենք նախապես խուսափել են մահսերում Արղությանի անունը հիշատակելուց (տե՛ս «Դիվան հայոց պատմության, գիրք Ե, վավ. Ե)։

[5] **Դուբրովին Ն.,** նշվ. աշխատ., հ. 2, էջ 212։

[6] Кавказская старина», 1873, с. 99.

հետո էլ սուլթանից Դանիելի կաթողիկոսությունը հաստատող ֆիրման ստանալու նպատակով[7]։

Գուցե ամեն ինչ հարթ ու հանգիստ ընթանար, եթե Հովսեփ Արղությանը հաշտվեր կատարված փաստի հետ։ Բայց այդպես չեղավ։ 1800 թվականի հունվար ամսի վերջերին Էջմիածին ժամանեցին վրաց Գեորգի թագավորի պատգամաբերներ իշխան Հովսեփ Բեհբուդյանը և վանքի եկեղեցու ավագերեց Տեր-Առաքելը՝ իրենց հետ ունենալով հորդորական գրություններ ինչպես Երևանի խանի, այնպես էլ Էջմիածնի միաբանության անունով, որպեսզի կաթողիկոս ընտրվի և հաստատվի Հովսեփ Արղությանը[8]։ Վերջինիս գրած նամակում խոսելով այս ամենի մասին, Երևանի մելիք Աբրահամ Աղամալյանը և հազարապետ Գաբրիել Գեղամացին ակնարկում էին, որ վրաց թագավորի ճնշման տակ են փաստորեն իրենք գնացել այն քայլին, որպեսզի լրացուցիչ համախոսական ուղարկեն Կոստանդնուպոլիս և խնդրեն, որ Արղությանը հաստատվի։ «Թեև մենք չգիտեինք Ձերդ սրբազնության մտադրության մասին,— գրում էին նրանք հակասելով փաստերին, որովհետև Արղությանը վաղուց չէր թաքցնում իր նման մտադրությունը,— որ կրարեհաճեք ժամանել և բաղմել կաթողիկոսական գահին, բայց պահպանելով ավագության իրավունքը և ձեր արժանիքները, արեցինք այն, ինչ որ հարկ էր անել»[9]։

Հարկ չկա ամենայն մանրամասնությամբ կանգ առնել այն բոլոր իրադարձությունների վրա, որոնք նախորդեցին Հովսեփ Արղությանի ընտրությանը և պատճառ հանդիսացան Դանիել արքեպիսկոպոսի աքսորին։ Այստեղ կարևոր է շեշտել միայն այն պարագան, որ ռուսական կառավարությունը Կոստանդնուպոլսի իր դիվանագիտական ներկայացուցչության միջոցով ջանք չխնայեց ներազդելու Բ. Դռան վրա, որպեսզի Արղությանը հաստատվի կաթողիկոս։ Այսպիսով, ռուսական կառավարության առաջին իսկ միջամտությունը հայ եկեղեցու գործերին պսակվեց քաղաքական մեծ հաջողությամբ։ Այսուհետև ցարական կառավարությունը հնարավորություն էր ստանում կայսերական հրովարտակով հաստատել ամենայն հայոց կաթողիկոսների ընտրությունը՝ թուրքական սուլթանին և պարսից շահին համահավասար իրավունքներով, թեև բուն Հայաստանը և հայ ժողովրդի մեծագույն զանգվածը գտնվում էր վերջիններիս տիրակալության տակ։ Դիվանագիտական այդ հաղթանակը հնարավորություն էր տալիս ռուսական կառավարությանը իր քաղաքական նպատակադրումների կենսագործման համար օգտագործել ինչպես Էջմիածնի կաթողիկոսական գահը, այնպես էլ ամենայն հայոց կաթողիկոսների ընտրությունը։

Բայց դա հարցի միայն մեկ կողմն է։ Մեր կարծիքով, երբ Հովսեփ Արղությանը ջանում էր Ռուսաստանի թելադրությամբ կաթողիկոսանալ և ռուսաց կայսրից ևս հաստատության հրովարտակ ստանալ, նա դրանով իսկ ձգտում էր մի բանի, այն է՝ հնարավորին չափ ապահովել Էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսության հարաբերական անկախությունը, առաջին հայացքից որքան էլ որ դա պարադոքսային թվա։ Բանն այն է, որ ռուսական կառավարությունը դրանով պետք է հականերգործեր այն ազդեցությանը, որը մինչ այդ բացարձակապես պատկանում էր օսմանյան տերությանը ու շահական Պարսկաստանին և Էջմիածինը դնում սրանցից միանգամայն կախյալ վիճակում։ Այսուհետև, մահմեդական բռնապետությունների այդ անսահմանափակ իրավասությանն ու տիրակալությանը որպես հզոր հակակշիռ, ասպարեզ էր դուրս գալիս Ռուսաստանն իր միջազգային հեղինակությամբ, մի երևույթ, որը կարող էր օգտագործվել Էջմիածնի կողմից իր գոյավիճակը բարվոքելու, քաղաքական դրությունը կայունացնելու և համեմատական ինքնուրույնությունն ապահովելու համար։ Կրկնում ենք, դրան տվյալ պահին մեծապես նպաստում էր այն հազվագյուտ իրադրությունը, որը ստեղծվում էր ցարական կառավարության և Բ. Դռան միջև հաստատված ժամանակավոր խաղաղ, բարեկամական հարաբերություններով։ Ինչպես ցույց տվեցին հետագա մի քանի տարիների իրադարձությունները, այդ իսկապես այդպես էր, թեև մահմեդական երկու տերություններն էլ, և առաջին հերթին Թուրքիան, իսկույն ևեթ գլխի ընկան, որ Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը Էջմիածնի վրա հարվածում է Հայաստանում ունեցած իրենց դիրքերին ու շահերին, և անմիջապես միջոցներ ձեռք առան չեզոքացնելու այն, առավել ևս ուժեղացնելու ճնշումը Էջմիածնի վրա, հնարավորության դեպքում նույնիսկ ջանալով օգտագործել վերջինիս ընդդեմ Ռուսաստանի քաղաքական նպատակադրումների։ Հետագայում արդեն Դավիթ-Դանիելյան գավազանակռիվը և դրա օգտագործումը հակամարտ երկրներից յուրաքանչյուրի կողմից իր իսկ քաղաքական նպատակների համար դրա անժխտելի վկայությունն է։

1800 թ. հոկտեմբերի 30-ի հրովարտակով[10] Պավել 1-ը Հովսեփ Արղությանին հաստատում է կաթողիկոս և այդ մասին հրովարտակ հր-

[7] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. Բ և Գ։
[8] Նույն տեղում, գիրք Ե, վավ. Դ։
[9] АВПР, ф. Армянские дела, 1780—1801 гг. л. 42.

[1] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 379, л. 1.

զում նաև վրաց Գեորգի 12-րդ թագավորին[11]։ Արղությանը մեկնեց Էջմիածին և ճանապարհին կանգ առավ Թիֆլիսում, որտեղ և այդ նույն օրերին հռչակվեց Պավել կայսեր մանիֆեստը Վրաստանը Ռուսաստանին միացնելու մասին։ Այդ կապակցությամբ նա շնորհակալության մաղթանք կատարեց Թիֆլիսի հայոց գլխավոր Վանք եկեղեցում։ Սակայն մի քանի օր անց, 1801 թվականի մարտի 9-ին Հովսեփ Արղությանը Թիֆլիսում մահացավ, այնպես էլ չհասնելով Էջմիածին և շարժանանալով կաթողիկոսական օծման։

Կարծես թե Հովսեփ Արղությանի մահը պետք է հանգստացներ կըրքերը և վերականգներ իրերի նախկին վիճակը՝ կաթողիկոսական գահի վրա հաստատելով Դանիել արքեպիսկոպոսին իբրև առաջին ընտրյալի։ Բայց Հովսեփ արքեպիսկոպոսի մահը հայ եկեղեցու ներսում նոր խռովությունների և երկպառակությունների տեղիք տվեց։

Որքան էլ տարօրինակ թվա, Հովսեփ Արղությանի մահը անակնկալ նոր հնարավորություններ ստեղծեց հակադանիելական կուսակցության համար, այսինքն նրանց, ովքեր կողմնակից էին Ռուսաստանի գործուն միջամտության հայ եկեղեցու ներքին հարցերին, դրա մեջ տեսնելով ընդհանրապես հայ ժողովրդի փրկությունը, իհարկե, չմոռանալով առաջ մղել նաև իրենց փառասիրական նկրտումները։ Այս նոր պայքարում վերջին դերը չխաղաց Հովսեփ Արղությանի ձեռնասուն Գրիգոր վարդապետ Զաքարյանը (Աղքերմանցին), թեկուզ միայն այն պատճառով, որ իր հովանավորի մահը բոլորովին անհույս ու մռայլ հեռանկարներ էր

[11] Այստեղ հետաքրքիր է նշել, որ դեռևս 1800 թ. հունիսի 10-ին, նախքան հաստատություն ստանալը, վրաց Գեորգի արքան գրում էր Հովսեփ Արղությանին և հորդորում նրան՝ Էջմիածին ժամանել Կոստանդնուպոլսի վրայով։ Հայտնելով այն մասին, որ նա այդ իմաստով դիմել է նաև Ս. Լ. Լաշքարովին՝ «զի եթէ Բարձրագոյն դռան կամք լինի առաքել զձեզ ի կողմն Կոստանդնուպօլսոյ, ունի գրել տալ առ Թամարովն, զի ի Խոնդքարէն (թուրքական սուլթանից—Վ. Դ.) առցէ զհրովարտակ և այնպէս փառաւորութեամբ մուտ գործեք ի սուրբ Էջմիածին»։ Գեորգի արքայի կարծիքով «այդպիսի փառաւորութիւն ձեր պարծանք է լինելոց և ամենայն հայազգի ժողովրդեան և վասն ձեր ևս լաւագոյն է լինելոց, մի ևս յապաղէք, փութով շնորհ բերէք, այսպես է բարւոք, որպէս և գրեալ եմք և թէ ձեր գալն յայնոսիկ կողմունս, շատ օգտակար է, ի մեր կողմն գալն ձեր, ոչ լինի օգուտ ոչ վասն նոյն եկեղեցւոյ և ոչ վասն ձեր, մեք այսպես զխորհուրդ տամք ձեզ, զի գայք Կոստանդնուպօլսով ի սուրբ Էջմիածին» (Ս. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան, հ. Բ, էջ 498)։ Այս նամակը վկայում է, որ վրաց թագավորը ևս անհանգստացած էր Արղությանի կաթողիկոսանալով և ամեն կերպ ջանում էր ապահովել Թուրքիայի բարյացակամությունը։ Հնարավոր է նաև, որ Կոստանդնուպոլսում Արղությանը Բ. Դռան հետ ինչ-ինչ բանակցություններ վարելու հանձնարարություն ևս ունենար, բայց վերջին միտքը հաստատող վկայություններ մենք մեր ձեռքին առայժմ չունենք։

բացում նրա առաջ։ Գրիգոր վարդապետի համար պարզից պարզ էր մի բան, որ եթե Արղությանի հակառակորդ Դանիել արքեպիսկոպոսը վերջապես գրավի կաթողիկոսական գահը, ապա չի զլանա հալածել կոչեցյալ կաթողիկոսի հետևորդներին, այդ թվում նաև իրեն։ Եթե Գրիգորը Թիֆլիս էր հասել լի ապագայի հույսերով՝ եպիսկոպոսական աստիճան ստանալ և վերադառնալ ետ իբր Ռուսաստանում բնակվող հայերի առաջնորդ, գրավելով իր նշանավոր նախորդի տեղը, ապա Դանիելի կաթողիկոսանալը մեկընդմիշտ վերջ էր դնելու ապագայի նրա երազներին։

Գրիգոր Զաքարյանի նման վճռական, ուժեղ կամքի տեր և փառամոլ անձնավորությունը չէր կարող ձեռնածալ նստել և սպասել ամենևին էլ ոչ վարդագույն գալիքին։ Քաջ ծանոթ լինելով ռուսական օրենքներին և սովորույթներին, վստահ լինելով ցարական կառավարության աջակցության վրա, նա հրապարակ է նետում մի վավերագիր[12], որը տվյալ պահին ճակատագրական նշանակություն էր ունենալու ամենայն հայոց կաթողիկոսության համար։ Այդ վավերագիրը, այսպես կոչված, Հովսեփ Արղությանի կտակն էր, որով Էջմիածնի գահի ժառանգորդ էր հռչակվում Դավիթ արքեպիսկոպոս Ղորղանյան Ենեգեթցին։

Կաթողիկոսական գահը կտակելը արտառոց երևույթ էր հայոց եկեղեցու տվյալ ժամանակաշրջանի պատմության մեջ։ Կաթողիկոսները եղել են ընտրովի և նրանց ընտրությանը իրենց մասնակցությունն են բերել ժողովրդի և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ ներկայացուցիչները։ Պարսկաստանի և Թուրքիայի միջև Հայաստանի բաժանումից հետո ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, երբ հնարավոր չէր համայն ազգության ներկայացուցիչներին ի մի հավաքել և հոգևոր գլխի ընդհանուր ընտրություն անցկացնել։ Նման պայմաններում էր, որ առաջ եկավ համախոսական դրությունների կամ մահսերների համակարգը և մշակվեց ընտրության յուրատեսակ կարգ։ Վերջինիս էությունն այս էր. կաթողիկոսի մահից հետո նոր կաթողիկոսի ընտրության նպատակով համաժողովի էին հավաքվում Երևանի խանության հայ ազգաբնակչության ներկայացուցիչները և Էջմիածնի միաբանության հետ կատարում ընտրություններ, ընդորում առաջադրվում էին երկու ընտրելիներ, որպեսզի մեկի հրաժարվելու կամ հավանություն չտանալու դեպքում ընտրվի երկրորդը։

Այնուհետև համախոսականը շրջեցնում էին երկրի տարբեր վայրերում, կնքել ու ստորագրել տալիս իբրև նշան համաձայնության և Էջմիածնի նշանավոր բարձրաստիճան միաբաններից մեկի ձեռքով ուղարկում Կոստանդնուպոլիս, որտեղ և վերջնականապես վճռվում էր ըն-

[12] Տե՛ս Кавказская старина», 1873 г., էջ 173:

տրրյալի հարցը՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքի գլխավորությամբ գումարվող ամիրաների և էսնաֆապետերի ժողովում, որից հետո ստացվում էր սուլթանի հաստատության բերաթը։ Այդպիսով, փաստորեն վերջնական խոսքը պատկանում էր Կ. Պոլսի հոգևորականությանն ու «իշխաններին»։

Բնական է, որ նման պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել կաթողիկոսական գահը կտակելու մասին, թեև հավանական է նաև, որ մահվան սեմին կանգնած կաթողիկոսները, իբրև խորհուրդ, ցանկալի համարեին անվանել որևէ մեկին իբրև իրենց հավանական հաջորդ։

Բայց տվյալ դեպքում չի կարելի ամեն ինչ հանգեցնել սոսկ Գրիգոր Աղթերմանցու անձնական փառամոլությանն ու շահագրգռություններին։ Գաղտնիք չէ, որ Հայաստանի քաղաքական գոյավիճակը, ինչպես արդեն նշել ենք, պետք է թելադրեր էջմիածնի միաբանությանը և հայ ժողովրդի ղեկավար շերտերին վարել խիստ զգուշավոր քաղաքականություն, որպեսզի վտանգավոր կացության մեջ չդրվեր այն միակ համազգային հաստատությունը, որը շաղկապում էր ցանուցիր հայ ժողովրդին և որը կարողացել էր պահպանել իր գոյությունը փոթորկալից ու աղետաբեր դարերի բովով անցնելուց հետո։ Այս երևույթը, հատկապես 18-րդ դարի երկրորդ կեսին—19-րդ դարի սկզբին, մեր և՛ նախախորհրդային, և՛ խորհրդային պատմագրության մեջ որակվել է իբրև կողմնորոշում դեպի այս կամ այն պետությունը, տվյալ դեպքում դեպի Պարսկաստանը։ Ինչպես մենք արդեն ցույց տվեցինք վերևում, նման զգուշավոր քաղաքական ընթացքը ամենևին էլ քաղաքական կողմնորոշման բնույթ չուներ։ Հետագա իրադարձությունների մեկնաբանությունը մեզ լիովին կհամոզի դրանում։

Սկզբնապես Գրիգոր վարդապետին հաջողվում է խաբեությամբ ստանալ Վրաստանի ռուսական իշխանությունների և վրաց Դավիթ արքայորդու հավանությունը, որպեսզի իբր թե հանգուցյալ կաթողիկոսի կամքով կաթողիկոսանա Դավիթ Ղորղանյանը։ Երևանի խանական արքունիքի թարգմանիչ Միրզա Մելիք Մինաս Կամսարական Սատաթեկյանի՝ Եփրեմ արքեպիսկոպոսին ուղարկած 1801 թվականի ապրիլի 7-ի նամակից տեղեկանում ենք, որ Հովսեփ Արղությանի մահվան լուրը ստանալուց հետո Դավթի կողմնակիցները փորձում են կաչառքով Դավթին կաթողիկոսական գահ նստեցնել, բայց էջմիածնի միաբանների մեծամասնությունը ներհակել է և, չնայած Վրաստանում ռուսական զորքերի հրամանատար գեներալ Ի. Պ. Լազարևի և վրաց Դավիթ արքայորդու հորդորների, պնդել է Դանիելի թեկնածանության վրա և որոշում ընդունել հրավիրակ ուղարկել Ղազար Սասունցի և Ստեփան Վրացի եպիսկոպոսներին և, եթե մինչև մայիս ամսի 20-ը Դանիելը չժամանի, այդ դեպքում միայն կաթողիկոսացնել Դավթին[13]։ Կասկած չկա, որ էջմիածնի միաբանությունը վստահ է եղել, որ առ այդ թոխաթում գտնվող Դանիելը կժամանի և այդպիսով հարցը իր բնական լուծումը կստանա։

Ինչ վերաբերում է գեներալ Լազարևի և Դավիթ արքայորդու միջամտությանը, ապա նրանք դրանով վստահ են եղել, որ գործում են հօգուտ ռուսական շահերի։ Այդ առումով խիստ հետաքրքիր է Դավիթ արքայորդու նամակը էջմիածնի միաբանությանը, որտեղ նրա գործելակերպի քաղաքական շարժառիթները խիստ ցցուն են երևում։ «...թողեալ ձեր զմերձավորն,— գրում էր արքայորդին,— զոր ունիք ի միջի ձերում՝ ձգտիք առ հեռաւորն, յորմէ երևի թէ՝ դուք կամ զառաջադրեալ իրացն զոչ ինչ գիտելով, թէ մեք և դուք որո՞ց պիեսաց շնորհաց եմք ակնկալ ի դրանէ յայնմանէ (իմա՝ Ռուսաստանից—Վ. Դ.) (որոյ և ահա նշանն երևի ազատութեան հասարակապէս մեր և ձեր) և կամ թէ՝ գիտելով զայն, բայց ոչ ունելով զփոյթ ինչ զհասարակաց, և զազատութեանն ազգի և երկրի ձերոյ և մերոյ միայն զանձանց և եթ, զհաճոյսն և զկամսն պաշտէք, որ այդ ոչ է օգուտ ձեր և մեր. վասնզի՝ գուցէ թէ ի դոյնպիսի անհամաձայնութեանց, որ փոքր թուի ձեզ, զայնպիսի առիթս ընկալեալ նոցա, որով նահանջ և արգել ակնկալութեանցս մերոց եղիցի»[14]։ Սույն քաղվածքից պարզ երևում է, որ Դավիթ արքեպիսկոպոսի կաթողիկոսանալը Դավիթ արքայորդին կապում էր Ռուսաստանից ունեցած ակնկալիքների, Վրաստանի և Հայաստանի ազատագրության հարցի և թերևս իր վրացական թագավոր դառնալու ձգտման հետ, որի հույսը նա դեռևս փայփայում էր։ Այդ ամենից հետո նա խորհուրդ է տալիս Դավիթ Ենեգեթքուն շտապ կաթողիկոս օծել։

Բայց էջմիածնի միաբանները հաստատ էին իրենց որոշման մեջ և պատասխանում էին, որ բացի Դանիելից ոչ ոքի կաթողիկոսացնել չեն կարող, որ այդ է պահանջում իրենցից ազգը և իրենց իսկ տված երդումը։ Նրանք հանդիմանում էին արքայորդուն, որ միջամտում է իրենց ներքին գործերին. «Այլև գիտես իսկ,— գրում էին նրանք,— թէ բարեաց յիշատակաց արժանաւոր պապն քո. հոգելոյս օրհնեալ Հերակլ արքայն որպէս բարեկարգութեամբ կառավարիւր, և ամենևին չխառնիւր յայսպիսի բանս մեր. վասնորոյ յարգութիւնդ ևս պարտիս ըստ նմանութեան նորին լուսահոգւոյն բարեխնամապէս վարիլ առ սուրբ աթոռս, և չրնդդատել զմեզ յապօրինաւոր գործ ինչ. և ճշմարիտ բարեկամութեամբ ի-

[13] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 11, վավ. 30։
[14] Նույն տեղում, թղթ. 11, վավ. 38։

բացուցանելով զայս գրուածքս մեր. ամենևին անմեղադիր լինել և ջատագովել իսկ...»[15]։

Չբավարարվելով այդքանով, էջմիածնի 39 միաբանները դիմում են Երևանի Մամադ խանին և խնդրում, որպեսզի նա շարունակի ընդառաջել իրենց Դանիելին կաթողիկոսացնելու հարցում, չնայած որ Թիֆլիսից այլ ցանկություն են հայտնել[16]։ Էջմիածնի միաբանների անհանգստությունը Երևանի խանի դիրքավորման հարցում հիմնավորված էր, որովհետև, ինչպես գրում է Երևանի Մելիք Աբրահամը, խանը հետամտում էր իր շահադիտական նպատակները ևս, միևնույն ժամանակ հաշվի նստելով նաև Թիֆլիսից եղած առաջարկության հետ։

Ազգային-պահպանողական տարրերի դիրքորոշումը լավ հասկանալու համար պետք է ի նկատի առնել այն ոչ անկարևոր պարագան, որ Մելիք Աբրահամը ազգակցական կապերի մեջ գտնվելով իսկ Դավիթ արքեպիսկոպոսի հետ (վերջինիս եղբայր Բարսեղը Մելիք Աբրահամի փեսան էր—Վ. Դ.), կտրականապես առարկում էր Դավիթի կաթողիկոսանալուն։ 1801 թ. ապրիլի 23-ին, էջմիածնից Երևան վերադառնալուց և խանի հետ տեսակցություն ունենալուց հետո, որի ընթացքում կրկին շոշափվում է կաթողիկոսացուի հարցը և խանը իմանում է, որ միաբանությունը և աշխարհիկ պետերը շարունակում են մնալ Դանիելի պաշտպանության դիրքերում, Մելիք Աբրահամը շտապ և տագնապալից նամակ է գրում Դավիթ արքեպիսկոպոսին և զգուշացնում «թէ մի գուցէ սա (խանը—Վ. Դ.) մարդ ուղարկէ տեղդ. և իրական իշխանութեամբն զքեզ հրաւիրէ ցայս գործ (կաթողիկոսության—Վ. Դ.) բայց դու բնաւ մի անսայցես և մի յանձն առնուցուս զի սա ծաղր կամի առնել զմեզ և զիւր իղձն կամի լցուցանել ագահութեամբ բարուց իւրոց վասնորոյ եթէ տեղիցըս մարդ գայցէ առ ձեզ և զքեզ բռնութեամբ հրաւիրեսցէ հալբաթ հալբաթ տեղիք չտաս բանին այլ ասասջիր թէ մեր կաթուղիկոսն այսօր կամ վաղն կուգայ մեք մարդ եմք ուղարկեալ. նորա գալստեանն կսպասեմք. այլև որպէս բարի խոհականութեանդ պատշաճ թուեսցի զայնս պատասխանեսջիր, միայն թէ զքեզ հրաժարեցուցանելով։ Զայս բան քեզ բարեկամաբար գրեցի հարազատորեն վասնզի ստուգիւ վերահասու եմ լեալ, որ այս մարդոյ (խանի—Վ. Դ.) միտքն չարութեան է. լաւ իմացեալ լիցիս։ Եւ այլն թողում նրբամիտ քննութեանդ»[17]։ Մելիք Աբրահամի նամակը կասկած չի թողնում, որ ազգային-պահպանողական տարրերը,

[15] Նույն տեղում, թղթ. 11, վավ. 42ա և 42բ։

[16] Նույն տեղում, թղթ. 11, վավ. 37։

[17] Նույն տեղում, թղթ. 21, վավ. 140։

տվյալ պահին ընդդեմ գնալով փաստորեն ռուսական կառավարության պահանջին, ամեն կերպ ջանում էին այն անձնավորությանը բարձրացնել կաթողիկոսական գահ, որը նախընտրյալն էր ըստ հայ եկեղեցու կանոնական սկզբունքների և ներկայացնում էր արևմտահայ հսկա զանգվածը։

Գրիգոր վարդապետը, առաջ քաշելով Դավթի թեկնածությունը, անուշուշ, հաշվի էր առնում նաև այն հանգամանքը, որ ռուսական կառավարությունը չի կարող անտարբերությամբ անցնել այդ հարցի կողքով, քանի որ չի կամենա կորցնել այն ազդեցությունը և դերը, որ ձեռք էր բերել հայոց եկեղեցու գործերում՝ սատարելով Հովսեփ Արղությանի ընտրությունը։ Նա չէր սխալվում և սկզբնապես կարողացավ օգտագործել այդ հանգամանքը։ Ռուսական կառավարության դիրքորոշումը այդ հարցում խիստ լավ է բնութագրել Ն. Դուբրովինը, որն այդ կապակցությամբ հետևյալն է գրում. «ցանկանալով պահպանել այն ազդեցությունը, որ ձեռք էր բերել Ռուսաստանը վերջին կաթողիկոս Հովսեփի ընտրության ժամանակ և զրկել Բ. Դռանը այդ հարցում նախկին ինքնուրույնությունից, մեր կառավարությունը հայտարարեց, որ ընտրության օրինական լինելը կընդունի միայն այն ժամանակ, երբ փոխադարձ համաձայնություն կկայանա Ռուսաստանի և Բ. Դռան միջև։ Իսկ մեր քաղաքական հարաբերությունները այդ տերության հետ ստիպում էին պետերբուրգյան կաբինետին պնդել այն անձնավորության ընտրության վրա, որին կմատնանշի ռուսական կառավարությունը»[18]։ Ուստի, Հովսեփ Արղության «կտակում» հիշատակված Դավթից և Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Զամաշրճյանից բացի ընդունելի էր համարվում նաև մեկ ուրիշ այնպիսի անձնավորության ընտրությունը, որը «անձնվեր» կլինի դեպի Ռուսաստանը, և բացի այդ, կվայելի իհարկե հայ ժողովրդի հարգանքը, որովհետև այդ պահը պակաս կարևոր նշանակություն չուներ ռուսական կառավարության համար։

Առաջնորդվելով այդ շարժառիթներով, 1801 թվականի ապրիլի 28-ին, հենց այն նույն օրը, երբ Դավիթը բռնությամբ կաթողիկոսական օծում էր ընդունում, Ալեքսանդր 1-ին կայսրը ցուցում էր տալիս Կ. Պոլսում ռուսական լիազոր դեսպանորդ գաղտնի խորհրդական Վ. Ս. Տամարային, որպեսզի հայոց կաթողիկոսների ընտրությունը հաստատելու ռուսական կառավարության ձեռք բերած իրավունքը ապագայում ևս պահպանվի, քանի որ Վրաստանում ստեղծված իրավիճակի կապակցությամբ այն «մեզ համար բավականաչափ կարևոր է»։ Անվերապահորեն

[18] **Դուբրովին Ն.**, նշվ. աշխատ., հ. 2, էջ 232։

ընդունելով Արղությանի «կտակի» իսկությունը, Ալեքսանդր 1-ը մատնանշում էր, որ «կտակի» իրագործումը բուն ընդդիմության է հանդիպել Երևանի մելիքի, յուզբաշիների և մյուս բարձրաստիճան անձանց կողմից, որ նրանք կողմնակից են Դանիել արքեպիսկոպոսի կաթողիկոսանալուն: Բայց որովհետև Դանիելը «այնպիսի նվիրվածություն չունի դեպի Ռուսաստանը, որպիսին ենթադրվում է, որ պետք է ունենա կաթողիկոս ընտրված անձնավորությունը», ապա պետք է ընտրել մեկ այլ անձնավորության: Վերջինս կարող է լինել Դավիթը, որի կուսակցությունը ավելի զորեղ է, և որքանով որ նրա ընտրությանը սատարում է նաև Երևանի խանը, որն «վաղուց արդեն փնտրում է Ռուսաստանի հովանավորությունը»[19]:

Ռուսական կառավարության գործողություններին, սակայն, դիմադրություն են ցույց տալիս նաև Կ. Պոլսի ամիրաները, որոնք միահամուռ պնդում են Դանիելի թեկնածության վրա[20], որի դեմ չէր առարկում նաև Բ. Դուռը, քանի որ նրան ձեռնտու չէր Էջմիածնի գահի վրա հաստատել Ռուսաստանի հովանավորությունը վայելող անձնավորություն:

Ի վերջո ցարական կառավարության և նրա կովկասյան պաշտոնյաների եռանդուն միջամտությունը և Երևանի խանի բռնի գործողությունները տալիս են իրենց արդյունքը. Դավիթը ձեռնադրվում է կաթողիկոս և ստանում Բ. Դռան հաստատումը:

Այդպիսով, այդ շրջանում ռուսական կառավարությունը Դավիթ Ղորղանյանին համարում էր այն միակ անձնավորությունը, որը համապատասխանում էր նրա քաղաքական նպատակադրումներին: Բայց մի քանի ամիս անց ռուսական կառավարությունը կտրուկ կերպով փոխեց իր վերաբերմունքը դեպի Դավիթը: Այդ հարցում վճռական դեր խաղացին Ռուսաստանում գտնվող Լազարյան եղբայրները, որոնք սկսեցին աջակցություն ցույց տալ Դանիելին: Առաջնորդվելով այն ճիշտ մտայնությամբ, որ նման անօրինական միջամտությունները և գործողությունները մեծապես կարող են գցել Էջմիածնի վարկը և հեղինակությունը, նրանք դիմում են ռուսական կառավարությանը և խնդրում աջակցություն ցույց տալ Դանիելին, որպես ազգընտիր կաթողիկոսի:

Լազարյանների թելադրանքով, Դավթի դեմ հատկապես կտրուկ թշնամական դիրք գրավեց ռուսահայերի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսը, որն այդ ուղղությամբ լայն գործունեություն ծավալեց: Դեռևս

[19] Ալեքսանդր 1-ի 1801 թ. ապրիլի 28-ի ռեսկրիպտը գաղտնի խորհրդական Վ. Ս. Տաժարային, քաղված է Դուբրովինի նշված աշխատությունից, էջ 233:

[20] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. ԻԳ:

1801 թվականի ապրիլ ամսին նա գրում էր Կ. Ֆ. Կնորինգին, որ ոչ մի դեպքում չպետք է հաշտվել Գրիգոր վարդապետի, գեներալ Ի. Պ. Լազարևի, Դավիթ արքայորդու, Հովսեփ Արղությանի եղբորորդիներ Բարսեղ և Սողոմոն Արղությանների ցանկության և գործողությունների հետ, որովհետև նրանք դեմ են ընթանում հայ ժողովրդի կամքին: Միաժամանակ նա պահանջում էր, որպեսզի Հովսեփ Արղությանի ունեցվածքը վերադարձվի Էջմիածնի վանքին, որպես միակ ժառանգորդի[21]: Նման ոգով նա դիմումներ է կատարում նաև ռուսական կառավարությանը[22]:

«Այս ամենից խանգարմանց» պատճառը համարելով «բարձումն սիրոյ և համաձայնութեան», պոլսեցիներին հղած իր 1801 թ. սեպտեմբերի 19-ի գրության մեջ հետևյալ ուշագրավ տողերն էր գնում. «Զրկեցաք ի թագաւորութենէ ով տառապեալդ մերազնեայք, և մխիթարութիւն կալաք մեզ հոգեւորապես թէ՝ ունիմք բարձրագահ աթոռ ի Քրիստոսէ հիմնեցեալ՝ աթոռ սրբոյ Լուսաւորչին, որով՝ պարծիմք ի մէջ ամենայն ազգաց: Այժմ նոյն պարծանքն մեր՝ էառ զմեզ նախատինս յաշխարհի»[23]: Այս տողերում արտահայտված է այն մտատանջությունը, որ Էջմիածնի հեղինակության անկումը անուղղակի հարված կարող է հասցնել հայ ժողովրդին, ուստի հարկավոր է Դանիելին օծել կաթողիկոս, թեկուզ և Բագրևանդի Երեք խորան վանքում:

Այս հարցում Լազարյանները և Եփրեմ արքեպիսկոպոսը հաջողության են հասնում, որովհետև 1801 թվականի սեպտեմբերի 28-ին հետևվում է Ալեքսանդր 1-ի նոր ռեսկրիպտը դեսպան Տամարային, որով նա հայտնում էր, որ այն պահից ի վեր, երբ ինքը հանձնարարել էր դեսպանին զբաղվել ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության հարցով Բ. Դռան մոտ, դրությունը էապես փոխվել է, քանի որ Արղության կաթողիկոսի «կտակը» կեղծ է դուրս եկել, իսկ Դավիթ արքեպիսկոպոսը կաթողիկոսական գահ է բարձրացել Երևանի խանի ջանքերով և զինված միջամտությամբ: Ցարը գրում էր, որ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի հայերը միահամուռ կերպով ցանկանում են կաթողիկոս տեսնել Դանիելին, իսկ այդ ամենը այնքան զորեղ դրդապատճառներ են, որ ինքը հարկադրված է նահանջել նախկին ուղեգծից, և թեպետ Դավթի հաստատումը ավարտված գործ է, բայց և այնպես, որքան էլ որ դա Ռուսաստանի համար շահավետ գործ եղած լինի, «Ես ավելի լավ է այս անգամ զոհեմ դրանք, քան արհամարհեմ ժողովրդի ձայնը և ձեռք զար-

[21] «Присоединение...», т. I, док. 18.

[22] Տե՛ս АВПР, ф. «Армянские дела», 1802—1803 гг., д. 185, лл. 22, 102, 103—106, 204—205:

[23] Նույն տեղում, գ. 186, թ. 37ա:

կեմ խախտելու արդարությունը, որ ես ամեն բանից վեր եմ համարում»։ Ելնելով հիշյալ նկատառումներից, Ալեքսանդր 1-ը հանձնարարում էր Տամարային հայտարարել Բ. Դռանը, որ ինքը համաձայն է Դանիելի ընտրությանը և դրանով իսկ «Ճշմարտության հաղթանակին», որի վրա հիմնված են երկու երկրների միջև գոյություն ունեցող բարի դրացիական հարաբերությունները[24]։ Դրան 1802 թվականի մայիսի 19-ին հետևում է Ալեքսանդր 1-ի ռեսկրիպտը Կովկասի կառավարչապետ Կ. Ֆ. Կնորինգին և հրովարտակը Դանիել կաթողիկոսին և ողջ հայ ժողովրդին՝ Դանիելին կաթողիկոսության մեջ հաստատելու վերաբերյալ[25]։

Համոզվելով այն բանում, որ իր գործերը ցանկալի ընթացք չեն ստանում, դեռևս 1801 թվականի նոյեմբերի 6-ին Դավիթը հանգամանալից նամակ է գրում իր երբեմնի աջակից գեներալ Լազարևին և նկարագրում, թե ինչպիսի պարագաներում է ինքը կաթողիկոսական գահին բազմել։ «Հայտնի է նաև Կառլ Ֆյոդորովիչին (Կնորինգին—Վ. Դ.), որ ես Թիֆլիսի բնակիչների և մեր երկրի ժողովրդի ու շատ ուրիշների խնդրանքով եմ այս տեղը ընդունել և ոչ թե ուժի զորությամբ»,— գրում էր Դավիթը[26]։

Դավթի դեմ պայքարը այնքան սուր բնույթ է ընդունում, որ Դանիելի կողմնակիցները դիմում են նաև կանոնական խախտումի և Դանիելին կաթողիկոս են օծում Բագրևանդի Երեք Խորան (Ուշ-Քիլիսա) վանքում, 1802 թվականի մայիսի 25-ին, Աղթամարի Կարապետ կաթողիկոսի, 15 եպիսկոպոսների, 30 վարդապետների և երեք հազար ժողովրդի ու քահանաների մասնակցությամբ[27]։ Այդ գործողությամբ ավելի ևս էր բորբոքվում պայքարը երկու կողմերի միջև, որը երկարաձգվելու էր տարիներ և մեծամեծ վնասներ էր պատճառելու հայ ժողովրդին և եկեղեցուն։

Եվ այս պայքարում տեղի է ունենում մի երևույթ, որը հաճախ է հանդիպում պատմության տարեգրության էջերում։ Եթե նախապես Դանիելի ետևում կանգնած էին ազգային-պահպանողական տարրերը, որոնք երկյուղ էին կրում, որ Ռուսաստանի հովանավորությունը վայելող անձնավորության կաթողիկոս դառնալը կարող է վնասներ պատճառել օսմանյան և պարսից լծի տակ գտնվող հայ ժողովրդական զանգվածներին, իսկ Դավիթը արժանապես վայելում էր ռուսական կառավարության համակրանքը, ապա հիշյալ բոլոր իրադարձություններից հետո տեղի է

[24] АВПР, ф. Армянские дела, 1802—1803 гг., д. 185, л. 19—19 об.
[25] «Присоединение...». т. I, док. 57—58.
[26] АКАК, т. I, док. 676.
[27] Տե՛ս Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 11, վավ. 32բ։

ունենում ուժերի վերադասավորում։ Ազգային-պահպանողական տարրերը աստիճանաբար անցնում են Դավթի թիկունքը, իսկ Դանիելը սկսում է աջակցություն ստանալ այն տարրերի կողմից, որոնք Ռուսաստանի վճռական միջամտությամբ գործուն կերպով կամենում էին վերջ դնել մահմեդական օտարակալության լծին Հայաստանում։ Ազգային-պահպանողական տարրերի համար պարզ է դառնում, որ եթե այս անգամ էլ ռուսական կառավարությունն իր միջամտությամբ հաջողության հասնի և վերստին Դանիելը ստանա կաթողիկոսական գահը, ապա մոտ ապագայում դա կարող է վատթար հետևանքներ ունենալ էջմիածնի համազգային հաստատության համար։ Այս դիտանկյունից ամենևին էլ տարօրինակ չէ, որ Երևանի մելիք Աբրահամ Մելիք-Աղամալյանը, որ դրանից առաջ ամեն կերպ զգուշացնում էր Դավթին տեղի չտալ և չհամաձայնվել կաթողիկոսանալ, այժմ լիովին անցնում է վերջինիս կողմը և դառնում նրա ամենաեռանդուն կողմնակիցներից և պաշտպաններից մեկը։ Այս տեղից որոշակի երևում է, որ ազգային-պահպանողականները խուսափում էին թույլատրել Ռուսաստանի գործուն միջամտությունը հայ եկեղեցու ներքին գործերին, քանի դեռ էջմիածինը գտնվում էր մահմեդական լծի տակ։ Այդ գործում վերջին դերը չխաղաց այն զիջողությունը, որին գնաց ռուսական կառավարությունը Դավթի հարցում, դրանով իսկ կամենալով շահել Դանիելին օժանդակող հայ ժողովրդական լայն զանգվածների համակրանքը։ Այդ տարիների Դավթի գրությունները ոչ մի կասկածի տեղիք չեն տալիս, որ նա դեռևս հաստատապես կանգնած էր ռուսասիրական դիրքերում և չէր կարողանում ըմբռնել, թե ինչո՞ւ է զրկվել ռուսական աջակցությունից։

Որքանով Դավթին սկսել էին մեղադրել պարսկասիրության մեջ, որ իբր թե ունի պարսկական կողմնորոշում, նա ռուսական կառավարությանն հղած իր բոլոր նամակներում և գրություններում ճգնում էր ապացուցել, որ ինքը հակառուսական դիրքավորում չունի, որ նա հավատարիմ է ռուսական կայսրին։ Դավիթը աշխատում էր համոզել ռուսական իշխանություններին, որ պետք է կաթողիկոսի անփոփոխ մնալու հայ եկեղեցու կանոնական սկզբունքը պահպանել, հետևաբար, քանի որ ինքն արդեն կաթողիկոս է օծված, ապա պետք է հաշտվել այդ իրողության հետ։ Այդ առնչությամբ 1802 թվականի մարտ ամսին նա հետևյալն էր գրում Վրաստանի կառավարիչ Պ. Ի. Կովալենսկուն, որն, ի միջի այլոց, չնայած կենտրոնական կառավարության դիրքորոշմանը ընդդեմ Դավթի, շարունակում էր վերջինիս գաղտնի աջակցություն ցույց տալ, ինչպես և Կ. Պոլսի ռուսական դեսպան Տամարան։ Նշելով այն պարագան, որ ինքը սկզբում վայելել է ռուսական հովանավորությունը, Դավիթ-

թը հարց էր տալիս. «ամենահզօր տէրութիւնդ այդ պանծալի՝ ընդ ծագս երկրի հռչակեալ է յամենից պէսպէս գովելի բարեկարգութեամբք և յատկապէս երիւք ձրիւք, այսինքն ի խոստումնս իւր է հաստատ, ի դատաստանս արդարակշիռ, ի ստորադրեալսն իւր մարդասէր, և զիւրաքանչիւր զազգս թողու զի ըստ ծիսի և օրինի իւրեանց կառավարեսցեն, զի՞ է ապա որ մեզ, ապաւինելոցս ի քաղցր հովանաւորութիւն իւր՝ այդոցիկ մարդասիրութեանց ներհակն հանդիպի։ Քանզի հզօր տէրութիւնդ այդ բարեհաճեցաւ նախ ընդ հայրապետութիւն մեր և զՓարման հաստատութեան ետ հանել յանուն մեր, այժմ հավատալով բանից նախանձաւորաց հրամայեալ է յանուն Դանիէլ վարդապետին հանել զՓարմանն»[28]։

Պետք է նկատել, որ Դավիթը իրավացիորեն մատնանշում էր այն բոլոր վնասները, որոնցով հղի էր նոր կաթողիկոսի հաստատումը այն դեպքում, երբ կենդանի էր հինը, թեկուզ և ապօրինի կերպով ընտրվածը։ Նույն նամակում հետևյալ ուշադրության արժանի տողերը կան. «...հայք զօրէնս ունին անփոփոխ զօծեալ հայրապետն պահել յաղագս զանազան պատճառաց՝ քանզի աթոռս այս է ի մէջ երից տէրութեանց՝ ռուսաց, օսմանցւոց և պարսից, ուրեմն եթէ մի տէրութիւն կամիցի զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել. յայնժամ և պարսիկք, որք մինչև ցայժմ անփոփոխելի գիտեն զհայրապետն հայոց, ի տեսանելն միանգամ զփոփոխութիւն ինչ, և ինքեանք յաղագս կաշառաց և հարկապահանջութեանց յամիսն մի անգամ սկսանին փոխել զհայրապետն, և այսպես բազում խայտառակութիւնք յառաջ գան անտի. և մեծ դրամավատնութիւնք, և լինելոց է խաղալիք, և ծաղր ամենեցուն հայրապետութիւն ազգիս, և փակեալ լինելոց են դրունք խղճալի տանս սակս ծանր պարտուց. և տէրութիւնդ այդ որ առանց քննութեան և վերահասութեան կամի փոփոխել զօծեալ հայրապետն հաւատալով բանից թշնամեացն ճշմարտութեան և այնու կարծէ զբարիս առնել աթոռոյս և ազգին, աւերութեան լինի պատճառ յայնժամ...»[29]։

Որքան էլ որ Դավիթը մեղավոր էր ստեղծված իրադրության մեջ, նրա այս տողերը լի են ճշմարտությամբ, քանի որ Էջմիածնի աթոռը իսկապես կանգնեց ճգնաժամային կացության առջև հետագայում, Եփրեմի կաթողիկոսության շրջանում, երբ Երևանի սարդարը սանձարձակ կերպով էր վարվում Էջմիածնի և նրա միաբանության ու գլխի հետ և անասելի դրամապահանջություններով հասցրել էր հայրապետությունը վերջին ծայր խեղճության և անգամ ուզում էր նոր կաթողիկոս օծել տալ։ Թեև նախկինը ողջ էր։

Մեծ հետաքրքրություն է առթում նաև 1804 թվականի հունիս ամսին վերաբերող Դավթի նամակը Պ. Դ. Ցիցիանովին, որով ուրախություն էր հայտնում, որ իմացել է «զբարելուր և զախորժակ համբաւ փափագելի գալստեան ձերոյ յայցելութիւն և ի փրկութիւն համօրէն սեռականութեան տոհմիս Յաբեթեանս, և մանաւանդ զլուր քրիստոսաձիր մեծամեծ յաղթութեան անպարտելեացդ՝ արդարև որպէս թէ նորոգ իմն կենսաւորեալ ի մեռելութենէ զուարճացաք և բերկրեցաք մինչև զպարարումն ոսրեալ ի մեռելութենէ զուարճացաք և բերկրեցաք մինչև զպարարումն ոսկերաց, և մեծաւ գոհունակութեամբ փառս վերառաքեցեալ առ բարձրեալն աստուած՝ մաղթեցաք ի նմանէ զբազմապատիկ յաւելումն կենաց և բարերջանկութեան յանգին և ի հասարակաօգուտ կեանս կայսերն մեծի, և ձերինդ յարգութեան»[30]։ Եվ միայն Ցիցիանովի երևանյան առաջին անհաջող արշավանքից հետո էր, երբ Էջմիածնի վանքի սրբությունների և հարստության մի մասը տարվեց Թիֆլիս, որ Դավիթը վերջնականապես հուսախաբ եղավ և համոզվեց, որ ռուսներից ոչ մի ակնկալիք ունենալ չի կարող, որ մինչ այդ իր գործադրած բոլոր ջանքերը ապարդյուն են անցել։ Դավիթը չէր ուզում հաշտի նստել այն իրողության հետ, որ Դանիելի օծմամբ և հաստատմամբ կաթողիկոսական հարցը դուրս է եկել եկեղեցական շրջանակներից և քաղաքական ու դիվանագիտական պայքարի առարկա է դարձել հակամարտ տերությունների միջև։ Դիվանագիտական այդ պայքարում հաղթանակը կենսական անհրաժեշտություն ունեցող խնդիր էր կողմերից յուրաքանչյուրի համար, վարկի հարց էր։ Եվ զարմանալի չէր, որ հայոց կաթողիկոսի հարցը այնքան մեծ տեղ էր գրավում հատկապես Ռուսաստանի արևելյան քաղաքականության մեջ 19-րդ դարի սկզբին։

1801 թվականի սեպտեմբերի 28-ի ցարական ռեսկրիպտից հետո Կովկասի ռուսական իշխանությունները իրենց բոլոր ջանքերն ուղղեցին Դանիելին հայրապետական աթոռի վրա հաստատելուն. 1802 թվականի ապրիլի 18-ին Դանիելին ուղարկած իր նամակում Կ. Ֆ. Կնորինգը հավաստիացնում էր, որ ամեն կերպ աջակցելու է նրան, որպեսզի նա բարձրանա կաթողիկոսական գահը[31]։ Կնորինգը ջանքեր էր թափում նաև, որպեսզի Երևանի Մամադ խանին հակի դեպի Դանիելը և ապահովի նրա աջակցությունը Դանիելին կաթողիկոսացնելու հարցում[32]։

---

[28] «Դիվան հայոց պատմության», գիրք Ջ, վավ. ՃԿՋ։

[29] Նույն տեղում։

[30] Նույն տեղում, վավ. ՃՀԵ։

[31] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1802 г., д. 22, лл. 38 об.—40.

[32] АКАК, т. I, док. 677.

Սակայն մինչ այդ դեռևս չկար Դանիելի կաթողիկոսությունը հաստատող ցարական հրովարտակ։ Մինչև 1802 թվականի մայիսի կեսերը ռուսական կառավարությունը կամենում էր ստանալ Երևանի խանի համաձայնությունը Դանիելի կաթողիկոսության հարցում և դրանից հետո միայն հրովարտակ հրապարակել, խուսափելու համար տհաճ դրության մեջ ընկնելուց։ Բայց տեսնելով, որ հազիվ թե հնարավոր լինի ստանալ Մամադ խանի համաձայնությունը Դանիելի հարցում և օգտվելով ռուսահայերի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսի դիմումից վիցե-կանցլեր Ա. Բ. Կուրակինին՝ էջմիածնում ստեղծված կացության վերաբերյալ և նրա խնդրանքից՝ հրովարտակ արձակել Դանիելի անունով, որով նա կճանաչվեր ամենայն հայոց կաթողիկոս[33], ռուսական կառավարությունը որոշեց դիմել առավել վճռական և գործնական քայլերի։

1802 թվականի մայիսի 13-ին Ալեքսանդր 1-ը հատուկ հրովարտակ ուղարկեց Երևանի խանին, որում ասված էր, որքանով որ սուլթանական բերաթով և ամբողջ հայ ժողովրդի ու էջմիածնի միաբանության ցանկությամբ Դանիել արքեպիսկոպոսը ճանաչված և հաստատված է կաթողիկոս, ապա պետք է որ խանը հովանավորի և պաշտպանի նրան[34]։

Դրանից 6 օր անց, մայիսի 19-ին, չսպասելով այլևս Երևանի խանի պատասխանին, հետևեց ցարական հրովարտակ «ազնվագույն պատրիարք Դանիելի և ողջ ազնիվ հայ ժողովրդի» անունով, որով Դանիելը հաստատվում էր ամենայն հայոց կաթողիկոս[35]։ Այս փաստով ռուսական կառավարությունը հայտարարում էր իր վճռականությունը՝ կաթողիկոս ճանաչել միայն Դանիելին և այն օգտագործել իբրև քաղաքական ազդակ՝ Երևանի խանի վրա ճնշում գործ դնելու համար։ Սակայն Մամադ խանը, ըմբռնելով այդ հանգամանքը, ոչ միայն անհողդողդ մնաց, այլև իր հերթին որոշեց օգտագործել այդ ամենը՝ դիվանագիտական լարախաղացության նպատակներով։

Քանի որ կայսերական հրովարտակը ոչ մի տպավորություն չգործեց Մամադ խանի վրա, գեներալ Կնորինգը 1802 թվականի հունիսին տիտղոսավոր խորհրդական Գենցաուրովին ուղարկեց խանի մոտ՝ բանակցելու Դանիելին կաթողիկոսացնելու հարցի շուրջը։ Ինչպես և պետք էր սպասել, ի նկատի ունենալով Երևանի խանի որդեգրած վարքագիծը Ռուսաստանի նկատմամբ, որին մենք անդրադարձանք վերևում,

[33] АВПР, ф. Армянские дела, 1802—1803 гг., д. 185, лл. 103—106 об.
[34] АКАК, т. I, док. 679.
[35] АКАК, т. I, док. 1037.

Գենցաուրովի միսիան ձախողվեց, Երևանի խանը հրաժարվեց կատարել ռուսական գլխավոր հրամանատարի խնդրանքը[36]։

Ռուսական կառավարությանը օրը օրին պարզ էր դառնում, որ կաթողիկոսական խնդիրը երկարաձիգ բնույթ է ընդունում և որ անհրաժեշտ է փոքրիշատե ընդունելի ելք գտնել ստեղծված իրավիճակից։ Բանը նույնիսկ այնտեղ հասավ, որ վիցե-կանցլեր իշխան Ա. Բ. Կուրակինը խորհուրդ էր տալիս Դանիելին (1802 թ. օգոստոսի 13-ին) հաշտվել «հակառակորդ կուսակցության» հետ, թեև ինքն էլ պարզ չէր պատկերացնում, թե ինչ հողի վրա պետք է տեղի ունենա այդ հաշտությունը[37]։

Բացի այդ, ինչպե՞ս կարող էր Դանիելը հաշտվել իր հակառակորդների հետ և ներել նրանց, երբ Դավթի կուսակից Աբրահամ Գոլյան վարդապետը և Երևանի խանի պաշտոնյա Շիրաշիբեկը, Բայազեդի փաշային 75 քսակ դրամ վճարելով, բռնությամբ Դանիելին իր փոքրավորների հետ էջմիածին էին տարել, արգելափակել փոքր Ղազարապատում և պահանջում էին հրաժարական տալ ու հանձնվել Դավթի ողորմածությանը, երբ նա ստիպմամբ հրաժարական էր գրել[38]։ Այստեղից պարզ է դառնում, որ երկու կողմերի միջև պայքարն այնքան էր խորացել, որ հազիվ թե կարող էր խոսք լինել զույգ հակառակորդների հաշտության մասին։ Կրքերի բորբոքմանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ ամեն մի փոքրիշատե աչքի ընկնող ռուս աստիճանավոր իր պարտքն էր համարում խառնվել կաթողիկոսական հարցին։ Եվ այդ երևույթը այնքան լայն չափեր էր ընդունել, որ 1802 թ. օգոստոսին Եփրեմ արքեպիսկոպոսը հարկ էր համարում Ս. Լ. Լաշքարյովի միջոցով դիմել արտաքին գործերի մինիստրությունն և խնդրել, որպեսզի ռուս պաշտոնատար անձանց արգելվի միջամտել հայ եկեղեցու ներքին գործերին՝ Դանիելի և Դավթի վեճի կապակցությամբ[39]։ Այս ամենն էր պատճառը, նաև, որ 1802 թ. հավանաբար դեկտեմբեր ամսի վերջերին կանցլեր Ա. Ռ. Վորոնցովը Ալեքսանդր 1-ին ուղղված իր զեկուցագրում հարկ էր համարում մատնանշել, որ սկզբից ևեթ կարիք չկար խառնվել հայոց կաթողիկոսի ընտրություններին, բայց քանի որ արդեն Դանիելի անունով հրովարտակը տրված է, ուստի պետք է պնդել, որ Բ. Դուռը նախկինի պես Դանիելին ճանաչի կաթողիկոս[40]։

1803 թ. հունվարին Վրաստանի նոր գլխավոր հրամանատար Պ. Դ.

[36] АКАК, т. I, док. 684, 842; ЦГИА Груз. ССР, ф. 2, 1802 г., д. 27, л. 22.
[37] АВПР, ф Армянские дела, 1802—1803 гг.. д. 185, л. 146.
[38] Նույն տեղում, թ. 206—208բ։
[39] «Присоединение...», т. I, док. 86.
[40] АВПР, Армянские дела, 1802—1803 гг., д. 185, лл. 237—238.

Ցիցիանովը էշիկաղասիբաշի իշխան Թոմաս Օրբելյանին հատուկ հանձնարարությամբ Երևան է ուղարկում, որպեսզի խանին հակի Դանիելին կաթողիկոսացնելու կողմը[41]։ Սակայն այս փորձն էլ հաջողությամբ չավարտվեց։ Օրբելյան իշխանը իր հետ բերեց Դավթի թուղթը գեներալ Ցիցիանովին, որով շնորհավորելով նրա գալուստը, գրում էր, որ «կոչիլն մեր յայս աստիճան հայրապետության եղև ստիպմամբ և յորդորանօք բոլոր բնակչացն քաղաքիդ (Թիֆլիս—Վ. Դ.) հայոց և վրաց հանդերձ ժամանակի կառավարչի, կողմնակալ պարոն Գառլ Ֆէօդրիչ և Իւան Պետրովիչ Լազրովի յատուկ թղթովքն և յուսադրութեամբքն», որ բոլոր անհրաժեշտ թղթերն ինքն ունի և կարող է «յատուկ եպիսկոպոսաւ առաքել», որպեսզի նա հասու լինի բոլոր անցուդարձին և հայտնի կայսրին ողջ ճշմարտությունը «որպէս զի արդարադատ տէրութիւն այն, և ամենայն մեծամեծք նորին, և դուք իսկ ազատ լինիջիք ի բամբասանաց և ի խղճահարութենէ»։ Այդ ամենից հետո Դավիթը խնդրում էր Ցիցիանովին, որպեսզի պաշտպան կանգնի «սրբոյ աթոռոյս վնասակրի, և սուրբ օրինաց մերոց, և ի մխիթարութիւն վշտակիր սրտի մերում»[42]։ Բայց Դավթի ճիգերը ևս զուր էին։ Երկու կողմերն էլ անզիջում դիրք էին գրավել միմյանց նկատմամբ։

Թոմաս Օրբելյանի բանակցություններից առաջ, դեռևս 1802 թվականի հոկտեմբերի 21-ին կանցլեր կոմս Ա. Ռ. Վորոնցովը գրություններ էր գրել Երևանի և Նախիջևանի խաների անուններով և կրկին առաջարկել, որպեսզի սատարեն Դանիելի կաթողիկոսանալուն։ 1803 թվականի փետրվարի 7-ին Ցիցիանովը կանցլերի գրությունները իր համանման կից նամակով ուղարկում է Մամադ և Քալբալայի խաներին[43], որոնցից մեկ ամիս անց, մարտի 7-ին, ստանում է պատասխան[44]։ Ցիցիանովի անունով ուղարկված պատասխանում հայտնվում էր, որ Դանիելին համաձայն են կաթողիկոս ճանաչել, եթե փոխարենը Ցիցիանովը ճանաչի և Ախալցխա տանի այնտեղից վտարված Շերիֆ փաշային։ Այդ պահանջը կատարել անհնար էր, քանի որ Թուրքիայի հետ Ռուսաստանի հարաբերություններն այդ շրջանում բարեկամական էին, իսկ Շերիֆ փաշան ոխերիմ թշնամի էր ռուսներին և օսմանյան Բ. Դռան կողմից խռովարար էր հայտարարված։ Ցիցիանովի կարծիքով «դատողության հետ կապ չունեցող» այդ պահանջը արված էր կամ Դավիթ կաթողիկոսի դրդմամբ

[41] «Присоединение...», т. I, док. 117.
[42] «Դիվան հայոց պատմության», գիրք Է, վավ. ԾԾԴ։
[43] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1803 г., д. 58, лл. 395 об.—396.
[44] АВПР, ф. Армянские дела, 1802—1803 гг., д. 185, л. 268—268 об.

և կամ Բաբա խանի թելադրանքով, որովհետև Մամադ խանի կինը և զավակները պատանդ էին պարսից շահի մոտ։ Ցիցիանովը գտնում էր, որ «Ն. Կ. Մ. կամքը կատարելու միակ հուսալից միջոցը զենքի ուժն է», իսկ ապրիլ ամսին ինքը մտադիր է Երևանի խանության սահմաններում ռազմական գործողություններ ծավալել[45]։ Անպտուղ դիվանագիտական գրագրությունները շարունակվում են դրանից հետո ևս, բայց նորից հաջողության չեն հանգեցնում։ Գործին չօգնեց նաև Ցիցիանովի ահեղաստաստ դիմումը Երևանի հայերին, որով նա պահանջում էր կամ կաթողիկոս ճանաչել Դանիելին և կամ ինքը հրի ու սրի կհանձնի «նրանց տընները և ունեցվածքը»[46]։

Դավթի կողմնակիցներն էլ, իհարկե, ձեռնածալ նստած չէին և գործում էին հօգուտ նրա։ Դավթին աջակցում էին հատկապես Կ. Պոլսի հայոց մեծամեծները՝ Հովհաննես Ջամաշըրճեան պատրիարքի գլխավորությամբ։ Նրանք ընդվզում էին մասնավորապես Եփրեմ արքեպիսկոպոսի «խռովարկութենէ» և Կ. Պոլսում ռուսական դեսպան Իտալինսկուն խնդրում էին, որպեսզի վերջինս էլ իր հերթին «ի դիմաց մեր խնդրեսցես ի կայսերական մեծութենէն՝ գթալ առ խղճալի ազգս մեր և զամենայն ոտառապակրութիւնս մեր՝ ի բազմակնիք մահսերէն քննել և ըստ այնմ ողորմութիւն արարեալ՝ խաղաղութիւն առնել խռովելոցս. հաստատուն և անփոփոխ պահելով զկաթողիկոսութիւն տեառն Դաւթի՝ մինչև ցմահն» և «մի մատուցանել մաքուր լսելիսն իւր՝ բանից խռովչացն»[47]։ Այնուհետև Հովհաննես պատրիարքը և Կ. Պոլսի հայոց մեծամեծները մատնանշում էին, որ լինելով օսմանյան «հզոր» կայսրության հպատակներ, չեն հարձակվում բողոքել նրանից համառուսական «ամենողորմ» կայսերը, իսկ Եփրեմ արքեպիսկոպոսը, գիտենալով իրենց նեղ վիճակը, իր գործողություններով օրը օրին խորացնում է աղետը սբ. Էջմիածնի գլխին և բոլոր հայոց ազգի մեջ[48]։

Ելնելով Կ. Պոլսի հայերի մեջ տիրող մտավիճակից, Իտալինսկին 1803 թվականի հունիսին գրում էր կանցլեր Ա. Ռ. Վորոնցովին և հայտնում, որ Պետերբուրգից ստացվող Եփրեմ արքեպիսկոպոսի նամակները, որոնցով նա սպառնում է տապալել Դավթին, մեծ շփոթություն են հարուցում տեղի հայոց մեջ։ Իտալինսկին այնուհետև շարունակում էր, որ ինքը նամակներ և համախոսական գրություններ է ստացել Կ. Պոլսի հայոց պատրիարքից, Էջմիածնի միաբանությունից, Դավիթ կաթողիկո-

[45] Նույն տեղում։
[46] «Присоединение...», т. I, док. 137.
[47] АВПР, ф. Армянские дела, 1803—1809 гг., д. 186, л. 7.
[48] Նույն տեղում, թթ. 9—10։

սից, ինչպես նաև ստացել է Դանիելի հրաժարականը, որով վերջինս իր օծումը հակառակ էր համարում հայոց եկեղեցու կանոններին և դրանք բոլորն ուղարկում է Պետերբուրգ ի քննություն։ «Այս բոլոր թղթերի բովանդակությունը,— եզրակացնում էր Իտալինսկին,— կասկածի տեղիք չի տալիս, որ հայերի մեջ հուզում կա և որն է դրա պատճառը, և, բացի այդ, վկայում է հայերի համընդհանուր երկյուղած սիրո և կապվածության մասին դեպի Դավիթ կաթողիկոսը և քրիստոնյությունը Ռուսաստանի նկատմամբ»[49]։ Ելնելով այս ամենից, Իտալինսկին նպատակահարմար էր համարում հաստատել Դավթի կաթողիկոսությունը։

Դրանից առաջ, դեռևս 1803 թվականի փետրվարի 10-ին, Էջմիածնի տասներկու ավագ արքեպիսկոպոսներ դիմել էին Ալեքսանդր 1-ին և հայտնել, որ բազմաթիվ աղերսագրերը մնացել են անպատասխան և որ կայսեր մտադրությունը՝ Դավթի փոխարեն հաստատել Դանիելին «ոչ թէ ողորմութիւն և բարերարութիւն լինելոց է, այլ աւերումն աթոռոյս, փեռեկտումն ազգիս, և եղծումն օրինաց և կանոնաց մերոց»[50]։

Այս և համանման շատ ուրիշ փաստեր վկայում են, որ բուն Հայաստանում և Կ. Պոլսում գտնվող շատ գործիչներ, թեկուզ և համակրելիս չլինեին Դավթին, առաջնորդվելով ազգի միասնությունը և հայրենի օրենքներն ու կանոնները անաղարտ պահպանելու մտայնությամբ, չէին ցանկանում, որպեսզի Դավիթը գահընկեց արվի և փոխարինվի Դանիելով։

Դրան հակառակ, Եփրեմ արքեպիսկոպոսը և Դանիելի այն բոլոր կողմնակիցները, որոնք հիմնականում գործում էին ռուսական կայսրության սահմաններում, երբեմն դիմում էին այնպիսի քայլերի, որոնք անպայման խորացնելու էին «փեռեկտումը» և կարող էին հանգեցնել շատ անցանկալի հետևանքների։ Այսպես, 1803 թվականի փետրվարի 1-ին, Պետերբուրգում եղած ժամանակ, Արտաքին գործերի մինիստրության Ասիական դեպարտամենտի աշխատակից Ս. Լ. Լաշքարյովի հետ ունեցած հանդիպման ժամանակ Եփրեմ արքեպիսկոպոսը առաջարկում էր որևէ կերպ հասնել այն բանին, որպեսզի Դանիելը ազատվի Էջմիածնի բանտարգելությունից և բնակություն հաստատի Թիֆլիսում։ Իր կողմից Լաշքարյովը ավելացնում էր, որ դա խիստ ձեռնտու կլինի ռուսական կառավարությանը, որովհետև այդ դեպքում կսկսեն Վրաստան «ներհոսել պարսից, թուրքաց և Հնդկաստանի հայերը» իրենց ունեցվածքով և դրանով իսկ կբազմացնեն կայսրության «նոր հպատակների» թիվը[51],

[49] АВПР, ф. Армянские дела, 1803—1809 гг., д. 186, л. 1—1 об.

[50] Նույն տեղում, թ. 70։

[51] АВПР, ф. Армянские дела, 1802—1803 гг., д. 185, лл. 265—267.

Դանիելի կողմնակիցների գործողությունները առայժմ ոչ մի արդյունք չէին տալիս։ Ավելին, երևանյան առաջին արշավանքի ձախողումից հետո Դանիելը աքսորվեց Պարսկաստան, սկզբում Թավրիզ, ապա Մարաղա, իսկ Դավիթը դրանով ավելի ամրապնդեց իր դիրքերը կաթողիկոսական գահի վրա։ Սակայն ռուսական կառավարության գործողությունների պլանը, ինչպես տեղեկացնում էր Ցիցիանովի մահից հետո Վրաստանում գլխավոր հրամանատար նշանակված Ի. Վ. Գուդովիչը 1806 թվականի նոյեմբերի 23-ին Դանիելին գրած նամակում, մնում էր նույնը, այսինքն «հանելով նրան բանտարգելությունից, վերականգնել բոլոր իրավունքները»[52]։

Եվ իսկապես, Գուդովիչը ևս իր նախորդների նման շարունակում էր վերոհիշյալ ոգով բանակցել պարսից կառավարության հետ, որպեսզի Դանիելը հաստատվի կաթողիկոսական աստիճանում։ Դանիելին գրած իր նամակից տաս ամիս անց, 1807 թվականի սեպտեմբերի 23-ին Գուդովիչը հայտնում էր արտաքին գործերի մինիստր Բուդբերգին, որ «իր ներշնչմամբ» Դանիելը ազատված է բանտարկությունից և վերականգնված կաթողիկոսական գահի վրա[53]։ Այստեղ Գուդովիչը չափազանցում էր, անշուշտ, իր ծառայությունը այդ գործում։

Այդ ժամանակ պարսկական կառավարությունը ինքն էր շահագրգռություն հանդես բերում Դանիելին կաթողիկոսական գահին բազմեցնելու հարցում։ Ինչպես հայտնի է, 1807 թվականին Երևանի սարդար էր նշանակվել կաջարների ցեղին պատկանող Հյուսեին Ղուլի խանը և ըստացել էր լայն լիազորություններ։ Նոր սարդարի նպատակն էր ամեն կերպ զորացնել Երևանի խանությունը և այն դարձնել մի հզոր պատվար ռուսական առաջխաղացման դեմ։ Բայց 1804—1805 թվականների պատերազմական գործողությունների ժամանակ մեծ թվով ազգաբնակչություն էր տարագրվել Վրաստան և Երևանի խանության բազմաթիվ գյուղեր ավերվել ու քարուքանդ էին եղել։ Որքանով որ տարագրվածների ճնշող մեծամասնությունը հայեր էին, ինչպես Հյուսեին Ղուլի խանը, այնպես էլ թագաժառանգ Աբբաս Միրզան հույս ունեին, որ եթե ռուսական հովանավորյալ Դանիելը լինի կաթողիկոս, ապա Անդրկովկասի ռուսական իշխանությունները կընդառաջեն նրան և թույլ կտան, որպեսզի տարագրվածները վերադառնան իրենց օջախները։ Դանիելի առաջին գործերից մեկը եղավ այդ հարցի հարուցումը, որը ոչ մի արդյունք չտվեց։

[52] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1806 г., д. 120, л. 175—175 об.

[53] «Присоединение...», т. I, док. 369.

Այս զուտ տնտեսական շահագրգռության կողքին կար ավելի կարևոր քաղաքական շահագրգռվածությունը։ Ինչպես կտեսնենք մի փոքր հետո, Աբբաս Միրզան վճռել էր քաղաքական նոր ընթացք որդեգրել հայերի նկատմամբ, որովհետև տեսնում էր, որ նրանց համակրանքը հավատակից Ռուսաստանի կողմն է։ Դանիելին կաթողիկոսացնելով, նա հայ ժողովրդական զանգվածների և ղեկավար շրջանների մոտ այն պատրանքն էր ուզում ստեղծել, որ առաջնորդվում է հայ ժողովրդի ցանկություններով և շահերով։

Այսպիսով, Դավթի և Դանիելի յոթամյա համառ և երբեմն անխնա պայքարից հետո, վեճը լուծվեց հօգուտ երկրորդի։ Սակայն բանտարգելության մեջ անցկացրած տարիները քայքայել էին ծերունի և հիվանդ Դանիելի առողջությունը։ Գտնվելով արդեն մահվան մահճում, 1808 թվականի հուլիսին նա դիմեց Ալեքսանդր 1-ին և խնդրեց իրեն հաջորդ նշանակել ռուսահայերի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսին[54]։ Պարադոքսային է, որ այն անձնավորությունը, որը զոհ էր գնացել հրապարակ նետված մի կեղծ կտակի, այժմ ինքն էր կտակում կաթողիկոսական գահը։ Թերևս այդ պահը իր աչքի առաջ ուներ նա, քանի որ Եփրեմի հաջորդելը ջանում էր հիմնավորել այն փաստով, որ վերջինս իր հետ միասին ընտրված է եղել թեկնածու[55]։

Ինչևէ, 1809 թվականի սեպտեմբերի 30-ին, արդեն Դանիելի մահից հետո, հրապարակվեց Ալեքսանդր 1-ի հրամանագիրը, որով կաթողիկոս էր հաստատվում Եփրեմ արքեպիսկոպոսը[56]։ Այս անգամ արդեն ռուսական կառավարության այդ գործողությունը ոչ մի դիմադրության չհանդիպեց պարսկական կառավարության կողմից։ Նույն 1809 թվականի աշնանը Երևանի սարդար Հյուսեին Ղուլի խանը հրավիրագիր ուղարկեց նորահաստատ կաթողիկոսին[57]։ Եփրեմի կաթողիկոսանալը նշանակալից քաղաքական հաջողություն էր ռուսական կառավարության համար, որովհետև նորոգ կաթողիկոսի համակրանքն ամբողջովին Ռուսաստանի կողմն էր։

Բայց համաձայնելով Եփրեմի կաթողիկոսության հետ, պարսկական կառավարությունն էլ իր ուրույն քաղաքական նպատակներն էր հետամտում։ 1810 թվականի դեկտեմբերի 5-ին Եփրեմ կաթողիկոսը Ալեքսանդր 1-ին գրում էր, որ Աբբաս Միրզան այնքան բարեհաճ է գտնվել դեպի ինքը, որ ընծաներից բացի նշանակել է նաև տարեկան ռոճիկ։ Այս ամենը խոսում է այն մասին, որ Աբբաս Միրզան իսկապես ջանում էր էջմիածնի միջոցով քաղաքական բեկում առաջացնել հայ ժողովրդի տրամադրությունների մեջ։ Բայց այդ բոլորը զուր ջանքեր էին, մանավանդ որ բախվում էին խանական կառավարության կամայականություններին և ի դերև էին անցնում։

Իր կաթողիկոսության առաջին տարիներին Եփրեմը նշանակալից քաղաքական դեր խաղաց, հանդես գալով իբրև միջնորդ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև տեղի ունեցող հաշտության բանակցություններում և քիչ դեր չխաղաց Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքման գործում[58]։

Այսպիսով, կաթողիկոսական գահի համար մղված պայքարը երկու կողմնորոշումների պայքար չէր, ինչպես որ կարծել են որոշ պատմաբաններ, այլ երկու մտայնությունների, որոնք հետապնդում էին միևնույն քաղաքական նպատակը՝ Հայաստանի ազատագրումը մահմեդական օտարակալության լծից, բայց հետևում էին տարբեր ընթացքի։ Ազգային-պահպանողական ուղղությունը կողմնակից լինելով զգույշ գործելակերպի, իր կողմնակիցների հիմնական մասը հավաքագրում էր հայության այն շրջանակներում, որոնք գտնվում էին շահական և տուլթանական լծի տակ, հետևաբար և ավելի պարզորոշ էին պատկերացնում իրերի վիճակը։

Եվ ամենևին պատահական չէր, որ բուրժուական մտայնությունը ներկայացնում էին ռուսական կայսրությունում և Հնդկաստանում բնակվող հայերը, որոնք ընդգրկվել էին կապիտալիստական զարգացման հորձանուտի մեջ և կողմնակից էին, որպեսզի վճռական գործողություններով օր առաջ ազատագրված տեսնեն իրենց հայրենիքը։

Տարբեր կողմնորոշումների առկայության տպավորություն է գործում միայն այն հանգամանքը, որ կաթողիկոսական գահի համար մղված պայքարը դադարեց միայն հայ եկեղեցու և հայ ժողովրդի ներքին գործը լինելուց, այլ դարձավ միջազգային դիվանագիտական պայքարի առարկա։ Եվ քանի որ շահագրգռված պետություններից յուրաքանչյուրը սկսեց հովանավորել թեկնածուներից մեկին, ապա արտաքնապես ըստացվեց նման տպավորություն, որը սակայն իրերի բուն դրությանը չէր համապատասխանում։

Հաջորդ գլխում, որտեղ խոսքը լինելու է տվյալ ժամանակաշրջանի հայ ազատագրական մտքի մասին, առնչված հայ-ռուսական հարաբե-

---

[54] Նույնը, հ. I, վավ. 410։
[55] Նույնը, հ. I, վավ. 410։
[56] АКАК, т. IV, док. 254.
[57] Նույն տեղում։

[58] «Присоединение...», т. I, док. 487, 490, 491.

ությունների պրոբլեմին, մենք կտեսնենք, որ երկու ուղղություններն էլ իսկապես միասնական էին և համամիտ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու հարցում և երևան էին բերում սոսկ տակտիկական տարբերություններ։

4. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՈԳՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Ռուսական զորքերի հայտնվելը Կովկասյան լեռնապարից այս կողմ և Վրաստանի միացումը Ռուսաստանին, բնականաբար, ուրախություն պատճառեց իր ազատագրության համար մարտնչող հայ ժողովրդին։ 19-րդ դարի առաջին տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ հեռու չէ Արևելյան Հայաստանի խանական ատելի լծից ազատագրման ցանկալի պահը։ Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչները անհամբերությամբ էին սպասում այն պահին, երբ կընկնեին դարավոր ստրկության շղթաները։ Եվ որովհետև ազատագրական ակնկալությունները հիմնականում խարսխվում էին Ռուսաստանի օգնության վրա, ուստի ռուսական զենքի ամեն մի նոր հաջողություն խանդավառ արձագանք էր գտնում հայկական շրջաններում։

Բայց դրա կողքին կային հարցեր, որոնք չէին կարող չհուզել հայ ղեկավար շրջաններին, հարցեր, որոնցից կախված էր հայ ժողովրդի և Հայաստանի հետագա պատմական ճակատագիրը։ Այդ հարցերից գլխավորը Հայաստանի ապագա կացության հարցն էր։ Եթե այդ հարցը որոշակի էր 18-րդ դարում, ապա անորոշության մշուշով պատվեց 19-րդ դարասկզբին, երբ Վրաստանը կորցրեց իր պետականությունը և միացվեց Ռուսաստանին։ Մինչև ռուս-պարսկական 1826—1828 թվականների պատերազմը հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներից և ոչ մեկի մոտ մենք հստակ պատկերացում չենք տեսնում Հայաստանի կացության հարցում, և միայն հիշյալ պատերազմի տարիներին էր, որ հայկական պետականության վերականգնման միտքը փոքրիշատե ձևակերպում ստացավ։

Թողնելով ապագային այդ կենսական հարցի լուծումը, հայ ազատագրական գործիչները առաջին հերթին կամենում էին թոթափել խանական լուծը, և ժողովրդի համար զարգացման ու առաջընթացի ուղիներ ստեղծել։ Պայքարի այս էտապում մենք հանդիպում ենք «Հայաստանի նախնի փառքի», հայ ժողովրդին «այց արարելու», Հայաստանի վերածննդի մասին և նման արտահայտությունների, որոնց տակ, իհարկե, հասկացվում էր հայկական պետականության վերանորոգում, բայց

պարզորոշ չէր բացահայտվում դրա իրավա-քաղաքական բովանդակությունը։ Նման անորոշության հիմքում ընկած էր այն պարագան, որ հայ գործիչները հստակորեն չէին պատկերացնում ցարական կառավարության քաղաքական նոր ընթացքը, բացի այդ, դեռևս լիովին ձերբազատված չէին միջնադարյան մտայնությունից ու հասկացողություններից։ Բոլոր դեպքերում, ռուսական տիրապետությունը իր որոշակի կարգ ու կանոնով, կրոնական ազատություններով անհամեմատ գերադասելի էր համարվում մահմեդական մասնավոր ֆեոդալական իրավունքի վրա հիմնված դժնի տիրակալությունից, երբ անձի ու ունեցվածքի անապահովությանը ուղեկցում էին կրոնական ատելությունն ու հալածանքները։

Ազատագրված Հայաստանի ապագա կացության անորոշության հիմքում ընկած էր այն ոչ պակաս կարևոր հանգամանքը, որպիսին էր հայ ժողովրդի կոտորակված վիճակը, այլևայլ տերություններում նրա գոյավիճակի տարբերությունը և դրանից բխող այլ պարագաներ։ Երբ մենք ծանոթանում ենք հայ ժողովրդի տարբեր հատվածների կենսապայմաններին, անգամ դասակարգային կազմին, ապա պարզ ու որոշակի տեսնում ենք այնպիսի տարբերություններ, որոնք իրենց կնիքը չէին կարող չդնել հայ ազատագրական մտքի վրա։

Այսպես, հայ ժողովրդի բնօրրանում, Արարատյան աշխարհում, հիմնական դասակարգը գյուղացիությունն էր, որ կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը։ Մենք արդեն նախորդ գլուխներում տեսանք, թե ինչպիսի աննախանձելի կենսապայմաններում էին գտնվում հայ գյուղացիները՝ ենթակա օտար տիրակալների քմահաճույքին, որոնք «ի բարբարոսացն պարսից կրեն զհարուածս, եօթնապատիկ խստագոյնս քան զեգիպտացոցն»[1]։ Նման պայմաններում նրանք փրկություն էին սպասում Ռուսաստանից, որովհետև երկարատև դարերի ստրկությունից հետո առաջին անգամն էր, որ քրիստոնյա մի հզոր տերություն հարևան ու սահմանակից էր դառնում և չէր թաքցնում իր մտադրությունը՝ ծավալելու իր տիրակալությունը նաև Արարատյան աշխարհի վրա։ Հայ գյուղացիության պայքարը հիշյալ իրադրության մեջ տարբեր ձևեր էր ընդունում՝ պասսիվ դիմադրությունից, որն արտահայտվում էր փախուստի և ռուսական կայսրության սահմաններն անցնելու մեջ, մինչև զինական աջակցություն ռուսական զորքերին։ Եվ դրանում նրանք տեսնում էին իրենց ապագա դրության բարվոքումը։ Ցավոք, մեր ձեռքը չեն հասել այնպիսի վավերագրեր, որոնք որոշակիորեն արտացոլեին հայ գյուղա-

[1] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. ՃՀ։

ցիության որոշակիորեն ընդգծված նպատակադրումները ազատագրական պայքարում։

Արևելյան Հայաստանի խանություններում գրեթե բացակայում էր հայ ֆեոդալական իշխող վերնախավ։ Հայկական մի քանի տոհմեր, որոնք փաստորեն պաշտոնյաներ էին պարսից խաների արքունիքում և իրենց պաշտոնատարության դիմաց որոշակի եկամուտներ էին ստանում (ժառանգաբար վարելով այդ պաշտոնները—Վ. Դ.), թվով այնքան աննշան էին, որ մենք իրավունք չունենք խոսելու նման դասակարգի առկայության մասին։ Հայ իշխող այդ փոքրաթիվ վերնախավի ազատագրական նկրտումների մասին մենք կխոսենք ստորև։

Անհամեմատ ավելի մեծ թիվ էր կազմում հայ հոգևոր դասը։ Մենք արդեն առիթ ունեցել ենք նշելու, որ հայ եկեղեցին ֆեոդալական հաստատություն էր և իր ակունքներով կապված էր հայկական ֆեոդալիզմին։ Բայց XVIII դարում և հատկապես այդ դարի վերջին և XIX դարի սկզբին իր եկամուտներով և մյուս շահագրգռություններով կապված լինելով գաղութահայ բուրժուազիայի հետ, որն այդ շրջանում անցում էր ապրում վաճառականական կապիտալից դեպի արդյունաբերական կապիտալ և, միևնույն ժամանակ, հարկադրված էր պայքար մղել այն երկրների բուրժուազիայի մրցակցության դեմ, որտեղ հանգրվանել էր։ Նա հայացքը դարձնում էր դեպի իր նախահայրենիքը, միայն և միայն որը կարող էր ազգային շուկա և գործունեության լայն ասպարեզ ապահովել նրա համար[2]։ Սակայն այդ հայրենիքը գտնվում էր օտար դժնի լծի տակ և նրա ազատագրությունն էր, որ կապահովեր նրան հարատևության անհրաժեշտ պայմաններ։ Այստեղից էլ մենք ընդհարվում ենք մի երևույթի հետ, որը ծնունդ էր հայ ժողովրդի գոյության յուրահատուկ պայմանների։ Այդ յուրահատուկ երևույթի հիմքում ընկած էր այն հազվադեպ պատմական փաստը, որ հայ ժողովրդի պատմական զարգացման համար ստեղծված դժնդակ պայմաններում հայ վաճառականական կապիտալը արտահոսում էր մայր երկրից դուրս և հիմնավորվում այնպիսի երկրներում, որտեղ կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսի համար կային փոքրիշատե տանելի պայմաններ։ Ուստի և ամենևին էլ տարօրինակ չէր, որ բուրժուական գաղափարախոսությունը հայ իրականության մեջ էր զարգացում ապրում և ոչ թե բուն Հայաստանում։ Բայց հայ բուրժուական գաղափարախոսությունը, քարոզելով հանրապետական կարգեր, միևնույն ժամանակ դեռևս ամբողջովին ձերբազատված չէր միջնադարյան մտածողությունից։ Դրա պատճառը պետք է փնտրել այն ճշմարտության մեջ, որ հայ ժողովրդի տարբեր հատվածները և գաղութահայության միմյանց շաղկապող միակ ազգային հաստատությունը հայ եկեղեցին էր, որին իր հաշիվներից դուրս նետել չէր կարող գաղութահայ բուրժուազիան։ Ասենք դրա անհրաժեշտությունը չէր էլ զգացվում։ Եթե Եվրոպայում տեղի ունեցող բուրժուական հեղաշրջումները իրենց մյուս սուր սայրով ուղղված էին եկեղեցու և նրա հսկայական հողատիրությունների դեմ, նպատակ ունենալով ծառայեցնել դրանք բուրժուազիայի զարգացման շահերին, նպատակ ունենալով եկեղեցին դարձնել իսկապես ազգային հաստատություն, որը կծառայեր պատմության թատերաբեմ ելած նոր դասակարգի շահերին, ապա հայ բուրժուազիան կարիք չուներ պայքարելու հայ եկեղեցու դեմ։ Եվ ահա թե ինչու։

Հնագույն ժամանակներից ի վեր հայ եկեղեցին կանոնական և կառավարման առումով ինքնուրույն եկեղեցի էր, և, որպես այդպիսին, ազգային, տվյալ ժողովրդի հետ անմիջականորեն առնչվող հաստատություն։ Այնուհետև, դարեր շարունակ գտնվելով մահմեդական տիրապետության տակ, հայ ժողովուրդը իր հարատևության նախապայմանը տեսնում էր հայ եկեղեցու գոյության մեջ։ Հայ եկեղեցին, օտարների լծի տակ հեծող ժողովրդի այն միակ ազգային հաստատությունն էր, որը փոքրիշատե կարողանում էր համախմբել նրան և նպաստել նրա ազատագրական պայքարին։ Հայ եկեղեցին զուրկ էր հողային այն հսկայական տիրույթներից, որին նախանձով էր նայում եվրոպական երկրների զարգացող բուրժուազիան։ Այս բոլոր երևույթները, միասին վերցրած, ընկած էին այն միասնության հիմքում, որ տվյալ պահին գոյություն ուներ հայ բուրժուազիայի և հայ եկեղեցու միջև։

Հայ հոգևորական դասը շատ բանով էր տարբերվում իրենց պետականությունն ունեցող եվրոպական երկրների հոգևոր դասից։ Հայ իրականության մեջ և՛ ցածրաստիճան, և՛ բարձրաստիճան հոգևորականությունը երևում էր ժողովրդի ծոցից, կրում էր, գրեթե միշտ, այն նույն հալածանքները, թերևս մի փոքր ավելի մեղմ, ինչ որ ժողովուրդը։ Սա ևս մի կարևոր պարագա էր, որպեսզի հայ եկեղեցականությունը տարամերժվեր օտար տիրակալներից և իր փրկությունը տեսներ մահմեդական օտարակալությունը թոթափելում։ Ստանալով փոքրիշատե կրթություն, հայ եկեղեցականությունը գրեթե միակ մտավոր խավն էր, որ կարող էր ձևակերպել և ուղղություն տալ, այս կամ այն չափով, հայ ժողովրդի ազատագրական նկրտումներին։ Այդ իսկ պատճառով էլ նրա շատ ներկայացուցիչները դառնում էին ազատագրական շարժման ակտիվ գործիչներ։

---

[2] Ջ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, էջ 154։

Հակասական էր բուն հայ եկեղեցականության վիճակը։ Ծառայելով տարբեր երկրներում, որոնց տիրապետության տակ գտնվում էին հայ ժողովրդի տարբեր հատվածները, կոչված լինելով պաշտպանելու իրենց վստահված «հոտի» գոյությունն ու իրավունքները զանազան ոտնձգություններից, ստիպված լինելով գեթ առերեսորեն հավատարմություն ցույց տալու այն պետությանը, որի սահմաններում ծառայում էին, նրանք հարկադրված էին մեծ ճկունություն հանդես բերել, երբեմն թաքցնել իրենց բաղձանքները, որպեսզի հարվածի տակ չդնեն ոչ իրենց անձը, և ոչ էլ իրենց ժողովրդին։ Նման պայմաններում, հատկապես երբ ենթակա էին մահմեդական տիրակալների քմահաճույքին, նրանք պետք է բնականաբար առաջնորդվեին առաջին հերթին ազգային-պահպանողական մտայնությամբ և համբերատար հետևեին դեպքերի զարգացման ընթացքին, հեռու մնային դրանց միջամտելուց։

Դրությունը բոլորովին այլ էր Արևելյան Հայաստանի անմիջական հարևանությամբ գտնվող Վրաստանում։ Այստեղ կար հայ ֆեոդալների մի բազմամարդ շերտ, որը, սակայն, գրեթե ամբողջովին տարրալուծված էր վրաց ֆեոդալների մեջ, շատ դեպքերում կորցրել էր մայրենի լեզուն՝ պահպանելով հանդերձ իր դավանանքը։ Սրանց մի մասը անվերապահորեն ընդունեց ռուսական տիրապետության հաստատումը Վրաստանում, սկսեց զինվորական ու քաղաքացիական պաշտոններ վարել և նույնիսկ չէր էլ մտածում քաղաքական որևէ պահանջ առաջադրել։ Բայց և կային այնպիսիները, որոնք դժգոհ էին իրենց երբեմնի իրավունքների մասնակի խուզումից, չէին ուզում հանդուրժել ցարական կառավարության միջամտությունը հայ եկեղեցու գործերին և ուզում էին պահպանած լինել այն վիճակը, որ գոյություն ուներ Վրաստանում նախքան վերջինիս միացումը Ռուսաստանին։ Այսպիսիները, սակայն, համեմատաբար փոքր թիվ էին կազմում և նոր պայմաններում փոքրիշատե աչքառու դեր խաղալ չէին կարող։

Բոլորովին այլ էր դրությունը Արևմտյան Հայաստանում, որտեղ գտնվում էր հայ ժողովրդի ամենահոծ զանգվածը։ Հայ ժողովրդի իշխող վերնախավը այստեղ համեմատաբար մեծ թիվ էր կազմում և ավելի տարատեսակ էր իր բնույթով։ Ամիրայական դասը, իր իսկ դրությունից դրդված, կապված էր տիրող ռեժիմի հետ իր շահագրգռություններով, այնքանով, որքանով նրա իսկ գոյությունը պայմանավորված էր տիրող ռեժիմով։ Բայց դա չէր նշանակում, որ նրան բոլորովին խորթ էին հայ ժողովրդի շահերը։ Նա անտարբեր էր իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ։ Ամիրայական որոշ գերդաստանների գործունեությունը ցույց է տալիս, որ դա այդպես չէր։ Բայց հայ ժողովրդի համար ստեղծված իրա-

վիճակը նրանց դարձնում էր ազգային-պահպանողական ուղղության ջատագովներ, հեռու էր պահում նրանց արմատական քայլերից։ Եվ հենց այն հանգամանքը, որ տարիներ շարունակ, որոնք հետևեցին Դավիթ-Դանիելյան պայքարին, արևմտահայ հոգևորականության և ամիրայական վերնախավի որդեգրած ընթացքը դեպի ամենայն հայոց կաթողիկոսությունը և կապերի մասնակի դադարեցումը վերջինիս հետ, խոսում է այն մասին, որ առաջնորդվելով ազգային-պահպանողական մտայնությամբ, նրանք գեթ արտաքնապես չէին ուզում առնչվել այն հաստատության հետ, որը այդ տարիներին կարծեք թե ամբողջովին հանդիսանում էր ռուսական կողմնորոշման կրողը։

Բնական է, որ նման բարդ իրադրության մեջ չէր կարող գոյություն ունենալ ազգային-ազատագրական պայքարի և այդ պայքարի վերջնական նպատակների խիստ պարզորոշ ծրագիր։ Բնական է, որ նման հետևախորքի վրա առաջին հերթին դրվեր միայն Արևելյան Հայաստանի և ամենայն հայոց կաթողիկոսության ազատագրման խնդիրը։ Սակայն դա էլ, ինչպես ցույց տվեցին Արևելյան Հայաստանի միացմանը հետևած իրադարձությունները, չէին կարող որոշակիություն մտցնել հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրների մեջ։

Ինչպես ցույց տվեց 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը, արևմտահայ ժողովրդական զանգվածների համակրանքը ևս Ռուսաստանի կողմն էր։ Այդ պատերազմը եկավ բացահայտելու հայ ժողովրդի արևմտահայ հատվածի քաղաքական նկրտումները։ Բայց Ադրիանուպոլսի հաշտության պայմանագիրը սառը ջուր լցրեց դրանց վրա և պարզորոշ ցույց տվեց հայ ժողովրդի գոյավիճակի ողջ բարդությունը, ինչպես ներքին քաղաքական, այնպես էլ միջազգային առումով։

Սովետահայ պատմագրության մեջ երկար ժամանակ այն կարծիքն է տարածված եղել, որ հատկապես 18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական պայքարում տիրապետող են հանդիսացել ազատագրական շարժման երկու ուղություններ՝ կղերաֆեոդալական և բուրժուադեմոկրատական։ Այդ կարծիքը հիմնված է եղել, ինչպես ասել ենք, Հայաստանի ազատագրության վերաբերյալ երկու «իրարամերժ» ծրագրերի առկայության փաստի հետ, որ այդ ծրագրերը իբր թե արտահայտել են երկու ուղղությունների շահագրգռությունները։ Բայց հենց միայն այն հանգամանքը, որ բառիս բուն իմաստով Հայաստանում հայ ֆեոդալական դաս չի եղել, ինքնըստինքյան կասկածի տակ է դնում կղերաֆեոդալական ուղղության առկայությունը, չխոսելով արդեն այն մասին, որ ծրագրի մեկ տարբերակը կազմվել է ռուսական կառավարության ուղղակի թելադրանքով։

Ինչպես ցույց է տալիս Դավիթ-Դանիելյան պայքարի պատմությունը և ինչպես ցույց կտա մեր հետագա շարադրանքը, ազատագրական շարժման մեջ տիրապետող մտայնությունը եղել է երկուսը՝ ազգային-պահպանողականը և բուրժուականը։ Դա պայմանավորված էր հայ ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկություններով և դրանց բուն թելադրանքն էր։

Նախորդ գլխում մենք արդեն ցույց տվեցինք, որ ազգային-պահպանողական տարրերը չէին շտապում արագացնել դեպքերի ընթացքը։ Նրանց շփոթություն էր պատճառում նաև այն հանգամանքը, որ, սկզբնական շրջանում, ռուսական կառավարությունը պահպանում էր խանությունները, որտեղ նախկին իրավիճակն էր թագավորում և քրիստոնյաները՝ հայերը նախկինի պես հալածանքների էին ենթարկվում։ Ազգային-պահպանողական մտայնության վառ օրինակ կարող է ծառայել 1803 թվականին վերաբերող պատմական մի կարևոր վավերագիր. դա Երևանի մելիք Աբրահամ Մելիք-Աղամալյանի և հազարապետ Գաբրիել Գեղամացու գրությունն է Վարանդայի նախկին մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանին, որն այդ ժամանակ գտնվում էր Վրաստանում։ Այդ գրությունը կապված էր Վրաստանի գլխավոր հրամանատար գեներալ Ցիցիանովի դեպի Երևան կատարելիք արշավանքի մասին տարածված լուրերի հետ։ Նկատի ունենալով այդ վավերագրի կարևորությունը, այն բերում ենք գրեթե ամբողջությամբ։ «Այս ինչ յայտ առնեմք պատվելոյդ մերոյ,— գրում էին մելիքը և հազարապետը,— ոյր թարեղիս լսեմք զի ամենափառաւոր մեծ զօրապետն ռուստաց Ցիցիանօն կամ ունի պատրաստութեամբ և զօրօք բազմօք գալ երկիրս յԵրևանու վասն որոյ այժմոյս մէկ թուղտ Գարսէվան էշիկ աղասի պաշուն[3] և մէկ թուղտ ազնուութեան ձեր գրրեցաք զի տեղոյս եղելութիւնն և լուրն թրղտէն էշիկ աղասի պաշուն իմանալոյց ես բայց այժմոյս զայս գրրեմք սիրելոյդ զի դու ևս ընդ էշիկ աղասի պաշոյն հետևօղ և ջանադիր լինես ի մէջ զօրապետին ռուստաց և իշխօղիս մերոյ սոյցա մէջն հաշտութիւն ձրգէք ոյր օգուտն քրրիստոնէից այս է ապա թէ ոյչ պարսից զօրքն աստ է ժողուելոյց և քրրիստոնէից ազգն բոլոյրն փրչանալոյց է ոյրրն գերի է անկանելոյց և ոյրն պարսիկս են քրշելոյց վասն որոյ գրրեմք սիրելոյդ զի ի սէր սուրբ հաւատոյս մերոյ և այսքան քրրիստոնիա անձանց պատճառ լինէք ոյր չլինի թէ այս երկիրս էլ Ղարաբաղու նման քրրիստոնէից աւերումն լինի և եկեղեցեաց և միւս ամենայն եղկութիւնն...»[4]։

[3] Խոսքը իշխան Գարսևան Ծավծավաձեի մասին է։

[4] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1803 г., д. 49, л. 36—36 об.

Որպեսզի պարզ դառնա ազգային-պահպանողական մտայնության հետզհետե տարածման պատճառը, հարկ է այստեղ նշել, որ վերոբերյալ տողերի հեղինակները այն անձնավորություններն են, որոնք դրանից քսան տարի առաջ արարատյան հայերի անունից դիմումներ էին կատարում ռուսական կառավարությանը և խնդրում շուտափույթ օգնություն հասցնել իրենց՝ թոթափելու օտարի լուծը։ Այժմ այդ նույն անձինք խնդրում էին, որպեսզի ռուսական զորքերը «յայս նուագ» ձեռնպահ մնան նախատեսվող արշավանքից։ Ելնելով ստեղծված ռեալ իրադրությունից, Մելիք Աբրահամը և հազարապետ Գաբրիելը լավ էին հասկանում, որ իրավիճակը 18-րդ դարի 80-ական թվականների համեմատությամբ մեծապես փոխվել է, որ արդեն կենտրոնացած պետականություն ունեցող Պարսկաստանը թույլ չի տա, որ հեշտությամբ իր ձեռքից վերցնեն այնպիսի մի կարևոր երկրամաս, որպիսին էր Երևանի խանությունը։

Այստեղ պետք է ուշադրություն հրավիրել մի հանգամանքի, որը սթափեցնող ազդեցություն էր գործել ազգային-պահպանողական ոգով տոգորված տարրերի վրա։ Դա XVIII դարի վերջերին Ղարաբաղի հայության և հայ մելիքությունների գլխին ճայթած աղետն էր։ Մենք վերևում արդեն տեսանք, որ Շահամիրյանին ուղղված իր նամակում, արդարացնելով իր վարքագիծը, Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը մատնանիշ էր անում Ղարաբաղի հայության և Գանձասարի կաթողիկոսության համար ստեղծված ողբերգական կացությունը, որի հիմքում ընկած էր նրանց վստահությունը դեպի ցարական կառավարության հավաստիացումները, նրանց հախուռն գործելակերպը։ Այժմ ևս մելիք Աբրահամը և հազարապետ Գաբրիելը հենվում էին Ղարաբաղի օրինակի վրա, երկյուղ կրելով, որ Արարատյան աշխարհն էլ կարող է Ղարաբաղի վիճակի մեջ ընկնել և տեսնել «քրիստոնէից աւերումն» և «եկեղեցեաց քաքտումն»։ Երբ այս առումով ենք մոտենում հարցին, մեզ համար լիովին պարզ է դառնում, թե ինչու նախապես մելիք Աբրահամը ընդդիմանում էր ռուսական իշխանությունների հովանավորությունը վայելող և իր հետ ազգակցական կապեր ունեցող Դավիթ արքեպիսկոպոսի կաթողիկոսանալուն և ամեն կերպ հորդորում նրան, որպեսզի չդիմի այդ քայլին, իսկ այն բանից հետո, երբ Դավիթը զրկվեց Ռուսաստանի հովանավորությունից, սկսեց աջակցել նրան։

Տեղին է նշել, որ մելիք Աբրահամի և հազարապետ Գաբրիելի երկյուղները գրեթե ամբողջովին արդարացան։ 1804 թվականի ռուսական զորքերի կատարած երևանյան առաջին արշավանքի ձախողումից հետո և՛ մելիք Աբրահամը, և՛ Գաբրիել Գեղամացին հարկադրված եղան իրենց «ժողովրդով» հանդերձ տարագրվել հայրենիքից և ցանուցիր լինել գրե-

թե ողջ Անդրկովկասով մեկ։ Այդ տարագրությունը եղավ պատճառ, որպեսզի հայ զանգվածների թիվը մեծապես կրճատվի նրանց բնօրրանում և դրա փոխարեն ավելանա օտարազգիների թիվը։

1806 թվականի մայիս ամսին Ալեքսանդր 1-ին գրած նամակում Երևանից գաղթած հայերի մեծամեծները հետևյալ կերպ էին նկարագրում այն վիճակը, որի մեջ ընկել էր Արարատյան երկիրը։ «Մեծահռչակ աթոռն Էջմիածնի ամայացեալ ի հոգևորականաց և ի քրիստոնեայ ժողովրդոց արդ այժմ բնակարան է հեթանոսաց. և բոլոր սահմանն Արարատայ վիճակեալ յետին թշուառութեան, ահա մեք բնակիչք նորա զրրկեալ ի հայրենեաց և ի բնակութեանց և յամենայն կայից և գոյից մերոց, մերկ և կարօտ ամենայն հարկաւորաց մաղապուրծ զանձինս մեր ազատեալ ժողովեալ կամք ընդ հովանեաւ հզօր թևոց կայսերականի մեծութեան ձեր. և մեծ մասն եղբարց մերոց քրիստոնեից ի մէջ մահու և անգիւտ կորստեան և կարծիքական կենաց և ազատութեան ունելով զանձինս եղեալ ի կշիռ, կան տակաւին ի հայրենիս իւրեանց աւելի ևս թշուառութեամբ»[5]։

Բայց այս ամենից չպետք է հանգել այն հետևությանը, թե մելիք Աբրահամը կամ հազարապետ Գաբրիելը դեմ էին առհասարակ Ռուսաստանին և նրա օգնությամբ ազատագրվելուն։ Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ նրանք ոչ միայն դեմ չէին ռուսական թևավությամբ խանապարսկական լծից ազատագրվելուն, այլև հնարավորին չափ աջակցություն ցույց տվեցին ռուսական զորքերին Երևանի բերդի պաշարման ժամանակ։ Նրանց տագնապը բացատրվում էր երկյուղով, որ գուցե ռուսական զորքերը անհաջողություն կրեն, մի բան, որը կարող էր խիստ անցանկալի հետևանքներ ունենալ։ Չի կարելի մոռանալ, որ ռուսներից ունեցած երկյուղը, ինչպես և հայ ազգաբնակչության բացահայտ համակրանքը դեպի հավատակից Ռուսաստանը զայրացնում էին շահական կառավարությանը, մղում նրան ամեն տեսակ դաժան հալածանքների հայերի նկատմամբ։ Նման իրադրության մեջ ամեն մի անճիշտ քայլ հղի կարող էր լինել սարսափելի հետևանքներով։ Այդպիսին էր, մեր կարծիքով, Երևանի հայերի երկյուղը և զգուշության հիմքը, որը գալիս էր դարձյալ ու դարձյալ ազգային-պահպանողական մտայնությունից։

Երևանի հայոց «իշխանները» չէին մոռանում, իհարկե, թե ինչպիսի աղետներ է բերել հայ ժողովրդի գլխին մահմեդական տիրակալությունը։ Դրա վկայությունը կարող են լինել 1805 թվականին վերաբերող

[5] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 17, վավ. 57։

հետևյալ տողերը. «Ի բնէ անտի ի բառնալոյն ճոխափայլ թագաւորութեանն ազիսս Արամեան՝ յորմէ հետէ ենթարկեցան ընդ իշխանութեամբ այլոց ազգաց՝ յորոց և ի տէրութիւնսն ցան և ցիր եղեալ սփռեցան և ընդ լծով ծառայութեան նոցա գրաւեցան, նորին իսկ եղեն ոչ թէ հարկատուք միայն, այլ իբրև զգաբաւոնացիսն ջրակիրք և փայտակիրք, և քան զնոսա ևս չարագոյն չարչարեալք իբրև զգերիս և զմահապարտս»[6]։

Հասկանալի է, որ հայ ժողովրդի իրական դրությունը ըմբռնող և այդպես գունագեղ կերպով նկարագրող անձինք չէին կարող գիտակցված կերպով հետևել պարսկական կողմնորոշման, հանդես գալ Ռուսաստանի դեմ։ Դրա համար էլ նրանք արձանագրում էին այն միակ ճշմարտությունը, որ «յօրէ յայնմանէ մինչև ցայժմ՝ ի վերայ այնքան անտանելի նեղութեանց՝ և անընդմբռնելի չարչարանաց ազգի մերոյ՝ յոյս և մխիթարութիւն ոչ այլ ինչ է եղեալ, եթէ ոչ օգնականութիւն ամենայաղթ տէրութեանդ ռուսաց, և ողորմութիւն ամենագութ և ողորմածագունեղ կայսերաց դոցին երանելեացն և ընդ երջանիկսն դասելեացն. յորոց զդրունս ևս անդադար բաղխելով նախնեացն մերոց հանգուցելոց, և յետ ակնադէտ յոյժ սպասելոյն, դէպ եղև նոցա ասել թէ, մաշեցան ոսկերք մեր՝ հատաւ յոյս մեր և մեռաք»[7]։

Այս տողերում արտահայտված է հայ ժողովրդի վաղեմի իղձը՝ ազատագրվել Ռուսաստանի օգնությամբ և միևնույն ժամանակ ապրած հիասթափությունը, որ սերունդներ են սպասել այդ ցանկալի պահին, որն այնպես էլ դեռևս չի իրագործվել։

Մենք արդեն նշել ենք, որ հայ եկեղեցականության տարբեր ներկայացուցիչներ, նայած իրենց գործունեության վայրի, հանդես էին գալիս իբրև տարբեր ուղղությունների արտահայտիչներ։ Մենք մեր մենագրության մեջ ցույց ենք տվել[8], որ Ռուսաստանում գործող Լազարյան հայտնի ընտանիքը, ինչպես իր տնտեսությունը վարելու եղանակով, այնպես էլ իր հասարակական գործունեությամբ հանդիսանում էր հայ իրականության մեջ բուրժուական տրամադրությունների արտահայտիչ։ Բնական է, որ Ռուսաստանում գործող հատկապես հայ բարձրաստիճան հոգևորականները հետևին և տուրք տային նրանց մտայնությանը։ Դրանցից էր ռուսահայերի ժամանակի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսը, որը նաև սերտ կապերի մեջ էր Հնդկահայերի հետ, որքանով որ ժամանակին նվիրակ էր եղել Հնդկաստանում։

[6] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. ՃՀ։

[7] Նույն տեղում։

[8] Տե՛ս **Վ. Դիլոյան,** Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966։

Այս եկեղեցականը, որը հետո պիտի նստեր կաթողիկոսական գահին, Լազարյանների թելադրանքով, իր ամբողջ գործունեությունը ուղղեց այն նպատակին, որպեսզի ապահովի Ռուսաստանի աջակցությունը Հայաստանի ազատագրման գործում։ Պայքար ծավալելով Դավիթ կաթողիկոսի դեմ, նա պայքարում էր ազգային-պապանողական տարրերի դեմ, շտապեցնում Ռուսաստանի միջամտությունը։ Ռուսաց կառավարությանն ուղղած նրա բազմաթիվ գրություններում մենք մշտապես այդ ձգտման վկայությունն ենք գտնում, թեև նա էլ պարզորոշ պատկերացում չուներ, թե ի վերջո ինչ է լինելու Հայաստանի ապագան։

Այսպես, 1802 թվականի իր գրություններից մեկում Եփրեմ արքեպիսկոպոսը գրում էր. «Քանի որ հայ ժողովուրդը անայցելու է և ընկած է բարբարոսների ծառայության լծի տակ, գտնվելով առանց հովանավորության, իբրև առանց հովվի ցիրուցան եղած մի հոտ, իր միակ հույսը հաստատապես դնում է համառուսական բարձր կայսրության ամենաողորմած գահի վրա, այնպես որ, վերքեր ստանալով Քրիստոսին մերժողներից՝ դրանք շուտափույթ բուժելու համար դիմում է ն. կ. մ. բարձրագույն և ամենաողորմած հովանավորությանը և այս դառն ժամանակներում թեթևացում, պաշտպանություն և մխիթարություն է փնտրում..., անկասկած հույսով կառչում է ամենաողորմած կայսեր ծիրանու փեշերին .և թող նա հովվի մեզ, իսկ նրա ամենազոր գայիսոնը և տերությունը թող լինեն մեզ մխիթարանք»[9]։

Բայց նույն ոգով էր դիմումներ կատարում ռուսաց կառավարությանը նաև պարսկական կողմնորոշման ընդգծված ներկայացուցիչ համարվող Դավիթ «ինքնակոչ» կաթողիկոսը։ Նա հայցում էր Ալեքսանդր 1-ից, թե «և զզօվարար հովանաւորութիւն մեծազօր տէրութեան ձերոյ զոր տարածեալ էք ի գաւառս Վրաց առ ժողովուրդս նոցա և մեր, հաստատուն առնիցէք. յորմէ գուցէ յաջողութեամբ տեառն և մեզ ազդեսցէ զովութիւն ի դիւր տագնապակրութեանս մերոյ»[10]։ Ճիշտ է, Դավիթն այս տողերը գրում էր այն ժամանակ, երբ դեռևս չէր անցել ազգային-պահպանողական դիրքերը, բայց փաստը մնում է փաստ, որ մտայնությունը Ռուսաստանի օգնության հարցում ընդհանուր էր։

Հազվադեպ բացառություններով, հայ ազգային գործիչների թողած գրություններում տիրապետողը մնում էր աղերսական շեշտն, որն այնպես դատապարտում էր Հովսեփ Արղությանը, երբ գրում էր, թե «այլ միայն հայցեն թէ զմեզ փրկեցէք. երբ փրկեն սրով՝ ըստ օրինի թագաորաց, հարկաւորին ծառայ առնել իւրեանց»[11]։ Այս պարզ ճշմարտությունը հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից Ներսես Աշտարակեցին պետք է գիտակցեր ավելի ուշ, 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի օրերին՝ կազմակերպելով հայկական կամավորական գնդեր և դրանով իսկ ջանալով աղերսանքը փոխարինել եռանդուն պայքարով հանուն հայ ժողովրդի վաղեմի «իրավանց»։

XIX դարասկզբի իրադարձություններն այնքան խոստումնալից էին հայ ժողովրդի ազատագրական դարավոր բաղձանքների իրագործման առումով, որ ռուսական զենքի ամեն մի նոր հաջողություն խանդավառումով, որ ռուսական զենքի ամեն մի նոր հաջողություն արձագանք էր գտնում հայկական շրջաններում։ Արդեն 1803 թվականի սկզբներին համառ լուրեր էին պտտվում այն մասին, որ շուտով ռուսական զորքերը արշավելու են դեպի Երևան, որին անհամբերությամբ էր սպասում Կովկասի հայությունը։ Երևանի գրավումով Արարատյան աշխարհը և ամենայն հայոց կաթողիկոսությունը կազատվեին խանական-մահմեդական լծից և դրանով կիրագործվեր այն առաջնահերթ խնդիրը, որ դնում էր իր առջև հայ ազգային-ազատագրական շարժումը։ Դրա համար էլ հայ ժողովուրդը անհամբերությամբ սպասում էր այդ պահին[12]։ Ազատագրական այդ բաղձանքները տոգորել էին նաև հարևան Կարսի փաշայության հայերին։ Այդ օրերի ընդհանուր տրամադրության լավագույն վկայություններից մեկն է Կարսի հայոց Հովհաննես արքեպիսկոպոսի գրությունը գլխավոր հրամանատար Կ. Ֆ. Կնորինգին[13]։

Արտահայտելով այն հույսերը, որ կապում էր հայ ժողովուրդը ռուսական զենքի հաջողության հետ, Հովհաննես արքեպիսկոպոսը գրում էր. «Ի վեր աստուած եմք ապաւինեալ, և ի վայր զքեզ, որ եմք անօգնական ազգս հայոց, և դու փութացէր մեզ օգնութիւն առ ի վերուստ, և տէր օգնեսցէ ձեզ ի բարձուստ, միշտ՝ և հանապազ, ամէն»։ Հովհաննես արքեպիսկոպոսը մաղթում էր աստծուն, որպեսզի կարող դարձնի ռուսներին, զորեղացնի նրանց, որ կարողանան նվաճել «անհավատների թագավորությունը», քանի որ միայն այդ ճանապարհով հնարավոր կլիներ փրկել «անօգնական» հայ ժողովրդին. «կարողացուսցէ տէր զձեզ, կազդուրացուսցէ. և հաստատիմն արասցէ, որ մերթ յարակատարապէս զօրացոյց՝ հաճոյանալով աշակերտակցին Մովսէսի, Յեսուայ որդւոյն Նաւեայ. և ենթարկանելով ի ներքոյ ծառայութեան. նոյնպէս նուաճեցուսցէ տէր զանկանոնաց թագաւորութիւնսն, առաջի թագաւորութեանդ ձերոյ...»[14]։

---

[9] АВПР, ф. Армянские дела, 1802—1803 гг., д. 185, л. 103.

[10] «Դիվան հայոց պատմության», գիրք Զ, վավ. ԻԲ։

[11] Մատենադարան, Ձեռագիր № 2699, թ. 102։

[12] Տե՛ս «Присоединение...», т. I, док. 146.

[13] Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 22, д. 28, л. 102.

[14] Նույն տեղում։

Ռուսաստանի հետ կապված ազատագրական հույսերի մեկ այլ արտացոլումն էր, երբ Գանձակի գրավման առթիվ արտահայտելով իր խընդությունը, հայ ազատագրական շարժման մեծ երախտավորներից Ներսես Աշտարակեցին փոքր ինչ ցավով և ափսոսանքով գրում էր. «յուսայաք թէ քան զամենեսին յառաջ յԵրևան լինէր բարձրացեալ դրօշակ նորին կայսերականի մեծութեան, այժմ ահաւասիկ յանկարծելի տեղիս տեսանեմք զայն փառաւորեալ...»[15]։

Այդ նույն կապակցությամբ Մինաս եպիսկոպոսը գրում էր. «զի արդ յամենից անագան պատմելոյ զուրախութիւն զսրտիս, քանզի՝ ի մուտն նոր տարւոյս՝ կործանեալ եղև ապստամբ քաղաքն Գանձակ, և նորին բռնաւոր գոռոզն Ջաւատ հանդերձ որդով և զօրօք ընկղմեալ եղև ի հոսանս հրացանի, ձեռամբ անպարտելի զօրացն հիւսիսականաց (ռուսների—Վ. Դ.) և խաչն Քրիստոսի պայծառացեալ երևի յԱտրպատականի աշխարհի»[16]։

Գանձակի գրավումը 1804 թ. առաջին իսկ օրերին և 1805 թվականին Ղարաբաղի միացումը Ռուսաստանին առավել ևս ամրապնդեցին հայ ժողովրդի շուտափույթ ազատագրության հույսերը։ Թե որքան ցանկալի էր Երևանի ազատագրումը խանական լծից, վկայում են Գրիգոր Խամսեցի և Հովհաննես Գեղարդակիր արքեպիսկոպոսների Մինաս Լազարյանին ուղղած նամակի հետևյալ տողերը. «ախ թէ իցէր, երանի թէ լինիցէր, զի կատարիցէին բազմաց սրտից խորհուրդք և գտանիցէր ըզբաղձալին իւր փրկութիւն հայրենին մեր գաւառ և մայր աթոռն երկնանման սուրբ էջմիածին»[17]։

Գեներալ Ցիցիանովի երևանյան ձախողված արշավանքից հետո, երբ ուժեղացան հայերի նկատմամբ կիրառվող հալածանքները, երբ հայերին «քան զսոսա (ռուսներին—Վ. Դ.) յոյժ առաւել թշնամի համարելով, այնպես նենգեալ խորշին ի մէջ, և զնորագոյն շարշարանս հնարեն վասն մեր անխիղճ բարբարոսքն. և քան զնախնեացն մերոց զանհնարին ցաւս յաւելուն ի վերայ ցաւոց մերոց»[18], Երևանի հայերը դիմում են այդ ժամանակ արդեն Վրաստանում գտնվող Մելիք Աբրահամին և Գաբրիել յուզբաշուն և օգնություն հայցում, որպեսզի միջնորդեն ռուսական իշխանությունների առջև և աջակցեն թոթափելու անտանելի տաժանակրության լուծը[19]։

[15] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 10։
[16] «Присоединение...», т. I, док. 166.
[17] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 15, վավ. 24.
[18] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. ԾՀ։
[19] АКАК, т. II, док. 1258.

Համանման խնդրանքով Մելիք Աբրահամը և Գաբրիել յուզբաշին 1806 թ. նոյեմբերի 21-ին դիմեցին Ցիցիանովի հաջորդ Ի. Վ. Գուդովիչին, որպեսզի նա «ըստ բարեհաճութեան ամենագթած կայսերն և ըստ արտասուաթոր աղաչանաց ամբոխիս այսորիկ նեղելոցս տառապակիր թշուառութեամբ, ազատեցէք զհայրենիսն մեր ի ձեռաց բարբարոսաց, և զմեզ զտարագրեալքս ժողովիցէք անդ՝ որպէս զի գտանելով մեր զանդորրութիւն, նախ աղօթիցեմք առ աստուած զամենայն աւուրս կենաց մերոց վասն անգին կենաց ամենաբարեպաշտ թագաւորին մերոյ և կայսեր. և ապա՝ մատուցանեմք զհպատակական ծառայութիւնս մեր այնուջերմեռանդութեամբն, որով յանձն առեալ զմահ, աճապարեցաք հանդերձ ժողովրդովք մերովք յերկիրս այս»[20]։ Նմանաբնույթ խնդրագրեր ստացվում էին տարբեր տեղերից։

Ռուսաստանի առաջախաղացումը և ռուսական զենքի հաջողություններն Անդրկովկասում ողջունում էին նաև տարբեր երկրներում գտնվող հայկական գաղութները։ Հատկապես խանդավառված էին Հնդկաստանի հայերը։ 1805 թվականի նոյեմբերի 19-ի կիրակի օրը Մադրասում գումարվում է Մադրասի հայոց որբախնամ ընկերության երեսփոխանների 43-րդ ժողովը՝ Նազար Հակոբջան Շահամիրյանի նախագահությամբ, որտեղ քննարկվում է Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության հարցը։ Իր բացման խոսքում Նազար Շահամիրյանը հետևյալ ուշագրավ հայտարարությունն է անում. «տուն և աշխարհն մեր, միջոց իբրև հինգ հարիւր ամ ժամանակաւ մաշեալ ի ներքոյ սրոյ և ոտից անհաստատ տէրութեանց և այլակրօնից, մեք և բիւրաւորք յազգակցաց մերոց և արիւնակցաց վարեալք ի պէսպէս գերութիւնս և պանդխտութիւնս, նուազեալք և օրըստօրէ պակասեալք, ոմանք զոհ անկանելով անբնական և օտար տարերաց, և ոմանք ճնշեալք ի ներքոյ անտանելի խստութեանց և անազատութեանց, մեք և աշխարհ մեր ասեմ, որ յաւէտ յուսահատութեան տխրութիւն՝ քան թէ վերականգնման նպատակ ունէաք առաջի աչաց, այժմ արժանաւորեցաք (յայսմիկ և եթ բախտաւորագոյնք քան զնախնիս մեր) առանց խնդրոյ և ակնկալութեան մերոյ տեսանել զողորմածագոյն ձեռ ամենամեծ կայսրութեան օրհնեալ Ռուսաստանու ամենաողորմածաբար կարկառեալ առ փրկութիւն և ազատութիւն մեր. ձեռն մարդասէր որ այս ութսուն ամաց հետէ ողորմածաբար սկսեալ. նախ ի աստուածահաստատ տէրութեան իւրոյ եղեալ ազգակցաց մերոց՝ իրացոյց, այսինքն հանգոյն սեփական ազգի իւրոյ ընկալաւ, ապա աստուածայաջող յաղթութեամբ իւրով, ի ձեռանէ զանազան անկարգ թշնամեաց

[20] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1806 г., д. 110, л. 506—506 об.

իւրոց հազարաւոր կորզելոցն՝ ընդունեաց համանման գթութեամբ, շընորհելով ամենայն ապահովութիւնս և բազում ողորմածութիւնս իրաւի «անլուրս յաւիտենից», մինչև շնորհել քաղաք և դատաստան յատուկ և անօրինակ մեծարմամբ պատուազարդել զհովուապետ նոցին»[21]։

Այստեղ հատկանշականն այն է, որ Ռուսաստանի հայերի սեփական «քաղաք և դատաստան» ունենալու իրավունքը այն հարցերից էր, որ առանձնապես էր հուզում հնդկահայերին։ Այդ հարցի վրա էր ուշադրություն հրավիրում իր ելույթում նաև Հարությունն ավագ քահանա Շմավոնյանը[22]։ Կասկած չկա, որ նրանք համոզված էին, որ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը ևս կօգտվի գեթ համանման ինքնավարական իրավունքներից։

Մադրասաբնակ հայերին ուրախություն էր պատճառում նաև այն, որ Ռուսաստանը ձեռնամուխ է եղել Հայաստանի ազատագրության գործին, «շարժեալ յիւրոյ սեփական ազատիչ և ողորմած դիտմամբն», որով և «սփռէ ուր և հասանի զզովութիւն ազատութեան՝ փրկութեան և հանգստութեան»[23]։

Ելնելով այն հանգամանքից, որ իրենց եղբայրները Ռուսաստանում վայելում են «ազատ և փառաւոր կենցաղավարութիւն», որ «յաշխարհի մերում բարձրացեալ (է) զհրաշալի նշան խաչի Քրիստոսապսակ կայսերութեան» այդ «անակնուելի փոփոխութիւնն՝ իբրև երազ համարելով», որ «ենթ ազատութեան» ծնյալ և սնյալ երիտասարդությանը է «ապագա ազատ կենցաղավարութիւն», «բանականավայել լուսաւորութիւն մտաց և վարուց», որ այդ բոլորի հետևանքով ակնկալվում է «ի սակաւ միջոցի հանել անուն աշխարհին մերոյ յանարգ դասաւորութենէ տգիտութեան»[24], ժողովի մասնակիցները որոշում են երախտագիտության ուղերձ գրել Ալեքսանդր 1-ին կայսրին։

1806 թվականի հունվարի 28-ի 44-րդ ժողովում ընդունվում է Ալեքսանդր 1-ին, որպես «յատկապես բարերարի և խնամակալի ազգիս և աշխարհիս հայոց» ինքնակալի, հղվելիք ուղերձի տեքստը, որով «ի հեռաւորութենէ աստի խոնարհեցուցեալ զպարանոց ազգիս», խնդրում են «գթալ ի վերայ անկելոյ ազգիս», «զօրացուցանել զլքեալ ձեռն մեր» և «տիրել անտերունչ ազգիս, վերահաստատելով և սեպհականելով մեզ փրկութիւն և խաղաղութիւն ի հայրենիս մեր»[25]։

[21] «Անցք կամ գործք», Մադրաս, 1806, էջ 5—6։
[22] Նույն տեղում, էջ 10։
[23] Նույն տեղում, էջ 6։
[24] Նույն տեղում, էջ 7։
[25] Նույն տեղում, էջ 28։

Վերջնական ուղերձը հղվում է 1806 թ. հուլիսի 30-ին, որը և 1807 թ. հունվարի 17-ի Եփրեմ արքեպիսկոպոսի կից գրությամբ մատուցվում է Ալեքսանդր 1-ին։ Այդ գրությամբ Եփրեմ արքեպիսկոպոսը խնդրում էր կայսրից, որքանով որ Մադրասի հայերը քանիցս դիմել են իրեն հայրենիք վերադառնալու խնդրանքով, ընդառաջել նրանց ցանկությանը[26]։

Հարկ է նշել, որ ռուսական կառավարությունը ամենայն լրջությամբ վերաբերվեց հիշյալ գրություններին։ Հնդկահայերի ձեռքին կենտրոնացած հարստությունը, նրանց առևտրական լայն կապերը, Հնդկաստանի և առհասարակ ամբողջ Արևելքի իմացությունը այնպիսի հարցեր էին, որոնք չէին կարող վրիպել ցարական կառավարության ուշադրությունից։ 1807 թ. մայիսի 14-ին արտաքին գործերի մինիստրի տեղակալ կոմս Ալեքսանդր Սալտիկովը հիշյալ գրություններն ուղարկում է Կ. Պոլսի ռուսական դեսպան Ա. Յա. Իտալինսկուն և հարցնում նրա կարծիքը[27]։

1807 թվականի հուլիսին Իտալինսկին, Սալտիկովի գրության կապակցությամբ, հետևյալ զեկուցագիրն է ուղարկում Ալեքսանդր 1-ին. «Ռուսական հպատակություն ընդունելու և իրենց հայրենի Հայաստան վերադառնալու վերաբերյալ մադրասաբնակ հայերի խնդրագիրը արժանի է որոշ ուշադրության։ Որքանով որ նրանք այժմ օգտվում են անգլիական հովանավորությունից և նրանցից ոմանք խիստ նշանակալից առևտուր են կատարում Արևելյան Հնդկաստանում, ապա անգլիական կառավարությունը չի կարող անտարբերությամբ դիտել հիշյալ հայերի տեղափոխությունը Մադրասից ռուսական տիրույթները, մանավանդ եթե տեսնի, որ ռուսական կառավարությունը բացահայտ շահագրգռություն է երևան բերում։ Ուստի չէի՞ք բարեհաճի ձերդ կայսերական մեծությունը բարձրագույնս համաձայնել, որպեսզի մինիստրությունը բանավոր հայտարարի Մինաս Լազարյանին, 1. որ ձ. կ. մ. բարեհաճությամբ եք ընդունել Մադրասի հայերի ջերմեռանդության նշանները, 2. որ ձ. կ. մ. նույնքան հաճելի է նրանց ցանկությունը՝ վերաբնակվել ռուսական տիրակալության տակ գտնվող նահանգներում և ընդունել ռուսական հովանին, միայն պետք է իմանալ, թե որտեղ են նրանք մտադիր վերաբնակվել, որպեսզի անհրաժեշտ կարգադրություններ արվեն։ 3. Անգլիական կառավարության հետ հնարավոր տհաճ բացատրություններից խուսափելու համար Ռուսաստանը կարող է նրանց իբրև հպատակներ ճանաչել ռուսական սահմանները մուտք գործելուց հետո։ Իսկ մինչ այդ, չնայած

[26] «Присоединение...», т. I, док. 334.
[27] Տե՛ս АВПР, ф. Армянские дела, 1803—1809 гг., д. 186, лл. 175—176.

նրանց հաջողության մեր անկեղծ ցանկությանը, առանց ռուսական դույզն իսկ մասնակցության, հնարավոր դժվարություններ և ձախողումներ կարող են բաժին ընկնել նրանց»[28]։

Թեև մադրասաբնակ հայերի հիշյալ ցանկությունը չիրագործվեց և չէր էլ կարող իրագործվել, քանի որ Հայաստանն ամբողջովին ազատագրված չէր, բայց և այնպես նա մեզ վառ վկայություն է տալիս այն հույսերի ու բաղձանքների մասին, որոնք նրանք կապում էին Ռուսաստանի և ռուսական զենքի հաղթանակի հետ։

Հայ ժողովրդի ազատագրական ձգտումները չէին սահմանափակվում միայն այդ կապակցությամբ արտահայտված զգացումներով ու հույսերով։ Հայերը գործուն մասնակցություն էին ցուցաբերում ռուսական կառավարության բոլոր այն միջոցառումներին, որոնք նպաստում էին օտարի ատելի լուծը թոթափելուն։ Ժողովրդական զանգվածները ամենուր ուրախությամբ էին դիմավորում ռուսական զորքերին, աշխարհազորային ջոկատներ էին կազմակերպում, որպեսզի օժանդակեն ռուսական զորագնդերին։ 1804—1813 թթ. պատերազմի ժամանակ հայկական կամավորական ջոկատները շոշափելի լումա ներդրեցին ռուսական զենքի հաղթանակներում, ջանալով արագացնել իրենց հայրենիքի ազատագրությունը պարսկական լծից։ Մեր խնդրի մեջ չի մտնում անդրադառնալ այդ հարցին, որի շուրջը մեծ գրականություն կա[29]։

Հայ ազատագրական մտքի կապը Ռուսաստանի հետ, Ռուսաստանից հայ ազատագրական շարժման գործիչների ունեցած ակնկալությունները լավագույնս բացահայտվեցին 1812 թվականի ռուս ժողովրդի մղած հայրենական պատերազմի օրերին, երբ ռուս ժողովուրդը ազատագրական պայքարի ելավ նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ։

1812 թվականի Հայրենական պատերազմին իրենց գործուն մասնակցությունը բերեցին ռուսական կայսրության շատ ժողովուրդներ, որոնց թվում նաև ռուսաստանաբնակ հայերը[30]։ Ռուսական բանակի շար-

[28] Նույն տեղում, թթ. 184—185:

[29] **Потто В.**, Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1901. **Ա. Երիցյան**, Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ, «Փորձ», Բ տարի, № 1, 2, **Ա. Երիցյան**, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, **Ջ. Տ. Գրիգորյան**, Հայ և ռուս ժողովուրդների ռազմական համագործակցությունը 19-րդ դ. սկզբին, Երևան, 1957, Նույնի՝ Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, **Վ. Ա. Պարսամյան**, Հայ ժողովրդի պատմություն (1801—1917), հ. 3, Երևան, 1967 և այլն:

[30] Հայերի 1812 թ. հայրենական պատերազմին ունեցած մասնակցության մասին

քերում նապոլեոնյան զորքերի դեմ մարտնչում էին շատ հայ գեներալներ ու սպաներ, այդ թվում Վ. Մադաթովը, Դ. Դելյանովը, Դ. Աբամելիքը, Պ. Աբամելիքը, Ի. Աբամելիքը, Պ. Մելիքովը, Հարությունն Լազարյանը, Վ. Բեհբութովը, Դ. Աշխարումովը, Լալաևը, Մելիք Օսիպովը, Հայրապետովը, Վարժապետյանը և ուրիշներ։ Նրանք անձնվիրաբար կռվում էին ընդհանուր թշնամու դեմ՝ հանուն «Հայրենեացն Ռուսաստանեայց»։ Նրանցից շատերն իրենց պսակեցին հերոսության դափնիով, ոմանք էլ ընկան պատերազմի արյունոտ դաշտերում (Հ. Լազարյան, Պ. Շահնազարյան, ռոտմիստր Դելյանով և այլն)։

Հայ ազատագրական շարժման գործիչները մեծագույն շահագրգռություն էին հանդես բերում Ռուսաստանի ճակատագրի, նրա հզորության հարցում, ապրում էին նրա հույսերով, բաժանում հոգսերը։ Նրանք համոզված էին, որ Ռուսաստանն է «հոյսն Ասիոյ», հետևաբար և Ռուսաստանն է, որ ազատություն պիտի բերի արևելյան բռնապետությունների լծի տակ հեծող հայկական բնաշխարհին։

Երբ սկսվեց 1812 թվականի հայրենական պատերազմը, հայ գործիչներն ամենուր սկսեցին լարված հուզումով հետևել դեպքերի զարգացմանը, ուրախանալ Ռուսաստանի հաջողություններով, տխրել վերջինիս անհաջողությունների համար։ Եփրեմ կաթողիկոսին հղած իր նամակում Հովակիմ Լազարյանը հետևյալ բառերով է նկարագրում Մոսկվայի ավերումը. «Վասն Մոսկով քաղաքի աւերմանն ոչ բովանդակէ աստէն լիովին պատմութիւն՝ ասեմ միայն՝ որ բովանդակ գեղեցկաշէն և երևելի տունք բնակչաց, նաև պալատքն թագաւորականք և եկեղեցիք բազումք եղէն կերակուրք հրոյ և մեր երկու եկեղեցիքն անդ ողորմութեամբ աստուծոյ մնացին անվնաս, բայց մի տունն իմ այրեցեալ է և ի միւսում ամենայն կարասիք տան և ինչքն իմ կողոպտեալ»[31]։

Իմանալով նապոլեոնյան զորքերի կողմից Մոսկվայի գրավման, հրդեհման և կողոպտման մասին, Եփրեմ կաթողիկոսը ցավով պատասխանում է. «յիրաւի՝ ոչ կարեմ բովանդակել ընդ գրով զառաւելութիւն մեծի տրտմութեանս և ցաւոյս, զոր զգացի և զգամ տակաւին յանձին իմում յաղագս աւերութեան հրաշակերտ մայրաքաղաքին Մոսկովու և զանազան նեղութեանց բնակչացն նոսա և ի շրջակայս նորին...»[32]։

մանրամասն տե՛ս **Нерсисян М. Г.** Отечественная война 1912 г. и народы Кавказа, Ереван, 1965; Он же. Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1956.

[31] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 104, գործ 104, վավ. 11:

[32] Նույն տեղում, թղթ. 103, գործ 5, վավ. 9:

Ռուսաստանում ծավալված աշխարհազորային շարժմանը օժանդակեց նաև Հովակիմ Լազարյանը։ Մոսկվայից ոչ հեռու գտնվող իր սեփական Ֆրյանովոյի մետաքսագործական ֆաբրիկայի բանվորներից նա իր միջոցներով զինեց 68 աշխարհազորայիններ, որոնք գործունյա մասնակցություն ունեցան Հայրենական պատերազմին[33]։

Հակառակորդի ներխուժումից և Ռուսաստանում կատարած ավերածություններից հետո պատերազմից տուժածներին օգնություն ցույց տալու նպատակով սկսվում է դրամական միջոցների հանգանակություն։ Դրան իրենց գործուն մասնակցությունն են բերում նաև ռուսահայ գաղթավայրերի բնակիչները։ Այսպես, օրինակ, Մոզդոկի հայերը հավաքում են ավելի քան 2500 ռուբլի, Ղզլարի հայերը՝ ավելի քան 10000 ռուբլի[34]։ Նոր Նախիջևանի հայերը նվիրաբերեցին 25000 ռուբլի[35]։ Սակայն դրամական ամենախոշոր օժանդակությունը ցույց տվեց Աստրախանի հայ հասարակությունը, որը «ներկա պայմաններում աչքի ընկավ առավել քան սպասելի էր՝ իր կողմից նվիրաբերելով մինչև 73 հազար ռուբլի»[36]։ Այդ հարցում մեծ դեր էր խաղացել Աստրախանի հայտնի հայ մեծահարուստ վաճառականներից Գրիգոր Աբեսալոմովը՝ տեղի հայկական ռատհաուզի երեք դատավորներից մեկը, անձնապես օրինակ ծառայելով մյուսներին և այդպիսով մեծապես օժանդակելով նման կարևոր դրամական նվիրատվությանը[37]։

Եթե նապոլեոնյան բանակի առաջխաղացումն ու կատարած ավերածությունները ցավ էին պատճառում հայերին, ապա նրա նահանջը մեծ խանդավառություն առաջացրեց։ Գործող բանակում գտնվող Հարություն Լազարյանը, Հովակիմ Լազարյանի կրտսեր որդին, «հրճվանքով» եղբորը՝ Խաչատուրին գրում էր, որ հակառակորդը մեծամեծ կորուստներ տալով անընդհատ նահանջում է։ Հետաքրքիր է Հարություն Լազարյանի վկայությունն այն մասին, թե ինչպիսի հսկայական չափեր էր ընդունել ռուս ժողովրդական զանգվածների սրբազան ատելությունը դեպի իր հայրենիքի թշնամին, և որը նրանց ոտքի էր հանել հայրենական ոգեշունչ պատերազմի։ Եղբորը ուղղված հիշյալ նամակում նա գրում էր, որ պատկերացնել անգամ չի կարելի, թե որքան լայն թափ է ընդունել ժողովրդական շարժումը. համարյա ամեն մի գյուղի մոտ, որոնք իր ճանապարհին հանդիպում էր թշնամուն հետապնդող ռուսական բանակը, կարելի է հանդիպել դիակների, որոնք վկայում են պարտիզանների հետ տեղի ունեցած ընդհարումների մասին[38]։

Ինչպես նշեցինք վերևում, ամենուր հայերը լարված հետաքրքրությամբ էին հետևում Ռուսաստանում ծավալված պատերազմական գործողությունների զարգացման ընթացքին։ Բեսարաբիայի հայերի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը 1813 թվականի ապրիլի 6-ի իր ընդարձակ նամակում, որի միայն վերջին մասն է պահպանվել, մանրամասն Եփրեմ կաթողիկոսին տեղեկացնում էր 1812 թ. հայրենական պատերազմի ողջ ընթացքին, վերջում հույս հայտնելով, որ շուտով պատերազմը իր ավարտին կհասնի և աշխարհին խաղաղություն կտիրի[39]։

1813 թվականի հունիսի 6-ին Ներսես Աշտարակեցուն հաղորդելով, որ «գեներալ Ղուտուսով հմտագույն շէֆն մեռեալ է ի մահճի իւրում», Սերովբե Կարնեցին միաժամանակ գոհունակությամբ նշում էր, որ ռուսների նպատակն է «կործանել զբռնակալութիւն Փօնաբարթէին»[40]։

Այնքան մեծ էր ժամանակի որոշ հայ գործիչների նվիրվածությունը դեպի Ռուսաստանը, սրտին մոտ նրա մղած պայքարը, որ նրանք 1812 թվականի պատերազմը հայրենական էին համարում նաև ռուսահայերի համար։

1813 թվականի հոկտեմբերի 4-ին Լայպցիգի ճակատամարտում ընկավ լեյբ-գվարդիայի հուսարական գնդի շտաբս-ռոտմիստր Հարություն Լազարյանը։ Այդ կապակցությամբ 1814 թվականի մայիսի 27-ին Աստրախանից Հովակիմ Լազարյանին գրած իր մխիթարական նամակում ռուսահայերի առաջնորդ Հովհաննես Գառնակերյանը նշում էր. «...քաղցր և վայելուչ է վասն հայրենեաց մեռանիլ»։ Նրա համոզմունքով Հարություն Լազարյանի մահը «...յարացոյց ի գովեստ լինի առեալ յԱրամեանս գրոհի՝ և ի քաջութեամբ սեպուհացելոյ ազգին ռուստաց»[41]։ Նա Հարություն Լազարյանի մահը դիտում էր որպես մահ «...ի ջատագովութիւն հայրենեաց, որ հեղմամբ արեան իւրոյ կարևէր խոցուածոց հասարակութեան սպեաց սպեղանի կազմեալ, զյորդահոս արեան նոցա արգել զբղխումն»[42]։

Այդ նույն առիթով Եփրեմ կաթողիկոսը գրում էր Հովակիմ Լազարյանին. «...լուսահոգի հանգուցեալն երջանիկ իմն մահուամբ հանդիսացեալ կատարեցաւ պատերազմելով ընդդէմ ամենայանդուգն թշնամւոյն

---

[33] ЦГИА СССР, ф. 880, оп. 4, д. 6, л. 1.

[34] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 24, վավ. 59։

[35] ЦГВИА, ф. ВУА, 1813 г., д. 3465, ч. 12, л. 132.

[36] Նույն տեղում, թ. 35—35բ։

[37] Նույն տեղում։

[38] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 102, գործ 17, վավ. 43։

[39] Նույն տեղում, թղթ. 24, վավ. 22։

[40] Նույն տեղում, վավ. 46։

[41] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 24, վավ. 22։

[42] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 109, գործ 9, վավ. 173։

մեծ կայսերութեան ամենայն ռուսաց, և ցանկալի խաղաղութեան աշխարհի...»[43]։

Կարծիքը մեկ էր, գնահատականը մեկ։ Ռուսաստանի համար մարտընչելը, հանուն Ռուսաստանի կյանքը նվիրաբերելը նրանք դիտում էին որպես հայրենասիրական պարտք։ Ռուսաստանի հանդեպ նման նվիրվածությունը, որ ցուցաբերում էին ժամանակի աչքի ընկնող հայ գործիչներից շատերը, խոսում է այն մասին, որ կողմնորոշվելով դեպի Ռուսաստան՝ իրենց ժողովրդի և իրենց հայրենի երկրի պատմական ճակատագիրը հաստատապես ուզում էին կապած լինել Ռուսաստանի, ռուս ժողովրդի հետ, Ռուսաստանի հաջողությունների մեջ տեսնելով վաղեմի տենչանքների իրագործման միակ միջոցը։ Զուր չէր, որ Ներսես Աշտարակեցին Ռուսաստանը համարում էր «փրկիչ Եւրոպիոյ և հոյսն Ասիոյ»։

Հայ գործիչները, դեպքերի թարմ ազդեցության տակ, ճիշտ բնորոշում և գնահատական տվեցին այն ազատարար միսիային, որ կոչված էր կատարելու ռուսական բանակը Եվրոպայում։ Փաստ է, որ ռուսական զորքերի հաղթական երթը Եվրոպա և մուտքը Փարիզ ազդանշան հանդիսացավ ազգային-ազատագրական շարժումների ծավալման։ Դարերից ի վեր կազմակերպված և ինքնուրույն պետականություն ունեցող ժողովուրդները, որոնք մի պահ ընկրկելով բռնակալի առաջ, ստիպված չին եղել ընդունելու բռնակալական ծանր լուծը, ռուսական բանակի տարած հաղթանակների հետևանքով զգոնեպնդվեցին, միահամուռ ոտքի ելան հանուն իրենց ազատագրության։ Այլ բան է, որ ռեակցիան ավելի ուժեղ եղավ և ցանկալի արդյունքներ չստացվեցին։

Ռուսական զորքերի հաղթարշավը ընդհանուր ցնծություն և բերկրանք առաջացրեց հայկական շրջաններում։ Հովակիմ Լազարյանը հետևյալ կերպ էր նկարագրում ռուսական զորքերի հակահարձակման անցնելը և թշնամու ընկրկումը. «...զորքն մեր յաղթանակութեամբ վանեն զթշնամին ի սահմանաց տէրութեանս, անհնարին թիւ գերեաց, հրացանից և դրօշակաց անկելոց ի ձեռս զօրաց մերոց վկայեն որ թշնամին ի մեծ տագնապի և ի նեղութեան փախչի ի սահմանացս։ ...Սպասեմք յաջողութեամբ աւարտման պատերազմիս»[44]։

Այդ նույն կապակցությամբ Թիֆլիսից վիրահայոց առաջնորդ Աստվածատուր արքեպիսկոպոսը գրում էր Հովակիմ Լազարյանին. «Գոհութիւն Աստուծոյ, որ ամենայն մրրիկք անցին և արեգակն աստուածային առատ ողորմութեան ճառագայթեաց ընդ լայնածաւալ տէրութիւն ռուսաց, բարձրացաւ փառք և պատիւ դոյնոյ հայրենեաց և ջերմեռանդական յոյս և ապաւինութիւն ամենաբարեպաշտ կայսերն մերոյ գեր քան զոհ ընդունելի հաճոյացեալ յաշս երկնաւոր կայսեր ի բաց վանեաց զթշնամին և փշրեաց զհամայն զօրութիւնս, որովք պանծայր ի մէջ բոլոր Եւրոպայոյ»[45]։

Ռուսական զորքերի կողմից Փարիզի գրավումից անմիջապես հետո, 1814 թվականի հունիսի 25-ին, Հակոբ Շահան-Ջրպետյանը, Հովակիմ Լազարյանին գրած նամակում, իր ուրախությունը հայտնելով, որ «...յետ տարուբերելոյ ի չափազանցն ալէտանջութեանց իրաց աշխարհիս՝ ժամանելով ի կէտն պայմանադրեալ՝ ի նավահանգիստն խաղաղութեան մտաց և զինուց դադարման, շնորհիւ տեառն և բուռն զօրութեամբ մեծայաղթ կայսեր Աղեքսանդրի և նորին նիզակակից տէրութեանց», համարում էր «տենչալի իմն» «ուրախակցել ընդ ձեզ և ընդ անցնիւր բարեկամս խաղաղասէր, գոհանալով միանգամայն զբարձրելոյն՝ վասն ազատութեան ձերոյն ի նախկին հարուածոյն՝ որ ի մէնջ և վասն մերոյն՝ որ յերկրորդուն առ ի ձէնջ»[46]։

Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը «Վերք Հայաստանի» էջերում, խոսելով ընդհանուր ցնծության ու խանդավառության մասին, որ առաջացրել էր հայ ժողովրդի մեջ Երևանի ազատագրումը, այն համեմատում էր ռուսների կողմից Փարիզը գրավելու հետ. «մեծ էր հիրավի ու անմոռանալի ռուսաց Փարիզ մտնելը, բայց ե՞րբ գաղիացիք էն հոգվովը իրանց բախտավորությունը կվայելեին, ինչպես հայք էն արժանահիշատակ օրը»[47]։

Այն բանից հետո, երբ Ռուսաստանը ծանր ու ավերիչ պատերազմից հաղթական դուրս եկավ, ժամանակի հայ գործիչները սպասում էին, որպեսզի նա փրկություն բերի նույնպես օտարի լծի տակ տառապող իրենց հայրենի աշխարհին։ Այդ պարագայի լավագույն հաստատումը մենք գտնում ենք Եփրեմ կաթողիկոսի կողմից 1814 թվականի հուլիսի 20-ին Ալեքսանդր 1-ին ուղարկված շնորհավորական գրության մեջ, որի սևագիր մեկ օրինակը պահպանվել է Մատենադարանի կաթողիկոսական դիվանում[48]։

Գրելով, որ «ապաքէն և մեք տէր թագաւոր մեր վերամատուցանեմք աստուծոյ զփառս, որ փառաւորեց զմեծութիւն հաւատոցն ձերոց առաւել քան զամենայն զզօրութիւնս աշխարհին այսօրիկ», նա ի սրտէ բխած

[43] Նույն տեղում։

[44] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 104, վավ. 10։

[45] Նույն տեղում, թղթ. 103, գործ 9, վավ. 143։

[46] Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 210դ։

[47] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1948, էջ 179։

[48] Տե՛ս Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 25, վավ. 39։

մեծագույն հուզումով բացականչում էր. «ով, թէ որպիսի երջանկութիւն էր մեզ՝ եթէ ոչ էաք յանդիման դրախտին արտաքոյ, և ոչ արգելոյր զընթացս մեր առ ծառդ կենաց սուրն բոցեղէն»։ Մեծ էր վիշտը ծերունի կաթողիկոսի, որ Հայաստանը բաժանված է Ռուսաստանից «բոցեղէն սրով», որն արգելք էր հայերի համար ընթանալու դեպի ցանկալի կետ նպատակը։ Տարաբախտություն համարելով դա իր և իր բազմաշարշար ժողովրդի համար, հեռվից հեռու «ի ծունկս անկեալ հանդերձ ողջոյն ազգաւ հայոց... տարածանեմք առաջի բարձր և խոնարհ աստուածանման ձերում տէրութեան զջերմեռանդութիւն և զանհամեմատ ուրախութիւն հոգւոց մերոց»[49]։

Հայ գործիչները լավ էին հասկանում, որ Նապոլեոնի դեմ տարած հաղթանակը դուռ էր բաց անում Հայաստանի ազատագրության համար, որ այս անգամ անմիջական և հաստատուն նախադրյալներ էին ստեղծվում կյանքի կոչելու Հայաստանի ազատագրության հինավուրց երազները։ Այս իսկ տեսակետից պատահական չէր այն բավական թափանցիկ ակնարկը, որ պարունակում էր Եփրեմ կաթողիկոսի Ալեքսանդր 1-ին գրած վերոհիշյալ շնորհավորական գրությունը։ Եփրեմ կաթողիկոսի կարծիքով եթե Ալեքսանդր կայսրը «յայտնեալ փրկիչն» էր «Եւրոպիոյ», «խաղաղարարը համայն աշխարհի», ապա էր նաև «յոյս և ակնկալութիւն մեր», այսինքն, Եփրեմի արտահայտությամբ «ժառանգաւորաց» և «ձերում (ռուսների—Վ. Դ.) ամենաողորմած այցելութեան կարօտեալ տանն Նոյի՝ հօրն աշխարհի՝ հայրենեաց Հայաստանի...»[50]։ Պարզ է, կաթողիկոսը գտնում էր, որ հասել է վաղուց հետէ այնքան ցանկալի ժամանակը, երբ հարկ էր, որ Ռուսաստանը վերջապես օգնության ձեռք մեկներ իր տառապյալ հայրենիքին, որը «բոցեղէն սրով» բաժանված էր Ռուսաստանից։

Ռուսական բանակի և կայսեր հաղթական վերադարձի կապակցությամբ շնորհավորելով ռուսաց սինոդի նախանդամ և Ս. Պետերբուրգի միտրոպոլիտ Ամբրոսիոս արքեպիսկոպոսին, Եփրեմ կաթողիկոսը կրկին գրում էր, որ «ցնծամք և մեք համայն ազգովին», որ Ռուսաստանը «աստուածապարգև զօրութեամբն զօրացեալ ի վերայ թշնամւոյն խաղաղութեան համայն աշխարհի, յաղթահարեաց զնա մինչ իսպառ...»[51]։ Այդ նույն առիթով Վրաստանի կուսակալ Ն. Ֆ. Ռտիշչևին հղած շնորհավորական կոնդակում ամենայն հայոց կաթողիկոսը մատնանշում էր, որ «խնդակից լինիմք և մեք մեծ ցնծութեան ձերում... յաղագս տեսանելոյ զայսպիսի աւուրս ցնծութեան զօրս ցանկայաք առ հասարակ տեսանել հանապազօրեայ տարփմամբ և ջերմեռանդական աղօթիւք»[52]։

Ռուսական կառավարող շրջանները, անշուշտ, գիտեին, թե ինչպիսի մեծ վստահություն են տածում հայերը Ռուսաստանի հանդեպ և ինչպիսի քաղաքական հեռուն գնացող ակնկալություններ ունեն իրենցից։ Այս տեսակետից պատահական չէր, որ Վրաստանի գլխավոր հրամանատար Ռտիշչևը և նահանգապետ Մալինովսկին իրենց պարտքն էին համարում ամենայն հայոց կաթողիկոսին տեղյակ պահել Ռուսաստանի տարած պատմական փայլուն հաղթանակին իր ամենահզոր թշնամիներից մեկի դեմ, գտնելով, որ դրանով նրան «կպատճառեն հաճելի բավականություն»[53]։ Այդ հաղթանակի կապակցությամբ Եփրեմ կաթողիկոսը պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու, իսկ ռուսահայերի առաջնորդ Հովհաննես Գառնակերյանը սբ. Աննայի առաջին աստիճանի շքանշանով[54]։

1812 թվականի հայրենական պատերազմը պատմական խոշորագույն ապացույցներից մեկն էր այն սերտ բարեկամության, որն էլ ավելի շաղկապեց միմյանց ռուս և հայ ժողովուրդներին, նրանց դարավոր բարեկամության մի նոր փորձաքար հանդիսացավ։

Չպետք է մտածել, սակայն, որ ամեն ինչ հարթ էր ընթանում և ցարական կառավարության քաղաքականությունը մշտապես հավանություն էր գտնում հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների կողմից։ Ամենևին էլ ոչ։ Կային մոմենտներ, որոնք նրանց մոտ տարակուսանք էին առաջացնում և տխուր մտորումների տեղիք տալիս։ Տարակուսանքի տեղիք էր տալիս, անկասկած, այն հանգամանքը, որ Ռուսաստանին միացված խանություններում պահպանվում էր խանական ռեժիմը և հայ աշխատավորական զանգվածները շարունակում էին հեծել մահմեդական խաների, բեկերի ու աղաների լծի տակ, ասես ամենևին էլ իշխանության փոփոխություն տեղի չէր ունեցել, կամ շարունակում էին վճարել հարկեր, որոնք վիրավորանք էին ոչ միայն մարդկային արժանապատվությանը, այլև պետությանը, որը հանդուրժում էր դրանք։

Հայ ժողովրդի նկատմամբ ատելություն և անվստահություն էր սերմանում գեներալ Ցիցիանովը, որն օժտված լինելով մեծամեծ լիազո-

---

[49] Նույն տեղում։

[50] Նույն տեղում։

[51] Մատենադարան, Ձեռագիր 3800, թ. 114։

[52] Նույն տեղում, թ. 161բ—162։

[53] Մ. Ներսիսյան, Նոր նյութեր 1812 թ. հայրենական պատերազմի մասին, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 3—4։ Նաև՝ Нерсисян М. Г., Отечественная война 1812 г. и народы Кавказа, էջ 250—252.

[54] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 102, գործ 17, վավ. 9։

ությունները, ի չարն էր գործադրում դրանք և ոչ մի միջոցից չէր խորշում; որպեսզի կենտրոնական կառավարության մոտ հայ ժողովրդին ներկայացնի ծուռ հայելու մեջ։ Այսպես, երբ կոմս Մուսին—Պուշկինը պարգևատրության է ներկայացնում իշխան Սողոմոն Արղության-Երկայնաբազուկին և Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանին, համապատասխանաբար սբ. Աննայի երկրորդ աստիճանի շքանշանով և ոսկյա թրով, Ցիցիանովը «պարտք է համարում ամենահպատակաբար» զեկուցել, որ քանի որ «հայ նորաստեղծ իշխանները և Ղարաբաղից ելած մելիքները թագավորների կողմից հարգվել են իրենց հարստության պատճառով, բայց վրացական իշխանները, հատկապես առաջնակարգ իշխանները, բնավ վստահություն չեն ունեցել նրանց նկատմամբ և ոչ էլ հարգանք, ուստի համարձակվում եմ ամենահպատակաբար հաստատապես զեկուցել ձ. կ. մ., որ հայ իշխանների նման համեմատությունը վրաց իշխանների հետ վերջիններիս համար վիրավորական կլինի, դատելով ըստ նրանց մտածելակերպի և սովորությունների, որոնք ինձ բավականաչափ հայտնի են դարձել»[55]։ Բնականաբար նման վերաբերմունքը ընկալվեց ցարական կենտրոնական վարչության կողմից և Պետերբուրգի կառավարությունը որդեգրեց Ցիցիանովի թելադրանքը։ Այս պարագան, ինչպես նաև Ցիցիանովի մյուս գործողությունները խիստ բացասական հետևանքներ ունեցան երկու դրացի ժողովուրդների փոխհարաբերությունների վրա և բազմաթիվ անախորժ դեպքերի տեղիք տվեցին։ Տվյալ դեպքում գեներալ Ցիցիանովը դարձավ վրացական ֆեոդալական արիստոկրատիայի ձայնափողը և նրա տրամադրությունների լիազոր արտահայտիչը։ Դրա արմատները գալիս էին դեռևս անցյալից։ Գաղտնիք չէ, որ ֆեոդալական Վրաստանում քաղաքային բնակչության հիմնական խավերը՝ արհեստավորները և վաճառականները ճնշող մեծամասնությամբ հայեր էին, որոնք թեև վաղեմի ժամանակներում էին հաստատվել Վրաստանում, «բայց և այնպես վրացական ազնվականությունը նրանց դիտում էր իբրև օտարների»[56]։ Երկրի կենտրոնացմանը ուղղված իրենց ջանքերում վրացական վերջին թագավորները, հատկապես Հերակլ 2-րդը, որոշ առանձնաշնորհումներ էին ընձեռում քաղաքային բնակչության վերնախավին՝ մոքալաքներին և խոշոր վաճառականներին, աշխատում էին մեծացնել և ուժեղացնել բնակչության այդ խավը ի հակակշիռ ֆեոդալական արիստոկրատիայի։ Նման քաղաքականությունը

[55] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1804 г., д. 73, лл. 1—2 об.

[56] **Месхна Ш. А.** Города и городской строй феодальной Грузии XVII—XVIII вв., Тбилиси, 1959, с. 236.

համարելով իրենց արտոնությունների ոտնակոխում և անտեսում, ի դեմս մոքալաքների և ընդհանրապես քաղաքային արհեստավորա-առևտրական խավի տեսնելով իր մրցակիցների և ֆեոդալական մասնավոր իշխանության հակառակորդների, վրացական ֆեոդալական ավագանին պայքարում էր ոչ միայն թագավորների կենտրոնացման փորձերի դեմ, այլև այդ հարցում նրանց հենարան ծառացող քաղաքաբնակչության դեմ։ Վրացական ֆեոդալների այդ տրամադրությունը 18-րդ դարի 70-ական թթ. բացահայտորեն արտահայտել է Իեսե Բարաթաշվիլին. «անաստված հայերը... վաճառականները, շարչիաբար և մեր թագավորի մեղաց պատճառով ներխուժելով արքունիք... հակառակ աստվածային կամքի Վրաստանում դարձել են տերեր, կարգադրողներ և ազնուրներ (ազնվականներ—Վ. Դ.)... սոսկ անբարեպաշտ թագավորներն են այդ արել, այլապես նայեցեք դեպի Արևելք, Արևմուտք, Հյուսիս ու Հարավ, որտե՞ղ հայերը ազնվականություն ունեն։ Աստված նրանց կոտորակել է, մարդը ի՞նչպես է նրանց վերամիավորել»[57]։ Այս տողերը պարզորոշ ցույց են տալիս վրացական կենտրոնախույս ձգտումների տեր ֆեոդալների ողջ թշնամությունը դեպի վրաց թագավորները և նրանց կենտրոնացման քաղաքականությանը սատարող հայ քաղաքաբնակչությունը։ Ինչպես ճիշտ նկատում է խորհրդային վրացի պատմաբան Շ. Ա. Մեսխիան, «XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին, երբ ապրանքային արտադրության հետագա զարգացման և տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների հետևանքով խախտվեցին վրացական ֆեոդալական արիստոկրատիայի տիրապետության հիմքերը, քաղաքային ազգաբնակչությունը, հատկապես նրա վերնաշերտը, ավելի գործուն պայքար սկսեցին քաղաքական իրավունքների ընդլայնման համար, որը, հասկանալի է, պետք է առաջ բերեր դասակարգային պայքարի խորացում ֆեոդալական արիստոկրատիայի և քաղաքային ազգաբնակչության միջև»[58]։

Նման իրադրության մեջ, առաջնորդվելով վրացական ֆեոդալական արիստոկրատիայի ֆեոդալական շահագրգռություններով և տուրք տալով սեփական կալվածատիրական ճորտատիրական մտահայեցողությանը, գեներալ Ցիցիանովը կանգնեց վրաց ազնվականության կողմը և ջանք չխնայեց հալածանքի սլաքն ուղղելու այն տարրերի դեմ, որոնք այդ ժամանակ հանդիսանում էին առավել առաջավոր միտումների կրողը՝ սատարելով ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը և երկրի տնտեսական ու քաղաքական կենտրոնացմանը։ Այդ ա-

[57] Նույն տեղում, էջ 237։

[58] Նույն տեղում, էջ 238—239։

ռումով Ցիցիանովի վարած քաղաքականությունը ետընթաց քայլ էր անգամ վրաց վերջին թագավորների կիրառած քաղաքականության համեմատությամբ։ Այն նպաստում էր ազգային թշնամանք հրահրելուն երկու վաղեմի դրացի ժողովուրդների միջև, անվստահություն սերմանելուն և այլն։ Առավել վտանգավորն այն էր, որ գեներալ Ցիցիանովը ջանում էր այն վերածել ցարական կառավարության մշտական քաղաքական ընթացքի և բարձրագույն հաճությամբ սրբագործել այն։ Մինչդեռ, ինչպես ցույց տվեցին ժամանակի իրադարձությունները, հատկապես վրաց ֆեոդալների ձգտման առնչությամբ, օգտագործել գյուղացիական ընդվզումները իրենց հետադիմական նպատակադրումները կենսագործելու համար, երկրի կենտրոնացմամբ և տնտեսական առաջընթացով շահագրգռված քաղաքային ազգաբնակչությունը այն կարևոր հենարանը եղավ, որը ապահովեց ռուսական տիրապետությունը Վրաստանում։ Ռուսական կառավարության հաստատած կարգ ու կանոնը, ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը հիմք էին տալիս հայ վաճառականական դասի ներկայացուցիչներին Իվան Թելեթյանի բերանով հայտարարելու. «Դեռ վաղ ժամանակներից սկսած հայոց ազգը նախկին դաժան տիրակալների լծից ազատվելուն էր սպասում։ Վերջապես հասավ երանության այդ ըղձալի պահը՝ հյուսիսային ամենաօգոստափառ միապետի գայիսոնի ներքո։ Կայսերական գահից արդեն ճառագում է մեր ազգին կենդանություն պարգևող և նախկին կառավարմանն ուղեկից մեր թշվառությունները բուժող ողորմածությունը։ Այժմ կայսերական տերության հովանու տակ մենք լիակատար ապահովություն ենք զգում, ազատորեն դավանում մեր կրոնը և ի նշան վաճառականությունն արդարացուն օրենքներով հովանավորող կայսերական ողորմածության՝ ուրիշների համեմատ առավել նոր երջանկություն վայելում»[59]։

Բնական է, որ նման պարագաներում դեռևս ֆեոդալական մասնավոր իրավունքի ու իշխանության հովերով տարված վրացական թավադների և կարգ ու կանոնի, կյանքի ու ունեցվածքի ապահովության և ֆեոդալական անիշխանությունից ձերբազատման ձգտող հայ վաճառականության միջև եղած հակասությունները սրվեին և հիվանդագին ձևեր ընդունեին, հանդես գային «ազգային» հակասությունների քողի տակ, այն դեպքում, երբ դրանք, ըստ էության, դասակարգային հակասություններ էին։ Ցիցիանովը հոժարակամորեն դրանց «ազգային» երանգ էր հաղորդում և ջանում ցարական կառավարությանը համոզել, որ վաճառականության շարքերից ելած և վրաց թագավորների հաճությամբ ազնվա-

[59] АКАК, т. IV, с. 86.

կանության շարքերն անցած վրացահայ ազնվաուրները և թավադները ոչ մի դեպքում չեն կարող համեմատվել և նույն կարգի դասվել վրաց «առաջնակարգ» ազնվականության հետ։ Հատկապես թշնամական էր Ցիցիանովի վերաբերմունքը հայ մելիքների նկատմամբ, և Մելիք Ջումշուդը ոսկյա սրի փոխարեն պարգևատրվեց արծաթյա թրով, այն էլ այն բանից հետո, երբ տրվեց բարձրագույն հրաման[60]։ Հայ մելիքների նկատմամբ նման վերաբերմունքի կապակցությամբ հետաքրքիր է այն գրագրությունը, որ ունեցել են մելիքներ Արոլը և Ջումշուդը և Մինաս Լազարյանը։

Այսպես, 1806 թվականի դեկտեմբերի 2-ին Մինաս Լազարյանին գրած նամակում մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը պատասխանում էր այն կշտամբանքներին, որ Լազարյանը ուղղում էր հայ մելիքներին, այն է՝ թե ինչու չի հիշատակվում նրանց անունը ռուս-պարսկական պատերազմի մեջ աչքի ընկած վրաց իշխանների շարքում, ինչո՞ւ սեփական գունդ չեն կազմում և մասնակցում պատերազմին։ Մինաս Լազարյանի առաջին հարցի կապակցությամբ մելիք Ջումշուդը գրում է. «առ այս ասեմ խայթոցիւ, թէև մենք մելիքունքս խամսայու առաւել քան զնոքա յատկացաք ի մէջ պատերազմի, և առաւելագոյն պարգևաց և շնորհաց ևս էաք արժանի, սակայն արմատացեալ նախանձն ի սրտի հանգուցեալ քնիազ Ցիցիանովի առ ազգն հայոց, ոչ թուլատրեցին նմա բացայայտել առ ամենագթած կայսերն զյոգնաւէտ ծառայութիւնս և զջանս մեր, զորս ցուցաք, որպէս ի ժամ առմանն Գանձակու նոյնպէս և ի յուղևորակս Երևանու և Շրուանու»[61]։

Ցիցիանովի օրինակին էր հետևել նաև նրա մահից հետո գեներալ Նեսվետաևը, որն անտեսել էր գեներալ Ներոլսինի և գնդապետ Կարյագինի միջնորդությունը՝ ներկայացնելու մելիք Ջումշուդին կայսերական պարգևի[62]։ Այնուհետև, Մելիք-Շահնազարյանը շարունակում է. «Երկրորդ՝ գրէք թէ զիա՞րդ ոչ կազմէք զգունդ. առ այս պարտիք հաւաստի լինել որ դիւրին կարէաք զայս առնել թարց օգնականութեան ումեք, (եթէ ունիցէի առաջին փարթամութիւնս և զժողովուրդս, որք ի պատճառս գալստեան Աղայ Մահմադ խանին՝ սովու՝ և ժանտախտի ցիր և ցան եղեն ի Շրուան և ի Վրացստան) քանզի հայրն իմ և նախնիքն մեր միշտ ունեցեալ են առընթեր իւրեանց զայնպիսի գունդք զորս դուք պահանջէք

[60] ЦГИА Груз. ССР, ф. 2, 1804 г., д. 62, л. 23—23 об.

[61] «Դիվան Հայոց պատմության», գիրք Ե, վավ. ՃՀԹ։

[62] Նույն տեղում։

յինէն, ըստ որում երկիրն Ղարաբաղու տիրապետեալ են ինքեանք և բոլոր հայք և տաճիկք հպատակք են լեալ նոցա»[63]։

Այս նույն հարցերին մելիքներ Ջումշուդը և Աբովը անդրադառնում են նաև Մինաս Լազարյանին ուղղված 1807 թվականի դեկտեմբերի 14-ի նամակում, գրելով. «մեր ցաւն և մտատանջութիւնն ևս այդ է, որ մենք մինչև ցլետին կաթիլ արեանն ոչ խնայեմք զանձինս մեր վասն հայրենեացն Ռուսաստանու և ծարաւի գոլով մշտապէս փափագիմք, որ հաւատարմութիւն մեր յայտնի լիցի առաջի ամենաողորմ աթոռոյ ն. կ. մ., զի՞նչ օգուտ, որ ընդ գրուանաւ լինի ծածկեալ»[64]։

Այդ կապակցությամբ էր, որ մելիք Աբովը գրում էր. «Մեք մերով զանազան և աղքի քաջագործութեամբ և մեծագոյն հաւատարմութեամբ մնայցեմք անվարձ և անպսակ յանկեան ուրեք և իբրև աննշան ոք և հասարակ անձն համարիցիմք, ապա ե՞րբ լինիցիմք բարեբաղդ և ո՞ւմ յայտնիցեմք զցաւս մեր»[65]։

Դրությունը չփոխվեց տարիներ անց։ 1814 թվականի հոկտեմբերի 23-ին Ներսես Աշտարակեցին Հովակիմ Լազարյանի առջև նույն հարցն էր արծարծում. «Իրաւի տարակուսական է՝ ողորմած տէր իմ, զի յամենայն Վրաստան մեծամեծք և փոքունք որք միանգամ ամսօրեայ ժամանակաւ ի կալուածս իւրեանց ունեցեալ են զպանդխտացեալս ի հայոց, անփրծանելի կերպով ունին զողորմելիսն մինչև ցայսօր ևս իբրև զիւրեանց արծաթագին ստրուկ և ոչ ոք է որ օգնէ ողորմելեացն, իսկ սոքա մելիքք հայոց, և իբրև ինքնակալ իշխանք ի վաղուց ժամանակաց իւրեանց տարածեալ վայրաց և ժողովրդոց բազմութեանց և արեամբ չափ ևս ի վերջոյ երախտաւորք իւրեանց հպատակացն և ապրեցուցիչք ի սրոյ և սովոյ և յայլ զանազան նեղութեանց, այսպէս արհամարեալք և զրկեալք լինին»[66]։

1816 թ. օգոստոսի 12-ին, Երմոլովի կուսակալ նշանակվելու և իբրև լիազոր դեսպան Պարսկաստան մեկնելու առնչությամբ Հովակիմ Լազարյանը խորհուրդ էր տալիս դեսպանության անդամներ Ա. Ե. Սոկոլովի և Ա. Խուդաբաշյանի միջնորդությամբ բարեխոսել Երմոլովի մոտ Ղարաբաղի մելիքների համար. «մանաւանդ վասն խղճալի մնացորդաց մէլիքաց Ղարաբաղու և Սղնախու, որք զամենայն ստացուածս իւրեանց կորուսեալ՝ իբրև զտառապեալ մուրացկանս ի Տփղիս քաղաքի և այլ ուրեք աստանդական շրջեն առնելով ապրուստ իմն կամ զելս կեցութեան, որոց միայն ձեզ է թողեալ, զօրէն ձեռնտու հովուապետի և օգնականի առաջնորդ լինելով զայցելութիւն ի կուսակալէն և նորա ի դրանէ ողորմածագունեղ կայսերն հայցելոյ, զի բաւ է լինելոց նոցա, եթէ դարձուցեն ողորմելեացն այնոցիկ, գոնէ մասն ինչ ի գեղօրէից նոցա և ի հողոց, որով կարասցեն ապրիլ և անցուցանել զկեանս իւրեանց»[67]։

Պատահական չէր, որ հայկական շրջաններին այդքան հուզում էր Ղարաբաղի մելիքների ճակատագիրը, և ոչ էլ պատահական էր, որ ցարական իշխանություններն ամեն կերպ աշխատում էին անտեսել այն իսկապես մեծամեծ ծառայությունները, որ նրանք մատուցել էին ռուսական զորքերին ռուս-պարսկական պատերազմի տարիներին։

Ամբողջ XVIII դարի ընթացքում Ղարաբաղի հայկական մելիքությունները այն կորիզն էին հանդիսանում, որի շուրջը պետք է կազմակերպվեր ապագա հայկական պետությունը։ Ներքին երկպառակություններն ու գժտությունները, այնուհետև Աղա-Մահմադ խանի ավերիչ արշավանքները կործանիչ հարված հասցրին հայկական մելիքություններին, որի հետևանքով մելիքները ժողովրդի մի մասի հետ տարագրվեցին Վրաստան, իսկ ժողովրդի մեծ մասը ցան ու ցիր եղավ։ Դա խոշոր հարված էր հայ ազգային-ազատագրական շարժմանը, որովհետև ռուսական կառավարության հետ բանակցություններում հայկական մելիքությունն իբրև բանակցող կողմ էին հանդես գալիս, իսկ ունենալով զորական միավորումներ, իրենցից քաղաքական ուժ էին ներկայացնում, որի հետ այս կամ այն չափով պետք էր հաշվի նստել։

XIX դարի սկզբին, ռուսական կառավարության քաղաքական կուրսի փոփոխմամբ այլևս ցարական իշխանությունները հաշվի չէին նստում առանց այդ էլ քաղաքական ամեն մի նշանակություն կորցրած հայ մելիքների հետ, չնայած վերջիններիս ավելի քան հավատարիմ ծառայությանը։ Այս պարագան նշանակալից չափով հարվածում էր հայկական շրջանների Հայաստանի ինքնավարության վերականգնման նրկրտումներին։ Այդ պատճառով էր, որ Մինաս Լազարյանը փաստորեն պահանջում էր մելիքներից վերստեղծել իրենց զինական ուժերը, ռուսական կառավարական շրջաններին հայտնի դարձնել իրենց ծառայությունները, որպեսզի դրանով իսկ բավարար հող ստեղծվի ապագա քաղաքական պահանջների համար։

Այդ բանը մելիքներն իրենք էլ հասկանում էին, բայց ոչ մի կերպ չէին կարողանում հաղթահարել այն պատնեշը, որը ցարական իշխա-

---

[63] Նույն տեղում։

[64] Ե. Գեղամյանց, Պատմական նյութեր, էջ 31։

[65] Նույն տեղում, էջ 6։

[66] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 110։

[67] Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 33։

նութիւնները կանգնեցրել էին նրանց ձգտումների առաջ, ուստի և շարունակում էին մնալ ձախորդ աղերսարկուի դերում, ջանում էին նույն Լազարյանների միջոցով հասնել իրենց նպատակին, մասնավորապես Մինաս Լազարյանի միջնորդությամբ հասնել այն բանին, որպեսզի «յամենայն տեղեաց մեր ժողովուրդն և ռայեաթն ժողովեսցին ենթ կառավարական իշխանութեան մերոյ։ Երկրորդ՝ վերասցի իշխանութիւնն խանական և ազգ մեր բաժանեալ լիցի ի տաճկաց, լինելով ենթ վերահանական և ազգ մեր բաժանեալ լիցի ի տաճկաց, լինելով ենթ վերահասութեամբ տեղւոյն ռուսաց մեծաւորին, ով որ նշանադրեալ լիցի։ Եւ երրորդ՝ ամենաողորմածաբար շնորհեալ լիցի մեզ պրուէլիկ (պրիվիլեգիա, առանձնաշնորհում—Վ. Դ.), որպէս շնորհեալ է Նախիջևան քաղաքին, որ իրաւունք և դատարանք մեր ըստ ծիսի նախնեաց աւանդութեան մերոյ լինիցի օրինաւոր կերպիւ»[68]։

Եվ միայն այն բանից հետո, երբ այդ եղանակով կվերականգնվեին նրանց իրավունքները և Ղարաբաղի հայությունը կազատվեր խանական լծից ու կապրեր հայրենի հինավուրց օրենքներով, Մելիք Ջումշուդը և Մելիք Աբովը խոստանում էին «զքաջութիւն նախնեաց մերոց Մուշեղայ և Վարդանայ ըստ չափու կարողութեան մերոյ յառաջ բերել, գունդ կազմել միաւորութեամբ ընդ զօրաց ռուսաց և մինչ ցյետին կաթիլ արեան մերոյ զանձինս մեր ոչ խնայել վասն հաւատարմութեան տէրութեանս ռուսաց»[69]։

Սակայն բոլոր այս ցանկությունները մնացին անիրագործելի, թեև մելիքները շարունակեցին հավատարմությամբ ծառայել ցարական կառավարությանը։

Հայերի նկատմամբ վարած Ցիցիանովի խտրողական քաղաքականության դեմ բուռն բողոքով է ներծծված վիրահայոց առաջնորդ Հովհաննես Գեղարդակրի Եփրեմ արքեպիսկոպոսին ուղղած նամակը, որը վերջինս իր հերթին ուղարկել էր Լազարյան եղբայրներին ի գիտություն։ Չնայած «ողորմելի ազգ մեր,— գրում էր Հովհաննես արքեպիսկոպոսը,— եդեալ զանձինս իւրեանց ի վերայ անձանց ռուսաց, ընդ նոսին միաբան զինուորեալ հանդէպ թշնամեաց ամէնողորմած կայսերն իւրեանց», «բայց այս է տարարաղտութիւն հայոց հայր ողորմած, զի մեծ իշխան կողմանցս՝ ի ընէ անտի գոլով միանգամայն ատեցող հայրանունական անուան մերազանց, ջերմեռանդութեամբ հոգւոյն մարմնոյ յօժարակամ է ապարաղտ առնել զամենայն արամազնեայս զմեծն և զփոքր բոլորապէս առ հասարակ, և պարար ակն նորայ եթէ տեսանիցէ հաւասար զհայս ի յետին անարգութեան»[70]։ Այդպես նկարագրելով Ցիցիանովի վերաբերմունքը դեպի հայերն առհասարակ, Գեղարդակիրը կոնկրետ օրինակներ է բերում, որոնք բացահայտում են, թե ինչու Ցիցիանովի գրություններում առհասարակ հայերի մասին ոչ մի դրական բան չի պահպանվել։ Հայերը Ցիցիանովի համար «ժիդ» (ջհուդ) էին, նա հայերին քրիստոնյա չէր համարում, ուստի և հայերն առհասարակ «թէպէտ և թաւադ իցէ կամ ազնիվ եկեղեցական կամ աշխարհական, ամենեքին մի օրինակ ատելիք են յիշեալ իշխանին»[71]։ Նույնիսկ բանն այնտեղ է հասնում, որ նա ժանտախտի համաճարակի ժամանակ թույլ չի տալիս, որպեսզի հայերը հեռանան քաղաքից։ Բայց երբ հայերը փախչում և հավաքվում են Մարտղոփ գյուղում, որտեղ վրաց Ռուսթուել եպիսկոպոսը գոցել է տալիս հայոց եկեղեցին և թույլ չի տալիս ժամասացություն կատարել[72], Ցիցիանովը ոչ մի ուշադրություն չի դարձնում դրա վրա, չնայած ժողովրդի բողոքին։ Նույնիսկ անուշադրության էր մատնում Ցիցիանովը այն երևույթը, երբ տարբեր վայրերից Վրաստան տարագրված ոչ միայն գյուղացիական զանգվածներին, այլև քահանաներին էին վրաց իշխանները բռնի ճորտացնում։ Երբ մի քանի քահանաներ համարձակվում են բողոքել, ապա Ցիցիանովը նրանց բանտ է նետում, ստիպում օրը ցերեկով ջուր կրել բերդը, շաղախ պատրաստել և կամ ավել տալ նրանց ձեռքը և «վերակացութեամբ սալդաթաց զհրապարակս և զփողոցս սրբել տային ի տես բազմութեան այլ և այլ ազգաց քրիստոնէից և տաճկաց»[73]։ Այդ բոլորից հետո «իսկ թէ զի՞նչ իցէ հնար վասն ազգի մերոյ բարելաւութեան մեզ չէ յայտնի»[74]։ Եվ այդ բոլորի հետևանքը այն էր լինում, որ, ինչպես գրում էր Մինաս Լազարյանը եղբորը՝ Հովակիմին, «ցաւիմ և կսկծամ, որ ազգն մեր ըստ ամենայնի ի զոհ նուիրեալ զանձինս իւրեանց վասն հաւատարմութեան մեծի տէրութեանս. զի՞նչ օգուտ որ այնպիսի անխիղճ բարուք նախարարին, ընդ գրուանաւ ծածկի, ապստամբիցն մտերմութիւն բացայայտի և հաւատարմացն մեծագործութիւն գաղի»[75]։

Հայկական շրջաններում հատկապես բուռն ընդվզում էր առաջացնում այն հանգամանքը, որ ռուսական իշխանության հաստատումից հետո էլ ռուսական հովանին ընդունած խանություններում շարունակ-

---

[68] Ե. Գեղամյանց. Պատմական նյութեր, էջ 34։

[69] Նույն տեղում։

[70] ЦГИА СССР, ф. 880, оп. I, д. 207, лл. 209—210.

[71] Նույն տեղում։

[72] «Присоединение...», т. I, док. 212.

[73] ЦГИА СССР, ф. 880, оп. 1, д. 207, л. 210.

[74] Նույն տեղում։

[75] Նույն տեղում, 211—211բ։

վում էր նախկին անարգական վերաբերմունքը դեպի հայերը։ Այդ կապակցությամբ խիստ հետաքրքիր է 1815 թ. դեկտեմբերի 16-ին Հարություն Արարատյանին Ներսես Աշտարակեցու գրած նամակը Նուխու հայերի կրած հալածանքների վերաբերյալ, մասնավորապես «դին ի փակ» հարկի վերաբերյալ։ Զգալով իր անզորությունը այդ հարցը լուծելու, Աշտարակեցին գրում է. «Իրաւի, բոլորապէս պարտաւոր եմ ես ի դոյն մասին և առաջի ամենայն ժողովրդեան անայցելու հայոց ազգին մերոյ, ըստ որում քրիստոնեական է ձայնն, թէ հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց, այլ ճշմարիտ է առ իս, զի հոգւով և մտօք միշտ ի նոյն ճենճերեալ լինիմ, այլ անձամբ անձին ոչինչ զօրեմ ներգործել տակաւին վասն այցելութեան և ապահովութեան խղճալի ազգին մերոյ, որոց ողորմութեանն չափ գուցէ թէ տակաւին առ ես ոչ յայտնի լինիցի ձեզ...»[76]։ Դրա պատճառը ոչ թե «վարձկանական անփոյթ լինելն (է) հովուաց հօտին, այլ զանազան հզօրեղք են պատճառք այսպիսի նեղութեանց ողորմելի հօտին մերում մինչև ցայժմ ժամանակի ի ներքոյ հզօրագոյն ամէնողորմած հովանաւորութեան տիեզերասասան կայսերութեան ամենայն ռուսաց»[77]։

Այնուհետև Ներսես Աշտարակեցին գրում է, որ մահմեդական լծի տակ հայ ժողովրդի կրած անարգություններին և նեղություններին «յաւելաւ մեծ ևս քան զառաջինսն պատճառ անարգութեան և նեղութեան մերազանց՝ ջերմեռանդութիւնն նոցա առ աթոռ ողորմութեան Ն. կ. մ. ամենայն ռուսաց, որում խանդակաթ յուսով ակնկալեալ մնային յազգէ յազգ ի նախնեաց անտի մինչև ցայսօր. ըստ որոյ արդ ոչ է աւելի տարակուսական իմն զի ամենայն ազգն հայոց ի սիրտս ամենայն մահմետականաց անմեղադրելի պատճառանօք անարգեալ և ամենևին անարժան խնամոց իմն են՝ ըստ որում քրիստոնեայ և ըստ որում հաւատարիմ քրիստոնեայ տէրութեան, և անհաւատարիմ հայրենեաց հաւատոյ և աշխարհի և բոլոր բարեմասնութեան վիճակի հայոց կործանիչ մահմետական իշխանութեան. և զի մի սոսկ կարծիք և ի զուր համարումն միայն թուեսցի ձեզ սոյնպիսի համարումն մերազանց կողմանցս եղելոց ընդ իշխանութեան մահմետականաց»[78]։

Թվարկելով այն բոլոր իրեն հայտնի անօրինությունները, որոնց ենթակա էին խանություններում բնակվող հայերը, ընդհուպ մինչև դատարաններում նրանցից վկայություն չընդունելը իբրև քրիստոնյաների, Ներսես Աշտարակեցին հետևյալ տխուր մտորումներն էր անում. «ազգն հայոց որք ըստ ամենայն յայսոսիկ կողմանց ոչ գիտեն զլեզու և ոչ զօրէնս ռուսաց. ևս և ոչ իսկ ես, ի վերայ ամենայնի այսոցիկ այն է ահա զի նման թիթռան ցանկացեալ անհնարին սիրով խրախճանալ ի լոյս ճրագի ճառագայթարձակ արեգակնափայլ տէրութեան ռուսաց, այրին և տոչորին ցարդ ևս, երանի որք համբերեսցեն մինչ իսպառ այն զի տկարութիւնն մարմնոյ տայ զիս կասկածել բազմօք, թէ մի գուցէ սառնամանեացն սաստկութիւն հարկադրեսցէ զոմանս մուծանել ի կորստական բաղանիսն»[79], որից հետո Աշտարակեցին բերում է հազարապետ Գաբրիել Գեղամացու օրինակը, որը, անարգելով իր փառքը, փափագեց «մտանել յայս սահման իբրև երկնից արքայութիւն», բայց սովից նեղված ստիպվեց կրկին վերադառնալ դեպի «թշնամիսն հաւատոյ զի զանձինս միայն ապրեցուսցեն ի սովոյ»[80]։

Նուխու Վարդաշեն, Ճալեթ և Նիժ գյուղերի հայերը, չհանդուրժելով այլևս քրիստոնեության դավանելու համար «դին ի փակ» կոչված հարկի վճարմանը, այն բանից հետո, երբ նրանց բազմիցս դիմումները անհետևանք են մնում, երեք հարյուր հոգով դիմում են Թիֆլիս, գեներալ Ռտիշչևին և խնդրում ազատել իրենց այդ անարգական տուրքի վճարումից։ Ռտիշչևը դա համարում է բունտ, խռովություն և նրանցից երկուսին՝ Մուրադխանովին և Տարասանովին աքսորել է տալիս Սիբիր։ Տարբեր աղբյուրներից առնելով այդ լուրը, Հարություն Արարատյանը դիմում է ներքին գործերի մինիստրին և բողոքում գլխավոր հրամանատարի այդ արտառոց վարվելակերպի դեմ։ Մատնանշելով այն մեծ ծառայությունները, որ ցույց են տվել հայերը ռուսական զորքերին թեկուզ միայն 1796 թվականի պարսկական արշավանքի և 1804 թվականի երևանյան առաջին արշավանքի ժամանակ, փրկելով Ցիցիանովի կորպուսը կործանումից, Արարատյանը ցույց էր տալիս այն մեծամեծ օգուտները, որ կարող կլինի քաղել ցարական կառավարությունը հայերի նվիրվածությունից, տարածելով վերջիններիս ազդեցությունը ընդհուպ մինչև Հնդկաստան, շնորհիվ նրանց առևտրական լայն գործառնությունների, որով և միևնույն ժամանակ հսկայական եկամուտներ կապահովեն պետական գանձարանին[81]։

Սակայն ցարական իշխանությունները շարունակում էին հետևել այն վարքագծին, որի հիմքը դրել էր Ցիցիանովը։ Կարելի է վերցնել թեկուզ

---

[76] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 883։

[77] Նույն տեղում։

[78] Նույն տեղում։

[79] Նույն տեղում։

[80] Նույն տեղում։

[81] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 27, վավ. 41։

այն օրինակը, որ 1822 թ. կայսերական հրամանագրով ամենայն հայոց կաթողիկոսի վկայական գրությունները՝ ազնվականություն շնորհելու մասին, ռուսական կառավարությունը չէր ընդունում։ Այդ առթիվ Բեսարաբիայի Գրիգոր արքեպիսկոպոսը գրում էր. «...ցաւիմ յաղագս կայսերական տուեալ նոր հրովարտակի, ի յանարգանս հայրապետութեանն մերոյ։ Որ վկայութիւնք վասն ազնուականութեան ուրէք ընդունեցեալ չլինիցին։ Սակայն այս է զարմանքն, որ մանտալինն Ղալմուխաց իրաւունս ունի զիւր ազգին վկայել իսկ մեր կաթողիկոսն չունիցի, որ տարագիր ազգք մեր բացի նմանէ զայլ ընդհանրական տէր չունի»[82]։

Նման երևույթները ցավով ու տարակուսանքով էին լցնում հայ գործիչների սիրտը, քանի որ նրանք չէին կարողանում ի վերջո ըմբռնել, թե ինչու ցարական կառավարությունը հաշվի չի ուզում նստել հայ ժողովրդի տարրական պահանջների հետ, չնայած այն նվիրվածությանը, որը, ինչպես ցույց տվեցինք այս գլխի շարադրանքում, տածում էր նա դեպի Ռուսաստանը։

Ցարական կառավարության նման քաղաքականության հիմքում ընկած էին մի շարք դրդապատճառներ։ Առաջնորդվելով, մասնակիորեն, այսպես կոչված խաղաղ ծավալման քաղաքական սկզբունքով, ցարական կառավարությունը բոլոր խանություններում, բացառությամբ Գանձակի խանության, պահպանեց խանական ռեժիմը և, փաստորեն, ներքին ինքնավարությունը։ Այդ երևույթն արդեն, ինքնըստինքյան, անխաթար էր թողնում ճնշման և շահագործման հին մեքենան, որով իսկ ոտնակոխ էին լինում հպատակ քրիստոնյաների իրավունքները։ Ավելին, ջանալով խաներին ևս պահել դավաճանությունից, ցարական իշխանությունները մատների արանքով էին նայում խաների և նրանց պաշտոնյաների բոլոր ապօրինություններին։ Այդ հարցում, թերևս, փոքր դեր չէր խաղում նաև երկրամասի առանձնահատկությունները չըմբռնելու իրողությունը։

Այնուհետև, հայ ժողովրդական զանգվածների նվիրվածության մեջ տեսնելով նաև ինքնավարական ձգտումներ, ցարական կառավարությունը այնպիսի քաղաքականություն էր վարում, որոնք կոչված էին սառն ջուր ցողելու այդ ձգտումների վրա։ Վստահ լինելով, որ մուսուլմանական ծովում երերվող քրիստոնյա հայությունը այլ հենարան չունի քան ինքը, ցարիզմը անտարբեր էր դառնում վերջինիս նկատմամբ և ամենևին էլ մտահոգված չէր «մակերևույթի վրա քրիստոնյաներին հաստատելով», ինչ որ հուշակում էր Ալեքսանդր 1-ը դեռևս դարասկզբին։ Ցարական կառավարության խոսքերի և որոշ գործողությունների մեջ

[82] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 92։

եղած այդ հակասականությունն էր, որ տարակուսանք էր առաջացնում հայ գործիչների շրջանում։

5. ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԻԲՐԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՁԳՏՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Գաղութահայ բուրժուազիայի կազմավորման և զորեղացման հետ մեկտեղ օրակարգի առաջնակարգ հարցերից էր դառնում լուսավորության հարցը։ Ազգային ինքնագիտակցության գալով և դառնալով կազմակերպված հասարակական ուժ, հայ բուրժուազիան բնականաբար պետք է լուրջ ուշադրություն դարձնել ժողովրդական լուսավորության, գիտելիքների տարածման վրա։ Բազմաթիվ արտասահմանյան երկրների հետ ունեցած նրա առևտրական կապերը անհրաժեշտություն էին ստեղծում այլևայլ լեզուների իմացության։ Հայ առևտրական բուրժուազիայի առաջադեմ ներկայացուցիչները չէին կարող շաղդվել XVIII դարում և հատկապես այդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Եվրոպայում լայն տարածում գտած լուսավորական գաղափարներից։ Հենց այն փաստը, որ XVII—XIX դարերում հայկական մշակույթը իր մեծագույն զարգացումը ապրեց հայկական գաղթավայրերում, որտեղ տիրապետող բարձունքները գտնվում էին հայ առևտրական բուրժուազիայի ձեռքին, խոսում է այն մասին, որ լուսավորական ծավալված շարժման մեջ առաջնության պատիվը պատկանում է վերջինիս։

Նախապես լուսավորական շարժումը իր հայացքը հառել էր դեպի հայկական հին մշակույթը, որտեղից և քաղում էր իր մտավոր ու հոգեկան սնունդը։ Աստիճանաբար ասպարեզ էր գալիս բավականաչափ զարգացած մի գրական սերունդ, որը հին մշակույթի օգնությամբ աշխատում էր ինքնագիտակցության բերել ստրկության դարավոր խավարի մեջ խարխափող մի ժողովուրդ։

Սկսած XVIII դարի երկրորդ կեսից լուսավորական շարժումը լայն թափ ու մեծ ծավալ ստացավ հատկապես հայկական այն գաղթավայրերում, որտեղ տեսակարար մեծ կշիռ ուներ արդեն ձևավորված ու ազգային ինքնագիտակցության եկած հայ առևտրական բուրժուազիան։ Լուսավորական այս շարժումը սկսեց ցույց տալ միտումներ, որոնք որոշակիորեն բացասումն էին հնի և հաստատումը նորի։ Լուսավորական շարժման ծավալմանը մեծապես նպաստեց տպագրական գործը ևս, որին ձեռնամուխ եղավ հայ բուրժուազիան։ Դա ոչ միայն կապիտալի նախասկզբնական կուտակման արտահայտություններից մեկն էր, այլև ազգային ինքնագիտակցություն դաստիարակելու միջոց։ Հիմնադրվում

են դպրոցներ, որտեղ սկսում են ավանդական առարկաներին զուգահեռ ուսուցանել դասական և ժամանակակից եվրոպական լեզուներ։ Նախկին վանական նեղ շրջանակները սկսում են խորտակվել, գրական ասպարեզ են իջնում մարդիկ, որոնք այլևս հոգևորականի սքեմ չէին կրում, այս կամ այն չափով ծանոթ էին և շփում էին ունեցել եվրոպական լուսավորության հետ, մարդիկ, որոնք աշխատում էին լուսավորության գործը այնպիսի հիմքերի վրա դնել, որ կարողանային ավելի լայն կարիքների բավարարություն տալ։ Եվ եթե այդ ամենի կրողը հայ առևտրական բուրժուազիան էր, ապա դա պատահական չէր, քանի որ այն բխում էր նրա իսկ պահանջներից։ Ճիշտ է, դեռևս այդ շարժումը թերատ էր, շաղախված հին հասկացություններով ու սկզբունքներով, բայց արդեն կրում էր նորի ծիլերը, նորի, որը պետք է աճեր և զարգանար հաղթահարելով հինը։ Հայ բուրժուազիան չէր կարող բավարարվել առանց հայ եկեղեցականության աջակցության, մի երևույթ, որի մասին մենք հանգամանորեն խոսել ենք վերևում։

Առաջինը բարուրներում շարժվեց հնդկահայ առևտրական բուրժուազիայի առաջավոր մասը։ Գտնվելով այնպիսի վիճակում, երբ անգլիական կապիտալի մրցակցությունը նրա գոյությունը դնում էր սպառնալիքի տակ, հնդկահայ բուրժուազիայի կարկառուն ներկայացուցիչները՝ Շ. Շահամիրյանը, Մ. Բաղրամյանը և ուրիշներ դարձրին հայացքները դեպի իրենց ծնունդ տված երկիրը, որպես փրկության միակ ելքը, այնտեղ փնտրելով հանգրվան։ Բայց արևելյան բռնապետությունների լծի տակ կքած երկիրը, որտեղ կապիտալի ապահովության ոչ մի երաշխիք չկար, չէր կարող երազած հանգրվանը տալ նրանց այնքան ժամանակ, քանի դեռ չէր թոթափել բռնապետական լուծը։

Մի կողմից հայրենի երկրի նման դժնդակ վիճակը, մյուս կողմից եվրոպական լուսավորական շարժման հետ ունեցած որոշ ծանոթությունը նրանց հանգեցրին այն մտքին, որ ոչ միայն պետք է հոգ տանել հայրենիքի ազատագրության գործին, այլև հայրենիքն ազատագրելուց հետո այնտեղ այնպիսի կարգեր հաստատել, որոնք լավագույն հնարավորություններ կստեղծեն իր իսկ՝ բուրժուազիայի հետագա զարգացման համար։ Ծնունդ առան ժամանակի հայ քաղաքական մտքի գլուխ-գործոցները՝ «Յորդորակը», «Որոգայթ փառացը», «Նշաւակը»։ Ստեղծվեց գրական-քաղաքական մի հոսանք, որը հայկական լճացած իրականության մեջ թարմ ու մինչև այդ անծանոթ գաղափարներ էր ներարկում։

Ռուսաստանում հայկական մշակույթը չտվեց քաղաքական գրականության այդպիսի գլուխ-գործոցներ։ Բայց այստեղ էլ ծավալվել էր լուսավորական շարժումը և այն աստիճան, որ մտքեր էին հայտնվում, ո-

րոնք ժամանակին տարակուսանք կարող էին առաջացնել։ Թեկուզ վերցնենք այն տեսակետը, որ հայտնել է իր հայտնի «Հուշագրում» Հովհաննես Լազարյանը Ղարաբաղի մելիքների մասին։ Մինչ Շ. Շահամիրյանը մեծ հույսեր էր կապում հայ մելիքների հետ, Հայաստանի ազատագրության հարցում հաջողության հասնելու համար, Հովհաննես Լազարյանը նրանց փաստորեն դուրս էր նետում հաշվից, գտնում էր, որ նրանք չեն կարող ղեկավարել ազատագրական շարժումը, քանի որ «այդ հայ տիրակալների տգիտությունը նրանց ինչպես ամբողջ ազգի, այնպես էլ անձամբ իրենց համար դարձնում է անօգուտ»[1]։ Լուսավորության հարցի կապակցությամբ Ղարաբաղի մելիքներին անդրադառնում են նաև Մինաս և Հովակիմ Լազարյան եղբայրները 1777 թ. նոյեմբերի 6-ին իրենց հոր անունից Շահամիրյանին գրած նամակում։ Նրանք երազում էին այն մասին, որպեսզի «երանի թէ յաջողեսցի երբէք մեր ազգին այնպիսի բարեբախտութիւն և վիճակ, յորում զերծեալ ազատիցին ի վեհերտեալ թմրութենէ ծուլութեան իւրեանց, և յոտն կայցեն ի սիրտ և ի ազատութիւն»[2]։ Բայց այդ նպատակին հասնելու համար Լազարյան եղբայրները անհրաժեշտ էին համարում և գտնում էին, որ «նախ պարտ է ազգին մերոյ. մանաւանդ ի Սղնախ և ի Ղարաբաղ եղելոցն, ունիլ լուսաւորութիւն մտաց, և թողեալ զսնոտի ունայնահաւատութիւն իւրեանց և գոռոզութիւն, կրթիլ և վաստակիլ ի մրցմունս գիտութեան, պատմութեան և աշխարհածանօթութեան և լինիլ հասու մտօք այնմ նիւթոյ և բանից, զորոց ճառէ բարեյիշատակ որդին քոյ Յակոբ ընդ դաստիարակին իւրոյ հանճարամիտ Մովսէսի»[3]։

Այսպիսով, առաջին պլանի վրա է մղվում գիտության և լուսավորության հարցը, առանց որոնց հնարավոր չէ ոչ հասկանալ «Յորդորակի» գաղափարները և ոչ էլ պիտանի լինել հայ ազգային-ազատագրական շարժմանը։ Վերոհիշյալ տողերը ինքնըստինքյան պերճախոս ապացույց են այն բանի, որ Ռուսաստանում բնակվող հայ գործիչները կանգնած էին այն տեսակետի վրա, թե ազգային ազատագրությունը և վերածնությունը կարող է լիովին ձեռք բերվել լուսավորության ճանապարհով։

Լազարյանների կարծիքով հայ հոգևորականությունը ևս պատասխանատու անելիքներ ուներ։ Հոգևորականությունը պետք է քարոզեր ազգային ազատություն և հասկացներ ժողովրդին, որ աղոթքները և պասերը չէ, որ կհանգեցնեն դրան, այլ սերը, միաբանությունը և լուսավորու-

[1] Архив АН СССР, ф. 99, оп. 2, д. 13, л. 60.
[2] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 610, л. 27.
[3] Նույն տեղում։

թյունը։ Նրանք գտնում էին, որ հոգևորականության դերը Հայաստանում մեծանում է առավել ևս նրանով, որ պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդական զանգվածները մնում էին իբրև «հայեցողք» «ի շրթունս նոցա», հպատակ հոգևորականության[4]։

Եվ միայն այն բանից հետո, երբ ժողովուրդը կարթնանար վեհերոտության թմրությունից, երբ նրա միտքը կլուսավորվեր, կզգար միաբանության ուժը և անհրաժեշտությունը, միայն այդ դեպքում Արցախի մելիքները կկարողանային ապստամբել իրենց տիրողների դեմ, հաղթել ու վռնդել նրանց և ազատություն ձեռք բերել, հակառակ դեպքում, ամեն ինչ ի դերև կանցներ, ինչպես ի դերև անցավ Պետրոս Մեծի ժամանակներում։

Չպետք է մոռանալ նաև, որ 18-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանում ևս լուսավորական շարժումը բավական մեծ թափ ստացավ։ Եղավ ժամանակ, երբ այն մասամբ ընդգրկեց նաև կառավարող շրջանները։ Այդ հանգամանքը ակնբախ է և չէր կարող ազդեցություն չգործել Լազարյանների վրա։ Նրանք մեծ դեր և նշանակություն էին վերապահում լուսավորության գործին, համոզված լինելով, որ այն ազգային գոյատևման, զարգացման և ինքնապահպանման հիմնական աղբյուրն է։ Լուսավորության միջոցով է, որ հայ ժողովուրդը դուրս գալով դարավոր թմրությունից և տգիտությունից, պետք է հաղորդակից դառնար եվրոպական քաղաքակրթությանը։ Դրա համար էլ խիստ մեծ նշանակություն էին նրանք տալիս օտար լեզուների ուսուցմանը։ Եվ Հովհաննես Լազարյանը տարիներ շարունակ այն միտքն էր փայփայում, որպեսզի «հոգուտ իր ազգի ուսումնարան հիմնի և պահի»[5]։ Արդեն նրա միջոցներով էր երկար ժամանակ պահվում Նոր Նախիջևանի դպրոցը[6], Թիֆլիսի դպրոցը[7] և այն էլ պայմանով, որպեսզի ուսումնասիրվեն բնական գիտություններ և օտար լեզուներ։ Բայց Լազարյանի հիմնական նպատակն էր «կառուցանել ի տէրութեան ռուսաց ընդհանրական ուսումնարան մի՝ վասն հայկասեռ նրբամիտ բանասէր մանկանց։ Բայց յոքնադիմի զբաղմունք իւր՝ ոչ ներեցին նմա՝ մինչ կենդանի էր՝ լցուցանել զփափագ իւր»[8]։

Նազար Հակոբջան Շահամիրյանը ևս մատաղ սերնդի «բանականավայել լուսավորութեան մտաց» հետ էր կապում այն ակնկալությունը,

[4] Վ. Դիլոյան, Նշվ. աշխատ., էջ 174։
[5] ЦГИА СССР, ф. 880, оп. 1, д. 79, л. 94.
[6] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 102, գործ 6, վավ. 7։
[7] Նույն տեղում, վավ. 335։
[8] Նույն տեղում, գործ 104, վավ. 3։

որ «ի սակաւ միջոցի» Հայաստան աշխարհի անունը դուրս կհանվի «յանարգ դասաւորութենէ տգիտութեան»[9]։

Ազգի լուսավորության հարցը մտահոգում էր բոլոր նրանց, ովքեր տոգորված էին հայրենիքին և ժողովրդին ծառայելու պատրաստակամությամբ։ Եփրեմ արքեպիսկոպոսը հայտարարում էր, որ իր «այժմեան և յապագային հետևողութեան ջանն և ուխտադրութիւնն ոչ այլ ինչ է» եթե ոչ իր կյանքի մնացյալ տարիներին անձը դնել «ի վերայ հօտին, որ ինձ հանձնեցաւ և յիւրաքանչիւրում քաղաքի համալսարանս հաստատել իմս արդեամբ և քրտամբ, որով ազգ մեր ոչ մնասցին ի կուրութեան, այլ օրըստօրէ ի լուսաւորութիւնս յառաջասցին...»[10]։ Կաթողիկոս դառնալուց հետո էլ ցավով նշում էր, որ «հանապազ զհետ պնդելով գտանելոյ անդէն զառիթս լուսաւորութեան մանկանց մերոց բայց ոչ գտանեմ, ըստ որում ասիական կողմունք և դրութիւնք օգնեն ինձ ի նմին ոչ բնաւ»[11]։

Բոլորը չէ, որ ներկան մռայլ գույներով էին պատկերացնում։ Այսպես, Հակոբ Շահան-Ջրպետյանը, ճիշտ է, նշում էր, որ «ընդ յեղափոխութիւնս տարացուց թէութեանց Արարատեան աշխարհիս՝ այն առաջին եռանդն (ի նկատի ունի հայկական նախնի մշակույթը—Վ. Դ.) գաղջանալ սկսաւ, և ճարտարամիտ հիւսուածք բանից գրուածոց, և յիշատակութիւնք քաջաց յաղթանակաց մերոց՝ գոգցեալ ոսկեղէն դարու մազդեզանց քարակելոց՝ ցրուեցան և կամ կան մնան ըստ մասին ի խորին լռութեան, իբր յաղջամղջին գիշերին ի խավարտնին խորշս վայրի»[12], բայց և չպետք է մոռանալ «զի մեծամեծ գործառնութեանց կատարելութիւնք, տիրապետութեանց հիմնարկութիւնք, տէրութեանց տևողութիւնք, քաջապինդ շահատակութիւնք, լայնատարր խորհրդածութեանց դիտողութիւնք, բազմատեսակ ուսմանց և վարժարանաց արարչութիւնք, իմաստասէր և քաղաքավարեալ արանց բազմութիւնք, ցեղցեղ սոփեստալիր գրուածոց առատութիւնք, պետական և զինուորական օրինաց սահմանադրութիւնք, կղերական և աշխարհային կարգաց կանոնադրութիւնք, քաղաքաց, աւանից, ամրոցաց, ապարանից և տաճարաց հրաշակերտութիւնք, և այլ ազգի ազգի անմահական յիշատակաց վայելմունք չեն և չկարեն լինել գործ վայրենաբարոյ կամ իմաստատեաց ազգի ումեք. զի են պտուղք իմաստութեան, և սեպհական ձիրք քաղաքավարեալ արանց և ազանց»[13]։

[9] «Անցք կամ գործք», էջ 7։
[10] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. ՃԼԸ։
[11] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 4։
[12] Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 210դ։
[13] Նույն տեղում, վավ. 210։

Շահան-Ջրպետյանը գտնում էր, որ այդ ամենը պետք է վերակենդանացնել հայ ժողովրդի գիտակցության մեջ, որովհետև ներկա անմխիթար վիճակը արդյունք է կյանքի պայմանների հետևանքով ոգու վաղեմի աշխուժության կորստի, ուստի հարկավոր է փութալ և «ի մի հաւաքել զառաքինի վարս, զխոհական ասացուածս, զիմաստուն դիտմունս, զազգասիրական գործառնութիւնս, և զայլ յաւերժական գովութեանց արժանաւոր գործողութիւնս նախնեաց մերոց և ժամանակացացն» «ի մըշտընջենաւոր յիշատակ ազգային պարծանաց»[14]։

Լուսավորությունը, երիտասարդության ու մատաղ սերնդի կրթությանը հոգ տանելը, որպեսզի նրանք «ի նազելի թարմ տես մանկութեան իւրեանց կրթեալ ի պէս գիտութիւնս, իմաստանայեղծ զգօնութեամբ իւրեանց լիցին կանգնօղք հայրենեաց, լուսաւորիչ հայրենակցաց և փառք և պարծանք համօրէն արամեանս տոհմի»[15], համարվում էր ազգային առաջնահերթ պահանջ։ Լուսավորությունն է պատճառը, որ «բազմագումար ազգք եւրոպացիք՝ որք երբեմն հանգոյն ներկեան մերոյ վիճակի յանգիտութեան և ի խաւարի բերանաբաց խարխափէին զարդիս գեր քան զչափն հանդիսացեալք գովաբանին պերճապայծառ և սքանչելի օրինակաւ»[16]։

Ժամանակի հայ առաջադեմ գործիչները ճիշտ կերպով էին գիտակցում և հասկանում, որ կրթական գործը պետք է դուրս բերել վանական նեղ շրջանակներից, դարձնել ընդհանուր հասարակության սեփականություն, որ ժողովրդին չպետք է զրկել գիտությունը ճաշակելու բարիքից, մատաղ սերնդին կրթել, «թարց պարտաւորելոյ զոք ընդդէմ իւրոյ կամաց ի կրօնաւորութիւն», քանի որ դրանով իսկ «զրկեն զժողովուրդն յաստուածատուր շնորհաց զոր պարգևեալ է տէր վասն հասարակաց, և ոչ թէ միայն կրօնաւորաց»[17]։ Իր ժամանակի հայ իրականության համար սա մի խոշոր առաջընթաց քայլ էր, որը պետք է շղթայազերծեր գիտությունը կրոնական կապանքներից և ծառայեցներ հասարակության բարիքին։

Հատկանշելի է նաև ժամանակի համար ողջունելի այն լայնախոհությունը, որ հանդես էին բերում հայ առաջադեմ գործիչները, մերժելով կրոնական խտրականության պախարակելի ախտը, դավանական իրարամերժությունը։ Լինելով լուսավորչադավան, նրանք ըմբռնում և

[14] Նույն տեղում։
[15] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 106, գործ 14, վավ. 1։
[16] Նույն տեղում։
[17] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 104, վավ. 19։

գնահատում էին Մխիթարյանների ազգանվեր գործունեությունը, հատկապես ժողովրդական լուսավորության գործում։ Այսպես, Հովակիմ Լազարյանը խորհուրդ էր տալիս իր որդի Խաչատուրին՝ Եվրոպա շրջագայության գնալիս այցելել նաև Վենետիկ, «ուր տեսանել կարէք և Մխիթար աբբայի միաբանութիւնն և հայոց մեծ ակադէմին»[18]։ Ռումինահայ գործիչներից Պողոս Սեբաստյանը գրում էր, որ Մխիթարյանները «ի պայծառութիւն ազգիս» «ուխտեալ իսկ են» և «զանձինս իւրեանց զոհեալ. և առ այս՝ վկայ հաւատարիմ արդիւնք նոցա արձանացեալ կան յանդիման ամենեցուն»[19]։ Մխիթարյան միաբանները, շարունակում էր Սեբաստյանը, «ունին զխաղաղական վարս և զկրթականութիւն ի ներքին և յարտաքին տեղեկութիւնս, թողից ասել զնախանձն հայրենեաց», որոնք «չեն անծանոթք ի ճշմարտասիրաց»[20]։ Նա գտնում էր, որ «կիրք յաշաղկոտաց չգտանեն անդ տեղի՝ ուր նախանձն ընտանի և հայրենի սիրոյ մերժեց և տարագիր առնէ զհեռ և զնախանձն չարին»[21]։

Այսպիսով, առաջնահերթ խնդիրը, որ նաև ժամանակի հրամայական պահանջն էր, ազգի միասնությունը և լուսավորությունը ապահովելն էր։ Ազգի լուսավորության նախնական պայմանը նոր օրերի ոգուն համապատասխանող դպրոցների ստեղծումն էր, որի մասին այնքան մտահոգվում էին Հովհաննես Լազարյանը և առհասարակ բոլոր առաջադեմ գործիչները։

Հայ ժողովրդի մեջ լուսավորության տարածման գործում խոշոր դեր խաղաց Մոսկվայում հիմնադրված Լազարյան ճեմարանը, որը միաժամանակ դարձավ հայ և ռուս ժողովուրդների բարեկամության խորհրդանիշներից մեկը։

Իր դռները հայ մատաղ սերնդի առջև բացելով 1815 թվականին, Լազարյան ճեմարանը իր գոյության առաջին իսկ օրերից հետամուտ էր հայկական միջավայրում լուսավորության տարածմանը և հայ մշակույթի զարգացմանը։ Չնայած արտաքին հզոր ազդակներին, խարդավանքներին և փորձերին՝ շեղել ճեմարանն իր ուղեծրից և օգտագործել քաղաքական նպատակներով, Լազարյանների երախայրիք այդ կրթական հաստատությունը մեծամեծ ծառայություններ մատուցեց հայ ժողովրդին, նրա մշակութային վերելքին։ Լազարյան ճեմարանը միաժամանակ յուրովի երևույթ էր հայ իրականության մեջ։ Ստեղծված լինելով հայ

[18] ЦГИА СССР, ф. 880, оп. I, д. 240, л. 190—190 об.
[19] Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 210բ։
[20] Նույն տեղում։
[21] Նույն տեղում։

մատաղ սերնդի դաստիարակության, հայ ժողովրդի լուսավորության համար, այն երբեք չպարփակվեց ազգային նեղ պատյանի մեջ, դուրս եկավ ազգային նշանակության շրջանակներից և իր արժանի տեղը գրավեց համամարդկային մշակույթի պատմության մեջ, որպես Արևելքի ժողովուրդների հնագարյան մշակույթի, պատմության և լեզուների ուսումնասիրության գլխավոր կենտրոններից մեկը Ռուսաստանում։

Հիմնադրելով Լազարյան ճեմարանը, նրա հիմնադիրներն ըմբռնում էին, որ մեծ պատասխանատվություն են վերցնում իրենց վրա, որ ձեռնամուխ են եղել մի գործի, որը հայ ժողովրդի համար կենսական կարևորություն ունի։ «Այս գլխաւոր մի գործ է, օգտաւէտ և ազգային,— գրում էր Հովակիմ Լազարյանը,— ծախս և խարջ մեծ կրեմք, աշխարհ ամենայն ի մեզ հայի, մի գուցէ գործն սկսեալ, ծախիւք աւերեալ, անկատար մնասցուք, և ի մէջ ազգաց և ազանց իւրոց և օտարաց՝ խայտառակեալ մնասցուք»[22]։

Սակայն գործը հաջողությամբ պսակվեց, և ճեմարանը կարողացավ հայ ժողովրդի կյանքում իր «օգտաւետ և ազգային» դերը խաղալ։ Դեռ ճեմարանի գոյության սկզբնական շրջանում ժամանակի հայ գործիչները հասկացան Լազարյան ճեմարանի այդ մեծ կոչումը և արժանապես գնահատեցին այդ լուսավորական-կրթական հաստատությունը։ Եթե մինչ այդ, Հովակիմ Լազարյանի արտահայտությամբ, «իբր կորագլուխ էաք ի մեջ ազգաց և ազանց», ապա ճեմարանի հիմնադրմամբ դրությունը բոլորովին փոխվեց, որովհետև հայերը ևս ունեն մի ուսումնարան, «որ եթե ոչ առել պայծառ և գեղեցիկ քան զայլազգեաց, սակայն գեթ նման նոցին և ոչ նուաստ, զոր այժմ ունիք և ի պէտս ուսման մանկաց ձերոց ներկայից և հեռակայից մերազնեաց պիտոյացուցանել և վայելել կարէք, զի ձեր է՝ սիրելի ազգիս Հայոց»։ Դրա համար էլ նա խնդրում էր իր համաերկրացիներին «ընդունել և սիրել» այն որպէս «զդայեակ և զտինս ի լուսաւորութիւն մտաց որդւոց և ապագայ ծննդոց Արամազնեաց», և ամեն կերպ օժանդակել նորոգ ուսումնարանին[23]։

Համարելով Լազարյան ճեմարանը իբրև «զարձան յաւերժական ի լուսաւորութիւն տանս Թորգոմեան»[24], իբրև «իսկական միջոց լուսաւորելոյ զազգն և փառաւորելոյ զանուն նորա ի մեջ օտար ազանց», «գործ իմաստութեան արժանի քարոզելոյ յամենայն տեղիս, և թողլոյ զյիշատակ յապագայ եկելոց ի առնուլ զօրինակ բարի»[25], հայ գործիչները

[22] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 102, գործ 3, վավ. 120։
[23] Նույն տեղում, վավ. 119։
[24] Նույն տեղում, թղթ. 106, գործ 14, վավ. 71։
[25] Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 210դ։

հույսով և լավատեսությամբ էին նայում իրենց ժողովրդի ապագային, որովհետև ստեղծվում էր մի օջախ, որը «յարուցելու (էր) զազգ մեր արամեան ի քնոյ թմբրութեանն»[26], դառնալու էր «աթոռ յուսոյ մեծի և տեղի տիրագոյն մխիթարութեանց համօրէն ազգի»[27]։

Այս առումով խիստ հատկանշական են ժամանակի մտայնությունը բնորոշելու տեսակետից Ներսես Աշտարակեցու թերևս մի փոքր չափազանցված զեղումները. «...ով կարէր ածել երբեմն զմտաւ թէ յետ հազարաւոր շարաշուք ամաց՝ յաջորդելոց են ժամանակք շնորհաշուքք՝ յորս նեղեալ և վշտացեալ արամազնեայք ոգի առեալ ունելոց են զյոյս վերանորոգութեան իւրեանց և տեսանելոյ զաւուրս բարութեանց»[28]։ Այդպիսով, ի դեմս Լազարյան ճեմարանի Ներսես Աշտարակեցին ժողովրդի լուսավորության գործը համարում էր ազգի «վերանորոգության» նախապայման։

Գիտակցելով իրենց ստեղծած ուսումնական հաստատության կարևորությունը հայ ժողովրդի համար հատկապես այն հատվածի համար, որը գտնվում է ռուսական տիրապետության ներքո, Լազարյանները կամենում էին «զի ուսումնարանն մեր եղիցի գլուխ հայոց դպրոցացն ողջոյն ըստ օրինակի համալսարանին ռուսաց ունիվերսիդէտ կոչեցելոյ, և այնք իբրու անդամք կախեսցին զայնմանէ. նման ծառոյ ոստովք աճելոյ որ ի ժամու տուեալ զպտուղ քաղցրացուցանէ զախորժակ զգործիչ ծարաւի փափագանաց մարդկան»[29]։ Լազարյանների մտադրությունն էր Լազարյան ճեմարանի գլխավորությամբ Աստրախանի, Թիֆլիսի, Ղրիմի, Գրիգորիոպոլի, Նոր Նախիջևանի դպրոցները համախմբել, ռուսական համալսարանական համակարգի հետևողությամբ, մեկ ընդհանուր կազմակերպության մեջ, ավելի նպատակասլաց դարձնելու համար հայ ժողովրդի լուսավորության գործը։ Ուստի նրանք բացատրում էին, որ «այլ խրախուսեալ եղաք լինել յայդ ձեռնամուխ հայելով յանյառաջադիմութիւն մերազնէից և անկացեալ յանօգնական վիճակ անկիրթ և անուս մանկաց. մանաւանդ զի հայր Մանուէլ Վարդապետն (Կյումուշխանեցին— Վ. Դ.) խնդրեալ է ի մէնջ և խնդրէ ցայսօր զի դպրոցք նահանգին Ղրիմու և Գրիգորիոպոլոյ եղիցին ընդ Հովանիս ուսումնարանի մերոյ...»[30]։

Լուսավորության և մատաղ սերնդի դաստիարակության գործը չէր

[26] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 106, գործ 14, վավ. 37։
[27] Նույն տեղում, թղթ. 103, գործ 9, վավ. 74։
[28] Նույն տեղում, թղթ. 105, գործ 13, վավ. 159։
[29] Նույն տեղում, թղթ. 106, գործ 14, վավ. 37։
[30] Նույն տեղում։

սահմանափակվելու միայն Լազարյան ճեմարանով, և ոչ էլ արդեն գոյություն ունեցող դպրոցներով։ Անհրաժեշտ էր բացել նոր դպրոցներ, որոնք իրենց որակով և նպատակադրումներով պետք է տարբերվեին հին դպրոցներից։ Հատկապես նման կարիք կար պարսկական տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում, որտեղ Սիմեոն կաթողիկոսի ստեղծած Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը դադարեցրել էր իր գործունեությունը։ Այդ հանգամանքն էր, որ դրդում էր Հովակիմ Լազարյանին 1811 թվականի հուլիսի 6-ին դիմել Եփրեմ կաթողիկոսին և «անպատկառ յանդգնիլ» «խորհրդատու լինիլ» մի փոքրիկ դպրոց բացելու Էջմիածնում և այնտեղ «թարց իւիք ցասման, բարկութեան և գանից պատժոյ հմտեցուցանել, զի բարկութիւն, սպառնալիւք ահացուցանելն և խիստ պատժելն բարբարոսական է գործ, միշտ խռովեցուցիչ և յուսահատեցուցիչ աշակերտի, նմանապէս և տախտկութիւն ուսուցչին» և այնտեղ հավաքված մանուկներին, «հմտեցուցանել» «ի քերականութեան և ճարտասանութեան լեզուի մերում լաւապէս կրթել ի աստուածաբանութեան, պատմութեան, աշխարհագրութեան և տաղաչափութեան»[31], այսինքն այն ամենին, ինչ որ պետք է հոգևորականներին։

Հովակիմ Լազարյանը հույս էր հայտնում, որ եթե «այսպիսի մի կարգավորեալ փոքրիկ ուսումնարան այդր սկզբնաւորեալ հաստատեսցի, հավատի եմ որ բազում բարիս է վայելելոց սուրբ աթոռդ զի ի ապագայ դարս և ի ժամանակս ի նոցունց լաւ և պիտանի անդամս, նուիրակունս, առաջնորդս, ուսուցիչս, այլ և հայրապետութեան արժանաւոր անձն էք ունելոց և ճաշակ կամ պտուղ այնպիսի կացուցմանց ի քիմս միաբանից մի անգամ անկեալ, այնքան ինքեանք սիրահար և կապակցեալ են լինելոց ընդ համալսարանին, որ շափիղ նորին յաւետ մնալով ամ ըստ ամի ծաղկելոց է ուսումնարանն այն և ժամանակաւ լինելոց նման կացուցման բարեյիշատակ Մխիթարա աբբայի ակադէմու այսինքն համալսարանին...»[32]։

1813 թվականին Հովակիմ Լազարյանի առաջարկած փոքրիկ դպրոցի նման ժառանգավորաց մի դպրատուն է բացվում Էջմիածնում։ Էջմիածնի դպրատան բացումը անգամ հեռավոր Հնդկաստանի հայերի համար «ուրախութիւն և բերկրութիւն սրտի» եղավ։ Նրանք գրում էին, որ նման «ազգօգուտ» գործերը միշտ նրանց խնդություն են պատճառելու, և որ «ըստ կարեաց մերոյ և ըստ խոստման ժամանակին սիրով մասնակից եմք լինելոց»[33]։

[31] Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 31։
[32] Նույն տեղում։
[33] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 32, վավ. 41։

Եփրեմ կաթողիկոսը գիտակցում էր, որ Էջմիածնի ժառանգաւորաց ուսումնարանը հեռու է դեռևս անհրաժեշտ կատարելությունից և բարձրությունից, բայց հույսը չէր կորցնում, որ ժամանակին այն ավելի աշքառու դեր կխաղա։ Ուստի նա գրում էր Հակոբ Շահան-Զրպետյանին, թե «պինդ ունիմք կալեալ առ աստուած զյոյս մեր գուցէ թէպէտ ոչ յայն աստիճան գիտնականաց մերոց և յազատ և ոսկեղէն դարս անցելոց, այլ սակայն ի մերուս այս ընդ ծառայութեամբ այլոց հասանիցեն բաղդատեալ զինքեանս ընդ նոսա և որոճեալ զբանս նոցին ի քիմս իմացականութեան իւրեանց»։ Իսկ հետագայում ամեն ինչ լավ կգնա, միայն թէ «շնորհեսցէ տէրն զազատութիւն ծառայական լծոյ մերոյ, և տեսանել զգերագոյնն»[34]։

Քանի որ մայր աթոռի վարժարանում անգլերենի և լատիներենի ուսուցիչ չկար, 1816 թվականին Եփրեմ կաթողիկոսը նվիրակ Վրթանես արքեպիսկոպոսի հետ երկու պատանիների՝ Դավթին և Սահակին ուղարկում է Հնդկաստան, որպեսզի մտնեն անգլիական ուսումնարան և «ուսանեն զպէտսպէս լեզու և արուեստ»[35]։ Այս փաստը ինքնըստինքյան վկայում է, որ Եփրեմ կաթողիկոսը իսկապես մտադիր էր Էջմիածնում մի պատկառելի դպրոց ստեղծել, բայց տիրող քաղաքական իրադրությունը ի դերև հանեց նրա ջանքերը։

XIX դարի սկզբներին Ռուսական կայսրության սահմաններում ստեղծված հայկական դպրոցներից Լազարյան ճեմարանից հետո իր նշանակությամբ առաջինը, անկասկած, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն էր։ Նա ևս կոչված էր «ի մի փարախ հայրենասիրութեան»[36] հավաքել հայկազուն մանուկներին և դաստիարակել նրանց նոր ոգով։ Անշուշտ, Ներսիսյան դպրոցը ստեղծվեց Լազարյան ճեմարանի հետևողությամբ և անմիջական ազդեցության տակ, մանավանդ եթե ի նկատի առնելու լինենք այն հանգամանքը, որ Ներսիսյան դպրոցի հիմնադիր Ներսես Աշտարակեցին դեռևս 1807 թվականին Ռուսաստանում՝ Նոր Նախիջևանում գտնվող ժամանակ Հովակիմ Լազարյանի հանձնարարությամբ կազմել էր նրա հիմնադրելիք ուսումնարանի (Լազարյան ապագա ճեմարանի—Վ. Դ.) կանոնադրությունը։ Ձեռնամուխ լինելով դպրոցի կառուցմանը, Ներսես Աշտարակեցին իր առաջնահերթ պարտավորությունն էր համարում նրա կառավարումը, «զորս յառաջև յետոյ միմիայն է ինձ նպատակ համազգի բիւրեաց, ոչ խնայեցից ոչ զծանր և ոչ զթեթևն ինձ, փութալ

[34] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 4։
[35] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 32, վավ. 41։
[36] Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 210բ։

ի լրումն բաղձանաց իմոց այսոցիկ՝ անձամբ անձին, առանց յապաղելոյ»[37]։

Եթե Լազարյան ճեմարանը կամ Աստրախանի Աղաբաբյան վարժարանը հայ մեծահարուստների ներդրած գումարներով էին կառուցվել, ապա Ներսիսյան դպրոցը արգասիք էր, «գտանեցեալ բարերարաց յայտնեցելոց հայրենասիրութեամբ ի հեռաւորաց կամ ի մերձաւորաց»[38]։

Հովակիմ Լազարյանը խիստ բարձր էր գնահատում Ներսես Աշտարակեցու հայրենասիրական այդ ջանքերը և գրում էր նրան, որ «պէս պէս ազգաշէն մեծագործութիւնք վերերևեալք յամենայն բարութեանց անքաքտացեալս ժամանակի յանխոնջ և յոքնաքիրտն ձեր երկասիրութենէ յանճառ ցնծութիւն զսիրտս հրաւիրեն զբարեսիրաց», որ «գերազտակար դպրոցիդ» «սկզբնաւորութեան և առ սակաւ սակաւ կատարելագործութեան» համբավը «օր քան զօր յաճախելով առ լսելիսն իմ, յորդորէ զիս յաղօթս առ տէր կալ և հայցել հեղուլ ի ձեր վասն զկրկին հոգիս անուանակցաց ձերոց սրբոց Նէրսիսից Մեծին և Շնորհալւոյն՝ առ ի զողորմելի ազգս մեր յառաջին փառս վերածել յանթերի լրութիւն բաղձանաց»[39]։

Ազգային լուսավորության, դպրոցների հիմնադրման և մատաղ սերընդի դաստիարակության առնչությամբ վերևում բերված բոլոր փաստերը, դատողությունները, խոհերը, խորհրդածություններն ու մտահոգությունները վկայում են, թե հայ ժողովրդի ապագայի հարցում որքան մեծ տեղ էին գրավում և ինչպիսի համապարփակ խորհուրդ ունեին այդ հարցերը։ Լուսավորական ծավալված շարժումը սերտորեն աղերսվում էր հայ ազգային-ազատագրական խնդիրներին և համարվում այն հիմնաքարերից մեկը, որի վրա պետք է ամբառնար «Արամեան ազգի» ապագան։

Համարելով հայոց լեզուն հայ ժողովրդի գոյատևման հիմնական երաշխիքներից մեկը, ժամանակի հայ գործիչները փնովում էին բոլոր նրանց, ովքեր դժգոհում էին իրենց հայ ծնված լինելուց կամ ուրանում իրենց մայրենին։ Այսպես, Սերովբե վարժապետ Պատկանյանը պարսավում էր Աստրախանում բնակվող ապագա Դելյանովների նախնիներից Մինաս Դիլանչյանցին, որը «շաղակրատել (էր) երանի թե ոչ էր ծնեալ հայկանուն»[40], մի դատողություն, որին լիուլի հետևեցին նրա հետնորդները, փոխելով ոչ միայն իրենց ազգանունը, այլև ազգային ոգին։

[37] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 158։
[38] Նույն տեղում, թղթ. 103, գործ 9, վավ. 74։
[39] Նույն տեղում, Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 18։
[40] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 105, գործ 11, վավ. 27։

Դրան հակառակ, Հովակիմ Լազարյանը խորհուրդ էր տալիս կնոջը «ընդ բոլոր երեխայիցդ միշտ հայերէն խօսիլ և ասել նոցա, որ նոքա ևս ընդ միմիանս հայերէն խօսելով իւրեանց ուսմանն հետևող լիցին...»[41]։ Հովակիմ Լազարյանը իր խնդությունն էր հայտնում դստերը՝ Եղիսաբեթին, գովաբանում նրան, որովհետև նա «ըստ պատուիրանաց» իր ծնողների նրանց առջև կանգնում էր «ի մայրական լեզուի կրթեալ, ի բարս քաղաքավարեալ, ի ազգասիրութեան պնդեալ...»[42]։ Դրա կողքին կային հայ երիտասարդներ, որոնք «միանգամ երթևեկեալ այդր (Մոսկվա և Պետերբուրգ—Վ. Դ.) ապա իբրև զանարգ ինչ արհամարհեալ զքաղցր լեզուն իւր, լսել անգամ չկամենալով, թող թէ խօսիլ ինչ»[43],— ցավով գրում էր Աստրախանից Սերովբե Պատկանյանը։

Մեկ այլ օրինակ։ 1825 թ. Խաչատուր և Հովհաննես Լազարյան եղբայրները հարկ էին համարում ռուսահայերի առաջնորդ Հովհաննես Գառնակերյան արքեպիսկոպոսին «ծանուցանել», որ ըստ ստացված տեղեկությունների գեներալ Վալերիան Մադաթովը «ըստ իւրոյ ըղձի հրաժարեալ է ի դաւանութենէս մերմէ։ Երևի թե Մադաթովն մատնեալ պատրանօք զաստուած և զեկեղեցին սուրբ»։ Նրանք գտնում էին, որ եթե Պետերբուրգում «իշխանք համօրէն բամբասեն զնա» ապա ունեն «կարի քաջ յիրաւունս, զի այդպիսի ուխտադրժութիւն զազիր է յաչս ամէնեցուն»[44]։

Այս փաստերը ևս վկայություն են, թե որքան մեծ անհրաժեշտություն կար լուրջ ուշադրություն դարձնելու ազգային լուսավորության գործին, գիտակցել տալու ազգային դեմքը պահպանելու գործի կարևորությունը, որպեսզի մեկընդմիշտ խցանվի ուծացման խոտոր ճանապարհը։

XVIII դարի երկրորդ կեսին XIX դարի առաջին կեսին ծավալված հայ լուսավորական շարժման մեջ պակաս կորևոր դեր չէր խաղում հայոց ազգային եկեղեցու կառավարման բարենորոգության հարցը։ Մենք արդեն տեսանք, որ հայ բուրժուական շրջանները հատուկ վերաբերմունք ունեին դեպի եկեղեցին, դիտելով այն որպես հայ ժողովրդի համար խիստ անհրաժեշտ մի հաստատություն։ Եթե ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը ուղղված էր նաև կաթոլիկ եկեղեցու ու պապականության տիրապետության դեմ, ապա հայ իրականության մեջ, ստեղծված պայմանների բերումով, եկեղեցու հարցը ուրույն լուծում էր

[41] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 611, л. 16.
[42] Նույն տեղում, թ. 3։
[43] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 106, գործ 14, վավ. 27։
[44] Նույն տեղում, վավ. 29։

ստանում։ Դրվում էր սոսկ եկեղեցու կառավարման բարենորոգության, դրանով իսկ պատմական նոր ժամանակաշրջանին նրա հարմարեցման հարցը։ Դա հասկանալի է, որովհետև հայ հասարակական կյանքում եկեղեցին ազգային հիմնարկություն էր և խիստ աշքառու դեր էր խաղում։ Տարբեր աշխարհներում սփռված հայ զանգվածներին միազոդելու, նրանց ազգային դեմքը անխաթար պահելու միսիան միայն եկեղեցին կարող էր կատարել։ Որքան ավելի հարմարեցված լիներ եկեղեցին նոր ժամանակների պահանջներին, այնքան ավելի մեծ կլիներ տվյալ խնդիրները կենսագործելու գրավականը։

Հայ եկեղեցու կառավարման բարենորոգության անհրաժեշտության կարիքը հատկապես սուր զգացվեց Դավիթ-Դանիելյան երկարամյա պայքարի տարիներին, երբ որոշ անձանց փառամոլությունն ու կամապաշտությունը հասցրեց հայ եկեղեցու ընդհանրական կենտրոնի նշանակության զգալի անկման։ Դեռևս Հովհաննես Լազարյանը ժամանակին տեսնելով «միաբանական կառավարության ի սբ. Էջմիածին» բացակայությունը, «յաղագս այսր մարգարեցեալ ևս է, լսեմք,— գրում էին Գրիգոր, Բարսեղ արքեպիսկոպոսները և Ներսես Աշտարակեցին Մինաս Լազարյանին,— թէ վաղճանաբար աւերութիւն է լինելոց սրբոյ աթոռոյն»[45]։ Նման երկյուղն էր, որ առաջացրեց Էջմիածնում բարձրագույն խորհրդարան կամ սյունահոդոս ստեղծելու միտքը։ Մ. Մսերյանցի վկայությամբ, դեռևս Ղուկաս կաթողիկոսի ժամանակ փորձ էր եղել վեց հոգուց բաղկացած կառավարություն կամ խորհրդական ժողով ստեղծել կաթողիկոսի անձին կից[46], բայց այդ մասին այլ հիշատակություն չի պահպանվել։ Սխալ է այն կարծիքը, որ իբր թե սյունհոդոսը հիմնադրվել է Դանիել կաթողիկոսի մտահղացմամբ և նախաձեռնությամբ[47], վավերագրերը այլ բան են ասում։

Վրաստանի հայոց արքեպիսկոպոս Հովհաննես Գեղարդակրի Մինաս Լազարյանին ուղղած 1805 թվականի օգոստոսի 16-ի գրությունից[48] իմանում ենք, որ Մ. Լազարյանը նույն թվականի հուլիսի 20-ի իր նամակում խոսել է Էջմիածնում սյունհոդոս ստեղծելու հարցի մասին, որը նա «ի յերկնուստ ազդեցեալ» պատգամ էր համարում, քանի որ ինքը և յուր գործակիցներն էլ այդ մասին են խորհել, բայց տարակուսել են, թե կգտնեն արդյոք «համաշունչ խորհրդակից»։ Նա ճշմարիտ էր համարում, որ մայր աթոռի և ազգի վրա եկած պատուհասների պատճառն այն էր,

[45] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. ՃԿԷ։
[46] Մ. Մսերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, էջ 10։
[47] «Դիվան հայոց պատմության», գիրք Ա-Բ, էջ 202։
[48] Նույն տեղում, գիրք Ե, վավ. ՃԿԷ։

«զի մեք, և կամ որ ստոյգ ևս է՝ նախնիք մեր՝ թողեալ զլուսաւոր շաւիղս... ընթացաք զճանապարհ անկոխ՝ որ մեզ միայն էր հաճելի և ոչ աստուծոյ և վասն այնորիկ արժանապէս վերահասին մեզ այս ամենայն չարիք և վիշտք»։ Եթե նախնի եկեղեցական կանոնների համաձայն «քահանայապետ առանց բազմութեան եպիսկոպոսաց և եպիսկոպոսք առանց միմեանց և առանց քահանայապետի մի ինչ իշխեսցեն միայնակ և առանձին կամօք գործել յեկեղեցւոջ, այսինքն ի ժողովրդեան», ապա «մեր երանելի սրբազան կաթողիկոսքն ոչ ի յիշեալ կանոնսն հայեցեալ ոչ ընդ խնդրիս Կոստանդնուպօլսոյ իշխանացն հայոց, և ոչ ևս ի միտս իւրեանց անցուցեալ բնաւ զայսպիսի աստուածահաղորդ միաբան կառավարութենէ ինքեանք միայն ըստ իւրաքանչիւր հաճոյից առանձին կամօք արարին զոր ինչ միանգամ սիրտք իւրեաց յօժարեցան, և այսպէս բացակայ գտաւ բարին աստուած՝ որ ի մէջ միաբանութեան խոստանայ լինել, և ի վախճան ժամանակիս յարեաւ չարն որ էած զայս աւերութիւն սրբոյ աթոռոյն մերում, գրաւեաց զկեանս բազմաց պատուական հարց և եղբարց մերոց, և տառապեցուցանէ ցարդ ևս զմեզ ողջոյն ազգովին»[49]։

Այսպիսով, անհրաժեշտ էր համարվում կաթողիկոսների և այլոց կամայաշտության վերացումը և «յօգուտ ներկայական և ապագայական վասն ազգի և եկեղեցւոյ մերոյ» խորհրդարանի հիմնադրումը, որպեսզի «եղիցի միաբան խորհրդածութեամբ կառավարութիւն»[50]։

Արդեն 1805 թվականի սեպտեմբերի 29-ին Մինաս Լազարյանը Թիֆլիս է ուղարկում սյունհոդոսի կանոնադրության իր կազմած տեքստը՝ բաղկացած 21 հոդվածներից, որը ընկալվում է «ըստ օրինակի գարնանաբեր հարաւային հողմոյ որ զարթուցեալ զերկիր ի սաստկասառոյց պաշարմանէ օդոյն ցրտութեան ձմերայնոյ՝ ազդէ ի նա արտաքս առաքել ազգի ազգի տեսակս բազմագունի ծաղկանց ի զարդ վայելչութեան իւրոյ»[51]։ Հովհաննես, Գրիգոր, Բարսեղ արքեպիսկոպոսները, Ներսես Աշտարակեցին հույս էին հայտնում, որ շնորհիվ խորհրդարանի ստեղծման հնարավոր կլինի տեսնել «զբարեդրութիւն հոգևորականաց և մտրմնաւորականաց ազգի մերոյ»։ Բայց նրանք չեն կամեցել ասել, թե ո՞վ է կանոնների հեղինակը, «զի մի ի ձէնջ ազդեցեալ լինելն հասանիցէ յականջս այլոց, որոց չիցէ արժան»[52]։ Պարզ է, որ Դանիել կաթողիկոսի անունից հետագայում հրատարակված, 22 կանոններից բաղկացած սյունհոդոսի կանոնադրության բուն հեղինակը Մինաս Լազարյանն է։

[49] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. ՃԿԷ։
[50] Նույն տեղում։
[51] Նույն տեղում, վավ. ՃԿԹ։
[52] Նույն տեղում։

Այս ամենի մասին Թիֆլիսից տեղեկացնում են Մարաղայում գտնվող Դանիել կաթողիկոսին, որը և 1806 թ. հուլիսի 10-ին երկու կոնդակ է ուղարկում մեկը Եփրեմ արքեպիսկոպոսի, մյուսը Էջմիածնի միաբանության անունով, որով հայտնում էր, որ իր պարտքն է համարում «յաղագս շինութեան եկեղեցւոյ, վերահաստատութեան սրբոյ Էջմիածնի և պայծառութեան համօրէն ազգի» «վերականգնել զօրէնս և կանօնս սրբոց հարց»։ Մասնավորապես Եփրեմ արքեպիսկոպոսին նա հանձնարարում էր նախապես, «զի որպէս ինձ, նոյնպէս և քեզ՝ ատելի եղիցին անձնապանծ մոլի նախագահութիւնք և ամենայն ինքնահաճ եղական կամապաշտութիւնք, որք ոչ վայելեն հոգևորականաց», այլ «դիջիք հաստատուն ի սրտի ձերում, թագաւորեցուցանել զօրէնս և մուծանել ընդ իշխանութեամբ նորուն նաև զսեպհական իսկ անձն ձեր»[53]։ Ելնելով այս ամենից, նա կոչ էր անում Էջմիածնի միաբանությանը «միաբան, միաշունչ, միախորհուրդ փոյթ» ունենալ «վերականգնել զօրէնս»[54]։ Այդ ամենը ասելուց հետո Դանիելը իր կողմից նշանակում էր Եփրեմ արքեպիսկոպոսին, Կ. Պոլսի նախկին պատրիարք Գրիգոր Խամսեցուն, Բասեղ արքեպիսկոպոսին և Վրաստանի հայոց առաջնորդ Հովհաննես Գեղարդակրին, որպեսզի նրանք շորսով միասին «սկիզբն արարեն բարւոյ յառաջադրութեանն», այսինքն ձեռնամուխ լինեն սյունհոդոսի ստեղծմանը։

Սակայն շուտով Դանիել կաթողիկոսը ազատվում է բանտարգելությունից, բազմում կաթողիկոսական գահին և ինքն է անձամբ անձին հիմնադրում սյունհոդոսը։ Ստանալով Էջմածնի և միաբանության հօժարությունը, 1808 թվականի մայիսի 25-ին, իր կաթողիկոս ձեռնադրվելու վեցերորդ տարեդարձի օրը, սահմանադրում և հաստատում է կառավարիչ սբ. ժողովը[55] կամ սյունհոդոսը, որի «իրաւարար» կառավարությանը և իշխանությանը պիտի ենթարկվեին կաթողիկոսից սկսած մինչև վերջին հոգևորականը, ինչ և ամրապնդվում է հանդիսավոր երդման արարողությամբ։

Դանիել կաթողիկոսի հաստատած կանոնների համաձայն սբ. ժողովի անդամները պետք է կանոնավոր նիստեր գումարեին և բոլոր գործերի վերաբերյալ համապատասխան որոշումներ ընդունեին, ընդ որում հարցերը պետք է քննարկեին սառն դատողությամբ, առանց փոխադարձ վիրավորանքների և օգտակարն ու լավը գտնելու ձգտումով։ Դատաստանական գործերի վերաբերյալ վճիռները պետք է գրավոր լինեին և ստորագրված սբ. ժողովի անդամների կողմից. խստորեն արգելվում էր նվերների ձևով կաշառք վերցնել դատաստանական գործերով սբ. ժողովին դիմող անձանցից։ Սբ. ժողովի անդամները պետք է հնազանդվեին բոլոր կանոններին, այլապես ենթարկվելու էին իրենց «գահակիցների» անաչառ դատաստանին[56]։

Էջմիածնի բարձրագույն խորհրդարանը կամ սբ. ժողովը գործեց նաև Եփրեմի կաթողիկոսության տարիներին և մի հայտնի չափով նրա ստեղծեց խորհրդակցական կառավարման սկզբունքները կիրառելու գործին, թեև այնտեղ էլ մեծ էր միաբանության այս կամ այն ազդեցիկ անդամի ձայնը, ինչպես օրինակ, Ներսես Աշտարակեցու։

Ճիշտ է, հայ եկեղեցու կառավարման բարենորոգման այս փորձը սպասված արդյունքները չտվեց խանական քմահաճ իշխանության տարբերումներին ենթակա լինելու պատճառով, բայց բարձրագույն խորհրդարանի հիմնումը ուներ սկզբունքային խոշոր նշանակություն։ Դա հայ բուրժուազիայի հաղթանակն էր կառավարման կոլեգիալ համակարգ մուծելու հարցում, այն էլ մի այնպիսի հաստատության մեջ, ինչպիսին էր եկեղեցին։ Դա միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ հայ հոգևորականության ճնշող մասը հետևում էր հայ բուրժուազիայի թելադրանքին, որին ընդդիմանալ չէր կարող։ Ասենք հայ հոգևորականությունը ինքն էլ շահագրգռված էր վերջ տալու միանձնյա կառավարման հնամենի եղանակին, որը շատ բան էր յուրացրել արևելյան բռնապետական կառավարման մեթոդներից։

Բարձրագույն խորհրդարանի ստեղծումը դրական գնահատականի արժանացավ առաջադիմորեն տրամադրված գործիչների կողմից։ Պահպանվել է մեկ փաստաթուղթ, որն այդ առումով առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում։ Դա Թավրիզում Աբբաս Միրզայի ծառայության մեջ գտնվող Միրզա Ռոստոմ Միրզա Կորկինյանի նամակն է՝ հղված Էջմիածնի սբ. ժողովին, որը նա «սէնաթ» է անվանում։ Խոսելով այլևայլ հարցերի մասին, Միրզա Ռոստոմը այնուհետև գրում էր. «Մտածէք տեսէք ինչպես որ սբ. սէնաթի խորհուրդն է մեք էլ նա կունդունեմք։ Եւ թէ մեք տեղս չլինէյինք այն ժամանակն տեսնէյիք թե բանն ինչ կընդառնար և հաստատուն իմացէք որ միշտ մեր հետևողութիւն այն է որ էդ սբ. սէնաթդ հաստատ մնայ և առանց սէնաթի խորհուրդին օշով չհամարձակվի աթոռի բանին խառնվել»[57]։

---

[53] Նույն տեղում, վավ. ԾՀԸ։

[54] Նույն տեղում, գիրք Ա-Բ, էջ 207։

[55] Նույն տեղում, էջ 210—211։

[56] Նույն տեղում, գիրք Ե, վավ. ԾՀԸ, էջ 229—231։

[57] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 21, վավ. 158։

Այսպիսով, Միրզա Ռոստոմն էլ ողջունում էր «սէնաթի» ստեղծումը էջմիածնում, կողմնակից էր, որպեսզի էջմիածնին վերաբերող բոլոր գործերը լուծվեն սբ. ժողովի համաձայնությամբ։ Բայց ամենամեծ հետաքրքրությունը՝ներկայացնում են Միրզա Ռոստոմի նամակի եզրափակիչ տողերը, որոնք վկայություն են այն բանի, որ բռնապետական ռեժիմի ծառայության մեջ գտնվող այդ պաշտոնյան երազում էր առնվազն սահմանադրական միապետության մասին։ Ահա թե ինչ էր գրում նա. «Եւ աստուծով կլինի ժամանակ, որ ինչպես մեք սբ. սէնաթիդ ձեռք եմ դրէր։ Եւ ձեր հրամանքն էլ էստեղի սէնաթին ձեռ դնէք»[58] (ընդգծումը մերն է—Վ. Դ.)։ Միրզա Ռոստոմի այս տողերը մի ավելորդ անգամ գալիս են ցույց տալու, թե ինչպես էին արմատներ ձգում բուրժուական գաղափարները հայ իրականության մեջ։

Բարձրագույն խորհրդարանի անխափան գործունեությունը հաստատապես ամրապնդելու նպատակով Դանիել կաթողիկոսը կամենում էր նրա կանոնադրությունը բարձրագույնս հաստատել տալ։ Հազիվ թե դա կարելի լիներ անել պարսկական կառավարության միջոցով, որի իրավասության տակ գտնվում էր էջմիածինը, ուստի 1808 թվականի օգոստոսի 11-ին Դանիելը դիմում է Ալեքսանդր 1-ին և խնդրում նրա հաստատումը[59]։ Բայց կաթողիկոսի այս խնդիրքը մերժվում է այն ճիշտ պատճառաբանությամբ, որ էջմիածինը կայսրության տարածքում չի գտնվում, հետևաբար և ռուսաց կայսրը չի կարող նրա ներքին գործերին միջամտել։

Վերոհիշյալ շարադրանքը պարզում է, որ ուսումնասիրության ենթակա ժամանակահատվածում ինչպես լուսավորական շարժումը, այնպես էլ հայ եկեղեցու կառավարության բարենորոգման հարցը հայ ազգային-ազատագրական շարժման էական բաղկացուցիչներն էին և հայ գործիչները իրավացիորեն ջանում էին դրանք ծառայեցնել ազատագրական պայքարի շահերին։ Մատաղ սերնդի լուսավորությունը, կառավարման նոր ձևերի մուծումը կոչված էին թոթափելու ստրկության դարերի առթած անխուսափելի թմբիրը, արթնացնելու ազգային ինքնագիտակցությունը և դրանով իսկ նպաստելու հայրենիքի ազատագրությանն ու վերածնությանը։ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին սերմանվում էր մի արտ, որը մի փոքր ավելի ուշ հիանալի հունձ տվեց և դրանով իսկ զարկ տվեց հայրենի մշակույթի աննախընթաց վերելքին, հող պատրաստեց գաղափարների և գաղափարակիրների համար, որոնք պետք է

[58] Նույն տեղում։

[59] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, վավ. ՄԺԶ։

արտացոլեին համաշխարհային պատմական զարգացման մեծագույն նվաճումները։ 19-րդ դարի սկզբին հայ իրականության մեջ վառվեցին պատրույգներ, որոնք լուսավորելու էին «տգետ ազգի մերոց» ստվար գունդը։

6. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՔԸ XIX ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹԹ.

1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի տարիները կրկին ասպարեզ հանեցին Արևելյան Հայաստանի ապագա կացության հարցը։ Եթե մինչև այդ հայ ազատագրական մտքի մեջ նկատելի էր որոշակի ընդարմացում, հեռանկարների անորոշություն, վերացական արտահայտություններ Հայաստանի երբեմնի «փառքի» վերականգնման մասին և ընդհանուր առմամբ այն պատկերն էր ստեղծվում, որ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչները խարխափում են անորոշության մեջ և նրանց նպատակն է անվերապահ միացում Ռուսաստանին, ապա ռուս-պարսկական պատերազմը, պատերազմի հետևանքով Անդրկովկասում ստեղծված իրավիճակը, ցարական կառավարության որոշ՝ հայ ազատագրական ոգորումների համար աննպաստ նպատակադրումները հայ գործիչներին կանգնեցրին այնպիսի իրավիճակի առջև, երբ նրանք պետք է պարզորոշ ձևակերպեին իրենց քաղաքական ակնկալությունները։

Այդ բախտորոշ օրերին առաջին պլանի վրա է հայտնվում հայ այնպիսի մի նշանավոր գործիչ, ինչպիսին Ներսես Աշտարակեցին էր։ Գտնվելով քաղաքական իրադարձությունների թոհուբոհի կենտրոնում, տոգորված լինելով իր ժողովրդի ազգային ազատագրության վսեմ գաղափարով, նա կանգնեց հայ ժողովրդի ակնկալությունները բանաձևելու, դրանք կյանքում կենսագործելու անհրաժեշտության առջև։ Եթե Ներսես Աշտարակեցու նախնի գործունեությունը հիմնականում ժողովրդի լուսավորության կազմակերպման գործի ծառայությանն էր նվիրված, ապա ռուս-պարսկական պատերազմի տարիներին նա մեր առջև է կանգնում իբրև քաղաքական խոշոր գործիչ, որը առաջնորդվում է հայրենիքի և սեփական ժողովրդի ապագա շահագրգռություններով։

Միշտ չէ որ Ներսես Աշտարակեցու գործունեությունը ճիշտ է հասկացվել և գնահատվել։ Եղել են պատմաբաններ և հրապարակախոսներ, որոնք նրա ճակատին են շպրտել «ցարական գործակալ» տհաճ անվանումը, լավագույն դեպքում համարել սոսկ ցարիզմի շահերին իր անձը նվիրած գործիչ։ Շատ դեպքերում պարզապես լռության են մատնել նրա ծառայությունները։ Նույնը կարելի է ասել նաև Խաչատուր Լազարյանի

մասին, որին նույնիսկ պարզապես ներկայացրել են իբրև ցարական երրորդ բաժանմունքի ծառայող, մոռանալով նրա ազգանվեր գործունեությունը հիշյալ տարիներին։

Մեծ էր այդ տարիներին Ներսես Աշտարակեցու հմայքը։ Լազարյանների հետ մերձավոր հարաբերությունների մեջ գտնվող Մելքիսեդեկ քահ. Ղամազյանը դեռ 1814 թվականին գրում էր Հովակիմ Լազարյանին Ներսես Աշտարակեցու մասին. «Թէպէտ վեհազնութիւն ձեր չէ տեսեալ զյիշեալ Ներսէս արհին. բայց համարյա թէ մինն է ի սբ. աթոռն. յամենայն կողմանէ ընտրեալ և իմաստութեամբ գերազարդեալ»[1]։

Տարիներ անց, 1828 թվականին, Կոստանդին Արղության-Երկայնաբազուկը, հանդիպելով Աշտարակեցուն, հետևյալ կերպ է արտահայտվում նրա մասին Խաչատուր Լազարյանին գրած նամակում. «Ներսես սրբազանը այն անձնավորությունն է, ինչ որ դուք ի նկատի ունեք։ Նա պատմական հովիվ է և ոչ թե սոսկ հենակների կոնթած արքեպիսկոպոս»[2]։

Պրոֆեսոր Վ. Ա. Պարսամյանը, խոսելով Ռուսաստանի նկատմամբ լավատեսորեն տրամադրված հայ հասարակական գործիչների մասին, որոնցից շատերը «Ռուսաստանի հաղթանակի հետ կապում էին ոչ միայն Հայաստանի փրկությունը, այլև նրա «անցյալ փառքի» վերականգնումը, իրավացիորեն նկատում է, որ «այդպես էր դատում ժամանակի հայ իրականության ամենաազդեցիկ և ամենապոպուլյար գործիչներից մեկը՝ Ներսես Աշտարակեցին (1771—1857)»[3]։ Եթե Ներսես Աշտարակեցու մոտ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու գաղափարը աներեր էր, նույնը չի կարելի ասել Հայաստանի ապագայի հարցում նրա հայեցակետի մասին։ Իր գործունեության սկզբնական շրջանում, ելնելով այն հանգամանքից, որ «մինչև ցայսօր ժամանակի ընդ ամենայն տեղիս նեղեալ և վշտացեալ յանհնարին տառապանս զանազան ազգաց բարբարոսաց՝ ազգք հայոց» իրենց պարտական են համարում «յամենայն օր աղօթել վասն քրիստոնէից թագավորացն և զորացն զորապետաց նոցին»[4], և դա երկար ժամանակ ընդգծված համոզում էր նրա մոտ, ապա ավելի ուշ նա վճռականորեն հարց էր դնում ռուսական իշխանությունների առջև. «դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք», «դո՞ւ ես որ փրկելոցն ես զհայրենիս մեր եթէ այլում ակնկալցուք, և եթէ դու իցես, երագեա և զարթող զօրութիւն քո հզօր ձեռն մեծասաստ կայսերութեան

[1] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 104, գործ 8, վավ. 111։
[2] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 25, л. 121 об.
[3] Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, էջ 11։
[4] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 155։

ռուսաց ի փրկել զաշխարհ հայրենաց Հայաստանի և զորդիս հաւատոյ սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի»[5]։

Բայց երբեմն նրա մոտ երևան էր գալիս միտք, որ կարելի է Հայաստանի ազատագրությունն ու պետական վերականգնումն իրագործել նաև այն դեպքում, եթե ռուսական կայսրը համաձայնի ընդունել Հայաստանի թագավորի տիտղոսը։ Այս առումով բնորոշ է Աշտարակեցու 1821 թվականի հունիսի 21-ի նամակը ռուսահայոց առաջնորդ Հովհաննես Գառնակերյանին։ «Այլ եթէ հնար իցէ,— գրում էր Ներսեսը,— մի անփոյթ լիցիս ամենայն ջանս խնամ ունել զի որպէս կարող են ամենայն ազգն հայոց անզանազան կերպիւ ճանաչել և ընկալնուլ զնորին կայսերական մեծութիւնն իբրև զթագաւոր հայոց, նախապէս եղից և հաճութիւն մտաց իւրոյ կայսերական մեծութեան ճանաչել և ընկալնուլ ազգն հայոց ամենաողորմած հայեցողութեամբ իբրև զազգ երևելոյն Հայկայ և այնպէս խնամ ունիլ առ վերածել զնոսա յիւրեանց հայրենի փառսն...»[6]։ Բայց այստեղ էլ նա չէր մոռանում, որ եթե հայերը ռուսաց կայսրին ճանաչելու են իբրև հայոց թագավոր, ապա նա էլ պետք է իմանա, որ իր գայիսոնի տակ է ընդունելու «զազգ երևելոյն Հայկայ»։

Ռուսական կայսրին Հայաստանի թագավոր ճանաչելու հարցի կապակցությամբ հետաքրքիր է այն վկայությունը, որ մեզ հաղորդում է ֆրանսիացի ուղեգիր Վ. Ֆոնտանյեն, որը 1821—1828 թթ. ճանապարհորդել էր Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում։ Էրզրումում գտնվված ժամանակ Վ. Ֆոնտանյեն այցելում է տեղի հայոց առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին և լինում առաջնորդարանին կից դպրոցում։ Դպրոցում նա պատին փակցված է տեսնում ռուսաց կայսեր և կայսրուհու պատկերները։ Ֆոնտանյեն ասում է, որ «այդ հերձվածողները (լուսավորչական հայերը—Վ. Դ.)» «նրանց համարում են իրենց օրինական սուվերենները»[7]։ Ֆոնտանյեի նկարագրած այդ դրվագը ինքնաստինքյան խոսում է այն մասին, որ ռուսաց ինքնակալներին սուվերեն ճանաչելը բավական տարածված մտահայեցություն է եղել և, հավանաբար, բովանդակել է այդ եղանակով Հայաստանի ինքնավարությանը հասնելու գաղափարը։

1823 թվականին Պարսից կառավարությանը էջմիածնի հարցի առընչությամբ ուղղած գրություններին մասին խոսելով, որոնցից յուրաքանչ-

[5] Նույն տեղում, թղթ. 165, վավ. 368։
[6] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 24, վավ. 158։
[7] Voyage en Orient, entrepris par ordre du gouvernement Francais, de l'année 1821 à l'année 1829, par V. Fontanier, Paris, 1829, p. 57.

յուրը հռետորական շնչով գրված մի մի մեղադրական ծանր ակտ էր, Ներսես Աշտարակեցին գրում էր Եփրեմ կաթողիկոսին. «մի զարհուրհեսցի տէրդ իմ վասն այնպիսի գրութեանց իմոց, զի ողորմելի կացութեամբ լռութիւն մեր ամենայն վնասուց նոցա յայս վիճակ տարարախտութեանց զմեզ ժամանեցուցին»[8]։

Տարիների հետ Աշտարակեցին ավելի վճռական է դառնում, նրա հայացքներն ու գործողությունները ավելի պարզ ու որոշակի։ Օգտվելով գեներալ Երմոլովի բարեհաճ վերաբերմունքից, նա այնպիսի քաղաքական գործերի էր միջամտում, որը իրավունք չուներ իբրև հոգևորականի։ Եվ պատահական չէր, որ աշխարհի բոլոր ծայրերում հայերը գիտեին նրան, համարում էին կարող ու ազդեցիկ մի անձնավորություն, տեղյակ էին պահում հայրենիքին ու ժողովրդին վերաբերող բոլոր անցուդարձին։

1826 թվականին բռնկած ռուս-պարսկական պատերազմը կարծես թե սանձազերծեց Ներսես Աշտարակեցու ողջ եռանդը։ 1826 թ. իրադարձությունները, երբ աղաների, խաների, բեկերի կողմից խաբված, մյուս կողմից էլ ցարական պաշտոնյաների ճնշումից դժգոհ մահմեդական ազգաբնակչությունը փաստորեն ապստամբեց և անցավ պարսից կողմը, երբ պարսկական զորքերը գրավեցին Անդրկովկասի մեծ մասը և ռուսական փոքրաթիվ զորաջոկատների համար միակ հուսալից նեցուկը մնացին հայերը, Ներսես Աշտարակեցու մոտ այն համոզումը առաջացրին, որ ստեղծված պայմաններում կարելի է հուսալ հայ ազգային բաղձանքների իրագործում։ Եվ նա ձեռնամուխ եղավ քայլերի, որոնք իսկապես կարող էին մեծապես նպաստել նրա ծրագրերի հաջողությանը։

Մեկը մյուսին հետևում են Ներսես Աշտարակեցու մարտաշունչ շրջաբերականները, ուղղված իր հովվությանը հանձնված վայրերի ազգաբնակչությանը։ Նա հորդորում էր հայերին, որպեսզի ռուսական զորքերի նահանջից սխալ տպավորություն չստանան, այլ «զնոյն հոգի հայկական հաւատարմութեան ունիլ նուէնպիսի ջերմեռանդութեամբ վառեալ և ջանալ նորոգել կամ առաւել ևս հանդիսացուցանել զյիշատակ հաւատարմութեանց հայրենի ազգի հայոց արժանաւոր գործովք ամենայն տեղիս ի ներքոյ փառաւոր դրոշակի իւրոյ կայսերական մեծութեան ամենայն ռուսաց», որովհետև «շուտով անդրէն դառնան նոքա յիւրաքանչիւր տեղիս հզօր զօրութեամբ իւրեանց, և թշնամիք առ հասարակ զարհուրեալք յերեսաց սրոյն անպարտելի զօրաց ռուսաց. թողցեն

[8] Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 45 ,վավ. 136։

իսկոյն ոչ միայն զսահմանս տէրութեան ռուսաց, այլ զամենայն զկալուածս բնակութեանց և իշխանութեանց իւրեանց ևս»[9]։

Աշտարակեցին գտնում էր, որ նման վարվելակերպը անհրաժեշտություն է հայերի համար, քանի որ ստեղծված պայմաններում «մնայ մեզ նաւարկութեանցն զեկաւարութեանց ի մրցանակի սաստկութեան ալեաց յանդիման առնել աշալուրջ մտաց զօրինակ, և այնպէս զառասան հաւատոյն անլքանելի պաշտպանեալ, փութալ, ջանալ, ժամանել ի նաւայուսոյն անլքանելի պաշտպանեալ մերձեալ»[10] (ընդգծումները մերն են—Վ. Դ.)։ Միայն այդպես հնարավոր կլիներ բարձրացնել և պահպանել «զփառս հաւատոյ քրիստոնէութեան և հայրենի ազգի հայոց»[11]։ Վերոբերյալ քաղվածներից պարզ երևում է, որ Ներսես Աշտարակեցին համոզված էր ոչ միայն այն բանում, որ ռուսական զորքը ի վերջո կհաղթանակի, այլև կազատագրվեն դեռևս պարսից ձեռքում գտնվող Երևանի ու Նախիջևանի խանությունները ևս, քանի որ նրանք ստիպված կլինեն լքել «զամենայն զկալուածս բնակութեանց և իշխանութեանց իւրեանց ևս»։ Եվ, վերջապես, նա խորապես վստահ էր, որ կիրագործվեն նաև հայկական ակնկալությունները։

Ներսես Աշտարակեցու խորաթափանցության և իրադարձությունների մեջ ճիշտ կողմնորոշվելու մի հետաքրքիր օրինակ է այն նամակը, որ 1826 թվականի սեպտեմբերի 13-ին նա ուղարկել է Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին։ Գրված էր այդ նամակը Պասկևիչի Կովկաս գալու կապակցությամբ։ Նշելով, որ Երմոլովը, տաս տարի գործելով Կովկասում, հազիվ կարողացավ ծանոթանալ «Բնաւորութեանց բարբարոս ազգացն պարսից, լեզկեաց, թուրքաց և այլոց պարայածելոց», տարակուսանք էր հայտնում, որ Պասկևիչի գալուստը կարող է փոխարկվել տրտմության[12]։ Հետագան ցույց տվեց, թե որքան հիմնավոր էին Աշտարակեցու երկյուղները։

Ալ. Երիցյանը իրավացիորեն նկատում է, որ «ոչ ոք այնքան չէր ուրախանում պարսից պատերազմին, որքան Ներսես Աշտարակեցին»[13]։ Արդարև, դեռևս 1820 թվականին նա հետևյալն էր գրում Շամիր Մելիք-Բեգլարյանին. «Ուրախ եմ առաւելապես քանզի լսեմ թէ շարշարեն զձեզ որք շարշարենն զմեզ ի քանի հարիւր ամաց հետէ (իմա՝ պարսիկները—

[9] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 604։
[10] Նույն տեղում, վավ. 609։
[11] Նույն տեղում, վավ. 605։
[12] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 168, վավ. 638։
[13] **Ա. Երիցյան**, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., Ս. Ա, էջ 268։

Վ. Դ.) աղաչեմ զաստուած զի առաւել ևս խստացուսցէ զսիրտ նոցա ընդդէմ ձեր և ընդդէմ հզօրէդ սրոյն աստուծոյ զինումն ռուսաց, որով թերևս ընկալցին նոքա զիւրեանց հատուցումն և մեք ազատութիւն զըտցուք ի բարբարոսական բռնութեանց նոցա»[14]։

Պարսկական զորքերի հարձակումը, իսկապես, ուրախացրեց Ներսես Աշտարակեցուն, և նա իր բոլոր գրություններում այն միտքն էր հայտնում, որ ռուսական զորքերը կվերադառնան և կպատժեն նախահարձակ հակառակորդին, թեև ռուսական կառավարությունը դեռևս պաշտոնապես պատերազմ չէր հայտարարել պարսիկներին։ Առավել մեծ եղավ նրա ցնծությունը, երբ վերջապես օգոստոսի 11-ին Թիֆլիսում ստացվեց պարսից դեմ պատերազմ սկսելու վերաբերյալ բարձրագույն հրամանը։ Այդ առնչությամբ պահպանվել են նրա բազմաթիվ գրությունները, որոնցում նա փութում էր «աւետարանել ձեզ և ամենայն ազգի հայոց զուրախութիւն մեծ, քանզի օգնական հայրենեաց Հայաստանի զարթեաւ ողորմութիւն ամենակալին աստուծոյ, և յարոյց զոր Էօծն զՀզոր ինքնակալն ամենայն ռուսաց զՆիկոլայ Պավլովիչն ի վրեժխնդրութիւն ամբարշտութեանցն պարսից, որոյ ահա ի 11 ամսոյս յաւուր շորեքշաբաթու էհաս բարձրագոյն հրամանն առ հզօր կուսակալ կողմանցս Ալեքսէյ Պետրովիչ Երմոլովն «թէ՝ հրամայեցի բազմութեան զօրաց հետևակաց և հեծելոց երագել առ ձեզ առ խնդրելոյ զվրեժս ի հակառակորդաց հասարակաց խաղաղութեան, և հատուցանելոյ զհատուցումն նոցա նոցին»։ Զոր ընդ ընկալնուլն իսկոյն փութացեալ անձամբ նորին բարձր գերազանցութիւնն առ մերս նուաստութիւն ի տուն մեր. ետ մեզ զաւէտիս ցանկացեալ ակնկալութեանց այսոցիկ, և յառաջադրեաց պատրաստիլ, լինիլ ընդ իւր յընթացս ժամանակաց այսմ ամենայոյս պատերազմութեանց, որոյ որայքն եղիցին հանդերձ աստուծով փրկութիւն աշխարհի մերոյ և վերանորոգութիւն ընդհանրական ազգի հայոց[15]» (ընդգծումները մերն են—Վ. Դ.)։

Պատերազմի հռչակումը համարելով հայկական ակնկալություններից բխող ակտ, նա կոչ էր անում հայերին «զօրանալ հզօրանալ ընդդէմ ամենայն թշնամեաց, և առաւել ևս արիանալ և ըստ հաւատարմութեան իւրեանց ջերմեռանդութեամբ բազմաւ յառաջադէմ հանդիսանալ և պատրաստել զանձինս բազմութեամբ հեծելոց լինել բազկակից զօրաց ռուսաց, և դիմել յերկիր հայրենեաց ի Հայաստան աշխարհ ի խընդրել զվրէժ իրաւանց մերոց նախնեաց և նոցին ժառանգաւորաց»[16]։ Զբավարարվելով այդքանով, նա պատրաստակամություն էր հայտնում անձամբ անձին մասնակցել հայրենիքի ազատագրմանը. «պատրաստ եմք և մեք որպէս առաջնորդ ժողովրդեան հօտին մեզ յանձն եղելոյ՝ բարձր արարեալ ի գլուխս զնշան ամենայաղթ խաչին Քրիստոսի ելանել լինել նախընթաց երամոց իմոց համազգեաց»[17]։

Համարելով պատերազմը «ի գլուխս դարուց բազմաց եկեալ հասեալ ժամանակ այցելութեանց երկնից»[18], Ներսես Աշտարակեցին գըտնում էր, որ «ննջել ի պատերազմի ոչ վայելէ կենդանեաց, յաւէտ ևս յոնում էր, որ «ննջել ի պատերազմի ոչ վայելէ կենդանեաց, յաւէտ ևս յոնում էր, որ զի վշտացելոց ի բարբարոսական բռնութեանց, որպիսի ոք մեք իսկ եմք անդստին ի ծննդենէ, կամ մանաւանդ ի հարց և ի հաւուց նախնեաց Հայաստանեայց»[19], ուստի և կոչ էր անում հայերին՝ «մի բնաւ երկընչիցիք ի գործ զզէնս ձեր, այլ արիաբար զձերոց նախնեաց քաջութիւնս յանձին բերել»[20]։

Ներսես Աշտարակեցու զենք վերցնելու և հայրենիքի ազատագրության համար պայքարելու այս անզուսպ ձգտումը սոսկական քարոզչություն չէր զենքով ռուսական զորքերին օգնական ու աջակից լինելու։ Նրա նպատակն էր, որպեսզի հայերն իրենք ևս մասնակցեն հայրենիքի ազատագրության գործին, քանի որ դա անհամեմատ կնպաստեր հայկական ակնկալությունների լավագույնս իրագործմանը։ Նման ցանկության ու նպատակադրման վառ արտացոլումն է հայկական կամավորական գնդեր և դրանով իսկ որոշ չափով հայկական կանոնավոր զորք ստեղծելու նրա գաղափարը։ Այլապես ոչ այլ որի առավել շատ, քան Ներսես Աշտարակեցուն էր քաջ հայտնի, որ առանց հայերի աջակցության էլ ռուսական զորքերը հաղթանակ կկարողանան տանել պարսկական բազմաթիվ, բայց ռազմականապես խիստ թույլ բանակների նկատմամբ։ Այլ առումով Աշտարակեցու այդ քայլը իմաստազուրկ էր դառնում։ Հայերը կարիք չունեին իրենց հավատարմությունը Ռուսաստանին ցուցաբերելու։ Անդրկովկասում ռուսական տիրակալության ողջ ժամանակաշրջանում հայերը բազմիցս ապացուցել էին այդ, առավել ևս 1826 թվականի ամռանը, երբ ենթարկվել էին պարսից զորքերի հանկարծական հարձակմանը։ Ընդ որում նա այդ գործին ձեռնամուխ եղավ դեռևս չունենալով կառավարության հավանությունը, որը դիմել էր վրաց

[14] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 367։

[15] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 626։ Տե՛ս նաև վավ. 624, 625 ևն։

[16] Նույն տեղում, թղթ. 166, վավ. 625։

[17] Նույն տեղում։

[18] Նույն տեղում, վավ. 624։

[19] Նույն տեղում, վավ. 802։

[20] Նույն տեղում, վավ. 813։

աղնվականությանն ու մահմեդական աղալարներին, բայց զանց էր առել հայերին։

Արդեն 1827 թ. մարտին, այդ տարվա ռազմական գործողությունների վերսկսումից առաջ, Աշտարակեցին ձեռնամուխ էր եղել այդ գործին և կամավորների զորահանդես կազմակերպել։ Ռուսական կառավարությունը ընդառաջեց Ներսես Աշտարակեցու մտադրությանը և Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Սիպյագինի նախագահությամբ ստեղծեց հանձնաժողով՝ «զինվորության հայոց ինքնակամ» գնդեր ստեղծելու համար[21]։ Կայսերական հավանության ստացումից հետո, 1827 թվականի մայիսի 15-ին Վանքի եկեղեցու բակում տեղի ունեցավ երդման և դրոշ հանձնելու հանդիսավոր արարողությունը։

Այդ արարողության ժամանակ Ներսես Աշտարակեցու ջերմեռանդ հետևորդ և գաղափարակից Հարություն Ալամդարյանի արտասանած ճառը մեկ այլ վկայություն է, թե որքան խոր իմաստ էր դրվում և ինչպիսի մեծ նշանակություն տրվում հայկական զորագնդերի ստեղծման բուն փաստին, դարավոր ստրկությունից հետո կատարվող այդ անանխրնթաց իրողությանը։

Դիմելով հայ կամավորներին, Ալամդարյանը հիշեցնում էր հայ ժողովրդի դժվարին անցյալը, այն, որ հինգ դար շարունակ զրկված են եղել սեփական պետականությունից, հարկադրված եղել կրելու օտարի «ծառայության» անուրը։ Նա կոչ էր անում հայրենի պատմության «գծագրեալս արիւնազանգ տառիւք» օրինակներից դաս քաղել, քանի որ դրանք «ընկեցին զվատաբախտն Հայաստան ի վերայ չքութեան»։ Բայց ահա եկել է «ժամանակը, որպեսզի աստված «Դարձուցանէ զսուգ մեր յուրախութիւն, զերծու ի մէնջ զքուրձ մեր և զգեցուցանէ մեզ զուրախութիւն», քանզի «բարութիւն աստուծոյ և օծելոյն նորա (ռուսաց կայսեր—Վ. Դ.) ոչ շատ համարի դարձուցանել մեզ զկորուստ մեր։ Ոչ բաւական համարի վերականգնել զմեզ յանարգութենէ իւրմէ. ոչ շատանայ ապաքինել զվէրս, մեր, այլ անզնին տնօրէնութեամբք իւրովք խրախուսէ զմեզ՝ զտառապեալ որդիքս Հայաստանի ի գործակցութիւն ազատութեան մերոյ, նորոգութեան ամենասիրելի հայրենեաց մերոց ի բազմադարեան իւրոց փլատակաց»։ Ինչպես տեսնում ենք, կրկին շեշտվում էր հայրենիքի նորոգության և վերածնության խնդիրը։ Կոչ անելով հավատարիմ մնալ իրենց ուխտին, Ալամդարյանը հորդորում էր. «մի խոտորեսջիք ի շաւղէ բարեպաշտութեան, արդարութեան և հաւատարմութեան աստուծոյ, ինքնակալ կայսերն և հայրենի աշխարհի ձեռոյ։ Դուն գործեցէք արեամբ չափ կատարել զամենայն պարտաւորութիւնս՝ զոր յանձն առիք այսօր առաջի երեսաց աստուծոյ»։ Պետք էր գնդի դրոշակը պահպանել իբրև անգին ավանդ, «իբրև զբիբ ական» որպեսզի «ամաչեսցեն և պատկառեսցեն ամենայն հակառակորդք ձեր և եղիցին իբրև զչեղեալս և կորիցեն ամենայն դատախազք ձեր»[22]։

Ինչպես ակնբախ երևում է, այդ օրերին տիրում էր ռոմանտիկական մի ոգևորություն, որի ետնախորքում շատերի աչքին ուրվագծվում էր ռուսական հովանու ներքո վերանորոգված Հայաստանը։ Ավելին, ռուսական կառավարությունն ինքն էլ էր նպաստում նման տրամադրությունների տարածմանը։ Նա ոչ միայն հավանություն տվեց հայկական զորք ստեղծելու քայլերին, այլև մշակեց հատուկ կանոնադրություն «հայոց նոր սարքվող զորքի համար», որով այն կանոնավոր զորաջոկատների էր հավասարվում։ Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Սիպյագինի կոչը հայ ժողովրդին՝ հայկական գնդեր կազմակերպելու կապակցությամբ, որով քաջալերվում էր հայերի անհողդողդ հաստատակամությունը և հայրենիքը պաշտպանելու ձգտումը։ Գեներալ Սիպյագինի կոչում ասված էր. «յանցեալ ամի ի մտանել զօրացն պարսից ի սահմանս մեր՝ հանդիսացան հայք քաջութեամբ ընդդեմ թշնամեաց, անյողդողդ հաստատութեամբ ի կրեալ թշուառութիւնս, անսահման ջերմեռանդութեամբ առ քրիստոնէական կրօնս և գովանի հաւատարմութեամբ տէրութեանն ռուսաց։

Թագաւոր կայսրն ակնարկեալ ողորմածաբար ի ջերմեռանդութիւն ինքեան հաւատարիմ ազգին հայոց, և թէպէտ են զօրք ռուսաց բաւականք ի հարկանել զթշնամիս առանց գործակցութեան այլոց, բայց նորին մեծութեանն հաճոյ ի ներկայ պատերազմիս ունել ի մէջ քաջայաղթ զօրաց իւրոց զյատուկ գունդ կազմեալ յաստ եղեալ հայոց»։ Նշելով, որ հայերն անմիջապես արձագանքեցին այդ հրավերին ու իսկույն զինվորագրվեցին և ընդգծելով, որ շատերն են տոգորված «գործակից և փառակից» լինելու զինուորությանն ռուսաց» տրամադրությամբ, նա իր կոչը ավարտում էր հետևյալ բազմանշանակ տողերով. «ով հայք, ջերմեռանդութիւն ձեր արժանապէս վարձատրեալ է։ Ակնարկութիւն մեծի թագաւորի է ի վերայ ձեր։ Դուք ունիցիք ընդ սեպհական դրօշակօք ձերովք զսեպհական գունդս։ Ձեզ բաշխի զէն վասն հաստատելոյ զանդորրութիւն նեղեալ եղբարց ձերոց, վասն պարգևելոյ զապահովութիւն ընտանեաց ձերոց, վասն գտանելոյ զողորմութիւն թագաւորի և վասն

[21] Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., մասն Ա, էջ 272։

[22] Նույն տեղում, մասն Ա, էջ 72—74։

պաշտպանելոյ հայրենեաց»[23]։ Ռուսական կառավարությունը և նրա պաշտոնյաները շատ լավ էին հասկանում, թե ի՞նչ է նշանակում սեփական ազգային դրոշակով ազգային զորք ունենալը, և զուր չէ, որ շեշտվում էր այդ պարագան որպես կայսերական հատուկ ողորմություն ու գնահատումն հայ ժողովրդի ջերմեռանդության։

Տիրող համընդհանուր ոգևորության և պետականության վերանորոգման գաղափարով տոգորված լինելու մասին է վկայում ականատեսներից Ն. Ն. Մուրավյովը։ Իր Հիշողություններում նա հետևյալն էր գրում հայ կամավորների մասին. «Զինվորագրվածները բավական մեծ հաստատակամություն էին ցույց տալիս՝ հավատարիմ մնալու իրենց խոստմանը... թվում էր, թե նոր ոգի են առել հայերը, որոնք հույս ունեին տեսնելու իրենց թագավորության վերականգնումը[24]։

Մենք արդեն ասացինք, որ Ներսես Աշտարակեցին մեծ իմաստ էր տեսնում հայկական զորք ունենալու և սեփական մասնակցությամբ Հայաստանը ազատագրելու փաստի մեջ։ Կան այլ ապացույցներ ևս, որոնք միայն և միայն դա են վկայում։

Այսպես, 1827 թվականի սեպտեմբերի վերջերին, երբ ընկել էր Սարդարապատը և պաշարված էր Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետության վերջին հենակետը՝ Երևանի բերդը, Ներսես Աշտարակեցին հետևյալ կարգադրություններն էր արձակում. Հովսեփ վարդապետ Մարուքյանին, մասնավորապես, նա գրում էր. «առաքեցի առ ձեզ Ստեփաննոսն մեր և գրեմ քեզ որ ընդ ժամանելն իսկոյն հաւաքեալ զամենայն զթուէնք ունեցօղ հայս գտանեցեալս այդր ի սբ. աթոռն թէ ի մեր գիւղացւոց և յայլ և յայլ գիւղացւոց և Լօռուայ և կամ Թիֆլիզ այսօր (սեպտեմբերի 24-ին—Վ. Դ.) իսկոյն յառաջ քան զմտանելն արևու հասուցես առ մեզ այսր ի բանակ և թէ լինիցի ոք որ ծուլասցի զայնպիսին պատժեսցես դու սաստկապէս և նշանակեսցես որ մեք ևս պատժեսցուք զկնի առանց խնայելոյ անպիտան անդամոյ հայոց հասարակութեան»[25]։ Սեպտեմբերի 28-ին, երբ արդեն Երևանի գրավման պատրաստությունները մոտենում էին ավարտին, Աշտարակեցին հետևյալ կարգադրությունն է անում «Հասարակութեան հայոց աշտարակցւոց և օշականցւոց. «Գրեմ բազում օրհնութեամբ, զի ընդ ժամանել գրոյս իսկոյն առանց բոպէ անցուցանելոյ թողեալ զամենայն զհարկաւոր գործս ձեր պատկանեալս վասն տան և ընտանեաց ձերոց ամենայն թուանք

[23] Նույն տեղում, էջ 274—276։

[24] **М. Г. Нерсисян.** Из истории русско-армянских отношений, кн. 1, с. 250—251.

[25] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 819։

ունեցօղքն ի ձէնջ, և ի թուանք չունողացն ևս ոտնաւոր կտրիճ տղայք շատ հաւաքեալ հասուսջիք առ մեզ աստ՝ մինչև ցմտանել արեգականն այսօր որ է չորեքշաբաթ և քսան և ութ սեպտեմբերի, և եթէ մինն ի ձէնջ ծուլասցի և յամեսցէ իմասցի այնպիսին որ եթէ իմ աչաց լոյս ևս լինիսցի ոչ խնայեցից հանել և ի բաց ընկենուլ»[26]։

Պարզ է, որ իր այս կարգադրություններով Ներսես Աշտարակեցին միայն և միայն մեկ կարևորագույն նպատակ էր հետապնդում տվյալ դեպքում՝ Երևանի գրավմանը հաղորդել ազգային-ազատագրական լայնածավալ պայքարի բնույթ, ինչպիսիք էին նաև նրա բոլոր նախորդ ջանքերը հայկական զորք ստեղծելու ուղղությամբ։ Այլ պարագաներում նման գործողությունները, կրկնում ենք, բոլորովին իմաստազուրկ են դառնում։

Թե որքան մեծ նշանակություն էր տրվում հայկական զինված ուժերի վերականգնման հարցին, վկայում է Լազարյանների կողմից ռուսական կառավարությանը ներկայացված ծրագրային այն փաստաթուղթը, որ կրում է «Մի շարք առաջարկություններ Վրաստանի և հարակից երկրամասերի մասին» վերտառությունը[27]։

Հայկական ինքնավարության ձգտումները պարունակող այդ վկայագրերում խիստ մեծ տեղ էր հատկացվում ապագա հայկական թագավորության սահմանների պաշտպանության խնդրին։ Պատճառաբանելով, որ ռուսական սահմանները դեպի հարավ ծավալման և ընդլայնման հետևանքով լուրջ պաշտպանության կարիք են զգում, իսկ ռուսական զորքերը, անսովոր տեղական կլիմային, զանազան հիվանդությունների են ենթարկվում և մահացությունը նրանց մեջ մեծ է, օգտակար էր համարվում նախապես նորագրավ տերիտորիաներում տեղացիներից կամավոր սահմանային պահակություն ստեղծել՝ հատուկ կանոնադրությամբ, իրավունքներով ու օգուտներով։ Այդ նպատակով պետք էր համոզել ժողովրդին, որ նման պահակային ծառայության ստեղծումը որքան Ռուսաստանին է ձեռնտու, այնքան էլ նրանց, ովքեր կամովին կնվիրաբերեն իրենց անձը այդ ծառայությանը, քանի որ պաշտպանելու են սեփական ունեցվածքը և ընտանիքը։ Եվ այնժամ, երբ հայ ազգի մեջ մրցություն կսկսվի՝ դառնալու իր հայրենիքի հավատարիմ պաշտպան և «կվերածնվի արդեն մի քանի դար վերացած Հայկական թագավորությունը», ապա կամավոր աշխարհազորը թվապես կաճի, իսկ կա-

[26] Նույն տեղում, վավ. 818։

[27] Մանրամասն տե՛ս **Վ. Պարսամյան,** Գրիբոյեդովը և հայ ռուսական հարաբերությունները, էջք 139—156, 245—261։

ռավարությունը կհամոզվի, որ, ի դեմս բնիկ բնակչության, սահմանների ջանասեր ու հավատարիմ պաշտպաններ է ձեռք բերել։

Երկյուղ կրելով, որ սահմանապահ զինվորական ծառայությունը կարող է դիմադրության հանդիպել հայերի կողմից, քանի որ Ռուսաստանում վերաբնակված հայերը իբրև ժամանակավոր հպատակներ էին դիտվում և ազատ էին զորակոչիկներ տալուց, ծրագրի հեղինակները գտնում էին, որ իրենց առաջարկած սահմանապահ ծառայությունը հատուկ զորատեսակ պետք է լինի՝ օժտված հատուկ իրավունքներով, պետք է որոշ ժամկետով ծառայի և զորացրվելիս էլ օգտվի որոշակի արտոնություններից։ Սակայն դա էլ բավարար չհամարելով, անհրաժեշտ էին գտնում, որպեսզի կառավարությունը դիմի հայ բարձրաստիճան հոգևորականության աջակցությանը, որքանով որ վերջինս խիստ մեծ ազդեցություն ունի ժողովրդի վրա։ Այնպես որ այդ հարցում պետք է մեծ զգուշություն հանդես բերվի։

Ընդհանուր համաձայնության գալուց հետո Պետերբուրգում պետք է ստեղծվեր հայերից վստահված անձանց մասնակցությամբ հատուկ կոմիտե, որը և կազմելու էր սահմանապահ զինվորական ծառայության պլան ու կանոնադրություն։ Այնուհետև դրանք պետք է թարգմանվեին հայերեն և ներկայացվեին կաթողիկոսի և թեմական առաջնորդների քննարկմանը, քանի որ նրանք ավելի լավ գիտեին ժողովրդի առանձնահատկությունները և տեղական հանգամանքները։

Այդքանն էլ բավարար չհամարելով և, ելնելով իրենց համար իրականություն դարձած այն փաստից, որ գոյություն է ունենալու Հայկական թագավորություն, ծրագրի հեղինակներն առաջարկում էին հարուստ և առաջնակարգ ընտանիքների զավակներից Պետերբուրգում, կայսեր անձին կից, ստեղծել գվարդիական դրուժինա կամ էսկադրոն, որի սպաները պետք է հավաքագրվեին ռուսական բանակի սպայակույտի հայ ներկայացուցիչներից, որպեսզի ավելի ծանրակշիռ հանգամանք տրվեր գործին, իսկ ժողովրդի մեջ էլ լավ կարծիք ստեղծվեր։ Այս մտադրության մասին Խաչատուր Լազարյանը տեղյակ էր պահել Կոստանդին Արղության-Երկայնաբազուկին։ Այդ հարցի լուծումը այն աստիճան հավանական էր համարվում, որ Կ. Արղությանը 1827 թ. դեկտեմբերի 15-ին Խ. Լազարյանին գրած նամակում հարց էր տալիս. «ցանկալի է իմանալ, թե ե՞րբ կկազմակերպվի Հայկական գվարդիական էսկադրոնը, ո՞վ կդառնա նրա հրամանատարը, ի՞նչ կարգագիր է տրվում այդ էսկադրոնին։ Բոլոր այդ տեղեկությունները ինձ համար շատ հետաքրքիր են»[28]։ Հիշյալ նամակը հետաքրքիր է նաև այն առումով, որ պարզորոշ ցույց է տալիս, որ ծրագիրը ռուսական կառավարությանը ներկայացված է եղել Երևանի գրավման լուրն առնելուց անմիջապես հետո, հավանաբար, 1827 թվականի նոյեմբերին։

Ներքին սահմանային ծառայության սպայակազմը պետք է համալրվեր հնարավորին չափ ռուսական բանակում կամ գվարդիայում ծառայած հայ սպաներից, ինչպես նաև, հատկապես կարգի պահպանության համար, ռուս սպաներից ու ենթասպաներից, իսկ ստորին կազմը բաղկացած էր լինելու հայերից և վրացիներից։ Նշվում էր, որ «որքան քիչ նեղեն (զինվորներին—Վ. Դ.), որքան հեշտ լինի ծառայությունը, որքան ավելի շատ իրավունքներ շնորհվեն, այնքան ավելի կմեծանա ծառայել կամեցողների թիվը»։

Ինչ վերաբերում է ապագային, ապա ծնողներն իրենց որդիներին պետք է Ռուսաստան ուղարկեն կրթություն ստանալու, որպեսզի դրանից հետո ծառայեն հայկական գվարդիայում և ներքին սահմանապահ ծառայությունում։ Այդ նպատակին ծառայելու էին Լազարյան ճեմարանը, իբրև գլխավոր ուսումնական հաստատություն, և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, որոնք ստեղծվել են կառավարության բարեհաճությամբ, բայց գանձարանից նպաստ չեն ստանում։ Այն տեղերում, որտեղ վրացիների թիվը մեծ էր, սահմանային ներքին ծառայություն կատարելու էին վրացիները։

Հայկական զորքի վերականգնման այս ծրագրի հեղինակները հայտնում էին, որ անցյալում նման փորձեր ռուսական կառավարությունը կատարել է և, իբրև օրինակ, բերում էին հայկական անկանոն էսկադրոնը, որը գոյություն էր ունեցել Ռուսաստանում շուրջ հիսուն տարի[29]։

Այս ծրագիրը գալիս է ցույց տալու, որ Ներսես Աշտարակեցու գործողությունները հայկական կամավորական գնդեր ստեղծելու և կամ հայերին Երևանի գրավմանը գործուն մասնակից դարձնելու ուղղությամբ ինքնանպատակ չէին, այլ բխում էին «հայկական թագավորության», որի մասին խոսք կլինի ստորև, վերականգնման դրդապատճառից։ Այն, ինչի մասին լռում էր Ներսես Աշտարակեցին, փոքր ինչ վերապահ ձևակերպումներով ասված է Լազարյանների ներկայացրած ծրագրում, որտեղ հայկական զորքի փաստական ստեղծման հարցը՝ առանցքային հարցերից է։

Հարկ է նշել, որ ցարական կառավարությունը բավական լուրջ վե-

---

[28] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 106, գործ 51, վավ. 102։

[29] ЦГВИА, ф. ВУА, д. 4338, лл. 74—77.

բաբերմունք ունեցավ Լազարյանների այս առաջարկության նկատմամբ։ Նախ և առաջ ուշադրություն հրավիրենք այն փաստի վրա, որ Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվում գտնվող այս ծրագրի կառավարությանը ներկայացված օրինակին կից գտնվում են Հայկական էսկադրոնին վերաբերող երեք փաստաթղթեր։ Դրանցից առաջինը Անն Իոանովնա կայսրուհու 1737 թվականի հոկտեմբերի 23-ի հրամանագիրն է, որով Հայկական էսկադրոնի պետ Լազար Խրիստաֆորովին գեներալ-մայորի կոչում էր շնորհվում[30], երկրորդը՝ որքան անձանցից է կազմված եղել Հայկական էսկադրոնը[31], իսկ երրորդը՝ ինչ վարձատրություն են ստացել հայկական և վիրահայկական էսկադրոնների սպաները և զինվորները[32]։ Այս փաստաթղթերի առկայությունը գործում խոսում է այն մասին, որ ռուսական կառավարությանը իսկապես հետաքրքրել է այդ հարցը և դրա վերաբերյալ փաստաթղթերի պատճենների հավաքումը հարցի ուսումնասիրության ուղղությամբ կատարված առաջին քայլերից մեկն է եղել։

Այնուհետև, հայտնի է, որ 1827 թ. ապրիլի 17-ին բարձրագույն հրամանով գլխավոր շտաբի կառավարիչ, հետևազորի գեներալ կոմս Տոլստոյի նախագահությամբ և Մալոռոսիայի ռազմական նահանգապետ, գեներալ-ադյուտանտ իշխան Ռեպնինի, 3-րդ զինաշենային պահեստային հեծյալ կորպուսի հրամանատար կոմս Վիտտեի և զինվորական շների շտաբի պետ գեներալ-ադյուտանտ Կլեյնմիխելի անդամակցությամբ ստեղծվել էր կոմիտե, որը զբաղվելու էր 80 հազար մալոռոսիական կազակների Պարսկաստանի սահմանները, այսինքն Արևելյան Հայաստան տեղափոխվելու և բնակեցնելու հարցով։ Դա կատարվում էր Պարսկաստանի հետ ունեցած սահմանների պաշտպանությունը ավելի հուսալից դարձնելու, «ասիական ցեղերին սանձելու, էլ ավելի հայերի հետ մերձենալու, որոնք դավանանքով և դեպի Ռուսաստանն ունեցած ջանասիրությամբ մեզ համար ամենևին էլ օտար չեն», զորքերի մահացությունը պակասեցնելու և ժամանակին, երբ կլիմային կվարժվեն, բոլորովին վերացնելու, մալոռոսիական աղքատ կազակների բարեկեցությունը ապահովելու, Մալոռոսիան ավելորդ ազգաբնակչությունից ազատելու նպատակներով[33]։

Հայտնի է նաև, որ ռուսական կառավարությունը շատ շուտով ըստ-

[30] Նույն տեղում, թ. 78։
[31] Նույն տեղում, թ. 79։
[32] Նույն տեղում, թ. 79բ—80։
[33] АКАК, т. VII, док. А 274.

տիպված էր հրաժարվել նման մտադրությունից, որովհետև Պարսկաստանից բազմահազար հայ ընտանիքներ գաղթեցին և հաստատվեցին Արևելյան Հայաստանի տարածքում, որը նախատեսվում էր մալոռոսիական կազակների համար։ Եվ հենց այն պարագան, որ Լազարյանները հանդես էին գալիս վերոհիշյալ ծրագրով գեներալ Տոլստոյի կոմիտեի ստեղծումից քիչ ժամանակ անց, խոսում էր այն մասին, որ նրանք տեղյակ էին ցարական կառավարության նման մտադրությանը և ուզում էին կանխել այն իրենց հակառաջարկով։

Պահպանվել է Հայկական մարզի կառավարիչ գեներալ Կրասովսկու կարծիքը «Երևանի մարզում հեծյալ և հետևակ զորաջոկատներ (դրուժիններ—Վ. Դ.) կազմավորելու մասին[34], որից հետևում է, որ այդ կապակցությամբ կառավարությունը լուրջ քայլեր է ձեռնարկած եղել։ Կրասովսկին հայտնում էր, որ այնքանով որքանով առայժմ հայտնի չէ Երևանի մարզի բնակչության ճիշտ թիվը, քանի որ անընդհատ նոր ընտանիքներ են գալիս, ուստի կարելի կլինի հեշտությամբ առայժմ 2000-անոց աշխարհազոր կազմել։ Ներսես Աշտարակեցու հետ խորհրդակցելով, շարունակում էր Կրասովսկին, եկել են այն եզրակացության, որ աշխարհազորը այնպես պետք է կազմակերպել, որ զորականները ռազմական ուսուցմամբ խիստ ծանրաբեռնված չլինեն և ազատ ժամանակ զբաղվեն իրենց տնտեսական գործերով։ Աշխարհազորը պետք է կազմակերպվեր ճակատային սպաների միջոցով, որոնց թվում լինելու էին գումարտակային, էսկադրոնային և վաշտային հրամանատարներ, պարտաճանաչ ենթասպաներ։ Զորականները պետական մատակարարում ստանալու էին միայն իսկական ծառայության ժամանակ։ Պատերազմի ժամանակ հայ աշխարհազորայինների թիվը կարող էր մեծացվել, բայց առանց բնակչությանը նեղություն տալու։

Եվ վերջապես, 1828 թվականի ապրիլին նման առաջարկությամբ Նիկոլայ 1-ին դիմեց գեներալ Ի. Ֆ. Պասկևիչը, որը նույնպես խիստ օգտակար էր համարում «զորքերին թեթևացնելու և նրանց խնայելու համար հիվանդություններից ու մահացությունից, այս երկրամասում հայերից, վրացիներից և թաթարներից աշխարհազոր ստեղծել, որը հյուսիսարևելյանների համար վտանգավոր մի շարք վայրերում կկարողանար մեր սահմանների վրա պահակային և պաշտպանական ծառայություն կատարել։ Նման աշխարհազոր ենթադրում են կազմել երեք գումարտակներից, յուրաքանչյուրում հազար մարդ...»[35]։ Իհարկե, Պասկևիչը

[34] ЦГВИА, ф. ВУА, д. 4334, лл. 12—13.
[35] АКАК, т. VII, док. 15.

բոլորովին այլ բովանդակություն էր դնում տեղական աշխարհազորի ստեղծման գաղափարի մեջ, քան ենթադրվում էր Լազարյանների նախագծում։ Բայց և այնպես, վերոհիշյալ վավերագրից ևս պարզ է դառնում, որ ցարական կառավարությունը ինչ-որ չափով հաշվի էր նստում իրեն ներկայացված նախագծի հետ, համենայն դեպս, չէր կարող լիովին անտեսել այն։

Հարցի քննարկումը ձգձգվում է տարիներ, մինչև որ գեներալ Բեհբութովը բացասական կարծիք է հայտնում, ասելով՝ «Հայերը հազիվ թե ցանկանան կամովին ծառայության մտնել իբրև զինվորներ մեր զորքերի համանման հիմունքներով, քանի որ սարբազներին զորացրելիս, որոնք մասնակցել էին թուրքական պատերազմին, նրանցից ոչ մեկը, չնայած բոլոր հորդորանքներին, չհամաձայնվեց ծառայության մտնել գծային գումարտակներում»։ Բանն այն է, որ բոլորին վանում էր 25-ամյա ծառայության պարտավորությունը։ Ուստի Բեհբութովը առաջարկում էր կազմել հատուկ շենային գումարտակներ հայտնի պայմաններով, այն է՝ վեցամյա ծառայություն սահմանել, պարհակներից ծնողներին ազատել, ամրոցներին կից արվարձաններում տներ տրամադրել, որպեսզի ընտանիքով բնակվի և ունենա իր ոչ մեծ տնտեսությունը։ Բայց դրանք հուսալից զորքեր չեն լինի թշնամու հարձակման դեպքում։ Ուստի Բեհբութովը առաջարկում էր ռուսական զինվորական շեներ հիմնել, որը «այս նորագրավ երկրամասում կդներ Ռուսաստանի տիրակալության մշտնջենական հիմքը»[36]։ Սակայն այս բոլորը մնաց զուտ գրագրություն և իրերի դրության մեջ այնպես էլ փոփոխություն չմտավ։

Հայկական զորք ստեղծելու Լազարյանների և Ներսես Աշտարակեցու ձեռնարկած փորձը ի դերև դուրս եկավ, չնայած նրանց թափած բոլոր ջանքերին, ինչպես որ ի դերև դուրս եկան նրանց մտահղացումներից շատերը։

Երևանի գրավումը և դրանով իսկ խանապարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրության գործի ամբողջացումը համընդհանուր ցնծություն առաջ բերեց հայկական շրջաններում և երախտագիտության խորին զգացում դեպի Ռուսաստանը։ Երևանի գրավումից անմիջապես հետո Ներսես Աշտարակեցին գրում էր Եղիազար Լազարյանին. «ահա գոհանամք զգթութեանց և զմեծ ողորմութեանց խնամակալին իւրոց արարածոց, զի ոչ յաւիտեան անտես արարեալ զաշխարհ հայրենեաց Հայաստանի զտուն նախահօրն աշխարհի Նոյի նահապետի և հայրապետի հայոց Հայկայ դիւցազնի՝ ամենահայեաց բարերար ակնարկութեամբ փրկեաց սքանչելապէս զերկիր Արարատեան զմեծն Հայաստան և զգերագահ աթոռն ամենայն հայոց սուրբ կաթողիկէ էջմիածին ի հազարամեայ տառապանաց կամ որպէս մարթ է ասել ի դժոխատագնապ գերութեանց և յանօրէն բռնակալութեանց բարբարոսաց», «սուր տեառն և սուր օծելոյ նորա ինքնակալի ամենայն ռուսաց Նիկոլայի առաջնոյ անձամբ առհասարակ տեսաք բարձրացեալ և գերահրաշ հզորացեալ»[37]։

1827 թվականի դեկտեմբերի 28-ին, դիմելով Ատրպատականում բնակվող հայերին, Աշտարակեցին գրում էր. «բայց ահա գոհանամք զանսահման խնամակալութեանց աստուծոյ և տեառն մերոյ, զի ոչ իսպառ բարկացեալ մեզ..., յարոյց մեզ զեղջուր փրկութեան, ի հասեալ ժամանակի այսմիկ զօծեալն իւր զտիեզերակալ ամէնօգոստափառ մեծ կայսրն ամենայն ռուսաց Նիկոլայ առաջին, որ ի ծագաց հիւսիսոյ տարածեալ զթեւս իւր, գտանի ահաւասիկ հովանաւոր հայրենեաց Հայաստան ազգի Արարատեան աշխարհի, և փրկիչ և ազատիչ նոցա հզօր ձեռամբ և բարձր բազկաւ»[38]։

Ռուսական զորքերի կողմից Արևելյան Հայաստանի ազատագրումը Աշտարակեցին համարում էր «կատարելագոյն», «կատարելագոյն», «հաստատնայոյս» գտնում, որ ռուսական հովանու տակ «փառք և պարծանք Հայաստանեայց... վերափայլեսցին անդրէն, և ապահովութիւն տիրագույն թագաւորեսցէ նոցա իբրև զառաջինն յաւուրս պանծալի փառաւորութեանց նախնեացն քաջաց և թագաւորաց»[39]։

Բազմաթիվ են այդ շրջանին վերաբերող Աշտարակեցու գրություններն ու նամակները ուղղված աշխարհասփյուռ հայ զանգվածներին, որոնց ավելում էր հայրենիքի ազատագրության լուրը։ Բազմաթիվ են նաև նամակներն ու շնորհավորանքները, որոնք նա ստացել է այդ բախտորոշ օրերին։ Սրտառուչ է Մադրասի հայերի շնորհավորական գիրը, այն քաղաքի, որտեղ հայ ազատագրական միտքը երկնել էր «Յորդորակն» ու «Որոգայթ փառացը»։ Մադրասից հայտնում էին, որ իրենք «անպատմելի ցնծութեամբ անձին, ամենազուարճ հրճուանօք սրտի, և խանդաղատական բերկրանօք հոգւոյ՝ ընդգրկեալ համբուրեցաք զաւետաւոր զաւետաբեր զառ ի սրբազնութենէդ զշնորհագիծն նամակ հայրախնամ օրհնութեանց՝ և պատմագրական ծանօթատուութիւն ազատութեան հայրենեաց մերոց աստուածընտիր մասինն Հայաստանեայց աշ-

[36] Потто В., Кавказская война..., т. IV, вып. 4, с. 474.

[37] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 821։

[38] Նույն տեղում, վավ. 928։

[39] Նույն տեղում, թղթ. 166ա, վավ. 1169։

խարհի, և հոգևոր մօրն մերոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի՝ ի յաստուածապաշտ զօրաց քրիստոսապսակն տիեզերակալի վեհափառ կայսերն ամենայն ռուսաց Նիկողայոսի»[40]։

«Եւ ո՞ որ ի հայկազն մարդկանէ խափանել արգելուլ զորէ աստանօր զցնծութեան զարտասուս յորդահոսս և զառատաբուղխս, ով բարէ ըսքանչելի անհոն և սիրալի ողորմութեան ամենազօր ձեռինն աստուծոյ, որ փրկեացն զմեզ ի դժոխըմբեր և ի դժնդակ գերութենէ մերմէ, որ զերծոյց՝ ազատեաց՝ և ի բաց կորզեաց զաշխարհ մեր ատինասարաս յանիրաւ՝ յանողորմ՝ կեղեքիչ և յոգեսպառ բռնակալաց անտի»[41]։ Նրանց անսահման ուրախություն էր պատճառում այն, որ «ի հարիւրաւոր ամաց հետէ՝ ցանկալին հարց մերոց՝ մեք աւադիկ արժանացաք տեսանել՝ լսել և ընթեռնուլ»[42]։

Ըմբռնելով այն մեծ դերը, որ խաղացել էր Ռուսաստանը հայ ժողովրդի ճակատագրում, Մադրասի հայերը շնորհակալությամբ գրում էին. «ապաքէն այսուհետև տունն Հայկայ պարտական և երախտապարտ է օրհնեալ և բարեբարոյ ազգին ռուսաց և տանն Մեծին Պետրոսի...», ուստի թող աստված «զորացուսցէ, հաստահիմն արասցէ... զբովանդակ ազգն ռուսաց»[43]։

Նման բնույթի բազմաթիվ փաստեր կարելի է բերել, որոնք վկայում են այդ օրերի ցնծագին իրավիճակը, որ տիրում էր հայկական շրջաններում Արևելյան Հայաստանի ազատագրության առթիվ։

Բայց կային հարցեր, որոնք սպասում էին լուծման, հարցեր, որոնց լուծումը կապված էր բազմաթիվ բարդությունների հետ։ Եվ այդ հարցերի մեջ առաջնահերթն ու կարևորագույնը Հայաստանի ապագայի, նրա սահմանների հարցն էր։

Ոչ Լազարյանները, ոչ Ներսես Աշտարակեցին, և ոչ էլ ժամանակի մյուս գործիչները չէին կասկածում, որ Երևանի և Նախիջևանի խանությունները ևս միացվելու են Ռուսաստանին։ Հարցն այդ չէր։ Հարցն այն էր, որ նրանք մտահոգված էի Ռուսաստանի հովանու ներքո հայկական ինքնավարություն ապահովելու ձգտումով։ Մենք արդեն վերը տեսանք, որ այդ նպատակն էր հետապնդում հայկական զորք ստեղծելու մտադրությունը։ Պակաս կարևոր նշանակություն չուներ նաև ապագա սահմանների հարցը, որոնք որոշվելու էին հաշտության բանակցություններում։ Սկսենք այս վերջին հարցի քննարկումից։

[40] Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. 58, վավ. 304։

[41] Նույն տեղում։

[42] Նույն տեղում։

[43] Մատենադարան, Կաթողիկ. Դիվան, թղթ. 58, վավ. 304։

Արդեն 1827 թ. հոկտեմբերի 6-ին Եղիազար Լազարյանին Ներսես Աշտարակեցին հայտնում էր իր մտահոգությունը սահմանների հարցի մասին[44]։ Այդ կապակցությամբ նա խոսել էր նաև Պասկևիչի հետ։ Ե. Լազարյանին նա գրում էր. «Հարկ է վասն սահմանաց Երևանու նշանակել ոչ զերասխ գետն, այլ զսեպհական սահմանն Երևանու, այսինքն է յայնկոյս յարևելից կողմանէ անմատչելի ձորն Մակու անուանեալ, որ բաժանէ զԵրևանու սահմանն ի խոյէ, զգագաթ լերինն Արարատայ և ընդ նմին կցեալ շղթայաշար լերանց՝ որք բաժանեն յԵրևանայ զսահմանն օսմանցւոց իշխանութեան, այսինքն է Պայազիտոյ փաշալիքէն, որ մերձ ի ծայրն արևմտեան սահմանայ Երևանու յայնկոյս Երասխայ ի վերա նոյն Երասխ գետոյ Կողբ գիւղն Ղուլփ անուանեալ ի Պարսից...»։ «Թող զամբութիւնն և զօգուտն ընդ նշանակելոյս, եթէ մի արասցէ, տէր սահման՝ ռուսաց լինի նշանակեալ բացարձակապէս զԵրասխն միայն, և այնքիկ նշանակեալ տեղիք որք իբրև լեզուակ մի գտանին յայնկոյս Երասխայ ընդ մեջ սահմանաց օսմանցւոց՝ մնասցին դարձեալ պարսից, այնուհետև առաւել քան ամուր պարսպօք փակեալ լինին ճանապարհք հայոց հպատակաց օսմանցւոց և ոչ ոք ի տէրութենէ օսմանցւոց կարողանայ անկանել ի սահմանն ռուսաց այսր ի յԱրարատեանն գաւառ»[45]։ Այսպիսով, Սուրմալուի և Մակուի միացումը Երևանին և դրանով իսկ Ռուսաստանին, Աշտարակեցին անհրաժեշտություն էր համարում ոչ միայն այն առումով, որ դրանք «զսեպհական սահմանն Երևանու» են, այլև այն նկատառումներով, որպեսզի այնպիսի մի ամուր բնական պատվար, որպիսին էր Արաքսը, չբաժանի հայ ժողովրդի արևելյան հատվածը արևմտյանից, թեկուզ և նա այդ պատճառաբանում էր Արևմտյան Հայաստանից հայերի Արարատյան աշխարհ գաղթելու գործը դյուրացնելու նկատառումներով։ Անկասկած է, որ նրա այդ մտադրության մեջ թաքնված էին ապագա նկատառումներ։

Մակուի հարցի կապակցությամբ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում 1827 թվականի դեկտեմբերի 24-ի գեներալ Կրասովսկու գաղտնի զեկուցագիրը[46] Պասկևիչին, որտեղ նա հայտնում էր, որ Մակուն Պարսկաստանին թողնելու լուրը դառն տպավորություն է թողել Արարատյան աշխարհի բնակչության վրա։ Զեկուցագիրը գրված է Ներսես Աշտարակեցու ազդեցությամբ, մանավանդ որ Կրասովսկին բերում է նաև Աշտարակեցու կարծիքը այդ հարցերի շուրջը, նշելով, որ Մակուն «Կարևոր և միակ կետն է» Երևանի սահմանների պաշտպանության հա-

[44] Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը..., էջ 107—109։

[45] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 822։

[46] ЦГВИА, ф. ВУА, д. 4313, лл. 45—46.

մար, որ այն Երևանի նահանգի մի մասն է, շրջապատված ահռելի լեռներով ու կիրճերով, խիստ անառիկ է և 10 մարդ կարող են դյուրությամբ կասեցնել ամենաբազմաթիվ ասիական զորքերի, Կրասովսկին գտնում էր, որ այն չպետք է թողնել Պարսկաստանին, քանի որ շարամիտ մարդկանց վտանգավոր բույն կդառնա Արաքսի երկու ափերի բնակչության համար։ Եթե մնալու լիներ Ռուսաստանին, ապա լուրջ խոչընդոտ կհանդիսանար պարսիկների ու թուրքերի շարժումներին։ Կրասովսկին հետևյալ տողերով էր եզրափակում իր զեկուցագիրը. «որքան Երևանի նվաճումը Վրաստանին ծաղկում ու անդորր կբերի, նունքան էլ Մակուն Պարսկաստանին թողնելը Երևանին վնաս և հաճախակի անհանգստություններ կպատճառի, ուստի և վերոգրյալ հանգամանքները հանձնելով ձերդ գերազանցության բարեհաճ քննությանը, խոնարհաբար խնդրում եմ ներկայացնել բարձրագույն կառավարությանը»։

Սակայն Պասկևիչը անտեսեց հայ ժողովրդի շահերից բխող այդ օրինական պահանջը և հայկական վաղեմի տարածքներից Մակուն թողնվեց Պարսկաստանին։ Ներսես Աշտարակեցին այդ բանը Պասկևիչին ներել չէր կարողանում, մանավանդ, որ Երևանից փախստական պարսիկ խաներն ու բեկերը ապաստան էին գտնում այնտեղ։ Այդ կապակցությամբ Ներսեսը Վասիլևկա գյուղից 1829 թվականի հունիսի 5-ին գրում էր Խաչատուր Լազարյանին. «և թէ սարթիպ Մահմադին, զոր գրաֆն Երևանայ կարգեալ էր երկրորդ անդամ կառավարութեան Երևանու, զհրաման ընկալեալ վասն գնալոյ Մակու և դառնալոյ, գնաց հանդերձ որդւովքն և այլ ոչ կամեցաւ վերադառնալ ի Մակուայ։ Եւ թէ Մակուն այժմ եղև ամրոց ապստամբաց և տեղի ապաւինի փախստականաց յԵրևանայ ուր յառաջ քան զսարհանկն գնացեալ փախստական նաև Իսմայէլ և Մահմատ Ջաֆար խանն անդ ի միասին հաւաքեալ բազմանան մինչև ցայսօր և աստուած վաղճանն արասցէ վասն մեր բարի»[47]։

Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումը իրականություն դարձրեց այն հույսերը, որ Երևանի և Նախիջևանի խանությունները ընդմիշտ ազատագրվում են խանական բռնապետական վարչակարգի տիրապետությունից և ոտք են դնում զարգացման նոր ուղու վրա։ Վրաստանի և հարակից մարզերի վերաբերյալ առաջարկություններում ճիշտ կերպով մատնանշվում էր, որ 1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմը մերձեցրեց «այն հիմնական նպատակադրումների «կենսագործումը, «որոնք ենթադրվում էին Պետրոս Մեծի ժամանակներից։ Վաղուց ի վեր ցանկալին այսօր կատարվում է։ Արաքսի ափին ընկած հաստատուն սահմանները բնական պատնեշ են ընդդեմ այն երկրների ուխտադրուժ տիրակալի»։ Այնուհետև մատնանշվում էր, որ ցամաքային առևտուրը «նոր կյանք ու տարածում ստանալով» խոստանում է հարստության նոր աղբյուրներ[48]։

Հայկական շրջաններում առավել ևս մեծ ուրախություն առթեց տվյալ պատմական ժամանակաշրջանի համար խիստ նշանակալից այն երևույթը, որ կայսերական հրամանագրով Երևանի և Նախիջևանի խանությունները կոչվեցին Հայկական մարզ։ «Պարսկաստանի հետ կընքված հաշտությունը,— գրում էր ժամանակի հայ հասարակական գործիչներից Լազարյանների հետ մերձավոր կապերի մեջ գտնվող Կոստանդին Արղության-Երկայնաբազուկը,— տարբեր առումներով ինձ հաճելի վայրկյաններ պարգևեց, որոնցից Նախիջևանի և Երևանի պրովինցիաների Հայկական անվանումը վերջիններից չէր։

....Այս նոր մարզերի բնակիչները, մեր ցեղակիցները, իբրև պարգև Հայկական մարզերի անվանմամբ որոշ ինքնուրույն կացություն են ստանում։ Գեղեցիկ և խիստ օգտակար միտք»[49]։

Այս զույգ վկայություններն արդեն բավական են ապացուցելու համար, որ հայ հասարակական գործիչները ձգտում էին ռուսական կայսրության շրջանակներում Արևելյան Հայաստանի և հայ ժողովրդի համար որոշակի ինքնավարական իրավունքներ ապահովել։ Ուստի և պատահական չէր, որ Լազարյանների առաջադրած ծրագրում հիշատակված էին Պետրոս Մեծի նկատառումները, որոնք, ինչպես արդեն նշել ենք, հանգում էին Հայկական կամ հայ-վիրական միացյալ պետություն ստեղծելուն։ Հիշատակելով հանդերձ այդ մասին, ծրագրի հեղինակները ելնում էին փոփոխված քաղաքական իրադրությունից և, փաստորեն, որոշ ինքնավարության պահանջ էին ներկայացնում։ Դա արտահայտված էր ծրագրի առաջին կետում, որը հետևյալ կերպ էր բանաձևված. «Հայ ժողովրդին առավելագույնս դրդելու համար, որպեսզի ավելի մեծ չափերով հիմնավորվեն Ռուսաստանում, հատկապես նորանվաճ մարզերում, որպեսզի ոգեշնչեն ողջ ազգության նշանավոր հոգևորականությանը և բոլոր դասերին աջակցելու սահմանապահ զինվորության կամավոր կազմմանը՝ քաղաքական առումով, ապագա բարեկարգության իսկական նպատակին հասնելու գլխավորը և միակը այն է, որպեսզի տիրակալ կայսրը, ի ապացույց իր բարեհաճության դեպի հայ ժողովրդի սխրանքները և որպես հետևանք Պարսկաստանի հետ հաշտու-

[47] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 24, л. 98 об.

[48] ЦГВИА, ф. ВУА, д. 4338, л. 74.

[49] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 25, л. 7.

թյան պայմանագրի կնքման, բարեհաճի իր բարձրագույն տիտղոսին այժմ ավելացնել նաև Հայաստանի թագավոր անվանումը»[50]։

Քննարկելով այս հարցը, պրոֆ. Վ. Ա. Պարսամյանը եզրակացնում է, որ «նախագծի հեղինակները հայկական թագավորության վերականգնումը կապում էին ռուսական արքունիքի հետ։ Իսկ կոնկրետ ինչ բովանդակություն պետք է ունենար Հայաստանի թագավորությունը, որի գլուխ կանգնած էր լինելու Ռուսաստանի թագավոր կայսրը, այդ մասին ոչինչ չի ասված։ Առհասարակ նախագծի հեղինակների մոտ այդ հարցը հանդես է գալիս շատ հեղհեղուկ վիճակում»[51]։ Լիովին համաձայնվելով այն մտքի հետ, որ հայկական պետականության վերականգնման հարցը միայն ու միայն Ռուսաստանի հետ էր կապվում, որ ռուսական կայսրը իր անձի մեջ միավորելու էր նաև Հայաստանի թագավորին, քանի որ տվյալ ժամանակաշրջանի պատմական պայմաններում հարցի այլ լուծում հնարավոր չէր, դժվար է համաձայնել պրոֆ. Պարսամյանի այն եզրահանգման հետ, թե Հայաստանի թագավորության բովանդակության հարցը ծրագրի հեղինակների մոտ հեղհեղուկ վիճակում էր գտնվում։

Ինչպես հիշյալ ծրագրում, այնպես էլ այդ ժամանակահատվածի Արևելյան Հայաստանի կացությանը վերաբերող մյուս վավերագրերում որոշակի դրված է Հայաստանի թագավորության բովանդակության հարցը, այն է՝ Հայաստանը պետք է օժտված լինի ինքնավարական իրավունքներով։ Ինչո՞ւմ է արտահայտվելու այդ ինքնավարությունը։ Նախ և առաջ, ինչպես ցույց է տալիս ծրագրի բովանդակությունը, սեփական զորք ունենալում, կարևոր չէ, թե ի՞նչ անվան տակ էր հանդես գալու այդ զորքը։ Այնուհետև, այդ նույն վավերագրի ծանոթագրության մեջ ասված է, «որպեսզի է՛լ ավելի բորբոքեն հայ ժողովրդին պատերազմի ու խաղաղության ժամանակ ցուցաբերած իր նվիրվածությունը նորեն ապացուցելու, անհրաժեշտաբար պետք է և օգտակար վաղեմի ժամանակների օրինակով հաստատողական հրովարտակ շնորհել՝ նախորդ բարձրագույն առանձնաշնորհումներին համապատասխան։ Դրանով շատ հայկական քաղաքների և գյուղերի բոլոր հասարակությունները կմիամտեն իրենց ճակատագրի հարցում...»[52]։

Լիովին պարզ է, որ այստեղ խոսքը գնում է ամբողջ հայ ժողովրդի վրա այն առանձնաշնորհումների տարածման մասին, որոնցից

[50] Նույն տեղում։
[51] Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը..., էջ 146։
[52] ЦГВИА ф. ВУА, д. 4338, л. 77.

ժամանակին օգտվում էին Նոր Նախիջևանը, Գրիգորիոպոլը, Աստրախանը, Մոզդոկը, Ղզլարը և այլն։ Դա նշանակում է, որ հայկական քաղաքների ու գյուղերի հասարակությունը ստանալու է ներքին ինքնավարություն՝ դատաստանական, հարկերի բաշխման ու գանձման, առևտրական գործունեությամբ զբաղվելու, գործարաններ ու ֆաբրիկաներ հիմնելու և այլ հարցերում, դրանցում մեծին մասամբ զերծ էր մնալու ռուսական իշխանությունների միջամտությունից։

Այնուհետև, դրվում էր հայ եկեղեցու իրավունքների անձեռնմխելիության հարցը։ Խաչատուր Լազարյանի գրչին պատկանող և Ա. Խ. Բենկենդորֆին ուղղված 1829 թվականի հունիսի 30-ի «Առաջարկություններ Հայաստանի վերաբերյալ» խորագիրը կրող գրությունում ասված էր, որ անհրաժեշտ է «ինչպես կայսրության, այնպես էլ մի ամբողջ ազգի համար» «փոխադարձաբար օգտավետ կանոններ ու որոշումներ ընդունվեն», «որպեսզի Էջմիածնի Արարատյան վանքի ազդեցությունն ու վստահությունը, որը կենտրոնանում է բարձրագույն պաշտոնյայի՝ ամենայն հայոց ծայրագույն պատրիարքի անձի մեջ և նրա հնամենի սրբազան իրավունքներում, մնա անխախտ և որպեսզի որևէ նոր բաժանում տեղի չունենա հայ ժողովրդի մեջ» այն էլ Արևելյան Հայաստանի միացումից հետո Ռուսաստանին, Պարսկաստանում ու Թուրքիայում հակաթոռ կաթողիկոսություններ ստեղծելու փորձեր չարվեն, որից Ռուսական կայսրությունը կտուժի[53]։

Այս հարցին Խ. Լազարյանը անդրադառնում է նույն Ա. Խ. Բենկենդորֆին ուղղված իր սեպտեմբերի 27-ի № 252 գաղտնի զեկուցագրում և հարց դնում, որպեսզի «ընդհանուր բարձրագույն օրինաց, ինչպես նաև եկեղեցական որոշումների հիման վրա մեկընդմիշտ արգելվի տեղական քաղաքացիական ու զինվորական իշխանություններին միջամտել եկեղեցական ու հոգևոր գործերին, քանի որ դրանք միշտ էլ անմիջականորեն պատկանել են և պատկանում են հոգևոր բարձրագույն իշխանության իրավասությանը»[54]։

Անհրաժեշտ է նշել, որ Ներսես Աշտարակեցին սկզբից ևեթ միջոցներ էր ձեռք առնում, որպեսզի Էջմիածինը դրվի ռուսական իշխանություններից համեմատաբար անկախ վիճակի մեջ։

Այս տեսակետից խիստ հետաքրքիր է նրա միջոցառումներից մեկը Վաղարշապատում։ Որքանով որ վերջինս համարվում էր Էջմիածնի գյուղը, Աշտարակեցին այստեղ ինքնավարություն ստեղծելու փորձ կա-

[53] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 24, л. 62—62об.
[54] Նույն տեղում, թ. 141։

տարեց։ 1828 թվականի հունվարին «ըստ բարձրագույն հրամանի ծայրագույն կառավարչին հոգևորականաց (իմա՝ Ներսես Աշտարակեցու— Վ. Դ.) կարգադրվում է հինգ անձանցից դատավորներ ընտրել Վաղարշապատի համար, որը «թէպէտ այժմ գիւղ է, բայց նախապէս Հայաստանեաց թագաւորանիստ տեղին էր»։ Ուստի դատավորները պարտավոր էին «օր ըստ օրէ ի պատիւ նախնի հայրենի բարի անուան զարդարութիւն, զուղղութիւն, զանաղանութիւն, անկողմնապահութիւն ձեր լսողաց և տեսողանաց որպէս ճրագ յաշտանակի եղեալ ցուցանել. քանզի որպէս ի սբ. աթոռոյս Էջմիածնայ՝ ըստ որում կաթուղիկէ ամենայն եկեղեցեաց, ելանեն հոգևորական օրէնք, նոյնպէս ի Վաղարշապատէդ՝ որովհետև թագավորանիստ տեղի, ձեր հայրենասէր արդարութեան դատողական բարի համբաւն մարմնաւորական օրինաց սկիզբն լիցի ի մեջ բոլոր Հայաստանեաց սահմանի...»[55]։ Այս վավերագիրը վկայում է, որ Աշտարակեցու մտայնությամբ, Էջմիածինը և Վաղարշապատը դառնալու էին Հայաստանեայց կենտրոնը՝ մայրաքաղաքը և օրենքներ էին արձակելու՝ հոգևոր ու մարմնավոր, ելնելով ազգային ավանդույթներից։

Ստեղծվելիք դատական ատյանը կամ իրավարանը պետք է իր հատուկ շենքն ունենար, գործերը վարեր գրավոր, գործեր կանոնավոր, իրավարանից դուրս «յիմար գոհեկութեամբ» խնդրանքներ չընդուներ։ Դատավորները չպետք է համարձակվեին ծածուկ կամ հայտնի ընծա ու կաշառք վերցնել, «քանզի կաշառ կուրացուցանէ զաչս ճշմարտասիրաց», «զի թէ կաշառատուն և թէ կաշառառուն միապէս պարտին պատժիլ խստագոյն օրինօք ի սրբոյ աթոռոյս բարձրագոյն կառավարութենէ»։ Սահմանվելու էր չափ ու կշռի միասնություն, սպեկուլյացիան կանխելու նպատակով մինչև կեսօր պարենամթերքը հարուստները և դրսից եկած մեծագնորդները իրավունք չպետք է ունենային գնել, այլապես տուգանք էին վճարելու հօգուտ Վաղարշապատում հիմնվելիք վարժարանի, իսկ կրկնվելու դեպքում խստագույնս պատժվելու էին։ Մարմնական պատիժներ և հայհոյանքներ չպետք է կիրառվեին, «զի հարկանօղն ի շարս զազանաց է, հայհոյիչ և անիծաբան բերանն տուն և բնակութիւն սատանայի և դիւաց նորա է»։

Վաղարշապատում իրավարանը պետք է «հասարակ վարժարան մի» հաստատեր մանուկներին կրթելու համար։ Իրավարանը պարտավոր էր նաև պահակություն սահմանել «անդոց, այգեաց և ջրոյ կառավարութեան, մանաւանդ անասնեղինաց աղագաւ», որ չվնասեն այլոց։ Պետական կամ Էջմիածնի համար կոռային պարտություններ կատարելը չպետք

[55] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վավ. 112։

է գցեին աղքատների վրա, այլ, ընդհակառակը, «աղքատաց խնայելով թէ զանձինս և թէ զանասունս աշխատեցուսջիք»։ Մայր աթոռի ծառայողները՝ ամալաները պետք է հարկերից ազատ մնային[56]։

Աշտարակեցու սահմանած վերոհիշյալ կանոններից երևում է, որ նա կամենում էր արմատախիլ անել խանական կառավարման հետևանքով երկրում տարածում գտած բոլոր բռնի և բարբարոսական մեթոդները և փոքր ի շատե տանելի կենսապայմաններ ստեղծել աղքատ խավերի համար։

Այս վավերագիրը հետաքրքիր փաստաթուղթ է ոչ միայն այն առումով, որ երևան է հանում հայկական ինքնավարություն ստեղծելու փորձերից մեկը և դրանով իսկ ցույց տալիս ժամանակի իշխող մտայնությունը, այլև այն առումով, որ Ներսես Աշտարակեցուն բնութագրում է իբրև մի գործիչ, որը տոգորված էր դեմոկրատական որոշակի տրամադրություններով և սեփական ժողովրդի առաջընթացի շահագրգռություններով։

Հայկական պետականության վերականգնման հարցը «իր ժամանակին որոշ հետաքրքրություն է առաջ բերել կառավարական շրջաններում, իսկ հայ պատրիոտները այն աստիճան ոգևորվել էին դրանով, որ սկսել էին ռուսական արքունիք ուղարկել զանազան պատմական տեղեկանքներ հայկական թագավորության, զինանշանի, եկեղեցու և պետության փոխհարաբերության մասին, ինչպես նաև ռուսերեն թարգմանություններ՝ հայկական կանոնագրքերից, Մխիթար Գոշի հայտնի «Դատաստանագրքից» և այլն»[57]։ Այստեղ պետք է մի փոքր ուղղում մտցնել այն առումով, որ ռուսական կառավարությունն ինքն էր հավաքում, պահանջում այդ տեղեկությունները։ Դրա վկայությունը մենք գտնում ենք Ներսես Աշտարակեցու 1828 թվականի մարտի 9-ին Երևանից Հարություն Ալամդարյանին ուղարկված նամակում. «Վասն տպագիր պատկերի սրբոյ Էջմիածնի և օրինացն թագաւորաց Հայոց՝ մանաւանդ Յովհաննու Բագրատունւոյ, զորմէ լուր ևս ցարդ չունիմ անգամ, և վասն կանոնագրքի հայոց՝ զորս խնդրեալ է նորին գերազանցութիւնն Կոստանդին Քրիստաֆորիչ Բէկէնդորֆն, որոնեցից ևս եթէ գտցին ի գրատան սրբոյ աթոռոյն»[58]։ Եթե ի նկատի ունենանք, որ Բենկենդորֆն այդ ժամանակ մեկնում էր Պետերբուրգ, որի «արգասիք վասն ազգի և հայրենեաց Հայաստանի ամենայոյս եմ, թէ եղիցի բազմարդիւն մինչև

[56] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վավ. 112։

[57] **Վ. Ա. Պարսամյան,** Գրիբոյեդովը..., էջ 147։

[58] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166ա, վավ. 1095։

յոյժ»[59], եթե ի նկատի առնենք, որ Պետերբուրգում նրա եղբայր Ա. Խ. Բենկենդորֆը անմիջականորեն առնչվում էր հայկական հարցերին, ապա պարզ կլինի, թե ում հանձնարարությամբ և ինչ նպատակով էր Կ. Խ. Բենկենդորֆը խնդրում հայկական թագավորների օրենքները և հայոց կանոնագրքերը։ Կասկած չկա, որ այդ պահին ռուսական կառավարական շրջաններում հայկական ինքնավարություն ստեղծելու որոշակի միտումներ կային, որը արտահայտվեց Հայկական մարզի ստեղծման փաստով։

Լազարյանների ծրագրում առաջադրված հայկական թագավորությունը չպետք է պարփակվեր միայն Երևանի և Նախիջևանի խանություններով, այլ ընդգրկեր պատմական Հայաստանի ռուսական տիրապետության տակ գտնվող մյուս շրջանները ևս։ Սրանք գրում էին. «Շատ մարզեր, ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքու և Շամախու մարզերը՝ Էջմիածնի նախագահ վանքով կազմում են Հայաստանի վաղեմի հին թագավորության ընդհանուր կորիզը և գլխավոր հիմքը»[60]։

Այսպիսով, հայկական պետականությունը, ըստ ծրագրի հեղինակների մտահղացման, վերականգնվելու էր մի ընդարձակ տարածքի վրա և «այս ընդհանուրի համար օգտավետ միջոցառումը ներկա և ապագա ժամանակներում» պետք է «մեծ պտուղներ» տար, քանի որ հեռու և մոտիկ երկրներից հայ ժողովուրդը կհավաքվեր «Հայաստանի թագավորի բարեգործ գայիսոնի հզորագույն հովանու տակ» հազարավոր ընտանիքներով և իր ողջ ունեցվածքով։ Ուրեմն, դրվում էր հայ ժողովրդի ազգային կոնսոլիդացման հարցը, որի վրա այդ բախտորոշ օրերին խիստ մեծ ուշադրություն էր դարձվում։ Բավական է հիշել թեկուզ միայն Ներսես Աշտարակեցու կրքոտ հորդորանքները, որով նա կոչ էր անում պարսկահայությանը վերադառնալ իր նախնիների հայրենիքը, որպեսզի համոզվենք, թե ժամանակին ինչպիսի մեծ հրատապություն էր տրվում այդ հարցին։ Ներսես Աշտարակեցու կարծիքով «փրկութիւն հայրենեաց Հայաստանի յայնժամ եղիցի ապահով, յորժամ բազմասցին ի Հայաստան ի գաւառն Արարատեան, ի Նախիջևան, ի Փայտակարան և յամենայն յեզերս սահմանաց այսոցիկ ազգք հայոց»[61]։ Այդ «փրկութիւնը» ապահովելու համար նա անհրաժեշտ էր համարում Պարսկաստանի տարբեր նահանգներից հայերի գաղթեցումը, լինի դա կամովին

[59] Նույն տեղում։

[60] ЦГВИА, ф. ВУА, д. 4338, лл. 74—77.

[61] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 822։

թե հարկադրաբար, որովհետև Պարսկաստանի հայերը «գոլով ի սաստիկ տգիտութեան, ոչ կարեն այժմ նկատել նոքա զօգուտն իւրեանց և զվնասն ներկայ և ապագայ, ընդ որոց արժան է կառավարիլ ըստ պահանջման հարկին ի սմին պատահման որպէս հայր և որպէս բարեկամ իմաստուն և օգտակամ նոցին, ոչ հայելով ի կամս տգէտ ընտրութեանց նոցին, որք զմի տուն իւրեանց գետնայարկ և զմի այգի և ջրաղաց կարող են առաւել համարիլ վասն անձանց քան զհետեվեալ ազատութիւնն ամենայն ազգատոհմի իւրեանց և զբիւրապատիկ բարութիւնսն զորս կարող են վայելել ի ներքոյ աստուածանման բարերար հովանաւորութեանց օրհնեալ տէրութեան ամենայն ռուսաց»[62]։

Մեկ այլ տեղ Ներսես Աշտարակեցին հայտարարում էր, որ «այսուհետև նովաւ կարեն ազգն հայոց ցուցանել զինքեանս ի մէջ աշխարհի իմաստուն, թէ զմտաւ ածեալ վասն ամենայն չարեացն որով նախնիք իւրեանց տառապեալ են ընդ ամենայն տեղիս իւրեանց ուր և գտանեցեալ են ցան ու ցրիւ այժմ ի սմին յաջողութեան ժամանակի հաւաքեալ փութասցին առ միմեանս, և լնուլ ջան դիցին զտարածութիւն Մեծին Հայաստանի զերկիրն Արարատեան, և անդ թեւակցեալ միմեանց զօրասցին, աճեսցին և ողորմութեամբ մեծ կայսեր ամենայն ռուսաց հասցին նախնական փառաց իւրեանց և վայելչութեանց և վայելեսցեն զկատարեալ հանգիստ և զուրախութիւն», այլապես «այսպէս ցանուցրիւ փոքր ազգն ոչ այդր և ոչ այլուր չէ կարող յուսալ լաւութեանց մինչև յափտեան ի մէջ բազմութեան բարբարոս ազգաց, որք ատեն զհաւատ քրիստոնէութեան»[63]։ Աշտարակեցու այս տողերը գրեթե մարգարեաբար են հնչում, եթե նկատի առնենք, թե ինչ բախտի արժանացավ մեր ժողովրդի արևմտյան հատվածը, որը ցանուցրիվ էր եղել «ի մէջ բազմութեան բարբարոս ազգաց»։

Ելնելով այս ամենից, Աշտարակեցին Բարսեղ եպիսկոպոսին գրում էր, որ նրա առաջին պարտքն է «զայս ամենայն զգացեալ արժանապէս և զգացուցեալ ամենայն մեծի և փոքու հայոց», մեծ փույթ առնել «բանալ զմիտս նոցա և յորդորել զամենեսեան զնոսա ի տէր յափտենական ազատութեան իւրեանց...»[64]։

Աշտարակեցուն գերագույն բավականություն էր պատճառում այն պարագան, որ Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո պարսկահայերը սկսեցին հաստատվել Հայկական մարզում։ Հովհան-

[62] Նույն տեղում։

[63] Նույն տեղում, վավ. 901։

[64] Նույն տեղում, թղթ. 166, վավ. 912։

նես Գառնակերյանին 1828 թվականի հուլիսի 13-ին նա գրում էր. «զայտոսիկ ոչ անդէպ համարիմ առաջի առնել, զի աղքատացեալ հայրենիք մեր Արարատեանն աշխարհ, որ զրկեալ յամենայն բազմաւորաց իւրոց ժառանգաւորաց ունէր միայն ի ծոց իւր զտունս 3337 և անձինս 18576, ըստ հաւատարիմ նորոգ մեր տումարագրութեանց, հարստացեալ այժմ բազմաւորութեամբ բազմաց, հարստացուցանէ զուրախութիւն իւր օր ըստ օրէ նկատելով ի դիմեցումն իւրոց առ ինքն ի հարաւոյ և յարևմտից ըստ գուշակելոյ մարգարէութեանցն», որ «վերաբնակեցան յԵրևան ի Նախիջևան աւելի քան ութն հազար տունք»[65]։

Այսպիսով, ազգային փրկության և հարատևության երաշխիք համարվում էր ազգային կոնսոլիդացումը այն տարածքում, որ կրում էր «նորոգ անուանակոչութիւն յատկացելոց աշխարհ Հայոց»[66]։ Սակայն դա չէր նշանակում, որ Աշտարակեցին կամ մյուս հայ գործիչները առաջնորդվում էին ազգային նեղմիտ ոգով և կամենում էին ոտնահարել մյուս ժողովուրդների իրավունքները, ինչպես որ ներկայացնում էր գեներալ Պասկևիչը։ Ընդհակառակը, Ներսես Աշտարակեցին այն անձնավորությունն էր նաև, որին դիմում էին թաթարների, քրդերի և այլ ցեղերի բեկերն ու աղաները, երբ հարաբերություններ էին ուզում հաստատել ռուսական իշխանությունների հետ։ Ներսես Աշտարակեցին հորդորում էր նրանց «ընկալել» ռուսական հովանավորությունը, քանի որ «տէրութիւն ռուսաց... պահպանելոց է զձեզ և զազգատոհմ ձեր առաւել խնամակալութեամբ միշտ»[67]։ Այդ ոգով նա նամակներ ուղարկեց Զաման աղային, Նեճեֆ սուլթանին, Միրզախան բեկին, քուրդ Հյուսեին աղա Շամդինյանին, Նաղի խանին և այլոց[68]։

Հայերի ազգահավաքման գործին մեծապես նպաստելու էր, ըստ ծրագրի հեղինակների, ռուսական կայսեր կողմից Հայաստանի թագավորի տիտղոսի ընդունումը, որովհետև եվրոպական ու ասիական Թուրքիայում, առհասարակ ամբողջ Ասիայում և մասամբ Հյուսիսային Աֆրիկայում ապրող հայկական զանգվածների վրա դա թողնելու էր վաղեմի հայկական թագավորության վերածննդի տպավորություն, որից հետո ծայրագույն պատրիարք կաթողիկոսը կդիմեր «Կ. Պոլսի հայոց պատրիարքին և Զմյուռնիայի[69], Երուսաղեմի, Տրապիզոնի և մյուս թեմերի թեմական արքեպիսկոպոսներին, ինչպես և Հնդկաստանում գտնվողներին», որ վերածնվել է հայոց թագավորությունը և այդ բարի լուրից խանդավառված ժողովուրդը կվերադառնա իր հայրենիքը, իսկ Բ. Դուռն ու Պարսկաստանը շատ հպատակներ կկորցնեն[70]։ Դրանով իսկ Ռուսաստանը մեծապես շահած կլիներ, մինչդեռ նրա հակառակորդները զգալի կորուստներ կունենային։

Սակայն այլ էր ցարական կառավարության վերաբերմունքը, և հատկապես գեներալ Պասկևիչի, որը ոչնչի առջև կանգ չէր առնում, որպեսզի մեկընդմիշտ հայ ժողովրդի միջից արմատախիլ անի, Պասկևիչի կենսագիր Շչերբատովի արտահայտությամբ, այն «թեթևամիտ ենթադրությունը» որ իբր թե ցարական կառավարությունը կամենում է «վերածնել հայ ժողովրդին», հոգ տանել գերազանցապես հայ բնակչության բարեկեցությանը, ետին պլան մղելով մուսուլմանների շահերը։ Այնուհետև Շչերբատովը գրում էր. «Հենց այդպիսի մոլորության մեջ էր Ներսես արքեպիսկոպոսը, որից նրան հանեց Պասկևիչը»[71]։ Հետևելով Պասկևիչի բանսարկություններին, Շչերբատովը ամեն կերպ աշխատում է սևացնել Ներսես Աշտարակեցուն և հակադրել մահմեդական «բարձր առաքինության տեր» հոգևորականությանը, հատկապես Ռուսաստան անցած Թավրիզի Մուջթեհիտ Աղա Միր-Ֆաթթահին։

Հասկանալով Աշտարակեցու և առհասարակ ամբողջ հայ ժողովրդի ազգային ոգորումների իմաստը, Պասկևիչը գնաց մի ուղիով, որը թշնամություն էր սերմանում Անդրկովկասի ժողովուրդների միջև, հատկապես թշնամություն հայ ժողովրդի նկատմամբ։ Հասնելով Աշտարակեցու փաստական աքսորին, դրանից հետո Պասկևիչը իր թույնը սկսեց թափել բոլոր նրանց վրա, ովքեր համակարծիք էին Ներսեսին և բաժանում էին նրա հայացքները։ Նա այնքան հեռուն գնաց իր հարուցած հալածանքներում, որ Պետերբուրգից նրան խորհուրդ էին տալիս չափավորել իր եռանդը։ Ուստի բնական էր, որ հայ գործիչները ուշադրություն դարձնեին նրա հայատյաց գործելակերպի վրա։ Ա. Խ. Բենկենդորֆին ուղարկած 1829 թվականի սեպտեմբերի 27-ի իր գաղտնի զեկուցագրում Խ. Լազարյանը հետևյալ դառն մեղադրանքն էր ուղղում կառավարության հասցեին. «Բարեկեցության փոխարեն, օրենքների պաշտպանության փոխարեն, որին բոլորը սպասում էին իբրև փոխհատուցումն ծառայությունների և զոհաբերությունների, ըստ հավաստիացումների, հայ ժողովուրդը ամենուր հանդիպում է ճնշումների ու հալածանքների, որից

[65] Նույն տեղում, թղթ. 166ա, վավ. 1169:

[66] Նույն տեղում:

[67] Նույն տեղում, թղթ. 166, վավ. 892:

[68] Նույն տեղում, վավ. 868, 884, 892 և այլն:

[69] Պրոֆ. Պարսամյանը սխալմամբ Սիրիա է թարգմանել «Смирна»—Զմյուռնիա բառը (տե՛ս Գրիբոյեդովը..., էջ 145):

[70] ЦГВИА, ф. ВУА, д. 4338, лл. 74—77.

[71] Щербатов, Генерал-фельдмаршал кн. Паскевич, т. III, с. 320—321.

նույնիսկ բարձրաստիճան հոգևորականությունը և հավասարապես էջմիածնի նախագահ վանքը չեն խուսափում։ Բոլոր նման անկարգությունները սպառնում են Հայաստանին քայքայմամբ և անգամ շարաբաստիկությամբ»[72]։ Այնուհետև Խ. Լազարյանը թվարկում էր հայ ժողովրդի մատուցած վերջին տարիների բոլոր ծառայությունները, որոնք «մոռացության» էին տրվել Կովկասի կառավարչապետի կողմից, այն է Պարսկաստանի դեմ մղած պատերազմներում ունեցած մասնակցությունը, Կախեթի խռովության ժամանակ պահպանած հավատարմությունը, ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ցույց տված աջակցությունը և այլն։ Նա մեղադրում էր Պասկևիչին, որ նա Ղարաբաղի «անվախ» հայերին, ինչպես և այլ վայրերի, ընդգրկել է մուսուլմանական անունը կրող գնդերում, մասամբ մահմեդականների դավաճանական պոռթկումները զսպելու համար, ինչու և հայերը ծառայել են այդ գնդերում։ «Բայց ի «վիրավորանս հայ ժողովրդի, այդ գնդերը անվանվել են մուսուլմանական, դիտավորյալ կերպով հայերի սխրագործությունները և ծառայությունները թաքցվել են. գլխավոր հրամանատարի և մյուս պետերի ոչ մի զեկուցագրում, ոչ մի գրության մեջ հայերը չեն հիշատակվում, նրանց մասին ոչ մի խոսք չկա և ոչ ճիշտ ամեն ինչ վերագրվում է մուսուլմանների քաջությանը...»[73]։

Խ. Լազարյանը չէր դադարեցնում իր փորձերը՝ փոխելու իրերի վիճակը, դրդելու կառավարությանը վերջ տալ ստեղծված անկանոն դրությանը։ 1829 թվականի նոյեմբերի 1-ին իր գրության մեջ Ա. Խ. Բենկենդորֆին նա հաղորդում էր, որ Երևանի և Նախիջևանի խանությունների գրավումից հետո անցած երկու տարիներից հետո էլ «չկան հիմնական և անհրաժեշտ ուղղություններ, չկա պաշտոնյա, որ գլուխ հանի բոլոր գործերից և օգտվի ժողովրդի վստահությունից»[74]։

Դրդելու համար ցարական կառավարությանը, որպեսզի փոխի իր քաղաքական ընթացքը հայ ժողովրդի նկատմամբ, Խ. Լազարյանը հայտնում էր, որ պարսկական կառավարությունը փոխել է վերաբերմունքը հայերի նկատմամբ, որ Նոր-Ջուղայի և հարակից գավառի 5000 հայ ծխերի վրա կառավարիչ է նշանակված Աստվածատուր անունով մի հայ, որն անձամբ ինքն է հսկում հարկերի հավաքման գործին և բոլոր ճընշումների դեպքում զեկուցում է շահին, որ դրանով դրությունը բարելավվել է և հայերի դժգոհությունը վերանում է։ Այնուհետև նա շեշտում

[72] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 24, лл. 138об.—139.
[73] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 24, лл. 139—140об.
[74] Նույն տեղում, թ. 218բ—219։

էր, որ հիշյալ Աստվածատուրը անգլիական կառավարության լիազոր բանկիրն է, գանձապահը տեղում, ուստի և, հավանաբար, այդ բարեփոխությունների ետևում կանգնած են անգլիացիները[75]։ Պարզ է, որ այդ եղանակով Խ. Լազարյանը կամենում էր զգուշացնել ցարական պաշտոնյաներին, որ ժողովրդական դժգոհության դեպքում կուժեղանա անգլիական աջդեցությունը։

Մեկ այլ գրությամբ (21—11—1829 թ.) Խ. Լազարյանը Բենկենդորֆին հաղորդում էր, որ ստացել է Կալկաթայի հայերի շնորհավորագիրը Հայաստանի ազատագրության առթիվ և շեշտում էր, որ գոհաբանական մաղթանքներ են կատարվել եկեղեցիներում «Հայաստանի փրկչի և թագավորի» արևշատության համար։ Լազարյանը չէր մոռանում հիշատակել նաև, որ Հնդկաստանում «անգլիական կառավարության լիազոր պետերը և գործակալները, ինչպես բուն հպատակները իրենց լայն գործառնություններում խռնեմաբար են վարվում, ամեն կերպ նոգ տաճելով քաղաքացիական վարչության մեջ ներգրավելու Հնդկաստանի տարբեր ցեղերին»[76] (ընդգծումը մերն է—Վ. Դ.)։

Այս օրինակները խոսում են այն մասին, որ Խ. Լազարյանը կամենում էր հասկացնել ցարական կառավարությանը, որ պետք է փոխել վերաբերմունքը դեպի հայերը, այնպես ինչպես այն, ըստ նրա, փոխվել է Պարսկաստանում և կամ վարվել հայերի հետ այնպես, ինչպես անգլիացիներն են վարվում հնդիկների հետ։ Նա ջանում էր նաև կառավարությանը հրապուրել այն շահով, որ կստանար նա, եթե հարուստ հընդկահայերը տեղափոխվեին Հայաստան։ Իսկ հնդկահայերը ունեն նման մտադրություն, բայց անգլիացիները նրանց ետ են պահում, որովհետև հայերը օգտակար են նրանց առևտրի համար, և ետ են պահում վատ լուրեր տարածելով Ռուսաստանին ենթակա Հայաստանի մասին և այդ քաղաքական ակտով ջանում են սառեցնել ներգաղթելու նրանց մտադրությունը[77]։

Ավելի պարզորոշ Խ. Լազարյանը արտահայտվել չէր կարող։ Եվ, բացի այդ, հիրավի հնդկահայերի ականջին որոշ անախորժ լուրեր հասել էին, որի մասին վկայում է մեկ արխիվային վավերագիր, որի քննարկմամբ կզբաղվենք քիչ հետո։

Բայց Խ. Լազարյանը ո՞րն էր համարում ելքը ստեղծված վիճակից։ Նա երկար ժամանակ հույսը չէր կտրում, որ Ա. Խ. Բենկենդորֆը կկա-

[75] Նույն տեղում, թ. 232։
[76] Նույն տեղում, թ. 223։
[77] Նույն տեղում, թ. 223բ։

տարի իր խոստումը և Ներսես Աշտարակեցուն կհրավիրի Պետերբուրգ, որտեղ Հայաստանին, հայ ժողովրդին և հայ եկեղեցուն վերաբերող հրատապ հարցերը քննարկելուց հետո, նրան կթույլատրվի վերադառնալ Հայաստան։ Եթե անհրաժեշտ համարվեր, կարելի էր ստեղծել հատուկ կոմիտե Ներսեսի անդամակցությամբ, որովհետև նա իր «ընդունակություններով և արժանիքներով վայելում է ժողովրդի համընդհանուր հարգանքը և սերը»։ Ներսեսից բացի, կոմիտեի մեջ կարելի կլիներ մուծել նաև մի քանի «առաջնակարգ հայեր», որոնք նույնպես «օգտվում են վստահությամբ» և սրանց բոլորի հետ միասին լուծել հարցերը և, Եփրեմի ծերության կապակցությամբ, Ներսեսին բազմեցնել կաթողիկոսական գահին, ընդ որում տալ առանձնաշնորհումներ Պետրոս Մեծի և նրա հաջորդների ոգով[78]։

Պարզ է, որ Խաչատուր Լազարյանը դեռևս երկար ժամանակ փայփայում էր Հայաստանի ինքնավարության հույսերը, թեև այդ ժամանակ ցարական կառավարությունը անցնում էր անսքող գաղութային քաղաքականության Անդրկովկասում։ Իսկ Ներսես Աշտարակեցին արդեն սկսել էր կռահել, որ իրենց հույսերը վաղաժամ են եղել, որովհետև, ինչպես գրում էր նա Խ. Լազարյանին 1829 թվականի հունիսի 18-ին Գրիգորիոպոլից, «և պտուղք առանց ժամանակի պատրաստեցելոյ յաստուծոյ՝ յառաջ բերեալք ի հնարագրութեան մարդկային ուժգնութեանց, ոչ զայնպիսի ճաշակս մատուցանեն, որպէս և յայտ է»[79]։ Ստեղծված պայմաններում, ինչպես գտնում էր Աշտարակեցին, հայ ժողովուրդը չէր կարող իր ուժերով հասնել ազգային ինքնուրույնության, ուստի և անհրաժեշտ էր հեռատեսություն և համբերություն հանդես բերել. «զօգուտն մեր,— գրում էր նա,— և կամ աթոռոյ և ազգի մերոյ՝ քաջայայտ է, թէ անձնական զօրութեամբ չեմք կարող յառաջացուցանել ըստ ցանկութեան սրտի մերոյ, այլ հարկ է ըստ խոհեմութեան և ըստ հանճարոյ յառաջ ընթանալ յամենեսին՝ կոչելով յօգնականութիւն և զամենազօր զօրութիւն մարդասէր աստուծոյ և տեառն մերոյ»[80]։ Այսպիսով ամեն ինչ դարձյալ թողնվում էր անորոշ ապագային։

Դեռ ավելի վաղ, 1828 թվականի նոյեմբերի 21-ին, Կոստանդին Արղությանը գրում էր Լազարյան Խաչատուրին. «իրականն այն է, որ կառավարությունը առ այսօր չհատուցեց այն արդարությունը, որին արժանի են մեր հայրենակիցները, որոնք այնքան շատ նպաստեցին

[78] Նույն տեղում, թ. 63բ—64բ։
[79] Նույն տեղում, թ. 99բ։
[80] Նույն տեղում, գ. 25, թ. 99բ։

ռուսական զորքերի զինական փայլուն հաջողություններին պարսիկների դեմ մղված պատերազմում»։ Բայց Կոստանդին Արղությանն էլ այդ անարդարացի վերաբերմունքի ետևում տեսնում էր Պասկևիչի անձնական արատները, հակակրանքը դեպի հայ ժողովուրդը և նրա ձգտումները, և ոչ թե այն, որ Պասկևիչը ի վերջո կենսագործում էր ցարական կառավարության քաղաքականությունը, քաղաքականություն, որն ամենևին էլ նպատակ չէր դնում ընդառաջել հայ ժողովրդի դարավոր ազատագրական ձգտումներին։ Ուստի և Կ. Արղությանը գրում էր. «Բայց այս դեպքում կառավարությունը մեղավոր չէ. նա միշտ էլ պատրաստ է այս նվիրված ժողովրդի սխրանքները վարձահատուցել, միայն թե Կովկասյան լեռներից այն կողմ եղած պետերը նրա ուշադրությունը հրավիրեն այդ բանի վրա։ Երևանյան կոմսը ամենից առավել էր պարտավոր հոգ տանել դրան, որպեսզի փոխհատուցեր երախտագիտության իր տուրքը հայկազեան ցեղին, որը սերտորեն առնչվում է այդ կոմսության»[18]։ Կ. Արղությանը գիտակցում էր, որ նման պայմաններում Խ. Լազարյանի, միակ մարդու, որի հետ հույսեր էին կապվում թե կկարողանա կառավարության մոտ որոշ հաջողությունների հասնել Արևելյան Հայաստանի հարցում, համար գործելը խիստ դժվար է. «Գլխի եմ ընկնում,— շարունակում էր նա,— որ ձեզ համար դժվար է նման անբարենպաստ պարագաներում գործել հօգուտ ազգի համապատասխան ձեր ցանկության»[82]։

Ամենայն ուշադրության արժանի է, որ հնդկահայ գործիչները ևս, ապրելով բերկրանքի և անզուսպ խանդավառության պահեր, երբ լսեցին Արևելյան Հայաստանում բռնապետական կարգերի խորտակման մասին, հետագայում սկսեցին անձկության և տագնապի պահեր ապրել, երբ գրեթե խզվեց կապը հայրենիքի հետ և այլևս Աշտարակեցուց դադարեցին տեղեկություններ ստանալ ազատագրված հայրենիքի և այնտեղ տիրող կացության վերաբերյալ։

Այդ առումով արժանահիշատակ է Մադրասի հայ գործիչներից Գրիգոր Սամյանի 1830 թվականի նոյեմբերի 12-ի նամակը Հովհան ավ. քահանա Մանուկյանին, որը Մադրասից վերադարձել էր Նախիջևան՝ Կարմիր վանքը վերանորոգելու և դպրոցներ բանալու մտադրությամբ։ Գանգատվելով, որ Հովհան Մանուկյանից տեղեկություններ չի ստացել Հայաստանի նոր կացության վերաբերյալ, չնայած վերջինիս խոստումներին, Գրիգոր Սամյանը խնդրում էր պատասխանել մի շարք հարցե-

[81] Նույն տեղում, թ. 125բ—126։
[82] Նույն տեղում, թ. 126։

րի, որոնցից երևում էր, որ հնդկահայ գործիչներին էլ հուզում էին այն նույն հարցերը, ինչ որ հայրենիքում և Ռուսաստանում գտնվողներին։ Այդ հարցերի բովանդակությունը ցույց էր տալիս, թե որքան էին հնդկահայերը ևս տոգորված հայրենիքի ապագայի ոգորումներով։ Նկատի ունենալով հիշյալ վավերագրի կարևորությունը մեզ հետաքրքրող հարցերի անուշությամբ, համեմատաբար ընդարձակ քաղվածքներ ենք բերում։

Գրիգոր Սամյանին և մյուս հնդկահայ գործիչներին հուզում էին հետևյալ հարցերը. «...Թէ, յո՞րպիսի կացութեան է աթոռն մեր սբ. Էջմիածին, ո՞ւր է՝ և յո՞րպիսի կացութեան սրբազնակատար և սբ. քահանայապետն մեր. ո՞յք և ո՞րքան եպիսկոպոսունք և վարդապետք կան անդ և ո՞րպէս է դպրատունն տեղւոյն. զի՞նչ պարգև՝ կալուածք և օգնութիւն ընկալան ի ռուսաց. ո՞րով կարգադրութեամբ կան այժմ, զի՞նչ գործեն, և ի վերայ ո՞րոց ազգաօգուտ իրաց պարապին. ունի՞ն սինօտ կամ խորհրդարան՝ թէ ոչ. ունի՞ն նշանաւորեալ զոք յաջորդ կաթողիկոսութեան՝ թէ ոչ. և որքան յաւելի յատկութիւն այսոցունց որ հնար իցէ ծանուցանել՝ լինելոց է մխիթարական վասն մեր»։

«Թէ, ո՞ւր է սրբազան հովիւն Ներսէս, զի՞նչ գործէ, ի վերայ ո՞րոյ վաստակի. զի՞նչ հոգայ վասն լուսաւորութեան և հանդորրութեան ազգին. ընդէ՞ր ոչ վերադառնայ յաշխարհն մեր. ի պատուի է՞ առաջի կայսէր, կամ նորոգ պատիւ է ընկալեալ ի նմանէ՝ թէ ոչ.— սիրո՞վ է ընդ իշխանաց նոցին՝ թէ ոչ. տեղւոյս պատուելի հասարակութեան գրեալ թուղթն ստացեա՞լ է՝ և որոյ պատասխանին ակնունելի է՞ ընկալնուլ ի մօտոյ՝ թէ ոչ։

«Թէ ո՞րպէս է ազգ մեր ի Թիֆլիս և ի հին տիրապետութիւնս ռուսաց. ո՞վ այժմ գլուխ և առաջնորդ նոցա. ո՞րպէս կենցաղավարութիւն և կացութիւն նոցա. ո՞րպիսի պատիւ և առաջադիմութիւն նոցա. ո՞րքան ուսումնարանք և դպրատունք նոցա. զի՞նչ արհեստ և գիտութիւն նոցա. և զի՞նչ յոյս և ազգաօգուտ ակնկալութիւն ի նոցանէ։

«Թէ Շուշի, Գանջայ և Ղարաբաղ հանդորր են և ազգն մեր անդ մխիթար՝ թէ ոչ. զի՞նչ գործեն. ունի՞ն դպրատուն և յառաջանան ի գիտութիւնս գրոց և լեզուաց այլազգեաց՝ թէ ոչ։

«Թէ, ո՞րպէս է նոր տիրապետութիւն ռուսաց ի պարսից, ու՞ստի սկսեալ՝ և ցո՞ր վայր. ո՞րքան ժողովուրդք ի մերազնէից անցին ի մասին պարսից աշխարհէ մերմէ առ ռուսաց իշխանութիւնն. ու՞ստի ելին նոքա, որքան մնացին անդ՝ և ո՞ւր. զիարդ են անցողքն, մխիթար՝ թէ ոչ. ո՞ւր անցին և ո՞ւր կալան զրնակութիւն իւրեանց. զի՞նչ պարգև և ազատութիւն ընկալան ի ռուսաց. ո՞րպէս ընդունին զնոսա ռուսք, սիրե՞ն զնոսա՝ թէ ոչ. գթան՝ թէ բռնանան. ի պատուի պահեն՝ թէ անարգութեամբ. եկեալքն բազմանան և ժողովին՝ թէ պակասին ցրուին։

«Թէ, Դավրէժ ո՞րպէս է այժմ, հանդորր՝ թէ ոչ. ազգ մեր անդ բազմութիւն՝ թէ սակաւ. ազատ՝ թէ ճնշեալ։

«Թէ, յի՞նչ կացութեան են Խոյ՝ Որմի՝ Սալմաստ և Մակու, և ազգն մեր անդ մխիթար և յաջող՝ թէ ոչ։

«Թէ, Աստապատ յո՞րպիսի կացութեան՝ է՝ և յում ձեռին, և ո՞րպէս է ազգն մեր անդ և ի շրջապատս նորին. սբ. Վարդանն ի ձեռի՞ն մեր է՝ թէ ոչ. եկեղեցի է՝ թէ ոչ։

«Թէ, Երևան յի՞նչ և յո՞րպիսի կացութեան է և զիա՞րդ կառավարի. գլխաւոր իշխանն ռուսաց անդ նստի՝ թէ այլուր. յի՞նչ կացութեան է անդ ազգ մեր, ի պատուի՝ թէ ոչ, երկրատէրք գեօղատէրք՝ թէ ոչ. բազմացեալ՝ թէ ոչ. երևելիք գոն անդ ի մէջն՝ թէ ոչ. ո՞ր ազգ ի յարգի է այժմ առաջի ռուսաց, հայք՝ թէ պարսիցիք։

«Թէ, զի՞արդ է այժմ որպիսութիւն Նախջուանայ, ծաղկեալ՝ թէ նուազազգն մեր անդ բազմանայ՝ թէ պակասի. հանդորր և մխիթար է այժմ քան թէ յառաջ՝ թէ ոչ. գեօղօրայք նորին լի են բազմութեամբ և առատութեամբ՝ թէ դեռ ամայիք և լքեալք. և թէ Կարմիր Վանքն նորոգեցեր և ըստ ցանկութեանդ արարեր՝ թէ ոչ. անդ դպրատուն հաստատեցեր ըստ բարի առաջադրութեանդ՝ թէ ոչ. և այլ այսպիսի կարելի ծանօթութիւնք և բանք ի քէն և յայլոց տալովդ մեզ՝ առնելոց ևս զմեզ կարի մխիթար և ուրախամիտ։

«Թէ, ո՞րպէս են մահմետական հպատակք և ժողովուրդքն ռուսաց ի Հայաստան, բազումք են՝ թէ սակաւք. երևելի իշխանք և այժմ մասնաւոր իշխանութիւնք պատիւ և հրաման ունի՞ն՝ թէ ոչ. կալուածոց՝ երկրագործաց և մշակաց տէր են՝ թէ ոչ. նեղեն և հրամայեն հայոց որպէս և յառաջ՝ թէ ոչ. երևելի և հարուստ անձինք և վաճառականք կան ի միջի նոցա՝ թէ ոչ. բարեխառն են՝ թէ խրոխտ. հաւատարիմ են ռուսաց՝ թէ խարդախ. ամենայն կերպ ազատութիւն ունին՝ թէ ոչ. ուրեք ուրեք դառնան ի հաւատ քրիստոնէութեան՝ թէ դեռ ոչ. Շահսէվան՝ Շաղաղի և Դոմբօլի ցեղքն ի ներքոյ ռուսաց են այժմ՝ թէ պարսից. պարսիցիք են յաւելի նորեկ ժողովուրդքն ռուսաց՝ թէ քուրդք. ուսանին զլեզու ռուսաց՝ թէ ոչ. և ի վերայ ամենայնի այժմ երջանիկ կացութեան են՝ թէ յառաջ էին. նոքա են բազումք՝ թէ մեք. նոքա են առաջադէմք՝ թէ մեք. և թէ Դաղստանայ լեկզիք և այլ խառնիճաղանճ իշխանութիւնք և ժողովուրդքն միանգամայն հպատակք են այժմ ռուսաց՝ թէ դեռ ապրատամբք և վնասիչք. խաղաղութեամբ են՝ թէ ի պատերազմի. և թէ նեղեն և գերեն տակաւին զժողովուրդս Ղարաբաղայ՝ թէ ոչ։

«և թէ, յո՞րպիսի կացութեան են նորեկ լեհացիք կամ հունգարացիքն, որք ի յԵւրոպիոյ քանի ամօք յառաջ մտին ի Վրաստան և ի Հայաստան. բազմանան՝ թէ ոչ. մխթար են՝ թէ ոչ. ծաղկեցուցանեն զարհեստս և զաշխատութիւնս իւրեանց՝ թէ ոչ. ուսանին հայերէն և ամուսնանան ընդ ազգի մերում՝ թէ ոչ. ունին զյատուկ եկեղեցիս և զքահանայս՝ թէ ոչ. ի յատկացեալ տեղիս բնակին՝ թէ խառն ընդ հայոց. բարեխառն են և մեղմ՝ թէ նեղիչք և գոռոզք. և ո՞ւր բնակին մեծ մասն ի նոցանէ՝ ի Թիֆլիզ՝ թէ ի Հայաստան։

«Յետ որոյ աղաչեմ ասել երկարօրէն և ծանուցանել զայսոսիկ, թէ նորոգ տիրապետութիւնք ռուսաց յօսմանուց, այն է Ախալցխայ, Ղարս, Արզրում և Բայազիտ, յո՞րպիսի կացութեան են այժմ. ո՞րքան և զի՞նչ ինչ տեղիք պահեցին ռուսք ի կառավարութեան իւրեանց, և զո՞րս յետս դարձուցին օսմանցւոց զկնի խաղաղութեանն։ Ի տիրապետեալ տեղիսն՝ ո՞րքան հայք անկան ի ներքոյ իշխանութեան ռուսաց, յի՞նչ կացութեան են նոքա. ո՞ւր ժողովին առաւել. ո՞վ իշխան և առաջնորդ նոցա։ Զիա՞րդ կենցաղավարին. մխիթար են փոփոխութեամբն՝ թէ ոչ. ուրախ են ի վերայ ազատութեան իւրեանց՝ թէ ոչ. ուր նստի մեծ իշխանն ռուսաց յայն մասին, ի Ղարս՝ թէ յԱխալցխայ. լատինացւոց կրօնիւ հայք բազո՞ւմք կան այժմ անդ՝ թէ սակաւք. յո՞րպիսի կացութեան են նոքա. զի՞նչ ազատութիւն ունին. ունի՞ն զքահանայս՝ զվարդապետս և զուսումնարան՝ թէ ոչ. յա՞յն մասին աշխարհին մերոյ կան բազմութիւնք հայոց՝ թէ ի մասին ի Պարսից տիրեալ Հայաստանու. և զայլ բազում բանս որոնեալ և քննեալ ծանո՛ մեզ աղաչեմ։

«Եւ թէ, ո՞րքան զօրք ռուսաց գոն ի նորոգ տիրապետեալ աշխարհի մերում. ո՞ւր բնակին իշխանք նոցա. բարեխառնութեամբ վարին ընդ ժողովրդոց և ընդ մե՞զ՝ թէ խստիւ. զօրք նոցա նեղեն զժողովուրդս կամ զտնանկս և բնակին ի տունս իւրեանց՝ թէ խաղաղութեամբ և սիրով վարին և այլուր բնակին. դատաստանք ո՞ւր առնեն և ո՞րպէս՝ և զի՞նչ օրինօք ընդ հայոց. կամ կարգեա՞լ են զնորոգ դատաստան և զդատաւորս ի Հայոց՝ թէ ոչ. ժողովուրդք և երկիրն ի ներքոյ հարկի՞ են՝ թէ ազատ. կամուրջք կամ արքունական պողոտայք ի հարկաւոր տեղիս նորոգ շինեալ են կամ շինեն՝ թէ դեռ ոչ. կառք ձիոց կան և ի գործ ածեն որպէս ասա՛ տեսեալ ես՝ թէ ոչ. ուրեք նորոգ քաղաք՝ գեօղք՝ խանութք և զայլ սոյնպիսի հարկաւոր տեղիս շինեալ են՝ թէ ոչ. նորոգ եկեղեցիք ռուսաց կամ հայոց կառուցեալ են՝ թէ ոչ, և ո՞ւր. խոնարհեալ և փակեալ եկեղեցիք և վանորայք մեր նորոգեալ կան՝ թէ ոչ. Ղարաբաղու մելիքաց ժողովուրդք՝ երկիրք և կառաւարութիւնն ի ձեռս որդւոց նոցա են՝ թէ ոչ. կամ նոքա ի պատուի են առաջի իշխանացն ռուսաց՝ թէ ոչ.

և թէ յաղագս հաւատոյ և կրօնի՝ հակառակութիւն գոյ այժմ ի մէջ ռուսաց և հայոց ի տիրապետեալ աշխարհի մերում՝ թէ համաձայնութեամբ և սիրով են ընդ միմեանց և չունին ինչ ծայրագոյն խտրութիւն. ամուսնանան ընդ հայոց՝ թէ ոչ. եթէ ունին ռուսք յաշխարհի մերում զտպարան՝ զի՞նչ տպագրեն՝ և ո՞ր. թէ ազգ մեր ուսանին զլեզու ռուսաց, և գիտեն այժմ ամենայն ուրեք խօսիլ՝ ընթեռնուլ և գրել զայն լեզու՝ թէ ոչ. և թէ ո՞րպէս է ներկայ կացութիւն ազգին մերոյ ի մասին տուր և առութեան և վաճառականութեան բազմացեալ է՝ և ի յաջողութեան վաճառականքն մեր՝ թէ ոչ. բազումք պարապին յայն գործ՝ թէ սակաւք. երկրագործութիւնն բազմացեալ է և արդիւնաւոր՝ թէ դեռ ոչ. ապրուստ և կերակուր հասարակութեան թանկագին է այժմ քան զյառաջ՝ թէ արժան. երկրագործք մխիթարին վաստակօք իւրեանց թէ ոչ. և ի վերայ ամենայնի ազգ մեր ծաղկեալ է այժմ առաւել քան թէ ցյառաջ՝ թէ ի միևնոյն կացութեան կամ նուազեալ. թէ գոն ոմանք հետամուտ ի մէնջ ի խնդիր և ի քննութիւն գործոց նախնեաց և հնութեանց. և թէ կան ոմանք այժմ որք որոնեն և հաւաքեն զհին ձեռագիր մատեանս և զգրութիւնս, և եթէ են՝ ո՞ր ժողովին՝ և ո՞յր աղագաւ. զայս ամենայն և առաւել քան զայս մանրամասն յատկութիւնք ցանկալի են լինելոց մեզ ի տեղեկանալ՝ գիտել, և միշտ ընթեռնուլ և ծանօթանալ ի ձէնջ. զոր աղաչեմ աշխատ լինել գրելոյ մեզ. զհաւաստին և զճշմարիտն. ոչինչ յաւելի՝ եթէ ուրախական իցէ, և ոչինչ պակաս՝ եթէ տխրական, այլ ըստ կարելւոյն ճիշտ և հարազատ, յասութենէ և ի տեղեկութեանց ականատես և արժանահաւատ անձանց, և եթէ որով նոր բանից վերայ գրեանք կամ տետրակք իցեն տպագրեալ և զորս եթէ կարողացիս գտանել, խնդրեմ յիւրաքանչիւրոց մի օրինակ գնեալ վասն իմ և լաւ ամրափակեալ առաքեա՛ ի Բաղդադ ի ձեռս պարոն Խաչիկ Մկրտչին՝ պատուիրելով նմա հասունացել ինձ, և զգին նոցին հասուցանել քեզ ըստ կամեցողութեանդ, որպէս և ես գրեալ եմ նմա կատարել ըստ պատուիրանիդ յորժամ զգրեանսն ընկալցի ի քէն. եթէ կարող իցես ի Թիֆլիզու բերել զայսոսիկ՝ առաւել հաւաստեաւ կարես գտանել քան ի յայլոց ունիլ. և եթէ նոր աշխարհացոյցն Հայաստանու ռուսեաւ լինիցի՝ չէ փոյթ, բաւական է եթէ լինիցի աշխարհին մերոյ՝ և նորոգ փորագրեալ։

«Նաև խնդրեմ զի յատկապէս տեղեկացեալ ասասցես մեզ թէ ո՞րքան իշխանք և զինուորք գտանին այժմ ի յազգէ մերմէ ի մէջ ռուսաց յաշխարհի մերում, զի՞նչ պաշտօն ունին, ո՞րպէս ծառայեն, և զիա՞րդ է այժմ ազգ մեր ընդհանրապէս, հաւատարիմ հպատակ և երախտագէտ ռուսաց՝ թէ ոչ. և ա՞յլ զինչ և իցէ լուր և ազգային կացութիւն՝ որպիսութիւն և պատմութիւն ի Մոսկովայ համալսարանէ ազնիւ Եղիազա-

բեանց, ի Նոր Նախիջևանու, ի Ղոխմու, ի Կատարինէսլաւու, ի Գրիգորիպոլսու, ի Բէսարաբիայ եղելոց, ի յԱշտարխանայ, ի Ղզլարու, ի Դրբանդու, ի Շաքու, ի Շմխու և յայլոց տեղեաց՝ զոր կարող իցես ի հաւատարիմ և ի ծանօթ անձանց տեղեկանալ և ստուգել՝ ծանո մեզ. և ըստ որում գիտեմ՝ զի դու քահանայ գոլով չունիս զվարժողութիւն այնքան և ըստ քաղաքականաց կերպի զայս ամենայն լիալիր գրել ըստ հաճոյից մերոց՝ վասն ասորիկ ասացի գտանել զարագ և զհմուտ գրագիր ոմն զի զասութիւնս քո՝ և զմիաբան տեղեկութիւնս և զորոնմունս ձեր՝ դիցէ ի վերայ թղթի, և գրեսցէ ի կողմանէ քո երկայն և ընդարձակօրէն, որում ի փոխարէն աշխատութեան և վաստակոց իւրոց՝ խնդրեմ վճարես քսան ռուփի, և զայն գումար ես յօժարութեամբ հասուցից քեզ զիարդ և կամեսցիս»[83]։

Այս երկարաշունչ և հարցերով լեցուն նամակը գտնվում է Լազարյանների արխիվում. հավանական է, որ Հովհան Մանուկյանը այն ուղարկել է Խաչատուր Լազարյանին, անձամբ ի վիճակի չլինելով պատասխանելու հարցերի, որոնց մեծ մասը դեռ պատած էր անորոշության քողով, իսկ մյուսներին տրվելիք պատասխաններն էլ մխիթարական լինել չէին կարող։

Նամակը վկայում է, որ Սամյան Գրիգորին հետաքրքրում էր ոչ միայն բուն Հայաստանի վիճակը, այլև այն բոլոր վայրերի, որտեղ հայեր էին բնակվում և որոնք այս կամ այն կերպ առնչվում էին ռուսական տիրապետության հետ։ Եթե հարցերը խմբավորելու լինենք, ապա կտեսնենք, որ դրանց առաջին խումբը վերաբերում է բուն Հայաստանի և Անդրկովկասի կացությանը, հայ և մյուս ժողովուրդների փոխհարաբերությանը, դրանում ռուսական իշխանությունների գրաված դիրքին։ Հարցերի երկրորդ խումբը վերաբերում է պարսկահայության և արևմտահայության վիճակին, թվաքանակին և այլն։ Կարևոր են այն հարցերը, որոնք վերաբերում են երկրի ներքին կացությանը, շինարարական աշխատանքներին, առևտրի զարգացմանը, երկրագործությանը, հարկային համակարգին, ռուսական զորքերի վերաբերմունքին դեպի հայ ժողովուրդը, դատաստանական իրավունքին, գործող օրենքներին, մահմեդականների և հայերի հարաբերական կացությանը։ Սամյանին մեծ հետաքրքրություն են առթում մշակութային հարցերը՝ դպրոցների վիճակը, ուսուցանվող առարկաները, հետաքրքրությունը դեպի նախնի մշակույթը, ձեռագրերի հավաքումն ու ուսումնասիրությունը, և թե ինչ «աղագաւ» է դա կատարվում։

[83] ЦГИА СССР. ф. 380, оп. 5, д. 623, лл. 1—2.

Գրիգոր Սամյանի մտահոգությունը խտանում էր այն հարցում, թե վերջին հաշվով ինչպիսի՞ վերաբերմունք ունեն ռուսական իշխանությունները դեպի հայ ժողովուրդը, և ո՞ւր է տանելու հայ ժողովրդին դեպքերի զարգացման ընթացքը։ Հավանաբար, նրա մտահոգությունը որոշ հիմքեր ուներ այն առումով, որ նրան կցկտուր տեղեկություններ հասել էին ցարական կառավարության հայ ժողովրդի նկատմամբ որդեգրած վերաբերմունքից։

Հարկադրված լինելով տուրք տալ հայ ժողովրդի դարավոր ազատագրական բաղձանքներին, ժամանակի մտայնությանը, որը արտահայտվում էր երկրագնդի տարբեր մասերում ազգային-ազատագրական հեղափոխական շարժումների ձևով, ցարական կառավարությունը հիմնեց Հայկական մարզ, որը կոչված էր այն պատրանքը ստեղծելու, թե նա ընդառաջել է հայ ժողովրդի ձգտումներին։ Սակայն դա սոսկ մի ցուցանակ էր, որի ետևում ցարական իշխանությունները ձեռք զարկեցին գաղութային քաղաքականության, զարգացող ռուսական կապիտալիզմի համար հումքի և իրացման շուկայի ստեղծման, որի մասին այնքան հոգ էին տանում ֆինանսների մինիստր Կանկրինը և Կովկասի կառավարչապետ Պասկևիչը։

Այսուհանդերձ, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին փրկում էր հայ ժողովրդի մի զգալի հատվածին արևելյան բռնապետության ճնշումից և ֆիզիկական բնաջնջման ահազդու վտանգից, որն ինքնըստինքյան առաջադիմական նշանակություն ունեցող քայլ էր։ Հայ ժողովրդի արևելյան հատվածի համար ստեղծվում էին գոյության ավելի տանելի պայմաններ և տնտեսական ու քաղաքական զարգացման համեմատաբար խոստումնալից հեռանկարներ։

Միամտություն էր, իհարկե, մտածել, որ սեփական ժողովրդին երկաթյա կապկանի մեջ պահող նիկոլաևյան ռեժիմը կընդառաջեր հայ ժողովրդի և նրա իղձերն արտահայտող գործիչների ազատագրական բաղձանքներին, ազատություն կշնորհեր մի երկրում, որը բանտ էր ժողովուրդների համար։

Հավատը դեպի Ռուսաստանը և ռուս ժողովուրդը, որը առավել ևս կոփվեց հայ ժողովրդի մի նշանակալից հատվածի համար բախտորոշ նշանակություն ունեցող 19-րդ դարի առաջին երեք տասնամյակներին, մի կայուն հիմք հանդիսացավ, որի վրա պետք է բարձրանար այդ ժողովուրդների հեղափոխական համագործակցությունը մի նոր՝ կեղեքումից, ճնշումներից ու շահագործումից ազատ աշխարհի կառուցման հա-

մար։ Հիասթափվելով ցարական կառավարության որդեգրած ազգային իդեալները երկաթե կրունկի տակ ճզմելու քաղաքականությունից, հայ ժողովուրդը չկորցրեց իր հավատը դեպի այն Ռուսաստանը, որն արդեն բռնկված էր ազատագրական երկունքով, որի սեփական ազատագրությունը պետք է դառնար ռուսական կայսրության մյուս ժողովուրդների ազատագրության երաշխիքը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XIX դարի առաջին երեսնամյակը բախտորոշ ժամանակաշրջան էր Արևելյան Հայաստանի և հայ ժողովրդի արևելյան հատվածի համար։ Դա մի ժամանակահատված էր, երբ իրական հիմքերի վրա էին դրվում հայ ժողովրդի ազատագրական իդեալները, երբ բացվում էին զարգացման լայն հեռանկարներ։ XIX դարի առաջին երեք տասնամյակների իրադարձությունները գալիս էին որոշ առումով արդարացնելու հայ ազատագրական մտքի դեպի Ռուսաստան դիմորոշման ճշմարտացիությունը և պատմականորեն արդարացված լինելը։

Պատմական իրադարձությունների զարգացման ընթացքը Հայաստանը տրոհել էր երկու մասի, որոնք հավասարապես կրում էին պարսկական և թուրքական բռնապետությունների վայրագ ճնշման ու շահագործման լուծը։ Երկրի տրոհվածությունը արտակարգ կերպով բարդացնում էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը։ Այն առավել ևս էր բարդանում միջազգային դիվանագիտական ու քաղաքական սուր մրցակցության հետևանքով, որի բեմահարթակներից էր Մերձավոր և Միջին Արևելքը։

Նման պարագաներում հայ ազգային-ազատագրական շարժման գործիչները, հնարավոր վտանգներից խուսափելու համար, առաջին հերթին դնում էին Հայաստանի մեկ՝ արևելյան հատվածի ազատագրության հարցը. դա թելադրված էր մի շարք լուրջ դրդապատճառներով։ Կարևոր էր այն, որ Նադիր շահի սպանությունից հետո ֆեոդալական մասնավոր պատերազմների, գժտությունների ու երկպառակությունների ասպարեզ դարձած Պարսկաստանը խիստ թուլացել էր։ Մյուս կողմից, Ռուսաստանի մերձավոր հարևանությունը ավելի քան իրական էր դարձնում Արևելյան Հայաստանի ազատագրության խնդիրը, մանավանդ որ հայ ազգային-ազատագրական շարժումը այս ժամանակամիջոցում ուներ ընդգծված ռուսական կողմնորոշում։ Սակայն սա հարցի սոսկ արտաքին քաղաքական կողմն էր։

Արևելյան Հայաստանի ազատագրության առաջնահերթությունն ու-

ներ նաև լուրջ ներքին շարժառիթներ։ Այն համարվում էր հայ ժողովրդի բնօրրանը՝ «աստուածընտիր մասն Հայաստանեայց աշխարհի», որտեղ դարեր շարունակ զարգացել էր հայկական պետականությունը, որտեղ գտնվել էին Հայաստանի բոլոր հին մայրաքաղաքները, և որտեղ գտնվում էր այդ ժամանակ հայ ժողովրդի միակ համազգային հաստատությունը՝ ամենայն հայոց կաթողիկոսությունը և Էջմիածնի մայրատությունը՝ ամենայն հայոց կաթողիկոսությունը և Էջմիածնի մայրավանքը։ Բնական է, որ Արևելյան Հայաստանի ազատագրումը պետք է դառնար այն երաշխիքը, որի շնորհիվ կազատագրվեր Հայաստանն առհասարակ։

Հայ ազատագրական մտայնության մեջ կարևոր տեղ էր հատկացվում եկեղեցուն։ Հայ եկեղեցին և նրա գլուխը նույնիսկ մահմեդական բռնակալների աչքում հայ ժողովրդի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչն էր։ Այդպես էր ընկալվում նա նաև հայ ժողովրդի կողմից, ուստի և ազատագրական շարժման բոլոր գործիչները նախանձախնդիր վերաբերմունք ունեին դեպի եկեղեցին և նրա անաղարտությունը։

Հայ ազգային-ազատագրական շարժումը մասամբ նաև արդյունք էր լուսավորականության դարի և նրա արծարծած գաղափարների։ Ուստի և պատահական չէր, որ մեծագույն ուշադրություն էր դարձվում լուսավորության տարածման վրա։ Լազարյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի, Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի, Աղաբաբյան դպրոցի, Մխիթարյան միաբանության և շատ այլ վարժարանների գործունեությունը, տպագրական գործի բուռն ծավալումը, բնական գիտությունների ուսուցանումը դրա լավագույն ապացույցներն են։

Հայ իրականության մեջ ծավալված լուսավորական շարժումը ուներ մեկ կարևոր առանձնահատկություն։ Եթե եվրոպական լուսավորականությունը իր առաջնահերթ խնդիրներից մեկը համարում էր պայքարը եկեղեցու հոգևոր տիրապետության դեմ, ապա հայ իրականության մեջ մենք տրամագծորեն հակառակ երևույթի ենք հանդիպատես լինում։ Արդեն ասվեց, որ պատմության զարգացման ընթացքը հայ եկեղեցուն վերապահել էր միակ համազգային հաստատությունը լինելու դերը։ Ուստի և հայ լուսավորական շարժումը, լինելով ազգային-ազատագրական պայքարի արտահայտություն, ոչ թե մարտնչում էր եկեղեցու դեմ, այլ ձգտում այն հարմարեցնել իր պահանջներին։ Այստեղից էլ հայ եկեղեցու մասնակի բարենորոգման պահանջը, նրա կառավարման գործում կոլեգիալության սկզբունքներ մուծելու ձգտումը, որի արդյունքը եղավ սյունհոդոսի ստեղծումը 1808 թվականին։

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններում առկա էին երևույթներ (հատկապես ճորտատիրական իրավունքի

բացակայությունը և այլն), որոնց պահպանումը երկրի ազատագրությունից հետո մեծապես կնպաստեր տնտեսական առաջընթացին։ Ուստի և բնական էր, որ հայ ազատագրական շարժման գործիչները կամենում էին անխաթար պահել նման հարաբերությունները, դրանք դարձնել առաջընթացի լծակ։ Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացության վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆեոդալական անիշխանությունը, անսահման կեղեքման ու շահագործման իրավիճակը պետք է ժողովրդական զանգվածներին նետեր ազատագրական մաքառումների բովը։ Պայքարն արտահայտվում էր գործուն և կրավորական ձևերով՝ զինական պայքար, ամեն կերպ աջակցություն ռուսական զենքին, հայրենի վայրերի լքում ու տարագրություն և այլն։

Ռուսաստանի հայտնվելը Անդրկովկասում և նրա հետագա ծավալումը ոգեշնչում առաջ բերեց հայ ժողովրդական լայն խավերում, որովհետև նրանք վաղուց ի վեր իրենց ազատագրական նկրտումները կապում էին Ռուսաստանից ստանալիք օգնության հետ։ Բայց ռուսական կառավարության անդրկովկասյան քաղաքականությունը Վրաստանի Ռուսաստանին միացումից հետո էական փոփոխություններ ապրեց։ Եթե գրեթե ողջ XVIII դարի ընթացքում շեշտը դրվում էր հայկական պետականության վերականգնման և Վրաստանի ամրապնդման կամ հայ-վրացական միացյալ քրիստոնեական պետության ստեղծման վրա, այսպես կոչված «պատնեշի» քաղաքականության վրա, ապա 1801 թվականից հետո այդ քաղաքականությունը ստանում է բացահայտ անեքսիոնիստական բնույթ։ Չնայած դրան, հայ ժողովուրդը հուսալից հայացքով էր սպասում այն պահին, երբ Ռուսաստանի օգնությամբ կկարողանա վերջնականապես դեն նետել օտարակալության դժնի լուծը և ուղղել ազգային իդեալների կենսագործման ցանկալի ուղին, միամիտ այն հույսը փայփայելով, որ ցարական կառավարությունը հավատարիմ կմնա իր երդմնի հավաստիացումներին։

Արևելյան Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական պայմանները, հայ ազատագրական մտքի զարգացումը բուն Հայաստանի սահմաններից դուրս՝ հայկական գաղթավայրերում, որտեղ հրամանատարական բարձունքները գտնվում էին հայ բուրժուազիայի ձեռքին՝ ծնունդ են տալիս հայ ազգային-ազատագրական շարժման մեջ երկու ուղղությունների՝ արմատական և կրավորական, այն է բուրժուական և ազգային-պահպանողական։ Համաձայն լինելով ամենագլխավոր՝ Հայաստանի ազատագրության անհրաժեշտության հարցում, հիշյալ հոսանքները հակադրվում էին միմյանց դրա կենսագործման խնդրում։ Ազգային-պահպանողականները կամենում էին հնարավորին չափ ազատ պա-

հել ժողովրդին և սեփական անձը օտար տիրակալների բռնություններից, պասսիվ դիրք էին գրավում երկրի ազատության խնդրում, թողնելով ամեն ինչ դեպքերի բարեհաջող զարգացմանը։ Դրանով իսկ նրանք հարցականի տակ էին դնում Հայաստանի պետականության վերականգնման գործը։ Մինչդեռ բուրժուական հոսանքը առաջին պլանի վրա դնելով պետականության վերականգնման հարցը, դեմ էր կրավորական ընթացքին, գտնում էր, որ պետք է զենքը ձեռքին պայքարել այդ նպատակի համար, որպեսզի դրանով իսկ իրավունք նվաճեն՝ ունենալու սեփական պետականություն։

Հետագա դեպքերը ցույց տվեցին այս հոսանքի իրավացիությունը, թեև զինական պայքարն էլ բավական չեղավ հասնելու ցանկալի նպատակին։ Տրված զոհերը մնացին անարդյունք։

Մինչև XIX դարի 20-ական թվականները հայ ազատագրական մտքի մեջ նկատելի էր անորոշության, հեռանկարի աղոտություն։ Դա բացատրվում էր այն հանգամանքով, որ ռուսական կառավարության գործողությունները և որդեգրած քաղաքական ընթացքը կասկածի տեղիք էին տալիս, թե հնարավոր կլինի հասնել ազգային ինքնուրույն գոյության։

Այս անորոշությունը հաղթահարվեց 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի և հետագա տարիներին, երբ պարզորոշ դրվեց Ռուսական կայսրության սահմաններում Հայաստանի ինքնավարության և «Հայկական թագավորության» վերականգնման հարցը։ Լազարյանների ռուսական կառավարությանը ներկայացրած նախագիծը պահանջում էր՝ ա) պաշտոնապես «Հայաստանի թագավորության» հասկացության ընդունում և ցարի ճանաչում իբրև հայոց թագավոր, բ) Անդրկովկասում գտնվող պատմական Հայաստանի բոլոր տարածքների միավորում Հայաստանի թագավորության կազմի մեջ, գ) հայկական զորքի ստեղծում սահմանապահ ծառայության և կայսերական անձնապահ էսկադրոնի ձևով, դ) հայկական օրենքների և կայսերական առանձնաշնորհումների կիրառում Հայաստանի տարածքում, ե) հայկական եկեղեցու վաղեմի իրավունքների ճանաչում և չմիջամտություն նրա ներքին գործերին, զ) ճորտատիրական իրավունքի վերացում կամ գեթ մեղմացում հարևան Վրաստանում, հետևաբար և լիակատար մերժում բուն Հայաստանում։

Հայաստանի թագավորության, Հայաստանի երբեմնի փառքի վերականգնման մասին և նման մյուս արտահայտությունները չպետք է մեզ շփոթեցնեն և այնպիսի տպավորություն ստեղծեն, որ մենք գործ ունենք հետամնաց հայացքների, հինը վերածնելու ձգտումների հետ։

Ինչպես շատ ճիշտ նշում է Կ. Մարքսը, «Մարդիկ իրենք են կերտում իրենց պատմությունը, բայց նրանք այն չեն կերտում ինչպես կկամենան, այնպիսի պարագաներում, որոնք ոչ թե իրենք են ընտրել, այլ որոնք անմիջականորեն առկա են, տրված են նրանց և եկել են անցյալից։ Բոլոր մեռած սերունդների ավանդույթները, մղձավանջի պես, ճնշում են կենդանի մարդկանց միտքը։ Եվ հենց այն ժամանակ, երբ մարդիկ կարծես թե միայն նրանով էլ զբաղված են, որ վերածնում են իրենց և շրջապատը և ստեղծում ինչ-որ դեռևս չեղած մի բան, հենց հեղափոխական ճգնաժամերի այդպիսի դարաշրջանում էլ նրանք երկյուղածությամբ դիմում են դյութանքի՝ իրենց օգնության կանչելով անցյալի ոգիներին, փոխառնում են նրանցից անուններ, մարտակոչեր, հագուստներ, որպեսզի հնությամբ սրբագործված զգեստավորմամբ, այդ փոխառնված լեզվով խաղան համաշխարհային պատմության նոր ներկայացումը»[84]։ Հենց դրանով էլ բացատրվում է, որ պատմական նոր շրջադարձի հանդիման հայ ազգային-ազատագրական շարժման գործիչները հարություն էին տալիս հնամենի Հայկական թագավորության ուրվականին, դիմում ժողովրդի հիշողության մեջ սրբագործված հնությանը։ Դրա համար էլ հայկական պետականության նրանց ենթադրած գաղափարը ասպարեզ էր գալիս զգեստավորված «Հայաստանի երբեմնի փառքով»։ Իրականում, ինչպես տեսանք, նրանք իրենց առջև դնում էին խիստ կոնկրետ խնդիրներ, որոնք համապատասխանում էին նոր ժամանակի ոգուն ու պահանջներին։

Ցարական կառավարությունը չէր կամենում և չէր էլ կարող ընդառաջել հայ ժողովրդի ու նրա ներկայացուցիչների դարավոր բաղձանքներին։ Բայց նա հարկադրված էր ինչ որ չափով հաշվի նստել դրանց հետ, որի արտահայտությունը եղավ «Հայկական մարզի» ստեղծումը։ Դրանով ցարական կառավարությունը ուզում էր այն պատրանքն ստեղծել, որ ընդառաջել է հայ ժողովրդի ձգտումներին։

Այսուհանդերձ, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի մի մասի համար զարգացման անհամեմատ նպաստավոր հեռանկարներ ստեղծեց՝ վերջ տալով ֆեոդալական անիշխանությանը, արևելյան բռնապետական կարգերին, ապահովելով կյանքի ու ունեցվածքի անհամեմատ կայուն երաշխիքներ, խթանելով արտադրողական ուժերի աճը։

---

[84] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 8, с. 119.

РЕЗЮМЕ

В исследовании истории армянского народа XVIII—XIX столетий центральное место занимает проблема национально-освободительной борьбы против турецкого и персидского деспотического ига, развернувшейся в эпоху разложения феодализма. Эта проблема является важнейшим звеном в общественно-политическом и социально-экономическом развитии Армении, многочисленных армянских колоний за рубежом.

В виду сложившихся исторических обстоятельств, армянский народ был вынужден искать внешнеполитическую опору для своих освободительных чаяний в христианской единоверной Европе, вступившей на путь колониальной экспансии.

Если вплоть до второй половины XVII века руководители армянского освободительного движения ориентировались на западноевропейские страны, то на рубеже XVIII в. они стали связывать свои освободительные устремления с усилившимся русским государством. После того, как на арену европейской политики вышла великая русская держава Петра I наблюдается значительное оживление армянского национально-освободительного движения. Оно было результатом тех внутренних и внешнеполитических изменений, которые происходили в это время в Закавказье и сопредельных странах.

Поскольку внешнеполитической опорой армянского национально-освободительного движения в XVIII—начале XIX вв. стала в основном Россия, то естественно, исследование истории армянского национально-освободительного движения тесно связано с исследованием истории армяно-русских отношений.

В течение всего XVIII в. и в первой трети XIX в. руководители армянского национально-освободительного движения акцентировали свое внимание в первую очередь на освобождение Восточной Армении. И дело не только в том, что Армения была разделена между двумя восточными деспотическими державами, из которых Османская империя еще долго продолжала сохранять относительную военную мощь. Наряду с этим существовало и другое обстоятельство, выдвинувшее на первый план задачу национального освобождения Восточной Армении. Дело в том, что в

восточной части Армении находилась «Араратская страна», веками являвшаяся колыбелью армянской государственности; здесь находились древние столицы Армении — Армавир, Арташат, Вагаршапат, Двин и, наконец, здесь находился верховный центр Армянской апостольской церкви — Эчмиадзин, католикосат всех армян. Он являлся, в известном смысле, последним носителем армянской государственности, символом общности и единства армянского народа. Именно это заставляло деятелей армянского освободительного движения сосредоточить свое внимание на освобождении Восточной Армении.

Отсюда возникает вопрос о месте, роли и значении армянской церкви в национально-освободительном движении. Армянская церковь, связанная своими истоками с феодальным обществом, являясь феодальным институтом, в течение веков пережила глубокую эволюцию. Характерно, что начиная с XVIII в. основной кормилицей армянской церкви стала колониальная армянская торговая буржуазия, рассматривавшая церковь как залог существования нации, сохранения ее единства. Если к сказанному присовокупить, что армянская церковь выступала институтом, воплощавшим в себе в известной степени понятие государственности, почему и турецкие султаны и персидские шахи главу армянской церкви — католикоса и верховного патриарха всех армян — считали халифом, т. е. духовным и светским главой армянского народа, станет ясно, почему армянская торговая буржуазия придавала первостепенное значение Эчмиадзину, а в армянских освободительных проектах главенствовали Восточная Армения и Эчмиадзин.

Одна из основных проблем армянского национально-освободительного движения — проблема его характера и целенаправленности. В советской армянской историографии было выдвинуто положение (в частности П. Т. Арутюняном), что цель армянского освободительного движения заключалась в стремлении присоединиться к России. При этом, сторонники этого положения игнорировали и игнорируют не только сохранившиеся в архивных документах свидетельства о стремлении восстановления армянской государственности, составленные в этом духе проекты, но и тот неопровержимый факт, что Россия в течение всего XVIII в. руководствовалась внешнеполитической программой, в основе которой лежала идея восстановления армянской государственности в Закавказье или же создания под протекторатом России объединенного армяно-грузинского христианского царства как буфера между Россией с одной стороны, Турцией и Персией.—с другой. Отсюда и необходимость правильного восприятия и толкования целенаправленности армянского национально-освободительного движения.

С правильным пониманием классовых и национальных задач

армянского национально-освободительного движения непосредственно связан вопрос о существовавших в нем общественно-политических течениях во второй половине XVIII — начале XIX вв. Еще с 1920-х годов в нашей историографии получила широкое распространение точка зрения, согласно которой в армянском освободительном движении существовали два течения — клерикально-феодальное и буржуазно-демократическое, преследовавшие цель создать в будущей освобожденной Армении, соответственно, монархию и буржуазную республику. При этом, по их мнению, представители армянской буржуазии в России являлись опорой клерикально-феодального течения, ибо Россия являлась самодержавной державой.

На наш взгляд, сторонники этой точки зрения не учли ряд обстоятельств, которыми и диктуется необходимость ее пересмотра, т. к. она не отражает исторической действительности. В частности, осталось без внимания то немаловажное обстоятельство, что в многочисленных армянских колониях, особенно в России и Индии, где создавались освободительные программы, командные высоты находились в руках армянской торговой буржуазии. Не учитывалось, что во всех армянских колониях России уже в XVIII столетии социально-экономическое развитие шло на установление капиталистических производственных отношений, а значит не могло существовать резкое различие взглядов и программ среди представителей одного и того же класса, хотя они и действовали в разных странах. Необходимо отметить, что взгляды представителей армянских колоний России и Индии полностью совпадали в вопросе о будущем статуте освобожденной Армении. Армянская церковь также не могла придерживаться совсем иного курса, ибо в материальном отношении зависела от армянской торговой буржуазии, была неразрывно связана с ней.

Для ясного понимания особенностей армянского национально-освободительного движения вплоть до присоединения Восточной Армении к России, необходимо иметь ввиду и следующее. Если до 1801 г., в течение почти целого столетия, внешнеполитический курс русского правительства был направлен на восстановление армянской государственности под своим протекторатом, то после присоединения Восточной Грузии к России в 1801 г. и ликвидации грузинского царства, этот курс претерпел существенные изменения. С этих пор внешняя политика царизма в Закавказье приобрела явно аннексионистский характер. Несмотря на это, армянский народ был заинтересован в успехе русского оружия, т. к. в ту пору только Россия могла принести ему избавление от восточного деспотического режима и феодальной анархии.

Эти изменения должны были внести коррективы в армянские освободительные проекты. Если в XVIII в. ставился вопрос восстановления армянского государства в той или иной форме, то в

следующем столетии речь шла об автономии в системе Российской империи, хотя призрачность подобных устремлений была ясна.

Ввиду того, что во всех освободительных проектах затрагивался вопрос социально-экономических основ будущей Армении с учетом местных особенностей, в частности вопрос о землевладении и землепользовании, поэтому первый раздел работы посвящен рассмотрению социально-экономического положения Восточной Армении в первой трети XIX в. Анализ этой проблемы помогает полнее представить взгляды деятелей армянского национально-освободительного движения, их желания и цели.

Вот круг вопросов, которые исследуются в работе и которые дают возможность правильно истолковать исторические события указанного периода, сыгравшие важную роль в жизни армянского народа.

Первый раздел работы посвящен исследованию социально-экономического положения Восточной Армении в последний период ханско-персидского правления, а также постепенного утверждения российского владычества. Изучение социально-экономического положения страны обнажает все те преграды, которые лежали на пути развития производительных сил, обрекая их на безнадежную отсталость. Особое внимание уделяется вопросу о личной зависимости крестьян, т. к. он являлся одной из коренных проблем, затрагиваемых во всех освободительных проектах. Показывается, что в Восточной Армении, за исключением ряда северных районов, некогда входивших в состав бывшего Грузинского царства, существовала государственная собственность на землю, а так называемые «помещики» — мулькадары и тиульдары—являлись лишь соучастниками дохода: первые получали малую ренту (бахрече), вторые всю ренту-налог, взыскиваемый с тиульного селения.

Изучение городов и городской жизни показывает, что армянский купеческий капитал играл первенствующую роль во всем Закавказье и во многом способствовал дальнейшему развитию и углублению товарно-денежных отношений, несмотря на многочисленные преграды, воздвигнутые феодальной анархией и деспотией. Поэтому армянская торговая буржуазия в Закавказье содействовала распространению власти России на все Закавказье надеясь этим добиться лучших условий для своей деятельности.

Исследование истории социально-экономического положения Восточной Армении в первой трети XIX в. во многом объясняет суть армянского национально-освободительного движения. Оно показывает, что первым и злостным бичом на пути развития страны были феодальная и государственная раздробленность с присущими ей междоусобицами и частными войнами. К ним прибавлялись жестокий налоговый гнет, чрезмерная эксплуатация народных масс, глумление над их национальным и религиозным дос-

тоинством, попирание элементарных человеческих прав, прямая и косвенная угроза физического уничтожения в результате частых переселений населения во время военных действий, неудержимый рост численности кочевых племен, переселяемых в пределы Восточной Армении и, тем самым, изменение этнического облика страны. Все эти явления ставили армянский народ перед альтернативой: либо исчезнуть без борьбы, либо бороться за воссоединение Родины и ее освобождение от чужеземного ига, грозящего самому его существованию. Именно с этой точки зрения во втором разделе рассматриваются армянская освободительная мысль и национально-освободительное движение в аспекте армяно-русских отношений.

Акт присоединения Грузии к России имеет непосредственное отношение к вопросу армянского национально-освободительного движения не только в том смысле, что в Грузии имелось значительное армянское население, заинтересованное в своем будущем, а часть северных районов Армении входили в состав Грузинского царства, но и в том, что в течение многих веков судьбы армянского и грузинского народов были тесно переплетены.

Присоединение Грузии к России показало, что, исходя из создавшихся исторических условий, царская Россия меняет свой прежний политический курс, отказавшись от политики «барьера». Решающее значение в этом имели развернувшиеся в Грузии в конце XVIII в. события, показавшие неспособность феодального царства играет ту важную политическую роль которая отводилась ей Россией, и стать основным опорным пунктом на Среднем Востоке. Таким образом, остались также несбывшимися надежды, которые возлагали на Грузию деятели армянского национально-освободительного движения.

Падение Грузинского царства и новый политический курс царизма поставили армянских деятелей перед новой ситуацией. Они стали сознавать, что вряд ли можно будет надеяться на восстановление национальной государственности, когда перед глазами стоял живой пример Грузии. Тем не менее, русская ориентация армянского национально-освободительного движения осталась непоколебимой, т. к. единственно реальная надежда на спасение от мусульманского деспотического ига была на помощь России.

Довольно легко получив Грузию и разработав новый политический курс, Россия более четверти века вынуждена была вести тяжелую борьбу за распространение своего владычества на Восточную Армению. Эта борьба была и дипломатической и военной, велась и в местном и в международном масштабах.

Долголетняя русско-персидская война 1804—1813 гг. завершилась Гюлистанским миром. Но он не смог быть устойчивым и служить действительной гарантией мира, т. к. война не принесла полного успеха в осуществлении военно-политических планов ни

одной из воюющих сторон. Поэтому «вечный» Гюлистанский мир не мог удовлетворить ни Россию, ни тем более Персию. Персия, ставшая политическим оружием и фактической жертвой английской и французской дипломатии, не могла примириться с потерей части своих бывших закавказских владений. Россия же не добилась выхода на естественный рубеж рек Ахурян — Аракс — Кура, от которого она не могла отказаться. Поэтому и Гюлистанский мир оказался фактически долгим перемирием, чреватым угрозой неминуемой войны.

Что же касается значения Гюлистанского мира для армянского народа, то благодаря нему значительные армянские территории перешли к России. Гюлистанским миром завершился первый этап присоединения восточноармянских земель к России. Армянское население присоединенных территории получило более прочные гарантии для создания и развития материальных и духовных ценностей.

«Сепаратный акт», которому заключившие Гюлистанский мир русские дипломаты не придавали особого значения, в скором времени стал орудием в руках персидского правительства не только для требования частичного пересмотра границ, но и восстановления персидского владычества вплоть до реки Терек — притязания, которые, естественно, не могли найти отклика у русского правительства. Они поддерживались английской дипломатией, заключившей в 1814 г. с Персией Тегеранский договор, подчинявший Персию интересам английской политики.

Несмотря на последующие переговоры с Персией, остается незыблемым факт, что русское правительство, в свою очередь не намерено было отказаться от осуществления своих военно-политических целей в отношении Ереванского и Нахичеванского ханств. Эта точка зрения была ясно изложена в рапорте нового главного управляющего Грузией генерала А. П. Ермолова, считавшего, что «мир и доброе согласие с Персией вещь полезная, но первая же война должна дать границу по Араксу, во избежание будущих неудобств».

Все это недвусмысленно показывает, что обе стороны лелеяли желание пересмотреть Гюлистанский мир, с той только разницей, что Персия стремилась по возможности скорее исправить границы в свою пользу, в то время как Россия оставляла решение задачи на будущее, временно руководствуясь намерением сохранить мир и добрососедские отношения.

В середине 20-х годов XIX в. когда возникшая в связи с греческим восстанием политическая обстановка диктовала Англии необходимость отвлечь внимание России от Восточного вопроса, английская дипломатия, сдерживавшая до этого в своих же интересах воинственный порыв Каджаров, теперь сама стала толкать

Персию к войне с Россией. В Персии открыто проповедовалась идея «священной войны» против «неверных» русских.

В этой накаленной обстановке, когда требовались решительные действия, наметилось расхождение во взглядах центрального правительства и закавказских властей. В то время как генерал Ермолов требовал либо увеличения числа войск, либо немедленной превентивной войны для пресечения реваншистских замыслов Каджаров, центральное правительство готово было даже пойти на некоторые территориальные уступки для сохранения мира, т. к. положение дел в Европе и Турции требовало «пристального внимания к себе». Однако война была неизбежна, так что посольство А. С. Меншикова весной 1826 г. было шагом слишком запоздалым и ненужным, почему и не имело никакого успеха.

Посольством Меншикова завершился целый этап бесплодной дипломатической борьбы за Закавказье вообще, за Восточную Армению в частности. Дело решило оружие. Русско-персидская война 1826—1828 гг. наконец осуществила ту военно-политическую задачу, которую ставило перед собой царское правительство еще на заре XIX в. Границы Российской империи достигли Аракса. Это завоевание России было подтверждено Туркменчайским мирным договором 10 февраля 1828 года.

Дипломатическая и вооруженная борьба России за Восточную Армению была продолжением нового политического курса царского правительства, осуществляемого после присоединения Грузии. На фоне этой борьбы можно более рельефно показать чаяния армянских освободительных кругов, стремившихся к восстановлению в каком-либо виде армянской государственности, желавших найти наиболее приемлемое решение задачи в совершенно новой политической обстановке.

В своей дипломатической и вооруженной борьбе за Закавказье и Восточную Армению, Россия придавала весьма важное значение калотикосату всех армян, центром которого был находившийся в пределах Ереванского ханства Эчмиадзинский монастырь.

Маскируя свои политические мероприятия обещаниями утверждать «вообще на поверхности христиан» (и часто отклоняясь от этого), считаясь с тем несомненным фактом, что более ста лет Россия занимала ведущее место в освободительных планах армян, царское правительство стремилось превратить Эчмиадзин в важный опорный пункт в своей борьбе за Закавказье. Со смертью католикоса Гукаса в 1799 г. представилась возможность для вмешательства русских в дела армянской церкви и еще большего усиления своего влияния. С другой стороны, борьба за престол между различными претендентами, отношение эчмиадзинского духовенства и светских представителей араратских армян», к кандидатам, их позициям в злободневных вопросах,—в частности освобождения Армении и ее будущего статуса, проливают свет и

наглядно показывают какие направления существовали в армянском национально-освободительном движении. Выбор нового католикоса и развернувшаяся дальнейшая борьба за патриарший престол вырисовывают сложную политическую ситуацию, в которой находился армянский народ, отдельных деятелей, общественные силы, стоявшие за ними и направлявшие их действия.

Анализ сохранившихся исторических свидетельств привел нас к заключению, что в армянском национально-освободительном движении существовало два направления — буржуазное и национально-консервативное, придерживавшиеся различных тактических линий. Существование двух направлений освободительного движения было продиктовано тем неоспоримым фактом, что армянский народ делился, в чисто территориальном отношении, на две части. Основная масса проживала на территории порабощенного чужеземным игом отечества, другая — в многочисленных армянских колониях Европы и Азии. Отсюда и разные подходы к вопросу освобождения Армении, продиктованные самими условиями жизни «двух частей» народа.

Разбросанность народа, раздробленность отечества заставляли представителей национально-консервативного направления придерживаться осторожной линии, дабы не ставить под угрозу существование народа и армянской церкви. Проживая в самой стране, реально представляя существующее положение, они не были, конечно, против освобождения родины. Но они приговаривали себя к роли пассивных созерцателей, в чем и, по сути, национально-консервативное и буржуазное умонастроения отмежевывались. Проповедуемая последними идея всеобщего народного восстания не была самоцелью. Пассивное ожидание спасения от руки внешней державы могло бы раз и навсегда похоронить желанную цель восстановления армянской государственности. Поэтому и все действовавшие ради восстановления армянской государственности деятели в осуществление этой идеи отдавали первенство широкому повстанческому движению, а внешнюю помощь рассматривали как дополнительный важный компонент, который мог стать верной гарантией успеха. Таким образом, линия национальных консерваторов не способствовала воссозданию национального государства, хотя и не чуждалась этой идее.

Развернувшаяся борьба за патриарший престол первоначально между архиепископами Иосифом Аргутяном и Даниилом Сурмареци, а после между последним и Давидом Енегетци была не борьбой двух ориентаций — русской и персидской, как это представлялось в историографии до сих пор, а лишь проявлением двух направлений в освободительном движении, преследовавших цель освобождения отечества, но придерживавшихся разных тактических линий. Впечатление же о наличии двух ориентаций возникло лишь вследствие того, что борьба за патриарший престол

стала объектом международной дипломатической борьбы, поскольку каждая из заинтересованных сторон стала покровительствовать одному из кандидатов; создавалась картина, не соответствовавшая однако действительному положению вещей.

Появление русских войск за Кавказом и присоединение Грузии к России, естественно, было радостным событием для борющегося за свое освобождение армянского народа. События первых лет XIX в. показали, что недалек желанный час освобождения Восточной Армении и, поскольку армянские освободительные чаяния в основном базировались на помощи России, каждый успех русского оружия находил горячий отклик у армянского народа.

Наряду с этим однако существовали и вопросы, которые не могли не волновать деятелей освободительного движения, в частности, вопрос о будущем статуте Армении. Если во второй половине XVIII в. четко ставился вопрос восстановления армянской государственности, даже вопрос о формах правления, то в начале следующего столетия об этом уже не было ясного представления. Тем не менее, под выражением восстановления «былой славы Армении» и т. п. подразумевалось приобретение хотя бы самоуправления в пределах Российской империи.

Оставляя на будущее решение этой жизненно важной задачи, армянские деятели в первую очередь стремились свергнуть ненавистное хано-персидское иго и создать условия для развития и прогресса народа.

В основе неопределенности представлений о будущем статуте Армении лежал также ряд обстоятельств, вызванных раздробленностью страны, разбросанностью народа, разницей в его положении в различных странах, уровне развития и т. д.

В самой Восточной Армении основным и самым многочисленным классом было крестьянство, «терпящее от персидских варваров семикратно сильнее удары, чем удары египтян». Под ярмом невыносимого ига они с нетерпением ожидали своего освобождения. После векового рабства, крестьяне, наконец, стали свидетелями появления по соседству мощной христианской державы. Борьба армянского крестьянства в этих условиях принимала различные формы, начиная от пассивного сопротивления до вооруженного содействия русским войскам.

В ханствах Восточной Армении почти не было армянского феодального класса, а только несколько армянских родов, являвшихся фактически ханскими чиновниками.

Сравнительно многочисленнее было духовенство. Но оно во многом отличалось от своих собратьев в Европе и России. В армянской действительности низшие, и высшие церковники выходили из лона народа и подвергались почти таким же гонениям и гнету, как и простолюдины. Это толкало духовенство к принятию

деятельного участия в освободительном движении, оно, будучи более или менее образованным сословием, в какой-то степени направляло освободительные стремления народа. И все-таки положение духовенства было противоречивым: с одной стороны оно было призвано защищать интересы вверенной ему паствы, с другой, проявлять верность государству.

Положение было совсем другим в соседней Грузии. Здесь имелся многочисленный слой армянских феодалов, большая часть которых беспрекословно приняла русское владычество и занимала военные и гражданские должности в русской администрации. Только незначительная часть была недовольна ограничением своих прав.

Находившиеся же в колониях буржуазные слои являлись самыми деятельными участниками освободительного движения, разрабатывали проекты воссоздания государства, лелеяли надежду иметь свой национальный рынок.

Все это осложняло задачу освободительной борьбы, обусловливало отсутствие единого фронта борьбы, ясного представления целей. Четко вырисовывались только два течения, о которых было сказано выше. Сношения с Россией более рельефно показывали наличие этих двух умонастроений. Деятели обоих направлений армянского национально-освободительного движения уповали в первую очередь на помощь России. Следует однако отметить, что у подавляющего большинства звучали чаще просительные нотки. Поэтому Иосиф Аргутян, осуждая это явление, отмечал: «...лишь просят спасите нас; когда спасают мечом, то подчиняют себе по закону царей». Эту истину хорошо усвоил другой видный представитель освободительного движения, Нерсес Аштаракеци. Организовав в годы русско-персидской войны 1826—1828 гг. армянские добровольческие отряды, он попытался заменить просительные нотки деятельной борьбой за «исконные права» своего народа.

Связь армянской освободительной мысли с Россией лучшим образом проявилась в дни Отечественной войны русского народа 1812 г. Помимо того, что многие армяне — генералы и офицеры — сражались в рядах русской армии против наполеоновских войск, деятели армянского национально-освободительного движения проявили самую искреннюю заинтересованность в победе России, ибо считали, что Россия является «надеждой Азии», т. е. освободительницей армянского народа. Войну против Наполеона армянские деятели считали отечественной и для себя, и патриотическим долгом армян — бороться за победу России.

Но не все шло гладко. Политика царского правительства не всегда находила понимание со стороны армянских деятелей. Чем больше была надежда на Россию, тем чувствительнее казались политические промахи царских властей. Вызывало, например не-

22—482

доумение, что в присоединенных к России ханствах сохранялся прежний режим...

Известно, что подавляющая часть городского населения Грузии составляли армянские ремесленники и купцы. В своей политике централизации государства грузинские цари опирались на горожан и стремились усилить их верхушку в противовес феодальной знати. В конце XVIII-начале XIX вв., в условиях расширения товарного производства и некоторых политических изменений, позиции этой знати расшатались, в результате чего классовые противоречия между феодальной знатью и городским населением углубились. Руководствуясь интересами грузинской феодальной аристократии и исходя из собственных помещичье-крепостнических умонастроений, генерал П. Д. Цицианов направил острие своих нападок на тех, кто способствовал развитию товарно-денежных отношений. В этом смысле проведенная Цицианов политика была шагом назад по сравнению с политикой грузинских царей. Более опасно было то, что Цицианов всячески старался превратить свой курс в официальную политику царского правительства. Умалчивались заслуги армян в русско-персидской войне, особенно армянских меликов Карабаха, которым даже не разрешалось вернуться на родину, хотя она находилась под властью России.

Наряду с формированием и усилением армянской буржуазии колоний, одним из первоочередных вопросов становился вопрос о просвещении. Придя к национальному самосознанию и став организованной общественной силой, армянская буржуазия стала обращать внимание на просвещение в духе нового времени. Передовые представители армянской торговой буржуазии усвоили идеи европейского просветительного движения, старались распространить их среди армян.

Со второй половины XVIII в просветительное движение приобрело широкий размах особенно в тех армянских колониях, где большой уделный вес имела торговая буржуазия. Распространению просветительного движения во многом способствовало книгопечатание. Оно стало средством воспитания национального самосознания. Новые идеи нашли отражение в программных документах индийских армян — в «Увещевании», «Западне тщеславия» и «Ншаваке». Смысл этих произведений заключался в идее восстановления армянской государственности в виде парламентской республики и развития капиталистических отношений.

Исходя из того неоспоримого факта, что армянская церковь веками играла решающую роль в жизни армянского народа, армянское просветительство в противовес своим европейским собратьям отводило важное место роли церкви в просвещении. По мнению представителей армянской буржуазии, обязанностью духовенства должна была быть проповедь национального единства

и распространение просвещения. Тем выше роль духовенства, поскольку по стечению исторических обстоятельств, народные массы идут за ним, внемлют его словам. И лишь после того, как просвещение станет достоянием народа, можно поднять восстание, изгнать поработителей и добиться свободы.

Наряду с этим, передовые деятели эпохи сознавали, что необходимо вывести дело просвещения из монастырских стен и сделать достоянием всех. Поэтому первой задачей просвещения считалось создание новых светских школ, соответствующих духу времени. И не случайно, что в первой четверти XIX в. одно за другим были учреждены Агабабовское училище в Астрахани (1806 г.), Московский Лазаревский институт (1815 г.), «Мардасиракан чемаран» в Калькутте (1821 г.), училище Нерсисян в Тифлисе (1824 г.) и т. д., сыгравшие неоценимую роль в деле распространения просвещения, создания новой армянской культуры. Характерно, что учреждение Лазаревского института Иоаким Лазарян считал «делом главным, полезным и национальным», а по мнению Нерсеса Аштаракеци, школьное строительство было «надеждой на возрождение» армян.

Все это свидетельствует о том, что развернувшееся просветительное движение было тесно связано с национально-освободительными задачами, считалось тем краеугольным камнем, на котором могло быть воздвигнуто будущее «Арамейской нации».

На наш взгляд, с просветительным движением тесно связан вопрос о реформе правления армянской церкви. Армянская буржуазия, исходя из сложившихся исторических обстоятельств, считала церковь важным национальным институтом. Если европейские буржуазные революции, особенно Великая французская буржуазная революция, были также направлены против католической церкви и господства папства, то в армянской действтиельности, исходя из существующего положения вещей, ставился лишь вопрос реформы правления церкви, т. е. задача приспособления его к новым историческим условиям. С точки зрения национально-освободительных интересов, реформированная церковь более способствовала бы осуществлению национальных задач.

Необходимость реформы правления церкви особо остро ощущалось в годы борьбы за патриарший престол между Даниилом и Давидом. В этой связи, еще в 1801 г. Иван Лазарев высказал мысль, что отсутствие «коллегиального правления» может привести Эчмиадзинский престол к гибели. В этих условиях возникла идея создания Высшего совета или Синода армянской церкви, что и было осуществлено в 1808 г. по инициативе и при деятельном участии Минаса Лазарева, с санкции католикоса Даниила.

Конечно, в условиях ханско-персидского ига эта попытка реформы правления церкви не могла дать и не дала ожидаемых результатов, однако создание Высшего совета имело принципиаль-

но важное значение, ибо явилось победой армянской буржуазии в деле введения коллегиальности руководства в таком общенациональном учреждении, каковым является церковь.

И просветительное движение, и в некотором смысле реформа правления церкви являлись существенными компонентами национально-освободительного движения.

В самом начале XIX в., в результате присоединения Грузии к России, политику царизма характеризует отказ от своих прежних планов в отношении Армении. Сознавая происшедшее в политике царского правительства изменения, армянские освободительные круги, тем не менее, продолжали лелеять хрупкие надежды на восстановление армянской государственности под протекторатом России. В 20-х годах XIX в., особенно в годы русско-персидской войны 1826—1828 гг., снова встал вопрос будущего статуса Восточной Армении. Если до 20-х годов XIX в. армянскую освободительную мысль отличает неопределенность целей, о восстановлении «былой славы Армении» говорилось лишь абстрактно, и в целом создавалось впечатление, что деятели армянского национально-освободительного движения не представляют себе ясно будущего, то русско-персидская война, создавшееся в результате-её положение в Закавказье, некоторые негативные для освободительных чаяний армянского народа намерения царизма требовали от них более четкого осознания своих политических устремлений.

В эти решающие дни на первый план выступает Нерсес Аштаракеци. Находясь в горниле политических событий Закавказья этих лет, преисполненный идеей национального освобождения своего народа, Нерсес Аштаракеци был поставлен перед необходимостью определения политического будущего своего народа, претворения в жизнь его чаяний. Не менее важную роль в этом вопросе играл Хачатур Лазарян.

Как же представляли себе идею восстановления армянской государственности Н. Аштаракеци, Х. Лазарян и другие деятели? Нерсес Аштаракеци считал возможным ее осуществление, если российский император согласится принять титул царя Армении еще до освобождения страны, но с условием, что он должен дать также свое согласие на восстановление армянского народа в своей «былой славе», под коим подразумевалось восстановление армянской государственности.

Начавшаяся в 1826 г. русско-персидская войны вызвала у армянских деятелей твердую убежденность, что настало время для осуществления национальных чаяний. Они считали, что армянский народ обязан с оружием в руках бороться против своих врагов, чтобы «отомстить за попранные права наших предков и их потомков». Непосредственное участие армян в войне за освобождение своей отчизны должно было способствовать осуществлению идеи армянской автономии.

Ярким выражением этих устремлений и целей была инициатива Нерсеса Аштаракеци создать армянские добровольческие полки и тем самым возродить регулярное армянское войско. Русское правительство пошло навстречу этому желанию армян и уже в марте 1827 г. был сформирован первый армянский добровольческий полк. Именно поэтому в эти дни среди армян царило некое романтическое вдохновение, на фоне которого многим мерещилась «восстановленная» под протекторатом России Армения.

В это же время появляется в свет составленный Лазаревыми документ под заглавием: «Некоторые предположения о Грузии и сопредельных ей областях», в котором отмечалось, что война с Персией «приближает к тем основным видам, кои со времени Петра Великого имелись в предположении», т. е. восстановление армянской государственности.

Анализ вышеуказанного, да и других документов, показывает, что деятели национально-освободительного движения армянского народа стремились к созданию «Армянского царства» в составе Российской империи, с внутренним самоуправлением. Оно должно было выражаться в следующем: 1. официально российский император принимает титул царя Армении; 2. находящиеся в Закавказье все исконные армянские земли объединяются в царстве Армянском; 3. создается армянское войско в виде пограничной стражи и императорского гвардейского эскадрона; 4. армянские законы и дарованные российскими императорами армянам привелегии действуют на всей территории Армении; 5. армянская церковь сохраняет свою автономию; 6. непризнание крепостного права.

В армянских кругах большую радость вызвало то знаменательное для данного исторического периода явление, что царским рескриптом от 21 марта 1828 г. Ереванское и Нахичеванское ханства и Ордубадский округ были объединены и переименованы в Армянскую область. Это свидетельствует о том, что царское правительство вынуждено было хоть в незначительной степени пойти навстречу чаяниям армянского народа.

В результате присоединения Восточной Армении к России возник надежный очаг национальной консолидации армянского народа, явившийся залогом возрождения Армении в будущем.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. **К. Маркс** и **Ф. Энгельс**, Сочинения, т. 8, 25, ч. 1—2, 28.
2. **К. Маркс** и **Ф. Энгельс**, О колониальной системе капитализма, М., 1959.
3. **Маркс К.**, Хронологические выписки по истории Индии, М., 1947.
4. **Մարքս Կ.**, Կապիտալ, հտ. 3, մաս 3, Երևան, 1949:
5. **Մարքս Կ.** և **Ֆ. Էնգելս**, Նամակներ «Կապիտալի» մասին, Երևան, 1954:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1. Ձեռագիր №№ 448, 2699, 3743, 3800
2. Կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. 30, 32բ, 37, 38, 42ա, 42բ
3. Կաթողիկոսական դիվան, թղթ. 15, վավ. 10, 17, 18, 24, 28
4. Կաթողիկոսական դիվան, թղթ. 17, վավ. 46
5. Կաթողիկոսական դիվան, թղթ. 18, վավ. 162ա
6. Կաթողիկոսական դիվան, թղթ. 21, վավ. 135ե, 135ժա, 140, 158
7. Կաթողիկոսական դիվան, թղթ. 22ա, վավ. 41
8. Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, վավ. 131
9. Կաթողիկոսական դիվան, թղթ. 24, վավ. 22, 46, 59, 136, 139, 158, 172
10. Կաթողիկոսական դիվան, թղթ. 25, վավ. 39
11. Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 41, 132
12. Կաթողիկոսական դիվան, թղթ. 31, վավ. 187
13. Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 41, 219
14. Կաթողիկոսական դիվան, թղթ. 34, վավ. 314
15. Կաթողիկոսական դիվան, թղթ. 37, վավ. 382
16. Կաթողիկոսական դիվան, թղթ. 45, վավ. 136, 139, 142բ
17. Կաթողիկոսական դիվան, թղթ. 48, վավ. 47
18. Կաթողիկոսական դիվան, թղթ. 53, վավ. 8
19. Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վավ. 112, 304
20. Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 110, 155
21. Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 883
22. Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 367, 368
23. Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 604, 605, 609, 624, 625, 626, 638, 802, 813, 818, 819, 821, 822, 864, 884, 892, 901, 912, 928
24. Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166ա, վավ. 1169, 1095

25. Լազարյանների արխիվ, թղթ. 102, գործ 3, վավ. 119, 120, գործ 6, վավ. 7, 335, գործ 17, վավ. 43, 99
26. Լազարյանների արխիվ թղթ. 103, գործ 5, վավ. 9, 94, գործ 9, վավ. 74
27. Լազարյանների արխիվ, թղթ. 104, գործ 8, վավ. 111, գործ 104, վավ. 3, 10, 11, 19
28. Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 11, վավ. 27, գործ 13, վավ. 4, 92, 158, 159
29. Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ 14, վավ. 1, 29, 37, 71
30. Լազարյանների արխիվ, թղթ. 109, գործ 9, վավ. 143, 173
31. Լազարյանների արխիվ, թղթ. 111, գործ 36, վավ. 80
32. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 31, 33
33. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 18
34. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 210բ, 210դ:

АРХИВЫ

35. ЦГИА СССР, ф. 866, оп. 1, д. № 162.
36. ЦГИА СССР, ф. 880, оп. 1, дд. №№ 79, 107, 219, 240.
37. ЦГИА СССР, ф. 880, оп. 4, д. № 6.
38. ЦГИА СССР, ф. 880, оп. 5, дд. №№ 24, 25, 379, 610, 611, 623.
39. ЦГИА СССР, ф. 1146, оп. 1, дд. №№ 22, 23.
40. ЦГИА СССР, ф. 1268, оп. 1, д. № 18.
41. ЦГИА СССР, ф. 1377, оп. 1, д. № 19.
42. ЦГИА СССР, ф. 1409, оп. 1, дд. №№ 508, 1934.
43. ЦГИА СССР, ф. «Ревизия Мечникова и Кутайсова», оп. 1, 1830 г.
44. АВПР, ф. Гл. архив, 1—7, 1816 г., папка 2, д. № 1.
45. АВПР, ф. «Армянские дела», 1780—1801 гг.
46. АВПР, ф. «Армянские дела», 1802—1803 гг., д. № 185.
47. АВПР, ф «Армянские дела», 1803—1809 гг,, д. № 186.
48. АВПР, ф. «Армянские дела», 1810—1829 гг., д. № 1.
49. ЦГВИА, ф. ВУА, дд. №№ 2875, т. 3; 3465, ч. 12; 4258, ч. 1; 4258, ч. 3; 4259, ч. 2; 4259, ч. 3; 4259, ч. 4; 4259, ч. 5; 4265; 4267; 4313; 4338; 6166; 6183; 6186; 6192.
50. Архив АН СССР, ф. 99, оп. 2, д. 13.
51. ЦГИА Груз. ССР, ф. 2, дд. №№ 1 (1801 г.); 3 (1801 г.); 8 (1801 г.); 81 (1801 г.); 22 (1802 г.); 39 (1802 г.); 4 (1803 г.); 57 (1803 г.); 110 (1804 г.); 150 (1807 г.); 148 (1809 г.); 724 (1819 г.); 986 (1821 г.); 28 (1803 г.); 58 (1803 г.); 27 (1802 г.); 28 (1802 г.); 42 (1803 г.); 89 (1805 г.); 120 (1806 г.); 49 (1803 г.); 110 (1806 г.); 73 (1804 г.); 62 (1804 г.).
52. ЦГИА Груз. ССР, ф. 16, дд. №№ 31, 546, 4150

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3, 8, Երևան, 1948—1956

Աբրահամ Աստապատցի, Ներբողեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի, Կ. Պոլիս, 1807

Աբրահամյան Վ. Ա., Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18—20-րդ դարի սկիզբը), Երևան, 1971

Ազդարարություն առ Հայս: Առաջադրութիւն հայոց նոր սարքվող զօրքի համար, Թիֆլիզ, տպ. Ներսիսյան դպրոցի, 1827

Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հտ. 1, Բագու, 1916

«Անցք կամ գործք», Մադրաս, 1806

Ավդալբեգյան Խ. Հ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում 1801—1917 թթ., Երևան, 1959

Ատրպետ, Հողատիրությունը Կովկասում, Ալեքսանդրապոլ, 1906

Արարատեան Աբէլ, Համառոտութիւն ազգասիրական սխրագործութեանց տեառն Ներսիսի նորընտիր հայրապետի Ամենայն Հայոց ի սուրբ կաթողիկէն Էջմիածնի, ի Վրաստան և ի Բեսարաբիա յամէ տեառն 1808 յան տեառն 1843, Զմյուռնիա, տպ. Արագածունյաց, 1843, 6, 18 էջ

Արձանագրութիւնք որք վերաբերին առ հաստատութիւն հաշտութեանն ընդ Պարսկաստանի, Ս. Պետերբուրգ, 1828

Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895

Բարխուտարեանց Մ., Պատմություն Աղուանից, Բ հատոր, Թիֆլիս, 1907

Գեղամյանց Ե., Պատմական քաղվածներ, պրակ 1—10, Բագու, 1909—1915

Գեղամյանց Ե., Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում, կամ հայկական հարցի չորրորդ շրջանը, Բագու, 1915

Գեղամյանց Ե., Պատմության դասերը, Բագու, 1915

Գեղամյանց Ե., Պատմական նյութեր, Բագու, 1909

Գրիգորյան Ջ. Տ., Հայ և ռուս ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին, Երևան, 1957

Գրիգորյան Ջ. Տ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960

Դիլոյան Վ. Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966

Դիլոյան Վ. Ա., Լազարյան ծեմարանի հիմնադրման պատմությունից, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1961, № 7

Դիլոյան Վ. Ա., Էջեր Ռուսաստանի հայ վաճառականական կապիտալի պատմությունից, ՊԲՀ, 1962 թ., № 4

Դիլոյան Վ. Ա., Հայ գործիչների վերաբերմունքը դեպի 1812 թ. հայրենական պատերազմը, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1962 թ., № 10

Դիլոյան Վ. Ա., Լազարյան ծեմարանը, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1965 թ., № 12

Դիլոյան Վ. Ա., Էջմիածնի վանական տնտեսությունը XIX դարի սկզբին, «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Երևան, 1971

Դիլոյան Վ. Ա., Լուսավորական շարժման նախաքայլերը հայ իրականության մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 3

«Դիվան հայոց պատմության», գիրք Ա-ԺԳ, հրատարակեց Գ. Աղայանց, Թիֆլիս, 1893—1917

Եղիազարյան Յովակիմ, Ազգաօգուտ յայտարարութիւն Յովակիմայ Եղիազարեան առ լուսաւորչակրօն ազգակիցս իւր ի սակս Եղիազարեան համալսարանին Հայոց Մոսկովու, Մոսկվա, տպ. Օգոստոսեա Սեմենյանցի, 1820, 10 էջ

Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա. Բ, Թիֆլիս, 1894—1895

Երիցյան Ալ., Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետության մեջ, «Փորձ», 1877—1878, № 2

Երիցյան Ալ., Ներսես Աշտարակեցին Վարդապետ ժամանակ, Թիֆլիս, 1877

Երիցյան Ալ., Ներսես եպիսկոպոսը Դանիել կաթողիկոսի ժամանակ, Թիֆլիս, 1877

Երիցյան Ալ., Ներսես Ե Աշտարակեցի, «Փորձ», 1881, № 3

Երիցյան Ալ., Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար, Թիֆլիս, 1877

Զամինյան Աբր., Հայոց եկեղեցու պատմություն, Բ մասն, Նոր-Նախիջևան, 1909

Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն Մ Դ. Թաղիադեան Վ. Ս. սարկաւագի սբ. Էջմիածնի ի Հայս, հտ. Ա, Կալկաթա, 1847

Թաղիադեանց Մեսրոպ, Աստուածասէր և ազգասէր հասարակութեան Հայոց փրկեալ քաղաքին Երևանայ՝ սրբակրօն քահանայից, բարեծնունդ իշխանաց և համայն բարեպաշտոնն ժողովրդոց, Կալկաթա, տպ. եպիսկոպոսական ծեմարանի, 1828, նոյեմբերի 1, 3 էջ

Թումանյան Հ. Ե., Հայաստանի տնտեսական զարգացումը, Երևան, 1960

Լեո, Հայոց պատմություն նորագույն շրջան, մասն առաջին, երկրորդ, Երևան, 1926—1927

Լեո, Վրաստանի միացումը Ռուսաստանին (հարյուրամյակի առիթով), «Մուրճ», 1901, № 2

Լեո, Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902

Լեո, Ստեփաննոս Նազարյանց, հտ. 1—2, Թիֆլիս, 1902—1903

Լեո, Գրիգոր Արծրունի, հտ. Ա-Գ, Թիֆլիս, 1902—1905

Լեո, Պատմություն Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրոցի, Թիֆլիս, 1915

Լեո, Նոր նյութեր 19-րդ դարու պատմության համար («Նոր ուղի» հանդես, գիրք I, Երևան, 1932)

Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946

Կարինյան Ա. Բ., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հտ. 1, Երևան, 1956

Հակոբյան Թ. Խ., Երևանի պատմություն (1801—1870), Երևան, 1957
Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, Ջ. հտ., Երևան, 1934
Համառոտութիւն անցից քրիստոսակերտ մայր աթոռոյ հայոց սրբոյ Էջմիածնի տպագրեալ յաղագս համազգային ծանօթութեանց, երկրորդ տիպ, Տփխիս, 1853
Համբաւք ի գնդէ որոշեցելոյ վասն Կովկասեան սահմանաց, արտահանեալ ի համբաւագրոց կոչեցելոյ московские ведомости № 76 յամի 1826, ի սեպտեմբերի 22, յերես 3056, 3057, 3058, 3059: Թարգմանեալ յաշակերտաց ուսումնարանի հայոց, որ ի Տփխիս, 1827, 12 էջ
Հարությունյան Բ., Օտարերկրյա դրամների շրջանառությունը և կուրսը Երևանի խանության մեջ XVIII դարի երկրորդ կեսին, «Տեղեկագիր Արմֆանի», 1940, № 3
Հարությունյան Բ. Մ., Վարձու աշխատանքը Երևանի խանության մեջ XVIII դարում և XIX դարի առաջին քառորդում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 81—98
Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հտ. 1—2, Երևան, 1957—1959
Հովհաննիսյան Աշ., Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921
Հովհաննիսյան Աշ., Գ. Ախվերդյանի և Գ. Շիրմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին, «ՊԲՀ», 1963, № 2
Հռչակ ողորմութեան աստուածազօր մեծափառութեան ինքնակալի և կայսեր ամենայն ռուսաց Նիկողոսի Առաջնոյ առ ազգս Հայոց, որ ի Վրաստան (Ներսես Աշտարակեցու ատենախոսությունը), Թիֆլիս, 1827

Ղամազեանց Մելքիսեդեկ, Բան ի վերայ առման քաջակառոյց ամրոցին Երևանայ: ...Ասացեալ յաւագ քահանայէ Հայոց ի Մելքիսեդեկէ Ղամազեանց... ի հոկտեմբերի 9 ամի 1827, ի Տփխիս, տպ. «Ուսումնարանի Հայոց...», 1828

Մարկոսյան Ս., Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում (քննական ուրվագծեր), Երևան, 1959
Մարկոսյան Ս. Ս., Ռուսաստանի միանալու նախօրյակին Արևելյան Հայաստանի հողատիրության և ծորտատիրության հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4
Մելիքսեթ-Բեկ Լ., Գևորգ Մելքիսեդեկյան Խուբովը (1762—1829) և նրա «Գավազանագրքի» ակրոստիքոս-ներբողյանը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 2 (5)
Մսերեանց Մ., Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, 1763—1831, Մոսկվա, 1876
Մուրատյանց Մ., Պատմություն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցվո, Երուսաղեմ, 1872
Մուսայելյան Հ., Անդրկովկասի հողային պայմանները, Թիֆլիս, 1910

Ներսես Աշտարակեցի, Յայտարարութիւն քրիստոնէական պարտաւորութեան հպատակաց ամենաբարեպաշտ կայսերութեան ռուսաց, Թիֆլիս, «ի գործարանի դպրոցի հայոց», 1826, 6 էջ
Ներսիսյան Մ., Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958
Ներսիսյան Մ., Արխիվային նոր փաստաթղթեր 1812 թ. հայրենական պատերազմի մասին, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 3—4
Նկարագիր գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան, Մոսկվա, 1832

Շահազիզ Ե., Հին Երևանը, Երևան, 1931
Շահխաթունեան Յովհ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. երկրորդ, Վաղարշապատ, 1842

Ոսկանյան Վ., Հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի հարցը մինչսովետական պատմագրության մեջ (ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 3)

Պատկանեան, Ծաղկաքաղ ի լիակատար կենսագրութենէ սրբազան Հայրապետի Ներսիսի Ե..., Զմիւռնիա, 1875
Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940
Պարսամյան Վ., Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947
Պարսամյան Վ., Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1957
Պարսամյան Վ. Ա., Հայ ժողովրդի պատմություն (1801—1917), հատոր երրորդ, Երևան, 1967
Պետրոսյան Ա. Ա., Մոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, № 12
Պերպերյան Ավետիս, Պատմություն հայոց 1772—1860, Կ. Պոլիս, 1871
Պողոսյան Ս., Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17—18-րդ դդ., «Երևանի պետական համալսարանի աշխատություններ», հտ. XIII, Երևան, 1940
Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքների և պարտականությունների մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 1 (13)

Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858

Ռշտունի Վ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմություն, մասն Ա, Երևան, 1960
Ռշտունի Վ. Հ., Ֆեոդալական հարաբերություններն Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու նախօրյակին (պրոբլեմը և լուծման փորձերը), «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 13—38

Սարուխանյան Ն. Բ., Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Երևան, 1971

«Վաղարշապատեցի Հարություն Արարատյանի կյանքը», թարգմ. ռուս. Պ. Պ., Թիֆլիս, 1892

Քալաշյան Վ. Հ., «Գրանցված գյուղացիների» վիճակը Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 71—84

Օրմանյան Մ., Ազգապատում, գիրք երրորդ, Երուսաղեմ, 1927

Авалов З., Присоединение Грузии к России, СПб, 1901.
Адонц М. А., Экономическое развитие Восточной Армении в XIX веке. Ереван, 1957.

«Акты, собранные Кавказской археографической комиссиею» (АКАК), тт. II—VII, Тифлис, 1867—1878.
Андреев В., Воспоминания, «Кавказский сборник», т. I, Тифлис, 1876.
Арутюнян Б. М., Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940.
Арутюнян П. Т., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Москва, 1954.
Архив Раевских, тт. I—III, СПб, 1908—1910.

Багратиони Давид, История Грузии, Тбилиси, 1971.
Балаян Б. П., Международные отношения Ирана в 1813—1828 гг., Ереван, 1967.
Бартоломеи Ф. Ф., Посольство князя Меншикова в Персиц, «Русская старина», 1904, апрель.
Бестужев П. А., Памятные записки 1828—1829 гг., «Воспоминания Бестужевых», М.-Л., 1951.
Богданова Н. Г., К вопросу о феодальной эксплуатации кочевников в Закавказском крае в первой трети XIX в., «Исторический архив», т. II, М.-Л., 1939.
Булгарин Ф. В., Картина войны России с Турцией в царствование императора Николая I, СПб, 1830.
Бутков П. Г., Материалы по новой истории Кавказа, ч. 1—3, СПб, 1869.

Валентини Ф., Обозрение главнейших действий генерал-фельдмаршала князя Варшавского, графа Паскевича-Эриванского против турок в Азии (пер. с фр.). СПб, 1836.
Внешняя политика России XIX и начала XX вв., т. I, Москва, 1960.
«Военный сборник», 1882, т. 2.
Восканян В., Проблема возникновения русской ориентации армянского народа в советской историографии, «Известия» АН Арм. ССР, 1958, № 4.

Гагемейстер Ю., О европейской торговле в Турции и Персии, СПб, 1838.
Гакстгаузен А. фон—Закавказский край, СПб, 1857.
Галлерея достопамятных царей Армении, М., 1827.
Гангеблов А. С., Воспоминания, М., 1888.
Гильденштедт И. А., Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб, 1809.
Глинка С., Описание переселения армян аддербиджанских в пределы России, М., 1831.
Глинка С. Обозрение истории армянского народа от начала бытия его до возрождения области Армянской в Российской империи, ч. 1—2, М., 1832—1833.
Григорян З. Т., Участие армян в русско-персидских войнах начала XIX в., «Вопросы истории», 1951, № 4.
Григорян З. Т., Борьба Англии и Франции против освобождения Армении из-под ирано-турецкого ига, «Вопросы истории», 1952, № 3.

Григорян З. Т., Присоединение Восточной Армении к России в начале XIX века, М., 1959.

Дилоян В .А., Казарян Г. М., Мурадян Д. А., Историографический очерк новой истории Армении, «Вестник общественных наук», 1967, № 3.
«Договоры России о Востоком», сост. Т. Юзефович, СПб, 1869.
Друвиль Г., Путешествие в Персию в 1812 и 1813 гг., ч. I—II, М., 1824—1826.
Дубровин Н. Ф., История войны и вкладычества русских на Кавказе, т I—VI, СПб, 1871—1886.
Дубровин Н. Ф., Закавказье от 1803 до 1806 гг., СПб., 1866,

Егиазаров С. А., Исследование по истории учреждений в Закавказьи, ч. I, Сельская община, Казан, 1889.
Евецкий О., Статистическое описание Закавказского края, СПб, 1835.
Есаян А. М., Мулькадарское право в Армении, Ереван, 1948.

«Жизнь Артемия Араратского уроженца селения Вагаршапат близ горы Арарата...», ч. I, СПб, 1813.

Записки Алексея Петровича Ермолова, ч. II, 1816—1827, Москва, 1869.
Зубов П., Шесть писем о Грузии и Кавказе, написанные в 1833 г., Москва, 1834.

Ибрагимбейли, Хаджи Мурад. Россия и Азербайджан в первой трети XIX века, М., 1969.
Иваненко В. Н., Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901.
Иоаннисян А. Р., Иосиф Эмин, Ереван, 1945.
Иоаннисян А. Р., Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947.
Иоаннисян А. Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.
Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907.

Лачинов Е. Е., Исповедь, «Кавказский сборник», т. I, Тифлис, 1876.
Линден В., Высшие классы коренного населения Кавказского края, Тифлис, 1917.

«Кавказская старина», 1873, №№ 4—5, 6, 7—8.
«Кавказский сборник», тт. I, IV, V—VIII, XV—XVII, XXI—XXIV, XXVII.

Кишмишев С. И., Последние годы Грузинского царства, Тифлис, 1898.
Клугенау Клюки фон, Очерк военных действий и событий на Кавказе в 1818—1850 гг. Сражение при Елизаветполе, 1826. «Русская старина», т. XI, 1874.
Колониальная политика Российского царизма в Азербайджане, Баку, 1936.

Махарадзе Ф., Грузия в девятнадцатом столетии, Заккнига, 1933.

Маркова О. П., Финансово-экономическое обследование Грузии в первой трети XIX века, «Исторические записки», т. 30.
Маркова О. П., Россия, Закавказье и международные отношения в XVIII в., М., 1966.
Месхиа Ш. А., Города и городской строй феодальной Грузии XVII—XVIII вв., Тбилиси, 1959.
Мильман А., Политический строй Азербайджана в XIX—начале XX в., Баку, 1966.
Мирза Адигезал-бек, Карабаг-наме, Баку, 1950.
Мирза Джамал Джаваншир Карабаги, Тарих-и Карабаг, Баку, 1959.
Михайловский-Даниловский, Описание турецкой войны в царствование императора Александра с 1806—1812 года, ч. I—II, СПб, 1843.
Могилевский и Ермолов, Описание Карабагской, провинции, Тифлис, 1823.
Мураевьев Н. Н., Записки, «Русский архив», 1886, кн. 3; 1888, кн. 5; 1889, кн. 4; 1891, кн. 10; 1893, кн. 11.
Муравьев-Карский Н. Н., Записки. Первое взятие русскими войсками города Карса. Из памятных записок, «Русский архив», 1887, кн. 3; 1889, кн. 1; 1891, кн. 3; 1894, кн. 1, 3, 4.
Нерсисян М. Г., Материалы по новой истории Армении, «Историко-филологический журнал», 1959, № 4.
Нерсисян М. Г., Письма декабристов Д. Искрицкого и В Волховского о Кавказе. «Историко-филологичский журнал», 1963, № 2.
Нерсисян М. Г., Записки декабриста Е. Е. Лачинова о путешествии А. П. Ермолова в Иран в 1817 г., «Историко-филологический журнал», 1967, № 1.
Нерсисян М. Г., Из истории русско-армянских отнош.ний, кн. 1—2, Ереван, 1956—1961.
Нерсисян М. Г., Отечественная война 1812 г. и народы Кавказа, Ереван, 1965.
Новосельцев А. П., Пашуто В. Т., Черепнин Л. В., Пути развития феодализма (Закавказье, Средняя Азия, Русь, Прибалтика), М., 1972.
Обозрение российских владений за Кавказом в статистическом, топографическом и финансовом отношениях, ч I и III. СПб, 1836.
Огородников П., На пути в Персию и Прикаспийские провинции ее, СПб, 1878.
Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949.
Петрушевский И. П., Персидские официальные документы XVI—начала XIX вв. как источник для истории феодальных отношений в Азербайджане и Армении, «Научные труды Института истории АН СССР» т. III, М., 1940.
Полиевктов М. А., Европейские путешественники по Кавказу 1800—1830 гг., Тбилиси, 1946.
Полное собрание законов Российской империи (ПСЗРИ), Собрание 1-ое т. IV, XVI, XXI, XXII, XXXII, Собрание II-ое, т. III.
Потто В. А. Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, тт. I—IV, СПб, 1886—1888.
Потто В. А., Исторический очерк Кавказских войн от их начала до присоединения Грузии к России, Тифлис, 1899.

Потто В. А., Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902.
«Присоединение Восточной Армении к России», сб. док., т. I—II, редактор Ц. П. Агаян, Введение — Ц. П. Агаяна и В. А. Дилояна, сост. Ц. П. Агаян, С. А. Тер-Авакимова, Д. А. Мурадян, В. А. Дилоян, Ереван, 1972—1978.
Пущин М. И. Записки, «Русская старина», 1884, февраль.

Рштуни В., Крестьянская реформа в Армении, Ереван, 1947.

Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, тт. I, II, Тифлис, 1887—1888.
Семенов Л. С., Россия и международные отношения на Среднем Востоке в 20-ые годы XIX в., М., 1963.
Семенов Л. С., К вопросу о значении Туркманчайского договора для истории Армении, «Историко-филологический журнал», 1959, № 4.
Симонич Н. С., Из записок гр. Симонича Н. С. Персидская война. Кампания 1826 г. (пер. с фр.), «Кавказский сборник», т XXII, Тифлис. 1901.
Скрутковский С., Лейб-гвардии сводный полк на Кавказе в персидскую войну с 1826 по 1828 гг., СПб, 1896.
Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, чч. I—III, Москва, 1833—1838.
Соколов А. Е., Путешествие мое в Имеретию с линии Кавказской, мое там у царя пребывание, с ним сношение и обратное оттуда путешествие в Грузию, М., 1874.

Тер-Гукасов Г., Экономические интересы России в Персии, Петроград, 1915.
Туманян О. Е., Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954.

Фадеев А. В., Кавказ в системе международных отношений 20—50-х годов XIX века, М., 1956.

Фадеев А. В., Россия и Кавказ первой трети XIX века, М., 1960.

Хачапуридзе Г. В., К истории Грузии первой половины XIX века, Тбилиси, 1950.
Хачапуридзе Г. В., Историческое значение присоединения Грузии к России, «Вопросы истории», 1954, № 5.
Хубов Е., Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1779 г.) до 1809 г., СПб, 1811.

Чавчавадзе А. Г., Краткий исторический очерк положения Грузии с 1801 по 1831 гг., «Кавказский сборник», т. XXIII, Тифлис, 1902.
Чеишвили Н. И., Из истории Грузии XIX столетия, Батуми, 1960.
«Чтения в обществе истории и древностей российских», 1867, кн. 3.

Шопен И., Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб, 1852.

Щербатов, Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деяельность, т. III, СПб, 1891.

Эсадзе Э., Очерк истории горного дела на Кавказе, Тифлис, 1903.

Alcoc Thomas. Travels in Russia, Persia, Turkey and Greece in 1828—1829. London, 1831.

Armstrong T. B. Journal of Travels in the Seat of War, During the Last Two Campaigns of Russia and Turkey. London, 1831.

Batailles de la gloriense campagne du comte Paskevitch d'Erivan dans l'Asie Mineure, en 1828—1829. St. Petersburg, 1837.

Brydges Harford Jones. An Account of the Transactions of His Majesty's to the Court of Persia in the years 1807—1811. London, 1834.

Bullard, Sir Reader. Britain and the Middle East from Earliest Times to 1952, London, 1952.

Curzon G. Persia and the Persian Question, vol. II. London, 1892

G. Drouville. Voyage en Perse, fait en 1812 et 1813. t. II. Seconde édition. Paris, 1825

The Dynasty of the Kajars, translated from the original Persian manuscript, presented by His Hajesty Faty Aly Schah to sir Harford Brydges. London, 1833

Fontanier, V. Voyage en Orient, entrepris par ordre du gouvernement Francais, de l'année 1821 à l'année 1829, Paris, 1829

Fontanier, V. Voyage en Orient, entrepris par ordre du Gouvernement Francais, de 1830 à 1833. Paris, 1834. 354 pp.

Fonton, F. La Russie dans l'Asia Mineure ou Campagnes du Maréchal Paskévitch en 1828 et 1829. Paris, 1840. p. 568.

Freygan. Lettres sur la Caucase et la Georgie, suivies d'une relation d'un voyage en Perse en 1812. Hampourg, 1816.

Gamba J. Fr. Voyage dans la Russia meridionale et particuliérement dans les provinces situées au-delà du Caucase (1820—1824). v. I—II, Paris, 1826.

Gardane A. Journal d'un voyage dans la Turquie et la Perse fait en 1807 et 1809. Paris — Marceille, 1809.

Haas William S. Iran. New York, 1946

Jaubert P. A. Voyage en Armenie et en Perse, Paris, 1821

Kaye J. W. The Life and Correspondence of Sir J. Malcolm. v. I., London, 1856

Keppel C. Personal Narrative of a Journey from India to England by Persia (1824), vol. I—II, London, 1834

Ker Porter R. Travels in Georgia, Persia, Armenia (1817—1821), vol. I—II, London, 1828

Kinneir, John Macdonald. A Geographical Memoir of the Persian Empire, London, 1813

Kinneir Macdonald. A Journey through Asia Minor. Armenia and Koordistan (1813—1814). London, 1818

Klaproth M. Tableau historique, géographique, ethnographique et politique du Caucase des provinces limitrophes entre la Russie et la Perse, Paris-Leipzig, 1827

Legrand M. Les Russes en Asie Mineure 1723—1877. Paris, 1878

Macneill J. Progress and Present Position of Russia in the East. London, 1836

Malcolm J. Sketches of Persia, from the Journals of a Traveller in the East. London, 1827

Malcolm J. The History of Persia from the Most Early Period to the Present Time., vol. I—II, London, 1815, 1829

Markham C. A General Sketch of the History of Persia, London, 1874

Mission du général Gardane en Perse sous le Premier Empire. Documents historiques publiées par son fils le c. Alfred de Gardane. Paris, 1865

W. Monteith. Kars and Erzeroom; with the campaigns of prince Paskiewitch in 1828 and 1829 and an Account of the Conquest of Russia beyeond the Caucasus from the Time of Peter the Great to the Treaty of Turkmanchai and Adrianopol. London, 1856

J. Morier. A Journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople in the years 1808 and 1809. London. 1812

Morier J. A. A Second Journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople 1810—1816. London, 1818

Olivier G. A. A Voyage dans l'Empire Othoman, l'Egypte et la Perse, fait par ordre du gouvernement pendant les six premiéres années de la Republique. Paris, 1807

W. Ouseley. Travels in Various Countries of the East, More Particularly Persia (vol. I—III). London, 1818—1823

Rabbe A. Histoire d'Alexandre ler empereur de toutes les Russies; et les principaux événements de son réigne, pt. I—II. Paris, 1826

Raffenel C. Resumé de l'histoire de la Perse. Paris, 1825

H. Rawlinson. England and Russia in the East. Second edition. London, 1875

Savory R. M. British and French Diplomacy in Persia 1800—1810. "Iran", vol. X, London, 1972

Sykes P. M. Persia. Oxford, 1922

Sykes P. A History of Persia. vol. II. London, 19[illegible]

Voyage en Perse, a la suite de l'ambassade Russe, en 1817, par Maurice De Kotzebue; traduit de l'allemand par M. Breton a Paris (1819)

Watson R. G. A History of Persia. London, 1866
Wilson A. Persia. London, 1932

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 15

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

1. Արևելյան Հայաստանի վարչական բաժանումը և վարչակարգը . . . 31
2. Հողային հարաբերությունները 47
3. Գյուղատնտեսությունը. գյուղական համայնքը 74
4. Արհեստագործությունը և առևտուրը 90
5. Հարկային համակարգը 118
6. Ազգային ծնշումներ և հալածանքներ 131

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՔԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

1. Վրաստանի միացումը Ռուսաստանին և ցարական կառավարության անդրկովկասյան քաղաքականության շրջադարձը 139
2. Պայքար Արևելյան Հայաստանի համար 156
3. Դավիթ-Դանիելյան պայքարը և հայ ազգային-ազատագրական շարժման երկու ուղղությունները 200
4. Հայ ազատագրական ոգորումները և Ռուսաստանը 230
5. Լուսավորական շարժումը իբրև հայ ազատագրական ձգտումների արտահայտություն 265
6. Հայ ազատագրական միտքը XIX դարի 20-ական թվականներին . . 283
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 323

ԱՄՓՈՓՈՒՄ 328

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 342

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 344

ՎԱՀԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ ԴԻԼՈՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հրատարակության են ներկայացրել
համալսարանի ընդհանուր պատմության և հայ ժողովրդի պատմության ամբիոնները

Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ա. Ղալթախչյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Վ. Նալբանդյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Հրատարակչության խմբագիր՝ Լ. Լ. Աղայան

ԻԲ 870

Հանձնված է շարվածքի 09. 02. 1989 թ.: Ստորագրված է տպագրության 20. 10. 1989 թ.: ՎՖ 00728: Չափսը 60×84 1/16: Թուղթ № 1: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության եղանակը «Բարձր»: Հրատարակչական 19,6 մամուլ: Տպագրական 22,25 մամուլ=20,7 պայմանական մամուլի: Տպաքանակ 2 000: Պատվեր 482: Գինը՝ 4 ռ. 30 կ.:
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52:
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.